

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Ելեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՊԿՐԱՏ ԽՎՆՅԱԼ

ԷԵՏԻՈ ԵՌԿԵՐ

V

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՏԱՄՈ ՇԱՏՈՐՈՎ

Հատոր իինգերորդ

ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ
(1950-1990-ական թթ.)

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2010

ՀՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3 Հ

Խ 256

**Կազմեց՝ Սոկրատ Խանյանը
Խմբագրեց՝ Հովհակ Մուսայելյանը**

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸԻ 80-Ամյակի
կապակցությամբ հատողները տպագրվում են
ԼՂՅ գրողների միության վարչության եւ
Արցախի պետական հանալսարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

ԽԱՆՅԱՆ Ս. Ա.

Խ 256

Ընտիր Երևեր: Հիմնգերորդ հատոր: Հայ պոեզիայի զարգաց-
ման միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.): Սոկ-
րատ Խանյան: «Սոնա» գրահրատարակչություն, Ստեփա-
նակերտ, 2010 թ.: 480 էջ + 1 ներդիր:

Սույն աշխատության մեջ դիտարկվում և գնահատվում են նորագույն
շրջանի հայ պոեզիայի արցախյան հատվածի նվաճումները: Գրքում
ներկայացված են 1950-ական թվականներից սկսած հայ պոեզիայում
տեղի ունեցող խմբումները և թեմատիկ-գորակարական ու գեղար-
վեստուկան առանձնահատկությունների երանգները: 20-րդ դարի երկ-
րորդ կեսին ասպարեզ հջած և ճանաչված արցախյի բանաստեղծների
ստեղծագործությունը վերլուծվում և գնահատվում է թեմատիկ բաժա-
նումներով և առանձին գրողների լեզվաօճական առանձնահատկու-
թյունների հաշվառումով: Լուրջ ուշադրություն է դարձված ժողովրդի
պատմական անցյալը և արցախյան ազատագրական պայքարն արտա-
ցոլող քնարական բանաստեղծություններին և պոեմներին: Գնահատ-
ման չափանիշները պահպանվել են հայ պոեզիայի ընդհանուր նվա-
ճումների շրջանակներում:

ԳՄԴ 83.3 Հ

ISBN 978-99941-58-38-6

© Ս.Խանյան, 2010

© «ՍՈԿՐԱՏ» ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ



ՄԱՐՏՆՉՈՂ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մեր սեղանին է Արցախի վերջին յիսուն տարիների հայ բանաստեղծութեան ընթացքների գիտական ուրուագիծը, որ երեւան է հանում զարգացման ուղղութիւնները եւ միտումները: Գրողը ճանաչուած բանաստեղծ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, Պրօֆ. Սոկրատ Խանեանն է: Նա կանգնած է այդ շարժման ակունքներում, նրա առաջատար մասնակիցներից է: Իր առաջին «Կարկաչ» գիրքը լոյս է տեսել հեռաւոր 1959-ին: Հեշտ է ասել յիսուն տարիներ լինել գրական դիրքերում, այսինքն՝ յիսուն տարի ապրել ու արարել յոյսի եւ յուսախաբութեան, երագի ու տագնապի, պայքարի, կորուստների ու ցափի, յաղթանակի ընդմէջէն:

Սա՝ բանաստեղծ կենսագիր Սոկրատ Խանեանը: Ուրիշ է գրականագիտ կենսագիր Խանեանը, որի սրատես աչքից առաջին անգամ առանձին քննութեան ենթարկուած Արցախի բանաստեղծական պատմութեան յագեցած մենագրութեան մէջ չի վրիպել գրական ոչ մի մանրամասն:

Նախ, այն շաղախուած է հայ գրական զարգացումներին, ինչը բնական է: Արցախի մեր բանաստեղծները «մայր գծի» շարունակութիւնն են կազմել՝ նոյնն են երեւ հայրենաշունչ տրամադրութիւնները, ազգային միասնական հունի ճանաչման փորձը, ինչը վկայում է նաև գրքի գտնուած խորագիրը՝ «Հայ պօքիայի զարգացման միտումներն Արցախում»:

Ս.Խանեանը քննութեան ճիշտ բանաձեւ է ընտրել՝ գնահատութիւնների մէջ տարբեր առիթներով ապահնելով

Ա Ռ Ջ Ա Գ Ա Ն Ք

նաեւ մայր երկրի անմիջական ու խորութեակ գնահատութիւններին, առանձնակի ուշադրութիւն դարձնելով Հայաստանի գրականագիտական մտքի (Ս.Աղաբաբեան, Ա.Բաբայեան, Ս.Սարինեան, Ս.Արզումանեան, Վ.Մանացանեան եւ ուրիշներ) եւ բանաստեղծական հոգածու վերաբերմունքին (Պ.Սեւակ, Գ.Մահարի, Յովհ.Շիրազ, Ն.Զարեան եւ ուրիշներ): Մի կողմից՝ երեւան է գալիս հարազատ լեռնաշխարհի գրական արձագանքը բարձր ու անզիդ չափումներում ճշդելու գիտնականի ծփումը, միւս կողմից ստեղծում է գրապատմական զարգացման առաւել ամբողջական պատկեր, ուր նպատակը միայն Հայաստանի բանաստեղծական զարկերակի բարերար ազդեցութիւնը գրական ազգային ճանապարհի ընտրութեան խնդրում բացայալտելը չէ, այլ նաեւ հայ գրականութեան զարգացման միասնութիւնը տեսնելու նրա ուժը:

Թէեւ հարցադրումների ելակետը այդ նոյն ճանապարհով իբրեւ բանաստեղծ անցած գրականութեան պատմաբանի համար անցեալ երկրորդ դարակեսն է, այնուհանդերձ սոյն աշխատասիրութեան մէջ անհրաժեշտ հետադարձ, ակնարկային հայեացք է նետուած 20-30-ական թթ., պատրազմական ու յաջորդած «խաղաղ» շրջանի գրական կեանքի հանգուցային իրադարձութիւններին՝ շաղախելով այն Գր.Ներսիսեանի, Խապետի (Ի.Պետրոսեան), Բ.Զանեանի, Վ.Վերխաչեանի եւ միւսների անձնական, շատ դեպքերում ողբերգական ճակատագրերին: Ընդ որում, դրանց մի զգալի մասը մոռացութեան էջերից փրթած պատառիկներ են, որ այնքան անհրաժեշտ են լինում գրապատմական կեանք վերակազմող մասնագիտներին:

Աշխատասիրութեան այս իւրայատկութիւնը գիտնականի համակողմանի մօտեցումների ու բարեխսդութեան վկայութիւնն է:

Ա Ռ Ջ Ա Գ Ա Ն Ք

Խորքային չափումներով տալով երկրամասի՝ յիսունականներից ձգուող գրական պատմութիւնը՝ Ս.Խանեանը տալիս է նաև նրա հասակ նետելու դժուարութիւնները, ազգային խմորումների ծեւալորման եւ զարգացման դիմաց քաղաքական այն խոչընդութները, որոնք դնում էին Բաքուից եկած կուսակցական ցուցումները եւ գրական Էմիսարների կողմնորոշումները՝ թաքնուած «եղբայրական» հոգատարութեան ներքոյ:

Մեր առջեւ տողանցում են գրական դիմագիծ կազմած արցախեան բանաստեղծները (Գ.Գարբիկեան, Ս.Խանեան, Վ.Օվեան, Ռ.Եսայեան, Հր. Բեգլարեան, Ա.Թովմասեան, Վ.Յակոբեան, Ա.Յովհաննիսեան, Ն.Աւագեան, Հ.Ալեքսանեան եւ ուրիշներ), որոնց գեղարուեստական ընդհանրացած պատկերների ենթախորքերում հիւսուած են, հեղինակի ձեւակերպմամբ, հայրենիքի եւ քաղաքացու ներդաշնակութեան խորհուրդները: Սա գրականագետը կենսական ճախապայման է համարում բանաստեղծի դերն ու նշանառութիւնը տեսնելով ազգային տրամադրութիւնները կազմավորելու, ուղղորդելու ժողովրդական զանգուածները առաջնորդելու ուժի մէջ: Ս.Խանեանը մենագրութիւնը կառուցում է հենց նիւթերի տրամաբանուած դասդասումով՝ հայրենի եզերք, հայրենիք, պայքար, բնութիւն, ներաշխարհի քննութիւն, մարդկային զգացումներ, որոնք, սակայն, տարանջատուած չեն, այլ ներքին միասնութեան մէջ կազմում են արդարացուած աստիճանակարգ՝ զգացումների ու բնութեան, հոգու ներքին ազատութեան երգը կարող է ծաւալուել երկրի ազատութեան տասնարաննեայի իւրացման ճանապարհով:

Սա, ի հարկէ, «Նախ՝ քաղաքացի եւ ապա՝ բանաստեղծ» կարգախօսը չէ, սակայն արցախցու համար երկրի եւ հոգու տարածքները նոյնատիպ երակ-երազներով են լց-

Ա Ռ Ջ Ա Գ Ա Ն Ք

լում ու պարզում, բարախում ու պարզում աշխարհին: Արտի ճանապարհն անցնում է հայրենիքի ազատութեան իմաստաւրման ճանապարհով:

Սա Ս.Խանեանի համար վերլուծական մեկնակէտ է, որ լիովի վերաբերում է նաեւ իր ու իր գրչընկերների ստեղծագործական երփնապնակին:

Մի զկատառում. Ս. Խանեան բանաստեղծը կարող էր աւելի լաւ «բացուել» ընթերցողին, եթէ խանգարող պարագայ ակամայից չդառնար Ս.Խանեան գրականագէտը: Ըստ երեւյթին, համեստութեան թերած պարտադրանքը ստիպել է, որ քննադատը խօսի բանաստեղծի մասին, աւելի շատ միջնորդաւրումներով, ասպարեզի վրայ եղած կարծիքներով, քան իրական գնահատութիւններով:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼԵԱՆ

Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
«Գրական թերթ» 2006թ., 10 մարտի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Արցախի նորագույն շրջանի պոեզիան հայ գրականության աճքաժանելի մասն է: Նրանում ի հայտ են եկել գեղարվեստական զարգացման այն բոլոր միտումները, ինչ հատուկ է եղել ամբողջ հայ գրականությանը 20-րդ դարի երկրորդ կեսին:

Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի դեկավար շրջաններն ամեն կերպ ջանում էին Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում ստեղծվող գրականության ձեռքբերումները կապել «հարազատ» Ադրբեջանական Սոցիալիստական Հանրապետության «հոգատար» վերաբերմունքի, Ադրբեջանի գրողների միության անմիջական «դեկավարության», ինչպես նաև՝ ազերի-թուրքական գրականության նախահիմքերի եւ ժամանակակից ավանդությունների օգտագործման հետ: Սակայն Արցախի գրականությունն իր բնույթով ու երանգներով, ինչպես միշտ, նորագույն շրջանում եւս հայ ոգու արտահայտություն է: Արցախից գրողը ստեղծագործական իր խառնվածքով հայ ժողովրդի ստեղծարար ոգու ժառանգորդն է, նրա նորօրյա ոգորումների ու ակնկալությունների արտահայտիչը:

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ժողովուրդների հասարակական կյանքում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան 1950-ական թթ. սկզբից, երբ քննադատվեց անհատի պաշտամունքը: Նշանակալի բեկում եղավ նաև մշակույթի բնագավառում: Գրականությունը թեկուզ երերուն, սկսեց ազատվել գաղափարական շրջափակումից նաև Արցախում: Հետեւելով մայր Հայաստանում ստեղծվող գրականության նոր ընթացքին, արցախից գրողները եւս

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Վերանայեցին կյանքի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները, ստուգեցին գեղարվեստական իրենց մտածողությունը, ամեն կերպ ջանացին հետեւել հայ բազմադարյան հարուստ գրականության ընդհանուր խմբումներին՝ ձգտելով իրենց լուման բերել դրանում:

* * *

Ստեղծագործական նոր հուն մտնելու ճանապարհին կարեւոր հանգամանք էր տեսական-գեղագիտական սկզբունքների նախագծումը: Չէ՞ որ նորագույն գրականության նախորդ երկու՝ 1918-1940 և 1940-1953 թվականների փուլում առաջ են քաշվել խարխուլ նախադրյալներ, որոնցից ազատվելը ժամանակի հրամայականն էր:

Ստալինյան էպոխայի հասցրած հարվածները ծանր էին: Հայ դասական մի շարք գրողների երկերը արգելված էին, գլխատված էր խորհրդահայ գրականության առաջատար ուժը, խաթարված էր բանաստեղծ հայ ժողովրդի հոգեւոր հունձքի ընթացքը: Այդպիսի ծանր պայմանների ֆոնի վրա, 1954 թվականին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն.Ս. Խրուշչովի քայլը անհատի պաշտամունքը քննադատելու ուղղությամբ պատմական մեծ հեղաշրջում էր: 1954թ. Երեւանում իր ընտրողների առջեւ ելույթ ունեցավ պետական հայտնի գործիչ Ա.Ի. Միկոյանը: Նա նշեց. «Նիհիլիզմի վնասակարությունը երեւում է տեղական կյանքից վերցրած այնպիսի փաստով, ինչպիսին է վերաբերմունքը դեպի հայ գրականության ներկայացուցիչներ Ռափայել Պատկանյանը և Րաֆֆին: Բանն այնտեղ է հասել, որ մի ժամանակ, որքան էլ տարօրինակ, կուստոմսավոր մարդկանց ձեռքով հանվեց Էջմիածնում եղած Պատկանյանի արձանը, և դադարեցվեց հայ գրականության դասական

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Րաֆֆու երկերի հրատարակությունը... Հանրապետության նախկին ղեկավարությունը սխալ վերաբերմունք է ունեցել դեպի խորհրդային ժամանակաշրջանի հայ տաղանդավոր բանաստեղծ Եղիշե Զարենցի ժառանգությունը»:¹

Գնալով հասարակական-քաղաքական մթնոլորտը աստիճանաբար սկսեց հստակվել: Այդ տարիներին իրենց արժանի տեղը գրավեցին հայ թե՛ դասական եւ թե՛ զորօրյա հալածական մտավորականները, աքսորից ու բանտերից վերադարձան հայ ականավոր գործիչները: Անհատի պաշտամունքի տարիներին մեծապես տուժել էր նաև Արցախի գրական օջախը: Հայտնի է, որ 1948 թ. ԱՄՆ-ից հայրենիք էր վերադարձել Արցախի Կուսաբերդ գյուղի բնակիչ Զախար Սոլվարյանը, որը գիտեր եւ պաշտում էր մեծանուն Ավ. Իսահակյանին: Զախարի հետ Արցախ էր ժամանել նաև Վարպետը, որի ներկայությունը մի առանձին ոգետրություն էր առաջացրել արցախցիների շրջանում: Սակայն, ինչպես հասովու է եղել այն օրերին, Վարպետի՝ Երևան մեկնելուց, անմիջապես Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմը ՊԱԿ-ի միջոցով կատարեց հրեշտակոր գործ: Մեղադրվեցին այն մարդիկ, ովքեր ջերմ էին ընդունել Վարպետին, իսկ բանաստեղծ Բ. Զանյանը բանտարկվեց յոթ տարվա ժամկետով: Սարսափն ու կասկածը եռապատիկ ուժ էին առել Արցախում: Ստեղծագործական մղավանջի մեջ էր մարզը: Ահա հասկանալի է, թե ինչու անհատի պաշտամունքի քննադատությունն ընդունվեց որպես թարմ օդ: Վերականգնվեց ստալինիզմի զոհը դարձած Գ. Ներսիսյանը, բանտից վերադարձավ Բ. Զանյանը եւ Էլի Չատ «քաղաքական հանցագործներ»: Գ. Մահարին, Մ. Արմենը, Վ. Նորենցը, Վ. Ալազանը, Բ. Զանյանը աքսորից վերադարձած ուրիշ գորողների հետ իրենց գործուն մասնակցությունն ունեցան ժողովրդի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Հոգեւոր կյանքի հարստացմանը: Գրական ասովիսներում խոսք բացվեց գրականության առջեւ ծառացած նոր խնդիրների մասին: Արցախի գրական հոգեւորի քննարկումը հիմնականում տեղի էր ունենում «Խորհրդային Ղարաբաղ» մարզային եւ «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթերում, ինչպես նաև շրջանային մամուլում: Պարզ է, որ կոմունիստական կուսակցության Ադրբեջանի Կենտկոմի եւ ԼՂ մարզկոմի օրգաններ հանդիսացող այդ թերթերը չեն կարող ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել գեղարվեստական գրականության զարգացման պրոբլեմներ՝ չհաշված այն հանգամանքը, որ դրանց քաղաքական ուղղվածությունն ամեն կերպ կաղապարում էր գրողների գաղափարական-գեղագիտական ազատությունը, անդադար ընդգծում խորհրդային գրականության գաղափարական միասնության, ձեւով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության սիեմատիկ պահանջները: Արցախի գրողների համար տեսական-գործնական լուծումների հիմնական եւ ուղեցույց աղբյուրը մայր Հայաստանում հրատարակվող թերթերն ու գրքերն էին, ականավոր գրականագետների խոսքն ու գրողների գրական հունձքը, Հայաստանի մամուլում հրատարակվող հոդվածները, որնցում վերանայվում էին հասարակական կյանքի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները: Հայաստանի գրողների III, ԽՍՀՄ գրողների II համագումարներից հետո տպագրված Այութերն աշխուժություն առաջացրին նաև Արցախի գրողների ստեղծագործական կյանքում:

Տեսական ու ստեղծագործական բնույթի սխալների քննադատության առողջ ձայնը հասնում էր Արցախ: «Անկոնֆլիկտայնության» տեսության, գրողի անհատականության եւ քննարական հերոսի, ժամանակի եւ պոեզիայի հա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

րաբերության, ուսալիզմի նախահիմքերի հաստատման եւ ժխտման, ազգային եւ ժողովրդականի, ավանդականի եւ նորարարության հարցերին նվիրած հոդվածներում, գրախոսություններում ու բանավիճային ընդհանրացումներում իրենց ուսանելի խոսքն ասացին է. Զբրաշյանը («Լիրիկական ձայնի հարստությունը», ՍԳԱ, 1958, թիվ 3), Ս. Սարինը («Պոեզիայի մեծ բովանդակության համար», Գթ, 1958, թիվ 36), Ս. Սողոմոնյանը («Խորհրդահայ պոեզիայի մի քանի հարցեր», ՍԳԱ, 1956, թիվ 6), Հ. Թամրազյանը («Մեծ բովանդակության, բարձր արվեստի համար», ՍԳԱ, 1954, թիվ 4), Ս. Աղաբաբյանը «Ժամանակը եւ պոեզիան» հոդվածաբարը, Գթ, 1965, թիվ, 8, 10, 12, 14, 18), Ս. Արզումանյանը («Խորհրդային պոեզիայի մի քանի հարցեր», ՍԳԱ, 1956, թիվ 6) եւ այլոք:

Գրականության առջեւ ծառացած նոր խնդիրների շուրջ հանդես էին գալիս նաև ականավոր գրողներ Ն. Զարյանը, Գ. Մահարին, Ս. Արմենը, Պ. Սեւակը, Գ. Էմինը, Հ. Սահյանը, Վ. Դավթյանը եւ ուրիշներ: Արցախի գրողներն ուշի-ուշով հետեւում էին նրանց ելույթներին, լսում խորհուրդները, ստեղծագործական լիցք ստանում նրանց գրական նվաճումներից:

Սակայն պետք է նշել, որ մարդն իր հարուստ ներաշխարհով դեռեւ բացակայում էր գրականությունից, գրողները համարձակորեն չէին մոտենում կյանքի կոնֆլիկտների եւ մարդկային բարդ ու բազմակողմանի զգացմունքների արտահայտմանը: Իսկական գրականության արարման ճանապարհին չկային Ե. Զարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը, իրեն զգացնել էր տալիս մերկ ագիտացիան, ճառն ու դիֆերամբը: Գրականությունը պետք է մտներ բնականոն հուզի մեջ: Հետեւելով Հայաստանի գրական ասուլիսներում ե-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Դեւան եկող կարծիքներին, ծանոթանալով ականավոր գրողների նոր երկերին՝ Արցախի բանաստեղծները ստեղծագործական դասեր էին առնում Հ. Շիրազի, Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Մարգարյանի գրական հունձքից, իսկ տեսական-գեղագիտական խորհուրդներ ստանում անվանի գրականագետներ Ս. Սարինյանի, Է. Զրբաշյանի, Ս. Աղաբարյանի, Ս. Սողոմոնյանի, Հ. Թամրազյանի, Ս. Արզումանյանի, Լ. Հախվերդյանի, Ա. Եղիազարյանի, Դ. Գասպարյանի եւ ուրիշների գեղագիտական սկզբունքներից: Պահանջվում էր ժամանակի առաջընթացին համապատասխան ապահովել գրական մակարդակ, պոեզիան ազատել երեկվա կաղապարների գերությունից, մտքի ծանծաղութից, գավառական հետամնացությունից, այն հասցնել ժամանակակից մարդու հոգեւոր ու մտավոր զարգացման աստիճանին:

* * *

1920 թ. սկզբից լրիվ կազմալուծված էր գրական կյանքն Արցախում: Ազերի-թուրք հրոսակների կողմից ավերվել էր հայակերտ ու հայաշունչ Շուշին: Իսկ հայտնի էր, որ 20-րդ դարի սկզբին Շուշիում հրատարակվում էին մոտ 20 անուն թերթեր ու ամսագրեր: Գրական կյանքի կազմակերպման առումով զգալի դեր էին կատարել «Ղարաբաղ», «Ծիածան», «Նեցուկ», «Արցախ», «Ղարաբաղի սուլհանրակ», «Նոր կյանք» եւ այլ պարբերականներ: Խորհրդային տարիներին չվերահրատարակվեց վերոհիշյալ պարբերականներից եւ ոչ մեկը: Աղրբեջանի ղեկավար շրջանները խսքով քարոզում էին ժողովուրդների բարեկամություն, սակայն գործով վարում էին հայահալած քաղաքանություն: Ճիշտ է, 1923 թ. Ստեփանակերտում սկսեց

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Հրատարակվել «Խորհրդային Ղարաբաղ», 1924-ին՝ «Երիտասարդ լենինիստ», ապա՝ «Երիտասարդ բոլշևիկ» թերթերը, որոնց շուրջ պետք է համախմբվեին որոշ փորձ ունեցող եւ սկսնակ գրողները, սակայն տվյալ ժամանակաշրջանի քաղաքական անքարենպաստ մթնոլորտում հայ գրականությունը զարգացման հունի մեջ մտնել չէր կարող: Թեկուզ այդ ժամանակահատվածում Ռուսաստանից Ղարաբաղ էր Վերադարձել արդեն բավականին ճանաչում գտած բանաստեղծ Գրիգոր Ներսիսյանը, որը հայ գրականություն էր դասավանդում Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում եւ աշխատում էր նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթում՝ որպես ոճաբան, միեւնույն է, նրա ջանքերը, ուղղված գրական օջախ կազմակերպելուն, գրական շատ թե քիչ ծիրք ունեցող գրողների համախմբելուն, արդյունք չտվին: Գ. Ներսիսյանին մեծ դժվարությամբ հաջողվեց Ստեփանակերտում հրատարակել միայն իր «Պոեմներ» եւ «Բանաստեղծություններ» ժողովածուները, որոնցով էլ եղափակվեց նրա ստեղծագործական կյանքը: 1937 թ. նա եւս դարձավ անհատի պաշտամունքի զոհը:

1930-ական թվականներին Ստեփանակերտում իրենց գրական փորձերը կատարեցին Խորյել Պետրոսյանը (Խապետ), Գրիգոր Մովսիսյանը, Բոգդան Զանյանը, Վերդի Վերխաչյանը եւ ուրիշներ: Ստեղծվեց գրողների Ղարաբաղի մարզային բաժանմունք, որի ղեկավարությունը հանձնարարվեց Խապետին:

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Արցախի ազգաբնակչության մեկ երրորդը զորակոչվեց կարմիր բանակի շարքերը, այդ թվում՝ նոր ասպարեզ իշխած գրողները: Որբացավ գրողների մարզային բաժանմունքը: Որոշ ժամանակ անց բաժանմունքի ղեկավարությունը հանձնարարվեց

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Միքայել Հարությունյանին, իսկ հետպատերազմյան շրջանում այն սկսեց ղեկավարել Բագրատ Ովուբաբյանը: Նրա նախաձեռնությամբ գրական կյանքը որոշ աշխուժություն ապրեց: Ստեղծագործական իրենց փորձերը կատարեցին արձակագիր Ս. Աբրահամյանը, բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Գ. Հովսեփյանը եւ ուրիշներ: Ընդհանրապես, մինչեւ 1950-ական թթ. սկիզբը գրական կուտակումների մասին հնարավոր չէ լուրջ խոսք ասել: Այն սկսեց որոշակի աշխուժություն ապրել միայն 1954 թ., անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Այդ տարիներին եւս Աղրբեջանի ղեկավարների կողմից շարունակվում էր երկդիմի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հանդեպ: Արցախը զոկված էր գրական-գեղարվեստական ամսագիր եւ առանձին գրքեր տպագրելու հնարավորությունից: Գրողների լղարիկ գրքերը հրատարակվում էին Բաքվում, մեծ դժվարությամբ, դաժան քննադատության հսկողության տակ:

1930-ական թվականներին Աղրբեջանում ապրող մոտ մեկ միլիոն հայ ազգաբնակչության ընթերցասեր հասարակայնության համար Բաքվում հայերեն լեզվով հրատարակվում էր «Խորհրդային գրող» ամսագիրը, որը փակվեց Հայրենական մեծ պատերազմի սկզբին: 1948 թ. փակվել էր նաև Բաքվի Լ. Երամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը, որ գործում էր 1870 թվականից: Կրճատվել էին հանրապետական ռադիոյի հայկական հաղորդումները: Հայերեն գրական-գեղարվեստական հանդես ունենալը ժամանակի հրատապ պահանջ էր դարձել: Համախմբելով իրենց ուժերը, Արցախի եւ Բաքվի հայկական սեկցիայի գրողները 50-ական թթ. սկզբից բազմիցս դիմել էին Աղրբեջանի կոմիունի Կենտկոմի ղեկավարությանը եւ

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԴՐԵՆ

Ատացել մերժողական պատասխան: Հետեւողական ջանքերի շնորհիվ վերջապես 1957 թ. սկսեց վերահրատարակվել «Խորհրդային գրող» երկամյա հանդեսը՝ «Գրական Աղրբեջան» անունով: Ժամանակակից գրականության այն հարցերը, որ հուզում էին Արցախի գրողներին, հիմնականում արծարծվում էին այդ հանդեսում: Բուն Արցախում գրական—գեղարվեստական հանդես ունենալու երազանքն անգամ Աղրբեջանի ղեկավար շրջաններում դիտվում էր որպես վտանգավոր երեւութեւ ամեն կերպ՝ տեղորի, ճնշումների օգնությամբ խեղդում էին այն: Այդ էտապում մնում էր միայն բավարարվել մոտ 400 հազար հայ ազգաբնակչություն ունեցող Բաքվում գրական հանդես ունենալու երեւությունը: Հանդեսի խմբագիր նշանակվեց բանաստեղծ Ս. Գրիգորյանը:

Հանդեսն առաջին համարի խմբագրական հոդվածում նշել է իր նպատակներն ու խնդիրները՝ հետպատերազմյան շրջանի գրականության կազմակերպման ու զարգացման ճանապարհին: Տվյալ ժամանակաշրջանի ոճով կոմունիստական կուսակցության Կենտկոմի անվան հետ կապելով ժողովրդի բոլոր հաջողությունները, առաջնորդող հոդվածում ընդգծվել են այն արորիթմները, որ կարեւոր էին այդ էտապի համար: Հանրապետության հայ գրողներին կոչ է արվել ավելի սերտորեն կապվել կյանքին, բազմակողմանիորեն ուսումնասիրել այն, տեսնել նրա բնորոշ գծերն ու տիպական երեւութեները, ստեղծագործական ուժերն ուղղել ժողովրդի կյանքը ճշմարտացիորեն պատկերելուն, գաղափարապես ու գեղարվեստորեն լիարժեք երկեր ստեղծելուն: Նշվել է, որ հանդեսը ծավալելու է ստեղծագործական անաշառ քննադատություն, պայքարելու է գրողների ստեղծագործության գաղափարական հստակության եւ գեղար-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Վեստական բարձր մակարդակի համար: Այդ նպատակով պլանավորվել էր տպագրել տեսական-քննադատական հոդվածներ ու գրախոսականներ:

Հանդեսի առաջին համարում ողջույնի խոսքով հանդես են եկել Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Սարմենը: Ուշադրության արժանի է Ստ. Զորյանի խոսք-խորհուրդը, որ բերում ենք ամբողջությամբ. «Սիրելի ընկերներ: Ծնորհավորում եմ ձեր ամսագրի վերահրատարակությունը: Որքան գիտեմ՝ դրա պակասը վաղուց զգում էին Աղրբեջանի հայ գրողները եւ հայ հասարակությունը: Ձեր ամսագիրը հասունացած պահանջ էր, հետեւաբար եւ ունի լուրջ անելիքներ՝ բավարարել մայրենի գեղարվեստական խոսքի պահանջն ու կարիքն ունեցող ընթերցողներին, մեր կյանքի հետաքրքրական երեւությները նկարագրել գունագեղ ու ճշմարտացի պատկերներով... աջակցել գրական երիտասարդության կատարելագործմանը:»

Ձեզ սպասում է ըստ ամենայնի հանրօգուտ եւ շնորհակալ աշխատանք, որի համար եւ սրտանց հաջողություն եմ ցանկանում:

25 փետրվարի, 1957, Երևան»:²

Հանդեսի առաջին համարում Արցախի գրական օջախից գեղարվեստական գործերով հանդես են եկել Բ. Ուլուբարյանը, Բ. Զանյանը, Ս. Խանյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Բեգլարյանը, Գ. Գարիիլյանը, Ի. Ալավերդյանը, ինչպես նաև գրաքննադատ Ժ. Անդրյանը՝ «Մտորումներ» գրախոսությամբ:

ՔՆԱԿԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԽՈԽՉՈՒՐԴՆԵՐԸ

«Գրական Աղբբեջան» (այսուհետեւ՝ «Խորիրդային գրող») համեսի երկրորդ համարում «Տեսական-քննադատական» խորագրի տակ գետեղվեց S. Գրիգորյանի «Վ. Ի. Լենինը արվեստի եւ գրականության պարտիականության ու ստեղծագործական ազատության մասին» հոդվածը: Նեղինակը մի կողմից նշում է ՍՄԿԿ ՀՀ համագումարի նշանակությունն անհատի պաշտամունքը քննադատելու ուղղությամբ, մյուս կողմից ճիզ ու ջանք չի խնայում փառաբանելու Լենինի հայտնի «ցուցումները» գրականության եւ արվեստի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ: Նեղինակը, տեղի տալով գրեհիկ հասարակաբանությանը, գրողներին խորհուրդ է տալիս խստագույնս հետեւելու գրականության կուսակցականության եւ դասակարգանության լենինյան պահանջներին: Բայց հայտնի են լենինյան այդ սկզբունքների վնասարարությունը գրականության եւ արվեստի բնագավառում: Նոդվածագիրը գրողներին համարում է կոմկուսի օգնականներ՝ կոմունիզմի կառուցման գործում:

Դանդեսի այդ նույն համարում տեղ է գտել արձակագիր Ս. Գասպարյանի «Ավելի համարձակորեն խորամուխս լինել կյանքի մեջ» հոդվածը Աղբբեջանի պետական իրատարակչության կողմից հայերեն լույս ընծայված «Գրական ալմանախ»-ի առթիվ: Գնահատելով Արցախի գրական օջախի ներկայացուցիչներ Բ.Ռվագարյանի, Բ. Զանյանի, Ի. Պետրոսյանի, Գ. Գաբրիելյանի, Ս. Խանյանի, Ա. Շովիաննիսյանի, Յ. Բեգլարյանի ստեղծագոր-

ծությունները, գրախոսը ընդգծում է դրանց առավելությունները եւ միաժամանակ նշում թերությունները՝ առանձնապես իրական կյանքը թույլ պատկերելու հաճար: Գրախոսության մեջ նկատվում է անկոնֆլիկտայնության քարոզի ազդեցությունը: Ի հակակշիռ նման ելույթների, արդեն հնչում էր Պ. Սեւակի առողջ ձայնը:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ Պ. Սեւակը համարձակութեն հերքում էր ճառայնությունը, սխեմատիզմը, նկարագրականությունը եւ այլն: Նա գրում էր. «Ես համոզված եմ, որ ժամանակակից պոեզիայում էլ ավելի պետք է ուժեղանա անհատական, քնարական սկիզբը: Այնտեղ, որտեղ կա իսկական «Ես»-ը, որտեղ կա իսկական անհատականություն՝ չի կարող չլինել քաղաքացիականություն... Մենք հիմա ձգտում ենք անհատական եւ քաղաքացիական սկիզբների այնպիսի համադրության, որոնք բնորոշ էին Մայակովսկու եւ Չարենցի ստեղծագործական սկզբունքներին: Մենք նորից ու նորից վերադառնում ենք նրանց մեջ ավանդույթներին»:³

* * *

Արցախի գրական օջախի նախանձախնդիր հետեւողներից էր գրականագետ Վ. Մնացականյանը: Այս առումով արժե իիշել նրա «Ժամանակի հետ, ժողովրդի հաճար» հոդվածը, որտեղ առաջին անգամ նա ընդհանրացնող խոսք է ասել Արցախում ապրող եւ ստեղծագործող հայ բանաստեղծների արած-դրածի նախն միաժամանակ խորհուրդներ տալով արդի պոեզիայի զարգացման հիմնական միտումների, տեսական-գեղարվեստական քննարկումների եւ ծեռքբերումների կապակցությամբ:

Գրականագետը խորհուրդ է տալիս իիշել, որ գրականությունը «մի քանի ականավոր գրողների գրչի արգասիք չէ», որ

գրականության պատմությունը նաեւ բազմաթիվ շարքայինների աշխատանքի արդյունք է, «առանց որոնց անհնաստ է դաշնում գրականության դրոշակակիրների գոյությունը»:

Պետք է նշել, որ դեռեւ 1950-ական թթ. տեսանելի էր Արցախի գրական օջախի ներկայացուցիչների կողեկտիվ լուսը: Մեղանչած չենք լինի ծշմարտության դեմ, եթե նշենք, որ 30-40-ական թթ. հայակերտ ու հայաշատ Բաքվում էին ստեղծագործում թ. Շուրյանը, Յ. Սահյանը, Ա. Գրաշին, Ա. Ղարբնին, Ս. Գրիգորյանը եւ այլոք, որոնք մասնակցում էին նորագույն շրջանի հայ պոեզիայի զարգացմանն ու հարստացմանը: Սակայն նշենք, որ այդտեղ թույլ էր գրական քննադատությունը: Այն հատուկենտ գրախոսականները, որ առիթից-առիթ տպագրվում էին առանձին գրքերի մասին, չէին կարող տալ գրականության զարգացման ընդհանուր պրոցեսի պատկերը, վերհանել եւ պաշտպանել առողջ տենդենցները, դատապարտել ռեալիստական արվեստի ոգուն խորթ ու անհարիր երեւույթները: Գրականագետն Արցախի գրական օջախի ձեռքբերումները սերտորեն կապում է սովետահայ պոեզիայի զարգացման ընդհանուր պրոցեսների հետ՝ հիշեցնելով 1946թ. Դայաստանի գրողների երկրորդ համագումարում Ավ. Իսահակյանի ընդգծած «Մեկ ժողովուրդ, մեկ գրականություն» սկզբումքը: Վ. Մնացականյանը կոնկրետ օրինակներով հաստատում էր, որ Արցախի գրողները հասկանում են, որ չի կարելի բարձր գաղափարայնությամբ պոեզիա ստեղծել՝ առանց գեղարվեստական կենսունակ միջոցների, որ հնարավոր չէ մեծ գաղափարներ արտահայտել ցածր արվեստով: Նրանք ընդունում էին մեծերի այն խորհուրդը, որ գրողն իր ճանապարհին պետք է միշտ նայի առօրյա պոեզիայի բարձունքից: Դրա լավագույն վկայությունը նրանք տեսնում էին Ե. Չարենցի երկերում:

Արցախի բանաստեղծները չէին մոռանում հարազատ մի-

ջավայրը ներկայացնող անմիջականության մասին: Ինչպես Դայատանից դուրս ապրող բանաստեղծները, այնպես էլ Արցախի գրական օջախի ներկայացուցիչները ստվորում էին և. Զարյանից, Յ. Սահյանից, Ս. Կապուտիկյանից, Յ. Հովհաննիսյանից, Վ. Դավթյանից, Մ. Մարգարյանից՝ ձգտելով հեռու մնալ նկարագրության տուրիստական ոճից, կեղծ հիշտորականությունից, ընդհանուր դատողականությունից: Այդ ժամանակաշրջանում փորձառու գրողների հետ հանդես էին գալիս երիտասարդ բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Վ. Օվյանը, Ս. Խանյանը, Գ. Աղաջանյանը, Ա. Հովհաննիսյանը, Յ. Բեզզարյանը եւ ուրիշներ: Նկատվում էր նրանց ստեղծագործական առողջ ձայնը, մարտական ոգին, ժամանակակից զգացողությունը: «Խորհրդային գրող» հանդեսի տարբեր համարներում 50-ական թթ. Վերջերին իրենց ծանրակշիռ գրախոսություններով հանդես են եկել գրականագետներ Ս. Արզումանյանը, Յ. Սերոբյանը, Գ. Անտոնյանը, Ա. Բաբյանը, Ժ. Անդրյանը եւ ուրիշներ: Այդ կապակցությամբ արժե նշել Ա. Բաբյանի «Կենսական ճշմարտության ուժը» (ԽԳ, 1959, թիվ 4), Ս. Արզումանյանի «Գրողի կենսազգացողությունը» (ԽԳ, 1958, թիվ 2), Յ. Սերոբյանի «Խոստումնալից սկիզբ» (ԽԳ, 1959, թիվ 6), Ժ. Անդրյանի «Լավ է, երբ երգն է կարկաչում» (ԽԳ, 1959, թիվ 6) հոդվածները: Աստիճանաբար նկատելի էր դաշնում հանդեսի դերը գրական կյանքի կազմակերպման, երիտասարդ գրողների աճեցման բնագավառում: Նրանում տպագրված տեսական-քննադատական հոդվածներում գրողների կոնկրետ երկերի վերլուծությունների հիման վրա զգալի գործ է կատարվել՝ գրականությունն անհրաժեշտ մակարդակի հասցնելու ուղղությամբ: Այդ առումով ուշագրավ է «Արդիականությունն ու մեր խնդիրները» խմբագրական հոդվածը (1960թ., թիվ 4): Անդրադառնալով երիտասարդական պեղիային, որպես թերություն, հոդվածում մատնանշվում է է-

պիգոնությունը եւ ինքնակրկնությունը: Ընդհանրացնող տեսական-քննադատական այդ խոսքի մեջ անդրադարձ է եղել նաև նոր գրական ասպարեզ իշած երիտասարդ գրողների ստեղծագործական աճին: Գրական երիտասարդության հարցը համարվում է գրականության ապագայի խնդիրը: Դասկանալի է՝ երիտասարդ բանաստեղծները նիւնույն մակարդակի վրա չեն կանգնած: Նրանց մեջ կային այնպիսիները, որոնք ունեին ստեղծագործական որոշ կուլտուրա, բայց շատ դանդաղ էին առաջ ընթանում: Կային եւ այնպիսիները, որոնք համառ աշխատանքով ստեղծում էին արժանի գործեր: Նմաններից էր Գ. Գարդիելյանը: Որպես մանկավարժ նա լավ գիտեր մանկական աշխարհը: Նա կարողանում էր ստեղծել հետաքրքիր սյուժեներ, գրում էր պարզ, մատչելի լեզվով:

Սակայն ընթերցողներին անհանգստացնում էր որոշ պոետների գործերում արմատներ նետած շարլոնը, գորշությունը: Պոեզիայից ասես չքացել էր փիլիսոփայությունը, որ հրաշալի ավանդույթ էր մեր դասական պոեզիայում՝ Շ. Թումանյանի, Ավ. Խասհակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի եւ այլոց մոտ: Դաճախ մեր բանաստեղծները նշում էին միայն փաստը՝ առանց փիլիսոփայական հետեւությունների, այսինքն, այն, ինչ կարող է յուրաքանչյուր անել: Դազվադեպ էին փիլիսոփայական խորհրդածությունները կյանքի, սիրո, աշխատանքի, բնության նասին: Դամարյա բացակայում էին բյուրեղացած ինաստությունը, գեղեցիկ աֆորիզմները: Ծամծմված համեմատություններն ու փոխարերությունները թափառում էին ոտանավորից ոտանավոր: Դեմոց դա էլ տաղտկալի միապահադրություն էր ստեղծում, վանում ընթերցողին: Բնության պատկերները հաճախ ինքնանպատակ էին, չեն զուգորդվում քննարական հերոսի ապրումների, հույզերի հետ, չեն բացում նրա հոգեկան աշխարհը: Ամբավարար էր գրական օջախի քննադատների գործը: Քիչ էր խոսվում

թերությունների մասին: Ժամանակի քննադատության վիճակը Արցախում ամենախոցելի տեղն էր: Քննադատական նոր կադրերի ստեղծման հարցը համարվում էր կարեւոր խնդիր:

* * *

Գրական կյանքը շարունակում էր աշխուժանալ: 60-ական թթ. Հայաստանի գրողներն ու քննադատներն ի մի էին բերում անցած տասնամյակի արդյունքները, ձգտում որոնել ու վերագտնել գրականության հեռանկարային ընթացքը: Հայաստանի մամուլը լայն տեղ էր հատկացրել գրականության տասնամյա ձեռքբերումների գնահատմանը: Նշվում էր, որ 50-ական թթ. հայկական պոեզիան ավելի հնչել ու հարուստ էր, քան արձակն ու դրամատուրգիան: Այդ կարծիքին էին Գ. Մահարին, Ն. Զարյանը, Ս. Սարինյանը, Էդ. Զրբաշյանը, Ս. Աղաբարյանը, Յ. Թամրացյանը եւ ուրիշներ: Այդ էտապում Ն. Զարյանի, Գ. Մահարու, Գ. Սարյանի, Յ. Շիրազի կողքին հանդես եկան Պ. Սեւակը, Յ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Ղափյանը, Գ. Էմինը, Յովկիան-Նիսյանը, Մ. Մարգարյանը, արձակում ասպարեզ էին իշել Յ. Սաթելոյսյանը, Վ. Պետրոսյանը եւ այլոք, որոնց ստեղծագործություններում նոր հերոսը համապատասխանում էր ժամանակի գարգացման մակարդակին, ասել է թե՝ գրականությունը խորանում էր, մարդկայնանում:

Հայաստանում տեղի ունեցող գրական-քննադատական այս փոփոխությունների ազդեցությունը նկատվեց նաև Լեռնային Ղարաբաղի գրական օջախի ներկայացուցիչների ստեղծագործական կյանքում: Ենշտ է, Արցախի գրական միջավայրը չուներ իր աչքի ընկնող գրաքննադատները, սակայն նոր ընթացքին օգնելու կարգով հանդեսին երեւանից իրենց հոդվածներն ու գրախոսություններն էին ուղարկում մեր ականավոր քննադատներն ու գրողները: Այդ առումով ցանկալի եւ ոգեւորող երեւույթ հան-

Դիսացավ Ն. Զարյանի «Բարեխոստում քողբոջներ» տեսական-քննադատական ծավալուն հոդվածը՝ տպագրված «Խորհրդային գրողոց» համրեսի 1961թ. 2-րդ համարում: Անվանի գրողն այդ հոդվածը նվիրել է Երիտասարդ բանաստեղծներ Ա. Շովիան-Շիյանի «Բարի ճանապարհ», Ս. Խանյանի «Կարկաչ», Վ. Արդահանյանի «Բողբոջներ», Գ. Աղաջանյանի «Շավիդներ», Ս. Աբրահամյանի «Ներշնչանք», Գ. Օհանյանի «Կաթիլներ», Գ. Շովսեփյանի «Երկիր իմ հայրենին» առաջին ժողովածուների քննարկմանը:

Ընդունելով այն ճշմարտությունը, որ Երիտասարդ բանաստեղծի մասին վճռական գնահատության խոսք ասելը սաստիկ դժվար եւ պատասխանատու գործ է, Երեմն մինչեւ իսկ վտանգավոր, այնուամենայնիվ, Ն. Զարյանն անաշառ նշում է դրանց արժանիքները եւ թերությունները, կատարում ընդհանրացումներ եւ տալիս ուսանելի խորհուրդներ: Ականավոր գրողը հաստատում է, որ Երիտասարդ բանաստեղծը, արձակագիրը, դրամատուրգը գրականության մեջ բերում է մի նոր աշխարհ, մի նոր հմայիչ անհատականություն: Դա պետք է լինի Երիտասարդ գրողի առաջին հատկությունը: «Երիտասարդ ասելով,- գրում է Զարյանը,- մենք հասկանում ենք իրիզոնի վրա բարձրացող մի նոր աստղ, որ տակավին տարտամ է, մառախլապատ, բայց գնալով զտվում է եւ պայծառանում:

Տարտամությունն ու մառախլապատությունն այն թերություններն են, որոնք անխուսափելի կերպով ուղեկցում են Երիտասարդ բանաստեղծին եւ ուշ կամ կանուխ կփարատվեն, եթե գործ ունենք իսկական տաղանդի հետ»:⁴

Ն. Զարյանը համձն է առնում, որ դժվարանում է եւ չի կամ-

Նա կրահել, թե քննարկվող բանաստեղծներից որմ է աստղացու եւ որը՝ ասուապ: Բայց նա բոլորի մեջ տեսնում է տրոփող հուզված մի սիրտ՝ հայրենասիրական նվիրական մի զգացում: Նա նշում է եւ դրա պատճառը: «Ղարաբաղը, գրում է նա, - իր բարձրաբերձ լեռներով եւ անդնդախոր ծորերով, իր փարթամ անտառներով եւ արագավազ գետերով, իր քաջարի, ազատաբաղձ, ազատասեր եւ միաժամանակ ավանդապահ ժողովրդով միշտ էլ եղել է հայ բանաստեղծների ոգեւորության աղբյուրը՝ սկսած Լեւոն Աթաբեկյանից մինչեւ Աշոտ Գրաշի: Ղարաբաղն իր բարձրագահ աթոռն ունի նաեւ մեր այս երիտասարդ բանաստեղծների սրտում»:⁵

Զարյանը նկատում է, որ քննարկվող ժողովածուների մեջ առավելապես հաջողված եւ հուզիչ են այն բանաստեղծությունները, որոնք նվիրված են հայրենի տան գաղափարին, Ղարաբաղին: Նա երիտասարդ բանաստեղծներին ոգեւորող ակունքներից մեկը հայ մշակույթի անցյալ գործիչներն է համարում. դա լավ է, ուսուցանում է հոդվածագիրը, որովհետեւ նրանք բարձր են գնահատում այն ժառանգությունը, որ մեր մեծերը թողել են մեզ: Ամենից ավելի հաճախ բանաստեղծությունների նյութ են դառնում Սայաթ-Նովան, Աբովյանը, Թումանյանը, Չարենցը:

Դայտնի է, որ հետպատերազմյան շրջանի գլխավոր թեմաներից մեկը պատերազմի եւ խաղաղության մոտիվն էր, որին, բնականաբար, հաճախ էին անդրադառնում նաեւ երիտասարդ բանաստեղծները:

Սակայն, ինչպես նկատել է Ն. Զարյանը, երիտասարդների «թեմատիկան ավելի հարուստ է եւ բազմակողմանի: Նրանց հուզում է սերը, ինքնությունը, ընտանիքը եւ գոյության ուրիշ հարցեր» (ընդգծումը՝ Ն. Զարյանի):⁶

Այս երեւույթը ողջունում է անվանի գրողը եւ օրինակ բերում սովետահայ պոեզիայի մեջ անհատի եւ հասարակության փոխհարաբերության հարցի լուսաբանումը, հանձին Ս. Մարգարյանի:

Վերիանելով քննության ենթակա գրքույկների թեմատիկ եւ գաղափարական արժանիքները, Զարյանն ընդգծում է. «Ամենից ուրախալին այն է, որ այս երիտասարդ բանաստեղծներից շատերը ծգտում են խուսափել աննյութ վերացական ներքողներից, անորոշ «քնարական» զեղումներից եւ իրենց մտահղացումներն արտահայտել առարկայական, կոնկրետ պատմությունների կամ պատկերների միջոցով (ընդգծումը՝ Ն. Զ.):

... Ուշադիր ընթերցողը կնկատի, որ այս երիտասարդ բանաստեղծները ոտանավորները կառուցելիս երբեմն հասնում են տեխնիկական բարձր մակարդակի, դրսեւորում են, եթե կարելի է ասել, ոտանավորի մշակույթ: Դա պարտադիր է ամեն մի երիտասարդ բանաստեղծի համար, մանավանդ այժմ, երբ Սիլվա Կապուտիկյանը, Չամն Սահյանը, Գեւորգ Էմինը, Վահագն Դավթյանը, Մարո Մարգարյանը, Չրաչյա Շովիաննիսյանը, Պարույր Սեւակը, Սաղաթել Չարությունյանը, այսինքն, սովետահայ պոեզիայի կրտսեր սերմորի ներկայացուցիչները մեր բանաստեղծական տեխնիկան հասցրին միանգամայն բարձր մակարդակի»:⁷

Դոդվածում, կոնկրետ օրինակների հիման վրա նշվում է նաև քննարկվող ժողովածուներում եղած թերությունները: Առաջին աչքի ընկնող թերությունը համարվում է այն փաստը, որ երիտասարդ բանաստեղծները հաճախ չեն կարողանում լավ մտահղացումը մարմնավորել տեխնիկապես կատարյալ ոտանավորի մեջ: Երկրորդ թերությունը հոդվածագիրը համարում է սխալ պատկերներ ստեղծելը, այսինքն, արտաքին աշխարհի ծուռ պատկերումը: Նա խորհուրդ է տալիս խուս տալ անհաս-

Կանալի եւ հակասական պատկերներ ստեղծելու պրակտիկայից, բառն օգտագործել ճիշտ, իր տեղում, միտքը չզոհել, խուսափել լեզվաօճական սխալներից եւ անհարթություններից: Մատնացույց է արվում նաեւ այլ կարգի թերություններ: Դա նախ եւ առաջ վերացականությունն է, պրոզայիկ ներքողը, լրագրային ճառը, գաղափարազրկությունը, նեղ, ալբոնային ապրումների դրսեւորումը:

Հոդվածագիրը վերջում ընդիանրացնում է. «Այո՛, գրքույկների մեջ կան ոչ միայն իսկական բանաստեղծական կտորներ, այլև ուրախալի խոստում, որ մեր պոեզիայի այդ կանաչավուն բողբոջները, եթե ոչ բոլորը, ապա գոնե նրանցից մի քանիսը վաղ թե ուշ կծաղկեն իրենց անհատական երանգով ու բույրով»:

8

* * *

1961 թ. հանդեսի տեսական-քննադատական բաժնում արժե հիշատակել բանաստեղծ-արձակագիր Մ. Սարգսյանի «Բաց նամակ ընկ. Դանիել Գեւորգյանին» (1961, h.1), լեզվաբան Խ. Մեսրոպյանի «Գրողի լեզվաօճական վարպետության մի քանի հարցերի շուրջ» (1961, h.4) հոդվածները: Առաջինում հեղինակը վերլուծում եւ գնահատում է բանաստեղծ Դ. Գեւորգյանի «Բարախումներ» ժողովածուն, իսկ երկրորդ հոդվածում Խ. Մեսրոպյանն անդրադառնում է գրողի լեզվաօճական առանձնահատկությունների պրոբլեմին: Լեզվաբանն Արցախի հայ գրողների գոքերի վերլուծության հիման վրա խորհուրդ է տալիս բարձրացնել լեզվական մակարդակը, հարստացնել բառապաշտը, գրել համազգային գրական լեզվի բոլոր օրինաչփություններին համապատասխան:

Սակայն Խ. Մեսրոպյանի ուսանելի հոդվածը միանշանակ չընդունվեց: Հանդես եկավ բանաստեղծ Սամվել Քնարունին՝ «Երբ բացակայում է օրյեկտիվությունը» հոդվածով, որտեղ անտեղի մեղադրում է հոդվածագրին ոչ օրյեկտիվության մեջ: Հանդեսի խմբագրությունը, դիտավորյալ, առանց խմբագրելու, 1962 թ. թիվ 1-ում տպագրեց Ս. Քնարունու լեզվական սխալներով գրված հոդվածը, միաժամանակ տպագրելով Պարույր Սեւակի պատասխանը Ս. Քնարունուն: Պ. Սեւակը նախօրոք ծանոթացել էր Քնարունու հոդվածին եւ հանդես եկել «Եվ չգիտի, որ չգիտի» հոդվածով: Բանաստեղծը մեջթերելով պարսիկների «Սարդ կա՛ գիտի, որ գիտի, մարդ կա՛ գիտի, որ չգիտի, մարդ կա՛ չգիտի, որ չգիտի» ինաստուն խոսքը՝ ընդ- գծում է, որ գրականությամբ գրաղվելու իրավունք պիտի ունենան այն մարդիկ միայն, ովքեր «գիտեն, որ գիտեն»: Ուրիշ հարց է, թե այդ իրավունքը չարաշահողների թիվն ավելի է, քան դրանից օգտվողներինը: Այնուհետեւ Սեւակը նշում է, որ գրականության մեջ աշխատելու արտոնություն ունեն նաև նրանք, ովքեր «գիտեն, որ չգիտեն»: Այս արտոնությամբ են գրական ասպարեզ իշխում օժտված պատամիները, որոնք շատ բան չգիտեն: Մեծ բանաստեղծը ափսոսանքով ու ցավով արձանագրում է, որ գրականությամբ գրաղվում են նաև մարդիկ, ովքեր «չգիտեն, որ չգիտեն»:

Պ. Սեւակը խրախուսում է Բաքվում իրատարակվող «Խորհրդային գրող» հանդեսի խմբագրությանը, որ գովարժան քայլ է արել՝ տպագրելով Խ. Մեսրոպյանի «Գրողի լեզվաօճական վարպետության մի քանի հարցերի շուրջ» հոդվածը: Նա նույնիսկ խորհուրդ է տալիս Երեւանում տպվող «Սովետական գրականություն» ամսագրին՝ ուշադրություն դարձնել այդ պրոբլեմի քննարկմանը: Պ. Սեւակը ընդգծում է. «Մեր արողի գրականության

լեզվաօճական հարցերն այնքան են բարդվել, որ իշխեցնում են մաթեմատիկական այն ծանոթ խնդիրները, որոնց մեջ առկա են եւ փոքր, եւ միջակ, եւ մեծ փակագծերը: «Գրական Աղրբեցան»-ի խմբագրությունը, կանխելով «Սովետական գրականություն» ամսագրին, Խ. Մեսրոպյանի միջոցով փորձել է ձեռնարկել այդ խնդրի լուծմանը: Խ. Մեսրոպյանը, իհարկե, չէր կարող խնդրի վերջնական պատասխանը տալ: Չէր կարող՝ ոչ սուս այն պատճառով, որ նրա կարողություններից վեր է դա: Չէր կարող, որովհետեւ այդ խնդրը, կրկնում են, ունի մեկից ավելի փակագծեր, որոնց բացումին պիտի մասնակցություն բերեն նաեւ ուրիշ՝ մեկից ավելի «թվարաններ»:⁹

Խիստ քննադատվում է Ս. Քնարունին Խ. Մեսրոպյանի ուսանելի հոդվածը չհասկանալու, նրան անարդարացի մեղադրելու համար: Սեւակը միաժամանակ մատնացույց է անում Քնարունու հոդվածի ցածր մակարդակն ու անթիվ սխալները: Ս. Քնարունու անարդարացի ամբաստանությունը Պ. Սեւակը որակում է որպես «քննարունիություն» եւ բացատրում, թե ինչ ասել է դա.

«Քնարունիությունը:

Գիք ստորագրելու իրավունք պիտի ունենա միայն նա, ով գրագետ է կատարելապես, թի՞շկ լինի, ինժենե՞ր, ֆիզիկո՞ս, թե՞ գյուղատնտես: Բայց ստորագրել որեւէ գրական երկ եւ ինչ-որ չափով գրագետ չլինել՝ նշանակում է «աստծուն աստվածատուր ասել»: Եվ իենց «աստծուն աստվածատուր ասողներին» է, որ պիտի կոչել «քննարունիներ»:

«Քննարունիությունն» է պատճառը, որ գրող դառնալը հեշտացավ՝ սեփական ազգանունը կեղծանունով փոխարինելու աստիճան»:¹⁰

Պ. Սեւակը ընդգծում է, որ մեր նախնյաց՝ մեզ կտակած ամենաքանակ գանձը մեր լեզուն է, այն լեզուն, որ ծնվում է մեզ հետ,

բայց մեզ հետ չի մեռնում... «Իր չորս գրական լեզուներով եւ վեց տասնյակ բարբառներով հայերենը, առանց դույզն-ինչ կասկածի, մեկն է աշխարհի այն սակավաթիվ լեզուներից, որոնցով կարող է հապատանալ մարդ կոչված արարածը»:

... Ով հնարավորություն է ստեղծել ելումուտ անելու այդ լեզի դարավոր մթերանոցը, ով նախապատրաստվել է ճաշակելու նրա անսպառելի պաշարը, այլ կերպ ասած՝ ով փոքրիշատե ծանոթ է հայերենի պատմական քերականությանը եւ դրանով իսկ ի վիճակի է բառային շապկի տակ տեսնելու առարկաների կենդանությունը, երեւույթների շարժումը, մտածումի սլացքն ու սուզումը, նա չի կարող չգգալ յուրատեսակ գլխապտույտ՝ համակվելով մի զգացմամբ, որ քիչ է կոչել երկյուղածություն:

Այդ լեզուն «մայրենի» կոչելը մեծ պատիվ է, այդ լեզվով խոսելու ու մտածելու մեջ բախտ:

Իսկ գրել այդ լեզվով, այսինքն՝ գրո՞ղ կոչվել...

Զրմական հանդիսավորությամբ միայն եւ մեհենական անադարտությամբ պիտի հայ գրողը մոտենա յուրաքանչյուր բառի, որովհետեւ բառը գրերի գումար չէ, այլ պաստառապատ մի դիցարձան, որ կարող է ամեն րոպե կենդանանալ ու շնչել, եթե նրան դիպչի ձեռքն այն դյութի, որի հավաքական անունն է գրող»:¹¹

Պ. Սեւակի այս հոդվածը լայնորեն քննարկվել է Արցախի գրողների հավաքներում եւ արվել համապատասխան հետեւություն:

* * *

60-ական թթ. գրական երիտասարդությունն իր վրա էր սեւեռել գրական հասարակայնության եւ հատկապես գրական կազմակերպությունների ու մամուլի ուշադրությունը: Նման վերա-

թերմունքը թելադրել է Բ. Ռվագարյանին՝ գրելու իր «Մտորում-ներ մեր երիտասարդ գրականության մասին» տեսական-քննադատական հոդվածը՝ տպագրված 1963թ., 2-րդ համարում։ Բանն այն էր, որ յուրահատուկ պայմաններում էր աճում Արցախի գրականությունը, որ ստեղծվել եւ զարգանում էր ոչ Հայաստանում։ Դա դժվար առաքելություն էր, որովհետեւ Արցախի գրականությունն աճում էր ազգային գրականությունից ինչ-որ չափով կտրված։ Սակայն այդ դժվարությունը հաղթահարելի էր, որովհետեւ կար ազգային գրականության հարուստ ավանդույթը։ Այդ ընթացքում անվանի գրողները խրախուսում էին երիտասարդներին, սակայն միշտ չէր, որ արվում էին կոնկրետ դիտողություններ։ Որոշ բանաստեղծներ թարմություն ասելով հասկանում էին ավանդական ծեւերի մերժում եւ ամեն մի նորածեւության որդեգրում։ Ոմանք չէին կարողանում հեռու մնալ գրքայնությունից, որ կենսածանաչողության պակասի հետեւանք էր։ Նրանց երկերում քիչ էր զգացվում հայրենի Արցախի շունչը, նրա մարդկանց աշխարհը, բնության բույրը։ Միակ ելքն այն էր, որ անդրադառնային մեր դասականներին, ժամանակակից վարպետներին, բարձրացնեին մտավոր պատրաստականությունը։

* * *

60-ական թթ. ֆոնի վրա արեւային մի փայլատակում էր Պ. Սեւակի «Այո՛, մաքրությո՛ւն ամենից առաջ» հոդվածը։ Անվանի բանաստեղծ-գիտնականն այն գրել է Վ. Շովակիմյանի (Յուսիսային Արցախ) «Կառվող անուրջներ» բանաստեղծությունների գրքույկի առիթով։ Այդ միտունով էլ հենց Պ. Սեւակը նշում է։ «Ին գրածը գրախոսություն չէ, ուստի եւ մի՛ սպասեք ոտանակորների «կոնկրետ վերլուծում», բանաստեղծությունների բո-

Վանդակության համառոտ ու կցկոտոր վերապատում, կենացի վրա մի բաժականար, հետո մի «քայց», ապա՝ «ամփոփենք»:

... Ես գիտակցաբար, գրում եմ ոչ թե Վ. Դովակիմյանի մասին, այլ Վ. Դովակիմյանի առթիվ»:¹² Այս առթիվն էլ հնարավորություն է տվել անվանի պոետին հոդվածը դարձնելու ուսանելի խորհուրդ, սովորեցնող դաս: Քննարկելով «ստեղծագործել-ստեղծել» հասկացությունները, Սեւակը նշում է ամնվաճը նվաճելու, հոգեւոր կաղապարներից, մտային սնոտիքից, բազմապիսի նախապաշարումներից ազատագրվելու ձգտումը: Դեռ ավելին, «Ստեղծել նշանակում է քանդել միջակության անրողները (քանդել եւ ոչ թե գրավել), փլատակել տգիտության ու անգիտության պարիսպները (փլատակել եւ ոչ թե վերաշինել), այլապես ասած՝ շարունակել մի պայքար, որ մարդ արարածը մղում է այն հեռու-հեռավոր օրվանից, ինչ սկսել է... մտածել»:

¹³

Սեւակը բանաստեղծության մեջ ժխտում է մտքի եւ զգացումի աղքատությունը, հույզի եւ խոհի ճղճիմությունը: Դիմելով երիտասարդներին եւ սկսնակներին, մեծ պոետը գրում է: «Կասկածի տակ առեք բոլոր գումագեղ ու քաղցրահումչ բառերը: Խնդրեմ, քաղցրասեր եղեք: Բայց հացը հաց է կոչվում այն պատճառով, որ շաքարացանված չէ: Բառը բանաստեղծի համար հաց է, նրա հաց հանապագօրյան, ուստի եւ չպիտի քաղցր-մեղց լինի»:¹⁴

Սեւակը դեմ է կեղծ ու պատիր, սեթեւեթ ու ծեքծեքում գրականությանը, այն քափ ու փրփրուրից, որի տակ ոչինչ չի եփվում:

«Ճա՞տ վաղուց են բանաստեղծին ննանեցրել զանգի: Միայն ավելացնեմ, որ այդ զանգը լեզվակ չունի, եթե այդ լեզվակը հավուր պատշաճությունն է կամ պատեհապաշտությունը, պատվերը եւ ոչ թե հոգու տուրքը, օրացույցի պահանջը եւ ոչ թե

դարաշրջանի հրամանը: Այդ զանգը զնգում է ժամանակի հովերից եւ ոչ թե օրերի քամուց: Այդ զանգը զնգում է ժողովրդի շնչից եւ ոչ թե ինչ-որ խմբակի գոռում-գոչումից: Այդ զանգը զնգում է, երբ արգելում են զնգալ, եւ լրում է, երբ հրահանգվում է զնգալ: Այդ զանգը՝ օդի մեջ կախված, ոչնչով չպաշտպանված, ձյան եւ անձերի ենթակա չի ժամգապատվում, որովհետեւ երեսապատված է... մաքրությամբ:¹⁵

Հոդվածի վերնագիրը Վ. Հովակիմյանի առաջին գրքույկի առաջին տողն է: Սեւակն ընդգծում է, որ առանց այդ մաքրության չի՝ եղել ու չի՝ կարող լինել մարդկային հոգու եւ ոգու այն մարմնավորումը, որ արվեստ է կոչվում:

Անդրադառնալով՝ պոետական հոեստորականությանը, Պ. Սեւակն ընդունում է մաքուր հոեստորականությունը, որովհետեւ հոեստորականությունն էլ պոեզիայի երակներից մեկն է, միայն թե բանաստեղծն ունենա պատկերավոր մտածողություն: Սեւակը լուրջ ուշադրություն է դարձնում բանաստեղծի ինքնուրույնությանը: «ճշմարիտ բանաստեղծության տերը, - գրում է նա, - պիտի ճանաչվի անստորագիր, ինչպես որ իսկական երգչի ձայնը ճանաչում ենք՝ առանց ռադիոհաղորդավարի օգնության է...»:¹⁶

* * *

Վերը նշեցինք, որ Լեռնային Ղարաբաղում ապրող եւ ստեղծագործող հայ գրողների համար ուղեցույց էին Հայաստանի մամուլում տպագրված տեսական-քննադատական հոդվածները, ինչպես նաև առանձին գրախոսություններն արդի գրական ընթացքի մասին:

Քննադատներն ու գրողներն իրենց մասնակցությունն էին բերում թե՛ Արցախի գրողների տարեկան ստեղծագործական կուտակումների եւ թե՛ առանձին գրողների նոր գրքերի զնահատմանը: Այդ առումով մատնանշելի են հանդեսի 1964 թ. տար-

բեր համարներում տպագրված հոդվածները: Ինչպես օրինակ, Ս. Արմենի «Լավ ու տարբեր» (1964, թիվ 1), Ստ. Ալաջաջյանի «Քննական զրույց» (1964, թիվ 3), Ռ. Ֆելքյանի «Դայերնի տուն» (1964, թիվ 3), Բ. Սեյրանյանի «Լուս եւ ստվեր» (1964, թիվ 3), Ս. Արզումանյանի «Փարվել կյանքին, մարդուն» (1964, թիվ 6) հոդվածները:

* * *

60-70-ական թվականներին երեւան եկան նորագույն շրջանի հայ պոեզիայի զարգացման նոր նախադրյաներ: Առկա էր բանարվեստի հին օրենքները նորոգելու ծգտումը, ժամանակն իմաստավորելու կարևորության զգացումը: Դրանք էլ հենց գրողների առջեւ դնում էին լուրջ խնդիրներ: Մշակվում էր ժամանակի բանարվեստի հանգանակը, փորձեր էին արվում նախանշել գեղարվեստական շարժման ուղղվածությունը: Ինչպես տեղին նշել է գրականագետ Դ. Գասպարյանը, «Քննարկման են դրվում ավանդականի ու նորարարականի, ազգայինի ու համագոյայինի, ժամանակակից ընթանական ու հնացած պատկերացման, քաղաքացիական շեշտվածության ու փիլիսոփայական ներքնատեսության, անձնականի ու անանձնականի հարցերը»:¹⁷ Դենց այս հարցերի քննարկման ֆոնի վրա էլ անվանի գրականագետներն ու գրողները քննարկել են Ղարաբաղի գրողների նոր լուս տեսած առանձին գրեթերը, բանաստեղծական շարքերը: Ականավոր գրող Ս. Արմենը գրախոսելով Վլադիմիր Եւ Սերո Աբրահամյանների «Սարի շուշաններ» եւ «Սիջօրեն» ժողովածուները, նախ ընդգծում է «Պոետները երբեմն լինում են լավ, բայց միանձնան: Կամ, ընդհակառակը, լինում են տարբեր, բայց այդ տարբերության մեջ մեկը լավ է, մյուսը՝ վատ: Ուրեմն, մեզ հարկավոր չեն միանձնան լավ պոետներ եւ ոչ էլ իրարից տարբեր պոետներ, որտեղ բոլորը չեն, որ լավ են»:¹⁸ Ինչպես տեսնում ենք,

Ս. Արմենը պահանջում էր լավ ու տարրեր բանաստեղծների լինելությունը: Հոդվածագիրը նշելով այդ երկու բանաստեղծների նոր գործերի առավելություններն ու թերությունները, պահանջում էր խոսքի ինքնուրույնություն: «Պետք է գրել այնպես, որ գործը կարդալուց քեզ չպաշարի այն տիած զգացունը, թե ինչ-որ տեղում ինչ-որ ժամանակ արդեն կարդացել են այն: Գրողը խորհուրդ է տալիս իրաժարվել ներբողի վաղուց արդեն ձանձրացրած ավանդույթներից, որովհետեւ ոչ թենայի վեհությունը, ոչ գաղափարական ազնվությունը չեն կարող փրկել բանաստեղծությունը, եթե անարվեստ է:

Բանաստեղծական արվեստի պրոբլեմը հուզում է նաև Յ. Ֆելեքյանին: Վերլուծելով Ա. Շովիաննիսյանի «Ղայրենի տուն» ժողովածուն, նա մատնանշում է այն ամենաէական թերությունը, որ նկատվում է ոչ միայն Ա. Շովիաննիսյանի, այլև ժամանակակից երիտասարդ պոետների մի շարք ոտանավորներում: Դա վերացականությունն է, որն իր հետ բերում է չոր ու ցանաք «ոճ», տարտամ ու անհույզ դատողականություն: Երեւի հենց դրանից է բխում նաև ծգձգվածությունը, բանաստեղծական խտացման բացակայությունը: «Ղեղինակը պետք է ավելի ուշադիր լինի ոտանավորի տողի ու բարի նկատմամբ, խուսափի լոկ վանկն ու հանգը տեղը բերելու համար գործածվող խոսքերից»:¹⁹

Այդ օրերին քննարկելով բանաստեղծական արվեստի հարցը, գրականագետ Ս. Արգումանյանը նշում է. «Պարտադիր չէ, որ բանաստեղծությունը միշտ «փայլի» նանրամասների նրբությամբ ու այդ նրբությունների միջոցով արտահայտվող ծշմարտացիությամբ: Առավել էականը բանաստեղծության ընդհանուր, ամբողջական փայլի ու փիլիսոփայական ծշմարտացիությունն է, մարդկային այն ծշմարտությունը, որ ստուգված է կյանքի փորձով եւ օգնում է կյանքում բարու, գերեցիկի հաստատմանը»:²⁰ Գրականագետն ընդգծում է, որ բանաստեղծը պետք է զգա կյանքի տրո-

Վիշտ:

* * *

Լեռնային Ղարաբաղում ստեղծվող հայ գրականության ընթացքը միշտ էլ հետաքրքրել է Ս. Սողոմոնյանին: Ելնելով գրականության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից, անվանի գրականագետը գնահատել է Ղայրենական մեծ պատերազմին հաջորդած տարիների հունձքը, ընդգծել այն առանձնահատկությունները, որ հատուկ էին տվյալ ժամանակաշրջանում ստեղծված գեղարվեստական նվաճումներին, միաժամանակ նշելով եղած թերությունները:

Հետպատերազմյան շրջանում դեռևս իրենց զգացնել էին տալիս ներբողական արվեստի հիմ ձեւերը, որոնք պոեզիան հեռացնում էին կյանքից, նրան գրկում ժողովրդական հողից, դուրս բերում ռեալիստական առողջ հունից: Այդ ժամանակահատվածում ռեալիստական պոեզիայի մեջ ինչ-որ չափով ներխուժել եւ արհեստականորեն պատվաստել էր հոետորական, ներքողերգական գունազարդող ձեւը:

Ս. Սողոմոնյանը բանաստեղծներին համոզում է, որ ճշան քայլքայում է ոտանակորի ձեւը, փօռւն համեմատությունների ետեւում տարրալուծվում են ռեալիստական վառ գրյուները, անխուսափելիորեն ներխուժում են արողայիկ շերտերն ու ծգձգվածությունը, քնարական համակիչ հույզը տեղի է տալիս հրապարակախոսական կրթին. քնարական հերոսը դիմագրկվում է. ոտանակորը գրկում է ներքին լիությունից: Երկրորդ. պատմական պրոցեսմ արտացոլվում է աղավաղված ձեւով: Դիմագրկվում է ժողովուրդ՝ մնալով ստվերի տակ որպես գորշ, պայմանական ֆոն... Երրորդ. տարրալուծվում է մարդկային կենդանի անհատականությունը: Քնարական հերոսը, որպես կանոն, հան-

Դես է գալիս ընդհանուր խոսափողի դերով: Անհատական կյանքը հանդես է գալիս գերազանցապես հասարակական գործունեության ոլորտում, անդեմ, անհույզ, վերացական ծեւերով, գուրկ պատճական կոնկրետությունից, անհատական բազմազանությունից ու իրական հարստությունից: Գրականագետն ուսուցանում է, որ ննան գործերում չեն կարող լինել հոգու խորություն, զգացմունքի գեղեցկություն, անհանգիստ միտք: Ըստ գրականագետի, ավելի սարսափելին այն է, որ հռետորական ոլորտում դիմագրովում է բանաստեղծն ինքը, կորչում է նրա անհատականությունը, սեփական հայացքն ու հանոգնունքը, թուլանում է հավատը սեփական կարողությունների նկատմամբ, զրկում բանաստեղծին՝ հայտնագործելու ընդունակությունից:

Ուրեմն, յուրաքանչյուր բանաստեղծ պետք է ունենա իր հոգեբանական, մտավոր, բարոյական աշխարհը, գործի ինքնուրույն, ազատ, անկաշկան: Իսկական բանաստեղծը պիտի ունենա իր բնավորությունը, խառնվածքը, ոճը, ճաշակը, փայփայած իդեալներին համապատասխան երեւույթներ ու գույններ ընտրելու պահանջը, կյանքը տեսնելու սեփական աչքը:

Իսկական պոեզիայի զարգացումը տվել էր իր հաճելի պտուղները, ստեղծվել էր նրա հարստացման պարարտ հող: Լույս էին տեսել Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961), Յ. Սահյանի «Հայաստանը երգերի մեջ» (1962), «Մայրամուտից առաջ» (1964), Յր. Հովհաննիսյանի «Ծովի լոռությունը» (1964), Գ. Էմինի «Երկու ճամփա» (1962), Վ. Ղավթյանի «Թինդրակեցիներ» (1961), «Անառաջին ամպրոպ» (1964), Պ. Սեւակի «Անլրելի զանգակատուն» (1959), «Մարդը ափի մեջ» (1963) ժողովածումներն ու պոեմները:

Արցախի պոեզիայի մասին առանձին առիթներով արտահայտվել է տաղանդավոր բանաստեղծ Գ. Էմինը: Այդ տեսակետից ընդհանրացող նշանակություն ունի Վ. Հովհակիմյանի

1965թ. լույս ընծայված «Մի գիշեր առանց սրտի» գրքի առիթով նրա գրած գրախոսականը: Անդրադառնալով ներքին եւ արտաքին սփյուռքում ստեղծվող հայ գրականության մասսայականացման անբավարար վիճակին, հոդվածի սկզբում անվանի բանաստեղծը ցավով նշում է. «Ղերեւս չենք կարողանում ընկալել հայ գրականությունը որպես *հայոց լեզվով ստեղծված միասնական գրականություն* (որտեղ էլ որ գրված ու տպագրված լինի այն)»: ²¹ Ըստ բանաստեղծի, դրա հետեւանքը լինում է այն, որ հաճախ երեւանում գրված ու տպագրված որեւէ համեստ ու հասարակ գիրք ավելի մեծ ուշադրության է արժանանում, քան Հայաստանից դուրս հրատարակված ավելի լավ գիրքը: Գ. Էմինը գրախոսեց ոչ այնքան Վ. Չովակիմյանի գրքույկը, ինչքան ընթերցողների հետ կիսեց իր այն մտքերն ու կարծիքները, որոնք ծագում են այդ էտապում հրատարակված գրքերի առիթով: Գ. Էմինը հաստատում է, որ բանաստեղծի ուսերին պետք է ծանրացած լինի իր ժամանակի բեռը, նրա ստեղծածի վրա երեւա դարի եւ ժամանակի խոր կնիքը: «Պոետը պետք է պոեզիան դարձնի իր դարի ու ժամանակի բերած նորը: «Այնտեղ,- գրում է Գ. Էմինը,-որտեղ բանաստեղծը ոչ միայն հուզվում ու տվայտում է, այլև առկա բուն իմաստով այրվում իր ժամանակի հարցերով, այդ այրումից ստեղծվում են շիկացած տողեր, որոնք եթե նույնիսկ ծանոթ բան են ասում (իսկ ի՞նչ կա անծանօթ այս լուսնի ներքո...), ապա ասում են միայն նրան հատուկ ձեւով...»: ²²

Կոնկրետ օրինակի վրա ցույց տալով Վ. Չովակիմյանի գրքի արժանիքները, Գ. Էմինը մատնանշում է այն թերությունները, որ ընդիհանուր էն ժամանակակից շատ բանաստեղծների համար: Առաջին թերությունը, որ նկատվում է ոչ միայն Վ. Չովակիմյանի գրքում, այն է, որ նույն բառերը, նույն տողերը դառնում են անհոգի ու անհույզ շարադրամք, երբ պարզապես բառ են, տող, որի ետեւում չի երեւում բանաստեղծի եսը, կիրքը, նրա ատելու-

թյունն ու սերը:

Մյուս թերությունը վատ հռետորությունն է, վատ ճառը, չափածո ելույթն ու գեկուցումը: Այս կապակցությամբ Էմինը գրում է. «Ես ասում եմ վատ հռետորություն, որովհետեւ իսկական հռետորությունը բոլոր դարերի պոեզիայի, մանավանդ իր ժամանակի կրակով այրվող պոեզիայի շունչն ու ոգին է եղել, ակած Ֆրիկից մինչեւ Չարենց եւ մեր այսօրվա լավագույն բանաստեղծները, միայն մեր քննադատության ստեղծած շփոթությունն է խանգարում հասկանալ եւ ըստ արժանվույն գնահատել, ասենք թե (կամ իր վսեմ անունով կոչել)՝ Վահան Տերյանի բարձր հռետորությունը «Երկիր Նաիրի» անմահ շարքում, Պարույր Սեւակի «Կոմիտասի» եւ մանավանդ «Մաշտոցի» կրքոտ հռետորությունը եւ այլն»:²³

Նշենք, որ որոշ քննադատներ լուրջ վերաբերնունք չեն ցուցաբերում պոետների հանդեպ՝ հոգատար խստություն չեն դրսեւորում, առանց որի պոեզիայի արարման ընթացքը կրեկվի դեպի հեշտագրություն, եւ պոետը չի աճի, չի հղկվի: Պետք է լրջորեն քննարկեր ավանդականի եւ նորարարության կապը:

Քննարկելով բանաստեղծության դասական ծելի առկայությունը եւ նորաձեւությունների ձգտումը, գտնում ենք, որ Երկուսն էլ լավ են եւ ունեն ընթերցողներ: Բայց վատն այն է, որ նորաձեւության որոնումներն այսօր էլ հաճախ հասցնում են ոճական լարախաղության: Ինչ վերաբերում է նրանց գործերում կյանքի ընդգրկմանը, ապա շատ փոքր է երիտասարդների ներկայացրած կյանքը՝ ինչպես պոեզիայում, այնպես էլ արձակում:

* * *

70-ական թթ. եւս Արցախում ստեղծվող գրական երկերի վերլուծությամբ ու գնահատմամբ, արժեքավոր խորհուրդներով հանդես եկան ճանաչված մի շարք քննադատներ ու գրողներ: Ա-

Վելորդ չենք համարում կրկին ընդգծելու, որ բոլոր դեպքերում այս կամ այն գրողի գիրքը առիթ է հանդիսացել քննարկելու ստեղծագործական-գեղագիտական այնպիսի պլորլեմներ, որոնց պետք է ուշադրություն դարձնեին քանաստեղծներն ու արձակագիրները: Այսպես, գրականագետ Կ. Աղաբեկյանը, քննարկելով Հյուսիսային Արցախի ներկայացուցիչ Ս. Բաղդասարյանի «Կյանքի ուղի» գիրքը, ընդգծում է գեղարվեստական երկի բովանդակության հասարակական անհրաժեշտության, արտացոլման եղանակների, կերպավորման շնորհիքի, ցուցադրման գույների ու հերոսների հոգեբանական պատճառաբանվածության, կոնկրետացման եւ ընդհանրացման կարողության, լեզվանտառողության եւ այլ պայմանների նշանակությունը, առանց որոնց երկը գեղարվեստական արժեք չի ունենա:

Արցախում ստեղծվող հայ գրականության գեղարվեստական պրոցեսի երեւույթները, միտումներն ու օրինաչփությունները մշտական գտնվել են Պարույր Սեւակի ուշադրության կենտրոնում: Նա հետեւում էր արցախյան գրողների ստեղծագործություններին, ուրախանում գրչակից ընկերների հաջողություններով, խորհուրդներ տալիս նրանց, նամակագրական կապեր պահպանում: Այդ նամակների առիթը Պ. Սեւակի «Մարդը ակի մեջ» գիրքն էր, որ հրատարակել էր «Դայպետիրատը» 1963թ.:

1964 թ. հունվարի 25-ի նամակում՝ հղված Վ. Շովակիմյանին, Պ. Սեւակը բացել է մի գաղտնիք՝ կապված «Ականջդ...» շարքի հետ: Սեւակը այն սկզբում հյուսել էր որպես պոեմ, եւ կոչվում էր «Ինքներգություն»: Այնուհետեւ նկատի ու մենալով ընթերցողների ընդհանուր մակարդակը, որոշեց պոեմի համարակալված գլուխներն անջատել ու գրել առանձին էջերի վրա, վերնագրել՝ ջանալով նրանց տալ համեմատական անկախություն: Սեւակն ընդգծում է, որ այդպես արեց ոչ թե գրքի էջերը շատաց-

նելու համար, այլ այն նպատակով, որ ընթերցողը կարողանա ուշադիր կարդալ «ամկախացած» հատվածները:

Սամակում կամ այնպիսի դիտողություններ ու ընդիանրացումներ, որ կարեւոր էին գրական ընթացքի նոր խմորումները հասկանալու, հետեւություններ անելու համար: Վ. Շովակիմյանն իր կողմից հղված նամակում գրել է, որ վերոհիշյալ շարքում որպես ընթերցող տեսնում է միայն իսելք: Այս դեպքում, ինչպես գրում է Սեւակը, իր գրվածքի հասցեին արված դիտողությանը նոտենում է ոչ որպես հեղինակ՝ բանաստեղծ, այլ՝ քննադատ: Այստեղ եւս նա հուշում է շարքը հասկանալու կարեւոր մի գաղտնիք. «Զնոռանաք մի բան, պոեմ-շարքը մարդերգություն է, բայց ոչ սովորական մարդու գովերգում: Նրա հերոսը ոչ ես եմ, ոչ դու, ավելի ծիչտ՝ ես եմ ու դու, բայց ոչ միայն ես ու դու, այլ բոլոր նրանք, ովքեր ստեղծագործող են, ովքեր ունեն հատակ աչք ու ականջ, նյարդային հստակ համակարգեր, ուրիշ հոտութելիք ու շոշափելիք, այսինքն՝ բոլոր նրանք (կամ միայն նա), ովքեր ունեն ոչ թե հինգ, այլ վեց զգայարան: Ով որ չունի այդ վեցերորդ զգայարանը, նա իրավամբ կարող է այս ողջ շարքը համարել «ուղեղի բորբոս կամ մտքի քաղիան» (ին բառերով ասած) կամ այդ շարքում տեսնել «միայն իսելք» (քո բառերով ասած)... Եվ այս ամենի մեջ տեսնել միայն իսե՞լք»:²⁴

Պ. Սեւակը մատնացույց ամելով ընթերցողի վեցերորդ զգայարանը, իսկական պոեզիան համարում է իսելքի, մտքի եւ զգացնունքի, հույզի միասնությունը:

Անդրադառնալով «Վերնագիրը վերջում» շարքին, Սեւակը գտնում է, որ արդի պոեզիան պիտի ննան լինի երկու մտերիմների, շատ մտերիմների խոսակցության, այնպիսի մտերիմների, «որոնք իրար հասկանում են կես-խոսքից կամ մի ակնարկով միայն»:²⁵ Նա խորհուրդ է տալիս պոեզիայում նամակայնությու-

Մից հասնել կեսխոսքայնությանը:

Անվանի բանաստեղծը «Մարդը ափի մեջ» գրքի «Թռուցիկ երգեր» շարքի ամենագլխավոր հավաստ հանգանակը համարում է «Անպայման պայման» բանաստեղծությունը, ուր արտահայտված է իր կարծիքը ժամանակակից ու վաղվա պոեզիայի մասին: Սեւակը ծրագրային այդ ստեղծագործության մեջ նախ ընդգծում է.

*Մի կտոր հանածո՞ն ոգի է հարկավոր,
Մի պատու կախարդանք,
Մոգության մի պճեղ,
Մի բացվող փակագիծ,
Անհայտի մի լուծում...²⁶*

Եվ ոչ միայն այդ: Դեռ անուն չունեցող «ինչուներին» պետք է «հոգու մեջ տալ անկյուն...»: Երգին սիրտ է պետք.

*Մի կտոր արնածոր տաք միս է հարկավոր՝
Սեփական ծեռքերով իրենից պոկոտած,
Մի սարսուր օդեղեն,
Մի սարսուր ընդերքի...²⁷*

Երգը հնչել չի կարող այն դեպքում, եթե «Մթության երանգներով առատ» այս կյանքում գրողը կառչի «Խուսափուկ խլիրտի քղանցքից» եւ ճանաչի միայն «Ստվերի վետվետուն քայլվածքը»: Այսպիսով, մեծ բանաստեղծը ներկա թե ապագա երգի համար կարեւորում է մտքի եւ սրտի համաձուլվածքը: Լավ երգն այլ ճանապարհ չունի:

Պ. Սեւակը Վ. Հովհակիմյանի նամակի պատասխանը շարունակում է որոշ ժամանակ անց՝ 12.02.1964թ.: Այստեղ նա նախ քննարկում է նոր ծեսի հարցը: «Զեւի հարց,- գրում է Սեւակը,- եթե ըստ եռության դատենք, չկա եւ, որովհետեւ կա միայն խորքի հարց:»

Ուրեմն, արդի կամ նոր պոեզիա ասելիս ես բնավ էլ նկատի չունեմ, թե այս կամ այն բանաստեղծը հ՞նչ ձեւով է գրում՝ դիցուք, քառյակո՞վ, թե՞ ազատ ոտանավորով: «Կարք մեծաց»-ը ես համարում եմ իմ լավագույն բանաստեղծություններից մեկը: Գրված է քառյակով: Կարող եր նաեւ հանգավորված լինել: Դրանից (դրանցից) ոչինչ չեր փոխվի: Ամեն անգամ, երբ նոր ասեն կամ արդի ասեն, սերունդները միշտ էլ նկատի կունենան մտածողության եղանակը, մտածողության աստիճանը, բնությունն ու մարդուն «կարդալու» կերպը: Ահա այս է խնդիրը: Եվ սա հավերժական խնդիր է»:²⁸

Նամակի հաջորդ խնդիրը հանգի հարցն է: Երեւում է, որ Վ. Չովակիմյանն իր նամակում ընդգծված ուշադրություն է դարձրել հանգերին: Սեւակը խորհուրդ է տալիս ավելորդ չծանրանալ արդեն իր երկար ճանապարհն անցած հանգավորման եղանակի խնդիր վրա, որովհետեւ «հանգը բանաստեղծության երկրորդական, ոչ վճռական հատկանիշն է: Սեւակը գտնում է, որ «բանաստեղծությունը բնավ էլ համարժեք չէ չափածոյին... Ավելին կասեմ. իսկական, բարձր, վսեմ բանաստեղծությունը բանաստեղծության այլ սորտերից տարբերելու համար հարկավոր է ջնջել (փորձի համար) հանգը: Եթե հանգերը ոչնչացնելուց (դիտմամբ ջնջելուց) հետո էլ բանաստեղծությունը ոչինչ չի կորցնում (կամ չնշին բան է կորցնում), ապա գործ ունենք իսկական, բարձր, վսեմ բանաստեղծության հետ»:²⁹

Քննարկելով չափի, կշռույթի, ոիթմի խնդիրը, Սեւակը դրանք եւս երկրորդական, ածանցված, անվճռական հատկանիշներ է համարում բանաստեղծության համար: Այդ կապակցությամբ նա վկայակոչում է «Աստվածաշնչի» «Երգ-Երգոցը»: Այն գրված է անհանգ, չափ չունի, բայց համաշխարհային բանաստեղծության գլուխագործողն է:

Մեծ պոետը վկայակոչում է նաեւ Նարեկացում, Պուշկինին,

Բլոկին, Ուիթմենին, Սիամանթոյին, Վարուժանին, որոնց երկերի մեջ մասը գրված է անհանգ: Ուրեմն, «Բանաստեղծն այն մարդը չէ, որ ունի (կամ ծեռք է թերել) չափած խոսելու ունակություն, այլ այն սակավագյուտ արարածը, որ մտածում է յուրատեսակ, աշխարհին ու իրեն նայում այլապես, ծանոթ խոսքով՝ ունի պատկերավոր մտածողություն եւ (ավելացնենք) հոգեսուզման կարողություն»:³⁰

Նամակում Սեւակը անդրադառնում է ակնարկին ու կես-խոսքայնությանը: «Ակնարկել՝ չի նշանակում թերատ խոսել, եւ կես խոսքով գրել՝ չի նշանակում կիսատ գրել: Ակնարկել եւ կես-խոսություն նշանակում է ավելորդ բան չասել, տղայամտություն չանել, չդատել ու արտահայտվել մեր պապիկների կամ երեխաների պես, դատել ու մտածել մեզ նման 1964 թվականին չափահաս դարձած մարդկանց պես: Ին ակնարկելը դու մի հասկացիր բառացի, խոսակցական իմաստով: Ակնարկով խոսել եւ կիսա-խոսք գրուցել՝ նշանակում է շարել սրբատաշ քարերով՝ պատկերո-պատկերի, զգացմունքը-զգացման, միտքը-մտքի, հոգեկան գյուտը-գյուտի կողքին, կիա-կից...»:³¹

* * *

Գնալով Դայաստանի գրականագետների ուշադրությունն ավելի էր սեւեռվում Արցախի գրողների ստեղծագործական հաջողությունների վրա: Այստեղ կարենորվում էր առաջին հերթին ոչ թե այս կամ այն գրքի վերլուծության ու գնահատման հարցը, այլ դրանք առիթ էին հանդիսանում ժամանակի գրական խմբումների եւ միտումների ընդգծման ու գնահատման, որոնք եւ դառնում էին խորհուրդներ, առանձնապես երիտասարդ ստեղծագործողների համար: Այդ տեսակետից ուշադրության արժանի է ականավոր գրականագետ Ս. Աղաբարյանի «Ապրում եւ

իսոք» հոդվածը՝ Վլ. Աբրահամյանի (Հյուսիսային Արցախ) «Ուրցի բույրը» գրքի կապակցությամբ:

Ս. Աղաբարյանը նախ ընդգծում է, որ բանաստեղծությունը սկսվում է նյութի վերապրումից, որը եւ բանաստեղծության ծննդյան առաջին աստիճանն է: «Դաշորդ աստիճանը, - գրում է նա, - ապրուն-վերապրումի ներդաշնակումն է խոսքի այն որակով, երբ ընթերցողը եւս մասնակցում է բանաստեղծական ճանաչմանը, հաղորդվում է հեղինակի ինֆորմացիային»:³²

Անդրադաշնալով բանաստեղծի հոգեկան «ներքին զաղտնիքներին», գրականագետը կարեւորում է զգացողությունների այն ոլորտը, որ կապված է նրա «կենսագրության» հետ: Եվ դա համարվում է դրական գիծ: Պատկերի կողմետության, ապրուների արտահայտման շոշափելի ծեւերի հարցը միշտ պետք է կարեւորվի բանաստեղծի համար: Այստեղ է, որ ծնվում է ապրումի եւ խոսքի ներդաշնակությունը, որից էլ բխում է «հոգեկան գործողության» արվեստը: Գրականությունը հավաստում է, որ արտաքին աշխարհից դեպի ներքինը գնալու, կյանքի նյութական ծեւերը հոգեկան արտահայտություններին շաղախնելու դեպքում բանաստեղծի խոսքը դարձնում են բնական, անմիջակամ հեռու պահելով նրան ավելորդ բարդացումներից ու պատկերային խճողումներից: Նա միաժամանակ խորհուրդ է տալիս երիտասարդներին, որ իրենց բանաստեղծություններում արտահայտված ապրումներն ունենան փիլիսոփայական լայնություն եւ սոցիալական գունավորում:

Քանդեսի նույն համարում կարեւորվում է նաև արձակագիր Բ. Սեյրանյանի «Հուսանք ու սպասենք» գրախոսությունը Գ. Աղաջանյանի «Անհանգիստ է սիրտս» ժողովածուի առիթով: Հոդվածագիրը բանաստեղծությունը համարում է հաջողված այն դեպքում, երբ մտահոգությամբ ու անհանգստությամբ աշխար-

Իին ու մարդուն սրտամոտ խոսք է ասվում: Անդրադառնալով բանաստեղծի խոհակիլիխոփայական բանաստեղծություններին, գրախոսը դրանց հաջողության գրավականը համարում է հստակությունն ու ապրումի խորքային բացահայտումը: Կյանքի երեւութեար պետք է բանաստեղծի հոգում իմաստավորվեն եւ գտնեն արտացոլման արժանի երանգներ: Նա միտք-զգացմունքի կուր միասնությունը համարում է բանաստեղծական արվեստի հիմքը եւ խորհուրդը տալիս ուշադիր լինել նյութերի ընտրության մեջ: Պետք է խստապահանջ լինել այդ գործում: Լավ զաղափարը չպետք է մնա մակերեսի վրա, պետք է խույս տա պարզունակ-քարոզչական խոսքից:

* * *

1970-ական թվականներին Արցախի բանաստեղծների հունձքի մասին շարունակում էին իրենց խոսքն ասել մի շարք քննադատներ: Այդ առումով արժեքավոր խորհուրդներ են Ա. Բաբայանի «Գրված եւ չգրված բանաստեղծությունների մասին», Դ. Գասպարյանի «Բանաստեղծական չորս ժողովածու» գրախոսականները: Ա. Բաբայանի հոդվածի առիթը երիտասարդ բանաստեղծներ L. Շովակիմյանի «Ծաղիկներ» եւ Ս. Գասպարյանի «Արահետներ» գրքույկներն էին, իսկ Դ. Գասպարյանը զնահատել է Ս. Խանյանի «Լեռների երգը», Ս. Աբրահամյանի «Ծարավ», Ա. Շովիաննիսյանի «Գալիս ենք եւ մենք», Յ. Բեգլարյանի «Կաղնին ժայռի վրա» գրքերը: Ա. Բաբայանը նախ բարդ հարց է համարում հեղինակների անդրանիկ գրքույկները գրախոսելը, որովհետեւ ամեն կերպ պետք է զգտել ծշմարիտ խոսք ասել, ինչ-որ չափով նշել նրանց անցնելիք ճանապարհ՝ առանց սքողելու գրեթում տեղ գտած թերությունները: Նա խորհուրդ է

տալիս գրականագետներին՝ քննադատությունը չփոխարինել ընկերական գովասանքի բնույթ կրող, սկսմակի համար աղետաբեր հետեւանքներով, գրականությանն սպառնացող երեւությթներով:

Ընդունելով երիտասարդ այդ բանաստեղծների ստեղծագործական դրական հատկանիշները, Ա. Բաբայանը նշում է, որ բանաստեղծական թեմաները զետք է մանրացնել, որը տանում է դեպի վերացականություն ու մակերեսայնություն: «Ընդհանրապես, - գրում է նա, - բանաստեղծության հմայքը նրա կենսալից հավաստիությունը պետք է լինի եւ ոչ թե բռնազբոսիկ համեմատությունները, որոնք երբեք էլ տեսանելի պատկերներ չեն ստեղծում: Զնարական ոտանավորը պետք է ինքնաբուխ եւ սրտահույզ գեղեցկություն ունենա»:³³

Քննադատը սովորեցնում է երիտասարդներին՝ լավ մտահղացումը հասցնել բարձրարվեստ կատարման: Պոեզիան պետք է ունենա քաղաքացիական հնչեղություն, դառնա դարաշրջանի շիկացած ոգու արտացոլումը:

Բնութագրելով երիտասարդ բանաստեղծ Մ. Գասպարյանի ստեղծագործական խառնվածքը, Ա. Բաբայանը նկատում է, որ նրա բանաստեղծություններում զգացվում են հայրենի բնաշխարհի բույրն ու թույրը: Պոետը ընդհանրապես պետք է զգա բնության լեզուն: Սակայն պետք է զգույց լինի, որպեսզի չկրկնի մեր դասականների արտահայտչածները, ձգտի գտնելու սեփական ծայնի ու ձեռագրի առկայությունները, ստեղծելու տրամադրություն: Նա արդարացիորեն նկատում է Յ. Սահյանի բնապաշտական քնարերգության ազդեցությունը երիտասարդների վրա: Դա վատ չէ. նույնիսկ մեծությունները սկզբնական շրջանում սովորել են որեւէ նախորդի կամ հանճարեղ ժամանակակցի ար-

Վեստից: Սակայն անհրաժեշտ է ամեն կերպ ծեւավորման ընթացքում միայն սովորել, այլ ոչ թե կրկնել, պետք է քնարական բանաստեղծության մեջ երեւա ժամանակի շիկացած մթնոլորտը, լինեն հումանիստական լայն ընդգրկումներ, մտորումներ, զգացմունքներ: Պոետի անձնական հուզումներն ու քաղաքացիականությունը, անգամ ժամանակի քաղաքական հարցերը ողջ խորությամբ պետք է գտնեն իրենց կյանքու ու կրակու արտացոլում: Ընդհանրացնելով խոսքը, Ա. Բարայանը նշում է. «Զիրք, աշխատասիրություն եւ գրողի պարտքի գիտակցում, քաղաքացիականություն, մատուցելու սեփական ինքնատիպ ձայն ու ծեռագիր, ստեղծված ավանդույթների խորամիտ օգտագործում, նորարարություն»: ³⁴

Գրականագետ Դ. Գասպարյանը իր հոդվածում ընդգծեց կենսական այն նյութը, որը գրողների համար դառնում է միտք ու զգացմունք, բառ ու պատկեր: «Այս առումով,- գրում է նա,- ժողովածումներում զետեղված գործերը, ընդհանուր առնամբ, կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնց համար խորագիր կարող են լինել *հայրենիք, հող, սեր* բառերը: Քննարկվող ժողովածումներում զգալի է ներքին այն նորմը, որով թե՛ Ս. Խանյանը, թե՛ Ա. Աբրահամյանը, թե՛ Ա. Չովիաննիսյանը եւ թե՛ Ռ. Բեգլարյանը ծգտում են բանաստեղծական ձայնի անհատականացման»: ³⁵ Առանձին-առանձին բնութագրելով վերոհիշյալ բանաստեղծներին, Դ. Գասպարյանը Ս. Խանյանի հայրենասիրական երգերում նկատում է երկրի եւ քնարական հերոսի միաձույլ լինելը, Ս. Աբրահամյանի բանաստեղծություններում՝ ներշնչանքի պահի եւ հոգեկան հուզումի, ծաղկումի միությունը, Ռ. Բեգլարյանի ոտանավորներում՝ քնարական հերոսի ներքին հավատի ընդգծումը, Ա. Չովիաննիսյանի պոեզիայում՝ երկրի անցյալի եւ ներկայի

Կամրջումը:

Դ. Գասպարյանը ընդիանրության մեջ բնութագրելով տարբեր թեմաներով գրված գործերը, նշում է նաև այն թերությունները, որ հատուկ էին ժամանակակից հայ պոեզիային: Նա խորհուրդ է տալիս անդրադառնալ կարեւոր ու արդիական պրոբլեմներին, քարմացնել ստեղծագործության կենսական նյութը, բարձրացնել խոսքի գեղարվեստական որակը: Այդ դեպքում ավելի մեծ կլինի խոսքի հնչեղությունն ու ներգործման ուժը:

Քայլ առ քայլ բավականին շոշափելի դարձան երիտասարդ բանաստեղծների ծեռքերումները: Քննադատությունը ողջունեց նրանց, տարբեր առիթներով ասաց իր խոսքը՝ համարելով դրվատանքն ու օգտավետ դիտողությունը: Այդ առումով հետաքրքիր է Շ. Օհանջանյանի «Նա աշխարհին բան ունի ասելու» (Վ. Ղակոբյանի «Սայրանում է լույսը» գրքի մասին) գրախոսությունը: Շ. Օհանջանյանը նկատեց Վ. Ղակոբյանի խոսքի թարմությունը եւ նշեց. «Ղակոբյանը բանաստեղծություն չի սարցում: Նրա բոլոր գործերը՝ թույլ թե ուժեղ, նորմալ ծնունդ ունեն, սեփական մարմին, սեփական շնչառություն»:³⁶ Այս գնահատականները տեղին են եւ ուսանելի: Քննադատը երիտասարդներին սովորեցնում է արագ դուրս գալ մեկի ազդեցության շուքից, բացահայտել ուրույն աշխարհի գեղեցկությունները՝ իր բառով, իր խոհ ու խոկունով ասել միայն ու միայն իր ծեւով: Այստեղից տրամաբանորեն բխում են նրա անհանգստությունն ու պատասխանատվությունը սեփական երգի ճակատագրի վերաբերյալ: Երգը,- մատնանշում է քննադատը,- պետք է լինի հոգու կարոտակեց կանչ, աչքերի մեղմ ժայիտ, սրտի ցավատանջ թրթիու ու նաև ապրելու եւ արարելու հաստատման փաստ՝ կյանքի բազմաշավիդ ոլորաններում: Քննադատը գնահատելով Վ.

Դակորյանի երգերը որպես մարդու ցավերին սատար, տառապանքին՝ նեցուկ, հավատի լուսե շաղախ, վերհիշում է չարենցյան պատգամը՝ ժամանակի շունչը դառնալու հրամայականը: Նա խորհուրդ է տալիս երիտասարդներին բանաստեղծություն չդարձնել չապրած մտքերը, սառն զգացնունքները, բռնագրոս դատողությունները: Անհրաժեշտ է զգույշ լինել ինքնակրկնությունից, ասկած մտքերը շուր ու մուռ տալուց, հեշտից զայթակդվելուց:

Երիտասարդ գրողների մուտքի եւ առանձին ժողովածուների մասին գրախոսություններով հանդես էին գալիս Արցախի պետական հանալսարանի մանկավարժ-բանասերները: Դրանցից հարկ է նշել Գ. Բաղդասարյանի, Լ. Գրիգորյանի, Ա. Աթայանի եւ ուրիշ ընկերների ելույթները: Երիտասարդ բանաստեղծ Ա. Թովմայայանի «Յայգալույս» առաջին ժողովածուի մասին ընդունելի, հետաքրքիր խոսք ասաց Լ. Գրիգորյանը: Քննադատը Ա. Թովմայայանի ստեղծագործական հաջողությունները տեսնում է պարզության, անպաճուճության մեջ: Նա գրում է. «Յեղինակը հեռու է մնացել ճշան տողերից, այսպես կոչված, «մողեռն» ու «խորին» երեւալուց: Դանգամանքներ, որոնց այնքան շատ են տուրք տալիս որոշ երիտասարդ բանաստեղծներ»:³⁷

Ընդունելի խորհուրդ էր Լ. Գրիգորյանի նաեւ «Ինչից է սկսվում հայրենիքը» գրախոսությունը՝ Ս. Աբրահամյանի «Լեռներ իմ, լեռներ» ժողովածուի մասին: Քննադատը ընդգծում է, որ արցախցի Սերո Աբրահամյանի համար հայրենիքը սկսվում է այն մի բուռ հողից, որ Աշան անունով է կնքված, հետո այդ բուռ հողը ընդլայնվում, դառնում է Ղարաբաղ, հետո ավելի ու ավելի են ընդարձակվում նրա շրջանակները...»:³⁸ Շարունակելով միտքը, գրախոսը նշում է, որ յուրաքանչյուր բանաստեղծ իր գյուղով, իր

Լեռնաշխարհով է կապված հայրենիքին, աշխարհին, որ դրանք պայմանավորված են միջյանցով: Բանաստեղծի համար ներշնչանքի աղբյուր պետք է հանդիսանա նրա բնությունը, նրա արարչագործ մարդիկ, այդ նշանակում է, որ պոեզիան տոգորվում է մարդու հանդեպ ունեցած անկաշար սիրով: Բնութագրելով Ս. Արքահամյանի պոեզիան, Լ. Գրիգորյանը գգուշացնում է հեռու մնալ պարզունակ մտքերից, արողակմից, հապճեպությունից, չապրված տողերից:

70-ական թթ. երիտասարդական պոեզիան գնահատող հեղինակները նկատեցին երիտասարդ բանաստեղծների առողջ խորհրդաժությունները, կենդամի ընկալումները, ազնիվ ձգտումները, կյանքին սրափի նայելու կարողությունները, ժամանակակցին հուզող հարցերը ներկայացնելու որոշակի շնորհը: Նշվեց, որ այնտեղ, որտեղ երիտասարդները ներկայացնում են հայրենի եզերքը, գյուղը, մայր բնությունը, մարդկանց հարազատ աշխարհը, հասնում են շոշափելի հաջողության: Նման երգերը, անշուշտ, ստեղծում են ազնիվ տրամադրություններ: Երիտասարդներին խորհուրդ է տրվում գրել միայն այն դեպքում, եթե ասելիք ունեն, հեռու մնալ գրքայնությունից, երգ դարձնել միայն իրենց գգացածն ու ապրածը: Ինչ վերաբերում է սիրային բանաստեղծություններին՝ նրանցում չպետք է գերակշռեն անձնական նեղ տրամադրությունները, «ախ» ու «վախ» մակարդակը...

Խորհուրդ էր տրվում նաեւ գգուշանալ պարզունակությունից: Այդ երեւութք նկատվում էր համարյա բոլոր երիտասարդների առաջին ստեղծագործություններում, որ շարունակելու դեպքում կարող էր ընդգծված թերություն դառնալ: Եվ երիտասարդներն ընդունեցին, որ առաջին գիրքն, այո, ընդհանուր առ-

նամբ, ուրախացնող է լինում, բայց իսկական պրեզիան պետք է լինի բարձրարվեստ: Դրա համար պետք է ունենալ ակտիվ կենսադիրք, որոնելու եւ գտնելու ծգոտում:

* * *

1980-ական թթ. Բաքվում իրատարակվող «Խորհրդային գրող» հանդեսի խմբագիր նշանակվեց Վլ. Աբրահամյանը: Աղրբեջանի գրողների միության ղեկավարության ճնշմամբ, գնալով հանդեսի էժերի մեջ մասը տրամադրվում էր ազերի-թուրք գրողներին: Հանդեսը համարյա դարձավ թարգմանչական: Նույնիսկ հայ գրողների գրքերի մասին գրախոսությունները հանձնարարվում էին երեւանում կրթություն ստացած աղրբեջանցի գրականագետներին: Հանդեսը կորցրեց հայկական ոգին, հատվեցին տեսական-քննադատական ելույթների ակունքները: Արցախյան ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբից ազերի-թուրքերը իրենց դրսեւորեցին որպես Սուլթան Շամիլի եւ երիտրութերի իսկական ժառանգորդներ: Բռնագաղթվեցին Բաքվի, Գանձակի, Ջյուսիսային Արցախի նաեւ հայ մտավորականները: Հայոց մամուլն այդ վայրերում դադարեց գոյություն ունենալուց:

1989 թ. հուլիս-օգոստոս ամիսներին սկսեց տպագրվել Լեռնային Ղարաբաղի գրողների մարզային կազմակերպության «Արցախ» գրական-գեղարվեստական երկամսյա հանդեսը (խմբագիր՝ Վ. Հակոբյան): Մինչեւ 1988 թ. փետրվարը ԼՂ գրողների կազմակերպությունը հանդիսանում էր Աղրբեջանի գրողների միության մասնաճյուղը: Սակայն Ղարաբաղյան շարժման հենց առաջին օրերից Արցախի գրողներն իրենց հայտարարեցին անկախ: Բայց քանի դեռ Խորհրդային Սիությունը չէր փլուզվել, Ղարաբաղի գրողների մասնաճյուղը իրեն իրավունք վերապահեց դուրս գալ Աղրբեջանի գրողների միության կազմից եւ դառ-

նալ միութենական առանձին միավոր:

«Արցախ» հանդեսի տպագրության լուրը ոգեւորության ալիք առաջացրեց հայ գրողների եւ մեր ժողովորի բարեկամների սրտերում: Առաջին համարը հայրաբար օրինեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Ս. Ղազարի Միսիթարյան ակադեմիայի նախագահ Յ. Տեր-Ներսիսյանը, գրողներ Ս. Կապուտիկյանը, Վ. Ղավթյանը, Յ. Խաչատրյանը, Բ. Ռվալիքարյանը, Զ. Բալայանը, Ռ. Չովսեփյանը, Բ. Զանյանը, ակադեմիկոսներ Էդ. Զրբաշյանը, Ս. Աբրահամյանը, ԽՍՀՄ ԳՄ հայ գրականության խորհրդի նախագահ Մ. Դուդինը եւ ուրիշներ:

Նրանց ողջունի խոսքերում ընդգծված էին պահի լրջությունը, գրողների անելիքների կարեւորությունը: Առանձնահատուկ խորհուրդներ է պարունակում Հայաստանի գրողների միության վարչության ուղերձը, որ բերում ենք ամբողջությամբ.

«Թանկագին բարեկամներ, Արցախ աշխարհի մեր գրչակիցներ:

Հայ գրողներին անսահման ուրախություն պատճառեց «Արցախ» գրական-գեղարվեստական հանդեսի լույս ընծայման լուրը:

Ծանր ու լարված օրերի շարանի մեջ վերջապես հազվագյուտ առիթ ծագեց միջյանց շնորհավորելու:

Բազմաթիվ կորուստների մեջ վերջապես եղավ առաջին ծնունդ՝ առաջին սրբատաշ քարը արցախյան հինավորց հորի վրա հաստատվող մաշտոցյան ոգեղեն ամրոցի կառույցին... Ուրեմն, ուրախանանք, ժպտանք ու ծիծաղենք լիաթոք, քանի որ այն ժողովուրդը, որ կարող է արցունքի միջից ծիծաղել՝ աննահ է: Ուժ գտնենք՝ հեռու վանելու վշտի դառնությունը եւ նորածին «Արցախ» մատղաշ արմատները թաթախենք ուրախության լու-

Սավոր ավիշի մեջ, որպեսզի նրա բերքը բարձր լինի, որպեսզի նրա ծառը կանգուն մնա երկա՞ր ու երկա՞ր տարիներ, եւ մեր մեծերի օրինությունը ցողվի նրա ճակատին եւ որպեսզի նա հադորդվի հույսին, հավատին ու արդարությանը: Թող այս ուրախությունը սկիզբ դառնա նորանոր ուրախությունների, մինչեւ այս մեծ ցնծության օրը, երբ Արցախը կմիանա մայր Հայաստանին»:³⁹

«Արցախ» հանդեսի առաջին համարում տպագրվեց նաև Լեռնային Ղարաբաղի ստեղծագործող մտավորականների դիմումը աշխարհի գրողներին: Այդ փաստաթղթում Արցախի գրողները նշեցին այն ողբերգական վիճակը, որ տիրում էր լեռնաշխարհում եւ երկրաշարժ տեսած Հայաստանում: Ղարաբաղի հանդեպ Աղրբեջանի վարած քաղաքականությունը ներկայացվեց որպես 1915 թ. հայոց ցեղասպանության շարունակություն: Անդրադառնալով Նախիջեւանի եւ Ղարաբաղի ճակատագրին, Արցախի գրողները դիմումի մեջ ընդգծեցին. «Նախիջեւանում այլեւս հայ չի մնացել: Աղրբեջանի կառավարությունն ուզում է ամեն կերպ ննան քաղաքականություն կիրառել նաև Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ: Երկրամասի հնագույն հայկական քաղաք Շուշին ավերվել է 1920թ. գարնանը: Ցավոք, այնտեղ եւս այսօր հայ չի մնացել: Եվ հայկական այդ հնագույն մշակույթի օջախը, ուր թարգմանվում ու տպագրվում էին այնային մեծերի գործեր, ինչպիսիք են Բայրոնը, Գյոթեն, Պուլկինը, Լերնոնտովը եւ շատ ուրիշներ, վաղուց չի գործում: Ավերվում են բարձրարժեք, եզակի հուշարձանները: Գնալով ողբերգությունը խորանում է ամբողջ Լեռնային Ղարաբաղում: Ահա թե ինչու մենք՝ արցախցիներս, միահանուր ուժերով ելել ենք պայքարի՝ այդ անարդարությունների ու բռնությունների դեմ...»⁴⁰:

Ղիմումի մեջ այնուհետեւ կոչ է արվում հետեւել Անատոլ

Ֆրանսի ու Ռոմեն Ռոլանի, Ֆրիտյոֆ Նամսենի ու Սերգեյ Գորոդցևու, Վալերի Բրյուսովի ու Մաքսիմ Գորկու օրինակին, որոնք պատմության ամենից դժվար պահերին իրենց ձայնն են բարձրացրել համուն հայ ժողովրդի փրկության ու ազատության:

«Մենք պահանջում ենք մեր ազգային ինքնորոշման իրավունքը,- ասված է դիմումուն,- ուզում ենք, որ ոչ մի ազգ չքոնանա ուրիշ ազգի վրա, մենք ուզում ենք մայր ժողովրդի գրկում ապրել, ծաղկեցնել մեր մայրենի մշակույթն ու արվեստը: Ինչպե՞ս կարելի է արիեստականորեն մի քանի հատվածի բաժանել նույն լեզուն, նույն արվեստն ու մշակույթն ունեցող ժողովրդին եւ, դրանով իսկ կատեցնել նրա ազատ աճն ու զարգացումը: Դա անընդունելի է եւ հականարդկային»:⁴¹

Դիմումի վերջում ընդգծվում է գրողի դերը իր ժողովրդի ազգային ազատագրության համար մղվող պայքարում: Եվ ոչ միայն դա: Գրողը պատասխանատու է այն ամենի համար, ինչ կատարվում է մոլորակի վրա:

* * *

«Արցախ» ամսագիրը դարձավ մի նոր ամբիոն, որտեղից իրենց խոհուն ու պտղաբեր տեսական-քննադատական խոսքն ասացին հայ նշանավոր գրականագետները: Նրանց ուշադրության կենտրոնում ազատագրական պայքարի ֆոնի վրա գրականության ընթացքն էր՝ համեմված գնահատման բարձր չափանիշներով եւ ուսանելի խորհուրդներով: Ակադեմիկոսներ Ս. Սարինյանը, Ս. Արգումանյանը, գրաքննադատներ Կ. Աղարեկյանը, Ս. Աթարեկյանը, Ա. Ավիինյանը եւ ուրիշ ճանաչված ընկերներ հանդես եկան իրենց գրախոսություններով եւ ընդհանրացնող աշխատանքներով:

Դայոց ազգային գաղափարաբանության խոշոր գիտակ

Ս. Սարինյանը հանդեսի 2-3-րդ համարներում տպագրեց «Լեռնա Շանթի ազգային միասնության գաղափարը» հոդվածը: Ականավոր գրականագետը Լ. Շանթի ստեղծագործությունների վերլուծության եւ իրապարակախոսական աշխատությունների հիման վրա ներկայացնում է մեծ գեղագետ-մտածողի մտորումներն ազգային միասնության գաղափարի եւ համազգային ծրագրի շուրջ: Ս. Սարինյանի նման ելույթը այդ օրերին պատահական չէր: Նա Շանթի խորհուրդները ներկայացնում է որպես դաս՝ արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքի համար, ընդգծելով, որ Լ. Շանթի ծրագրի գլխավոր դրույթներից մեկը ազգային միասնության խնդիրն է: «Թվում է,- գրում է Ս. Սարինյանը, թե համազգային այս ծրագրի իրականացնում տեսակետից ոչ մի խնդիր այնքան կենսական չէր կարող լինել, որքան ազգային բոլոր հատվածների, համայնքների, դասերի ու կուսակցությունների միասնությունը»:⁴²

Այնուհետեւ Ս. Սարինյանը թե «Արցախ» հանդեսում եւ թե հանդեսի «Եղիշի լույս» հավելվածում հանդես եկավ «Արցախը դեռ պիտի խոսի», «Արցախի լեգենդը», «Բանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը...» (հարցագրույց Վ. Դակորյանի հետ), «Ուրվագծեր ետադարձ հայացքով», «Բանաստեղծության գիտությունը», «Բանաստեղծի հայտնությունը» (Վ. Դակորյանի «Սենարան» ժողովածուի առաջարանը) հոդվածներով:

Մեծ հավատ է տածում հոչակավոր գրականագետը Արցախի ստեղծագործական մտավորականության կարողությունների նկատմամբ: Ղարաբաղյան շարժման ծանր օրերին նա գրել է. «1917-ին՝ հայ ժողովրդի ամենաողբերգական մի թվականի, Դովիաննես Թումանյանը մարգարեաբար գրում էր, թե «Դայաստանը պետք է խոսի, եւ՝ «պետք է խոսի նմքան լուրջ ու զգաստ,

ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլեւս էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով եւ ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար»:

Անվանափոխելով հանճարեղ բանաստեղծի խոսքերը, կարող ենք ասել, որ Արցախը դեռ պիտի խոսի ու պիտի խոսի նախալեզվից սերվող այն բարբառով, որի հնչյուններում անթեղված է մեր պատմության բիբլիական հուշը: Եվ արդեն ազգային-ազատագրական նաքառնան երկումքը, որ ձգտում է դեպի մեր արիական ոգու հաղթանակը, կինաստավորվի մի նոր հոգեւոր վերածննդով, որի նախերգանքը լսելի է արցախյան արդի հրապարակախոսությունում: Մաքսիմ Շովիաննիսյանի, Կոմիտաս Ղանիեյանի բնաշխարհիկ էտյուդներում, Գուրգեն Գաբրիելյանի «Հորովելում», Դրաչյա Բեգլարյանի, Ավիկ Ջարությունյանի, Անահիտ Թոշարյանի, Ռոբերտ Եսայանի եւ այլոց բանաստեղծական խոհերում: ⁴³

Ժամանակակից գրական շարժման մեջ անդրադառնալով Վ. Ջակոբյանի տեղին, Ս. Սարինյանը ընդգծել է. «Սույն հոդվածում ես չեմ հավակնում ընդհանրացնելու նրա գրական դիմանկարի ամբողջական բնութագիրը: Ինձ առավելապես խորհրդածության առիթ են տալիս աշխարհնկալման այն նոր միտումները, որոնք առկա են գրեթե միաժամանակ լույս տեսած նրա վերջին ժողովածուներում՝ «Արցախա ծուխ», «Ամարասի զանգերը»: ⁴⁴ Սեցրերելով Վ. Ջակոբյանի «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին» երկինաստ բանաստեղծական խոստովանությունը, գրականագետը նկատում է. «Մինչեւ հինգ բանաստեղծների երգը եղել է Ղարաբաղի մասին, բայց այսօր Ղարաբաղն ինըն է

դառնում երգ, եւ Յակոբյանի ինքներգությունն արդեն Ղարաբաղի երգն է: Տեղի է ունենում օբյեկտի եւ սուբյեկտի ներհյուսումը բանաստեղծական գաղափարի մեջ: Եվ երեւի այս ներհյուսումն է, որ արտակարօ շռայլություն է տալիս բանաստեղծի ներշնչանքներին՝ բանաստեղծությունը գրեթե դարձնելով կեցության ծեր, անհատականության հատկանիշ եւ լինելության պարագա: Կյանքի ընթացքն ընդհատում չունի, ուրեմն, անընդհատ է նաև բանաստեղծությունը, այն ամենը՝ շարժում, իր, երեւույթ՝ ինչը տիեզերական արարողություն է, բանաստեղծական է ինքնին, եւ դժվար է սահման գծել, թե Վարդան Յակոբյանի զգացողություններում երբ է սկսվում եւ երբ է ավարտվում բանաստեղծությունը»:⁴⁵

«Ուրվագծեր ետադարձ հայացքով» հոդվածում Ս. Սարինյանը նատմանշում է հոգեւոր գործոնը՝ հատկապես շեշտելով բանաստեղծության դերը, որովհետեւ, ինչպես ինքն է ընդգծում, խորհրդային տարիներին Արցախը չուներ հրապարակախոսություն, չուներ գիտություն, անգամ չուներ գեղարվեստական արձակ: Արցախը խոսում էր միայն բանաստեղծությամբ: Արցախյան ոգու բանաստեղծական մոտիվի ծեւավորումը Արցախում Ս. Սարինյանը համարում է գրական մի յուրօրինակ, ներքին էմիգրացիա, որ, «առերեւույթ չուներ քաղաքական սահման, բայց էապես գործում էր ինտերնացիոնալ բարեկամության քողի տակ թաքնված ազգային հարաբերությունների հոգեբանական կալվածքներում: Եվ հայրենի բնաշխարհից օտարված ոգին բանաստեղծում է մորմոքների, դառնության, բայց եւ վեհապանձ թոհջքների երգը (Աշոտ Գրաշի, Լեռնիդ Շուրունց, Բոգդան Զանյան): Դու իմն ես, բայց եւ իմը չես, դու նոտիկ ես այնքան, բայց եւ հեռու, դու իմ ոգին ես, բայց ինձնից օտարված խոհերի ա-

նանձնական այս արձագանքներից ծեւավորվում է կարոտի ու վերադարձի պոեզիան, ծանոթ արահետների, մանկության հուշերի ռոճանտիկական նոստալգիան»:⁴⁶

Քոչակավոր գրականագետը բնութագրում է 60-ականների գրական սերմոնին: Նա նշում է, որ այդ էտապում սկիզբ է առնում Արցախի պատմության նոր շրջանը: Ընդլայնվում է նրա հոգեւոր աշխարհայացքը, ուսումնասիրություններ են լույս տեսնում նրա պատմության, գրականության, բանահյուսության, ճարտարապետության վերաբերյալ, Արցախի հարցը վերստին բարձրանում է համազգային նշանակության՝ խորհրդային կայսրության ատյանների առաջ դնելով նրա ազատագրության համաժողովրդական կամքը: «Այս առաքելությամբ,- գրում է նա,- ասպարեզ եկավ Արցախի ազգային հեղափոխական սերունդը եւ իր հեղափոխական գրականությունը՝ Բագրատ Ուլութաբյան, Զորի Բալայան, Յրացյա Բեգլարյան, Գուրգեն Գարբիեյան, Մաքսիմ Յովհաննիսյան, Ժան Անդրյան, Սոկրատ Խանյան եւ ուրիշներ: Մտավոր շարժմանն ուղղություն էին տալիս հրապարակախոսությունն ու բանաստեղծությունը»:⁴⁷

Արցախում ստեղծվող գրականության հետամուտ ուսումնասիրությունը Ս. Սարինյանին համոզեց, որ պոետական Արցախը ոչ միայն ասել եւ ասում է իր խոսքը, այլեւ ժամանակն է, որ հայ գրաքննադատությունն ասի իր խոսքը հայ նշակույթի ինքնատիպ եւ ուշադրության արժանի մի անբաժանելի մասը կազմող Արցախի գրականության մասին:

Արդարացի եւ անհրաժեշտ մի պահանջ, որի գիտակցումով էլ ծեռնամուխ ենք եղել Արցախի պոեզիայի ուսումնասիրությանը:

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ինչպես հայ գրականության դարավոր ընթացքի մեջ, 50-ական թթ. սկսած պոեզիայի կենտրոնում դարձյալ հայրենիքի գեղարվեստական կերպարի ստեղծման պրոբլեմը կարեւորվեց: Չափածոյի ամենատարբեր տեսակներով ստեղծվեց 20-րդ դարի երկրորդ կեսի հայրենապատումը: Չեր մոռացվել Վարպետի ընդհանրացումը 1946 թ. Հայաստանի գրողների երկրորդ համագումարի բացման խոսքում. «Դամաշխարհային պատմությունը հայ ժողովրդին վիճակել է մի հայրենիք՝ շրջապատված հզոր, աշխարհակալ պետություններով, որոնք ծգտել են հայ ժողովրդին ստրկացնել, կողոպտել եւ ոչնչացնել: Եվ այդ դարձել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը»:

Այսպիսով, հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյանարտի գեղարվեստական պատմությունն է ընդհեմ ճակատագրի:

Մեր գրականության իշխող պաթոսը, նրա միսիան դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության, ազգային կուլտուրայի եւ անկախ պետության, ընդհեմ բռնության, ստրկության»¹:

Նշված ժամանակաշրջացքում բանաստեղծները ստեղծեցին պոետական շարքեր, պոեմներ, բալլադներ՝ նվիրված հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրին, նրանց պատմական անցյալին, առօրյա հոգսերին, տվյալտանքներին եւ ակնկալիքներին: Նորագույն շրջամի հայրենապատումի հարստացմանն իրեմոց նպաստները բերեցին համարյա բոլոր բանաստեղծները: Նրանք փառաբանելով հետպատերազմյան վերականգնման շրջանի պաթոսը, միաժամանակ արծարթեցին հարազատ ժողովր-

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դի ազգային ճակատագիրը՝ ցավով հիշելով 1915-ի եղեռնը, կորուսյալ հայրենիքի անանցանելի պատկերը: Սակայն պետք է նշել, որ հետպատերազմյան շրջանում միամբամից չազատվեցին մինչեւ այդ արմատներ նետած գռեհիկ հասարակաբանության կաղապարներից ու գաղափարախոսությունից: Լավն այն էր, որ սառույցն արդեն փշրվել էր: Բանաստեղծական դիմադրությունն աստիճանաբար տալիս էր իր առողջ պտուղները: Այդ տարիների հայրենապատումի մեջ իրենց ինքնատիպ երանգներն էին հյուսում Յ. Շիրազը, Յ. Սահյանը, Պ. Սեւակը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Յ. Քովիաննիսյանը, Մ. Մարգարյանը եւ ուրիշներ: Հայրենիքի ճակատագիրը եռակի շերտով էր ներառվում Արցախում ապողու բանաստեղծների ստեղծագործություններում: Նրանք մի կողմից գովերգում էին Սովետական Հայաստանի ստեղծագործ առօրյան՝ այն համարելով ինքնարտահայտնան եւ ինքնահաստատման շոշափելի հենք ու հիմք: Մյուս կողմից խորհրդանշանային պատկերներով ցավում ու ափսոսում էին այն բանի համար, որ Արցախը խվել է մայր Հայաստանից եւ նետվել օտարի ավերող գիրկը: Այստեղից էլ տագնապի նոտաները նրանց հայրենապատումի մեջ: Վերջապես Շիրազի եւ Սեւակի հզոր ու անլրելի զանգերի հնչյուններով համակված հիշում էին 1915 թ. Մեծ Եղեռնը եւ հնչեցնում կորուսյալ երկրի՝ Արեւմտյան Հայաստանի մխացող կարոտը: Այս առումով Արցախի բանաստեղծների հայրենական երգը վերածվում էր ճամփաների կարոտի:

Դեռևս իր անդրանիկ գրքում **ԲՈԳԴԱՆ ԶԱՆՅԱՆԸ** ընտրել էր հոգեւոր հաղորդակցման իր ճամապարհը: Նրա մտորումներում հարցականի պես կախվում է կասկածը, գուցե մոլորված է նաև ոտքերի տակ ձգված ճամփան: Արծակագիր, պատմաբան **Բ. Ուլիուրաբյանը** ժամանակին նկատել ու զգացել է բանաստեղծի ճամփաների երգի գույներն ու ինքնաբրուկ թրթիռները եւ գրել «Բոգդան Զանյանի համար ճամփաներն ունեն առանձնահա-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Մոռկ նշանակություն ու խորհուրդ: Կարծես բանաստեղծն աշխարհ է եկել մեծ ու փոքր, կարծ ու երկար ճամփաները կտրելու, իր կտրած ու կտրելիք ճամփաները երգելու, նրանց հետ իր ուրախությունն ու վիշտը կիսելու եւ, վերջապես, նրանց մեջ իր քաղաքացիական կերպարի հաշվեկշիռը տեսնելու համար: Բանաստեղծի պատկերային համակարգում ճամփաներն ունեն գերագահ մի տեղ, որը շատ հեռու է կրավորական լինելուց եւ հուշում ու թելադրում է, իրենով բնութագրում շատ երեւութեր, հաճախ նոյնիսկ տալիս ուղղություն ու հրամաններ»:²

Այսպես, ճանապարհի եւ մարդու միասնությամբ ստեղծելով հայրենիքի գեղարվեստական պատկերը, Բ. Զանյանը հյուսուն է նաև իր հայացքը՝ ցավի եւ կարոտի անմարում կրակի խորհուրդը:

Միշտ էլ այդպես է պատահում իմծ հետ՝
Երբ ճանապարհ կա...
... Երբ ճանապարհ կա՝
Կարոտ է ծնում ճանապարհն իմ մեջ,
Եվ երգ է ծնում իմ ճանապարհը:³

(«ճանապարհին»)

Բ.Զանյանի հայրենասիրական երգը պաթետիկայից հեռու է: Մերժելով ողորկ ճամփեքը, նրա քնարական հերոսը ցավում է, երբ նկատում է անհետք ճամփաներ: Խոկ ինչո՞վ է իմաստավորվում երկիր հասկացությունը: Դայրենիք-ժողովուրդ-անհատ փոխառնչության դարավոր հարցադրումը թելադրում է բանաստեղծին, որ նա կատարի առինքնող ընդհանրացում.

Եվ այդ նայողն էլ գուցե հասկանա,
Որ ինչ էլ մեզ տան, լոկ հողն է մերը,
Յողը, որ կյանքում եւ մեզ է պահում,

ԾԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Եվ պահում է մեր ոտնահետքերը.⁴

(«ճամփան ողորկ է»)

Հողի եւ մարդու փոխհարաբերության մեջ բանաստեղծը տեսնում է հայրենիքի ապրեցնող ռիթմերը: Երկրի հարատելան հենակետերը եղել են եւ մնում են հողն ու տերը: Հողի հավերժական ջահելությունը պայմանավորված է տիրոջ նվիրվածությամբ: Բանաստեղծի հոգին ցնցվում է, երբ անմշակ հող է տեսնում: Այս դեպքում երգը դարձնում է ցավի զգացում եւ հաստատում հողի տերը մնալու, հողը ձեռքից չտալու բազմադարյան խորհուրդը: Յուրաքանչյուր սերունդ իրենով պիտի ծաղկեցնի երկիրը: Զանյանը հողին նայում է տիրոջ աչքերով, երգում տիրոջ զգացումով: Նա տեսնում է հողի գույները, հասկանում նրա լեզուն, ճանաչում քնավորությունը: Եթե մի դեպքում փխրուն հողն է երգում քնարական հերոսի ոտքերի տակ, մի ուրիշ դեպքում էլ քարոտ հողի կարոտն է կանչում հայկական հողի կոլորիտով ու սրտով.

Քար է, թե քարոտ է,
Կանաչ է, թե մերկ է,
Սեկ է հող է,
Եվ այդ հողն էլ մայր է, մայրություն,
Եվ անմահություն է
Եվ հայրենի տուն է
Եվ գերեզման է հողը, հողը...⁵

(«Քար է, թե քարքարոտ է»)

Բանաստեղծը սարերը համարում է բնօրրան, որոնցով ոչ միայն հպարտանում է քնարական հերոսը, այլ նաև տագնապում է: Սիրո եւ տագնապի զուգորդությամբ ներկայացվում է այն հայրենիքը, որ թեկուզ կորուստներով ծանրաբեռ, «Բայց ա-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Պաշվա պես հպարտ ու խրոխտ է»: Խոյս տալով պատկերի վերացականությունից, Զանյանը բանաստեղծության մեջ հենակետեր է ընտրում ապրումը, զգացմունքը, խոհը, ամենից շատ կարոտը՝ հայրենի օջախի հետ:

Սարերգությունը բանաստեղծի հայրենապատումի երակներից մեկն է: Անմ հանդիման կանգնում են հայ մարդն ու սարերը, մեկի երակներում արյունն է խոսում, մյուսի մեջ՝ լռած հավերժությունը: Սարի, ծառի, ծորի, մարդու ներկայությունը ապահովում են հայրենի օջախի լինելությունը: Ընդհանրապես հայ մարդու արարչագործության հավերժական չափանիշը բանաստեղծը համարում է քարե կորոնները: Այստեղ գուգադիպվում են Շ.Սահյանի եւ Բ.Զանյանի խոհերը: Սակայն լավն այն է, որ Զանյանը չի կրկնում իր հոչակավոր գրչեղբոր երանգները: Նա ասում է իր խոսքը:

Ականավոր բանաստեղծ Շ. Սահյանը, որ Բ.Զանյանի պատանության ընկերն էր, ծննդյան 60-ամյակի առթիվ գրել է. «... Եկան ստեղծագործական դժվարին որոնումների տարիները, ինքնանալու, ինքնադրոշմ խոսք ասելու ծանր տարիները:

Կրկնակի դժվարին եղավ քո կյանքը: Բայց այդ դժվարությունները չկարողացան կոտրել քո ստեղծագործական կորովը: Ո՞վ իմանա, գուցե թե մի ինչ-որ տեղ էլ նպաստեցին նրա առնակացմանը: Վերջերս մի կրկին անգամ կարդացի քո գրքերը եւ ուրախությամբ տեսա, որ դու բնավորությամբ այն ես մնացել, ինչ որ էիր քառասուներկու տարի առաջ: Անմիջական, սիրտդ լեզվիդ վրա, խոնարի ու խոհուն...»:

Բ.Զանյանի նկարագրած հայրենական ճանապարհը կրկնակի է իմաստավորվում: Այն սկիզբ է առնում Մասիսի փեշերից եւ հասնում Մռով կամ էլ ընդհակառակը: Առանց մեկը մյուսի, նա չի պատկերացնում հայրենիքը: Մասիսի եւ Մռովի, Կեչառիսի եւ Գանձասարի, Արաքսի եւ Տրտուի ծփանքները նկարագրվում են միաձույլ, որոնց երգը հնչում է որպես համանվագ: Այդ տեսակե-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Միհ խորհրդանշական է «Իմ մոտիկ հեռուն» շարքը, որտեղ հիմնականում բանաստեղծի հայացքն ուղղվում է Արցախին: Այս շարքում եւս ինքնաճանաչման ձգութանը քնարական հերոսին տանում է վերջ չունեցող ճանապարհով, իսկ դա Դայոց Արցախի բազմադարյան երթն է, նրա մեջ ճանապարհը, որ զարդարված է հին ու ամրակուռ բերութով, հողից բուսած պարհսպներով, որ զրուցում են մարդու սրտի եւ աշխարհի հետ: Այդ ճանապարհը Արցախի գոյության վավերագրությունն է: Ով այդ ճանապարհով քայլի, կիասմի Դայոց Արեւելից կողմանց խորհուրդներին: Այս խոստովանությունը կարեւորվում է նրանով, որ ամեն ինչ երեւում է երգչի հոգու լուսարձակի տակ եւ քնարական հերոսի շրթերին դառնում օրիներգ: Ավաղեմիկոս Ս.Սարինյանը մի առիթով գրել է. «Ես առանձնահատուկ նշանակություն եմ տալիս գրողի ինքնամեկնությանը, թե նա ինչպես է պատկերացնում իր փիլիսոփայական աշխարհը եւ որն է իր ելման կետն այս տիեզերքում»:⁷ Ինքնամեկնության, ինքնահաստատման հաջող օրինակներից է Բ.Զանյանի այս խոստովանությունը.

*Թե դու թարթառն ես, ես քո բարթառն եմ,
Քո վազքը ահեղ ու ըմբոստ վարքը,
Ու քե թարթառի հովիտն ես դու հին,
Քո հնությունն եմ, քո Խոթավանքը,
Թե այդ հովիտով անցնող ճամփա եմ,
Ազդանշան եմ ոլորաններիո,
Թե տում ես լրված, քո հզոր կանչն եմ,
Որ ետ է բերում մոլորյալներիո:*⁸
(«Թե ազնիվ հող ես»)

Կարուտի եւ ցավի զգացումից երգիչն ասես տարրալուծվում է արցախյան նվազների մեջ: Իրար են խառնվում նրա ուրախ եւ տխուր զգացումները: Քնարական հերոսը հպարտությունից ցն-

ծում է եւ ապա անմիջապես զգաստանում կորուստների ցավից։ Արտուրի երգով ճանաչում է հայրենի եզերքը, ժայռի մերկ կրծքին ծաղկած մերկ մասրենու թիվով զգում, որ մոտ է Տրտու գետին, բայց ժայռի երկնամերձ գլխին տեսնելով կիսավեր վանքը, մոտիկից լսում է «Զայներ հեռացած, համրացած ծայներ» («Երբ ճամփի վրա»):

Բ.Զանյանի արցախյան երգերը երկար ճանապարհ անցած, աշխարհի չարն ու բարին հասկացած, ծննդավայրի եւ օտար օջախի ջերմության տարրելությունը ճաշակած, կենսափորձով ծանրաբեռ երգչի խոհ ու խորհուրդներ են։ Նրանցում ոգու հիշողությունն է խոսում, ճշում է ցաված սիրտը, շշնջում հարազատների միջավայրից հեռացած կարոտը, բորբոքվում օջախից չիեռանալու անկեղծ պատգամը։ Ի հակակշիռ Արցախյը փառաբանող այն բանաստեղծների, ովքեր ապրելով հեռուներում, փառաբանել են նրա արտաքին գեղեցկությունները, ընդգծել իրենց հազվադեպ այցելությունները նրան, Բ.Զանյանը դարձել է իր ծննդավայր Արցախի տագնապների երգիչը։ Նա իր բանաստեղծական նժարներին է դնում Արցախի ուրախությունն ու ցավը եւ դրանց միագումարը բերում երգի մեջ։ Դա ոչ թե հոգեկան երկվության արտահայտություն է, այլ առանց ծննդավայրի իր կյանքը չպատկերացնող քաղաքացու միաժամանակյա տագնապի արտահայտություն։

«Տրտու գետը» բանաստեղծությունն այդ խռովքի լավագույն արտահայտություններից է։ Բնութագրելով Տրտու-Թարթառը, բանաստեղծն առաջին հերթին ընդգծում է։ «Տագնապախտով ու տագնապաձայն» գետի ծայնը «լրության մշտախոս լեզուն է»։ Մարդիկ գալիս-գնում են, իսկ Տրտուն մնում է մենակ՝ իր դժվար ճամփի ու խռովքի հետ («Տրտու գետը»)։ Այդ թախիծը ծնվել է Արցախն ու արցախցին իրար կորցնելու վտանգից։ Ահա թե ինչու, բանաստեղծը Տրտու գետի ծորավներին թախծող ուղիներին խորհուրդ է տալիս չխարվել ինչ-որ տեղից եկած ճնճ-

ՏԱԳԻՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դուկների ազդարարած գարուններից: Նրա երգը երկրի եւ ժողովրդի կենացրության բանաստեղծական հյուսվածքն է: Բանաստեղծի աչքերի առջեւ արիեստակամորեն «կիմսերնացինալացվում» էր Արցախը, առաջին հերթին իր բնօրրանից հայկական տարրի դուրս մղելու միջոցով: Բանաստեղծի կուտակվոր թախիծն ահա ծնվում է այս ցավակի իրողությունից: «Նոյն գագաթներն են» երգը հենց այդ ծանր ապրումից է ակունքված: Երգիչը նկատում է, որ նոյն ակունքներն են, բայց «ճյուղերն են ուրիշ, ծառերն են ուրիշ», նոյն հովերն են «Փարվելն է ուրիշ, շոյելն է ուրիշ», նոյն կարուտներն են՝ «Սրտերն են ուրիշ, սիրելն է ուրիշ», նոյն ճանփաներն են՝ «Ոտնահետքերը, ոտներն են ուրիշ» եւ վերջապես.

*Նոյն Տողասարմ է ծաղկունքով լիքը,
Գտիչն է ուրիշ, լանջերն են ուրիշ,
Նոյն Մրնածորն է, նոյն Իշխանիկը,
Զայներն են ուրիշ, կանչերն են ուրիշ:*⁹

(«Նոյն գագաթներն են»)

Կուտակելով տարիների փորձը, Բ.Զանյանը հայտնաբերել է իր պոետական խոսքի տարրեր ծեսերը: Արցախյան գգացողությունը արտահայտելով տեղանունների ու հուշարձանների միջոցով, նա երգը չի նեղացնում, այլ բացահայտում է արցախյուն հոգեբանությունը, ամբողջացնում նրա բարոյական նկարագիրը: Արցախ աշխարհի բարեմանությունները բնութագրվում են Գանձասարի եւ Դադիվանքի, Ամարասի եւ Գտիչի, Թարթառի եւ Խաչենագետի, Մռովի եւ Քիրսի, Արեւսարի եւ Իշխանածորի, նրա կուտական անտառների եւ կանաչապատ լանջերի նկարագրությամբ: Պատկերների մի ամբողջ շարք են կազմում բանաստեղծի այն երգերը, որոնք նվիրված են հայրենի պատմական հուշարձաններին եւ տեղանուններին: Սակայն դրանք պայ-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դանական բնույթ են կրում: Վերջապես բանաստեղծությունների ենթաքնազրերում հայրենիքի պատմական եւ նորօրյա պրոբլեմներն են, երգչի ըմբռնումներն ու ակնկալությունները ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Նրա գեղարվեստական պատկերներում սարը քայլում է, ժայռը՝ խորհում, գետը խոսում է, անտառը՝ երգում, վանքն աղոթում է, ճանապարհը՝ հաստատում: Արցախյան մասունքների հետ բանաստեղծը գրուցում է որդիական ջերմությամբ. ձգտում է ճանաչել եւ հայրենիքը, եւ իրեն: Զնարական հերոսն ու բնօրդանը մի անբաժանելի միասնություն են կազմում: Այդ միասնության մեջ մի կողմից Արցախն է վեհացնում որդուն, մյուս կողմից՝ որդին է վեհացնում Արցախն մորը: Մարդու եւ ծննդավայրի այս միասնությունը հայրենիքի գոյատեման բանալին է, ուժ, որ հավերժության խորհուրդն ունի: Բանաստեղծի հոգում եռում է մի կարոտ, որ կապված է հայրենի հարազատ վայրերի հետ՝ տրամադրությունների եւ հոգեվիճակների բացահայտումներով: Կարոտի գույներին կարոտի ցողն է իշնում Զանյանի հայրենաբաղադրիթյան երգերում: Այդ երգերում ծփում են կյանքի բույրն ու ապրելու տեսչը: Բանաստեղծի աշխարհում ուրույն գույներով են ապրում արահետները, զամրիկը, եղնիկը, կաղնին, աղբյուրը, դաշտերը, ծաղիկները: Իրար են ծուլվում երգն ու հայրենի բնությունը: Կարոտ են արտաշնչում մամուռն ու խոտը, քարն ու հողը, աղմուկն ու լռությունը: Այդ զգացումից են ծնվել «Արահետներ», «Մամուռն ու խոտը», «Հոգմած ոտքս...», «Սասրենին», «Ոչ, չեմ հեռացել» եւ այլ հաջողված պատկերներ:

Բանաստեղծն այնպես է ներաճել հայրենի լեռներին, գետերին, հովիտներին ու դաշտերին, որ նրա հայրենապատումի մեջ տեսնում ու զգում ես Հայոց Արևելից կողմանց թույրն ու բույրը: Գրականագետ Ս. Արզումանյանը Հ. Սահյանի մասին է գրել. «Հ. Սահյանի յուրաքանչյուր գեղեցիկ բանաստեղծություն ընթերցողի համար նորացնում է հայրենի բնաշխարհը, նոր գույներ

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

ու երանգներ բերում, լսելի դարձնում թարմ շշուկներ»:¹⁰

Բ.Զանյանի ստեղծագործական խառնվածքը սահյանական է: Ուստի գրականագետի՝ Յ.Սահյանին տված գնահատականը ինչ որ չափով կարելի է վերագրել Բ.Զանյանին, նկատի ունենալով բանաստեղծության ազգային հողի պահպաննամ ձգտումներն ու բանաստեղծական փորձը:

Բ.Զանյանը իրեն համարում է հայրենիքի գինվորյալ: Հայրենի օջախի նորորյա ընթացքը, այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները նրա ուշադրության կենտրոնում են: Հայրենի Արցախի հարատեւման ուղին նա տեսավ ազգային-ազատագրական պայքարի մեջ եւ առաջններից մեկն էր, որ հնչեցրեց Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու շեփորը: Բանաստեղծը Արցախի կորուստը համարում է իր մահը, ուստի մարտի է կոչում գինվորյալ հայրենասերներին: Ազատության այլ ճանապարհ չկա: Նա հավատում է, որ Արցախի հրե ոգին եղել է, կա եւ կլինի: Դենց այդ ոգու արտահայտություն են հավատի եւ հույսի այն երգերը, որ ձոնված են Արցախին, Հայաստանին, նրանց ապագա միասնական ընթացքին՝ դեպի հավերժություն:

Պ. Մելակը գրել է. «Չմոռանանք, որ հայրենասիրությունը հայ գրողի մոտ հանդես է գալիս ոչ որպես սոսկական մի զգացում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսություն»:¹¹ Մեծ բանաստեղծի այս ծեւակերպումը բխում է հայ դարավոր գրականության բնույթից: Այդ գնահատականի լուսարձակով էլ երեւում է Արցախի բանաստեղծների հայրենապատումը:

Տաղանդավոր բանաստեղծ, մանկագիր ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԻԵԼՅԱՆԻ ստեղծագործության մեջ առանձին բաժին են կազմում հայրենասիրական երգերը: Հայրենասիրական զգացումների, քաղաքացիական պարտքի, մարդասիրական գաղափարների

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իյուսվածքներ են դրամք: Այդ երգերում պատկերավորությունն ու խոհականությունը զուգակցվում են միմյանց: Դրանով պետք է բացատրել քաղաքական թեմայի նրա արծարծման ազդեցության ոլորտը: Պոետի խորհրդածությունը զգացնումքային երակ ունի: Նրա բանաստեղծությունները մտքի եւ սրտի միասնության վկայություններ են, այդ սիմեթեզից էլ ծնվում են երգի պատկերը եւ ընդհանրացնան ուժը: Դրա լավագույն օրինակներից են «Երբ նայում եմ մեր լեռներին», «Երգ հրաժեշտի», «Քո գիրկն եմ գալիս», «Գարուն է», «Ղարաբաղ» եւ այլ բանաստեղծություններ:

Ղարաբաղը Գ. Գաբրիելյանի բանաստեղծական ոգեւորության աղբյուրն է, որի գրկի մեջ միշտ կարոտում է նրան: Դա մոր համեսք որդիհական անկեղծ սիրո արտահայտություն է: Անմիջական խոսքով բանաստեղծը պատճում է իր զգացնումքի մասին: «Քո գիրկն եմ գալիս» բանաստեղծության մեջ ինքնարտահայտման նյութական հիմքը որդիհական կարոտն է երկրի հանդեպ: Քնարական հերոսը հեռանալուց, կարծ ժամանակաշրջացքում համակվում է Քիրսի, Թարթառի, ողջ լեռնաշխարհի կարոտով եւ հայտնում միայն նրա գրկի մեջ իր երջանկությունը գտնելու գաղտնիքը:

Գ. Գաբրիելյանի հայրենասիրական բանաստեղծությունները հարազատ զավակի անկեղծ զգացնումքի նոտաններ են: Կերացական, հրետորական բացականչություններ չկան նրանցում: Հայրենիքի վեհ սարերի լանջերին, պատճության խաչմերուկներում, նորօրյա գոտեմարտերում բանաստեղծը տեսնում է արարումի եւ պայքարի հերոսական էջեր, որոնք իր երգերի մեջ դառնում են արցախցու հոգեբանության ամենաազնիվ դրսեւորումներ: Յուրաքանչյուր իրադարձության, տպավորության բանաստեղծական իյուսվածքներում քնարական հերոսը նայում է դեպի պատճության խորք՝ հայացքը հառած ապագային: Նրա սիրութ ասես դառնում է ծիածամ՝ անցյալից ծգված գալիք: Բանաստեղծը հեռու է վերացական ձոներից, նրա համար երկիրը

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

յուրաքանչյուրի տունն ու օջախն է, առանց որոնց՝ չիք հայրենիք: Պոետի համար ամենամարդկային երջանկությունը սեփական տունն է:

Գ.Գաբրիելյանի երկերում կա մի տագնապ Արցախի համար, դա պատահական չէ: Խորհրդային 70 տարիների ընթացքում Արդրեջանի կառավարող շրջանները ծգտել են հայաթափ ամել Արցախը: Եվ ինչ որ չափով հաջողվել է նրանց: Գյուղեր են դատարկվել, ամայացել են շատ բնակավայրեր: Ազատագրել եւ վերականգնել եր պետք այդ ամենը: Այս անմիջական այրումները քիչ անգամ չեն երգ դարձել Գ.Գաբրիելյանի հոգում: Բանաստեղծը լապտերավառի ննան որոնում է Արցախը կանգուն պահող ուժերն ու երանգները: Դատկանշական է նրա «Գարուն է» բանաստեղծությունը: Երգիչն ուռենու շյուղի պայթած բողբոջը մեղվի պար է անվանում, ծնիկալից սիրտը ուռած ձորում արքնացած մրցյունը՝ առվի կանչ, ծներեկի ելնելը՝ ուրախություն: Բայց գարունը իմաստ է ստանում, երբ հանդես է գալիս երկրի տերը՝ մարդը: Բանաստեղծի հայրենապատումի հաջողված երգերի առանձնահատկություններից մեկը պատկերի ռեալիստական պարզությունն ու կոնկրետությունն է, առանձնապես ժողովրդական երանգների օգտագործումը: Եվ դա նրան հաջողվեց այն բանի շնորհիվ, որ իր պոեզիայի ակունք է ընտրել իր հարազատ միջավայրը, մանկության վայրերը, պապերի կերտած տունն ու տեղը, կալը, երկանքը, արորը, լուծը եւ այն ամենը, ինչ կոչվում են Արցախ աշխարհի գալիքին հասցեագրված դասեր: Նման երգերում բանաստեղծի նպատակը հնի եւ նորի անխախտելի միասնության ընդգծումն է, որով ուժեղ է ժողովուրդը, հավերժող՝ հայրենիքը: Արցախի անցյալի եւ ներկայի կապը դեաի գալիք քայլելու երաշխիքն է բանաստեղծի հայրենապատումի մեջ:

Բանաստեղծական նրբին երանգներով Գ.Գաբրիելյանը շոշափել է դարերի ընթացքում հայրենիքը կանգուն պահող խնդիրներ եւ հաստատել, որ քաղաքացին երկիրը կանգուն պահող

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

աշխատանքի մեջ է գտնում իր երջանկությունը: Ժողովրդական կենսափորձից ծնված փիլիսոփայական ընդհանրացումն առկա է նաև բանաստեղի տարերում: Նրանցում քնարական հերոսի զարկերակը խփում է անցյալի, ներկայի եւ գալիքի փոխհարաբերության, մարդկային մտքի թռիչքների եւ աշխարհին ու տիեզերքը ճանաչելու նրա ծարավի շոշափումներով:

Բանաստեղծ ՎԱՐԴԱՆ ԴԱԿՈԲՅԱՆԸ գրական ասպարեզ իջավ 1960-ական թթ. երկրորդ կեսին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ պոեզիայում հռետորական տարրը հաղթահարվում էր, անհատի հոգերանական բացահայտումների պրոբլեմը գրողներից շատերին էր հուզում: Պ.Սեւակը հանդես էր եկել «Մարդը ափի մեջ» շարքով, Դ.Սահյանը «Տակաստանների ծիածաններից» իջել եւ քայլում էր դեպի զանգեզուրյան հրաշքների բանաստեղծականացումը, Շիրազը շարունակում էր «Գարնանամուտի» իր ավանդույթները: Իհարկե, ամեն ինչ չէ, որ պետք է կապել պայմանների հետ: Այստեղ կարեւորվում են բանաստեղծի ստեղծագործական խառնվածքն ու աստվածային շնորհի աստիճանը, ոգեւորության չափը, ինտուիցիայի հրաշգործության բռնկումը, որոնցով Վ.Դակոբյանն առանձնանում էր իր գրչակից ընկերներից: Նա դեռեւս ստեղծագործական իր առաջին քայլերը կատարելիս հաղորդակից դարձավ ժողովրդի ճակատագրի երանգներին, տեսավ հազարամյակների ճանապարհ անցած իր Արցախ աշխարհի ցավն ու տագնապները, հայրենիքի պատկերը հյուսեց հայրենի բնության եւ մարդու միասնությամբ:

Անդրադառնալով Վ.Դակոբյանի ստեղծագործական առաջին քայլերին, ակադեմիկոս Ս.Սարինյանը նկատել է. «Դա արցախյան ֆենոմենի ինքնագիտակցման ժամանակն էր, որ աղդարարը եղավ հայոց ազգային ոգու արթնացման եւ խորհրդա-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

նիշը ազգային-ազատագրական շարժման, հոգեւոր վերելքի մակրնթացության: Այս ալիքի վրա ծեւավորվեց Հակոբյան-բանաստեղի անհատականությունը: Իր հայտնությամբ նա ընդլայնեց մեր պոեզիայի աշխարհայացքը՝ թե իբրև ծեւույթ եւ թե որպես հոգեզգացական խոհերզություն՝ հայրենի եզերքի ռոմանտիկական էկզուտիկայի նուտագիան համահնչելով գոյի եւ անգոյի համամարդկային հղումներին»:¹²

Վ.Հակոբյանը հիմնալի կերպով հաստատեց գրական ժառանգականության ու հերթափոխության օրենքը, որ պարտադիր է բոլոր ժամանակների համար: Բանաստեղծությունը, որ հասարակական ինքնագիտակցության հավերժ քարն, բազմերանգ ասպարեզ է, երիտասարդ երգչին հնարավորություն տվեց ներթափանցել ժողովրդին հուզող պրոբլեմների մեջ: Ծիշտ է, նա ոչ միանգամից, բայց շատ արագ սկսեց խորանալ մարդու հոգեբանության մեջ, բացել ժամանակի փիլիսոփայության դրաները: Նա ձգտում էր ոտանավորի ավանդական կանոնները յուրացնել յուրովի եւ թարմացնել լեզվի արտօհայտչական միջոցները: Վ.Հակոբյանը Ս.Սարինյանին հղած պատասխանում գրել է. «Ես խոռվ մարդ եմ... եւ խռովքի մեջ եմ աշխարհում: Շրջապատող աշխարհում լինի քար, ծաղիկ, ծի, աղջիկ, թե լեռ, ես ամեն ինչ կարդում եմ, ապրում եմ ամեն շշովկ ու տառ: Այս առումով՝ ես ապրումի ու ոգեւորության խելազար եմ... Սիրում եմ բառը: Բառը կատար տուրքն է: Ամեն անգամ, երբ գրիչը ծեռքս եմ առնում... մտքովս չի եւ անցնում (թող ներվի), թե աշխարհում ասված բառ կա... թվում է, թե Աղամը ես եմ եւ փորձում եմ օգնել Աստծուն, որ իմ կողից ստեղծվող Եվան լինի այնպիսին, ինչպիսին մինչեւ հիմա դեռ չի եղել»:¹³

Պոեզիայի թեմատիկ ընդգրկումներում ինչի մասին էլ գրեց Վ.Հակոբյանը, ունեցավ իր հոգեւոր մթնոլորտի առանձնահատկությունները՝ իր բանաստեղծությանը նոր կյանք ու նոր շունչ հաղորդելու հրամայականով:

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Կարեւորում ենք ընդգծել, որ Վ. Չակորյանի հայրենապատումի մեջ միշտ էլ հնչել են հավատարմության, հայրենի լեռների հպարտությունն ու վեհությունը կրկնապատկելու, հավերժությունն ապահովելու խոստումները: Դեռևս իր առաջին՝ «Սեղեղիներ» գրքույկում նա զգացմունքների անխառն շաղախով ասես պատասխանել է հայրենիքին ծառայելու հարցին, գիտակցելով պոեզիայի ազգային եռթյան ակունքների պահանջը, ընդգծելով. «Ժայռից է բխում, աղբյուրն այս փոքրիկ... Դրա հանար է ժայռ միշտ հպարտ, Ու ճակատը բաց նայում աշխարհին»:

Ներդաշնակ են կյանքի ու բանաստեղծության փոխհարաբերությունները Վ. Չակորյանի երգերում: Այստեղից էլ քնարական հերոսի այն հավատը, որ երկիրը միակ օջախն է, ուր մարդը կարող է գտնել իր երջանկությունը, ուստի պետք է ծառայի եւ որդիաբար խոնարհվի նրա առջեւ. «Ին երազներում հավատացնում են ին աչքերը ինձ, Թե ժայռ են ելուսմ եղեւմիները ոչ թե մրցելու, Այլ խոնարհվելու աշխարհի առաջ...»:

Բանաստեղծի երգերում շրջանառության մեջ է դրվում հայրենիքի եւ քաղաքացու ներդաշնակության հարցը: Լուսինը, առուն, ամպերը, երկինքը, աստղերը եւ այլ հրաշքներ, որպես մետաֆորներ, ծառայում են այդ ներդաշնակությունը չխախտելու պահանջին:

Երկրի ու քաղաքացու ներդաշնակության խորհուրդը բանաստեղծին մղում է դեպի ժողովրդի եւ հայրենիքի ճակատագորի շրջանակները, որ նույնպես պայմանավորված է կյանքը գեղեցկացնելու ձգութունով:

Բանաստեղծի երկրորդ՝ «Սեր եւ ժպիտ» գիրքն ինքնահաստատման հաջող օրինակ էր: Նա կրկին քնարական երանգների եւ խոհափիլխոփայական մտորումների մեջ էր: Գիրքն ամբողջությամբ պոետական ազնիվ զգացումների շաղախ է՝ խորքային եւ գունային շափաղումներով:

Վերցնենք «Շայրենի հողը», «Իմ լեռնաշխարհին» գողտրիկ

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քանաստեղությունները: Դրանք խոհական նրբերանգների խոտացումներ են, ուր հայրենի հողի ուժն ու նշանակությունն ընդունված են քանաստեղծական գյուտի եւ թարմ պատկերների միջոցով: Հայրենիքի հավերժության գաղտնիքը նա տեսնում է առողջ արմատների մեջ.

*Արեւահամ քաղցրությունը,
Բույրն են ըմպում նրանք հողի
Ու ձգվում են ջլերի պես,*

*Սեզրից ծալվում հարյուր անգամ,
Հարյուր անգամ ոլորվում են
Քարերի մեջ,
Որ միշտ ուղիղ ձգվի... ծառը:*¹⁴

(«Արմատները»)

Վ. Հակոբյանը երկիրը տեսնում է իր տան պատկերով: Մի ամբողջ լեռնաշխարհի հազարամյակների կենսասիրությունն ու կենսափորձը երգի տողեր դարձած թրթռում են նրա շրերին: Արցախ աշխարհի տառապանքից ու լույսից ծնված խոսքը մի դեպքում հնչում է որպես օրիներգ՝ ծոնված երկնքին («Երկինքն ասես հասկանում ե»), մյուս դեպքում հողին ուղղված երախտագիտական խոստովանություն («Յուշ»), մի ուրիշ դեպքում ծավալվում է, ինչպես կարոտի առեղծված, որի վերծանումը շատ է դժվար («Մի կարոտ կա»), իսկ մի այլ դեպքում ծավալվում գարնան ծփանքներով («Գարուն»): Բանաստեղծի սիրտը բարախում է հողի սիրով: Հայրենիք, երջանկություն հասկացությունները նա կապում է հայրենի հողի հետ: Բանաստեղծական հյուսվածքում («Արմատներ են երազներս») պոետի զգացումները, ձգտումները հանգուցվում են հող ու քարին, ժիլ ու ծաղկին՝ ոչ որպես կարոտի մի արտահայտություն, այլ ինչպես այդ ամենին

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Կյանք պարգեւող արմատներ.

Արմատներ են երազմներ,
Նրանք իրենց
Գիրկն են առնում քարերն անգամ
Ու սեղմում են
Անթեյական սիրով մաքուր,
Սեղմում այնքան,
Որ քարերը դաշնում եմ... հող...¹⁵

(«Արմատներ...»)

Եվ երազ արմատների ավիշով քնարական հերոսը արարող ուժ է դառնում, կարոտները փնջում ժայռերից, հողեղեն ծեռքերը երկարում դեպի հեռուն, կրակ առնում, արեւից հալվելով ծովալում նայում հողին՝ բողբոքելու հույսով («Ելնում եմ»): Այդ ամենը տեղի է ունենում անձնուրաց որդու նվիրումով՝ երկրի խորհրդանշից ժայռը ավելի բարձր տեսնելու համար.

Ելնում եմ ժայռը...
... Որ ժայռը քիչ էլ ինձնով բարձրանա...¹⁶

(«Ելնում եմ»)

«Մայրանում է լույսը» գրքի մի շարք բանաստեղծություններ Վ. Հակոբյանի ստեղծագործական եւ գաղափարական առնչություններով փոթորկված տրամադրությունների եւ տարերքի արտահայտություններ են: Դրանցից են «Ամառային նկար», «Դայրենիք», «Պատկեր», «Դողին», «Ծննդավայր» հյուսվածքները: Դայրենասիրության շուրջ ստեղծված պատկերներ են դրանք՝ բազմերանգ ու բազմաձև: ճակատային խոսք չկա, հաճախ պատկերի վերջում կատարվում է նովելային ընդհանրացում, որ նույնպես հայրենի երկրի հանդեպ ունեցած ջերմ սիրությունը պահպանվում է առաջնական տեսքությամբ:

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

արտահայտություն է: Եթե «Ամառային նկար» երգում նայր բնության հանդեպ անհում սիրո ծփանքն արտահայտված է կաղնու եւ անտարի պատկերով, «Դայրենիք» բանաստեղծության մեջ երգիչը ընտրում է, որ իր շուրբերի վրա հայրենիքի «առուների քաղցրիկ երգն ե», երակներում «Գետերի երգը», որ իր սիրտը կարող է սավառնել միայն երկրի սիրո թեւերին: Բայց այստեղ եւս առկա է բանաստեղծական գյուտի հասնող անսպասելի ընդհանրացումը: Բանաստեղծը չի մոռանում հայրենիքի եւ քաղաքացու փոխադարձ սիրո գաղափարը: Դիմելով հայրենիքին, նա խոստովանում է: «Թո հողին մերված, Արարչագործական հավատի շող են, եվ հաստատումն ես դու իմ գոյության»: Վ. Դակորյանի համար հայրենիքը տիեզերքի մի մասնիկն է, ուստի տիեզերական սիրով է սիրում նրան: Տվյալ դեպքում բանաստեղծի հայցըն ուղղված է Արցախ աշխարհին, նրա հարուստ բարբառին: Երգերի մեջ կոնկրետ դառնում է հայրենի օջախի հասակը տիեզերական հորիզոնների մեջ: Քնարական հերոսը երազներով զուգման գիշերվա մեջ շառաչող թարթառը համարում է Լուսնի անսպասար վտակը:

Յուրաքանչյուր ազգային բանաստեղծ համամարդկային զգացմունքների օրդանը համարում է կոնկրետ միջավայրը եւ նա է արվեստին հաղորդում պրետական մողելներ: Այս նշանակում է, որ երգը պետք է ունենա իր հայրենիքը:

Երգի հայրենիք հասկացության պատասխանը տվել է նաև հոչակավոր գրականագետ Ս. Աղաբարյանը: Նա գրել է: «Գրականության «պատկերային շարքեր» ժառանգականության հիմունքով այսօր էլ հայ բանաստեղծության մեջ կայուն տեղ ունեն աշխարհագրական նվիրական անունները՝ Մասիսն ու Երկիր Նախրին, Զվարթնոցն ու Գեղարդը, Ավարայրն ու Անին, պատմական նշանավոր դեպքերը՝ Մեսրոպ Մաշտոցից ու «Մեծն Վարդանից» մինչեւ Հովի. Թումանյան ու Կոմիտաս, հայ դիցարանական նշխարները, Դայաստանի բնության դրվագները, Դայոց

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

պատմության սիմվոլները՝ ամրոցն ու բերդերը, տաճարներն ու վանքերը, ժողովրդական կենցաղի բնորոշ երեւությները, մի խոսքով այն ամենը, որ պատմականորեն կարելի է խմբավորել «ազգային օրնամենտ» անունով»:¹⁷

«Ազգային օրնամենտ» պրոբլեմը յուրովի լուծված է նաև Արցախի աչքի ընկնող բանաստեղծների, այդ թվում Վ. Դակրյանի ստեղծագործություններում։ Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ «ազգային օրնամենտը» միայն երկրի աշխարհագրական բարենասնությունների ընդգծումը չէ, այլև Դ. Ղեմիրճյանի նուրբ դիտողականությամբ՝ ժողովրդի ճակատագրի հարցերը լուծելու կարողությունը։ Վերիիշենք Ռ. Թումանյանի, Ավ. Խահիալյանի, Դ. Վարուժանի, Սիհամանթոյի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի հայրենապատումները։ 20-րդ դարի 50-60-ական թթ. այդ պրոբլեմը հաջողությամբ լուծվեց Ռ. Շիրազի, Պ. Սեւակի, Ռ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Յ. Ջովհաննիսյանի, Մ. Մարգարյանի ստեղծագործության մեջ։ Այս եւ Ո. Դավոյանի, Յ. Գրիգորյանի, Յ. Էդոյանի եւ մյուս նշանավոր պետական երկերում լուծվեց «հայրենիքի երգի» խնդիրը՝ «ազգային օրնամենտի» հմուտ ստեղծումով։ Քննարկման առարկա դարձավ գրական ավանդույթի եւ նորարարության պրոբլեմը։ Գրականագետ Ա. Եղիազարյանը վերլուծելով 60-70-ական թթ. աչքի ընկնող բանաստեղծների ստեղծագործությունները, անդրադապ նշված պրոբլեմին եւ ընդգծեց։ «Արվեստը հազարամյակներով չափվող իր ճանապարհին ամենատարրեր փոփոխությունների է ենթարկվել, բայց փառք Աստծո, չի դադարել արվեստ լինել, միշտ պահպանել է մարդկանց հոգեւոր կյանքի մի ամենակարեւոր եւ անփոխարինելի հատվածը լինելու իր իրավունքը։ Արվեստի զարգացման այս անընդհատությունը, որի նշանակությունը դժվար է գերազանահատել, ապահովվել է, նախ եւ առաջ, ավանդույթներով։ Ինչքան էլ մարտականորեն տրամադրված լինի արվեստագետը, եթե նա իսկապես տաղանդա-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Վոր է, գիտակցաբար, թե անգիտակցաբար, դիմում է ավանդութին: Ավանդույթն այն է, ինչ իր հետ բերում է գրականության անցած ճանապարհի, անցած փուլերի, մարդկության անցած փորձի կենարար ուժը, արմատները»:¹⁸

Վ. Դակորյանը հավատարիմ ազգային պոեզիայի ավանդներին, յուրովի վերաբերմունք ցուցաբերեց ավանդույթների նկատմամբ՝ ցուցաբերելով իր պոետական նախասիրությունը, չտարվեց նորարարության «տեխնիկական» էֆեկտներով, գրեց ներշնչանքով, հստակ ու անմիջական: Նա հայրենիքի եւ մարդկանց հետ խոսեց քարի, հովերի, առվի, ծաղկի, հավքի, գետի, ազնվության անուններից՝ երկրի սերն առնելով իր մեջ, իր սերը՝ հայրենիքի: Սա եւս փիլիսոփայություն է՝ զգացմունքների շաղախով...

Վ. Դակորյանի ստեղծագործական ու կենաց ծառն ավելի խոր արմատներ նետեց «Ծարի անունից» գրքով: Այստեղ վառ կերպով դրսեւորվեցին նրա ինքնանվիրումի եւ ինքնաճանաչման ընկալումները, եւ պատասխանելով երկրի եւ ժողովրդի առջեւ, ընդգծեց՝

Թեզնից ծնվելը
Դեռ քիչ է՝
Որդիդ լինելու համար:
Սարերդ պիտի ինձնով տուն դառնան,
Ինձնով կանաչեն,
Իմ նախշով պիտի
Սարդ ճանաչեն,
Երգերս՝ բախտիդ,
Կապույտներիդ պես
Լեռներն հնչեն:¹⁹

(«Թեզնից ծնվելը»)

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Բանաստեղծը մեծ հավատով քննում է իրեն եւ հաստատում իր լինելությունը հայրենի երկրի հավերժական ծփանքի մեջ: Այստեղ կարեւոր ենք համարում այն հանգամանքը, որ հայ պոեզիան արդեն զուլավում եւ կրնկրետանում էր Պ. Սեւակի ավանդույթով եւ Յ. Սահյանի նոր հունձքով: Վ. Դակորյանն այդ երկու մեծերին երկրպագում է, սովորում նրանցից: Դրա վկայությունն այդ երկուսին նվիրված բանաստեղծություններն են: Յ. Սահյանին ձոնած երգի սկիզբը արվեստագետի եւ հայրենիքի ճակատագրերի միասնության հաստատումն է.

*Ժայռը իր վրա պահում է մի ծառ,
Եվ ծառը գորեղ իր արմատներով
Մի ժայռ է պահում...²⁰*

(«Դամո Սահյանին»)

«Ծառի անունից» գրքում կոնկրետ ընդգծվում է բանաստեղծի երգելու նշանաբանը: Դա հայրենի երկրի փոխադարձ սիրո նույնությունն է, առանց իրարու կյանք չունենալու խոստովանությունը:

Ամբողջ գրքի միջով անցնում է այդ գաղափարը, որի հաջող բացահայտումներն են «Դու իմ անունն ես», «Ձեր անունից», «Պահից լույս վերցրու» երգերը, ինչպես նաև՝ «Մայրս կանչում է» եւ «Իմ թեւերի մեջ» շարքերը: Բանաստեղծի ուշքն ու միտքն ուղղված են հայրենիքին, նրա ծաղկումին, նրա վրա մարդու կողմից գեղեցիկ հետք թողնելու գործունեությանը, նրա ծաղկած գրկում ժողովրդի հավերժությունն ապահովելու ինքնանվիրումին: Նրա պատկերավոր հյուսվածքներում ընթերցողը լսում է քարի, հովտի, առվի, ծաղկի, հավքի, գետի երգը եւ այդ երգերում ամեն ինչ խոսում է երկրի անունից, հող հայրենիքի սուրբ անունից.

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քեզանից հեռու, ճամփի մոտ ընկած
քո տուֆաքարն եմ՝
Սյուի պես կարմիր...
Թող ներող լինեն քարերն այն բոլոր,
Որ կամուրջներիդ կամարների մեջ

Ուս-ուսի տված պահում են իրար,
ու քեզ են պահում:
Ես հպարտ եմ միշտ,
Որ անցորդը ինձ հանդիպելիս
Քո անուշ ու սուրբ անունն է տալիս... ²¹

(«Քարի անունից»)

Բանաստեղծն ամբողջ էությամբ ձուլված է երկրին, ժողովրդին, ապրում է նրանց անունով, նրանց համար: Նա ունկնդրում է ժողովրդի հարատեման բարդ հարցին եւ գտնում պատասխանը, որ երկրի եւ ժողովրդի ճակատագրին մերվելու եւ նրան ծառայելու միակ գաղտնիքի մեջ է: Բայց այդ պատասխանը ճակատային չէ: Ամբողջ բնությունն ընկերանում է բանաստեղծին, լեզու առած խոսում, խորհուրդ տալիս, խորհուրդ առնում: Քնարական հերոսն իրեն համարում է ծառի եղբայրը, որ միանգամից ընտրում է «երկու ճանապարհ», «սաղարթներով դեախ երկինք» է գնում, «արմատով դեախ ընդերքը հողի» («Ծառի եղբայրն են»): Այդ հերոսը հավատում է «լույսի իրաշքին եւ երդվում լույսով», երազում, որ երգը բուսնի «գարունքվա նման» («Ես հավատում եմ»): Զգտում է նմանվել ծաղկի շուրթերին ծնված ժպիտին, «որ վարակում է աշխարհն իրենով», իր անկեղծությամբ («Ժպիտը...»): Հպարտանում է, որ հողի մեջ նետած հունդերը «հավատարմության կրակներ պարզած» ընդառաջ են գալիս իր երազներին («Հունդը հողի մեջ»): Սարդկային անունը համեմատում է առվի հետ եւ խորհուրդ տալիս անվանն իմաստ պարզե-

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իել առվի անձնուրացությամբ, նվիրումով եւ հարատեմամբ:

Դայրենիքի ճակատագիրը իրենը համարելով, բանաստեղծը նոր ու թրոռուն երգեր գետեղեց «Ամմարելի-ամմեռելի» ժողովածուում: Գրքի «Լեռները թեւերիս վրա» շարքում նա նոր, թարմ պատկերներ հյուսեց, որոնց մեջ քնարական հերոսի ներշնչանքը կրկին հայրենի հողն է, հայրենի լեռները: Նրա համար հայրենիքի այսօրը երեկով շարունակությունն է ու ջերմությունը, սեփական երազներով հորինված ամենամեծ երգը, որի վրա կան Դայկ Նահապետի ծեռքերի շոյանքները («Զեռքերս»):

Ընդհանրապես իր բոլոր գրքերում Վ. Դակորյանի ամենաառաջին, ամենասուրբ գրուցները հայրենիքի հետ են: Ամեն անգամ նոր ռիթմով, խտացված գույներով, արինքնող պատկերներով նա վեր է հանում հայրենիքի վեհությունը և անփոխարիմելի ուժը: Նրա բանաստեղծական աշխարհում «ամենաբարձր գագաթներն են» համարվում այն երազները, որոնք կապված են օջախի հետ («Ամենաբարձր գագաթները»):

Այս աշխարհում երգիչը քայլում է՝ հոգում ու շուրբերի վրա առած այգաբացի գուլալությունը, լեռների արտացոլանքը, երկնքի շարժումն ու վարդը: Այդ ամենը նրան նվիրում է հայրենի բնաշխարհը, որտեղ ինչպես բանաստեղծն է հաստատում.

Ես գնում եմ դեպի մեծ սար,
Այս կածանը,
Որ բացվել է պապիս ոտքով,
Իմ քայլերով կանմահանա:

Նրա հայրենասիրական պոեզիայում լեռների խորհրդանիշը ծիածանվում է քնարական հերոսի ամենամարդկային հոգու գույներով: Դայրենիքի զավակը լեռների բարձունքներից է նայում հորիզոններին, եւ այդ հորիզոնները գեղեցիկ են թվում միայն իր ոտքերի տակ ամուր պատվանդան դարձած սարերի

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ուժով ու շնորհով: Դայրենի սարերի, հանդ ու ծորերի անունն իր շրթերի վրա, նախ պապն էր քայլում, դրա համար էլ քնարական հերոսի համար ապուպապոտ են արշալույսները:

Դիմա էլ թոռն է քայլում եւ ոգեւորված ճչում «խոսք ու բառեր», ու ոտքերի տակ սարերից սարերի նոր կարուտներ են ծնվում, արձագանքում են քարերը եւ ժխտվում է մահը, դեռ ավելին.

Եվ... ի՞նչ հրաշք: Երկիմքն էլ է
Իմ կանչերին արձագանքում,
ասես մեկը դիմում է ինձ,
շուղթին՝ սար ու ծորի ամուս:
Այն կածանը,
Որ բացվել է պապիս ոտքով,
այգալույսի շողերի մեջ
Իմ քայլերն է անմահանում: ²³

(«Անմահություն»)

Դայրենի լեռները առաջ թեւերի վրա, բանաստեղծն իր մեջ զգում է դարերի այն ուժը, որ իրեն է անցել պապից ու հորից, ասել է թե՝ հայրենի օջախի տառապալից ու հերոսական անցյալից: Այդ առումով հետաքրքրական է, որ նրա հայրենաշունչ բանաստեղծություններում քով-քովի կանգնում են պապը-հայրը-թոռը: Եռագագար այս լեռնաշղթան էլ հենց ներկայացնում է երկրի ու ժողովրդի միասնական հավերժության խորհրդանիշը: Այս հավերժությունը միաժամանակ թրթռում է պապի, հոր ու որդու ընդգծված, յուրահատուկ դիմանկարներով: Նրանք մեկը մյուսի պարզ կրկնությունը չեն: Թեկուզ բանաստեղծը «Դողերգ» ուսանավորում նշում է, որ ինքը «տղայի խաղից» է գալիս, որ ինքը «սկսել է տղայի խաղից», բայց միաժամանակ խորհուրդ է տալիս խիզախնելով «փրկել օրը»:

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Արցախ-հայրենիքը փառաբանելու նորանոր երանգներ գտնելու համար բանաստեղծը դիմում է ժողովրդական ավանդույթ-ներին, ժողովրդի աշխատասիրությանը, կամքի ուժին եւ այլ բարենամությունների: «Խաղողենի» բանաստեղծությունը պատկերային համակարգով, ապրումների խորությամբ, գաղափարի հստակությամբ կարելի է դասել հայրենասիրական լավագույն երգերի շարքը: «Անուշաբույր մանուշակի արմատներով» խաղողենին մի կողմից ներկայացնում է որպես լեռնաշխարհի իղձերը խտացնող, առաստություն ընծայող առբյուր, մեր պատերի շեն օջախից ճառագայթված լույս, մյուս կողմից էլ՝ խորհրդանիշն արցախյան հողի: Բանաստեղծի գեղագիտական իդեալի ոհիքերից պարզ է դառնում արցախցու եւ խաղողենու մտերմության նշանակությունը.

*Մի արմատդիմ սրտի մեջ, մի արմատդի խորունկ
հողում,
Լեռնաշխարհիս իղձերն են սուրբ հայացքիդ մեջ փայլում,
շողում,
Ախպերությամբ ծաղկուն պահենք լեռները մեր,
խաղողենի,
Անուշաբույր մանուշակի արմատներով խաղողենի:*²⁴

Վ. Դակորյանի «Մի կռունկ անցավ» գիրքը բացվում է «Դայաստան» երգով, որտեղ քարի մետաֆորը դառնում է երօզի խոհերի հաղորդարանը: Քնարական հերոսը Դայաստան աշխարհի ճամփից վերցնելով պատահած մի քար, համբուրում է եւ դնում ճակատին՝ զգալով նոր ծեռքի քնքշանքը, որից ջերմացած բացականչում է: «Ես ուր էլ գնամ հպարտ են գնում, Զէ՞ որ քո ծեռքն է դիպել ճակատիս, Զէ՞ որ ճակատիս քո գիրն եմ կրում. Դայաստան, Դայաստան»:

Բանաստեղծի ինտուիցիան բարախում է օրինական հպար-

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Սության զգացումով, հպարտություն, որի արմատները սնվում են հայոց պատմությունից: Դայրենի քարերն անգամ մեսրոպյան տառերմ են պահում իրենց շուլթերին: Ամեն մի տառը կենսագրություն ունի, «ունի թիվ, անուն»: Բանաստեղծը որդիական ներշնչանքով ու անբացատրելի սիրով աշխարհին է ներկայացնում հայոց լեռնաշխարհի հնայքը՝ քարի ու տառի, վաստակի ու ոգու միասնությամբ:

«Մի կռումկ անցավ» գրքի մտահղացումը թելադրված է հայրենի երկրի ճակատագրի եւ քնարական հերոսի ապրումների ներհյուսվածությունից: Լեռների ճակատագիրը հեշտ չի ալիքվում: Լեռնային այդ ընթացքը նման է այն առվին, որին հնարավոր են բոլոր ճամփերը: Բանաստեղծը լավ է գիտակցում այդ ամենը եւ իրեն պատասխանատու է օգում որպես նվիրյալ զավակ. «Ո՞վ տեղադրեց լեռները այսպես՝ ինանալով, որ ես պիտի ծնվեմ նրանց գրկի մեջ...» («Առուն գնում է»):

Վ. Դակորյանի բանաստեղծություններին հատուկ է մի թախիծ, որ շաղախսված է անգամ ուրախ տրամադրությամբ ծնված տողերին: Դա բացատրվում է նրանով, որ բանաստեղծը չի կեղծում իրեն, չի սնվում խարենության ու ստի շղարշով պարուրված «Մարդկային երջանկության» գաղափարից: Նա հետ նայելով, տեսնում է իր ժողովրդի կորուստները, շուրջը նայելով՝ զգում է դարերի խորքից եկած ինչ որ մոլուցքի մզլահոտը՝ դարձյալ իր ժողովրդի հանդեա:

Դակորյանի հայրենապատումը ժողովրդի դարավոր ոգու արձագանքն է, որ հայի համար թեւածում է կռումկի պատկերով: Բանաստեղծի կարոտի եւ թախծի ակունքներից մեկն էլ կռումկի անանցանելի ոգին է՝ հայ ժողովրդի կորսված հայրենիքի, աշխարհով մեկ սկիռված նրա զավակների, միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակի հոգեւոր պատկերը: Պետք է նշել, որ գրքի բոլոր բանաստեղծությունները ներքին մի կապ ունեն՝ առնչված հայրենիքի անցյալի եւ ներկայի հողեղեն ու ոգեղեն պատկե-

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Թի՛ն: Այդ են վկայում «Անմահություն», «Դավքի սերը», «Դայրենիք», «Քիրսը», «Իմ տունը» եւ այլ բանաստեղծություններ:

Սերը հայրենի օջախի համրեա բանաստեղծի երգերում արձարձվում է թարմ ու բնական պատկերներով: Նա հայրենասիրության գաղափարն արտահայտելու նպատակով պոետական հյուսվածքների մեջ է Ներառում ամբողջ բնությունն ու արարածները: Ահա եւ «Դավքի սերը» գողտրիկ բանաստեղծությունը: Դավքի սերն ու երգը իր ընտրած ծառն է, որովհետեւ «քույն ունի ճյուղերին ծառի»: Պարզվում է, որ հավքի երգը սովորական խոսք չէ, այլ օրինանքն է՝ ուղղված բարու հաղթանակին, չէ՞ որ «Այստեղ է հավքի օրը ջերմանում: Ու ծաղկող ծառի, հողի, Աշխարհի Սերը բնի մեջ ծագեր է հանում»: Ենթարնագրային շերտեր ունեցող հաջողված պատկեր է «Զեղմված ծեռքի համար» բանաստեղծությունը: Խոսելով ծեռքասեղմումների մասին, երգիչը շումը ու մարմին է հաղորդում քնարական հերոսի ծեռքերին, որ «միշտ կարոտ են» մարդկանց: Ձեռքերի կարոտը անսովոր պատկեր է, բայց դրանով էլ չի բավարարվում պոետը: Նա ծեռքերի այդ կարոտի ակունքը հասցնում է դարերի խորքը, հաստատում, որ «Նրանք ծեռքերն են Դայկ Նահապետի»: Բանաստեղծը եւ վերագնահատում է անցյալը, եւ իմաստավորում ներկան, միաժամանակ ընդգծելով ենթարնագրային մի նոր գաղափար՝ մայր ժողովրդի աշխատափրությունը, որի հետ էլ կապված է նրա գոյատեման առեղծվածը:

Սերը հայրենի օջախի համրեա բանաստեղծի երգերում հողի թույր ունի, վարդերի թույր, վերջապես հայրենիքը կանգուն պահելու երազի գույն: Եթե մի կողմից Քիրսը ուզում է բանաստեղծի «տունը լինել», ուզում է, որ նրա «ստվերն առնի ու մաքրաջրի», մյուս կողմից էլ լեռան թեւավերող ծայնը հասնում է քնարական հերոսի հոգուն, որպես պահանջ, որ իր լանջերին տնկի թթենի, նռնենի, վարի-ցանի արտ, որ լանջով իր ծին ջրելու տանի, եվ ձին լեռանը սիրի իր նման:

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քնարական ներշնչանքը բացելով իր թեւերը, այստեղ երկխոսության է փոխվում: Տեղի է ունենում լեռան եւ զավակի ջերմ գրուցը եւ Քիրսը ծնողական խանդաղատանքով լեզու է առնում. «Երբ դու ես անցնում իմ շավիդներով, Թո Դավիթ պապը, որ վաղուց չկա, Քեզ հետ քայլում ե» («Քիրս»):

Երգից-եղոյ բանաստեղծն ավելի է բացվում: Նա հայրենիքի լանջերից քայլում է դեպի իր սեփական տունը՝ «Սահունասարի հայացքի ներքո», ուր մանկությունն է բուրում: Անուր է այդ տան հիմքը, որովկենտել որձաքարից է, դրա համար էլ հպարտության զգացումով բանաստեղծը բացականչում է. «Իմ տունն այստեղ է, իմ Ղարաբաղում, իմ տան պատերը թեւերի նման գրկել են հողը, Արմատ են ձգել, բուսնում են ասես, Անուր է հողը իմ տան պատերով»:

Հայրենի լեռների շնչառությունը զգալով իր արյան մեջ, Վ. Դակորյանն ամեն ինչի մեջ լսում է խորհուրդը երկրի եւ ժողովրդի եւ շշնջում է. «Ծառա եմ ձայնիդ»: Դանրահայտ երգի տողը նոր իմաստ է ստանում նաեւ քնարական հերոսի որդիական շրթերին:

Վ. Դակորյանի գրչի տակ աստվածանում է հողը, որի համար աղոթում եւ կանաչ մոմեր է վառում անտառը եւ «շիվերի կանաչ սլաքքի միջով ծառը ձգվում է դեպի... գորություն» («Սուրբ անտառ»): Բանաստեղծն իմաստավորում է քարը... միայն «տան պատի մեջ», արմատը՝ հողում, իսկ այդ ամենը՝ մարդու արարչագործության մեջ («Եթե ուզում ես»): Նա ձգուում է, որ իր երգի տողերը «արահետ դառնան լեռներ մագլցող», իսկ իր քայլերը՝ գեղեցիկ վերադարձ դեպի բալիկները: Մարդկային այս գեղեցիկ զգացումները բանաստեղծին վերջապես տանում են դեպի աշխարհը փիլիսոփայորեն ընկալելու սահմանը, որից այն կողմ իմաստուն խոհն ու խորհուրդն է: Եվ երգչի քայլերը հաստատում են, միտքը՝ խորաթափանց, որ խոտերի ծփանք են դառնում «Ապրում», «Կարոտ», «Այսօր հյուր եմ», «Վերիուշ» եւ այլ բանաս-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Մեղծություններում: Եվ երբ բանաստեղծը խոսում է արվեստագետի եւ կյանքի փոխհարաբերության եւ երգի քարքարոտ ու դժվարին ճամփի մասին, այդ չի նշանակում, որ նա վախենում է այդ դժվարությունից, ընդհակառակը, դրանով նա ընդգծում է իր վճռականությունը պոեզիայի խաչմերուկները հաղթահարելու եւ լուսավոր բացատ դրւոս գալու ճանապարհին: «Մի կռունկ անցավ» ժողովածուն կրկին ապացուցեց, որ Վ. Դակորյանը գնալով ավելի է գուլալվում ու խորանում իր սրտեր պարուրող ու բորբոքող երգերի մեջ:

Բանաստեղծի քնարական հերոսի սերն ու հավատը բխում են հայրենիքի եւ ժողովրդի հարուստ պատմության եւ արարող ուժի գիտակցումից: Դարերի արհավիրքներին դիմացած, արիության ու անկոտրում կամքի տեր մայր ժողովուրդն է թեւավորում երգչին: «Ես երգ չունեմ» բանաստեղծությունն արժեքավորվում է հենց այդ դիտակետից: Վ. Դակորյանը ժխտելով իր երգի գոյությունը Դարաբաղի մասին, միաժամանակ հաստատում է իր եւ հայրենի հողի եւրյան միասնությունը: Բնության եւ մարդկային բոլոր բարենասնությունների թվարկումներով բանաստեղծը նշում է, որ Դարաբաղը ծառ է իր արմատի վրա, սեր է՝ հավատի վրա, տեր՝ կարոտի վրա: Դարաբաղի բացվող արշալույսը, մաքուր հերկը, ջուրը՝ քանձած քարից, թուրը՝ կոփիկած դարից, հուրը՝ ելած սրտերից «Ես երգ չունեմ» բանաստեղծության թիվսմորն են: Արցախյան բնանկարի գեղեցիկ պատկերների միջոցով բանաստեղծն ընթերցողին է հասցնում հայրենի օջախի հավերժության գաղափարը: Եվ որքան շոշափելի է բանաստեղծության բովանդակությունը, նույնքան վարակիչ է երգչի խոսքը: Արծվաբույն Դարաբաղը, որ սերվել է սեգ լեռներից ու սրբավայրերից, ի հեճուկս բոլոր խարդավանքների, պիտի հավերժվի, որովհետեւ ինչպես բանաստեղծն է խոստովանում.

Դարաբաղը ելք է բացված սրտի նման,

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դարարաղը երգ է, բառեր չունեմ սակայն,
Իմ պապերի ծայնով միայն երգեցեք այն...²⁵

Մայր ժողովրդի ուժի, արիության ու մարդասիրության թեման Վ. Դակորյանի հայրենասիրական երգերի առանցքն է կազմում: Ինչպես ինքն է հաստատում, «Դայաստամը սիրում է այնպես», որ բառեր չի գտնում խոսքերով բացվելու, լուռ մնում է «ծաղկած ծիրանենու հնազանդությամբ»: Բայց իր փոխարեն կանաչում է քարը, կարկաչում են գետերը, սիրու աղավնու նման իջնում է հայրենի տան կտուրին: Բանատեղծության մեկը մյուսից գեղեցիկ պատկերներում քնարական հերոսը խոստվանում է իր որդիական սերը՝ հայոց աշխարհի հանրեալ, որ հնչում է որպես պատգամ ու կտակ:

Ես Դայաստամը սիրում եմ այնպես,
որ երբ կանգնում եմ
մայր հողի վրա,
թվում է լուս եմ,
Վեհ, հավերժական Վարդանություն եմ՝
բուսած Մայր հողից,
սերս բարձր է մատուի նման
դրան կամարը՝ հյուսված հողի մոտ,
որ այստեղ մտնեն միայն... խոնարհված...
Ես հայրենիքը սիրում եմ այսպես...²⁶

(«Դայաստամը»)

Դայրենասիրական երգերի շղթայում Վ. Դակորյանի մի շարք բանաստեղծություններ աչքի են ընկնում գեղարվեստական եւ գաղափարական ծփանքների կատարելությամբ: Դրանք մեծ սիրու սրտեր պարուրող դողանջներ են, որոնցում ծիածանագույն մետաֆորներն ընդգծվում են խորքային բովանդակությամբ:

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նման երգերից են «Գյուղական պատկեր», «Ես անձրեւին ուղեկցում եմ», «Փրկություն», «Ուխտ», «Վայրի կարոտներ» եւ այլ բանաստեղծություններ: Առանց ծիգ ու ջանքի բանաստեղծը նրանցում ընթերցողին է հանձնում իր քնարական ընկալումները: Այդ երգերի գեղեցկությունը պայմանավորված է դեպի հայրենի բնությունն ու օջախը ունեցած սիրո բնական խոսովանությամբ: Բանաստեղծը լավ գիտի իր լեռնաշխարհը, նա երգը ոչ թե գրում է գրչով, այլ նկարում է վրձինով: Դետեւելով իր ավագ վարպետ գրչեղբորը՝ Շ. Սահյանին, Վ. Զակորյանը ինքնատիպությամբ շրջանակներում շարունակում է Մեծ Սյունիքի եղբայր Արցախի բնանկարի խոսքային պատկերը: Սյունյաց աշխարհի սահյանական կտավների մոտ հյուսվում են արցախյան լեռնաշխարհի գեղեցիկ պատկերները: Աշխարհի արարման աստվածային օրերի հմայքը պահպանվել է Արցախում: Նրա կարոտներն անգամ, ըստ բանաստեղծի, վայրի են.

Ամպի թեւիմ՝ թառած ծառեր,
ամպի թեւիմ՝ կանգնած սարեր,
ամպի թեւիմ՝ կորած գառներ՝

ամպի թեւիմ՝ մարած շանթեր -
այս շողերն ինձ ո՞ւր են տանում: ²⁷

(«Վայրի կարոտներ»)

Վայրի կարոտների զգացումը բանաստեղծին ուժ է ներառկում: Նրա հայրենասիրական երգերում հերոսն ու երկիրը ճակատագրով միասնական են: Դերոսը հարստացած է հայրենիքով եւ ընդհակառակը: Նրանք մի եռթյուն են կազմում: Դայրենի լեռնաշխարհը բանաստեղծի պատկերավոր համեմատության միջոցն է, դա պարզապես աշխարհազգացում է: Ինչի մասին էլ խոսում է բանաստեղծը, նրա խորհրդանիշները հոգեբանական

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

բնույթ են ստանում, գեղագիտական բանաձեւերի դեր խաղում։ Դոգու եւ մտքի փոխադարձ կապը գնում-հասնում է բնապատկերի հյուսվածքին։ Եվ համեմերը կանաչելու ուժով են ներարկվում, դեղձենին ձորի պրոնկին «ծիածանում է իր ծաղկունքի ալը» («Դանդերը կանչում են»), աղբյուրը ձորում հիշում է «վեռներում ծարավ մնացած կենտ ծառի մասին», «ծառերը արմատի վրա են շարժվում», «ծառը ճամփա է ընկնում դեպի ձորը» («Պատվաստում»)։ Դեռ ավելին։

*Առվի արծաթը հոսում է անկարգ,
- Տասու իր գոտին սարում է թողել։
Բույնը չի լքում հավքը օրոցկամ,
- Աչքալուսանքն են աստղերը կախել։
Երկնքից առկախ՝ կածանների բույլ։
- Ներկա-բացակա... Քամի՞ սար չկա,
- Այն ինչ մերն է, նորից ետ կգա...²⁸*

(«Նատյուրմորտ հուշերով»)

Դեռևս «Կամուրջ» անդրանիկ գրքում ԴՐԱԶԱ ԲԵԳԼԱՐՅԱ-ՆԸ Նուրբ քնարերգուի հայտ էր ներկայացրել։ Նրա պոետական խոսքը թեւեր էր առնում Արցախին, հայրենի օջախին, հայրենակիցների ազնիվ ապրումներին նվիրված երգերի մեջ։ Եվ լավն այն էր, որ հենց են գլխից Դրայայի սերը հայրենիքի համեավերացական չեր։ Ապելով Արցախուն, թիզ առ թիզ շոջելով հարազատ լեռնաշխարհում, ծանոթանալով նրա նյութական եւ հոգեւոր մշակույթի գանձերին, աղ ու հաց կտրելով հողի մշակների հետ, բանաստեղծն ամբողջ էւթյամբ ծովվել է իր պապերի սուրբ օրրանին, ներշնչվել ու աշխարհի հետ խոսել նրա անու-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նից, ահա թե ինչու Յ.Բեգլարյանի պոեզիայի առյուծի բաժինը նրա հայրենասիրական մտորումներն են՝ ջերմ ու անմիջական, կենսաքրթի ու առինքնոո: Նրա «Արցախ-Նամե» ստվարածավալ ընտրանին մեր դիտարկումի լավագույն վկայությունն է:

Պետք է ընդգծել, որ Յ. Բեգլարյանը բնության գիտակ ու սիրահար է: Նրա բանաստեղծությունների հենքը բնության եւ մարդու փոխադարձ կապն է: Նրա երգերում սարը հերոս մարդու այլարերությունն է, աղբյուրը՝ հողի մշակի ոգեղենության կարկաչը: Լեռն ու որդին կանգնելով դեմ-դիմաց, միաժամանակ ապրում են միմյանց գրկի մեջ: Իր լեռներից նայելով կորսված հայրենի հորիզոններին՝ քուր գետից մինչեւ Արաքս, բանաստեղծը չի ծալվում մեջքից, ծնկաչոք չի իջնում կորուստների ու կարոտների առջեւ, ընդհակառակը, չարից ու ավագակից վրեժ է լուծում իր լեռնաշխարհի հանդեպ ունեցած հպարտ ու անմնացորդ սիրով, նրանից ստացած վեհությամբ ու թոհքներով, որ ժառանգել է խիզախ պապերից.

Մի օր հարցրի պապիս ծերացած.

- Թե քաջ են եղել նախնիները մեր
էլ ինչո՞ւ ամծիր դաշտերը թողած,
Լեռների մեջ են շինել ամրոցներ:

Քրի տակ ժպտաց պապիկս բարի,

Դայոց դարավոր վիշտը աչքերում,

Ու պատասխանեց նա իմաստալի.

- Արծիվները միշտ բարձունք են սիրում: ²⁹

(«Պատասխան»)

Յ. Բեգլարյանի հայրենասիրական գզացումները սերտորեն կապված են արցախյան սարերի ու քարափների, աղբյուրների

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

ու ծորերի, մանկության ոտնահետքերի ու սիրո առաջին շշունչների հետ:

Մեր ժողովորի հոգու ամրությունն ու վեհությունը, դարերի քնահաճույքների հանդեպ նրա տարած հաղթանակը, գրին ու երգին ապավինելու նրա իմաստությունը, հավերժության հետ քարերի լեզվով խոսելու նրա անզուգական հմտությունը շնչում ու բարախում են Յ.Բեզզարյանի հայրենասիրական երգերում: Այդ բարենասնությունների ընդգծումը մեր պատմության առավելությունն ապացուցելու կրվան չէ, այլ ներկան կերտելու եւ դեպի ապագան քայլելու ազդակ, որ արտահայտվում է բանաստեղծական անմիջականությամբ ու ազգային արժանապատվության գգացումնով: Արցախը՝ հայ ժողովորի արարչագործ ոգու եւ հրաշագործ ձեռքի այդ արհավատչյան, Յ.Բեզզարյանի երգերում խոսում է հայ լեզվով, հայկական վավերագրությամբ.

*Այստեղ ամեն քար
Քարե մատյան է,
Քարե պատմություն,
Որ գրել են մեր
Խելոր պապերը:*³⁰
(«Դարաբաղ»)

Անդրադարձալով հայ-Արցախի անցյալին, պատմական ճակատագրին, հպարտանալով նրանով, բանաստեղծը միաժամանակ ձգուում է գտնել հայրենի օջախը հավերժացնող գաղտնիքը եւ գտնում է, չէ՞ որ ինքը այն ժողովորի զավակն է, որ արհավիրքներին ու կորուստներին հակադրել է կառուցելու, ստեղծագործելու իր կամքը: Նետաքրքիրն այն է, որ բանաստեղծը երբեք չի շրջանցել իր հուզաշխարհը բորբոք պահող սահմանները, մնացել է քնարական իր զգացումների շրջանակներում, արտահայտել է աշխարհի եւ կյանքի հանդեպ եղած իր ինքնաբուխ ընկալումները եւ

Իհասել իհաջողության:

Բանաստեղծի սերը հայրենի օջախի հանդեա սահմաններ չի ճանաչում: Կաղնու արմատների պես կառչած իր ավանդական լեռներին, նրա քնարական հերոսը ապրում է միայն անձնուրաց սիրով: Բանաստեղծություններում նա քչախոս է: Մի քանի տողերում կարողանում է խոսքը համեմել ժողովորական կենսափորձից ծնված ինաստությամբ: Նման դեպքում նրա հայրենասիրական երգը հնչում է որպես խոհ ու խորհուրդ՝ հայացքը միշտ հայրենի հողին, որից բխում եւ որին փարվում է նրա սրտաբուկ սերը: Ակադեմիկոս Ս. Սարինյանը նկատել է. «Ինչ որ տարերային սկիզբ ունի Բեգլարյանի պոետական նկարագիրը, ենթագիտակցական այնքան յմքան իմքնարավ է, որ կարծես օտարվում է բանաստեղծությունը, քանզի կա բացարձակ մի եզերք, որ ավելի ինաստավոր է, քան բանաստեղծությունը: Այդ եզերքը Արցախսկանն է որպես գաղափար, որպես գեղագիտական իրեալ, եւ որպես տիեզերական արարչություն... Եվ մի հարցուք թե ինչ են նա եւ իր պատությունը, դարավոր կադմին, Քիրսն ու Մռովի, Կարկառն ու Տրտուն, Ամարասն ու Գանձասարը, մագաղաքյա մատյաններն ու Դադիվանքի խաչքարերը, Զրաբերդն ու Տիգրանակերտը... հավերժական մի երկիր»:³¹

Անձնավորելով հոյ հայրենին, բանաստեղծն ապրելու, գոյատելու ամենազորեղ օրինակը տեսնում է հողի մեջ: Ըստ նրա հողը բարի է եթե բարի է նաև նրա խնամողը: Չողը հայրենիք է կոչվում եւ հավերժվում է նրան մատուցված սիրով ու գորովանքով: Չողը չի խարում խնամողին, եթե խնամողը չի խարում, այս առումով Դ. Բեգլարյանը նայր հողի խնկարկում է, նրա մշակն ու տերը: Նրա խղճի ու հոգու երգիչը, այդ ապրումները երգ դարձնելու համար նա իրեն պատեպատ չի խփում, ասելիքը հրանցնում է ավանդական պոետական ծեւի մեջ: Այստեղ նա իր ուսուցչի՝ Դ. Սահյանի օրինակով հայրենիք երգելով զգտում է ստեղծել իր ժամանակակիցի դիմանկարը: Արցախում փառաբանելն ազգային ար-

ԾԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ժամապատվության դրսեւորում է դաշնում: Բանաստեղծի համար արցախցին աշխատասեր է, հյուրասեր, բարի, խիզախ, մշակ է ու գիտնական, գորավար եւ անձնուրաց ընկեր: Վկան՝ «Ղարաբաղցին» բանաստեղծությունը, որ երգ դարձրեց կոմպոզիտոր Ալ. Չեքիմյանը՝ նոր թեւեր ընճայելով նրան: Այս երեւույթը խոսում է այն մասին, որ Յ. Բեգլարյանի բանաստեղծություններն աչքի են ընկենում երաժշտականությամբ, ռիթմի հնչեղությամբ, անմիջականությամբ: Բերենք մի օրինակ.

Այս սրբատաշ քարերի,
Ամմաշ, ամքաշ քարերի,
Խաղող ու նուռ քարերի,
Խոսող ու լուռ քարերի
Չամար ենք կրվել:

Այս, այս խաչքար քարերի,
Խաչված, խաչքար քարերի,
Մտքի քանքար քարերի,
Շոգու քարրար քարերի
Չամար ենք կրվել:

Այս, այս անշունչ քարերի,
Շոգու տրտունջ քարերի,
Միշտ գուսպ ու լուրջ քարերի,
Տուն ու կամուրջ քարերի,
Սեկ էլ բոլոր դարերի
Չամար ենք կրվել:³²

(«Այս սրբատաշ քարերի»)

Յ. Բեգլարյանը պատմությունը դիտում է որպես ժառանգա-

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Վիոխության անընդհատ ընթացք: Այս առումով նրա պոեզիան ինքնազննան ու ինքնահաստատման համոզիչ խոսք է: Բանաստեղծի քնարական հերոսը կարողանում է տեսնել ինքն իրեն՝ ավանդական եւ նորի միասնության մեջ: Անցյալը նրա համար թանգարանային ննուշ չէ: Այն ապրում է այսօրվա մեջ: Ծիածաններ են անթեղված հուշ ու հիշատակ դարձած պապերի պատգամներում, որոնք շոշափելի են, անհրաժեշտ եւ երախտիքի արժանի:

Արեւներ են քանդակել
Մեր պապերը քարերին,
Քամրակել են ու թռոել
Գալիք բոլոր դարերին:
Այս, լուս դառան ծեր հոգին,
Արեւապաշտ մեր պապեր,
Որ հավաստով ծեր անգին
Դուք մեզ էլ եք վարակել: ³³

(«Արեւներ են քանդակել»)

Այսպես, հողի եւ մարդու, պատմության եւ ներկայի, պապերի եւ սերունդների փոխադարձ կապի միջից բանաստեղծն ընտրում է չխամրող այն գույնները, որոնք միասնության մեջ որակվում են որպես սեր՝ հայրենիքի հանդեպ: Տեղն է նշել, որ հողի եւ նրա մշակի մասին երգերը գերակշռում են ոչ միայն Յ. Բեզկարյանի, այլև Արցախի գրական ջոկատի մյուս բանաստեղծների հունձքի մեջ: Դա բացատրվում է նրանով, որ Արցախ-Ղարաբաղը քննույց նոր նման ու քրտնաքրոր հոր օրինակով առաջին հերթին իր զավակներին սովորեցրել է ժողովուրդ պահող հողի լեզուն: Ուստի յուրաքանչյուր դարաբաղցի հայրենասիրական իր պարտքն է համարում սերունդների հանդեպ պարզերես մնալ այգի մշակելով, հող հերկելով, ծառ տնկելով, բերք ու բարիք ա-

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դրաբելով: Արցախսի բանաստեղծն էլ որպես ակտիվ մասնակիցը այդ վեհ ու ավանդական գործընթացի, հորինում է իր սրտաբուխ երգը մայր Ժողովրդի այդ պատվաբեր բարեմասնությունների մասին, ինչպես նաև ցավում, որ Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի դեկավար շրջանները վարել են Արցախը հայարափ անելու քաղաքականություն: Այդ երեւույթի ժնունդ են Յ. Բեգլարյանի տագնապաժ տողերը.

Լեռներս ծարա՛վ, ծարա՛վ,
Գետերս, ո՞ւր եք գնում,
Լեռներում կարկաչելով,
Դաշտերում լուռ եք գնում:
... Խնում ու չեն կշտանում
Ծովերը խոր ու անտակ,
Ա՞ն, այդպես խենք ու խելառ
Գետերս, ո՞ւր եք գնում: ³⁴
(«Գետերս, ո՞ւր եք գնում»)

Յ. Բեգլարյանի հայրենասիրական երգերում ժողովրդի եւ հայրենիքի պատկերը միաձույլ են: Առանց ժողովրդի նա չի պատկերացնում հայրենիքը: Նրա քնարական հերոսը մերք հմայվում է պապի պես հոգնած ջրաղացով եւ ցավում, որ այն մոռացվել է («Զրադացը»), մերք հպարտանում Քիրսի ու Մռովի, Զրաբերդի ու Թարթառի գեղեցկությամբ ու վեհությամբ («Արցախ»), մերք զայրանում ու ափսոսում, որ ոնանք թողնում են սրբացած ավանդական օջախները եւ չվում օտար ափեր («Ես ո՞ւմ թողնեմ»): Բանաստեղծը միաժամանակ ընդգծում է հայրենի տան ապրեցնող կարոտն ու քաղցրությունը.

Ծենացել է մեր տունը հին,
Դուռը էլ փակ չէ,

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Սորս թողած բանալին
Ել քարի տակ չէ:
Գմամ նորից ու թող ծաղկի
Դայրենի տունս,
Նա իմձ կտա վաղուց կորած
Դամգիստս, քումս։³⁵

(«Մեր տունը»)

Դ. Բեգլարյանի քնարական հերոսի հոգու խորքերում Ամառասի եւ Գանձասարի զանգերն են հնչում, նրա սրտի վրա են քանդակված մաշտոցյան գրերը: Ահա, թե ինչու հաճախ խոր թախիծ է ապրում, երբ տեսնում է հայոց միջնադարյան ճարտարապետության խոսուն կորողները մոռացված ու կիսավեր: Դադիվանքին ձոնված երգի տողերն այս մասին են խոսում.

Մեռնում եմ քարերը
Այս իին տաճարում,
Օգնությո՞ւն չկա,

Սուրբ ավագանում
Կաթոցի ջուրն է
Դիմա լեռնանում,
Օգնությո՞ւն չկա...³⁶

(«Դադիվանքում»)

Այս զգացումից էլ ծնվեցին բանաստեղծի արդար ընդվզունը, ազգային ինքնորոշման իրավունքը ընդգծող հայրենասիրական երգերը:

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

1959 թ. լուս տեսավ ՍՈԿՐԱՏ ԽԱՅՅԱՆԻ «Կարկաչ» խորագրով առաջին գիրքը: Բանաստեղծի մուտքը առանձին գրախոսություններով ողջունեցին Ն. Զարյանը, Մ. Ղափյանը, Ս. Սոնմոնյանը, Ժ. Անդրյանը եւ ուրիշներ:

Դռչակավոր գրող Ն. Զարյանը «Բարեխոստում բողբոջներ» ընդհանրացնող հորվածում նշելով երիտասարդ բանաստեղծների հայրենասիրական ազնիվ ու նվիրական զգացումները, ընդգծել է. «Ուրարաբաղն իր բարձրաբերձ լեռներով եւ անդմնախոր ծորերով, իր փարթամ անտառներով ու արագավազ գետերով, իր քաջարի, ազատաբաղձ, ազատաեր եւ միաժամանակ ավանդապահ ժողովրդով միշտ էլ եղել է հայ բանաստեղծների ոգեւորության առյուր՝ սկսած Լեւոն Աթաթեկյանից մինչեւ Աշոտ Գրաշի, Ղարաբաղն իր բարձրագագաթ աթոռն ունի նաեւ մեր երիտասարդ բանաստեղծների սրտում...»

Ես կուգեի ընթերցողի ուշադրությանը հանձնել Սոկրատ Խանյանի հետեւյալ քառյակը, որ միանգամայն ճշմարտացի է եւ հուզիչ.

*Ղարաբաղի իմ, փոքր ես, սակայն
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,*

*Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,
Որ աշխարհին չի հմայում. ²⁷*

Ս. Խանյանի առաջին ժողովածուում գետեղված բանաստեղծությունների առյուծի բաժինը հայրենասիրական երգերն են: Այդ մոտիվը գնալով նոր երանգներ ստացավ բանաստեղծի հաջորդ գրքերում: «Բարեկամություն» երկրորդ գրքի առիթով գրախոսությանը հանդես եկավ հայտնի բանաստեղծ Մ. Կորյունը, որտեղ նշեց. «Ո՞րն է Ս. Խանյանի բանաստեղծությունների դրականը եւ գրավականը: Չեղինակը ցուցաբերել է անսեթեւեթ, ու

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

պարզ ու անկեղծ գրելու անժխտելի կարողություն: Երբ ասելիք կա, նա կարողանում է գտնել արտահայտչական դիպուկ ծեւեր եւ ցանկացած տրամադրությամբ վարակել ընթերցողին: Դուզող բանաստեղծությունների քանակը քիչ չէ՝ «Սիրտ», «Իմ սերնդի խոսքը», «Մորս տենչը», «Թե հարցնեք», «Այնքան եմ հիմա քեզ սիրում» եւ այլն: Որքա՞ն լավ է բնութագրում ազնիվ, անխարդախ, ստեղծագործող մարդու սիրտը.

*Թե չերազեիր, չիսկախեիր,
Մնայիր քո մեջ ամփոփված ու բիրտ,
Չկամքեիր երկիրն աստղերին,
Արոյոք այդ ժա՞մ էլ կկոչվեիր սիրտ:*

Ս.Խանյանը սյուժետային երկեր ստեղծելու ծիրքով է օժտված եւ այն ժամրի մեջ արտացոլում է իր անժխտելի կարողությունը:³⁸

Այնուհետեւ իրար հետեւից լույս տեսան Ս.Խանյանի երրորդ՝ «Սիրոս ծեզ հետ է», ապա չորրորդ՝ «Արեւար» խորագրերով գրքերը: Այդ ժողովածուների մասին իրենց դրվատանքի խոսքն ասացին հռչակավոր արձակագիր Ս.Արմենը, գրականագետ Յ.Սերոբյանը: Նրանք նկատեցին բանաստեղծի հասունացումն ու ձեռքբերումները: Անդրադառնալով բանաստեղծի հայրենասիրական երգերին, Յ. Սերոբյանը գրեց. «Խանյանը հուզաթարավ, գունեղ պատկերել է հայրենի բնաշխարհի թույշ գեղեցկությունները, նրա մարդկանց հերոսական գործերը, օտար բռնակալների դեմ մահու եւ կենաց գոտեմարտում օջախի ծուխը, մանկան օրորոցը, գիրն ու պատմությունը պաշտպանելու համար: Այդ ամենի նկատմամբ բանաստեղծի անհուն սերն ու նվիրվածությունն արտահայտվել-պատկերվել է մերթ որպես ժայրից ժայռ զահավիժող փրփրաբաշ գետ, խոսկան առու, մերթ ճամփի եզրին թեքված ուռի, շնկշնկան քամուց օրորվող հազար

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

անուն, հազար բույր ունեցող ծաղիկ, որ Շիրազի վարդաստանում չկա, մերք գյուղ-քաղաքով, մարդկանց սրտով ալիք-ալիք բարձրացած, մինչեւ Արեւադր հասած կոմիտասյան երօի ղողաճը: Դայրենի տան ու հայրենիքի ընդհանրական պատկերն է գեղարվեստորեն տվել Խանյանը՝ ցանկանալով շեշտել այն խոր միտքը, որ տունն ու օջախն է հայրենիքի հիմքը, որ առանց հայրենիքի չկա ընտանիք, առանց այդ երկուսի չկա ոչ կյանք, ոչ երջանկություն:³⁹

Վերլուծելով Խանյանի բանաստեղծական շարքերը, Դ.Սերոբյանն ավելացրել է. «Իր հայրենի լեռնաշխարհին՝ արժիվների բույն Ղարաբաղին շատ անգամ է անդրադարձել Խանյանը՝ գրախոսվող գրքում գետերելով բանաստեղծությունների մի ամբողջ փունջ «Ին հայրենի լեռնաշխարհում» խորագրով: Նա որդիկան խորունկ սիրով խոսք է բացել հավերժ դալարուն Ուխտածորի, զմրուխտ հագած Արեւադրի, «Կոռունկ», «Երազ» երգող քաղցրալուր աղբյուրների մասին, լիրիկական շնչով, խորունկ սիրով համոզելով իր ընթերցողին»:⁴⁰ Իր այս կարծիքը հաստատելու նպատակով Դ.Սերոբյանը գրախոսության մեջ ամբողջությամբ բերել է Ս.Խանյանի «Երեւի մի օր» բանաստեղծությունը.

Արեւադր եմ բարձրացել՝ անտառ է շուրջս,
Աղբյուրները երգում եմ քաղցրալուր, բարի,
Որ համերգն այդ լավ լսեմ պահում եմ շունչս
Ու նստում եմ կածանից կախված մի քարի:
Աղբյուրներից մեկն ասես, «Երազ» է երգում,
Մեկը երգում է «Կոռունկ», մեկը՝ «Յար արի»,
Այդ երգերից հմայված իրար եմ թեքվում
Ու ծափ զարկում հիացքով ծառերն անտառի:
Ես քարացած որսում եմ ծայները բոլոր,
Ասես լինեմ կախարդիչ, հեքիաթ աշխարհում,
Մինչեւ երգեր գրելը, երեւի մի օր

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Կոմիտասը եղել է մեր Արեւաբրում:⁴¹

Դ.Սերոբյանը անդրադարձել է նաև Ս.Խանյանի «Ուխտածոր» լեզենդին: Նա նկատել է այս ստեղծագործության թե՛ հայրենասիրական պարուսը եւ թե՛ գեղարվեստորեն պատկերված այն առողջ օաղակարը, ըստ որի, ժողովուրդը ամնահ է, երբ պաշտպանում ու պահպանում է հայրենիքը: «Ուխտածոր» լեզենդում նկարագրված է մոնղոլական արշավանքների ժամանակ արցանցիմերի մղած հերոսական պայքարը: Զոհված հայրենասերների պատվին պատճական Դիզակի անտառապատ վայրերից մեկն էլ հենց կոչվել է Ուխտածոր: Այդ անունն է կրում նաև Հաղորդի շրջանի գյուղերից մեկը, որ մի ժամանակ կոչվում էր Էղիլլու:

Գրականագետ Ա.Աթայանը Ս.Խանյանի պոեզիային նվիրած գրքում նկատել է. ««Արեւասար» գրքում ակնբախ է Ս.Խանյանի կուտակումը կենսափորձի հաստատման ինաստով: Նա օրերի հետ քայլում է համընթաց, նրա ապրումների, խոհերի, ներշնչանքի հիմնական լեյտոնտիվը հայրենասիրությունն է»:⁴²

1972 թ. Ս.Խանյանը հրատարակել է հաջորդ՝ «Լեռների երգ» ժողովածում: Գրախոսելով գիրքը, գրականագետ Դ.Գասպարյանը ընդգծեց. «Ս.Խանյանի պոեզիայում հայրենիքը եւ քնարական հերոսը հանդես են գալիս միաձույլ, ոչ իրարից մեկուսացած: Բանաստեղծի մոտ հայրենիքը հասկացությունը հաճախ բացահայտվում է հայրենի եզերքի նկարագրով: Բնանկարն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների դրսեւորման, նրանց պատկերման միջոց»:⁴³

Ս. Խանյանը հայրենասիրական երգերն այդ ժողովածուում տեղավորել է «Աշխարհն իմ հոգում» շարքում: Բանաստեղծը «Աստղերին հասած լեռների ծնունդ» տողով սկսվող երգում իրեն համարում է լեռների զավակ, որ սնունդ է առել այդ սարերից եւ դարձել «առողջ ու բարեբեր մի հունդ»: Դեռ ավելին: Բա-

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նաստեղն իր հայրենի եզերքին է ընծայում երգը եւ նրա անունով խոսում աշխարհի հետ.

Թեզմով եմ այսօր փարվել աշխարհին,
Նվիրվել լուսե քո ճամապարհին,
Մրտիս պես ծուլված քո մեծ պայքարին,
Երգս քեզ լինի, հայրենի երկիր:

Ս.Խանյանն իր եւ իր երկրի միջեւ տարբերիչ գիծ չի տեսնում: Երախտագետ որդու համար անչափ թանկ է մոր կյանքը, ինչպես նաեւ հայրենիքի պատիվը: Նրա քնարական հերոսը հայրենիքի ճակատագրի կրոռն է, նրա գինվորյալը.

Ես հունդ եմ՝
Նետված քո հերկերի մեջ:
Թե քո հերկերը թոշնեն երաշտից,
Կչորանամ ես,
Ես շող եմ՝
Չուլված արեւածագիդ պայծառ վարսերին,
Թե սեւ ամանը հայացը ծածկեն,
Կմքնեմ եւ ես: «⁴⁴

Քնարական հերոսի եւ հայրենիքի միասնության պատկերն ենք տեսնում նաեւ բանաստեղծի «Ես դարաբաղյան լեռների որդի», «Լանջերդ կանաչ», «Դայաստան», «Կաղնի» եւ այլ երգերում: Բանաստեղծ Վ.Կարենցն այդ երեւույթի նկատմամբ արտահայտել է իր կարծիքը. «Այն բոլոր բանաստեղծությունների մեջ, ուր Սոկրատ Խանյանը խոսք է ուղղում իր աշխարհին, այդ աշխարհը դառնում է մեր աշխարհը»:⁴⁵

Դայաստեղծի մասին խոսքը Ս.Խանյանի մոտ դառնում է երանգների մի աշխարհ: Բանաստեղծը գորից գիրք դիմել է տարբեր միջոցների, երեւույթի իմաստավորման նոր հնարանքնե-

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Րի: Այս տեսանկյունից հետաքրքիր են նրա «Սպասում ենք դեռ», «Լեռնային ղողանջներ» ժողովածուները: Ս.Խանյանի հայրենասիրական երգերի մեջ մասը կարուտի եւ նվիրումի արտահայտություններ են: Մի դեպքում նա հիշում է Մեծ հայրենականում զոհված ավագ եղբորը՝ բանաստեղծ Սուլեմ Խանյանին՝ ընդգծելով հայրենիքի փրկության գործում նրա անձնութացությունը, նյուև դեպքում խոսքն ուղղում հայրենի եզերքին, հայրական օջախին եւ խոստովանում:

Ոչ մի անկյուն աշխարհում
Երազիս մեջ, արթմնի,
Այճես կարոտ չի ծնում,
Ինչպես գյուղն իմ հայրենի: ⁴⁶

Ընդհանրապես, Ս. Խանյանի հայրենասիրական երգերը քնարական հերոսի եւ հայրենի հողի անխախտ դաշնության արտահայտություններ են: Նրանցում թրոռում է հայրենակցական մի զգացում: Այս մաներան նկատելի է «Պատկեր», «Իմ լեռնաշխարհ», «Դայրենի օջախ», «Զրույց», «Չողը» եւ այլ գործերում: Նրանցում, ասես, բացահայտվում է օջախի եւ մարդու միասնության առեղծվածը.

Վառարանի ծուխը պապենական մեր տան
Գալարվում է դանդաղ, թեւում դեպի երկինք,
Այդ ասել է այստեղ առույգ մի գերդաստան
Շորինում է ոսկի հեքիաթն իր կյանքի:
Վառարանի ծուխը պապենական մեր տան
Ուլումքներ է դառնում, որ աստղերից կախվի.
Այդ ասել է պապիս երազները պայծառ
Դեռ ապրում եմ՝ դարձած շունչը մեր օջախի:
Այդ ասել է տատիս բարի խոսքն է ապրում,

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դորս խիղճը մաքուր ու քնքշանքն իմ մոր.
Այդ ասել է, որ մեր կյանքի ծառն է շրջում
Արմատներով իր հիմ ու ծյուղերով իր նոր: ⁴⁷
(«Վառարանի ծուխը»)

1980-1981 թթ. լույս տեսան Ս. Խանյանի «Քո անունից», «Կանաչ ծփանք» ժողովածուները, եւ մանուլն ասաց իր դրվատանքի խոսքը:

Ականավոր բանաստեղծ Գ. Գարրիելյանը տպագրեց գրախոսություն՝ «Երկու նվեր» խորագրով:

Նա գրեց. «Ս. Խանյանի այս երգերը հողաբույր են, քաղաքացիական պաթոսի լիրիկական արտահայտություններ, հայրենասիրության ընդգծված թրթիռներ, բարության ու լույսի քնքշանքներ, անձնուրաց սիրո նվազներ»: ⁴⁸

Ս. Խանյանը «Քո անունից» գրքի առաջին էջում գետեղել է «Արեւար» բանաստեղծությունը: Այստեղ քնարական հերոսի հայրենասիրությունը բացահայտվում է բնության իմաստավորմամբ եւ անձնավորմամբ: Սարդ այստեղ ծնող է, որ տարիներ առաջ փայփայել ու սնել է իր զավակին: Երախտագիտության զգացումով բանաստեղծ-որդին դիմում է նրան.

Բարձունքներս պահած խորքում
Իմ լեգենդ ու կյանք.
Արցունքներս առած հոգում
Իմ թախծոտ բերկրանք:
Քանի՛ անգամ մեծացար ու
Սամկացար իմձ հետ,
Սոր հրճկանք ու համբերություն,
Արեւար իմ սեգ: ⁴⁹

Բանաստեղծական այս զգացումի ու պատկերավորման

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Թարմ հնարանքի միջոցով Ս. Խանյանը «հայրենի եզերքի ճակատագրի հանդեպ ունեցած տագնապն արտահայտում է ինքնախստովանանքի միջոցով։ Դայրենիքի ճակատագրի մեջ կոնկրետ ու առարկայական թափանցման շնորհիվ նա ցավի եւ սիրո խոսք է ասուն։

Ամպերը զարնկեցին երկնքում՝
Իմ հոգում կայժակը շողաց,
Շառաչմեր հմչեցին ըմրեղքում,
Երկրի տեղ իմ սիրտը դողաց:
Գետերը դուրս եկան ափերից,
Ջրածածկ հույզերս եղան,
Անտառներ խարվեցին ծափերից,
Դողածածկ հույսերս եղամ։
Աշխարհը կրծքիս տակ առել,
Դարձել եմ եռացող տիեզերք...
Ավյունս կարող է քնե՞լ,
Արյո՞նս չի քնում երբեք։⁵⁰

(«Կրծքիս տակ»)

Տեղին է նկատել գրականագետը. «Ս. Խանյանը հայրենասիրական իր խոհերն արտահայտելու թարմ ու նուրբ երանզմեր է գտել, բանաստեղծական պատկերն ու ենթատեքստն ինքնաբուլս են եւ հավատում ես, որ դու ինքդ էլ այլ կերպ չես մտածի ու չես արտահայտվի։ Որպես որդի («Որդիական») դիմելով հայրենի երկրին՝ բանաստեղծը համեմատությունների ավանդական ծեւից հեռանում է, հակադրության հետաքրքիր պրիոնով հաստատում որդիական սիրո անսպառ ու անհատնում ծփանքը հայրենի հողի՝ մարդուն մարդ պահողի հանդեպ։»⁵¹

Որպես իր կարծիքի հաստատում, գրականագետը բերում է «Որդիական» բանաստեղծությունից մի հատված։

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏԻՒՄ

Իմ արմատները սրտիդ խորքում են,
Բայց ոչ կաղնու պես, կաղնիմ ի՞նչ է որ,
Ես որդին եմ քո:
Իմ թեւերը թեզ փայում են, շոյում,
Բայց ոչ ծյուղի պես, ծյուղը ի՞նչ է որ,
Ես որդին եմ քո: ⁵²

Հայրենիքին նվիրված երգերում Ս.Խանյանի նախընտրած հնարանքներից մեկը երկրի անձնավորումն է: Նա զրուցում է հայրենիքի հետ՝ ինչպես որդին՝ նոր:

Այստեղ կարեւորվում են մարդու եւ հողի, սերմոյի եւ բնության, ներկայի եւ ապագայի փոխհարաբերության կռվանները. նման դեպքերում ընդգծվում է նաև երգի ենթարնագրային ինաստը.

Ժայռը թեքվել առվի վրա
Ու կարկաչն է լսում անվերջ,
Առուն կարծես թոռն է նրա,
Թռվառում է օրոցքի մեջ:
Ի՞նչ հրաշք է ծնված այստեղ

Մայր բնության անտես ձեռքով,
Տեսեք ո՞նց են փարվել իրար
Պապն ու թոռը՝ հողի երգով: ⁵³

(«Ժայռ»)

Բանաստեղծը հաստատում է այն միտքը, որ հայրենիքը եւ քաղաքացին պայմանավորված են միմյանցով եւ այդ գաղափարն արտահայտելու համար որոնում ու ծգտում է հետաքրիր պատկերներ: Նման հյուսվածքներից են «Օրորել ես ինձ քո

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

իրով», «Յայրական օջախ», «Քո բորբքուն արեւի դեմ», «Դու մի անտառ , Ես՝ մի ճամփա» եւ այլ բանաստեղծություններ:

Ս.Խանյանի սերը հայրենի Պարաբաղի հանդեպ ծիածանի երանգներ ունի: Այդ սերը Եւ ցավ է, Եւ տագնապ, Եւ հպարտություն: Ղարաբաղն ամբողջությամբ մի անձեռակերտ բնապատկեր է Խանյանի պոեզիայում:

Նման երգերում ոչ միայն հայրենիքի գեղեցկություններն են ընդգծված, այլև ժողովրդի դարավոր ավանդույթները, սովորություններն ու կենցառը:

«Քո անունից» գրքի «Ղարաբաղյան նվագմեր» շարքն արժանացել է Եւ ընթերցողների, Եւ գրականագետների ուշադրությանը: Քսաններկու երգերից կազմված այդ շարքը քնարական պոեմի արժեք ունի: Թեմայի եւ արտահայտման ոճային ինքնատիպ միջոցներով բանաստեղծը ստեղծում է արցախյան կոլորիտ եւ գրույցի թրիաներով խոստովանում.

Իմ արյան մեջ ես, ես էլ քո արյան,
Մեր միջեւ չկամ փակված դրւո-դարպաս,
Ես իմ անունն ու գույնը կունենամ,
Քանի աշխարհում ծիում ես ու կաս: ⁵⁴

(«Զրոյց»)

«Ղարաբաղյան նվագմերում» մետաֆորներ են Թարթառն ու Խաչենը, Մոռվն ու Քիրսը, ինչպես նաև թթենին,

այն ծառը, որ «իր տիրոջը սիրում է ջերմ, քաղցր պտուղներ բաժանում բոլորին, սակայն՝

Չի պահանջում. նվիրում է
Ու գոհ մնում արածով,

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Միայն մարդն է ցնծում այդպես

Որդիներին տվածով: ⁵⁵

(«Թթենին»)

«Ղարաբաղյան շարքում» անձնավորված են ամպերը, արտերը, ծառերը: Նրանում բնութագրական է արեւը: Արեւն այստեղ միայն մետաֆոր չէ, այլև կենսական լիցք: «Արեւը» բանաստեղծության մեջ միենանույն զուգահեռականի վրա են դրված ժողովրդի պատմությունը, ճակատագիրը, բնավորությունը, հպարտությունը: Արցախի ամեն մի սար արեւի համար ուսկեցած է, այստեղ՝ «Սարերը արեւին թեւ-թիկունք, Արեւը՝ սարերին սիրող մայր է»: Ասելիքն իր կիզակետին է հասնում բանաստեղծության ընդհանրացման մեջ.

Այդպես են մեզ մոտ սարերը,

Արեւի սիրով են ջրդեղված,

Թե պատռեք սարերի սրտերը,

Արեւմեր կտեսնեք անթեղված: ⁵⁶

(«Արեւը»)

«Քո անումից» գրքի մեջ ծավալուն բաժինը Խանյանի խոհավիլիսովիայական քառյակներն են, որտեղ ընդգծված մի համաձուլվածք են կազմում հայրենասիրական երգերը, ուր բանաստեղծը բնութագրում է իր քնարական հերոսին.

Երգիչ եմ՝ երգին փարված,

Մշակ եմ՝ հերկին փարված,

Երգ ու հող մեկ են իմ մեջ,

Գալիքի հետքին փարված: ⁵⁷

Բանաստեղծի քնարական հերոսը հայրենասիրության իր

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

ընկալումն ունի: Նա ասում է, որ Երկրի ու ժողովրդի ճանապարհին միշտ էլ կարելի է հերոսանալ: Դա վերացական հասկացություն չէ, այլ՝ աշխարհը եւ մարդուն գեղեցկացնող կոնկրետ արարք.

Մի ծառ տնկիր, տաշիր մի քար, հերոսությունն այդ է, որ կա,
Եղիր բարձր, եղիր արդար, հերոսությունն այդ է, որ կա:
Ու թե հանկարծ հողմեր շաշեն, երկիրը քեզ մարտի կանչի,
Նրա ցավը քաշիր ու տար, հերոսությունն այդ է, որ կա:⁵⁸

«Կանաչ ծփանք» ժողովածուն աչքի է ընկնուն հայրենապատումի նոր թրթիռներով: Այստեղ էլ Երկրի եւ բանաստեղծի միասնությունն է ընդգծված: Ինչպես խորհուն է քնարական հերոսը, առանց այդ միասնության չի հարատեի ոչ Երկիրը, ոչ քաղաքացին: Դիմելով հայրենի Երկրին, նա ընդգծում է.

Թո անունը իմ ամունն է,
Թո պատիկը՝ պատիկս թամկ,
Կյանքը ուր էլ ինձ տանում է,
Զերմանում եմ քո շնչով տար:

Ես քեզանով կանաչում եմ,
Ինձ քեզանով ճանաչում են,
Այնպսս ապրեմ, իմ պատճառով
Երեք չասես՝ ամաչում եմ:⁵⁹

(«Թո անունով»)

1990-1991 թթ. լույս տեսան Ս. Խանյանի «Կարոտի կրակներ» եւ «Արցախյան դողանջներ» ընտրանիները: Բանասերիքապարակախոս Վ. Արամնեսյանն իր «Աստղալույսի կարոտով» գրախոսականում նշեց. «Ս.Խանյանի «Կարոտի կրակներ» ժո-

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դովածում շատ ներդաշնակ է հայ բանաստեղծության հոլովութին: Արցախսահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել ազգային դիմագիծը»:⁶⁰ Դովածագիրը որպես հաջորդ օրինակ բերում է բանաստեղծի հետեւյալ տողերը.

*Արեւը ելնում է Արաքսից,
Լվացվում Թարթառի ջրերում,
Սորոակ է հյուսում իր վարսից,
Չափ գցում իր ծին սարերում:
Սարեր են, զիգզագ են ճամփեքը,
Ճամփեքը՝ կախված երկնքից:*

Այս եւ նման բանաստեղծություններում շունչ են առել Ղարաբաղի հեթանոսական ժամանակները եւ ներկան:

Ս.Խանջյանի «Արցախսահան դողանջներ» գիրքը գնահատվել է անվանի գրականագետ Ա. Ղանիելյանի կողմից: Բնութագրելով բանաստեղծի ստեղծագործական խառնվածքը՝ գրականագետը նշել է. «Ս.Խանջյանը ռոմանտիկ, քնարական բանաստեղծությունների զարմից է՝ Գ. Սարյանի, Յ. Ծիրազի, Յ. Սահյանի, Վ. Ղավթյանի հավատավոր գործընկերը: Նույնիսկ թվում է, թե այս հողի վրա քնարական չկինել հնարավոր չէ»: «Գանձ» բանաստեղծության մեջ, մասնավորապես, Ս.Խանջյանը մատնանշում է վիհապապաշտ գեղարվեստական իր ընկալումները՝ կարոտ, կանաչ-կարմիր առօրյա, երազայնություն, սիրտը շոշափելու սովորություն եւ այսպես շարունակ՝ դեպի բանաստեղծի սիրտը տանող զարկերակը»:⁶¹

«Արցախսահան դողանջներ» գրքում մի ամբողջական շարք է նվիրված մայր Ղայաստանին: Ղիմելով հայոց երկրին՝ քնարական հերոսը բացում է իր սիրտը, հաստատում որդիհական իր սերը.

Զրերիդ նման անվերջ հոսեցի
Քո սրտի միջով,
Երազներիդ հետ մեղմիկ խոսեցի՝
Օծված քո խղճով:
Դասկի փոխվեցի, խոնարիվեցի լուր,
Թխադեմ հողիդ,
Ասքի փոխվեցի, անցա շրթից շուրթ,
Շոգուս մեջ հոգիդ:
Ես քո երգերի թրթիոը դարձա
Ու բառը քո սուրբ,
Դժվար երթերիդ հրթիոը դարձա
Ու ծաղիկը նուրբ:
Ինքս իմձ հասա քո երակներով,
Իմ մեջ տեսսա քեզ,
Քո հունդից ծլած, աճած քո սիրով,
Քո պատկերն եմ ես: ⁶

(«Զրերիդ նման»)

Ս.Խանյանի պոեզիայում կարեւոր տեղ է գրավում Հայաստանի կերպարը: «Արցախյան դողանջներ» գրքում այն արդեն ընդգծվեց որպես մոտիվ: Անդրադառնալով Հայաստանի պատմական ճակատագրին, բանաստեղծը պատկերում է ներկան, նշելով իր հոգեկան անխախտ կապը մայր ժողովրդի անցյալին, ներկային եւ ապագային.

Առանց քեզ անջուր մի լանջ կդառնամ,
Կդառնամ լեռան ցամաքած աղբյուր,
Քո թրիչքով եմ այսպես հաղթական,
Իմ հայրական ծեռք, մայրական համրույր: ⁶³

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

(«Ես քո լինելով եղա աշխարհում»)

Բանաստեղծն ընդգծում է նաև Յայաստան-մոր նվիրում-ներն իր քնարական հերոսին, որը երախտիքով է հիշում.

Անցյալո, մերկադ, գալիքո լուսե
Առանց երդումի ինձ նվիրեցիր,
Լույսի եմ փոխվում ծանապարհիդ մեծ,
Եվ հպարտ եմ, որ այսպես սիրեցի: ⁶⁴

(«Թո զարթոնքի հետ...»)

Յայաստանի կերպարը բանաստեղծի երգաշարում ներկայացվում է կոնկրետ առարկայական պատկերներով: Մայր հայրենիքը բանաստեղծի համար հառնում է որպես ազնվության, նվիրվածության, հավատարմության առասպելված խորհրդանիշ, որպես հայ ժողովրդի հավիտենական ընթացքն ապահովող միակ օրրան:

ԱՐԿԱՐԴԻ ԹՈՎՍԱՍՅԱՆԻ առաջին՝ «Յայգալույս» գրքույկը լույս տեսավ 1977 թ.: Ինչպես բանաստեղծն է վերիիշում, Երեւանում ուսանելու տարիներին հաճախակի էին հանդիպում-ներ կազմակերպում Հ. Շիրազի, Պ. Սեւակի, Յ. Սահյանի, Վ. Ղավթյանի, Ս. Կապուտիկյանի եւ մյուս բանաստեղծների հետ: Դա մեծապես նպաստել է երիտասարդ բանաստեղծի աշխարհայացքի ձեւավորման, ստեղծագործական խառնվածքի վրա: Ա. Թովմասյանի դեռևս առաջին գրքում մարդն ու հողը հանդես են բերվում միաձույլ: Եվ դա պատահական չէ: Պատանեկան հուզաշխարհը ձեւավորվելով գյուղական անփոխարինելի բնության գրկում, ականատես լինելով եւ մասնակցելով ամենօրյա աշխատանքներին, երիտասարդ բանաստեղծն ինքն է դարձել

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նարդու եւ հողի կենդանի խորհրդանիշն ու վկան: Եվ նրա քնարական հերոսը խոսում է հեռու լեռներից, դաշտերից իջնող հողի մարդկանց անունից, որոնց աչքերում միայն կարելի է կարդալ սերը հողի ու ջրի («Դողի մարդիկ, էջ 7»):

Սարդը, հողը, արեւը, երազը, կարոտը որպես մետաֆորներ առանձնակի քնույթ են հաղորդում բանաստեղի երգերին: Նրա քնարական հերոսը ինչի եւ ում դիմում է, վկայակոչում է հայրենի «Բարձր լեռներ», «Վայրի խոտերի քաղցր շշուկը», որոնք կիհշվեն որպես «արտի զարկերի մերդաշնակ ծիանք»: Դրանք մասունքներ են, որ հանգիստ չեն տա հեռուներում կյանք որոնող մարդուն, նրա մեջ «Կծնվի մաքուր մի կարոտ», հետ թրող մի ուժ, անմարում մի սեր («Զրույց ընկերոց հետ», էջ 8): Սակայն քնարական հերոսը չի բավարարվում խորհուրդների անմիջական ընդգծումներով, նա իր ձգտումների փունջն է շոյում, որպես երկրին, ժողովրդին, նարդուն ծառայելու երազանք.

*Մի բուռ արեւ եմ լցմում ափիս մեջ
Ու մի բեկոր հող,
Եվ արեւն իսկույն
Ճառագայթներով փարվում է հողին:
Արեւն ու հողը գրկում են իրար
Իրենց դաշինքով
Պահում աշխարհը...
Արեւը՝ հողոտ
Եվ հողմ՝ արեւոտ:* ⁶⁵

(«Մի բուռ արեւ»)

Բանաստեղծական այս գյուտը՝ հողի եւ արեւի դաշնությամբ, իրեն զգացնել է տալիս գրքի սկզբից մինչեւ վերջին էջը: Եվ երգիշը դրանում որոնում է իր երգի ուժը եւ ինքն իրեն խորհուրդ է տալիս սլանալ իր «սեփական երգի թեւերով»:

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ա. Թովմասյանի բանաստեղծական մտորումները կոնկրետ են, շոշափելի: Եթե նա առու է երգում, ապա լեռներից անտառի միջով հոսող առուն է, ուրեմն «երգ ունի առուն»: Տագմապի մեջ նա շոշափում է առվի տեղ հասնելու կասկածանքը եւ ընդգծում իր հավատը.

*Ես հավատում եմ
Այդ առվի երգին,
Երբ լեռներում է
Նրա ակունքը:*⁶⁶
(«Առուն լեռներից»)

Ա. Թովմասյանը հողեղեն ու ոգեղեն երգի ծփանքները գտնում է սարերում իջնող ծյուների մեջ, երկնահաս լեռների կատարմերին, հողվորի սիրո մեջ եւ ոգեւորված բացականչում. «Հողվորի սիրով հողն է արթնանում, Արեւը լսուն է կանչը հողվորի» («Հողվորի սերը», էջ 5): Հողվորի կանչը ոչ միայն հասնում է արեւին, այլև արթնացնում է բանաստեղծին եւ «ատիպում է, որ մի երգ գրի»:

Իր երգի տեղը լավ գիտե բանաստեղծը, նրա հայացքը միշտ էլ հառած է բարձունքներին.

*Իսկ երգս մի օր
Թողել եմ այնտեղ,
Այն սարերի մեջ,
Ու այն ծորերի,
Թողել եմ այնտեղ,
Որ նորից գնամ...*⁶⁷
(«Սարդը»)

Դայրենասիրական երգերում քնարական հերոսը ինքն է՝

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քանաստեղը: Գյուղական պատանու կենսագրությունը կարեւոր կրվան է դառնում նրա պոեզիայում: Սակայն նրա պատանեկան հուշերը ստանում են կենսափորձի երանգ եւ դառնում ընթերցողին հուզող ու ապրեցնող խոհ ու խորհուրդ: Այստեղից էլ նրա ապրումի ընդհանրացնող ուժը:

Ա. Թովմասյանի հայրենապատումը հյուսված է լավատեսական զգացումներից: Լուսավոր են նրա երազանքները, պայծառ՝ մտորումները, երջանկարեր՝ ձգտումները: Նրա մտապատկերներում արեւը միշտ «Ծողերն է ցրում լեռների վրա» («Պատկեր», էջ 27), սրտի խորքում «միշտ արթուն է հողի կարոտը» («Դոդի կարոտը», էջ 30): «Երազների ճամփեքը կանաչ» («Թոջված սարերի...», էջ 31), նրա հուշերը արթնանում են նորից հեքիաթներ լսելու համար.

*Ստվերներից մեկ-մեկ արթնանում են հուշեր,
Ես ուզում եմ մի պահ ստվերներին լսել:
Խոտերի մեջ մի հավը թաքստոցից ելել
Ու իր քննուշ լեզվով ինձ ասում է «Բարեն».
Եվ ամեն ինչ այստեղ այնպես լավ է թվում,
Ու զարթոնք է ապրում բնությունը նորից:
Ստվերները ելել, արեւին են հասել
Ու կարոտ են թերում
Իմ մանկության ծորից...⁸⁸*

(«Անտառում»)

Ա. Թովմասյանն արձագանքել է ժամանակաշրջանի կարեւոր երեւույթներին: Դայտնի է, որ ետպատերազմյան շրջանի ոչ միայն հայ, այլև նախկին ԽՍՀՄ ժողովուրդների գրականության մեջ մեծ տեղ է գրավել պատերազմի եւ խաղաղության թեման: Աղօախ աշխարհի 130 հազարանց հայ ազգարնակչության մեկ երրորդ մասը մասնակցել է Մեծ հայրենականին: Նրանցից 22

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իհազարը չի վերադարձել, 20-ից ավելի դարաբաղցիներ իրենց ժողովրդի հերոսական կամքի խորհրդանիշներ դարձան՝ որպես մարշալներ, գեներալներ:

Արցախի բանաստեղծը չէր կարող իր խոսքը չասել այդ առթիվ, չընդգծել այն ցավը, որ դեռևս շարունակվում է իր նահատակ օավակների համար: Դամով պիտք է բացատրել տվյալ թեմայով հյուսված բանաստեղծությունների այն շարքը, որ առկա է ոչ միայն Թովմասյանի, այլև նրա գրչեղբայրների ստեղծագործական հումքում:

Դայրենասիրության թեման նոր երանգներով բացահայտվեց Ա. Թովմասյանի «Արցախցի եմ ես», «Զգույշ քայլեք, մարդիկ» ժողովածուներում եւ նոր շարքերում:

Դայրենիքի գեղարվեստական կերպարը Թովմասյանի երգերում իր մեջ ներառում է հայրենի տունը, պատմությունը, մարդկանց ճակատագրերը: Այս պատկերը երանգավորվում է նաև տագնապի զգացումով, որովհետեւ թշնամին բացել է կեղծիքի եւ ստի փեշերը եւ աշխարհով մեկ գոռում է, որ իրենն են Արցախի լեռները, անտառները, դաշտերը: Գնալով Ա. Թովմասյանի հայրենապատումը վերածվում է պայքարի երգի:

ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ հայրենապատումը հավատանքի փիլիստիքայության արտահայտություն է: Այդ երեւույթը նկատվել է դեռևս առաջին շրջանի արծակ գործերում: Այս փորձով էլ նա ստեղծեց եւ հրապարակեց բանաստեղծական ժողովածուները: Դրանց շարքում ընդգծվեց «Դասուն իմ հասկ» գիրքը՝ տպագրված «Նահիք» հրատարակչության կողմից, 1990 թ.:

Ժողովածուի համար, որպես նախերգանք, ներկայացված է «Նորից ամեն ինչ խառնվեց իրար» տողով սկսվող բանաստեղծությունը: Ծրագրային այս հյուսվածքի մեջ Ն. Ավագյանը դիմում է մուսային՝ բացահայտելով պոետական իր խառնվածքն ու

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իհավատամքը: Մուսա-բանաստեղծությունն անձնավորված է: Այստեղ առաջին հերթին ընդգծված է քաղաքացու պարտքը կյանքի, հայրենիքի հանդեպ: Քնարական հերոսն ասում է.

*Թեզ ես սիրում եմ
Թո չորոշված առաջին ճիշով,
Սիրում մորեմերկ՝
Իմ անքեն սրտում... ցավը դարձրած երգ: ⁶⁹*

Այս խոստովանությունից էլ հասկացվում է բանաստեղծությունը ու հավատի լույսը՝ որպես ժողովրդի կրած տառապանքի եւ անմարում հույսի խոստովանանք: Ն. Ավագյանը ժամանակի բոլոր շերտերը նկատում է քաղաքացիական պատասխանատվության, երկրի հանդեպ նայրական զգացումնվ: Նկատում է ժամանակի լույսի արյունոտվելը, որի հետքերով «Ճուն է մտնում դժվար իրավունքը դարի»: Չպետք է մոռանալ, որ բանաստեղծական այս ճիշը հնչել է խորհրդային տարիների գրաքննչական հսկողության տակ: Դա այն շրջանն էր, երբ պիտի սկիզբ առներ Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, երբ բանաստեղծուիկն աշխատում էր որպես լրագրող: Սակայն նա չէր կարող այլևս չքացականչել՝ «խոսքը թող ծիլ զցի արդարության հատիկ»: Բանաստեղծության մեջ ընդգծվում են Շարության ժամի, դժվարին բախտի, հասունացող ցավի երեւույթները: Շարքի առաջին ելեւէջներում քնարական հերոսն անցած օրերի ֆոնի վրա ներկայացնում է իր նկարագիրը՝ որպես «Եր միջուկից ելած մի մարդ... Որի աչքերի մեջ խոհի նրբին ու բարդ ժամյակներ կան ծաղկած»: Քնարական հերոսը ոչ թե դժգոհում է ցավից, այլ ծգտում է հնչեցնել քաղաքացու իր խոսքը, որպես ծեր վանքի ղողանջներ:

Ն. Ավագյանի հայրենապատումը խոհի ու խորհրդի գեղեցիկ ընդիանրացում է: Նրանում քնարական հերոսը ներկայա-

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նում է ոչ թե ծանծրացնող քարոզով, այլ տեսանելի, շոշափելի կենափորձով.

- Իմ լուսավոր ցավը
Ես չեմ տա ոչ ոքի,
Նրանով է գուցն...
Բյուրեղացել հոգիս: ⁷⁰

(«Իմ լուսավոր ցավը»)

Բանաստեղծուիին աստիճանաբար բացում է իր հերոսի ներաշխարհի դռները, եւ ընթերցողը ծանոթանում է նրան՝ որպես անմիջական ու ազնիվ ապրումներ կրող քաղաքացու.

Թե առողջ հոգին մնում է առողջ
Եւ ցավող վերքով,
Ես ինձ զինվոր եմ զգում... իմ խղճի՝
Դրոշի ներքո...⁷¹

(«Եվ թող այսօր ել»)

Դայ դարավոր պոեզիայի մեջ միշտ հնչել է դասական ու ազնվական անկեղծությունը, որը պոետներին մղել է սկզբունք-ների կովի՝ հանուն լուսի ու բարու։ Այս ավանդույթը շարունակողներից է Ն. Ավագյանը.

Դարկավոր լիմի՝ կզմամ, այո, եւ ծեռնամարտի
Եվ պարտվելուց էլ չեմ հուսահատվի,
Տեւական կրվում ՍՏՎԵՐ ՈՒ ԼՈՒՅՄԻ...
Դադրող է լիմում նաեւ այդ կարգի։⁷²

Բանաստեղծուիու այս շարքի վրա զգացվում է Պ. Սեւակի

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

«Եղիցի լույս»-ի ազդեցությունը: Դրա վկայություններից է «Զերբերը» բանաստեղծությունը, որի համար որպես բնաբան բերված է հենց Սեւակի «Մոր ձեռքերը» եղոի մի տոռը՝ «ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը»: Սակայն այդ ազդեցությունը կյանքի հանդեպ սեւակյան դիրքորոշման ընկալումն է, բանաստեղծուիկին պարզապես կյանքը գնահատում է Սեւակի գեղագիտական իդեալի դիրքերից՝ սովորելով նաեւ մեծ պոետի արվեստից: Ն. Ավագյանի քնարական հերոսը եւս պատրաստ է հոգին լցնել ցավով՝ միայն այդ ցավը «կրչելով լույս»: Նա «անարատ, ազնվարժատ եւ սնդիկի գնդիկի պես ամբողջական» ցավի կրողն է:

Ն. Ավագյանի երգերում զգացվում է ուժեղ կրքերով եւ զգացմունքներով օժտված անհատի հուզաշխարհը: Նա բացասում է անբողոք, մերկ ու անհույս, անինաստ ապրելակերպը: Ցավի իր կշռույթով քնարական հերոսը ջանում է գրել ուրախ երգ՝ «թեկուզ թախծի նուրբ երանգներից» ազատվել չի կարողանում: Միենալու է, նա իրեն համարում է «հեթանոս արեւ... քրիստոնյա երկնքում»: Ազնվության, լավի եւ բարու ջատագով բանաստեղծուիկն, լինում է՝ իհասթափվում է կյանքում եղած չարիքներից եւ ընդգծում դրանց պատճառը.

*Եվ թնդում է օդը հազարածայն,
Եվ զնգում է օդում մի սրբավող անուն
«Փարավոնը կեցցե՞, կեցցե՞ փարավոնը...»:
Իսկ քարերին տնքոց, լաց ու հառաչ,
Որ չի լսում, սակայն, փարավոնը,
Փարավոնը՝ քարծոր գահին բազմած...
Ծքահանդես ընդունելով է զրաղված...⁷³*

(«Մի կտավի առջեւ»)

«Դասում իմ հասկ» գրքի «Բախսի անձրեւ» շարքը հայրե-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նասիրական զգացումի թրթիռներ են: Բանաստեղծություններից մեկում ընդհանրացվում է.

Դյուրին երդվել չկա միայն
այրենիքին եւ ծնողին,
Որովհետեւ մենք չենք ընտրում
Արժեքներն այդ անանցողիկ: ⁷⁴
(«Արժեքներ կամ»)

Այստեղից էլ Ն.Ավագյանի իմաստուն ու կրակոտ հայրենասիրական երգերը, որ ստեղծեց նա Արցախյան ազգային-ազատագրական շարժման եւ պատերազմի տարիներին:

ԱՐՄԵՆ ՅՈՎԿԱՍՆԻՍՅԱՆԾ հայրենիքի եւ ժողովրդի սիրով ոգեշնչված, նրա ներկայով եւ ապագայով ապրող քնարերգու է, Արցախյան հողի նվիրյալ զավակ, նրա գեղեցիկ ավանդույթների սիրահարն ու պաշտպանը: Այստեղից էլ այն առինքնող թրթիռները, որ առկա են նրա բանաստեղծություններում: Ա.Յովհաննիսյանը հենց սկզբից հնչեցրեց հույսի եւ խղճի երգը: Դա պատահական չէ: Մոսկվայից եւ Բաքվից եղբայրություն էին քարոզում, բայց այդ քարոզի կեղծիքը մտրակի պես շառաչում էր Արցախի լեռնալանջերին, որի երգիչ-զավակը, այնուամենայնիվ, հուսադրում է հայրենակիցներին իր երգով, ապրելու հարատեւելու ակունքը համարելով տքնությունը: «Ինչ էլ լինի՝ հուսա, ինչ էլ լինի՝ երգիր», - կոչում էր բանաստեղծը:

Ա. Յովհաննիսյանի ոգին անհանգիստ է: Մի ինչ-որ տագնապ կա նրա հայրենասիրական երգերում: Բանաստեղծին հուզում են մի կողմից ժողովրդի, մյուս կողմից էլ գերված հայրենի-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քի ճակատագիրը: Նրան պետք է հասկանալ: Նա համոզված է, որ ժողովրդի երջանկությունը նրա լիակատար անկախության եւ ազատ գործունեության մեջ է: Բանաստեղծը քնարական հերոսի ապրումները գնահատում է ժողովրդի անկաշկանդ ընթացքի հետ համընթաց, այստեղից էլ ընդգծվում է երգչի քաղաքացիական նկարագիրը.

Անհանգիստ է քունս,
Տագնապահար այնպես,-
Ներխուժում է տունս
Չարի ոգին անտես...
Երազներս դառնում
Ղեղձուցիչ ու մթան,-
Այս ո՞ւմ մատն է խառնում
Մասումբները իմ տան... ⁷⁶

(«Տագնապ»)

Հայրենիքի թեման Ա. Յովիանիսյանի պոեզիայի հիմնական երակներից է, որտեղ դրսեւորված են նրա ապրումներն ու խորհրդաժությունները: Բանաստեղծի հայրենի եզերքը կոնկրետ անուն ունի: Դա Արցախն է իր հազարամյակների պատմությամբ, ճարտարապետական հայառ կոթողներով, բայց, ավա՞ն, գերված.

Վանիր ինձնից, վանիր քո պատրամքը,
Կամ թարթառի ծորից մուժը վանիր,
Դանիր ինձնից, հանիր տառապանքս,
Կամ խորանս մտած փուշը հանիր:
Ավերակող փուշը կողդ խրվել,
Խարիսլում է պատը, լուռ, անծառուն,-
Օ՛, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ավաղ, ծեղք է տալիս սրբատում: ⁷⁶

(«Գանձասար»)

Ա. Յովհաննիսյանը քչախոս է, գրում է հակիրճ: Եվ լավն այն է, որ ընթերցողը ջերմանում է նրա խոսքից: Արցախի մասունքները հուզում են բանաստեղծին: Դիմելով Ամարաս վանքին, որ կերտվել է 4-րդ դարի սկզբին՝ Գ. Լուսավորչի ցուցումով, քնարական հերոսը տագնապով է խոսում, ծգտուն է տեսնել նրա արեղային, սրբազնին ու վեհափառին, խնդրում, որ Վերինը լսի իր աղոթքը.

Ո՞ւր ես, արարիչ, լսիր իմ մեղամ,

Դանուն հոգուս, որ քոնն է լիովին,

Վար իշեցրու զոհասեղանու,-

Գլուխս ընծա բերեմ կամովին: »

(«Ամարաս»)

Բանաստեղծի ինքնանվիրումը տեղի է ունենում հանուն մայր ժողովրդի արմատի եւ ճյուղի, որի հավատավորն ու ուխտավորն է համարում իրեն: Ա. Յովհաննիսյանը լսում է հայրենիքի շնչառությունը, մտքով գրուցում նրա վանքերի, խաչքարերի, սարերի ու դաշտերի հետ: Արցախյան միջավայրի զգացողությունը միաձուլվում է նրա երգերին: Նման պահին քնարական հերոսը ներկայանում է որպես երկրի տերն ու տնօրենը, մշակն ու զինվորալը, հայրենիքն ինքը: Այս տեսակետից տիպական են «Նվիրումի երգ», «Տար ինձ», «Սիրտս փուլ եկավ» եւ այլ բանաստեղծություններ:

Մի շարք երգերում բանաստեղծը հիշում է անցած օրերը, ծննդավայրը, հարազատներին: Այդ են վկայում «Յովհիկի տրտմություն», «Ուշ աշնան երգ», «Մայր եղմիկը», «Վերիուշ» եւ այլ բանաստեղծություններ:

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Յոգեբանական դրսեւորումներ են Ա. Յովհաննիսյանի հայրենասիրական երգերը: Քնարական հերոսի Արցախ երկիրն ունի բարձրաբերձ սարեր, ներ արակեսներ ու քարափներ, զրվերի պաղ շունչ ու շոյող բույրեր («Իրիկնաժամ»), ունի այնպիսի գեղեցկություն, որ ասես վարպետ նկարչի վրձինով ստեղծած մի բնապատկեր է: Բանաստեղծի հուշերի շարանը այդ երկում է, դրանք աստղոտ են, շնչում են ուրցի բույրով, հնչում զանգակների դողանջով («Իմ հուշերը», Ղայրենի գյուղի մասին է գրում նա, թե ամբողջ լեռնաշխարհի, երգի տագնապը մեծ է, այնքան մեծ, որ վախենում է Ղարաբաղ անունը հնչեցնել բարձր, որպեսզի չնատնի տեղը: Նրա համար իր Ղարաբաղ երկիրն այն սուրբ խորանն է «Որտեղ չախտի մարեն մոմերը», այն խորանն է, որից սրտի հետ «Պիտի սարսուան նաեւ...սրբատան կամար ու որմեր»: Փոքրիկ իր բնօրրանն այնքան է հմայիչ, որ դարերի ընթացքում բազում ոսկիներ երազել են սեփականել այն, եւ այսօր էլ շարունակվում է այդ դաժան ծգտումը: Ահա, թե ինչու է տագնապած նրա բանաստեղծ որդին:

Անունդ չեմ տա,
Չեմ մատնի տեղոյ,-
Քեզ՝ իմ ընծայած հավատի համար
Եվ անդավ սիրո՝
Ինձ մոլեգնորեմ այնպես կխաշեն,
Որ կնախանձի... Քրիստոսն անգամ:
Սնա՛, օ՛, մնա՛,
Դու օտարոտի աչքերից հեռու,
Եվ ավարառու կոքերից հեռու,
Որ չառեւանգեն
Ու քեզ չպղծե՞ն...⁷⁸

(«Ղարաբաղ»)

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Արցախ աշխարհի խորհրդանշական պատկերներից է «Հայրենական» բանաստեղծությունը: Տեսնելով բերքերով ծանրաբեռ այգիները, երգչի սիրութ խոտուտ է տալիս, ջերմանում աշնան շողերով: Երգից երգ ծփում է հայրենիքի սերը: Քնարական հերոսը խոստովանում է.

Կրկին լցվում եմ երազով, շնչով,
Ապրելու տեմչով, կյանքի շառաչով,
Այսպես գորեղ եմ դառնում ու կարող,
Լոկ քեզմով, իմ սուրբ հայրենական հող:

(«Լոկ քեզմով»)

Դոգեբանական տարբեր երանգներով են հյուսված Ա. Ղովիաննիսանի «Թո արեւի հետ», «Քեզ հետ կրերի», «Աղոթքի նման», «Իմ տունը», «Հող» եւ այլ երգեր: Բանաստեղծի սերը հայրենիքի հանդեա անձնուրաց է: Աշխարհը մեծ է, անսահման, բայց բանաստեղծի համար հարազատ ու թաճկ է իր փոքրիկ լեռնաշխարհը, որը եւ ծննդավայր է, եւ երկիր, եւ պատիվ, եւ պատմություն: Այդ զգացողությամբ բանաստեղծը փարվում է իր օջախին, որին գիտի անգիր, ինչպես որդին կարող է պատկերացնել իր մոր հայացքը, տեսքը: Բանաստեղծը Արցախի մասին խոսում է որպես տեր, որդի, զինվոր: Կարեւոր չէ, որ փոքր է նրա բնօրորանը: Այն մեծ է իր պատմությամբ, իր մշակույթով, իր կոթողներով: Ահա, թե ինչու չի պատկերացնում կյանքն առանց մայր երկրի.

Ամենից առաջ մնում եմ քեզ հետ,
Ոչ ոք չի կարող խլել ինձնից ետ -
Այն սերը, որով ես եմ սիրո՞ւմ քեզ,
Դավատմ այն, որով ես տրվում եմ քեզ:

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Այն ուժը, որ քո հողմն է ինձ տալիս,
Այն ջիռը, որ իմ երկրից է գալիս,
Այն երգը, որ իմ հոգուց է բխում,
Եվ «ցավն այն, որով իմ սիրտն է մխում»:⁸⁰

(«Քեզ հետ»)

1960-ական թվականների սկզբին ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԸ հաճախակի էր երեւում նամուլի էջերում հայրենասիրական իր երգերով: Ֆիշտ է, նրա երգերի վրա այդ էտապում նկատվում էին Դ. Սահյանի ազդեցությունը, սակայն, ընդգծված երեւում էր նրա բանաստեղծական ոգին, որ այնքան անհրաժեշտ է ստեղծագործողի համար:

Վ.Օվյանի քնարական հերոսը դարաբաղցին է՝ իր անձնուրաց օջախասիրությամբ, տագնապներով, հավատով, հույսով: Բանաստեղծը ի ցույց է դնում հայրենասիրական զգացումները եւ նրա ծակատագրի հանդեպ ունեցած մտավախությունը միասնաբար: Դպարտության զգացումով, հարազատի սրտով նա հայրենի լեռների գրկում նկատում է այն լեզենդները, որոնք պատմում են «Ղարաբաղի կամքի մասին աննկուն» եւ դարձել են երգ ու ասք: Բանաստեղծի հպարտության իհմքը հայրենի լեռների անպարտելիության առասպելն է, վեմ ու ամրոց դաշնալու աստվածանվեր բնույթը.

Այս լեռները եղել են վեմ ու ամրոց,
Ամեն մի ժայռ թշնամու դեմ մի բանակ.
Ծառս են եղել նժույգները սանձակոժ,
Դառաչել է հողը նրանց ոտքի տակ: ⁸¹

(«Լեռների լեզենդ»)

ՏԱԳԻՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Վ.Օվյանն Արցախյան հողի անկրկնելի գեղեցկությունն ու վեհությունը ներկայացնում է կոնկրետ առարկաների թվարկումով, այն դարձնելով հայրենիքի համայնապատկեր, թեևավլորդ ավանդական կերպար: Այս տեսակետից հաջողված հյուսվածքը է «Նկարեցի լեռներ» տողով սկսվող երգը: Քնարական հերոսը նկարում է լեռներ՝ ծյունե գագաթներով, կարկաչող առյուղներով, սակայն հայրը նրա թերությունն է նկատում եւ նշում: «Թթի ծառը չկա, Սա ի՞նչ Ղարաբաղ է», մայրն է դիտում նկարը եւ պահանջում: «Մոռվ սարը չկա, Սա ի՞նչ Ղարաբաղ է», հորեղբայրը նկատում է: «Մեր Թարթառը չկա, Սա ի՞նչ Ղարաբաղ է», տատը չի ընդունում: «Գանձասարը չկա, Սա ի՞նչ Ղարաբաղ է»: Բանաստեղծը ստեղծագործական նման ինքնատիկ հնարանքով արտացոլում է հայրենի Արցախը՝ նրա մեջ տեսնելով իր շունչն ու ոգին:

Վ.Օվյանի հայրենապատումն ակունքվում է երկրի պատմական անցյալի հերոսական էջերից եւ հավերժախոս դասից: Դրանք մի կողմից մեր պատերի անհաշտ պայքարն է օտար բռնակալների դեմ, Մելիք Ավանի ոգին է, մյուս կողմից՝ Անարասի, Գանձասարի շրթերին երգ դարձած «Մաշտոցյան անմահ գիրն է»: Դերոսական ոգու եւ մայրենի գրերի միասնությունն արցախցու կամքն է, «Ոգին՝ անխորտակ, երազը՝ անմեռ («Նկարիչ, Արցախ նկարիր...»): Դժվարին է եղել Արցախի ճանապարհը: Դազարանյակների ընթացքում «Վայրի ցեղերը նեղել են», «Եկել ու պղծել են, վառել տունը, Ծռել ու կեղծել պատմությունը», Եղել է նույնիսկ նենգ Փանահները քննելով սուրը դրել են բկին, տիրացել օջախին, ներխուժել են սուլթաններ, բեկեր, խարել «Եվ թիկունքից զարկել», սակայն ժողովուրդը հերկել է իր հողը, փրկել երգը, «Կառուցելով ապրել, Ապրելով հաղթել» («Քանի՛ հազար տարի»): Վերացական չէ Վ. Օվյանի հայրենապատումը: Բանաստեղծը հայրենի մասունքների մեջ տեսնում է իրեն եւ ընդհակառակը: Նա հաստատում է այն ճշմարտությունը, որ ա-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Ի՞նանց ժողովրդի չկա հայրենիք, առանց հայրենիքի՝ ժողովուրդ։ Քնարական հերոսը դիմելով «Ղարաբաղ-մորը, ներքին քաղցր մի գգացումով իրեն համարում է նրա «կամն ու կալը», «հոտաղն ու մաճկալը», եւ ապա ընդգծում երկրի եւ զավակի միասնությունը.

Ես մամուապատ խաչքարը քո,
Զորությունս դու ես:

... Ես կենացի քո զավաթը-
Խորությունս դու ես:

... Ես ամպերիդ խոլ որոտը -
Ղարպաս-դուռս դու ես:

... Ես քո ծիծաղն ու քո լացը,
Թիկունք-կուռս դու ես:⁸²

(«Ղարաբաղ»)

Այսպես, միմյանցով պայմանավորված լինելության գաղափարը մոր ու զավակի միջեւ ներկայացվում է փոխկապակցված այլարերության միջոցով։ Առարկայական խորիրդանշանները եւ քնարական հերոսի ապրում-պատկերը մի հենք են կազմում, որն էլ ապահովում է բանաստեղծության հաջողությունը։ Անմիջական գրույցը որպես պոետական հնարանք շարունակվում է շարքի մեջ։ Ղարաբաղի սարերի, գետերի, դաշտերի, բերդերի, վանքերի եւ այլ սրբավայրերի անունները վերածվում են ստեղծագործությունների բեմատիկ-գաղափարական հիմքի ընդգծման միջոց։

Քո ժայռերի պես դու քարակերտ ես
Եվ քարերիդ պես ամուր ես ու կուռ,

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դարերում կանգնած անխորտակ բերդ ես,

Դու քաջի ձեռք ես, ոգի աննկում: ⁸³

(«Դու անուն չես սոսկ»)

Խորհրդային տարիներին Աղրբեջանի կառավարող շրջան-ների հայահալած քաղաքականությունը ուղղված էր Նախիճե-ւանի եւ Ղարաբաղի հայաթափմանը: Նախիճեւանում հաջողվել էր, իսկ Ղարաբաղում վտանգվում էր ամեն օր, ամեն ժամ: Արցա-խի ազգաբնակչության էթնիկ փոփոխության իրականացումն ըն-թանում էր արագ: Աղրբեջանական տարրն արհեստականորեն ավելացվում էր կյանքի բոլոր ոլորտներում: Վ.Օվյանն իր մի շարք գրչեղբայրների հետ ցավով էր ընդունում այդ նենգ քաղաքականությունը եւ բանաստեղծությունների մեջ բերում իր տագ-նապը: 1981 թ., երբ դեկավար բարձր ամբիոններից հնչում էին «լենինյան բարեկամության» կոչերը, իսկ իրականում վտանգ-վում էր հայ-Արցախի լինելությունը, Վ.Օվյանը չեր թաքցնում իր անհանգութությունը, իրողությունը պատկերում էր ճշմարտացիո-րեն.

Ղարաբաղ եմ ասում՝

Դոգիս բաց է լինում,

Ղարաբաղ եմ տեսնում՝

Միրսու լաց է լինում: ⁸⁴

Տեսնելով արցախցու ազատ ապրելու որդիական երազի եւ իրականության հակասությունը, քնարական հերոսի «սիրտը սեւ է դառնում», «քեւաթափ լինում», պատը «ճաք է տալիս», գլ-խին «քար է ընկնում»: Բանաստեղծության ընդհանրացման մեջ հնչում է յուրատեսակ բողոքը.

Ղարաբաղ եմ ասում՝

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Դրախտին եմ հասել,
Ղարաբաղ եմ տեսնում...
Այս, ես ծեր ինչն ասեմ: ⁸⁵

(«Ղարաբաղ եմ ասում»)

Բանաստեղծը չի կեղծում իրեն, չի հաշտվում անարդարության իետ, նա ընդգծում է, որ իր սիրտը պոկում են նարմնից, հոգին վանում հավատից, խլում աչքերի լույսը, սպանում հավատը: Դեռ ավելին.

Եվ կա՞ ավելի պատիժ մի դաժան,
Քան այս զրկանքը բիրտ ու ահավոր,
Երբ հողիդ վրա տերդ չես քո տան,
Քո տնկած ծառը ո՞ւմ է հարկավոր: ⁸⁶

(«Ինձ ստիպեցին»)

«Այս Ղարաբաղն է» շարքում գնալով ավելի է ընդգծվում տագնապը: Բանաստեղծն իր կյանքը չի պատկերացնում առանց Մռովի, Գանձասարի, Քիրսի: Հակառակ դեպքում քնարական հերոսին սարսափեցնում է Ղարաբաղ-մոր նախատինքը. «Քեզպես որդին թող չունենամ»:

Ղարաբաղի գեղարվեստական պատկերը շարքում տարբեր երանգներով է ներկայացվում: Բանաստեղծը կյանք է մտնում հայրենի Ծաղասարից եւ քայլում է դեպի Ծաղասար: Նրա քնարական հերոսը խոստովանում է. «Ծաղասարից եկել, Ծաղասար եմ գնում»: Այդ ճանապարհին նա չի հագենում հայրենի հողի գեղեցկություններից: Երկրամասի հանդեպ Աղրբեջանի ցուցաբերած արցախակործան քաղաքականության դեմ իր բողոքը բանաստեղծականացնելով, Վ. Օվյանն ավելի բորբոքում է նկա-

ՏԱԳՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իրագրում հայրենի բնության աստվածային գեղեցկությանը: Այդ հայաշունչ բնանկարը հաճույք պատճառելու հետ մեկտեղ քրբում է քնարական հերոսի սիրտը, եւ նա ճշում է.

Կաքավ է, լոր է,

Սար է ու ձոր է,

Կռվախնձոր է

Այս Դարաբաղը:

Խոսում եմ՝ վայ է,

Լոռում եմ՝ ցավ է,

Ո՞նց չասեմ հայ է

Այս Դարաբաղը:⁸⁷

(«Արտ է, արոտ է»)

Սահյանական խոհ ու խորիրդի աշխարհը հոգեհարազատ է Վ. Օվյանին: Դա երկակի պատճառ ունի: Նախ, Սահյանի ծննդավայր Զանգեզուրի եւ Արցախի աստվածառաք նմանությունն է, եւ ապա բանաստեղծական խարնվածքի ծփանքները: Վ. Օվյանը սովորել է Սահյանից, բայց չի կրկնել նրան: Ծագումնաբանական կապերի առկայությունը գրականության զարգացմանը նպաստող օրինաչափություններից է: Վ. Օվյանը լավ է հասկացել այդ: Որոշ ստեղծագործությունների համար որպես բնարան ընտրելով Դ. Սահյանի պոետական թեևավոր արտահայտությունները, Վ. Օվյանն ասել է իր խոսքը՝ ասես շարունակելով մեծ բանաստեղծին: Այսպես, իր «Սարեր» երգի բնարան բերելով Սահյանի «Սարեր, ծեզ ի՞նչ ասեմ» արտահայտությունը, Օվյանը բարի լույս է ասում Մօռվ սարին, Քիրսա սարին, Շաղասարին, խունկ վառում Գանձասարում, ընդգծում ներքին իր ապրումը.

Ասեմ՝ իմ սարե՛ր,

Սարերով մնաք,

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Մեկ-մեկու թիկունք՝
Դարերով մնաք:

Մի օր եկել ենք,
Մի օր կգնանք,
Իսկ դուք սարե՛ր եք,
Սարեր կմնաք: ⁸⁸

Սարերը օգտագործելով որպես փոխաբերություն, Վ.Օվյանն իր օրինանքն ու իղձն ուղղում է իր ժողովրդին՝ մեծ ու փոքրով, գալիք սերունդներով:

Պատկերավորության հոգեհարազատ միջոցներով Վ.Օվյանը բացում է հայրենապաշտ հոգու դրամերը, արտահայտում անմնացորդ իր սերը որբացած հայրենական օջախի եւ երկրի նկատմամբ: Ծնկի գալով իր ծննդավայր գյուղի առջեւ, նա հայտնում է աշխարհին. «Քարաշենում տունս, սերս, մանկությունս, Քարաշենս՝ պաշտված, Քարաշենս՝ աստված» («Քարաշեն»), հաստատում. «Գեղեցկություն չես տեսել դեռ, թե չես եղել Ղարաբաղում», («Զոն»), ապա ցնցվում է, երբ լինում է Խորավանքում, տեսնում կիսավեր վանքի կիսավեր պատը, անտեր բակը, ցավում, որ՝

Կիսավեր վանքի կիսավեր ծեղքից
Մի դեղին մողես գլուխն է համել,
Կիսավեր վանքի կիսավեր փեղկից
Մոշին իր կամաչ փեշն է ծածանել: ⁸⁹

(«Խորավանքում»)

Վ.Օվյանը չի հաշտվել Կոմկուսի ԼՂ մարզային կոմիտեի առաջին քարտուղար Կեվորկովի եւ կեվորկովշինայի հետ: 1970-

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

80-ական թթ. Աղրբեջանի ղեկավարների եւ նրանց դրածոյի՝ Կեւորկովի դեմ բացահայտ արտահայտվելը կվերջանար կամ աքսորով, կամ էլ բանտարկությամբ: Գրողներին մնում էր արտահայտվել այլաբանորեն, կամ էլ ստեղծել բողոքի ճակատային բանաստեղծություններ՝ տպագրությունը թողնելով հարմար պահի: Այդպես են ճնշել Վ. Օվյանի «Հուրային», «Բասարական», «Դայրենադավը» եւ այլ ստեղծագործություններ, որոնք գետեղվել են նրա «Լեռների լեզենդը» ընտրանիում՝ տպագրված 2003 թվականին, հետմահու:

Բ. Կեւորկովի եռանդուն գործունեությունը մի կողմից նպաստում էր Ստեփանակերտի զարգացմանը, գյուղատնտեսության բարգավաճմանը, մյուս կողմից նրա աղրբեջանամետ քաղաքականության պատճառով շատ արագ աճում էր ազերական տարրը հայոց Արցախում: Դեյքար Ալիեւի դրածոն մի կողմից ձգտում էր իր շուրջը հավաքել հայ գրողներին, մյուս կողմից խրախուսում էր աղրբեջանցի մտավորականների մուտքը հայ գրողների կազմակերպության մեջ: Մի կողմից նա նպաստեց Սուրացանի եւ Յ. Դակորյանի կիսանդրիների տեղադրմանը քաղաքում, մյուս կողմից չհաշտվեց հայ մշակույթի պատմական կորողների նորոգման, բանգարաններում հայոց ականավոր գործիքների ցուցադրման հետ: Նրա գործունեության խայտառակ էջերից էր 1974 թ. հունիսյան պլենումը, ուր ցինիկորեն բացահայտեց թուրքամետության իր մղումները՝ կոչ անելով անգամ մոռանալ երիտրութերի կազմակերպած հայոց եղեռնը 1915 թվականին: Վ. Օվյանի Վերոհիշյալ բանաստեղծություններում արտահայտված ընդվզումը Կեւորկովի հայակործան վարքի ու արարքի դեմ է: «Հուրային» բանաստեղծության մեջ բացորոշ ընդգծվում է, որ նա «ատում է այն, ինչ հայկական է», ինչ «Մեսրոպագիր է ու մեսրոպատօռ», որ նրա դեմ «մեր հայոց երգը ական է եւ ոումբ»: Խոսքն ուղղելով Բ. Կեւորկովին, Օվյանն ընդգծում է.

ՏԱԳԻՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Եղբայրություն ես ամբիոնից գոռում,
Երդվում որոշով բարեկամության,
Բայց մեր հին վերքն ես նորից փորփիռում,
Խարխլում ես դու սյուները մեր տան:

Բանաստեղծը ճշմարտացիորեն շեշտում է, որ Կեւորկով դրածոն նենգում է մեր պատմությունը, չարախսում իայ մտավորականների դեմ, մտագարի ահեղ մոլուցքով ոտնահարում մեր իրավունքը: Բանաստեղծության կիզակետում հեղինակը շեշտակի հարցում է կատարում.

Դու դատում ես մեզ, բայց ո՞ւմ անունից
Եվ ովքեր են քո դատը պաշտպանում,
Այդ ո՞ւմ վրա ես գոռում ամբիոնից,
Ո՞ւնից ես այդպես դու վրեժ առնում:

Վ. Օվյանի ստեղծագործության մեջ արդար լուսարձակի տակ է դրվում քաղաքական այդ մանեկենը, որ «Եղբայրության սուլը դրոշի տակ» դարձել է «Կեղծ Նեյնիմների ուշացած թութակ»:

Ժողովրդական կենսափորձից ելնելով բանաստեղծն ընդհանրացնում է.

Եվ դու կ կանցնես, ինչպես որ անցան
Թո նախորդները անբարիշտ ու չար,
Ով դու հին ու նոր կրկնվող հանցանք,
Դու հայրենադավ փառամոլ լաշառ: ⁸⁰
(«Ճուղային»)

Վ. Օվյանը գրել է մի շարք պարոդիաներ: Յետեւելով Յ. Թու-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նանյանի ավանդույթին, նա որպես բնաբան բերել է Յ. Յովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա» բանաստեղծության վերնագիրը, կոմկրետ ներկայացնելով Ղարաբաղում տեղի ունեցող ոչ հայանպաստ երեւույթները։ Բանաստեղծը նշում է Լաշինից ներխուժած քրոերին, որոնք դարաբաղյան հովիտներում «իրենց սեփական հոտերն են պահում», Թաղթառի ափին «հսաննդա Ալին ականջը դափին, Արցախի մասին շիքաստ է ասում»։ Քննադատում է աթոռակարիվը, շողոքորթությունը, հայրենասեր մարդկանց հալածելը, այդ համայնապատկերի վրա ընդհանրացնում։

Եվ դու տեսե՞լ ես դրածո շեֆին,
Այդ ակնոցավոր օձին սրբապիղծ,

Զգույշ, բարեկամ, չղիաչես քեֆին,
Թե չէ՝ կրշի նա քեզ քո տնից:
Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա...⁹¹
(«Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա»)

Խորհրդային յոթանասուն տարիների ընթացքում Ադրբեյջանի ղեկավարները, նորաթուխ պատմաբաններն ու գրողները գեղեցիկ պատմությունը, ճգնել են ապացուցել, որ իբր Ղարաբաղի հայությունը եկվոր է։ Աստիճանաբար սանձարձակորեն թափանցելով Արցախ, ազերի թուրքերն իրենց զգում էին տեր ու տնօրեն։ Այդ խայտառակ երեւույթը Վ. Օվյանը երգիծել է «Դիմա» էլ լրենք...» պարոդիայում, բնաբան ընտրելով Ռ. Պատկանյանի «Դիմի» էլ լրենք...» տողը։ Բանաստեղծը ցավով նշում է, որ «թուրքը եկել, մտել է տունը մեր... Ասում է՝ այստեղ այգի, բաղ չունեք, դուք այս աշխարհում Ղարաբաղ չունեք»։ «Մեր քաղաքում Ծեյ-

ՏԱԳՈՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Իսի թուները շիքաստ են երգում... Կաշառքի ուժով պաշտոն են ճանկում», մեր վաճերը դարձրել են փարախ, մեսրոպյան գրերը ջնջում են քարերից եւ գրում իրենց անունները: Բանաստեղծը չի հաշտվում այդ երեւույթի հետ, համարձակորեն բացականչում է. «Եվ ինչո՞ւ լրենք» («Դիմա՞ էլ լրենք...»): Բնաբան ընտրելով Վ. Տերյանի «Դու հպարտ չես, իմ հայրենիք» տողը, Օվյանը պետական հնարանքներով նշում է Ղարաբաղի ազգային-քաղաքական ծանր վիճակը Աղբերեջանի կազմի մեջ: Ղարաբաղը դժբախտաբար խեղճացել է,- ընդգծում է երգիչը,- զավակները դարձել են տարաբախտ, ինքը հեռացել է իրենից: Շարունակվում է ծանր գրույցը.

Զար կատա՞կ չէր եւ խաղ մի խենք,
Բարպարոսի հեգմանք անծիր -

Նշանեցին քեզ հայի հետ,
Բայց բուրքի հետ պսակեցին:⁸²
(«Դու հպարտ չես...»)

20-րդ դարի սկզբին հնչեց Վ. Տերյանի տագմապալից երգը՝ «Մի՞թե վերջին պոետն են ես....»: Վ. Օվյանը զուգահեռ է անցկացնում Տերյանի ապրած ժամանակաշրջանի Դայոց երկրի եւ 20-րդ դարի 2-րդ կեսի Ղարաբաղի՝ իրադարձությունների միջեւ ու շարունակում իր մեջ ուսուցչի ցավի պետականացումը: Բանաստեղծը ազդարարում է. «Եվ կզա մի օր, որ Ղարաբաղում մի հայ չես գտնի հայերեն խոսող»:

Ողբերգական ապրումը բորբոքվում է, եւ բանաստեղծը վշտով դիմում է իր սուրբ օջախին.

Քո ողբասացը կլինեմ վերջին,

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Օտար ոտքի տակ տրորված աժուղ,
Կլինեմ վերջին հառաչանքը քո,
Վերջին համրուգն ու վերջին ծաղրածուն:
Եվ ինձ կանվանեն ցնորված ու խնճք
Թոռն ու ծոռները նենգ Փեղամբարի
Ինձ կքարկոթի ամրոխը ամգետ-
Դասական ոճով քսաներորդ դարի
Եվ ես կլինեմ նոռացված հավետ՝
Վերջին պրետը իմ լեռնաշխարհի: ²³

(«Կկորչեն հավետ...»)

Դայոց հինավուրց Արցախ-Ղարաբաղի հայաթափնան քա-
ղաքականությունը տագնապի եւ ցավի ճիշ են հանդիսանուն Վ.
Օվյանի «Հոտը գալիս է» տողով սկսվող հյուսվածքը, որի բնա-
բան է հանդիսանուն Յ. Սահյանի «Հոտը գալիս է, քոչք ետե-
լից...» հայտնի արտահայտությունը, «Ղեյանան», «Հայրենա-
դավը», «Մենք» բանաստեղծությունները, ութնյակները՝ գրված
շիրազյան մոտիվներով եւ այլ գործեր: Կարող է հարց առաջա-
նալ՝ Վ. Օվյանը կարո՞ղ էր, արդյոք, եւ ինչո՞ւ այն ժամանակ չի
տպագրել հայրենասիրական այդ գործերը: Դիմենք հենց իրեն՝
պետին: Նա կարեել է նման հարցի առաջացունը եւ ութնյակնե-
րից մեկուն Բ. Կետրոկովին անվանելով Հուդայի ծոռ, գրել է.

Ծոռն Հուդայի տունս մտավ
Ու սկսեց վայրահաշել
Եվ մեր խաչված նախորդներին
Մի անգամ էլ նորից խաչել.-
Փեղամբարի թռոն է նրան
Կաշառել դիրք ու պաշտոնով,
Բայց ի՞նչ կարող էի անել,
Ախր տարին խիստ նահանջ էր: ²⁴

Վ. Օվյանի հայրենապատումի մեջ եւ ընդհանրապես հայոց հայրենասիրական պրեգիայում մնայուն արժեք է «Այս Ուրաբաղն է» ծավալուն բանաստեղծությունը՝ գրված 1979 թ.: Պետք է նշել, որ Օվյանի այս գործն առնչություն ունի Գ. Էմինի «Ձգո՞ւյշ խոսիր Դայաստանում» բանաստեղծության հետ՝ գրված 1962 թ.: Գ. Էմինի այս հյուսվածքը 1960-ական թթ. հայոց հայրենապատումի թարմ ու պայծառ էջերից էր՝ ընդունված բոլորի կողմից: Չեր կարող այդ գործը Վրիպել Վ. Օվյանի ուշադրությունից: Եվ դա բնական է: Գ. Էմինի երգում կան այսպիսի կրակոտ տողեր.

Ձգո՞ւյշ խոսիր Դայաստանում,-
Այսուեղ ամեն գազաք ու ձոր,
Արծագա՞նք է տալիս հզոր
Եվ քո խոսքը հեռո՞ւ տանում...

Թե բարի են խոսքերը քո,
Դայոց լեռներն ակնածանքով
Կյունարիվե՞ն քո դեմ լրին՝
Բաշը քսած քո ծեռքերին:
Իսկ թե չար եմ՝ լեռները մեր,
Դրաքիսի բներն անմեռ,
Որ լոե՛լ են, բայց չե՞ն հանգել,
Քե՛զ լավայո՞վ կարծագամքեն,
Որ լեռներ է քշում-տանում...
Ձգույշ խոսիր Դայաստանում: ⁸⁶

Այսպես շարունակ, ազգային հպարտության գգացումով շադաբակած այս գործը լրիվ ներկայացնում է Դայաստանի եւ հայ ժո-

Դովիրոյի պատմությունն ու դիմանկարը:

Վ.Օվյանը սովորելով իր հոչակավոր ավագ գրչեղբոր պոետական հմարանքից, ոչ թե կրկնել է նրան, այլ ոճավորել է նրա խոսքի արվեստը, կոնկրետ բնապատկերների, պատկեր-ապրումի, չափածո խոսքի պատմականության հմուտ օգտագործնան շնորհիվ հասել նպատակին՝ ստեղծելով ընթերցողի սիրտն ու հոգին ջերմացնող, բանաստեղծական ճշնարիտ մի հյուսվածք՝ Արցախի գեղարվեստական կերպարը: Տասնյոթ ծավալուն տներից բաղկացած գործում բանաստեղծն անդրադարձել է Ղարաբաղի անցած դժվարին, բայց հերոսական ճանապարհին, բնութագրել նրա բնավորության բարեմասնությունները, որոնք ազգային դիմագծի կմիջն են կրում իրենց վրա: Պատումը սկսելով Ղարաբաղի «Հեթանոս ու հին» արմատներից, հեղինակն ընդգծում է Արցախի անմեռ ոգին եւ անթեղված ոգորումի հոգեպահուստը.

Այս Ղարաբաղն է:

Եվ զգույշ մի քիչ, հրարուխն հանգած

Կարող է հանկարծ

Քո ոսքերի տակ բորբոքվել նորից,

Ղարերով լրած իր խարճարանից

Նետել հուր ու բոց,

Յողմահար անել ե՛ւ բերդ, ե՛ւ ամրոց:

Եվ մի քիչ կամաց, հողն ականջ ունի,

Չայներ է բերում,

Չայներ է տանում,

Մեր պապերն իրենց գերեզմաններից

Կարող են գոռալ.

- Այդ ի՞նչ ես անում: ⁸⁶

Ղարաբաղը դիմակայելով դարերի արհավիրքներին, շարու-

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նակում է իր ուղին հպարտ, եւ իր սրտում ու շրթերին հնչում Է՝ մաշտոցված Ամարասը՝ մեր առաջին ուսուցչի առաջին դպրոցով։ Սակայն պարզվում է, որ պատմությունը դաժան էր գտնվելու նոր օրերում։

*Սակայն որտեղի՞ց Մաշտոցն իմանար,
Որ այդ գրերով՝ մի հուղայածին
Պիտի զրաբարտեր... Սեսրոպ Մաշտոցին,
Ո՞վ է Մաշտոցը՝ ոչ կոմունիստ է,
Ոչ քաղաքական գործիչ մեծանուն,
Նրա նկարը ո՞նց է տեղ գտել
Սոցիալիստական մեր թանգարանում։⁹⁷*

Վ. Օվյանը քննադատում է արտաքին եւ ներքին այն գործուները, որոնց պատճառով վլանգվում էր Ղարաբաղի հայաշունչ ընթացքը։ «Անտառն ի՞նչ անի, երբ իր խորքերում Դավթերի կողքին կոնչում է բուն, Որ ծառերից են ծնվում որդերը, Ծառերին ուսում»,- ընդգծում է բանաստեղծը։

Ղարաբաղի աշխատասեր տիրոջ քլունգը կարող է հեթանոս հայի գինու կարասը հայտնաբերել, սակայն նորաթուխ ազերի «պատմիչները» կարող են բուրքածին համարել Ս. Կաղանկատվացուն եւ բոլոր այն հայ գործիչներին, ովքեր ծնվել են Դայոց Արեւելից կողմանքում եւ արարել մեր ժողովրդի մշակույթը։ Ցասումի կրակով են ջրդեղված բանաստեղծի զարմանքով շառաչող այս տողերը։

*Եվ ո՞ւմ ես ուզում դու ապացուցել,
Որ նախ եւ առաջ հողն այս Արցախն էր,
Ինչ-որ պատմագետ արխիվներ պեղել
Եվ գիտե՞ք ինչ է նա հայտնաբերել,
Որ Ղարաբաղում հայեր չեն եղել,*

ՏԱԳՈՆԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Նրանք օտար են այստեղ ու տնկեց,
Սուրբ Մուհամեդը այս թշվառներին
Կորստից փոկեց
Իր սուրբ Ղորանով ...
Եվ պատմագետն այդ՝
Թուղք պատմիչների կեղսոտ մերանով
Լուտանքներ մերեց կճուծում իր գոս,
Դոչակվեց դոկտոր-ակադեմիկոս...⁹⁸

Բանաստեղծը նկատի ունի ոչ անհայտ գրպարտիչ Զիյա Բունիաթովին, որը այցելելով Անկարա, թիւել է իր նախնիների նորօրյա գրպարտիչների «գաղափարախոսությունը», ազերիթուրք «պատմաբանների» համար նվեր բերել օսմանյան թուրք պատմիչների կեղսոտ մերանը:

Զայրենիքի հանդեպ ունեցած որդիական անմարում սիրով Վ. Օվյանը քայլ առ քայլ հյուսում է Ղարաբաղի պատկերը՝ ընդգծելով նրա զորավոր ուժը, անբիծ ոգին, կամքի ուժը, Թիրս ու Մռովի անսասանությունը, պապի եւ տասի պաշտամունքը, արմատներին կառչելը, հանուն հարատեւելու՝ գրկանքներ կրելը, բոլոր դժվարություններին դիմակայելու վճռականությունը: Այս համոզմունքից ու հավատից էլ ծնված են գոյատեւման անթեղված կայծերի բռնկումն ունեցող տողերը.

Այս հոդի վրա դու զգույշ քայլիր,
Սաքրիր ոտքերոր, դիմակոր հանիր,
Եվ հիշիր մեկ-մեկ
Պսակագերծված առաքյալներին,
Լեռները լուր են,
Բայց ոչ խուզ ու կույր՝
Տեսնում են, զգում,
Քարը խոսում է,

ՑԱԳՈՒԱՊԻՇ ԵՎ ՀՈՒՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Քարը ասում է.

Դիմ հրաբխի խառնարանում դեռ

Դուրը չի պաղել...

ԱՅՍ ՂԱՐԱԲԱՆ Է:

Վ. Օվյանը կյանքից հեռացավ ոչ ժամանակին՝ 1987 թ., Արցախյան ազգային-ազատագրական պայքարի բռնկման նախաշեմին: Սակայն նա ժողովրդի հետ էր իր ոգով, ցասումի եւ ընթռուտության, հույսի եւ հավատի իր հայրենապատումով:

ՍԻՐՈ ՑԱՎՆ ՈՒ ՀՄԱՅՔԸ

Կյանքն ապացուցել է, որ սերը մարդու ներաշխարհի անհատական նախասկիզբն է: Դարերը հաջորդել են միմյանց, կյանքը փոփոխվել է հարածուն, սակայն սիրո գացումը մնացել է անփոփոխ՝ հախուռն կերպով շաղախվելով երգին, շոյելով ու ցերմացնելով սրտերը: Պոեզիան ընդհանրապես մարդերգություն է, բայց կա՝ որևէ մոտիվ, որ երգի ծփանքով այնքան գեղեցկացնի կյանքը եւ ճառագի լույսի պես մարդկանց սրտերում ու հոգիներում, ինչպես սիրո երգը: 1950-ական թվականներից սկսած, սիրերգությունը եւս պարզեց իր թեւերը հայ պոեզիայում՝ հարթելով անձնական քնարերգության արգելափակված ծանապարհը: Ս. Կապուտիկյանը 1954-1955թթ. լույս տեսած բանաստեղծական գրքերի մասին կարդացած գեկուցման մեջ բնութագործելով խորհրդահայ գրականության այդ տարիների վիճակը, նշել է. «Խորհրդահայ պոեզիայի բնորոշ երեւույթներից մեկն այն է, որ այնտեղ իր արժանի տեղն է գրավել անձնական եւ մանավանդ սիրային լիրիկան»:¹ Այդ նշանակում էր, որ մարդուն հուզական-հոգեբանական ջերմ շունչ հաղորդող, մարդկային սրտերն իրար միացնող բնական ապրումի բանաստեղծության կարիքը շատ էր գգացվում: Լիտվացի տաղանդավոր բանաստեղծ է. Մեծելայտիսը խոստովանել է. «Երկար ժամանակ ես գլուխ էի կոտրում իմ սիսալմերի վրա: Իմ կարծիքով, ինձ պակասում է ջերմությունը, մտերմական շունչը... Չենք կարողանում խոսել հուզական, պատկերավոր լեզվով, հանգավորում ենք վաղուց բոլորին հայտնի հրապարակախոսական ճշմարտություններ եւ սպասում ենք... բանաստեղծական դափնիների: Իսկ ընթերցողը դա բանաստեղծություն չի համարում: Ժամանակի ընթացքում

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Կյանքը մերկացնում է այդպիսի բանաստեղծին... Ապրում Է միայն բանաստեղծությունը, իսկական բանաստեղծությունը»:² Պ. Սեւակը պահանջել է «հոգու դիալեկտիկայի» բացահայտում, այսինքն՝ ներքնահայտությունների անհրաժեշտություն: Հոգու դիալեկտիկայի բացահայտման ամենանուրբ զգացումի՝ սիրո երգը մի նոր ջերմություն հաղորդեց Պ. Սեւակի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի, Մ. Մարգարյանի, Յր. Յովհաննիսյանի եւ ուրիշների բանաստեղծական շարքերին:

* * *

Սիրո թեման արծարծումի լուրջ երանգներ ունեցավ նաև Արցախի պոեզիայում: ՎԱՐԴԱՍ ՋԱԿՈԲՅԱՆԻ երկրորդ գիրքը լուս տեսավ «Սեր եւ ժափտ» վերնագրով, որտեղ նկարագրված աշխարհը օծված է արեւով եւ սիրով: Բանաստեղծն ամեն ինչի մեջ սեր է տեսնում: Նրա քնարական հերոսին բարությամբ են ողջունում ծառերը, սարերը, մարդիկ, եւ նա աշխարհում գտնում է իր աշխարհը, եւ թվում է «երկիրը սիրո շուրջն է պտտվում...» («Տրամադրություն»), այդ պատճառով էլ նա չի ցանկանում անպատասխան ժափտ տեսնել («Ծնվում է...»), ժխտում է թեթեւությունը, անհոգությունը («Ամպեր»): Գրքի «Եվ հանդիպում եմ քեզ իմ աչքերում» շարքը սիրային երգերի մի փունջ է: Բանաստեղծը սերը մերը մերկայացնում է աղջկա պատկերով («Ծիծաղում են աղջկները»), մերթ վարդի տեսքով, մերթ՝ ծաղիկների, եւ ամեն դեպքում էլ նրա համար այն ընդգծվում է որպես մարդկային երջանկության աղբյուր. «Սե՞րն է, արոյոք, առանցքն աշխարհի, թե՝ աշխարհն ինքն է առանցքը սիրո» («Խնդիր»):

Սիրո փիլիսոփայությունը տարբեր երանգներով Վ. Դակորյանի «Ծառի անունից» գրքում նոր ծփանք է տալիս: Նրա եր-

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՌԱՅՔ

գերի կառուցվածքն արտաքին նկարագրական հնարանքներից հեռու է: Բանաստեղծն իր խոսքն ասում է հոգերանական պատկերավոր բացահայտումներով, ժողովրդական վիլխատփայության խորհուրդներով, այս կրկնվող աշխարհի եւ անցողիկ անհատի փոխհարաբերությունների ճշմարիտ ընդհանրացումներով: Դրա առհավատչյան «Իմ թեւերի մեջ» շարքն է: Սերը Վ. Դակորյանի համար իր «մեջ վարարած արյունն է, առանց որի դժվար է պատկերացնել աշխարհը»: Ըստ բանաստեղծի, սերը պետք է հավասարվի հավատին, որովհետեւ հավատն ամենամաքուր, ամենաանբիծ երեւույթն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Դոգեկան ապրումների տարբեր պահերի մեջ արծարծվում է քնարական հերոսի վերաբերմունքը սիրո հանդեա, եւ նա միշտ մնում է իրեն հավատարիմ: Մոռացումը մարդկային է, բայց ի՞նչ է նշանակում մոռանալ սրտաբուխ սերը: Դրա պատասխանը ստանում ենք «Մոռացումս» պատկերի մեջ.

*Մոռացումս
Դիմա ճոճք է,
Բայց նրա մեջ աչք չեն փակում
Իմ հույսները,
Երազները...*

*Մոռացումս,
Դիմա ճոճք է, ճոճք է դառել
Իրեն համար
Եկ ինքն իրեն...օրորում է
Սե՞րս,
Սե՞րս...³*
(«Մոռացումս»)

Սիրո մեջ իյուսված են լյանքի բոլոր գույնները: Դրանք

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

«իսենթ օրերի կարոտանք են», «կամարված ծիածանի բույր» կամ «կարմիրում հրդեհվող կածան», եւ երջանիկ է միայն նա, ով փայփայում է իր իսկ սրտով ընտրած սերը: Այսպիսի առինքնող գաղափար է արտահայտված «Սերը» երգում: Բանաստեղծը գտնում է, որ սերը պետք է միշտ ծվարի սիրող թեւերի տակ, զգացումը լինի անձնուրաց: Փոխադարձ սիրո դեաքում են երեկոները քաղցրանում, ցերեկները իմաստավորվում («Չեկար եւ այսօր»): Չեռացումը տրտմություն է ծնում («Քո հեռացումը»), հանդիպումը կարոտների բազված դուռ է, այդ պահին են սերը տանում, հանձնում հավերժին («Կարոտների բաց դուռ է...»):

«Ի՞ն թեւերի մեջ» շարքի մի մասը խռովքի պահի արտահայտություններ են: Արդյունքում քնարական հերոսն աստվածային սիրուն սպասում է կարոտով.

Անպայման պիտի դու վերադառնաս՝
Ինչպես կորսված տեսողությունը,
Ցուրտ խոսք, ցուրտ ժայիտ պիտի մոռանաս,
Բույրի պես լցվես իմ տեղ ու տունը,
... Առանց քեզ ինձ հետ լեզու չեմ գտնում,
Արդար էլ լինեմ՝ մեղքով եմ բարձված,
Առանց քեզ՝ ես ինձ էլ չեմ հավատում...
Անպայման պիտի դու վերադառնաս»:⁴

(«Անպայման պիտի...»)

Սիրո թեման բազմերանգ պատկերներում ներկայացվում է լեզվաոճական հարստությամբ. ապրումների թրթիռներով, կտրուկ անցումներով, խորքային տողերով: Դրա նոր ապացույցը եղավ «Անմարելի, անմեռնելի» գրքի «Պարզա պես մի վարդ նվիրիր նրան» շարքը: Այստեղ Վ. Շակորյանի գեղարվեստական մտածողությունն աչքի է ընկնում թափանցումների ուժով: Նա կոնկրետ պահերի, տրամադրությունների ար-

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Դյունք հանդիսացող երգերի մեջ բացահայտում է կենսական, կարեւոր գաղափարներ: Որպես բնության հետախույզ, բանաստեղծն աշխարհի գեղեցկություններն իմաստավորում է մարդկային սիրո ամենանուրբ ապրումների գուգահեռներով: Գեղեցիկ աղջկան քնարական հերոսի նվիրած մի հատիկը հիմք մատների հետ ներկայացվում է որպես մի փունչ («Անվերնագիր»): Պատահական չէ աղջկա մատների եւ ծաղկի գուգահեռը: Սերը հաճույքի զգացումից բարձր է ու անեզրական: Աղջկա դեմքին դրոշմվող համբույրը գարնանային դաշտերի հմաստն է. «Գեղեցիկ, պայծառ աշխարհի համար համբույրը վերածնդի տոն է» («Տոնը»): Սերը եւ բնությունը ծիածանվում են հավասար ճառագայթներով: Սարդկային անմիջական ապրումների եւ բնության գեղեցկությունների խաչաձեւումից ստեղծվում է սիրո համայնապատկեր, որի շափաղումներն ասես ժայռում են հոգու ընդերքից: Դիմելով սիրած աղջկան, երգիչը չի թաքցնում իր զգացմունքները.

Թեզ շփոթում եմ ծաղկած ծառի հետ,

Որ զարդարում է օրերը՝ ճերմակ

ծաղկաբերքերով,

Թեզ շփոթում եմ

Երակմերիս մեջ մոլեզմող արյան

Կարարումի հետ,

*նաեւ՝ անկման հետ տրամադրության:*⁵

(«Ի՞մ աչքերի դեմ»)

Սիրո եւ բնության հորիզոնները կարուտներ են ծնում. այդ կարուտներից աճում եւ խշշում է կենաց ծառը: Բանաստեղծը որոնում ու գտնում է այդ պատկեր-խորհրդանիշը, որոնցով սիրո երգը լորանջում է որպես կյանքի ծայն: Սեծ սիրո ոգին այնպես է բրթում քնարական հերոսի կրծքի տակ, որ նա աշխարհի բո-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Լոր գեղեցկություններում տեսնում է իր սերը: Երգից-երգ ծավալ-վելով, բանաստեղծը հյուսում է սիրո քաղցրության եւ հավերժության ինքնատիպ մի առասպել, առանց որի չկա երգ ու մեղեդի, երկիր ու տուն.

Սերը իմ տան ճանապարհն է,
Վերելք է նոր ճամփաների,
Սերս սերն է մեր սարերի.
Սերը իմ տան ճանապարհն է:
Գանձասարի սուրբ տաճար է,
Արեւգալ է սերս բարի,
Սերս իմ տան ճանապարհն է,
Վերելք է նոր ճամփաների:⁶

(«Սերը իմ տան ճանապարհն է»)

Սիրո երգը գնալով կենսական ու խոհական նոր լիցքեր առավ Վ. Դակոբյանի «Մի կռունկ անցավ», «Կաղվա աչքերով», «Արցախա ծուխ», «Սոսե», «Մենարան» եւ այլ ժողովածուներում: Բանաստեղծի «Կաղվա աչքերով» գրքի շարքերից մեկը կոչվում է «Ծաղիկ բիբլիական»: Շարքի «Մեղեդին իջավ...» երգում կան այսպիսի տողեր.

Որ ծաղկի ծեռք եմ մեկնում՝ կրակ է,
ո՞վ է աշխարհը մատնել հրդեհի,
կամաչը ասես փափուկ կատակ է,
Տագնապ կա մի ցուրտ, բա՞ն չպատահի:⁷

(«Մեղեդին իջավ»)

Աստվածային սիրո անունից գրված այս տողերը լրիվ խորհրդանշում են շարքը, որ խոսում է բանաստեղծի աշխարհաճանաչողության եւ կենսահայեցողության նրբերանգմերի մասին:

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Սիրո թեման միագիծ չի ցուցադրվում շարքում: Այն կյանքի քաղցր ու դառը գույներից է փնջված, հյուսված է սիրո ձգտում-ներից ու խորին տագմապերից, որոնք ճշմարտացիության ուժով հուզում են ընթերցողին, նրա առջեւ բացում կյանքի շատ առեղծվածներ: Սերը, ըստ բանաստեղծի, բիբլիական ծաղկի է նման, որին հասնելն այդպես էլ մնում է երազ ու տենչ:

Կա մի ծաղիկ մի տեղ,
Բայց չգիտն, թե որտեղ,
սպասում է:
... Եվ կրակի մեջ բիբլիական ինձ սպասում է
մի ծաղիկ:

Ի՞նչ ճամփով գնամ,
որ հասնեմ նրան: ⁸

(«Ծաղիկ բիբլիական»)

Բիբլիական ծաղիկը, որ սիրո խորհրդանիշ է, հասարակ ծաղիկ չէ: Այն «նախնադարյան ցավ է», այդ «ծաղկի բաժակում վայրի հավքերի կտուցից երգ է կարել... ու շողշողում է չհայտնաբերված աղամանի պես»: «Քաղցր մանանա» է այդ ծաղիկը, որը ծեռք բերելը մեկ անգամ է տրվում, եւ պետք է լինել զգույշ ու անձնուրաց:

Վ. Շակորյանի սիրո երգերը կարուտի ու տագմապի, ձգտումի եւ հաճույքի արտահայտություններ են: Սիրո վայելքների մասին քիչ է խոսում բանաստեղծը: Այստեղ նա միջնադարյան տաղերգուների հետքերով է քայլում: Բանաստեղծի համար սիրո զգացումի ամեն մի պահ սրտի դող է, կենսական այնպիսի թանկ ապրում, որ իրականացված սիրո ճանապարհին «հարսնառութիւն տակ ջարդվող ափսեն էլ թող լինի ճերմակ լիալուսինը» («Դող»):

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Երջանիկ սիրո համար երգիչը դժվարին ուղիներ է տեսնում։ Գոյություն ունի⁸ այն։ Ինարկե։ Բայց բանաստեղծն ավելին է ուզում։ Նա երազում է աշխարհը տեսնել սիրով ողողված, ուզում է բոլոր սրտերի թեւերին կարդալ սիրո լուսաշող երգը։ Այդ մղունով էլ նա սիրո ճանապարհին ավելի շատ տագնաա է տեսնում, քան քաղցրահամ համբույր։

Գիշերվա պես սեւ վարսավինջերում
մի բուռ ճերմակ կա՝
հետքը համբույրի,
որ պիտի լիներ, սակայն դեռ չկա...⁹

(«Մի բուռ ճերմակ»)

Վ. Ճակոբյանի սիրային երգերի շարքը հոգու թրթիռների փունջ է։ Այդ թրթիռները սրտից են բխում եւ սրտեր են շյում, որովհետեւ դրանք անմիջական են, եւ դա ընթերցողին է ներկայացվում պատկերային բազմերանգ ու շոշափելի հյուսվածքներով։ Նման բնույթի երգեր են «Ինձ այցելում է փոքրիկ մի աղջիկ», «Առավոտը քեզ կրկնեցի իմ մեջ», «Յանկություն», «Նատյուրմորտ՝ կարոտներով» եւ այլ բանաստեղծություններ։ Աստիճանաբար բացվում է գաղտնիքը, թե ինչու սիրո մասին այդքան տագնապով ու սրտանց է խոսում բանաստեղծը, որովհետեւ «Ծաղիկը, լուսը, երեխան, Ամեն ինչ աշխարհում ծնվում է սիրուց» («Սիրեցեք զմիմեամս»)։

* * *

Սիրային բանաստեղծությունների բաժինը «Ճասուն իմ հասկ» ընտրանիում ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԸ խորագրել է «Վերջին լար»։ Մտորումների տեղիք տվող այս գնահատականը կարելի է

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀՄԱՅՔԻ

Իհասկանալ բազմիմաստորեն: Բանաստեղծուիին սիրո թեմայիմ իր ստեղծագործական խառնարանում վերջին տե՞ղն է հատկացնում, թե՞ պարզապես մարդուն Աստված դարձնող սերը ամեն ինչից վեր է համարում: Ենթաքնագրային շերտեր ունեցող այս շարքում զետեղված բանաստեղծություններն ամեն դեպքում քննույշ, տառապած եւ ակնկալող սրտի դրներ են բացում, սիրտ, որ բարախում է ոչ թե երջանկության ավագանում լողացող անհատի կրծքի տակ, այլ կյանքի հարվածներն օգացած, բայց կրկին ու կրկին սիրո կարուտով վառվող մարդու: Շարժի առաջին «Մոտեցիր ինձ, գրկիր...» տողով սկսվող բանաստեղծությունը հենց այդ մասին է խոսում: Քնարական հերոսուիին, որպես կորուսայլ սիրո տեր, նորից երազում է սիրեցյալի գիրլը, որովհետեւ նրա նոտ իրեն չի «զգում օտար», որովհետեւ, «կորուսայլ ժամին» նա հարկավոր է իրեն: Խոստովանանքի անսքող շերտով նա խորհում է.

Ծաղկումքն էր դառը, պտուղն անուշ լինի,
Դազար անգամ հինը
նորամում է կրկին,
Մոտեցիր ինձ նորից, մոտեցիր ինձ, գրկիր,
Խաղարուղը է բախտը,
սերն՝ արքունքի գինի:

(«Մոտեցիր ինձ, գրկիր...»)

Տառապանքից ծնված այս ճշմարտությունը, որ «Սերն արքունքի գինի» է, Ն. Ավագյանի սիրային երգերի թթխմորն է կազմում: Այդ երգերը բանաստեղծություններու կենսափորձի արձագանքներն են, կոնկրետ սիրո փիլիսոփայություն: Սերը՝ «հոգու հաց», սերը՝ «արթնության ծիծաղ», սերը՝ «վայելքի խենթ լաց», սերը՝ «մարդուն եւ մարդ, եւ կենդանի Աստված» պահող առեղծված ահա Ն. Ավագյանի սիրո փիլիսոփայությունը: Նրա սիրային բանաստեղծությունները հյուսված են աշխարհ տեսած մարդու ե-

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

րազանքից ու խոհից, որոնցում միաձույլ են զգացմունքային անմիջականությունը եւ հասունության խորհուրդը: Քնարական հերոսուիկին իր ընտրյալին դիմում է այսպես. «Ոու կռունկի անուն տուր ինձ՝ նախշը դաշնամ քո երկնքի» («Գարնան օր ե», էջ 77): Սիրո ճանապարհը քարքարոտ է, եւ ինչ էլ լինի՝ նա երդվում է. «Ելի քոնն եմ առաջվա պես... Ու սերն էլ այս, չափից ծանր սրի նման... Ես չեմ կարող հանել տեղից» («Ոու քեզ համար խաղաղ մնա», էջ 77):

Միջնադարյան հայ քնարերգության մեջ փոխադարձ սիրո գաղափարն ընդունվել է որպես աստվածային լույս եւ երգվել դարեղար: Սիրո հավերժությունն էլ հենց այդ հասկացության իրական ծփանքների մեջ են տեսել բոլոր սիրերգակները: Ն. Ավագյանը գաղափարի նորօրյա հոլովողներից է, որի շուրջներին հնչում է սպասումի կանչը.

*Օգնի՛ր,
Դոգուս ցորենները
Սեւանում են բովի վրա,
Օգնի՛ր,
Մի՞թե ծիլ կրառնա սերմը բոված...
Սրափեի՛ր՝ ուշ չէ քանի,
ճյուղիս հասուն պտուղները...
քանի ցած չի թափել քամին: "*

(«Սրափեի՛ր...»)

Բանաստեղծուիու սիրային քնարերգության մեջ սերն իմաստավորվում է կյանքի հոգսերի մեջ: Օրերի հոսքում, ժամերի վագքում քնարական հերոսուիուն «կեղծ ոսկի է թվում մոռացության փոշին»: Անձկության, կարոսի, հույսի զգացումները տարբեր երանգներով հանգիստ չեն տալիս նրան: Գիշեր-ցերեկ նրա

ԱՐՄԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Դաստիարակության մեջ սիրած էակն է, որին պաշտում է անկեղծորեն.

Ու քեզ չեմ հիշում ամեն ժամ ու րոպե,
Ապա միայն այնպես՝
ինչպես մարդ չի կարող
Երակներով հոսող իր իսկ արյան մասին
Ամեն պահի հիշել։¹²

(«Կյանք»)

Զնարական հերոսութիւն սերը համարում է քաղցր գգացմունք: Սերը նրա սրտի կանչն է, քնքույշ ծայնը, հույսը: Եթե տրտնջում է, ապա՝ կարոտի ծփանքով, եթե ծարավում է՝ հասնելու երազով: Սերը նրա հոգու հարստության միակ ու անսպառ աղբյուրն է: Նա իրեն մի դեպքում հանարում է «անմարմին մի իր», մյուս դեպքում «հույսի նժար», որ պատրաստ է վառելու սիրո «կրակները հանգած»: Այս խոստովանաճըն արվում է սուրբ նպատակով, որ սիրեցյալն էլ «կարոտի իրեն»: Ահա այդքանից հետո բանաստեղծութիւն անկեղծորեն բացում է սիրտը.

Թեզ կդարձնեմ... Աղամ,
Ինձ՝ քո կողքից ելած...
Կրադմնեմ աղքա, իմձ՝ քագուհի կողքիո,
Որ մեր սիրուց արդար
Ծնվի մի լույս որդի:¹³

(«Տենչ»)

Առողջ ու կենսական խոհերի տեր է բանաստեղծութու քնարական հերոսութիւն: Սերը եւ կյանքը նա դիտում է մեկ հարթության, մեկ տարածքի վրա: Անորոշ, վերացական անուրջները խորթ են նրան: Իրական ու շոշափելի է հերոսութու սերը՝ ուղղված անհատի երջանկությանը: Նրա փափագը կյանք է, ծգտումը՝ կենսասիրություն, հայացք՝ պայծառ, զգացմունքը՝ գեղե-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

ցիկ, ներշնչանքը՝ հավատք: Ամբողջության մեջ՝ հոգեւոր ու բարոյական մի հրաշալի աշխարհ: Սիրող սիրտը, ըստ նրա, «դիմանում է... ցավին», նրա համար «սպասումը գրկում է իրեն կենրանությունից» («Դրաժեշտի եւ հանդիպման միջեւ», էջ 84): Սիրտը «անդավաճան նշխար» է, հաճախ՝ փորձություն, ինչպես նաև՝ փոկության գոտի: Քնարական հերոսուհին ինչոր տեղ մտքերն ասում է ոչ բացահայտ, այդ դեպքում էլ նա խորհուրդ է տալիս կես խոսքից հասկանալ իրեն.

Օգնի՛ր,
Խորին այս հանգույցը...
Դեշտ քանդելու կամքը տուր ինձ:
Այս ինչպե՞ս է, որ ես
Ոտից գլուխ կրակ, ոտից գլուխ՝ կարոս
Դենց պայթելու ժամին...
Դարձել եմ թաց վառող: ¹⁴

(«Ինչ չեմ ասում»)

Ինչպես տեսնում ենք, սերը ներկայացվում է իր Ե՛ւ նրբերանգներով, Ե՛ւ հակասություններով: Քնարական հերոսուհին երբեմն գանգատվում է սիրո անհաջող ընթացքից՝ խոստովանելով՝ «Կաղո՛ւց էինք մենք կորցնում՝ ինչ հավաքել էինք մի տեղ...»: Այդքանից հետո էլ նա չի չարանում, ընդհակառակը, բարենադրանքի հրաժեշտ է տալիս.

Երթաս բարով,
Վերքիս արքա,
Չեմ ամիջի,
Ոտքը անգամ փուշ չմտնի,
Մեծ արվեստ է, գիտե՞ս, կյանքում
Բարի մնալ... բախտից անկախ:

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

(«Որ վերջանար պիտի այսպես...»)

Չնարական հերոսուիհու ամկեղծ ու ամնիջական ապրումները նի նոր ջերմություն են հաղորդում Ն. Ավագյանի սիրային երգերին: Քողարկված ոչինչ չկա նրա խոստովանությունների մեջ: Դերոսուիհու Սերը Ադամի անունով է ներկայացվում, ևակ, որի հետ է կապվում նրա փրկությունը: «Տես, քո դուռն են եկել ես ին կամքով՝ խոստովանում է հերոսուիհին: Սակայն նա եկել է անձնուրաց սիրո մղումով, եկել է՝ իր հետ բերելով եւ «մարմինը հրաշք», եւ աչքերը ծավի, եւ շիկացած հոգին՝ «տառապանքի ծաղիկ» («Առ քո կողն, Ադամս», էջ 87): Այստեղ խոսք է գնում մեծ ու վեհ սիրո մասին: Դերոսուիհին անձնուրաց ու ջերմացնող սեր է պահանջում, առանց որի սրտերի ներդաշնակություն լինել չի կարող: Անհատի հոգեկան ու բարոյական աշխարհը լույսի աղբյուր կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե սերը հոգու խորքում հավերժվի որպես արեւ: Եվ երբեք նարդու հանար ուշ չէ սիրո արեւով ջերմանալը.

Ծակատագրի ծերքը թե կա՝
Արքացումը ուշ չի լինի,
Բավական է սեղմես կրծքիդ՝
Ես կդառնամ հրաշք մի կին...
Եվ կզգաս, որ մարմինս չէ՝
Քոնն է նաեւ... խանձված հոգիս:

(«Բոկոտն անցա»)

Նման վերաբերմունքն ու գնահատականը սիրո հանդեա հիշեցնում են մի կողմից Սայաթ-Նովայի, մյուս կողմից՝ Վարպետի ընողիանրացումները: Երազելով իրեալական սեր, քնարական հերոսուիհին այն դժվար է գտնում իրականության մեջ, ուստի թեւավորվում է աննոռաց այն պահով, երբ զգացել է սիրվելու քաղցրությունը.

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Արժե՛ցավի հետ համբուրվել,
Արժե՛ծեռքը սեղմել մահի,
Թե սիրել ես մեկին կյանքում
Ու սիրվել ես գեթ մի պահի: 17

(«Արժե՛ցավի հետ համբուրվել»)

Ն. Ավագյանի քնարական հերոսը հույսի մաղթանքով «Երգող թօչուն» է, նրա սերը «բարձրագնա, լուսավորող» է, անցյալը ներկային ծուլող, անցողիկ պահի մեջ հալվող, ներող, մարդու հոգեւոր աշխարհը գեղեցկացնող ուժ՝ մարմնականի եւ իդեալականի համաձուլվածքով:

* * *

ՅՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ սիրային բանաստեղծություններն ամենից առաջ ապրած զգացումներ են՝ քննույշ եւ անմիջական: Քնարական հերոսի օգնությամբ բանաստեղծ ձգտում է բացահյտել սիրո գաղտնիքներն ու նրբերանգները:

Պետք է նշել, որ ստեղծագործական առաջին քայլերն անելիս բանաստեղծ տուրք է տվել կոլխոզային աշխատանքի եռուցեղին, հերոսացման կեղծ գաղափարի հետ կապված «սիրո զգացումին»: Այդ պատճառով էլ նրա սիրային որոշ երգեր հնչում են որպես հնարովի իրավիճակների արտահայտություն: Այսպես, «Կամուրջ» անդրանիկ գրքում գետեղվել է «Աղջկա երգը» ոտանակիոր, որտեղ աղջիկը փառաբանում է աշունը, Մոռվ սարը, «Երգ ու տաղով» սարից իջնող յարին, նրա բերած «առատ պանիրն ու յուղը» եւ հայտարարում: «Սենք երկուսով մեր կոլխոզում, իրար թե ու թիկունք դարձած, Աշխատել ենք, նա՝ սարերում, ես՝ արտերում լայնատարած: («Աղջկա երգը»):

Նույն միտումն ենք տեսնում նաև «Բամբակի դաշտերում», «Սիրուն աղջիկ» ոտանակիորներում: Սիրող աղջիկներից մեկն առատ բամբակ հավաքող է, մյուսը՝ խաղողաքաղ: Եվ նրանց սիրո

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀՄԱՅՔԻ

Իհմքում դրված է հենց այդ երեւութը, որ, անշուշտ, կեղծ է, անբնական: Սերը երբեք չի կարելի կապել մասնագիտական դրսեւորումների հետ: Սերը բնական մի զգացում է, որ նախախնամության օրինանքով ընծայվել է նարդուն, առանց որի կյանքը իհմաստ չի ունենա: Պարզ է, որ այդ շրջանում Երիտասարդ բանաստեղծը դեռևս գտնվում էր 30-40-ական թվականների պոեզիայի ազդեցության տակ: Դա մի շրջան էր, երբ նարդու սիրային ապրումների բանաստեղծականացումը համարվում էր նեղ-անձնական զգացմունքների արտահայտություն: Եվ բանաստեղծները, ստիպված, սերը գովերգում էին անպայման սոցիալիստական «խանդակառ» աշխատանքի ֆոնի վրա: Երիտասարդ բանաստեղծը տուրք է տվել, ահա, ժամանակի այդ անհիմն եւ անհիմաստ պահանջին: Սակայն հաճելի է նշել, որ հենց առաջին գրքում տեղ են գտել նաև սիրային այնպիսի երգեր, որոնցում զգացվում են քնարական հերոսի ջերմ ու անմիջական ապրումները:

Գնալով բանաստեղծի սիրո քնարն ավելի անմիջական է հնչում: Զնարական հերոսը սիրո զգացումն արտահայտելու մեջ համարձակ է դաշնում, խոստովանում, որ սիրած առջիկը մտել է իր սիրտը եւ հանգրվան գտել այնտեղ, որ ինքը ծովի նման փոթորկվում է:

Առաջին գրքում գետեղված երգերն ասում են այն մասին, որ Բեգլարյանը ուշադրություն է դարձնում սիրո հոգեվիճակի զանազան դրսեւորումներին: «Մեր սերը» ուր տողից բաղկացած երգում քնարական հերոսն ափսոսում է անուշ երազ դարձած իր սերը: «Սիրո բարձունքը» ոտանավորում խոսք է բացվում «արեւի նման միշտ անհաս» մնացած սիրո մասին եւ վերջապես այդ դաշն ապրումներից հետո մատնացուց է արվում սիրոոի փշոված սիրտը եւ լացի միշից բարությամբ փայլող ժպիտը. «Պոետն ի՞նչ ուներ մի սրտից բացի, Բայց երգող սիրտն էլ փշրեցիր, անցար, Ա՛խ, սիրո ցավից ես շատ խոր լացի, Դու այդ չիմացար, ավաղ, չիմացար»:

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Յ. Բեգլարյանը երբեմն հակասական զգացմունքների պատկերներ է ստեղծում: Նրա համար սերը դժվար է բացում երջանկացնող թեւերը: Բայց միեւնույն է, նա չի վհատվում, ինչքան էլ սառը լինի իր Սերը, ինքը արեւի պես փարվում է նրան, գիրկը դարձնում գարուն («Ու սառն էիր»): Մեկ ուրիշ ոտանավորում քնարական հերոսն երանի է տալիս «սիրո անուշ գիշերներին», նրա համբույրները հուշեր են դարձել, երազի պես անցել («Սիրո անուշ գիշերներ»): Սիրո զգացմունքներում շատ արագ է հասունանում քնարական հերոսը: Նա սերը համարում է կյանք, որին պիտի հասնել: Բնությունն աստիճանաբար շնչավորվում է Բեգլարյանի նաեւ սիրային երգերի մեջ: Նման դեպքում ասելիքն ավելի է կրնկրենանում, սիրո զգացումն արտահայտվում է պատկերավոր ու շոշափելի-

Ղևկա ժայռի տակ՝ ես զուլալ աղբյուր,
Խևկ դու՝ մասրենի բարձունքին բուսած,
Բացած թերթերդ նուրբ, անուշաբույր,
Լուռ ու անտարբեր միշտ նայում ես ցած:

Թվում է, դու ինձ չես սիրել երբեք,
Բայց երբ փչում է հովը գիշերվա,
Արցունքի ննան թերթերդ մեկ-մեկ
Դու լուռ թափում ես իմ կրծքի վրա: ¹⁸

(«Ղևկա ժայռի տակ»)

Քնարական հերոսը գիտակցում է, որ սերն արեւ է իր համար, որ նրանով է կյանքը կանաչում, որ նա իրեն տուն կանչող ամենազոր ուժն է: Ոգեւորված, վերջապես նա բացականչում է՝ «Ես ինչո՞ւ չասեմ, որ սիրում եմ քեզ»:

Բոլոր բանաստեղծները ստեղծագործական տարբեր էտապներում սիրո թեման բացահայտում են տարբեր մոտեցում-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Անրով ու լուծումներով: Դա բնական է, որովհետեւ բանաստեղծը եւս, որպես քնարական հերոս, աճում է, փոփոխվում, ունենում տարրեր տրամադրություններ, ընկնում այլեւայլ իրավիճակների մեջ: Իհարկե, չի կարելի սիրերգությունը կոնկրետ կապել բանաստեղծների կենսագրությունների հետ, սակայն, այնուամենայնիվ, փոփոխվում է երգչի վերաբերմունքը, գնալով ավելի է հարստանում նրա աշխարհը՝ կապված սիրո հասկացողության հետ: Այդ երեւույթը նկատվում է նաև Բեզզարյանի պոեզիայում: Նրա սիրերգության մեջ փառաբանվում է սիրո հմայքը, արարիչ շունչը, մարդուն երջանկացնող ուժը: Մերժումի, խռովության երանգներ եթե կան է՝ հազվադեպ են: Սիրո փառաբանությունը, սակայն, ուղղագիծ ու միանշանակ չէ: Այն ներկայացվում է հանդիպումի եւ հրաժեշտի, հաճույքի եւ կարոտի, տվայտանքի եւ ուրախության, սպասումի եւ հույսի շոշափելի պահերով: Եվ լավն այն է, որ դրանք բնական են, անմիջական, հուզիչ: Դրանցում ընթերցողն ասես լսում է կարոտի շրջյունները, գգում հանդիպման հմայքը: Նման ապրումների արտահայտություն է «Բարդենու տակ» ոտանավորը: Քնարական հերոսը խոստովանում է, որ ամեն երեկո սիրածի հետ հանդիպում է բարդենու տակ, խոսում է ուրախ, անքում, կատակում, սիրո խոսքը ասում: Բնությունն էլ հմայված լսել է իրենց սիրո շշուկները, «բարդենին անգիր է արել» իրենց սիրո խոսքը եւ պատմում է «կողքով անց կենող ամեն անցորդի»: «Ուր եկար մեր տուն» բանաստեղծությունն իր սիրուն արժանացած քնարական հերոսի անքիծ զգացումների, հոգեկան եւ բարոյական ապրումների գովքն է: Դիմելով իրենց տունն արդեն հարս եկած սիրուն, քնարական հերոսը նրա մուտքի հետ կապում է ոչ միայն իր, այլեւ մեջքից կորացած մոր իրճվանքը, որովհետեւ նրա գալով շատացել է տան պատուհանների լույսն անգամ, ապրելը քաղցրացել է, ին-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

գին լցվել «կյանքի ու սիրո կրակով»: Բեգլարյանը սերը համարում է երջանկության աղբյուր: Նրա համար սերը երգի կարկաչ է, քույր եւ ընկեր, գարուններին իմաստ ու գեղեցկություն պարգևող ավիշ.

Այս, չէ, գարունն այս չեղ լինի չքնաղ,
Թե սիրտս լիներ ծյուների պես պաղ,
Թե չգերեխն ինձ ծաղկունքի մեջ
Սիրուց բռնկված քո աչքերն անշեջ:

Թե այս կարկաչող ջրերի նման
Չկարկաչեր քո ծիծաղն աննման,
Չէ, իմ սիրուց է, կարոտից է, որ
Գարունը այսքան չքնաղ է ու նոր:

(«Այս, չէ...»)

Դ. Բեգլարյանը սերը գնահատում է որպես աշխարհն ու կյանքը գեղեցկացնող ուժ, մարդուն ջերմացնող կրակ: Բանաստեղծը հաճախ սիրո նասին արտահայտում է իր կարծիքը՝ Ելնելով փորձից: Նման դեպքում բացակայում է սիրող զույգը: Երգիչը խորհուրդ է տալիս երիտասարդներին, որ աղջիկներին նաքուր սիրով սիրեն, որովքիետեւ առանց նրանց կյանքը տխուր է: Աղջիկներն անպոտ օրերին արեւոտ են, ծնուան ցրտերին՝ ամառ, նրանցից յուրաքանչյուրի հոգու մեջ մայր է նստած.

Չեզ եմ ասում, տղաներ,
Արծիվ էլ դառնաք,
Առանց նրանց կյանքը ձեր
Դատարկ է, դատարկ:

(«Աղջիկներին սիրեցեք»)

Երգիչը խոստովանում է, որ ինքը կդողար ցրտում, եթե իրեն չժերմացներ սիրո կրակը, որ հուրիրատում է Ղարաբաղի աղջիկ-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Անրի Կրօքի տակ.

Սեղս ինչպե՞ս չասեմ՝ ես էլ
Զգիտեի ինչ է սերը,
Ինձ սիրահար են դարձրել
Ղարաբաղի աղջկերը։²¹

(«Սիրո դոդից»)

Յ. Բեգլարյանը մաքուր սիրո Երկրպագուն է: Ով անբիծ սիրո տեր է, նա իրավունք ունի հապատամալու, չքաքցնելու իր զգացունը, որովհետեւ «մաքուր սերը ծաղկող գարնան պես միշտ խնդրություն է բերում»: Երբ սերը առողջ է, ազնիվ՝ կարիք չկա այն թաքցնելու.

Սիրելիս, հապարտ ճայիր դու մարդուն,
Գլուխտ բարձր պահիղ աշխարհում,
Նրանք են պահում միշտ սերը թաքուն,
Ովքեր ուրիշի սերն են գողանում։²²

(«Ես ինչո՞ւ չասեմ»)

Նշվեց, որ Յ. Բեգլարյանը սիրո զգացումների մասին խոսում է տարբեր տրամադրությունների հետ կապված տարբեր իրավիճակներում: Յիրավի, լինուն է, երբ բանաստեղծի քնարական հերոսը ծանր ու դառն ապրումներ է ունենում սիրո կորստի պատճառով: Այդ զգացունը լականություն չէ, այլ առաջին անկրկնելի սիրո վեհություն, նրա կորստի հավիտյան ցավի արտահայտություն: Դրանով ավելի է ընդգծվում սիրո քաղցրությունը եւ կարոտի ահազնությունը: «Յովկական սեր» ծավալուն բանաստեղծության մեջ քնարական հերոսը ներկայանում է որպես գառնարած: Նա իր պատամեկան սիրուն չի արժանացել, տարիներ են անցել, բայց չի մոռանում այդ գեղեցիկ զգացումն ու ծանր կորուստը, ցավուն է այն սիրո համար, որ «դեռ չգտած»՝

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀՄԱՅՔԻ

Կորցրեց: «Մի աղջիկ էր նա» ոտանավորի հյուսվածքի մեջ կրկին քնարական հերոսի խարված սիրո պատմությունն է, որի մորմոքը երբեք չի անցնում սրտից: Բեգլարյանի սիրերգության քնարական հերոսը ծանր է տանում մերժված սիրո պատճառած ցավը, սիրո մեջ չի հաշտվում դաժանության, անհավատարմության, անտարբերության հետ:

Սիրո դրժումի պատճառով քնարական հերոսը չի չարանում, չի բորբոքում վլեժի հուրը, միայն ափսոսում է, որ ուրիշներն էլ կարող են խարվել իր նման: Նա նույնիսկ պատրաստ է ընդունել իրեն ցավ պատճառած սիրում, որովհետեւ սիրում է հոգով, սրտով: Գուցե իրեն չի ասկանա շրջապատը, բայց կգտնվեն մարդիկ, որ կգնահատեն իր անմարում սերը: Բեգլարյանը չի ընդունում այն անսիրտ, անտարբեր, ցուրտ սերը, որ կարող էր զարդարել ոսկով ու ադամանդով: Ուսկե մատանուց առաջ պետք է խորհել ոսկե սիրո մասին, հավատալ միայն սրտաբուխ սիրուն («Ուսկե մատանին»): Ինչպես տեսնում ենք, Յ. Բեգլարյանը ձգտում է հավատարիմ մնալ միջնադարյան հայ սիրերգակների առիմնող ավանդույթներին: Նա իրեն համարում է Նահապետ Թուչակի աշակերտը եւ իր ուսուցչի պես սիրո երգեր է գրում գիշերը, մոմի լույսի տակ, թեկուզ «լույսը աղոտ էր», բայց «հուշերը տաք» էին: Դարբած սիրո բույրով, զարկված նրա նետով, քնարական հերոսը բացականչում է.

*Այս գիշեր, սեր իմ,
Թուչակի նման սիրավոր էի,
Թուչակի նման վիրավոր էի,-
Թո սիրուց, սեր իմ...²³*

(«Այս գիշեր»)

Երգից-երգ բացահայտվում են քնարական հերոսի բարոյական հատկությունները: Այդ հերոսը սիրում է կյանքը, գնահա-

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Սույն է սերը, դատապարտում է անտարբերությունը, ընդունում է երկրային հաճույքներն ու վայելքները: Բանաստեղծը սերն այնքան շոշափելի եւ գորեղ է ներկայացնում, որ քնարական հերոսը տեղի է տալիս սիրո քմահաճույքներին անգամ, նույնիսկ սիրում է այն, ինչ չի սիրել մինչեւ այդ: Նա չի սիրել սեւը, բայց սիրածի սեւ վարսերի, սեւ աչքերի, սեւ ունքերի պատճառով սկսել է սիրել.

*Ես ասում էի սեւը, սիրելիս,
Բայց ինչպե՞ս եղավ,
Այս ինչպե՞ս եղավ,
Որ քեզ սիրելով
Սեւը սիրեցի...²⁴*

(«Ես ասում էի»)

Սիրո ուժից վեհանում է եւ բնությունը: Որպես սիրո օրիներգու, բնությունը ցնծություն է ապրում, երբ համոզվում է, որ սերն անբիծ է, հարատեւ, արարող, հմայիչ: Բեզլարյանը հաճախ բալլարդային տարրեր է հաղորդում սիրո երգերին՝ ընդգծելու այն գաղափարը, որ սերը հավերժի խորհուրդն է, երկրային եւ երկնային ամենագրավիչ զգացումը, երազների ծիածանը, աստվածային ամենամեծ պարգևը: «Սիրո կամուրջը» բալլարդ այս գաղափարի մարմնացումն է: Երկու սիրահար ելնում են դաշտում շրջելու: Դանկարծ սաստիկ որոտում է մոռայլ երկինքը, հորդ անձրեւ է տեղում: Այդ պահին սելավը կիսում է դաշտը եւ բաժանում սիրահարներին, քիչ է մնում սիրո դաշինքը խախտվի.

*Արեւն այդ տեսավ ու խիստ զայրացավ,
Ներքեւ ուղարկեց մի լավ ծիածան,
Իսկ ծիածանը մի կամուրջ դարձավ,
Սիրահարները նորից միացան...²⁵*

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔՆ

(«Սիրո կամուրջը»)

Բեղլարյանը չի ընդունում «անսեր մարդում», նա ննան անձանց համարում է անգութ, անսիրտ («Ես ի՞նչ ասեմ»): Քնարական հերոսն այնպես ջերմ է սիրում, որ ափսոսում է անգամ ծաղկանանց հանել բառամած ծաղիկները, որովինետեւ սիրածի «մատներն են նրանց դիպել»: Առաջին սիրո կարոտով մորմոքող նրա սիրտը մի երգարան է դարձել եւ անվերջ հիշում է իր կուլ գնացած սերը: Բայց երգիչը գրնե իրեն սփոփոված կզգա, եթե իմանա, որ իր առաջին Սերը կարդում է իրեն.

Տեսնես որտե՞ղ է իմ Սերն առաջին,

Տեսնես երգո՞ւմ է երգերն իմ գրած...²⁶

(«Տեսնես որտե՞ղ է»)

Բանաստեղծը գտնում է, որ «սերն էլ երազ է, սերն էլ մուրազ է»: Որպես քնարական հերոս նա իր սերը կյանքում համարում է «բարձր, անհաս»: Նա հավատում է իր երազանքին եւ ծգտում է հասնել նրան («Սիրո զգացնունք»): Բայց միաժամանակ սիրտը ցափում է, որ սեր են խոստանում եւ դրժում, քանդում միացնող բոլոր կամուրջները.

*Կանչում ես ինձ՝
Արի, արի,
Բայց ո՞ր ճամփով
Քեզ մոտ գամ ես,
Երբ քանդել ես
Կամուրջները
Դու մեր սիրո
Ճանապարհի...²⁷*

(«Կանչում ես ինձ»)

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Բեգլարյանի սիրային երգերը ռեալիստական գույներից են հյուսված: Զգացմունքները հստակ են, իրական: Կոմկրետ է քնարական հերոսը, դիմումները բխում են որևէ իրավիճակից եւ տրամադրությունից: Նրա ներաշխարհը մերթ խաղաղ է, մերթ՝ փոթորկուն, մերթ բավարարված է, մերթ՝ դժգոհ, արտահայտած ինեալ՝ բյուրեղյա: Ինչքան էլ մերժումի պատճառով տանջվում է նա, միւնույն է, չի ժխտում երջանիկ սերը եւ այն գտնելու համար էլ չի թափառում երազային-վերացական աշխարհում: Այդ քնարական հերոսն այնքան է կրնկրես, որ իր ապրումները ցույց տալու համար թվարկում է Արցախ աշխարհի գետերը, սարերը: Օրինակ, «Թարթառի պես» երգում նա խնդրում է, որ սերն իրեն չհանի ափերից, որովհետեւ ինքն իր «սիրով նման է ինենք Թարթառին»: Բանաստեղծը սերը համենատում է սարերի գեղեցկությունների հետ, սարի մարդու հոգեբանություն ունի, ուստի խորհուրդ է տախս խմել լեռնային աղբյուրից, որովհետեւ այն սիրո կարոտ է, սիրո երազ.

*Գնա ջուր խմիր
Լեռան աղբյուրից,
Լեռան աղբյուրը
Սիրո մուրազ է:*²⁸

(«Գնա ջուր խմիր»)

Բանաստեղծի սիրային երգերից բխում են ջերմացնող շատ խորհուրդներ: Այդ երգերում ներկայացվող փաստերի տակ կոմկրետ իմաստներ են շոշափվում: Բանաստեղծական ներքին պատկերներն արտահայտում են գաղափարներ, որոնց չես կարող չհամաձայնվել: Դրանցում ընդգծված երեւում են բանաստեղծի ըմբռնումներն ու վերաբերմունքը սիրո հանդեպ: Նա հաստատում է, որ սերը մարդկային ամենազրեեղ, նվիրական զգացումն է, ուստի ամեն կերպ ձգտում է բացահայտել քնարական հերոսի հոգեկան ապրումները, բարոյական ուժն ու վար-

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

քագծի գեղեցկությունը: Իհարկե, ոչ միշտ է դա հաջողվում նրան, սակայն ընդհանրության մեջ նա հասնում է իր սկզբունքների գեղարվեստական մարմնավորմանը: Բեգլարյանի համար սերը անհատի արժանիքների, կանքի, հոգու մաքրության չափանիշն է: Պատահական չէ, որ նա որպես քնարական հերոս, բացահայտ խոստովանում է, որ խենթությունն էլ, տրտմությունն էլ սիրուց է ակունք առնում («Խենթություն»): Ինչքան էլ շոշափելի են քնարական հերոսի սիրո զգացումները, միեւնույն է, նա սիրուց չի հագենում, մնում է ծարավ: Նրան անվերջ կանչում է «սեւ ու սիրուն մի աղջիկ», կանչում է «կարուտներով, կրակներով» բռնված բախտի ճամփան:

Դ. Բեգլարյանն իր սիրային երգերում քննարկում է իրական եւ իդեալական սիրո պրոբլեմը, յուրովի բացահայտում այն կոմկրետ իրավիճակները եւ տրամադրությունների մեջ հաստատում սիրո ամենազոր ուժն ու հմայքը՝ որպես կյանքի հավերժության սրբազան աղբյուր:

* * *

Սիրո գեղարվեստական յուրացման իր սկզբունքն ունի ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ: Նախ, նա նպատակադրվում է բացահայտել սիրո ուժն ու սիրողի ներաշխարհը: Տարբեր տրամադրությունների արտահայտություն են նրա երգերը: Բանաստեղծի սիրային խոհերը շաղախված են հավատարմության եւ անձնուրացության զգացումով: Ընդհանրապես Ա. Հովհաննիսյանն ունի իր վերաբերմունքը սիրո զգացումների արժարծումների նկատմամբ, որով եւ պայմանավորված է այն հոգեվիճակը, որի մեջ գտնվում է քնարական հերոսը:

Բանաստեղծը սիրային երգերի մեջ սրտաբաց է եւ անկեղծ:

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Նրա քնարական հերոսը զրուցում է ուղղակի, հայտնում իր ապրումները, դրսեւորում երջանկության իր զգացումներն ու տխրության պատճառները: Այդպես բացահայտվում է քնարական հերոսի հոգու խռովքը ապրումի տարրեր երանգներով: Սիրային երգերում եւս Արմենը խուսափում է ճառերից: Նա առաջին հերթին հետեւում է իր սրտի կանչին եւ ասում խոսքը: Արմենը վստահում է դիմացինին, բացում իր հոգու գաղտնիքները, դրանով իսկ ցուցաբերում այն անկեղծությունը, որ անհրաժեշտ է սիրո աշխարհում: Դետեւելով հոգու թրթիներին, բանաստեղծի քնարական հերոսը արձանագրում է մարդկային իր ապրումները, որոնց հավատում է ընթերցողը:

Ա. Հովհաննիայանի սիրերգությունը գալիս է հաստատելու, որ մարդկային երջանկությունը կախված է սիրո հավատարմությունից եւ ամրությունից: Նման դեպքերում միայն անհատը կարող է ապրել լիարժեք ու հարուստ կյանքով: Արմենի սիրային երգերը կենսական են, հեռու կեղծ շեշտերից: Դարկադրական կամ ցուցադրական ոչինչ չկա նրանց մեջ, վարակիչ ու առինքնող են դրանք, որովհետեւ անկեղծ են, հոգեկան ապրումների ծշնարիտ բացահայտումներ: Դանոիաման պահ լինի թե բաժանման, Արմենի երգերում սերը չի զիջում իր տեղը: Մերժման երեւութից անգամ քնարական հերոսը չի հիասթափվում, ընդհակառակը, նա աստվածացնում է Սերը, թեկուզ համոզված, որ աղոթքը չի հասնում նրան.

Աստծոն նման անմատչելի,
Անմեկնելի խորհուրդ որպես,-
Սիրոս զոհ է բերում էլի,
Եվ... չի հասնում աղոթքս քեզ:²⁹

(«Աստծոն նման»)

Ներգործական կենսական լիցք ունի Արմենի սիրային քնա-

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Րերգությունը: Մարդը կյանքի ծովում ունենում է ապրումի տարրեր՝ երանգներ, ուրախության եւ տվայտանքի, ոգեւորության եւ հիասքափության պահեր: Արմենը ձգտում է հավատարիմ մնալ այդ ճշմարտությանը: Եթե որեւէ պահի նա մտահոգված է, որ իր աղոթքն անգամ չի հասնում սիրուն, ապա մի ուրիշ անգամ իր ներշնչանքն ու երգը կապում է նրա հետ.

Յովի շշուկ եմ, շվի եմ ուրախ,
Ծիրանի փող եմ, սրինգ եղեգի,
Եվ քո անունը շուրթերիս վրա,
Թրթոռն է՝ ոնց երգ ու մեղեղի:³⁰

(«Քո անունը»)

Ա. Յովիաննիսյանի մի շարք սիրային երգերում հնչում է անձնուրացության գաղափարը: Նրա քնարական հերոսն այր մարդու վճռականությամբ ձգտում է ապացուցել, որ իր սերը աստվածային է, անսովոր, որ ինքը պատրաստ է անգամ ծունը իջնելու սիրած էակի առջեւ: «Ել չես լքի ինձ» բանաստեղծությունն այդ գաղափարի վկայությունն է: Քնարական հերոսը խոստովանում է, որ աշխարհի գեղեցկությունը պայմանավորված է իր սիրո լինելությամբ: Եթե նա հանկարծ հայտնվի քարափի վրա, ապա՝ «Կվո՞ի արեւն իր վառ ծիրանին, անզուսպ հրճվանքից անդունդներն ի վար նետելով իրեմ՝ կկապի ջրվեժն իր ծիածանը»: Եվ ոչ միայն դա: Այդ պահին քնարական հերոսը պատրաստ է իր մտքի մեջ քանդակելու նրա «մարմինը անտիկ», աչքերի մեջ վառելու սիրո այնպիսի կրակ, որից կարող են շիկանալ անգամ ապառաժները, շուրթերն օծելու այնպիսի ցողով, որ ընպուր են լոկ աստվածները: Այդ ի՞նչ ինքնանոռաց նվիրում է, ինչո՞ւ է քնարական հերոսն այդպես աստվածացնում իր հողեղեն Սիրուն: Պարզվում է, որ դրանով ձգտում է ապացուցել, որ իր անձնուրացությունն արժանի է սիրվելու, պաշտվելու.

Եվ այնուհետեւ կմայեմ ես քեզ

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔՆ

Դիացքից բացված իմ լայն աչքերով,
Եվ ծունդը իջած քո հայտնության առաջ,
Կը մժայեմ ես քեզ իմ սիրտը անրիծ,
Որից այլեւս դու չե՞ս հեռանա,
Ել չե՞ս լքի ինձ:³¹

(«Ել չես լքի ինձ»)

Զնահաճության ոչ մի նշույլ չկա Ա. Չովիաննիսյանի սիրային երգերում: Նրա համար սերն այնպիսի մի զգացում է, որ չաետք է փոխվի, չպետք է մարի, այլ հանդիպման առաջին պահից միշտ բորբոք մնա, ջերմացնի: Նրա քնարական հերոսը ապրում է այդ դավանանքով: Այդ է պատճառը, որ նա ափսոսում է իր եւ դիմացինի միջեւ առաջացած անդարձ տարածքի համար: Չէ՞ որ կար ժամանակ, երբ նրանք կրում էին մեկ-մեկ ու իրար մեջ:

Զնարական հերոսը կարոտով որոնում է առաջին սիրո տաք ծվենները, նորից դիմում դիմացինին՝ անկեղծ խոստովանանքով.

Այս, ինա՞ր լիներ՝
Դառնայիր դեպի այն ուխտատեղին,
Ուր քո ժպիտը
Կաթում էր ինչպես առիմքնո՞ղ աղոթք:³²

(«Մինչդեռ իմն էր»)

Այրական սիրո կրակը չի մոխրանում, այն խենթացնող է, կյանքը քաղցրացնող ավիշ, անմարում լուս եւ նվիրյալի հավատ: Այդ հավատի սրբազն մի կանչ է Արմենի «Կանչիր ինձ» ծավալուն բանաստեղծությունը: Նրանում խոսում է տարիների փորձն ու ծանրությունը, տառապանքն ու հուսն ամբարած մարդը, որի զգացումը մի լեգենդ է, մի ամբողջ սերնդի սիրո պատմություն: Չիգ տարիների վաղեմի քեզը ուսերին, քնարական հերոսը հայացքն ուղղում է սիրած էակին եւ ներկայացնում

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Սիրո իրենց ճանապարհը՝ տառապալից ու լուսավոր, ուսանելի եւ կենսահաստատ: Սպասելով դիմացինի կանչին, քնարական հերոսը վերիշում է առաջին սիրո արոյար արեգակը, որից կարող է հալչել մազերին մաղած կարոտի ձյունը: Սիրո կանչը համարելով հարության ուժ, նա հավատացած է, որ դիմացինը ծունկի կօա իր հարության առջեւ՝ կրակապաշտի մոլեռանդրությամբ: Դավատարմության այդ զգացումը ավելի է թեւավորում քնարական հերոսին, եւ նա մեկ առ մեկ թվարկում է այն պահերը, որոնք ընդիհանության մեջ իրենց սիրավեպն են կազմում: Այն սկսվում է սիրո պարզկա ակունքից, որի ափերին դեռևս բուրում են մանուշակները՝ իրենց վաղնջական թարմությամբ: Դանդիպան առաջին առավոտի լույսով ճառագած սերը կարող է ցուել քարանձավների մութը, աղավնիներ թոցնել, պայթեցնել բոլոր չքացված բողըզները: Դիշելով իրենց հարսնահանդեսը, քնարական հերոսը ընդգծում է նաև այն տառապանքը, որ բերեց պատերազմը, որի պատճառով չթեւաբախեց իրենց խրախնճանքը, հանգան մոմերը, ծյուղահատվեց մատղաշ ծիրանենին, կնքվեց հրամեցած համբույրը, երկար ու ձիգ տարիներ սիրո շուրբերը փակ մնացին: Մի ամբողջ հավիտենություն սերը ստիպված ծոն պահեց, հյուսեց տվյալտանքների մի աշխարհ: Այսպես, ըստ պրեսի, պատերազմը եղավ սիրո, հավատի եւ մաքրության փորձություն, որից պարզերես դուրս եկավ մի աճքողջ սերունդ, որի անունից էլ քնարական հերոսն ազդարարում է.

Իսկ ո՞ւմ չի հայտնի,
Թե իմշայիս ես դու իմ խաչը կրում
Կամ ո՞ւմ է հայտնի,
Որ երջանկության գին ունեն միայն
Տառապանք ու ցավ
Լոկ նրանց համար,

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Ովքեր այս կյանքում

Դավատարմության սյունի՛ն են գամված: ³³

(«Կանչիր իճ»)

Բանաստեղծը հաստատում է նման նվիրվածությունը եւ հավաստում, որ «Սեծ արժեք ունի հայրենիքն այն, Որի վտանգի պահին մարդիկ գրավ են դնում ոչ միայն «Սեր, ժպիտ ու բախտ, Այլև կյանքը...»: Իսկ Ա. Դովիաննիսյանի համար կյանքը հենց անձնուրաց սերն է:

Ինքնակենսագրական բնույթ ունի «Որպես իին գինի» բանաստեղծությունը: Վերհուշի ծեւով քնարական հերոսը մեջտեղ է բերում գյուղական այն միջավայրը, որի մեջ ծնունդ առավ եւ հասունացավ իր սերը: Ամբողջ բնությունն ասես տրամադրված է արարման արբունքով, «Երկիրն արեւին ընծայում էր իր մարմինը փիսրուն, Մանկան պես հրաշք՝ Առուն քանրում էր կրծքակալը պինդ ծոցվորած հողի», հողը պահմտողի էր խաղուն, արտը հերանց էր գնում հերարձակ հարսի պես, կաքավը ձենը զլուխն էր զցել՝ սաղմոս էր կարդում: Եվ ահա այդ պահին տեղի է ունենում սիրո հրաշքը: Դանկարծ մի շշուկ է անցնում ընկուզենու թավ սաղարթների միջով... Եվ որտեղից-որտեղ Սերը անարատ հավքի պես ներս է սուլում բրուտանոցը: Անակնկալ երջանկությունից արբաժ սիրո զույգը հաստատում է իր կենսագրության առաջին էջը, ինչպես քնարական հերոսն է ասում.

Այնինչ հնոցում

Թրծվում է արդեն

Կավե սափորն այն,

Որով դեռ պիտի ըմպենք անհագուրդ

Դուրը մեր սիրո,

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Որպես հին գինի՝

Կարասների մեջ՝ հողի տակ թաղված։³⁴

(«Որպես հին գինի»)

Լիարժեք սերը լիանում է միայն այն դեպքում, երբ երկու կողմերը դողում են նրա համար: Այդ ժամանակ է, որ յուրաքանչյուրը իրեն սիրո տեր է զգում, ապրում հաճույքի այն անփոխարինելի պահը, որ տրվում է աստվածային ուժով: Յակառակ դեպքում գերիշխում է հիասքափությունը, խամրում վիրո զգացումը: Այս զգացողությանն ենք ծանոթանում Ա. Շովիաննիսյանի սիրային մի շարք երգերում: Բանաստեղծը հաստատում է, որ սիրո հմայքները պետք է հեռու լինեն ծեւական քմահաճույքներից, սերը պետք է զրւալ լինի լեռնային աղբյուրի պես, լուսավառ՝ աստղի նման: Այդ չի նշանակում, որ սիրո ճանապարհը միայն ու միայն ծաղկած մի անդաստան է: Բանաստեղծը սերը ներկայացնում է նաև իր բորբոքումների, խանդի, տառապանքների եւ քաղցրության մեջ.

Երբ ես չլինեմ,
Ո՞ւմ ես կանչելու,
Ո՞ւմ ես տանջելու,
Երբ ես չլինեմ,
Երբ անձկության մեջ
Սորմոքես հոգիդ,
Սրտնեղած սիրտդ
Ո՞ւմ է տենչալու...:³⁵

(«Երբ ես չլինեմ»)

Սիրո ճանապարհին կա նաև դժվարություն: Չպետք է պարտվել դրանից: Սիրո նվիրումը պիտի հաղթահարի ամեն մի տառապանք: Ընկճվելն ու խեղճացումը պետք է խորթ լինեն սիրո ուժին: Անհրաժեշտ է վառ պահել հոգում անթեղված նրա կրակը: Սիրո բարոյական ուժը կայանում է հենց դրանում: Վե-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Իությունը ծնվում է դժվարության դեմ կռվելիս: Սիրո անձնուրացության նախապայմանը կամքի ուժի մեջ է, երազանքի եւ հավատի, նվիրումի ու հույսի:

Կարուտի մի սրբազն զգացում կա Ա. Շովիաննիսյանի սիրո որոշ երգերում: Դա բխում է նրանից, որ բանաստեղծն անդրադառնում է անցած օրերին: Խա տարիների բարձունքից հետ է նայում, մրմուռով հիշում սիրո խենթությունները եւ երազում այն հասակը, որ «ճկվում էր եղեգի ննան... խոնարհվում ջրերի վրա» սիրած էակի «ջինջ աչքերի պարզկա հայացքից»: Քնարական հերոսը կարուտում է անոթխածության այն պահերը, երբ վարանում էր անգամ հանդիպելիս, թափառում անորոշության մեջ, աչքը չկտրելով նրանից: Պարզ է, ոենո ոչ չի կարողացել վերադարձնել անցած մի պահն անգամ: Սակայն երազելով անցածը, բոլորն էլ ընդգծում են կորցրած լավի քաղցրությունը, տվյալ դեպքում սիրո անփոխարինելի քնքշանքները: Եվ լրիկ քնարական ու հոգեբանորեն ընդունելի է դառնում, երբ բանաստեղծն ընդհանրացնում է իր երգը.

Վերադարձրու այն հասակը ինձ,
Որ վարդագույն էր ներկում այտերս,
Թրթռում էին անգամ կոպերս
Անըմբռնելի ներքին այրումից:³⁶

(«Վերադարձրու»)

Սիրո սրբագին հուրը չի մարում արյան մեջ: Այն զորավոր է, սեթեւթանք չի ընդունում, նվիրական զգացում է, որ կարոտ դարձած, ծփում է ափերի մեջ, առկայօնում աչքերում, հնչում ունկերում, խռովք դարձած, արթուն պահում հիշողությունը («Զո կարոտները»):

Շովիաննիսյանի օրիներգության մեջ հնչում է այրական մի

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Ճայն, որ իր ազնվությամն ու հավատարմությամը վստահ սիրողի խորհուրդն է: Յոգեբանական այս երեւույթը ցույց տալու համար բնորոշ է «Խնչ փույթ» բանաստեղծությունը: Քնարական հերոսը բացսիրտ խոստովանում է, որ դիմացինը իրենից գեղեցիկ խոսքեր չսպասի, որովհետեւ կարենցանք չի աղերսում նրանից, որովհետեւ սիրո խորհուրդը դա չէ, այլ այն, որ սիրում են սրտով, տառապանքի ու խնդրության պահերին նեցուկ են իրարու: Չա ոչ միայն հավատ է, այլ հավատամք, ոչ թե կեցվածք է, այլ ապրելու խորհուրդը: Այս գաղափարի զարգացմանն ականատես ենք լինում բանաստեղծի քնարական հերոսի մի ուրիշ ինքնաբացահայտման մեջ.

*Երբ ամպոտ է օրը, մթնշաղ է ու պաղ,-
Քեզ միշտ պայծառ տեսած իմ աչքերին նայիր:*

*Երբ քո շուրջը բուք է, ծյունամրոիկ ու հողմ,
Շամթ ու որոտ տեսած իմ աչքերին նայիր:*

*Երբ ծաղիկը խամրի քո ափի մեջ փոքրիկ,-
Մարգ ու արոտ տեսած իմ աչքերին նայիր:*

*Ու երբ ամպը թախծի, նստի հոգուդ վրա,-
Խինդ ու կարոտ տեսած իմ աչքերին նայիր:*³⁷

(«Երբ ամպոտ է օրը»)

Յոգեբանական տարբեր վիճակների մեջ Ա. Յովիաննիսյանի քնարական հերոսը սիրում անմնացորդ նվիրված այրն է: Նրա վրա չի ազդում ոչ մի երեւույթ: Սերը չի վերջակետվում, իրավիճակից ծնված սարսուրը չի պաղեցնում այդ զգացումը: Նա շարունակում է սիրել: Իհարկե, դա հպարտության զիջում չէ, այլ նվիրվածության խոստովանանք: Թե արեւն անգամ հեզնի, նա սիրում է, բուքը մոլեգնի, կարկուտը տեղա, սիրում է: «Օրն ամ-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

պոտ լինի թե արեւ շողա»՝ սիրելի է դիմացինը: Տարաբախտ պատահարներ լինեն՝ սիրում է, նոյնիսկ եթե անարդարացի լինի՝ դարձյալ սիրում է: Ի՞նչ է սա, արժանապատվությունից գուրկ մի թուլակամի նվիրվածություն, թե՝ սիրո մեջ համոզված հերոսի ասպետական վարքագիծ: Պարզ է, իր երազին արժանացած մարդու երջանկության ճիշ է, որին չես կարող չհավատալ: Սերը կյանք է, կյանքը՝ սեր, այս համոզմունքն է հնչում Ա. Չովհաննիսյանի սիրային երգերում: Սիրով է թեւածում ներկան, իմաստավորվում անցյալը: Բանաստեղծը հոգսի ու ցավի մեջ էլ խորհուրդ է տալիս չմոռանալ Աստծո ամենաթանկ պարգեւ՝ սերը: «Մարիամ» բանաստեղծության մեջ քնարական հերոսը աստվածամոր պատկերով սիրուիուն խորհուրդ է տալիս ձեռքից բաց չքոյնել առիթը, իրավունք տա, որ իհանա իրենով, քնքշագին գգվանքների մեջ առնի, գուրգուրի: Ինքնանվիրումի խոստովանությամբ նա սիրուիու առջեւ բացում է սիրտը.

Եկ դու տեղով մեկ կրակ ես բռոսոր,
Տերը այնպես է կամենում այսօր,
Որ քո բոցերում այրվեմ, մոխրանամ...
Ձեռքից բա՛ց մի թող առիթը, Մարիամ: ³⁸
(«Մարիամ»)

Միանշանակ ապրումի արտահայտություններ չեն Ա. Չովհաննիսյանի երգերը: Տարբեր առիթներով, հոգեբանական տարբեր վիճակներում իյուսված խոստովանություններ են դրանք: Բանաստեղծի քնարական հերոսը կարծես իրենն է համարում սիրո հոգսն ու ցավը: Լինում են պահեր, որ նա անձնական դրամա է ապրում, բայց այդ վիճակի մեջ չի կորցնում իրեն, ընդիհակառակը, իմաստնանում է ցավից եւ խորհուրդ տալիս մոլորվածին՝ «Կածաններից շաղոտ, Թավուտներից խոնավ, Յե-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

ռուներից աղոտ» վերադառնալ տուն: Խարված երազների երկինքներն աստղեր չեն մաղում, հարազատ օջախն է մարդուն պարգեւում սեր եւ երջանկություն: Ինչպես տեսնում ենք, Ա. Չովհաննիսյանը հավատարիմ է ժողովրդական բարոյականության առողջ նորմերին, ահա թե ինչու նա առաջին հերթին ընդգծում է հավատարմության, անմնացորդ սիրո առողջ գաղափարը.

Ծուխը երկինք հասել,
Նրես սյուն է հեռվում,-
Իմ կարոտից ասես
Այդ քո տունն է վառվում...

Յնար լիներ գայի,
Թեկուզ ծիգով վերջին,
Քեզ փրկեի՞ քո տամ
Կրակների միջից... ³⁹

(«Քեզ փրկեի»)

Երգիչը անթերի, սուրբ, չնարող սիրո ջատագովն է: Նա գտնում է, որ թափառաշրջիկ չէ սերը, բնավ, Ոչ ստրուկ իլու, այլ սրբություն է, որին պիտի երկրպագես անվերջ («Սրբություն մնա»): Յոգեկան ապրումների ցավը երգի մեջ բերելով, Արմենը իր քնարական հերոսին ներկայացնում է որպես հավատարմության խորհրդանիշ: Նրա նվիրվածությունը հպարտ ինքնազնիաբերում է: Միշտ ծարավ է, քնքշանքների կարոտ, որովհետեւ իր անքողջ եւթյունն ընծայել է դիմացինին («Իմ հայացքը»): Սաքուր ու անապական զգացմունքներով նվիրվելով Սիրուն, քնարական հերոսը նույնը պահանջում է նրանից: Նա երազում է, որ իր Սերը արարի դրախտ եւ այդ «դրախտում մի տուն... Որ չունենա դեռ ցավ»: Սերը պետք է տեղադրվի հենց այդտեղ եւ գնալով ամրապնդի տան պատերը սեփական երազով, սեփական ցա-

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Վով («Դու ինձ համար իիմա»): Բանաստեղծի համար Սերը բարի արեւ է, բայց՝ հողանյութը: Ինչպես արեւածաղիկն է միշտ թեք-վում դեպի արեւը, այդպես էլ քնարական հերոսն է պտտվում իր Սիրո շուրջը («Ին բարի արեւ»):

Սիրո հավերժությունը հավատարմության մեջ է, որ միաժամանակ գրագակցվում է վատահությամբ: Այդ երկու հասկացությունները պայմանավորված են միմյանցով: Քնարական հերոսն իրեն համեմատում է աղավնու հետ, որ ծվարել է Սիրո ափերի մեջ: Նա միաժամանակ կոչ է անում դիմացինին, որ ազատ արձակի իրեն, որովհետեւ սրված են «Թռչչը ու թեւեր, Եվ երկնքի հետ Դաշնության մեջ է» իր սլացիկ պարը: Բայց միաժամանակ նա խորհուրդ է տալիս «Մի լուսանցք բողնել, Որ եթե համկարծ երկինքը մթնի», ինքը կարողանա հետ վերադառնալ: Ի՞նչ հիմք ու հենք ունի ազատ լինելու այս ցանկությունը: Պարզ է՝ հավատարմությունը, որ հմչում է երգի վերջում.

Արձակիր դու ինձ
Եվ հիշիր նաեւ,
Որ սիրուց առաջ,
Գիտակցությունից
Առաջ էլ դեռ կար
Դավատարմության
Քնազդը մեր մեջ... ⁴⁰

(«Արձակիր դու ինձ»)

Ա. Դովիաննիսյանի սիրային երգերն այրական հավատի արտահայտություն են: Նրանցում խոսում է նաեւ կենսակործը: Արմենի քնարական հերոսը համոզված է, որ կանացի սիրութ իմաստուն է, «Եվ անսխալ է գուշակում դավը»: Նա մեղք է համարում անհավատարմության քայլը, որ ցավի պես կարող է նվալ: Այդ մեղքը ավելի է ծանրանում, եթե «Կեռու վանելով կասկած ու կս-

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Կիծ», Սերը դիմավորում է «մեծամոր վայելքով»: Մեղանչում Է քնարական հերոսը իր սխալի համար, որովհետեւ դիմացինը սիրում է անբիծ ու վեհորեն («Ի՞ն մեղքն ու ցավը»): Նեռու հեռավոր վայրեր մեկմելիս քնարական հերոսը «մնաս բարով» չի ասում Սիրուն, որովհետեւ հասկանում է անուրացության աստիճանը, համոզված է, որ երկուսինն են եւ տագնապները («Չէ որ դու գիտես»): Արմենի քնարական հերոսը սերը համարում է մի սրբություն, որի հանդեպ ինքն իրեն զգում է որպես ուխտավոր.

Թե այնպես լինի, ել չհամրուրեմ
Վարսերը քո շեկ, աչքերդ ծավի,
Տրտում հուշերս քեզ կպարուրեն,
Շոգիս կնվա պատրանքի ցավից:

Թե այնպես լինի ծեռքս երերուն
Չհասմի ել քեզ... չլինե՞ս արդեն,
Ինչպես ուխտավորն աստծոն տաճարում,
Կզամ սրտաբեկ, քեզ լո՞ւ կարոքեմ: ⁴¹

(«Ինչպես ուխտավոր»)

Սիրո երջանկությունն այնպես խորն է զգում քնարական հերոսը, որ անջատումը մահ է համարում («Եկար, խառնվեցիր»), հեռուներից վերադառնալով, նա եւ իր մեղքն է ամոքում, եւ սրտի դռները բացում Սիրո կրակի առջեւ, որ նորից ջերմանա («Երբ դառնամ հեռվից»): Քնարական հերոսը բացելով իր հոգու ծալքերը, խոստովանում է, որ իր համար երջանկության ամենամեծ զգացումը կապված է սիրո հետ, դրա համար էլ խնդրում է, որ առաջինը նա դիմավորի իրեն.

Դիմավորիր դու ինձ մեր տան շեմին

ԱԽԻՌԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Եվ բաց ճակատով արի ընդառաջ,
Կհայտնվեմ միշտ էլ իմ ծիու թամրին,
Կնետվեմ գիրկու այնպես սիրառատ: ⁴²

(«Երբ դառնամ հեռվից»)

Յավատարմության եւ երջանկության զգացումի խոստովանությունն այստեղ չի վերջակետվում: Կյանք է, չարի ու բարու պայքարը դեռ չի ավարտվել, իսկ եթե հանկարծ չվերադառնա.

Թե մնամ հանկարծ հողմերում այնքան,
Որ ճամփաս փակի բուքը կատաղի,-
Դիմավորիր իմ ծիուն այս անգամ
Իմ վերջին-վերջին արցունքով աղի... ⁴³

(«Դիմավորիր ինձ»)

Ղժվար չէ նկատել, որ քնարական հերոսը սիրածի արցունքը իրենն է համարում: Յավատարմության հիանալի զգացում եւ բանաստեղծական արտահայտություն:

Սերը Արմենի երգերում կյանքի ինաստն է: Նրա քնարական հերոսը սիրո շնչի մեջ զգում է երկինքը, այդ սիրուց են հայտնվում աստղերը: Առաջին սիրո արցունքի միջից են ծնվել պաշտելի ծաղկանց ցողն ու բույրը: Այդ սերը հայտնության է ննան.

Եվ մինչ այդ անքառ շուրթերիս վրա
Հայտնություն եղավ երգը աղբյուրի,
Դու խորհրդավոր խորհուրդը բացիր
Իմ հոգում ծագող արշալույսների... ⁴⁴

(«Առաջին սիրո արցունքի միջից»)

Սիրո ուժը կենարար է, որ ըստ քնարական հերոսի, կարիք

ԱՐՄԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

չկա խաթարել նրա ընթացքն ավելորդ վեճերով։ Այդ վեճերը նվաստացնող են, պետք է վերջ տալ դրանց։ Սերը նրա համար է, որ մարդու հոգին լցնի գարման թարմությանը, վամի մռայլ խոհերը, հեքիաթներ արարի, հավատացնի եւ թեւավորի («Խոսիր դու իմձ հետ»)։ Սերը քնարական հերոսի հոգին լցնում է աստղերով, եւ աշխարհը շնչում է սիրո երազներով։

Դամբուրեցի լուռ շուրթերն աղբյուրի,
Խլրտաց աղբյուրն իմ շուրթերի տակ,
Ու երջանկության աստղեր կաթեցին
Ալիքների մեջ...

Դամբուրեցի թաց թերթերը ծաղկանց,
Եվ նրանք մեկեն շառագունեցին,
Լսեցի սիրո շշո՞ւկը նրանց
Երազների մեջ։⁴⁵

(«Երազների մեջ»)

Ա. Դովիաննիսյանի սիրային երգերն անբիծ ու հավատարին սիրո խոստովանություններ են։ Բանաստեղծին հաջողվել է ստեղծել քնարական հերոսի մի կերպար, որի ապրումները մարդկային են, անմիջական։ Սրտաբաց է այդ հերոսը, ոչինչ չի թաքցնում շրջապատից, ազնվորեն բացում է հոգու դրները, ի ցույց դնում նրանում բուրող ծաղիկներն ու վառվող աստղերը, ժայիտներն ու արցունքները եւ ազդարարում։ Սիրո կրակից «կարող են շիկանալ անզամ ապառաժները», նրա ցողերը այնպիսին են, «Որը ընպում են լոկ... Աստվածները»։ Այդ նշանակում է, որ անբիծ սերը աստվածացնում է մարդուն։

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ բանաստեղծական ժողովածուներում կարեւոր տեղ են գրավում սիրային երգերը: Ինչպես նկատվել է, նրա սիրո քնարի ամենացայտուն հատկանիշը զգացմունքայնությունն է, սիրո խոստովանությունը, նվիրվածությունը: Դիմելով սիրած էակին, բանաստեղծը գրում է.

Ափերիս մեջ իիմա կոշտուկմեր կան, գիտես,
գիտես, իմ սրտի մեջ կոկիծմեր կան սիրո,
Դրա համար գոհ եմ, գոհ եմ ես իմ բախտից,
Որ տաճաճքով հասա արեւին, սիրուն: ⁴⁶

(«Խոստովանություն»)

Սիրո նուրբ ու անկեղծ խոստովանություններ են բանաստեղծի «Առաջվա պես ոգեւորված», «Ասում եմ», «Առու դարձա», «Մտել ես սիրտս», «Չո նասին եմ ես մտածում» եւ այլ երգեր:

Ս. Խանյանի քնարական հերոսը համոզված է, որ սերը պահանջում է ասպետականություն, որ առանց սիրո չկա երջանկություն: Սերը ծաղկաբույլ է, որ դժվար է փնջվում, այն տենչերի հյուսվածք է, հույզերի համգրվան, հոգու ծիածան: Բանաստեղծը խոստովանում է.

Կարուս ծնվում է քեզամից,
Թախիծս քեզամով մարում,
Առանց քեզ, իմ սիրտը, սիրելիս,
Ավերված մի բույն եմ համարում: ⁴⁷

1978 թ. լույս ընծայած «Լեռնային դողանջներ» գրքի մի բաժինը բանաստեղծը անվանել է «Ղողանջ սիրո»: Ընդհանրապես Ս. Խանյանին հատուկ է բանաստեղծական շարքերով հանդես գալը: Դա հնարավորություն է տալիս նրան ամբողջությամբ բացահայտելու թեման, ներկայացնելու քնարական հերոսի հոգու

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Թրթիռները: Պետք է նշել, որ խանյանց սիրային երգերում բացում է հոգու դրաները, խոստովանում անմնացորդ սիրո քաղցրությունը.

Աղաչում եմ, մի հեռանա,
Մնա մոտս,
Թող աչքերիդ թուխ շողերով
Դիմավորեմ առավոտս...⁴⁸

(«Աղաչում եմ...»)

Մեծ ու խորն է քնարական հերոսի սերը, նա ցանկանում է, որ իր սերը չմնա անպատճախան: Այս վերաբերմունքն արտահայտում է մերթ հուշի, մերթ էլ առօրյա հանդիպումի ծետով: Ըստ բանաստեղծի՝ սերը հավերժական է, հրաբորբոք, շոյող, թեւավորող: Սերը պարզեւում է կենսական խորհուրդներ, լուսավոր երազանքներ: Դրա հետ մեկտեղ խկական սերը իր ճամփան գտնում է դժվարությամբ, այն եւ՝ բերկրանք է, եւ՝ ցավ, եւ՝ հածույք է, եւ՝ խոռովը: Ամեն դեպքում սերն է կյանքին հաղորդում քաղցրության ավիշը.

Որտեղի՞ց է քո հոգու մեջ
Այդքան ավյուն, այդքան հուր:-
Թանկագինս, բարի մարդիկ
Ինձ հարցմում են ամենուր:
Եվ քոլորին ի պատասխան,
Ես քո անունն եմ տալիս,
Թեկուզ տված քո վերքերից
Մեկ-մեկ նստում եմ, լալիս:⁴⁹

(«Քո անուն»)

Սիրո թեման նոր երանգներով բացահայտվեց Ս. Խանյանի «Քո անունից» եւ «Կանաչ ծիանք» ժողովածուներում (1980,

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

1981 թթ.): Այս ժողովածուներում եւս քնարական հերոսը հաճակված է սիրելու, երազելու, իրենով իսկ կյանքը զարդարելու տենչերով: Սերն աշխարհը գեղեցիկ ու շեն պահող ուժն է: Այս գաղափարն է արտահայտված Խանյանի քառյակներից մեկում.

*Սիրողների ճամփաներում ցող ու արեւ ես եմ, ես,
Նրանց ջերմին համբույրներում դող ու արեւ ես եմ, ես,
Դազարամյա լեգենդներում դարձած հուշ ու հիշատակ,
Սերունդների սերը սմող հող ու արեւ ես եմ, ես.⁵⁰*

Փոխադարձ սիրո թեման կարեւոր տեղ է գրավում Խանյանի սիրային երգերում: Առանց սիրո՝ կյանքը ցամաքած լիճ է: Ով սիրո տեր է, նրա սիրտը նման է վառվող ջահի, նրանից կարող են ջերմանալ մարդիկ: Սերը ինքնամոռացման զօացում է: Պետք է գնահատել այն, վայելել ազնվորեն եւ անմնացորդ. միաժամանակ պետք է սերը պահպանել անբիծ, քանզի սիրուց ցաված սիրտը միշտ լացում է.

*Մի ափսեից հաց կերանք,
Ուրախ, սրտարաց կերանք,
Ասա, ո՞վ է մեղապոհ,
Բաժանվեցինք, լաց կերանք:⁵¹*

Սերը սիրում է անձնուրացություն, ինքնամոռացում: Սիրո աշխարհում երկու կողմերը պետք է հասկանան այդ ճշնարտությունը: Սերը պահպանվում է միայն ցավի փոխադարձ կրումով:

*Իմ սիրտը քեզ եմ տալիս,
Մեջնունի պես եմ տալիս,
Սիրելիս, մի վարանիր,
Ուրիշ չէ՝ ես եմ տալիս:⁵²*

Ս. Խանյանի երգերի քնարական հերոսը սիրո զգացումը

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Իհամարում է սիրտ, գիրկ, գիրք: Առանց սիրո թովչանք չեն դար-նում ոչ կյանքը, ոչ էլ կարդը.

Կյանքի հենքը սերմ է, որ կա,
Դասու գենքը սերմ է, որ կա,
Ինչ էլ ասեն, երջանկության
Ամուր հենքը սերմ է, որ կա: ⁵³

Սերը թեւավոր պիտի լինի, ինչպես Նահապետ Քուչակն է խրախուսել, սիրո տերը պետք է լինի խիզախ, չվարանի, հասնի եւ դառնա իր սիրո տերը.

Սիրո մեջ ջահեր են պետք,
Ճախրելու թեւեր են պետք,
Ամոր է թռչկոտելը,
Դամարձակ թեւել է պետք: ⁵⁴

Սերը աստվածային էություն ունի, ուստի աստվածային ներ-շնչանքի աղբյուր է.

Դագար տարվա մուսան եկել ու թառել է իմ հոգուն,
Մրտիս անմար կրակներով նա վառվել է իմ հոգում,
Ինչքան էլ որ ծիգ եմ թափում, չի հեռանում ինձանից,
Իմ առաջին սիրո նման նա փարվել է իմ հոգուն: ⁵⁵

Տիշտ է նկատել գրականագետը. «Սերը բանաստեղծի եր-ջանկության աղբյուրն է, որ գիտե վառել-վեհացնել, տանջել-սփոփել»:⁴ Որպես այդ ընդհանրացման օրինակ, բերվում է հե-տեւյալ քառյակը.

Կյանքում անթիվ աղբյուրներ կան, սիրո սուրբ ակն իմն է էլի,
Բյուր ճամփաներ-երակներ կան, սիրո երակն իմն է էլի,
Կյանքը լի է արեւմերով, խարույկներով, ծրագներով,
Կրակ էլ տան, էլի կասեմ սիրո կրակն իմն է էլի: ⁵⁶

Ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Ս. Խանյանը հրատարակեց «Կարոտի կրակներ» ժողովածուն: Դա յուրովի ընտրանի է, որ ինչ որ չափով կարող է ներկայացնել բանաստեղծի ստեղծագործական խառնվածքը՝ պոետական տարբեր հյուսվածքներով: Գրականագետ-լրագրող Վ. Աթանեսյանը գրախոսելով ժողովածուն, նկատել է. «Ս. Խանյանի «Կարոտի կրակներ» ժողովածուն շատ ներդաշնակ է հայ բանաստեղծության հոլովույթին: Արցախահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել ազգային դիմագիծը»:⁵⁸

Գրում տարբեր բնույթի երգաշարերի մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված սիրո երգաշարին՝ «Քաղցր տառապանք» խորագրով: Խոսուն վերնագիրը: Շարքի ենթարնագրային արծարծումներում երեւան է եկել Խանյանի սիրո փիլիսոփայությունը՝ ավանդական ու նոր, հանգիստ ու խենթ, խռովյալ ու նվիրված, խաղաղ ու ծարավ, երջանիկ ու չքավարարված: Բանաստեղծի սիրո զգացումները բնական են, անկեղծ, անմիջական: «Կարոտի կրակներ» հավաքածուի «Քաղցր տառապանք» շարքը վկայում է մեր այս դիտարկումը:⁵⁹

Խանյանի սիրային երգերն անմիջական են, ապրած, զգացած, տառապած սիրո աղբյուրից փնջած հյուսվածքներ: Գրականագետ Լ. Գրիգորյանը նկատել է. «Խանյանն ունի իսկական սիրո իր բանաձեռը, որը, անսխալ է մեկնաբանում մարդկային ամենավեհ զգացումը (այն հեղինակը «քաղցր տառապանք» է համարում):⁶⁰ Նոդվածագիրը որպես իր եզրակացության օրինակ, բերում է հետեւյալ քայլակը.

Թե ինչ է սերը, վիճում են անվերջ,

Ու մի համոզիչ պատասխան չկա...

Ողջ աշխարհը տես քո սիրածի մեջ,

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Իսկական սերը հենց դա է, որ կա:

Սիրո զգացումներն ու սեփական վերաբերմուճքը խանյանը ներկայացնում է անսրող, բացսիրտ, հոգերանական նրբերանգ-ներով: Տեղին է նկատված, որ Ս. Խանյանի սիրո քնարի ամենաբնորոշ հատկանիշը սիրո չխաթարված պատմության նկարագրությունն է: Սիրո առաջին շշունջներից մինչեւ արժարված տարիների ջերմությունը էջ առ էջ բացահայտված են բանաստեղծի երգերում: Այս գաղափարի հաստատում են հանդիսանում բանաստեղծի «Տարիների միջից», «Դու աստղերից ասուափի պես», «Դու ինձ համար», «Առաջին սիրո թրթռուն բառս», «Ես ծով դարձա», «Ես քեզ գտա միանգամից», «Ես քեզ չեմ փնտրել», «Մտել ես սիրտս» եւ այլ հյուսվածքներ:

Բանաստեղծը նկատում է, որ տարիների հետ հասունանում է սերը: Այս կենսափիլիսոփայության արտահայտություններ են «Սիրտս երգում է», «Սիրո պատասխան», «Թե ինար լիներ», «Քո անունը», «Առանց քո ժայիտների» եւ այլ երգեր: Բանաստեղծը ընթոստանում է սերը ժխտողների դեմ, հաստատում, որ կյանքի հավերժական ընթացքի մեջ ապրելու է անկեղծ, անձնուրաց սերը.

*Սերը հաճույք չէ միայն,
Սերը իմաստն է կյանքի,
Առանց սիրո ոչ մի մարդ
Չի հասմի իր բերկրանքին:*⁶¹

Սիրո հանդեպ եղած իր հավատամքի պոետական հյուսվածքների մի ամբողջական շարք գետեղվեց նաև «Արցախյան դողանջներ» գրքում (1991): «Ղողանջ սիրո» շարքում գետեղված սիրային երգերի փունջը, որ ստեղծվել է տարիների ընթացքում, ընդհանրության մեջ կրկին ապացուցում են բանաստեղծի

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Սիրո փիլիսոփայության ռեալիստական ապրումներն ու ռոման-տիկական երանգները: Դրանք լավատեսական են, համոզիչ, ապեկցիոնող. մի նոր դրսեւորում է «Սեր» քնարական պոեմը, որն ավարտվում է սիրո փրկիչ ուժի ընդգրկմամբ. «Տառապանքներից ծնվիր նորից-նոր, Աշխարհը փրկիր իր ճամփից մոլոր»:

Ս. Խանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ հրատարակվեց նրա «Իմ ծիածանը» ընտրանին: Մի ամբողջական շարք են կազմում գրքի սիրային բանաստեղծությունները՝ «Սիրո կրակներ» խորագրով: Հավատարիմ ստեղծագործական իր խառնվածքին, բանաստեղծը կրկին ու կրկին փառաբանում է սերը, որպես մարդու երջանկության աստվածային աղբյուր: Հոգեբանական եւ տրամաբանությունների տարբեր դրսեւորումների արտահայտություններ են այդ երգերը: Նրանցում բացահայտված են սիրո հրճվանքի ապրումը («Շրճվանք»), կորստի ցավը («Առաջին իմ բույրն էիր»), տառապյալ սրտի սպասումը («Քո նվիրած մի ժախտը»), սիրո հեքիաթի հավերժացման գաղտնիքը («Հավատում եմ...») եւ այլն: Նույնիսկ այն պահին, երբ քնարական հերոսը կորցրել է իր սերը, չի մոռանում առաջին հանդիպումը, սիրո առաջին շշումները: Բնական ու անմիջական են հնչում այս տողերը՝ ձոնված առաջին սիրո՝ Սրբուհու հիշատակին.

Արեւան ասաց.

- Քույրս ո՞ւր է,

- Ի՞նչ ես հարցնում,-

Ասի.- զո՞ւր է:

Քույրդ իր հետ

Սիրոս տարավ,

Պիտի մարեմ

Նրան ծարավ: ⁶²

Կամ՝

Իմ բախտի կամարն ես ինձ համար,

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Իմ կյանքի ամառն ես ինձ համար,

Եվ թեկուզ ինձ հետ չես, սիրելիս,

Աշխարհի աշխարհն ես ինձ համար: ⁶³

Սերը առաջին հայացքից («Առաջին հայացքից») դրժումը՝ հոգի վառող («Դրժում»), տանջելու ձգոտումը («Ինչո՞ւ»), թեթեւամտությունը սիրո աշխարհում («Զարմանք») եւ այլ մտորումներ ստացել են իրենց համոզիչ պատասխանները: Բանաստեղծը սիրո զգացումին վերաբերում է լուրջ, չի ընդունում անհաջողությունն ու անտարբերությունը.

Այնպես հեշտ ես սիրում

Եվ այնպես թեթեւ,

Որ ինձ թվում է, թե՝

Թեզ գրկել են ցավից...

Այնպես հեշտ ես սիրում

Եվ այնպես թեթեւ,

Որ թվում է՝ սերը

Դարձել է մի թիթեռ...

Տե՛ր իմ, այս ի՞նչ արիր,

Զահեր նորից վառիր,

Ո՞վ է տեսել՝ սերը

Անկրակ ու անթեւ...⁶⁴

(«Զարմանք»)

Բանաստեղծի համար սերը կյանքի զարկերակն է, աստվածային է, սակայն կոնկրետ մարդկանց թեւավորող ուժ: Սերը սպասումի հուր է («Սպասում»), հանրիպումի հրճվանք («Յանդիպում»), օջախի ճրագ («Մի թուխ աղջիկ»), թախիծը փարատելու իրեշտակ («Մենակ մի թողիր»), հիացմունքի եւ ոգեղեն երազի աղբյուր («Երամի»): Քնարական հերոսը հաճախ սիրո աշխարհում նկատում է ճակատագրի անարդարությունը, երբ սերը

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

ննում է ծարավ ու չգնահատված.

Այս, ինչ ասեմ բութք աշխարհիմ՝
Տառապանքը միշտ համբերող,
Սեկի սրտում սերն է վառում,
Սեկին տալիս բախտը բերող: ⁶⁵

Սիրային բանաստեղծությունների շարքի թարմ ու անմիջական զգացումների իմքնատիպ հյուսվածքներ են «Սիրո կրակներ», «Չո սերը», «Արեւսարի ճամփին» քնարական ասքերը: Բանաստեղծը սերը համարում է աստվածային պարգև, եւ ով հասկանում է սիրո գինը, նա իր սիրո կրակով կարող է եւ ինքը ջերմանալ, եւ ջերմացնել սրտեր («Մեղա՝մեղա», «Սիրահարնմ»):

Կարդալով Ս. Խանյանի սիրային երգերը, կրկին համոզվում ես, որ սիրով սկիզբ առած մարդկային շքերթը շարունակվում է սիրո տառապանքով ու քաղցրությամբ, որով էլ իմաստ է ստանում ապրելու ձգտումը:

Ղեռեւս իր առաջին գրքում ԱՐԿԱՌԻ ԹՈՎՍԱՍՅԱՆԸ բավականին տեղ է հատկացրել սիրային երգերին: Սերը երիտասարդ բանաստեղծի համար երջանկության զգացում է, առանց որի դատարկ, անիմաստ է նույնիսկ բնությունը: Աղջիկն ըստ բանաստեղծի աստղ է, երգի աղբյուր.

Աղջիկները քայլում են մայթերով
Մայթերը թվում են ստեղներ,
Նվազում են քայլերը մայթերով՝

ԱԽԻՌԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

ԴԱՅՈՒՄ ԵՆ ԵՐԳԵՐ...⁶⁶

(«Անվերնագիր»)

Քանի գնում, սիրո երգերն ավելի կոնկրետ են դառնում, քնարական հերոսի խոսքը մատնանշում է հասցեն, անմիջականությունը վարակում է ընթերցողին: Դիմելով իր սիրած էակին, քնարական հերոսը հիշեցնում է իր կարոտը, խելառ հոգին, խոստովանում, «Որ մայթերն էլ քո մասին են ինձ երգ շրջում» («Միթե...», էջ 26): Սիրո մեջ քնարական հերոսը ամբողջությամբ դառնում է սպասում: Սա ազմիվ ու անձնութաց սիրո խոստովանություն է, որով հրաշքներ է գործում սերը.

Կամչում եմ քեզ, կամչում եմ քեզ,
Քո քայլերի ծայնն եմ լսում,
Անձրեւային շշուկի մեջ,
Ու հավատում քո քայլերին,
Որ դու կզաս,
Սրտիս հեւող կարոտներին
Դանգստություն կպարզեւես,
Մեկ էլ մի քիչ խելոքություն
Իմ քայլերին...
Որ կարոտից լուռ այրվում են:

(«Կամչում եմ քեզ»)

Կարոտի եւ սպասումի թրթիռներ են Թովմասյանի սիրո երգերը: Կարոտսն այնքան խորն է, որ ծառերն անգամ «մեղմիկ երգեր են հյուսում» եւ հուշում, որ սերը պիտի գա («Ծառերը մեղմիկ», էջ 27): Քնարական հերոսի համար աշխարհը լցված է սիրով: Ըստ նրա, «Խոտերի շշուկը հառաջանքն է սիրո, որ մնացել է սիրահարների հանդիպման ժամից»: Դեռ ավելին.

Ծառերի ծափը՝
Զարկն է սրտերի...

ԱՐԴԻՌԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Արահետները՝
ԽԵՆԹԱԳՈՅ ԻՒՂԵՐ:
Եղի տողերը՝
Լուռ ծիծաղներ են
Աղջկա կապույտ
Ազքերից կաթող...⁶⁸

(«Խոտերի շշուկը»)

Ա. Թովմասյանը ընթերցողների հետ երկրորդ անգամ հանդիպեց «Արցախից եմ ես» ժողովածուով, 1990 թ.: Այս գրքում եւս մի առանձին բաժին են կազմում սիրային երգերը: Նշենք, որ այդ սիրային երգերի քնարական հերոսը իսկ եւ իսկ արցախից է՝ նահապետական բնակությամբ, սիրո ընկալմամբ, պահանջով ու դրսեւորմամբ: Ծշմարտությունը պահանջում է ասել, որ Ա. Թովմասյանի սիրային երգերի մեջ եղած դրամատիզմի առկայությունը հիշեցնում է Յ. Սահյանին: Իր ուսուցչի պես նրա սերը եւս անհուն է ու ջերմ, սակայն չքավարարված: Այստեղից էլ դժգոհությունը սիրած էակի հանդեպ.

Ես քեզ՝ անուշ մի սեր,
Ես քեզ՝ անուշ ծաղիկ,
Դու՝ լոկ ապտուկ դեմքի՝
Սառն ու մեռած:
Ես լոկ սիրո հուշեր,
Դու ինձ՝ միայն փշեր,
Ես լոկ լույսի աղոթք,
Դու լոկ անքուն գիշեր:
Ու չգիտեմ՝ ո՞րն է
Խորհուրդն այս կյանքի...
Ես քեզ՝ սիրո մի երգ,
Դու լոկ՝ լաց ես թողնում: ⁶⁹

(«Ես քեզ՝ անուշ մի սեր»)

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀՄԱՅՔՆ

Սահյանական այս երանգը, սակայն, Թովմայանի երգերում այնքան է կենսական, որ բանաստեղծի խոսքը չի դժգունանում մեծ պրետի ներկապանակի գույների հյուսվածքում: Նրա քնարական հերոսը իր սրտի թրթիռն է բերում՝ այսպես ասած սեփական պահանջատիրությամբ: Ձերմ ու անմնացորդ սիրողը նույնափիսի պատասխանի է սպասում: Սա է Ղժգիհության արիթը: Լեռնցի այդ սիրահարը սիրում է անձնուրաց, եւ ամենաշնչին անտարբերությունն անգամ խոցում է սիրտը, դառնացնում հոգին: Սիրած էակի «հյուսքերի հրում տապակվել» իմացող քնարական հերոսը գիտե, որ «հոգին ծաղկում է միայն, երբ որ հուզում ու երգ կա» նրա սրտում: Լեռնցու նվիրվածությամբ նա էլ օրինակ է բերում հենց լեռնաշխարհի բնության օրենքները.

*Ես ծառերին եմ երանի տվել,
Նրանք ապրում են նաեւ լեռներում,
Քարերի միջով քափանցում են խոր,
Ապրում են նրանք լեռան հավատով:*⁷⁰

(«Մի քնեցոր իմ երգին»)

«Լեռան հավատով» կոփված հերոսի համար սերը երազանքի փունջ է, որ հյուսվում է հույսից, հավատից եւ միշտ մարդուն պահում է վացքի մեջ: Նա ցանկանում է, որ սերը միշտ ժպտա իրեն եւ երգ դառնա («Իմ սերը», էջ 26): Նրա համար սերը սկսվում է առաջին հանդիպման պահից, որ չի մոռացվում երբեք, եւ քանի որ ինքը սիրում է լուրջ ու անմնացորդ, ուստի պահանջում է փոխադարձ զգացումը.

*Մի քիչ սեր տուր ինձ,
Տուր ու հավատա,
...Մի քիչ սեր տուր ինձ,
Ու ես կհասնեմ
Իմ երազներին:*⁷¹

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

(«Մի քիչ սեր տուր ինձ»)

Այսպես, սերը հասկացվում ու գնահատվում է եւ որպես երանկության աղբյուր, եւ երազներին հասնելու կորով, ասել է թե՝ մարտնչելու, արարելու.

*Միշտ բարձր պահիր
Չո սերը ամշեց,
Որ չմոռացվի
Գարնան օրերի
Դիշողության մեջ:
Խնդրությունը քեզ
Այնպես է սազում,
Ոնց ծաղիկմերը՝
Բացվող գարնանը:*⁷²

(«Չո սերը»)

Ուրախության թե տիսրության պահին քնարական հերոսի մտորումների եւ խոհերի աշխարհում իր սերն է: «Տիսրության մեջ էլ սպասել եմ քեզ» հանձն է առնում նա եւ բացում սիրտը: «Իմ երգերի բախիծ, ուրախություն իմ վառ» («Տիսրության մեջ», էջ 38): Այսքանից հետո կրկին ծանր ապրումների մեջ է նա եւ վճռում է այլեւս «չչշնչալ խոսքեր բարության ու խոսքեր սիրո», որովհետեւ ինչպես ինքն է խոստովանում «Իմ կանչերի մեջ հույս ջլատվեց»: Սոռացման թշնամին է քնարական հերոսը, ամբողջությամբ կարոտ է, հույս, սպասումի թրթիո.

*Ծառերը մեղմիկ
Երգեր են հյուսում...
Եվ ուրախության
Ինչ-որ թոթիո է
Երկնքից իջնում,
Լցվում իմ սիրտը,
Դուշում է օրն ինձ,*

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Որ դու պիտի գաս: ⁷³

(«Ծառերը»)

Բնության եւ սիրո միջեւ անհուն եւ աստվածային կապը Ա. Թովմասյանի երգերի մեջ պատկերվում է զգացմունքի եւ բանականության գուգորդությամբ: Խսութերի շշուկների մեջ քնարական հերոսը լսում է «հառաջանք սիրո, որ մնացել է սիրահարների հանդիպման ժամից»: Ծառերի ծափի մեջ նա լսում է «Զարկը սրտերի», իսկ «Արահետները խենթացած հուշեր են», վերջապես «Երգի տողերը լուր ծիծաղներ են աղջկա կապույտ աչքերից կաթող» («Խսութերի շշուկը», էջ 63):

Ա. Թովմասյանի սիրային բանաստեղծություններում հավատը հասնում է ինքնամոռաց նվիրվածության աստիճանի, հույս վառող ուժի, սիրո ջերմացնող լույսի: Բանաստեղծի համար սերը թեւավորելու, երջանկացնելու անսպառ աղբյուր է:

Պիտի քայլերիդ ուժ, կորով դառնամ,
Պիտի թեւերիդ խոնջանքը տանեմ,
Պիտի քո սիրո թռիչքով զգամ
Ինձ տված բախտի լուսեղեմ ափը: ⁷⁴

(«Գիտեն»)

Բանաստեղծի սիրային երգերի մեջ քնարական հերոսի անմիջական զգացմունքներն ընթերցողին հոգեհարազատ ու սրտամոտ են: Սերն է, որ կարող է խնդրություն քերել, միաժամանակ եւ տխրությունը ցրել, սիրողների հոգիներում վերածվել շոշափելի տեսիլքի, խենթացնել. «Եվ ես ուզում եմ խենթանալ կրկին, Լոկ մի հայացքից ու մի ծիծաղից...» («Եվ ես ուզում եմ...»):

Սերն արեւային ուժ ունի Ա. Թովմասյանի բանաստեղծական հյուսվածքներում: Այն մեկ անգամ այրել է սիրեցյալի սիրտը եւ նրանով ջերմանում է միշտ: Սերը արեւի համբույր ունի, ունի ժպիտ, «լեռնային գեղեցկություն»: Սերը իր հետքերով «սի-

ԱՐՄԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔՆ

րո հրաշք» է ծնում, ինչեցնում երաժշտություն ու երգ: Քնարական հերոսը չի թաքցնում սիրուց առաջ իր զգացմունքները. «Քեզմից հետո եւ իմ սրտի մեջ գրվեցին երգեր: Վերադարձրու երգերն այն նորից ու նոտագրիր» («Քեզանից հետո», էջ 79): Այդքանից հետո, միեւնույն է, բանաստեղծի համար սերը մնում է առեղծված եւ բերում է թախիծ ու լաց: Սակայն այդ լացը հուսալքումի եւ մերժումի ապրում չէ: Սերը ինչքան խորն ու մեծ է, այդքան մեծ ու խորն է նաեւ կարոտը.

*Մինչեւ առավոտ իմ երազները
Լաց էիմ լինում,
Մինչեւ առավոտ իմ երազները
Գողանում էիմ
Գաղտնիքը սիրո
Մինչեւ առավոտ կանչում էի քեզ
Սոռացության մեջ...⁷⁵*

(«Մինչեւ առավոտ»)

Ա. Թովմայանի սերը ունի հասցե: Այն եւ հողեղեն է, եւ ոգեղեն: Նրա երգերում սերը ծաղկում է «Աղջկա բույրով, Բույրով երկնքի...» («Այս արահետը», էջ 80): Բանաստեղծի պատկերացումներում սերը կարոտ է բերում, կարոտը՝ սեր: Ունանտիկական մի աշխարհ է հյուսվում նրա երգերում, որտեղ քնարական հերոսը հաճախ կարոտի եւ հուշի թեւերով որոնում է ու չի գտնում, երազում է ու չի հասնում.

*Դու լեռան ծաղկի
Ալիքվող բույր ես,
Որ կանչում ես ինձ,
Չայնդ չեմ լսում:
Դու լուսի կարիլ,*

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՔՆ

Աչքերիս մեջ ես,
Որոնում եմ քեզ,
Սակայն չեմ գտնում: ⁷⁶

(«Դու լեռան ծաղիկ»)

Կյանքի բազմերանգ շերտերի մեջ սիրո ծարավը միշտ անհանգիստ է պահում քնարական հերոսին: Դաճախ իրար հակասող տրամադրությունների եւ ապրումների ներկայացմամբ բանաստեղծը բացում է սիրո ծփացող այն աշխարհը, որն մնում է անհասկանալի:

Ո՞վ գիտե՞՝
Աչքերիդ անհումում կորած
Աչքերս՝ կարոտից հանգած
Ինչե՞ր չտեսամ աշխարհում:
Ո՞վ գիտե՞,
Ինչե՞ր ես գտա աշխարհում,
Եվ ինչե՞ր կողորի քո մեջ...”

(«Ո՞վ գիտե»)

Սերը ինչքան էլ տանջի, չի հոգնեցնի երթեք, այն ամենամեծ ուժն է, որ քնարական հերոսին կարող է հասցնել իր երազներին: Այդ համոզմունքն է, որ բանաստեղծին տանում է խոհերի աշխարհը, դառնում խորհուրդ ու դաս՝ ուղղված սիրողներին. «Սերդ դու միշտ բարձր պահիր, բարձր լեռան ծյունի պես» (էջ 96): Ապրելով սիրո տառապանքը, բանաստեղծը վերջապես ընդհանրացնում է.

Ու ես հասկացա՞՝
Սերը սեր է լոկ
Սրտի դրորգորվ:
Իմաստում է նա,

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Ծառի, երկնքի, հողի հետ
թաքուն հաղորդակցվելով,
Երջանիկ է նա
Սրտերի քաղցր
Ու խնդրոն խաղով...⁷⁹

(«Ու ես հասկացա»)

«Զգույշ քայլեք, նարդիկ» գրքի մի զգալի բաժինը սիրային երգեր են: Անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծի նախորդ սիրային երգերի անմիջականությունը, զգացմունքայնությունն առկա են եւ այստեղ, սակայն նրանցում այժմ ընդգրկված է սիրո փիլիսոփայությունը, ասել է թե՝ հոգու եւ սրտի թրթիռները կենսափորձի հյուսվածքով դարձել են կորստի եւ հույսի, ցավի եւ վայելքի, դրժումի եւ հավատարմության երգեր: Սիրային քնարերգության մեջ մարդկային երջանկության զգացումը միանշանակ չի ներկայացվում: Սիրո իդեալը հաճախ զարնվում է իրականության պատճեներին, դառնում թախծի եւ արցունքի ակունք: Իսկ այդ թախծի պատճառը մերթ կողմերից մեկի անտարբերությունն է, մերթ հուշ դարձած առաջին սիրո կարուտը, մերթ էլ հույսի փոխվող տառապանքը: Սակայն երբեք սիրո ճանապարհին հուսալքում ու հոգնություն չի զգացվում: Բոլոր պահերին, ինչպես ներկայանում է քնարական հերոսը, ինքը հուշերի միջով «փետուրփետուր գնում» եւ մի տող է գրում երկնի վրա. «Սիրո երգի մի տողը»: Իսկ սիրո երգը, ինչպես հաստատում է բանաստեղծը, «Ճատ ինուց է գալիս... նրա տողից ասես քնքուշ լույս է կաթում»: Ըստ բանաստեղծի «Ամենաչքնաղ խոսքերն աշխարհի» սիրո խոսքերն են: Բայց, ավաղ, սիրո հետ է նաեւ տառապանքը: Այդ գիտակցումով էլ բանաստեղծը ձգտում է քավել իր մեղքերը եւ փրկել իր հոգին: Անմարդում սերդ հնարավոր չէ մոռանալ, այն դառնում է արյան կանչ, անցնում սրտի միջով, ջերմացնում հո-

ԱՐՄԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

գին ու երազը.

Ես ուխտավոր կղառնամ,
Կհեռանամ այն ամենից
Ինչ կապում է քեզ հետ...
Ես ուխտավոր կղառնամ,
Որ էլ չայրես
Դու իմ մեջ,
Որ մոռանամ քեզ հավետ:

Մոռացումի կրակով վառված, սակայն, քնարական հերոսը նորից խոստովանում է. «Ես որոնում եմ քո դարձի ճամփան»: Նա գանձեր չի պահանջում սիրուց, սիրո մի համբույրը կարող է երջանկացնել նրան:

Եվ մի համբույրից
Խենթացա հանկարծ
Ու ես վազեցի փնտրելու անհայտ հորիզոններում
Աստղերի ճամփան:
Բուռս հավաքած աստղեր սիրաբորք
Ես շաղ եմ տալիս երգիս սողերում:

Հակադիր ապրումների տրամադրությունների փնջեր են Ա. Թովմասյանի սիրային երգերը: Լինում է, երբ նրա քնարական հերոսի սիրտը մուտքի հետ լացում է եւ նա արցունքի կաթիլների մեջ տեսնում է «ձյունոտ առավոտ»: Հեռուներում անգամ սերը չի մոռացվում, բնությունը նրա անունն է շշնջում, նվում են վերքերը, եւ կարող են բուժվել միայն սիրո միջոցով: Սերը ննան դեպքում դառնում է կանչ եւ հրավիրում, որ նա վերադառնա, որովհետեւ նրա ներկայությունը լցնում է սիրտը ապրեցնող թրթիռներով.

Այնքան լավ ես ասում,

ԱՐԴԻ ՑԱՎՆ ԻՒ ՀԱՄԱՅՔ

Ասա, նորից ասա,
Արցունքներիս միջից
Թռ ծիծաղը ասա.

Իմ տխրության միջից
Խնդրությունն ասա,
Իմ բաժանման ցավից
Դանդիպելու ասա,
Ասա, նորից ասա,
Անքան լավ ես ասում:

Ա. Թովմասյանի երգերում խոսում է սերը՝ աշխարհ բերելով սիրո հետ կապված տրամադրություններն ու խոհերը: Նրա մոտ սիրո երգը դաշնում է մարդու հուզաշխարհը բացահայտող նախադրյալ, որի լինելությունը ապահովում է մարդուն մարդ պահող ավիշը: Բանաստեղծը սերը համարում է հոգեւոր լույսի աղբյուր: Սիրո թեմայի գեղարվեստական յուրացման մեջ Ա. Թովմասյանը հաստատում է սիրային քնարերգության սահմանների ընդունումը: Սերը բանաստեղծի երգերում հոգու նկարագիր ունի, սիրո գեղեցկությունը ընդգծվում է հոգու եւ մարմնի միասնության մեջ: Այն շոշափելի է՝ հողեղեն, արեւային է՝ ոգեղեն: Սերը անձնուրացության եւ նվիրվածության երանգներով հնայիչ է, որն անուր եւ հավերժող է փոխադարձ զգացմունքների ծփանքով:

Ասում եմ՝ ծանր է առանց քեզ,
Եվ օրս տխուր է առանց քեզ,
Ասում ես՝ ոչինչ, ոչինչ...
Ասում եմ՝ կարոտը խորն է,
Ասում եմ՝ կարոտը դառն է,
Ասում ես՝ ոչինչ, ոչինչ...
Իսկ երբ հեռու եմ քեզանից,
Իսկ երբ հեռու ես ինձանից...

ԱՐԴԻ ՑԱՎԱՆ ԻՒ ՀԱՄԱՅՆՔ

Դու ինչ ես ասում ինքդ քեզ:

Այդքանով հանդերձ, քնարական հերոսը չի հասկանում սիրո առեղջվածը, չի հասկանում ոչ նրա «անփույթ լրությունը... ոչ ծիծաղ տրտությունը... ոչ նրա տված խիմդն ու հոտը...»: Տրամադրության այս տարօնթացությունը քնարական հերոսի սրտի մեջ «Արցունքոտված լրություն է» դառնում, բայց էլի բարությամբ է լցնում աշխարհը: Եվ հերոսը չի հանդութում, երբ մարդիկ անտարբերություն են ցուցաբերում սիրո հանդեպ:

Մայթերի վրա սառել է ծյունն այս առաջին.

Մի աղջիկ անփույթ անցել է,

Ծաղիկները ծեռքին:

Մայթերի վրա սառել է

Անմեղ մի ծաղիկ,

Աղջիկն այս անհոգ մետել է

Սերն իր մայթերին:

Չմեռն ամեն ինչ տեսել է

Սակայն ձմեռ է, լռել է:

Ա. Թովմասյանի սիրո երգաշարի մեջ հատուկ երեւում է սիրո ճանապարհ՝ հանդիպում, հիացմունք, հրաժեշտ, կարոտ, մոռացում, ծարավ: Նա նկարագրում է եւ նվիրումի պահը («Քո հայացքը»), եւ կարոտը («Մայթերի վրա»), եւ ուշացած սերը («Սովորեցրու»), եւ հառաչանքը («Մի լուր առավոտ») եւ միշտ մնում է նվիրված, անբիծ, կարոտած երկրպագու: Այս ծփանքների մղումով էլ ծնված է բանաստեղծի սիրո հավատանքը.

Այնքան նման են

Կարոտն ու բարդին...

Երկուսն էլ իրենց

Տենչանքների մեջ

Անմար են պահում

Սիրո կրակը...

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՇԻ ԽՈՐՃՈՒՐԴԸ

Դամաշխարհային գրականության մեջ հաստատված է բնապաշտական քնարերգության կարեւորությունը մարդու հոգու աշխարհի բացահայտման եւ պատկերավոր խոսքի զարգացման բնագավառում:

Բնութագրելով Յ. Սահյանի պոեզիան, ականավոր գրականագետ Ս. Աղարաբյանը ընդգծել է. «Դամո Սահյանի բանաստեղծական տարածությունը բնությունն է, բնության հետ ու միջոցով նա լուծում է իր երկրային մտահոգությունները, բացահայտում է իր աշխարհավերաբերմունքի գույնն ու կերպը, չափն ու կշիռը»:
¹ Իսկ ակադեմիկոս Ս. Արզումանյանը գրել է. «Պոեզիայում անհատի մայր արմատների, ազգային ակունքի խնդիրը չափազանց եական է: Դամո Սահյանն իր բանաստեղծություններով ոչ թե սոսկ հիշեցնում, այլ ուղղակի տեղափոխում է մեզ այն վայրերը, ուր ամցել են մանկության տարիները, որտեղից բացվել են լայն հեռաստաններ՝ դեպի աշխարհ, դեպի մեծ կյանքը... Յ. Սահյանի պոեզիայում բնապատկերներն ու պատկեր-զգացումները ծփանք են տալիս ազգային ինքնատիպ երանգներով, բնաշխարհին հատուկ գունային հարուստ նրբերանգներով»:²

20-րդ դարի երկրորդ կեսի հայ բնապաշտական քնարերգության բոլոր ներկայացուցիչները լուրջ ուշադրություն են դարձրել բնության լեզվով մարդու սրտի հետ խոսելու հնարանքին, որին հետեւել են նաև Արցախի պոետները: Նրանք ամեն կերպ ձգտել են բանաստեղծական իրենց հունձքը կապել Զայց Արե-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

Իեկից կողմանց գեղեցկությունների եւ նրա մարդկանց հոգսերի ու ակնկալությունների հետ:

* * *

ԲՈԳՈԱՆ ԶԱՆՅԱՆԻ ԱԿԱՐԱԳՐԱԾ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՍՏՔԻ-ԳԼՈՒԽ ԱՐՁԱԽՄԱՆ է: Ծանոթանալով նրա քնապաշտական քնարերգությանը, քո տեսածին ավելանում են նոր գույներ, եւ հոգուդ խորքում ծփում են այն անտառները, որոնց մեջ դեռևս չեն ջնջվել ոտնահետքերդ եւ չեն մարել մանկության կանչերդ: Բնապաշտական քնարերգության մեջ նա հոգեւոր հաղորդակցման ճանապարհ է ընտրել կանաչ ծփանքը, որի բանաստեղծականացման միջոցով էլ ընդգծվում են յուրահատուկ ընկալումներն ու հայացքը: Նշել ենք, որ Զանյանը հակում ունի դեպի պոեզիայի քնաշխարհիկ ծյուղը: Դա առավել ընդգծվում է այն երգերում, ուր քնարական հերոսն ու բնությունը հանդես են բերվում միահյուսված, միաձույլ: Զանյանի ամտառերգության մեջ բարախում է հայրենիքի սիրով տրուիոդ, նրա կորուստներով տազմապած, վերընճյուղումներով հուսավառ մի սիրտ, որ մտահոգված է օօախ կոչվածի հավիտենության համար: Անտառը կանչ է պոետի երգերում, նրա ծառերից ժպտում են հարազատներ, կորած ու հայտնաբերվելիք թթիւններ, կարոտներ ու հույսեր: Զանյանն այդ լիքը անտառի ծնունդն է, օրիներգուն ու պահապանը, գեղեցկությունների իմաստը աշխարհին ու մարդկանց հասցնող գուսանը: Նրա պատկերած անտառը Արցախի պատմության եւ բնության գեղարվեստական խորհրդանշն է: Անտառը լրության պահին անգամ խոսում է, դրանով է բացատրում բանաստեղծը, որ «Անտառ մտնելիս դու էլ ես լրում»: Անտառի ծառերը շշուկով են խոսում միմյանց հետ, «Ծառերն իրարից խոսք չունեն գաղտնի, եվ իրարից էլ գաղտնիք չեն պահում»: Ի՞նչ է սա՝ բնագուշա-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԽՀԻ ԽՈԽՀԱՌՈՒՐՈՒ

Կի երեւակայությո՞ւն, թե՞ ժողովրդի պատմությունն անտառի օրինակով կարդացող ինաստունի խորհուրդ: Վերջին հար

ցադրումի օգտին է խոսում պոետական ընդհանրացումներից մեկը.

Անտառը խորո՞ւնկ, խորունկ է լրում
Եվ լրւ է խոսում անտառը խոհուն:
Չողմե՞ր,
Խնայեք ու մի՛ խանգարեք
Մեծ լրությունը այս մեծ անտառի...³

(«Անտառը լրում է»)

Անտառի մեջ կան եւ ծառերից կախված մշուշներ, եւ տերեւների չափ ու տերեւների մեջ բարախող սրտեր, «մեռած հավքեր... ու մեռած երգեր, Որոնց զարկել է ինչ-որ կույր քամի»: Այդ ամենն արցախյան հավիտենության ընթացքի հետ կապված հոլվումներ են: Բնաշխարհի բնարերգությունը դառնում է արցախյիների ճակատագրերի նկարագիր: Անտառի կրած դարավոր հարվածներն ասես անտեսանելի ուժգնությամբ խոցում են նրա բանաստեղծ որդու սիրտը: Ցավը եւ սփոփանքը գուգորդված մտնում են երգի մեջ: Նա մեկ ցավում է, երբ նկատում է, որ «Զայներ չեն լսվում աշնան անտառում» եւ մեկ էլ սփոփովում է, որ «... Տիսուր, սակայն հպարտ է տանում Եվ տիսրությունն իր, եւ մենությունը»: Սա հենց արցախյան բնաշխարհի, Արցախի լինելության գաղտնիքն է: Եվ երբ այդ ամենին բանաստեղծն ավելացնում է կենսագրություն ունեցող արահետների թրթողը, ինքո էլ միանում ես այդ արահետին եւ քայլում դեպի անտառի գիրկը, ուր ողջունում են քեզ ծառերը, որպես «Մտերիմներ... հին, անդավաճան, անչար»: Այստեղ մենակ չես զգում քեզ, ձուլվում ես անտառին եւ դառնում նրա անունից խոսող նվիրյալ զա-

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Վակը: Անտառի պատկերով երգից-երգ ընդգծվում է անհատի եւ ժողովրդի անխախտ կապի փորձված ու հաստատված իմաստը: Ապրում է անտառը՝ ժողովուրոն է ապրում իր առօրյա հոգեբով, մահվան ու ծննդի օրենքներով, կորուստների ու լրացումների հավերժածութ ընթացքով: Այս կենսափիլխոփայությունից ել-նելով, բանաստեղծը խորիրոշածում է.

Ինձ համար, գիտե՞ք, ծառը գարունքին
Թովող բույր չունի եւ հմայք չունի,
Թե որ իր ծաղկող, կանաչող ծյուղին
Բույն չունի հավքի, երգող հավք չունի:⁴

(«Ինձ համար»)

Անտառը հավերժական իր ծփանքներով ու կանաչ սարերով, մրգաբեր ծառերով ու թավշյա ծորերով, մակընթացություններով ու տեղատվություններով Արցախի դարավոր ընթացքի ռեալիստական պատկերն է: Այդ պատկերը աշխարհագրության սահմաններից դուրս է գալիս եւ ներկայանում որպես մարդու եւ բնության միասնության ճշմարիտ պատում, ծննդավայրից վերածվում է հայրենիքի համայնապատկերի, որին ծառայում են բոլորը եւ ամեն ինչ: Միայնակ մի ծառ կանգնել է անտառի կողքին, որպեսզի «ամեն մի հարված միշտ նրան հասնի»: Եվ ծառը «ոտից գլուխ վերքերի մեջ», հողմածեծ, կանգնած է ամուր ու կանաչ: Գաղտնի՞քը: Ոչ մի գաղտնիք էլ չկա: Ծառը անտառից դուրս է, բայց անտառի հետ է, նրանով է զորավոր, նրանով է բեղուն («Միայնակ ծառը»):

Բ. Զանյանը բնաշխարհի հետ գրուցում է որպես հարազատ եւ ծգտում է նրա բարենմասնությունների մեջ տեսմել իր ժամանակակցին: Բնության երեսույթները գուգորդվում են քնարական հերոսի հոգեւոր աշխարհին: «Ծառեր» բանաստեղծության մեջ երգիչն ինքն է ուզում խոնարհվել անտառի առաջ, որովհետեւ

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

Անտառի ծառերն են քանդակում գարուն եւ ամառ, «Եվ ամեն զի եղանակին սիրառատ» եւ առատաձեռն ողջունում այցի եկած զավակին, պարզեւում հրճվանք ու երգ: Անտառի ծառերը երբեք չեն առնում, պարզեւում են «Բաց, անսքող» զոհաբերումով: Այս զրոյցի միջոցով հայտնաբերվում է քնարական հերոսի նվիրվածությունն անտառի ծառերին.

Դուք ողջ սեր եք,
Սիայն սեր եք
Եվ ծեզ միայն պիտի սիրել,
Եվ սովորել ծեզնից միայն,
Թե ինչպես են լինում սիրուն հավատարիմ,
Թե ինչպես են հանուն սիրո
Ոտքի վրա: ⁵

(«Ծառեր»)

Անտառը եւ ծառերը այնքան են նման ժողովրդին եւ անհատներին, որ հոգու աչքերով տեսնում են նրանց արենակցական կապը: Ժողովրդական աշխարհընկալման փորձն այստեղ դրսեւորվում է մարդու եւ բնության ծագումնաբանության փիլիսոփայությամբ: Այլապես ծառերը չեն լսի հավերի երգը, չեն ծափահարի, կացնի հարվածից չեն սարսաւ եւ չեն դիմի աշխարհին. «Մի՛ լռեք, մարդիկ, երբ մոտենում է մեզ ծառասպանը» («Ծառերը խուլ չեն»): Ծառերը անքուն են երազների մեջ, «Եթե հանկարծ մի թռչնակ» հայտնվի եւ սուլի «Երգը գարնանային», «ծառերը քամու աղմուկի մեջ է Եվ կլսեին, եւ կարթնանային... Եվ կմտնեին մի լուսացոլք աշխարհ» («Ծառերը մերկ են»):

Անցյալի եւ ներկայի ընդգրկումների մեջ ծառի եւ բույնի գուգահեռ պատկերը Զանյանի բնապաշտական երգերում ժողովրդի հավերժությունն ապահովելու նկարագիր է: «Բույնը դատարկ է» բանաստեղծությունն ասվածի վկայությունն է: Յավքի

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐ

Դատարկ բույնը մերկացած ծառի ճյուղին երգիչը համեմատում է «սեւացած վերքի» հետ: Զագերը թեւեր են առել «Մայր հավքի տաքուկ շնչի, թեւի տակ», հետո թռել են եւ «թողել բույնը մենակ ու դատարկ»: Առեղջվածն այն, որ երեւի «Դավթն ու ծագերը թռել են, չվել» եւ մի ուրիշ երկրում նոր բույն դրել, «Իրենց հին բույնն էլ չեն մտաբերում».

Իսկ բույնը նրանց, նրանց բույնը հին
Կծկվել է, սառել մեռած հավքի պես,
Իսկ բույնը նրանց ծառի մերկ մարմնին
Սեւին է տալիս մի հին վերքի պես... ⁶

(«Բույնը դատարկ է»)

Բանաստեղծի ամտաբերգությունը հեռու է պատրանքից, այն ռեալիստական գույներով ներկայացնում է Արցախի բնության եւ արցախցու փոխհարաբերության պրոբլեմը եւ հաստատում, որ նրանք պայմանավորված են մեկը մյուսով եւ անհմաստ են առանց իրարու:

* * *

Բ. Զանյանն իր խոսքն ասում է բանաստեղծական տարրեր ծեւերով: Նրա ստեղծագործական հունձքի մի բաժինն էլ խոհական երգերն են: Այստեղ եւս բանաստեղծը ծգտում է գտնել իր ժամանակակցին հուզող այն ապրումներն ու խոհերը, որոնք հատուկ են դարաշրջանին: Դոգերանական վիճակների, կենսական մտահոգությունների, կյանքի հավերժության, մարդկային ճակատագրերի անցողիկության, անհատի տեղի ու դերի բազմաթիվ խնդիրներ են շոշափված նրա խոհական բանաստեղծություններում: Նա, հավատարիմ իր բանաստեղծական խառնվածքին, այս ոտանավորներում եւս բացահայտում է իր պատ-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Կերացումներն ու վերաբերմունքը կյանքի հանդեպ: Չենվելով իր զգացածին ու տեսածին, ելնելով իր կենսափործից, քննարկում է հայրերի ու զավակների ժառանգափոխության կարեւոր հարցը: «Մեր տան մեծերը» ոտանափորում ընդգծվում է պապերի եւ հայրերի թողած գործը շարունակելու հիմնական պրոբլեմը: «Նրանք մեր տանը լույսի փայլ էին», իսկ զավակնե՞րը: Բանաստեղծն այդ հարցին պատասխանում է վստահորեն: «Ոչ, ոչ, չեմ ասում ես որք մնացի, Պարզապես եկավ հերթը, որ լինեմ ես մեր տան մեծը»: Զավակի այս խոստովանությունը տան մեծը լինելու ուղղությամբ՝ իշխող դարնալու ցանկություն չէ, այլ պատասխանատվության խորին զգացումի արտահայտություն: Մարդն անցողիկ է, կյանքը՝ հավերժական: Ժողովրդական կենսափիլիսոփայական այս զգացողությունը հուզել է շատ բանաստեղծների, եւ յուրաքանչյուրը զգտել է բացատրել այդ առեղծվածը: Բ. Զանյանն այս հարցին պատասխանելիս ի հայտ է բերել կյանքի հավիտենության յուրովի ընկալման եւ բանաստեղծական լուծնան իր կարողությունը.

Այս աշխարհը իրար տալով մենք գնում ենք,
Ուրախ գալիս, ախ ու լալով մենք գնում ենք,
Մանցողին լաց թողմելով մենք գնում ենք,
Մենք գնում ենք, եւ աշխարհն է միայն մնում,
Աշխարհին ի՞նչ, աշխարհին միշտ մարդ է մնում...՝

(«Այս աշխարհը...»)

Խոհական բանաստեղծություններում ցուցաբերվում է երեւույթներն ու իրերը բացատրելու կոնկրետ կողմնորոշում: Գունազարդելով իրականությունը, բանաստեղծություն է բերվում կենսական ճշմարիտ գույներ: Բանաստեղծը թափանցում է իրերի էության մեջ, կատարում կարեւոր ընդհանրացումներ: Առա-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Չին հերթին Բ. Զանյանի նպատակը կյանքի իմաստը ժողովրդական տեսակետից բացատրելու ծգտումն է: Ինքնաճանաչման եւ ինքնահաստատման հաջող փորձերը տալիս են իրենց պտուղները, նրա գեղագիտական դավանանքը դաշնում է համոզիչ ու դաստիարակիչ ազդակ: Խոհական երգերում «Օրը ծնվում է լուսի պատկերով», մարդը «Ճեռքը տված հույսին արեւոտ», քայլում է օրվա միջով, եւ «Օրը չի մթնում, օրը մնում է մեր կոպերի տակ, Լուսի, արեւի զվարք պատկերով»: Այսպես անընդմեջ ու անդադար օրերը հաջորդում են միմյանց, եւ՝

Լուսը չի հատնում, լուսը տանում է,
Եվ լուսի հետ էլ գմում ենք, գմում,
Ու տեղ չենք հասնում,
Ու տեղ չենք հասնում մենք երեք, երեք:⁸

(«Օրը»)

Այսպես, քնարական հերոսի հոգու մաքրման ճանապարհը դանում է հույսերի հավերժական ընթացքի պատկեր: Զանյանի խոհերը հայ բանաստեղծի նկարագրի եւ ճակատագրի երանգներ ունեն, որոնց հենակետերը ժողովրդի դարավոր կենսափործի փեշերն են: Զգացմունքային իր բանկումներում նա հաստատում է հողեղեն եւ ոգեղեն գոյության միասնական ճշմարտությունը: Ինչի՞ մեջ է կյանքի իմաստը: Այրած տարիների թվաքանակո՞ւմ, թե՞ «աշխարհի դեմ սիրտը» վարելու մեջ, որ չի մոխրանում երեք: Այդ հարցի պատասխանը որոնվում է տարբեր խոհական երգերում: Քնարական հերոսը բացում է իր հոգու դրաները, համեմատում աշխարհի անցուդարձի հետ, «Մեկը լալիս է ցավից անջատման», «Մեկը՝ հանդիպման ուրախությունից», «Մեկը իր սերն է գրկած տանում տուն», «Մեկի սիրածին գնացքն է տանում»: Վերջապես անհատների ճակատագրերի գումարի մեջ քնարական հերոսը գտում է կյանքի զարկերակը եւ բացականչում.

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Կյանք, քո իմաստը, օրենքը հզոր
Ես այնպես պարզ եմ այստեղ հասկանում,
Մեկն ուղեցող է, մյուսը՝ ուղեւոր,
Մեկը գալիս է, մյուսը՝ գնում... ⁹

(«Կայարանում»)

Բ. Զանյանը ձգտում է ճանաչել կյանքն ու մարդուն: Ծրջապատող իրականության դրսեւորումների միջոցով նա կարդում է անգամ դաշտերի լրության լեզուն, որ խոհի եւ ապրումի խորհրդանիշ է: Նա որոնում է այն նախադրյալները, որոնցով մարդը մնում է մարդ: Ներքին մաքառումներով հայտնաբերում է քաղաքացիական շեշտեր ունեցող գույները: Ղենոկրատական աշխարհայեցողությունը նպաստում է բանաստեղծի ժողովրդական կենսափիլսովիայության եւ լեզվամտածողության դրսեւորումներին: Սյութը, լեզուն եւ ոճը միասնական ծփանք են դառնում, ապրումը դառնում է անկեղծ, խոսքն՝ առինքնող: Նարագատ մնալով ճշճարտացիության սկզբունքին, Զանյանը իր խորհրդածություններով մտածել է տալիս ընթերցողին, տանում դեպի գեղեցիկի աշխարհը, բացում «հին ու խճողված» աշխարհի դռները, ուր «Լոռությունն էլ ունի եւ լեզու, եւ բարբառ» («Դաշտերի լրությունը»): Նրա մտապատկերներում «Ամպրոպները կայծակի շեղբով Ցասումի արդար երգեր են գրում», «Եվ ձորերի մեջ Ծեղված ու բանտված Գետերը իսկույն երգերն այդ առնում, Բողոքի ահեղ շառաչ են դարձնում Շուրթերին իրենց» («Ամպրոպները»): Բնարական հերոսն այրվում-վառվում է, հապարտանում նրանով, որ մարդիկ իրենով տարվում են, հիանում իր նժոյոյգի ծառս լինելով, զենքի շառաչով, ընկերների գորությամբ: Բայց բանաստեղծական երեւակայությունը թափանցում է երեւութի խորքը, երգեր որոնում հավերժականի իմաստի

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Մեջ, տեսանելին եւ անտեսանելին ներկայացնում որպես գոյատեւման ու փառքի միաձույլ մի երակ.

Դուք ինձ տեսնում եք... այսօր եք տեսնում,
Բայց ձեր տեսածը վերջանալ է, վերջ,
Դուք ձեր տեսածին մի հավատացեք,
Չկամ, ես չկամ ձեր տեսածի մեջ: ¹⁰

(«Դուք կրակներիս մարզելն եք տեսնում»):

Բ. Զանյանը չի միջամտում մարդու բնական նկարագրին, ներկայացնում է ինչ կա: Գաղափարի բռնազբոս կնիք չկա նրա բանաստեղծական ընդհանրացումներում: Կյանքն անփոխարինելի է, բայց միաժամանակ կարոտի եւ կորստի ավիշը դառնության ու սփոփանքի զգացում է առաջացնում: Բանաստեղծին հուզում են բափուր բները, կրակի դանդաղ մարելը, շրջապատի ցրտի սաստկանալը, մոր բացակայությունը, որի շնչին քանին փոխարինել չի կարող: Այդ ամենը ցավ է ծնում, որի ցուցադրումից չի նահանջում բանաստեղծը.

Ցրտող օրերս ցուրտ ծյուն են մաղում,
Նոր ծյուն են դմում սարերիս վրա,
Ցրտող օրերս նոր ցավ են ծնում,
Նոր ցավ են դմում ցավերիս վրա... ¹¹

(«Թօան, շուտ թօան...»)

Խոհական երգերում շոշափվում են հավերժության հետ կապված մարդկային հոգեւոր շարժման երանգներն ու թրթիռները: Կյանքն ավարտվո՞ւմ է մի սերնդի հրաժեշտով, թե՞ մի ուրիշ սերունդ աստիճանաբար լրացնում է այդ բափուր տեղը: Աշնանային ծաղիկների օրինակով բանաստեղծը մեջտեղ է բերում մարդու տարիքի հետ կապված նվիրումներն ու կորուստները: Քնարական հերոսն ավելի շատ ցավում է, քան ցնծում: Ինչո՞ւ է

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

այդպես: Որովհետեւ բանաստեղծը ամեն ինչ նույնությամբ ընկալելու եւ պատկերելու սկզբունքն է ընտրել: Նա հստակ է նայում աշխարհին, բայց խոլս է տալիս երեւույթները մատների արանքով դիտելու սեթեւեթանքից: Երկրային եւ հոգեւոր ցնցումները ներկայացնում է միաձուլյ: Նկատվում է, որ քնարական հերոսը գաղնանային որոտների սիրահար է, հողի եւ գաղնանային բուրմունքի ջատագով: Եվ երբ նա գետափին չքուրող աշնանային ծաղիկներ է տեսնում, նայում դատարկված հավերերի բույնին, վշտամում է, որովհետեւ այդ ասել է թե՝ «Դավքի սեր չկա, երգող հավք չկա»: Բանաստեղծը ժխտում է այն օրը, որի «հրայրում էլ այրում չկա»: Նման դեպքում նրա համար այդին դառնում է քալանված տուն, որին հսկող աչք չկա, որտեղ «Մինչեւ լույս վառվող թեժ կրակ չկա»: Ապրումների ներքին տրամաբանությամբ բանաստեղծը լրիվ բացում է խոսքի փեշը, աշնանային այգու նկարագրությունից անցնում հայրենի գյուղի կորուստներին եւ համեմատության երանգի մեջ ընդգծում արդի կեցության ցավալի կենսափիլիսոփայությունը.

Գյուղս նայում է դիմացի ճամփին,
Ուր աղմուկ չկա, ուտնածայն չկա,
Այդ ճամփով գայխս, գմում են կրկին,
Այդ ճամփով հիմա տուն դարձող չկա: ¹²

(«Աշնանային»)

Գունային խորհրդանիշը կյանքի մասին մտորելու լայն հնարավորություններ է ընձեռում: Աշնանային գույներից անցնելով ձմեռային ճերմակի նկարագրությանը, բանաստեղծը դարձյալ մարդկային ապրումների եւ հոգսերի գորգն է փոռում: Ձմեռային միագույն համայնապատկերը ակսոսանք է առաջացնում, որովհետեւ ծյունի տակ կորչում են ճամփաները, որոնց վրայով քայլողները մոլորվում են: Մի՞թե հմայիչ չէ ճերմակ գույնը: Զա-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

Այսօր բացասական է պատասխանում բանաստեղծության ենթատեքստային այս հարցին. «Մի ճերմակով աշխարհն այնպես Եվ անգույն է, Եւ տիսուր է»: Բայց զգացողությունը դրամով չի վերջանում: Կյանքի թրիխները ջերմացնում են երգչի սիրտը, հարատելող ճանապարհը նրա հոգում առաջացնում է բերկրանքի շողեր: Եվ երբ նա ձյուների մեջ տեսնում է թռան ինքնամոռաց խաղը, իրճվանքից բացականչում է.

*Նորից իրենց տեղն են գալիս
Բոլոր գույներն աշխարհի,
Եվ տիսուրթյան ձյունը սրտիս
Դանկարծ փլչում ու հալչում է:*¹³

(«Զյունը իջնում է»)

Բ. Զանյանը խորհող քնարերու է: Իհարկե, միշտ չէ, որ նրան հաջողվում է ստեղծել խտացված գույներ, կատարել խորթյին ընդհանրացումներ, սակայն խոհական երգերի գերակշռող մասում զգացվում է նրա փիլիսոփայական շունչը: Այն կենսաթրիո է՝ ցավի զգացողությամբ, բայց ոչ ողբերգական: Նրա գեղագիտական իդեալը, որ կարեւոր է, կենսաթրիո է՝ ուղղված մարդկային կյանքը լուսավոր տեսնելու տենչով: Եթե կա կարոտ, ապա պետք է լինի նաև իրականացված իդծ, եթե կա կորուստ, ապա պետք է լինի եւ գտնում, եթե կա զոհ, մոտը լինի նաև ծնունդ: Կյանքից դժգոհությունը չէ, որ բանաստեղծի սիրտը լցվում է ցավով, այլ կյանքը ավելի լուսավոր տեսնելու ցանկությունը: Ալօրյա իրականությունը զննելով իր հոգու աչքերով, տեսնելով ստվերները եւ չարի դիմադրությունը, բանաստեղծը երգերի մեջ է ներառում հավերժության ընթացքը չարի եւ բարու հակադրությամբ: Ինչո՞ւ արտի քունը չի տանում նույնիսկ արտույտի օրորի տակ («Ամքողջ գիշերը»), ինչո՞ւ գետերը հեռուներում ծով են դառնում՝ իրենք մնալով նույնը («Ռուք անվերջ հո-

ՔՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԽՉՈՒԹՅՈՒՆ

սում»), ի՞նչ է բարձունք ու բարձրություն: Նման հարցադրումների պատասխանները հանդիս են: Զանյանի ընդհանրացումները շատ ռեաքտուալ հնչում են ժողովրդական ասացվածքի եւ առաջի խորքով.

Բարձունքի վրա կանգնելը ոչինչ,
Աշխարհին մոտիկ կանգնելն է դժվար,
Բարձունքի վրա բարձր մնալը,
Բարձունքը բարձր պահելն է դժվար... ¹⁴

(«Բարձունքին...»)

Ինչո՞վ բացատրել, որ քնարական հերոսի թախիծը չի թեահատում ընթերցողին, այլ ընդհակառակը, փոթորկում է հոգին, ծանր ու թեթև անում արածն ու չարածը, ընկերացնում թափառող տիսրությանը, առաջացնում կսկիծ եւ կյանքը հետեւում թողած անհատի խորքային ապրում: Կյա՞նքն է երազ, թե՞ երազն է կյանք, ի՞նչ պատասխանես եւ ինչպե՞ս: Անել-դնելով հանդերձ մարդու ճանապարհը դառնում է կորուստների շարան: Եվ այդ իրողությունը դառնում է ցավատանջ զգացողություն: Բանաստեղծը սկսում է մտորել, տիսրել այն պատճառով, որ «Գիշերները շատ են երկարել», «ուշ-ուշ են բացվում առավոտները», «Դին ծանոթները դարձել են քարեր» եւ «Ծատ են անծանոթ նոր ծանոթները»: Այս զգացողությունը հարցականի աչքերով տնտղում է ընթերցողին, որովհետեւ, ինչպես բանաստեղծն է հուշում, մարդու ճանապարհ անծայր չէ, հեռուները քանի գնում, այնքան մոտենում են, «նոր անունները լեզվին չեն մնում, էլի մնում են իին անունները» («Ծերություն»): Աշխարհի անցուդարձը, ծնունդն ու մահը, ապրելու տենչը, կորստի ափսոսանքը թեկվում են երգչի հոգում, դառնում մարդ-անհատի տիսրություն, ապրելու ծարավ: Եթե հնարավոր չէ իրականացնել բոլոր ձգ-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Մումները, ապա տրվածի մեջ գոնե զգալ կյանքի քաղցրությունը: Այս զգացումներն են բանաստեղծական հյուսվածքներ դարձել «Փոքրիկ իմ լճակ», «Ճանառող ձմռան», «Ես աղքատ էի», «Արեւը» եւ այլ երգերում: Զանյանի կարոտն էլ խոհական երգերում վերածվում է բնութագրող պատկերի, որտեղ նա պոետական ներկապնակից առնում է մանկության օրերի եւ հայրենի օջախի կարոտի, աշխարհի անհաստատ ու անցողիկ բռնկումների, հուշի եւ վերհուշի, ապրելու եւ արարելու ձգտումի երանգները: Այդ ամենի խոհական ճառագումով բանաստեղծի սիրտը դառնում է կարոտի աղբյուր՝ ցող ու ցոլքերի մեջ առած հոգու ցավ եւ արարելու երազ:

Ընկերներս հերթով կողքիս տապալվում են,
Ինչպես դաժան ու անողոք մահից զարկված,
Նրանց ամեն մեկի մահով քայլանվում եմ
Ու խարխվում, երերվում եմ կամաց-կամաց,
Նման քամու դեմ այն ծառին, որի կողքին
Չկան նրանք՝ իին ծառերը իր մտերին,
Եվ որի խիտ արմատները մնում են դեռ
Խառնված, փարված նրանց մեռած արմատներին: ¹⁵

(«Ընկերներիս»)

Ընդհանրացնելով բնապաշտական եւ խոհական բանաստեղծությունները, կարող ենք ընդգծել, որ Բ. Զանյանն աշխարհի ու կյանքի խորքերը տեսնող, նրանց իմաստն ու ոգին պոետական հյուսվածքների մեջ բերող բանաստեղծ է, որ հիրավի, արժանի է ուշադրության:

* * *

ԿՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ գրական հունձքի մեջ զգալի տեղ են

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

գրավում խոհական երգերը: Կարելի է ասել, որ հակիրճ գրելու ձգտումը բանաստեղծին տանում է դեպի խոհերի շրջանակները: Այդ բնագավառում իր կարողությունները բացահայտելու համար նա ընտրում է բնությունը, իր ժամանակակցի խոհերն արտահայտում հայրենի բնաշխարհի ֆոնի վրա: Այլ կերպ չի էլ լինի: Բեզլարյանն արցախյան բնօրրանի մեջ ընտրում է այն երեւությունները, այն առարկաները, որոնք հնարավորություն են տալիս ենթատեքստային բացահայտումներով ցույց տալ հայրենակիցների աշխարհընկալումն ու հարուստ կենսափորձով կոփված բնավորության գծերը: Այս առումով կարելի է ասել, որ Բեզլարյանի խոհական բնարերգության գլխավոր առարկան մարդն է եւ բնությունը: Դետամուտ լինելով իր առաջադրած սկզբունքներին, բանաստեղծը ամեն կերպ ձգտում է թափանցել իր ժամանակակցի հոգեկան աշխարհը, այնտեղից ընտրել ամենագեղեցիկն ու վեհը եւ ստեղծել խոհերի եւ ընդհանրացումների սեփական համաձուլվածքը: Իհարկե, դա ոչ միշտ է հաջողվում նրան, սակայն մեծամասամբ հասմում է նպատակին: Բանաստեղծը շատ լավ է հասկանում խոհական-փիլիսոփայական ժամանակական դժվարությունը: Նա սրտի դողով է գրիչ վերցնում՝ իր ուժերը փորձելու այդ բնագավառում: Դեռևս իր առաջին «Կամուրջ» գրքույկում դիմելով խավար գիշերը ցերեկող լուսերին, նա երանի է տալիս այն կայանին, որից սկիզբ են առնում լույսերը:

Այս մտորումը պատահաբար չի ծնվել: Ծանոթ լինելով հայդասական պոեզիայի ներկայացուցիչների խոհա-փիլիսոփայական ստեղծագործություններին, Բեզլարյանը բանաստեղծական արվեստի հարցի լուծումը հեշտ չի համարում: Նա ձգտում է իր համեստ լուման բերել մեր հարուստ բնարերգության մեջ:

Իր խոհական երգերում Բեզլարյանը ձգտում է ժամանա-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Կակցին մոտեցնել իրականությանը, նրա մեջ արթնացնել մարդկայինը, բարձրացնել, հարստացնել նրա հոգեկան, բարոյական, մտավոր աշխարհը։ Իսկ դրա փոխարեն ինչպես էր ներկայացվում մարդը 20-50-ական թթ. խորհրդային պոեզիայում։ Գրականացետ Ս. Սողոմոնյանի ճիշտ բնութագրմամբ, «հոգեկան, մտավոր հարստության տեր» տեսնում էինք «փրում խրտվիլակ», իսկ «բարդ», հակասական հուզաշխարհի փոխարեն՝ հռետորական աղմուկը»։¹⁶

50-ական թվականների երկրորդ կեսից Պ. Սեւակը, Դ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Վ. Դավթյանը, Դ. Չովհաննիսյանը, Ս. Մարգարյանը հեղաշրջում կատարեցին մեր պոեզիայում։ Նրանք գնացին դեպի բնության գույներն ու մարդու ապրումները։ Եվ հենց այդ բեկումնային շրջանում Արցախում գրական ասպարեզ իջան Գ. Գաբրիելյանը, Ա. Չովհաննիսյանը, Դ. Բեգլարյանը եւ ուրիշներ, մեկ տասնամյակ հետո՝ Վ. Զակորյանը, որոնք միասին նոր որակ ստեղծեցին լեռնաշխարհի քնարերգության մեջ։ Դ. Բեգլարյանը երազում էր վերծանել պոեզիայի եւ մարդու փոխհարաբերության հարցը։ Նրա բանաստեղծական խառնվածքը առաջին հերթին տարավ դեպի բնություն։ Այստեղից էլ՝ նրա նուրբ զգացողությունը բնության երեւոյթների համեմատ։ «Լեռնային աղբյուր» ժողովածուում կարդում ենք.

Չգիտեմ իմու իմծ թվում է, թե
Ամեն աշնան հետ
Ինծ պես խորհում են, թախծում են
Ինծ պես
Սար, անտառ ու գետ։¹⁷

(«Չգիտեմ»)

Բեգլարյանն իր խոհական երգերում իմաստավորում է բնությունը, մարդու ձեռքից բռնած, տանում դեպի այդ հրաշք աշ-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

Խսարհը, մատնացույց անում այնպիսի երեւույթներ, որոնք բանալի են հասարակական, բարոյական պրոբլեմները բացատրելու համար: Նրա ստեղծած պատկերի մեջ արժարժվում են մարդկային գործունեության ոլորտները, աշխարհը տեսնելու եւ զնահատելու նրա կուտակումներն ու բացթողումները.

Քարն, ասում են, քար է միայն,
Երբ նստում է մարդու սրտին,
Երբ նրա տակ համր ու ունայն
Սարդն է հանգչում հավերժագիմ:
Բայց այստեղ էլ բառն է խոսում
Փորագրված նրա վրա,
Ա՞յս, էլ իմչո՞ւ քար են ասում
Երբ դարերի լեզուն է նա: ¹⁸

(«Քարը»)

Բնությունը դասագիրք է նաեւ իր՝ բանաստեղծի համար: Բեգլարյանը քարոզողի դիրք չի ընդունում: Որպես քնարական հերոս, ինըն էլ է մասնակցում բնության առեղծվածների բացահայտման ընթացքին: Որեւէ խնդիր լուծելու համար բանաստեղծը մթնոլորտ է ստեղծում, զնոնում իրերի ու երեւույթների եռյունը, մատը դնում բնության զարկերակի վրա, գտնում իրեն հուզող նրբերանգը, խոհ դարձնում, դարձնում խորհուրդը: Դիտելով մաքուր ու անբիծ լեռան աղբյուրը, որ ծնվում է ծյունաթույր աճապից եւ կարկաչում քարափի տակ, բանաստեղծը դիմում է իր երգին: «Սարի սրինգ է աղբյուրը լեռան, Երգ իմ, դու Ե՞րբ ես հասնելու նրան»:

Դ. Բեգլարյանը կարողանում է տեսմել բնապատկերի հմայքը, ընդգծել նրա այն երանգը, որ կենսական մեծ նշանակություն ունի մարդկային արարքները զնահատելու համար: Ժողովուրդը դարերի ճանապարհ է անցել: Եղել են ուժեղ անհատներ, որոնք մարտիրոսվել են քաջաբար՝ բացելով սերունդների դժվարագնա

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Ճանապարհը: Բնական է նաեւ, որ ննան անհատներն են առաջին հերթին իրենց կրծքի վրա ընդունել չար ուժերի հարվածները: Կարծես հենց այդ հարցին է պատասխանում բանաստեղծը հետեւալ պատկերում. «Ամպը որոտաց, եւ շանթն ահարկու Տապալեց կաղնուն, Բայց ինչո՞ւ կաղնուն, չէ՞ որ անտառում Շատ ծառեր կային... Կաղնու մեջ հզոր պողպատի ուժ կա Եվ ձգողություն, Դրա համար է կայծակին ձգում Դարավոր կաղնին» («Ամպը որոտաց»):

Դիտելով բնության երեւույթները, Բեգլարյանը ստեղծում է պատկերներ, որոնք հուզական տրամադրություններ են առաջացնում ընթերցողների մեջ: Ընթերցողը ծանոթանալով դրանց, մտորում է կյանքի, մարդու կարուտների, բաժանումների եւ հանդիպումների, տվյալանքների եւ ուրախությունների մասին:

Ուստի մեծ քննադատ Բելինսկին բոլոր ժամանակների համար ընդհանրացրել է. «Բանաստեղծի ամբողջ արվեստը պետք է կայանա նրանում, որ կանգնեցնի ընթերցողին այնպիսի տեսանկյունի վրա, որտեղից երեւա համայն բնությունը՝ հապավված, փոքրածավալ, ինչպես երկրագունդը քարտեզի վրա, որպեսզի զգացնել տա ընթերցողին այդ կյանքի հովերը, շումչը, որը կենդանություն է տալիս տիեզերքին, հաղորդի նրա հոգուն կրակը, որը ջերմացնում է այն: Իսկ նրբագեղության հաճույքը պետք է կայանա մի պահ մեր ես-ի մոռացման մեջ, բնության ընդիանուր կյանքը իրականորեն զգալու մեջ, եւ բանաստեղծը միշտ կիասնի այդ հիանալի նպատակին, եթե նրա ստեղծագործությունը վսեմ մտքի եւ ջերմ զգացմունքի արդյունք է, եթե այն անկաշկանդ ու ազատորեն բխել է նրա հոգուց»:¹⁹

Իր ստեղծագործական ուժերը ներածին չափ Դ. Բեգլարյանը մերվում է բնությանը եւ իր ապրումները բխեցնում հոգուց՝ ձգտելով իմաստ հաղորդել երեւույթներին:

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Այստեղ եւ ծաղիկները, եւ հավերը, եւ ջրերն ու արեւը կենդանի կերպարներ են, որ ընթերցողի առջեւ ներկայանում են որպես մարդկային կարուտի, հրամեշտի ծանրություն, հանդիպման հաճույքի խորհրդանշեր:

Դ. Բեգլարյանը իր խոհական պատկերներում արտահայտում է զգացմունքներ, որոնք հիւզում են մարդկանց: Անբռնազբոսիկ են նրա պատկերները: Դետեւելով երեւությների բնական ընթացքին, որոնելով խոհական ընդհանրացումներ ընձեռող գույներ, բանաստեղծը իմաստավորում է դրանք: Պահպանելով բնապատկերի հենքը, նա ընդգծում է երգի ընդհանրացումը, որի հետ սերտորեն կապված է ենթատերստային իմաստը: «Աշուն Ե» ուսանավորի մեջ ներկայացվում են տերեւաթափ ծառերը, որի պատճառով հառաջում է մեծ անտառը, լալիս: Սակայն անտառում հար դալար է մնում եղեւնին: Այս պատկերին հետեւում է բանաստեղծի հարցադրումը, որի հասարակական արժեքը բացահայտվում է ինքնըստինքյան.

Ու չգիտեմ, չեմ հասկանում՝
Դրա համար
Դժքա՞խտ է նա, թե՞ բախտավոր,
Որ ոչ թախիծն ունի աշնան,
Ոչ զարթոնքի բերկրամքը խոր՝
Գալիք գարնան: ²⁰՝
(«Աշուն Ե»)

Բեգլարյանը իր խոհական բանաստեղծություններում ենթատեքստի վերծանումը թողնում է ընթերցողին, չի միջամտում, չի շատախսուում, խոսքի մեջ Ժլատ է. դրա հաշվին պատկերը կենսական խորը ունի, որովհետեւ պոետական մտահղացման սլաքն ուղղված է մարդկային արարքների գնահատանքին.

Սեւերես ամպը,
Որ միշտ ծածկում է

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Դեմքը արեւի,
Լոկ արեւով է
Գեղեցիկ էլի...²¹

(«Սեւերնս ամպը»)

Դ. Բեգլարյանի քնարական հերոսը բարի է, առաքինի: Նրա խոհերում մարմին առած բնությունը թրթռացող սիրտ ունի, գիտե վշտանալ, լացել, երջանկանալ, խորհել, երգել: Մի խոսքով, բնությունը մի հայելի է, որի մեջ արտացոլված է կյանքը, որից իր թեմաներն է առնում բանաստեղծը: Ընթերցողը հավատում է Բեգլարյանին, որովհետեւ նա փառաբանում է բնության սրտի մաքրությունը, գեղեցկությունը, ազնվությունը, կյանքը ուսկե-վարս պահելու նրա անսպառ ուժը: Բանաստեղծի խոհերում Արեւը հերիաթասաց է, հասկերը՝ իրենց բարությունը հաճույքով հաստատող ծփանք.

Արեւն աշխարհին
Դեքիաթ է պատմում,
- Ամեն հասկի մեջ
Մի բուռ ուսկի կա,
- Կա՞-, շնչում են
Դասկերը արտում,
Եվ գլխով անում...
Դասկերն արեւի
Խոսքն են հաստատում...²²

(«Արեւն աշխարհին»)

Մարդկային մտորումների մի հյուսվածք է Բեգլարյանի խոհական երգերի շարքը: Նրա արտահայտած գաղափարները տարրալուծված են պատկերների մեջ: Անհատը իր տարբեր վիճակներում բացահայտված է բնության միջոցով: Բանաստեղծին հուզում են կյանքի բոլոր իրադարձությունները, մարդկանց արարքները, բարության հաղթարշավն ու չարության սանձար-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՀԱՄԻՐԴԻ

Ճակությունը, լույսի եւ ստվերի հակադրությունը.

Լույսով են ծնվում,
Լույսով են սնվում
Ստվերները,
Լույսով են հառնում
Լույսով են երկարում,
Բայց լինում է եւ
Լույսով են մեռնում
Ստվերները: ²³

(«Լույսով են ծնվում»)

Պատկերելով բնությունը, Ռ. Բեգլարյանը խորհրդածում է մարդկային ճակատագրերի մասին: Նա մերթ տագնապում է, մերթ հուսաղրում իրեն, մերթ ժխտում, մերթ հաստատում, մերթ խարազանում է, մերթ փառաքանում: Նա երազում է խոսքով ու գործով դաշնություն ունեցող քաղաքացու լինելությունը: Նա երբեք իր այդ պահանջները չի ընդգծում, չի բացատրում, պատրաստ ձեւով ընթերցողին ոչինչ չի մատուցում: Ստեղծում է պատկերը եւ ամեն ինչ բողնում նրան:

Բնությունն իր ամբողջության մեջ շնչավորելու ձգտումը նոր կողմերով բացահայտվեց Բեգլարյանի «Արեւային հնձաններ», «Գետերը չեն հոգնում», «Ղրաշք երկիր իմ Ղարաբաղ» ժողովածուներում: Բնությունը ներկայացնելով շարժման մեջ, բափանցելով նրա խորքերը, բանաստեղծը մարդկային հոգու եւ մտքի նոր զարկերակներ գտավ: Արցախ աշխարհի գրավիչ տեսարանները ծառայեցնելով հասարակական-մարդկային արժեքների բացահայտմանը, երգիչը ավելի հնչեղ դարձրեց իր պետական խոսքը: Նա պարտք չի մնում մայրենի բնության ճոխությանը: Նրա խոհական երգերում լեզու առած խոսում են Մռովն ու Քիրսը, Թարթառն ու Եշխանագետը, բոլոր հայտնի ու

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐՈՒ

անանուն առուներն ու աղբյուրները, փոքրիկ Արցախի մեջ երկինքն ու ընդարձակ հորիզոնները, որոնք միասին գալիս են ընդգծելու իրենց հավերժ պահող ու պաշտպանող, իրենց վեհությունն ու հմայքն ունեցող արցախցու հոգու հարստությունը։ Բանաստեղծի զգացողությամբ Արցախի ծառերն էլ ունեն սիրտ ու հոգի։

Բնությունը պատկերող երգերում Յ. Բեգլարյանը բնությունից մտնում է կյանք, կյանքից՝ բնություն։ Պետք է նշել, որ ինչպես կյանքն է անհանգիստ ու հակասական, լուսավոր ու ստվերոտ, բացահայտ եւ առեղծվածային, այնպես էլ բնությունն է բանաստեղծի երգերում։ Չողմը չարության մետաֆորն է, կյածակը՝ ահեղ պայքարի, ցուրտը՝ դժվարության, ծաղիկը՝ բարության եւ այլն, եւ այլն։ Կյանքին հատուկ է ծնունդն ու մակը։ Բնության օրենքները եւս նույնն են։ Այդ ամենի ընթացքի մեջ բանաստեղծը խորիրդածում է, որոնում, գտնում, խորհում, փիլիսոփայում, եւ նրա հոգում երկու դեպքում էլ ծածանվում է սիրո եւ մերժումի, տագնաաի եւ հաճույքի, կորստի եւ ծեռքբերումի ծփանքը։ Լինում է, երբ բանաստեղծը հարցադրում է եւ պատասխանում՝ բնության մեջ ընդգծելով երկունքի եւ արարումի վեհությունը։

Սարդկային հաճույքի ակունքը կյանքին նրա նվիրածն է, դրածն ու թողածը, հուշն ու հիշատակը։ Բանաստեղծը, մտորելով կենսական այս խորիրդի շուրջ, արծարծում է արարման գաղափարը, խարազանում տվածը հետ պահանջելու, իր համար ապրելու ձգտումը։ Նրա երգերի պատկերային հյուսվածքներում նման դեպքում էլ քնարական հերոսի տրամադրություններն են բացահայտվում։

Ինչո՞ւ տեղից աշնան քամին,
Առաջ ոսկե մի տերեւ,

ՔՆԱՌԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԹԻԴԻ

Բերել, նետել իմ սեղանին,
Ինքը հեռուն է թեւել:

Դիմա եկել այս ուշ ժամին
Ծեծում է դուռ, պատուհան,
Ետ է ուզում տվածը իր,
Այս խելառն ու ավարան:²⁴

(«Ինչ-որ տեղից»)

Բանաստեղծը քաղցր ու հաճելի ապրումներ է ունենում՝ տեսնելով բնության երեւույթները, նրանք համեմատելով քնարական հերոսի արած ու դրածի հետ: Բազմերանգ ծփանքներով մերթ գարունն է շռայրում իր ստեղծածը, մերթ էլ՝ աշունը, մերթ ծաղկած լանջերն են բուրում աստղերի դեմ, մերթ՝ բերքով ծանրաբեռնված աշնանային ծառերը, եւ բանաստեղծի սիրտը լցվում է սիրով ու երանությամբ: Բնությունը լեզու ունի, խոհ ու երգ ունի, դրանք պետք է կարդալ նրա ընծայած գեղեցկությունների մեջ: «Աշնան հետ» գողտրիկ բանաստեղծության մեջ քնարական հերոսը հոգով հաշտվում է աշնան հետ, որովհետեւ այն նման է վաստակաշատ ծերունու, ոչինչ չի տանում իր հետ, իր հետեւում թողնում է միայն գարուններ:

Բնության երեւույթներում տեսնելով մարդկային կյանքին հատուկ դրսեւորումներ, Բեզգարյանը շատ պրոբլեմներ է քննարկում: Մի դեպքում նա հիանում է վաստակաշատ աշնան շռայլումներով, մյուս դեպքում չի հասկանում, թե ինչու անպը կարկուտ է բերում, բերում է ցուրտ ու հողմ, ինչու է ահեղածայն գոչում-գոռում, «Երբ որ գիտե կաթիլ-կաթիլ նստել հանդին», մաքրել «փոշին ծաղիկների, փարվել սարին, ծաղկին, ծաղին»: Բանաստեղծը ատում է բամբասանքը, սադրանքը, կեղծիքը, չարախոսությունը: «Դանգիստ չէր տալիս» երգում պատկերվում է, թե ինչպես շատախոս քամին հանգիստ չէր թողնում դարավոր

ԹՆԱՌԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԹԻԴԻ

Կաղնում, ամեն օր խլում էր նրա քունը, բամբասում.

Եիմա էլ չկա
Անտառի հսկան,
Ու քամին եկել
Վաշ-վիշ է կանչում,
Լալիս, հառաջում...
Ինքն իր արածից
Չի էլ ամաչում:²⁵

(«Չանգիստ չեր տալիս»)

Բանաստեղծին հաջողվում է մարդու եւ բնության միջեւ դնել հավասարության նշան: Նման դեպքերում էլ բնությունը դառնում է զրուցակից, քնարական հերոսի ապրումները հաղորդելու լավագույն միջոց: Նա հպարտանում է, որ իր այգու մշակած վազերը կամաց-կամաց արթնանում են սիրո խայտանքից, ծոցվորվում, դառնում անհանգիստ, անքուն: Վազերը համեմատվում են կույս աղջիկների հետ: Սակայն դրանով չի ավարտվում պատկերը: Բանաստեղծը ստեղծում է նովելային ավարտ: Պարզվում է, որ կույս-վազերը «Ուզում են ճշալ, Քայտնել աշխարհին, Որ բողբոջների Կրծքակալները ել չեն դիմանում կարտի ցավին... («Եվ կամաց-կամաց»):

Զարմանալով եւ հիանալով բնության օրենքների ներդաշնակությամբ, Բեզլարյանը նրանց առանցքում տեսնում է մարդուն, ձգտում բացահայտել նրա հոգեկան հարստությունը: Զասու լինելով բնության եւ կյանքի հավերժությանը, բանաստեղծը միաժամանակ դեմ է առնում շատ գաղտնիքների: Այդ ինչպես է, որ ամեն տարի գարունը կրկնում է իրեն, նույն ձեւով ծաղկում, բուրում է, «բայց հրաշքով միշտ մնում նոր»: Ինչո՞ւ են կակաչները տարբերվում աղջիկներից, չէ՞ որ նրանք էլ են սիրուց հարբում, դառնում կանչ, հելք, սիրո վերք: Ինչո՞ւ բնությունը հաճախ

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

դաժան է գտնվում, ինչո՞ւ ուռենին պտուղ չի տվել, այդ չնաշ-խարհիկ «հարսի ծոցի մեջ ինչո՞ւ տաք թրթիռ, կրակ» չի դրել, ին-չո՞ւ չի ընծայել «բերկրանքը սիրո եւ մայրանալու» ցավը հաճե-լի».

Ա՞յս, գեր մի անգամ

Կարոտեր, սիրեր,

Սանուկներ պահեր,

Մանուկներ սներ,

Որ այս աշխարհին,

Այս լավ աշխարհին

Մայրական սիրո

Աչքերով մայեր...²⁶

(«Ուռենու ցավը»)

Մշակելով բնության ընկալման ու ինաստավորման իր սկզ-բունքը, Յ. Բեգլարյանն իրեն ներկայացնում է որպես խորհրդա-տու: Նրա եւ բնության մեջ հակասություններ չկան, պարզապես բարեկամներ են, որ կարող են իրար վրա ազդել, խորհրդակցել, զրուցել, մերժել, հաստատել: Այս թե ինչու նրա երգերում նարդը չի հակադրված բնությանը, ընդհակառակը, երբ հեռանում է բնու-թյունից, իրեն մենակ է զգում, անօգնական: Մի՞թե այս ելակետը չի հուշում «Ես չեմ ափսոսում» երգի գաղափարը: Բանաստեղծը չի ափսոսում այն ծաղիկներին, որ ժամանակը պոկում է, տանում, ծոլցում հողին:

Բայց, ա՞յս, ցավում եմ,

Այն ծաղիկների

Դամար եմ ցավում,

Որ հանգչում են լուռ

Բյուրեղյա, մաքուր

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Ծաղկամաններում: ²⁷

(«Ես չեմ ափսոսում»)

Քնարական հերոսը անքակտելի կապի մեջ է բնության հետ: Այդ դաշինքը կյանքի իմաստը գիտակցելու, մեկը մյուսին զննելու եւ ճանաչելու, գեղեցիկ ճանապարհ անցնելու, մարդամոտ ու մարդասեր լինելու դաշինք է: Դամոզմունքի եւ վարքագծի հաջող բանաստեղծականացնում է «Եվ աշնան կեսին» ոտանավորը: Աշնան կեսին հանկարծ ծյուն է տեղում, կռումկները դեռ չվելու ճամփա ունեն: Նրանք երկնքում աղերսում են մի ելք, մի ուղի: Այդ աղետը հանգիստ չի տալիս քնարական հերոսին: Աճքողջ գիշեր կռումկների հետ մրսում է բանաստեղծի սիրտը: Կործանվում է թռչունների երանք, բայց նա չի կարողանում «փրկել ոչ մեկին»:

Յ. Բեգլարյանի խոհական երգերը բնության եւ մարդու ներդաշնակության, կյանքի իմաստի, մարդկային բնավորության լավագույն գծերի անկեղծ գովերգություն է:

* * *

Բանաստեղծական սեփական ճանապարհ ունենալու ձգտումը ծիածանվում է ՎԱՐԴԱՆ ԴԱԿՈՐՅԱՍԻ դեռևս առաջին գրքույկում: Դա դարավոր պոեզիայի ժժվարին կեռնաններում ծնված իսկական պոետների պես նա ինքնատիպ ստեղծագործողի իր հայտը ներկայացնում է վստահորեն: Արվեստագետ քաղաքացու եւ բնության գուգահեռների միջոցով նա որոնում է մարդկանց սրտերը հասկանալու առեղծվածը:

Բնության երեւույթների մեջ գտնելով հասարակության համար անհրաժեշտ կենսական գեղեցկություններ, Վ. Դակորյանը խոհական-փիլիսոփայական իր խորհուրդներով ճակատային երթ չի կատարում: Նրա հակիրճ ու հստակ, խորը ու ծանրություն ունեցող երգերում բնությունն ինքն է ծավալվում իր խոր-

հուրդներով:

Բնապաշտական տարերքի հակոբյանական դիտարկումները դաշնում են անհատի եւ հասարակության, գործի եւ հավերժության, արդարության եւ իրականության եւ այլ պրոբլեմներ շոշափող պատկերային հյուսվածքներ: Բանաստեղծը փնտրում-գտնում է բնության առեղջվածային-խորհրդանշական երեւույթների ծալքերը բացելու իր թալիսնանը: Լեռնաշխարհի բնական գեղեցկությունների անզուգական պատկերներն այնպիսի տողերի են փոխարկվում, որ կարելի է տեսնել, զգալ, լսել դրանք: Կարդալով այդ պատկերները, մտովի տեղափոխվում ես կյանքի բարդ-պարզ, բարի-չար, հաճելի-դառն առեղջվածների հորձանուտը: Բանաստեղծի վրձնապատկերները գեղագիտական հաճույքի զգացումներից ընթերցողին տանում են դեպի մարդկային բարոյականության ու անհատի ապրումների ծալ-ծալ աշխարհը:

Կյանքի հավերժության գաղտնիքները պատկերվում են բնանկարի մքննոլորտում: Այսուեղ նոր երանգներով շարունակվում են բնապաշտական քնարերգության ավանդույթները: Վ. Դակորյանը ծնվել ու ծեւավորվել է մի այնպիսի գյուղում, որի փեշերը աստղաբույլերի շարունակությունն են, սարերը՝ առաջին սիրո նման զմայլիչ, քնության բոլոր հրաշքները խտացված են շռայլորեն: Այդ գեղեցկությունների թույրերի եւ բույրերի մի ծփանք է բանաստեղծի հոգին: Բնապատկերի մեջ նրա ազատ թեւելն ու այնտական լուծումները գրեթերից չեն զախս, իր ներաշխարհի երանգներն ու ծփանքներն ունի՝ առնված սեփական բնօրբանից:

Վ. Դակորյանը բարձ պատկերներով իմաստավորում է տիեզերքը, բնությունը: Նրանցից փոխ առած գրյուներով ասես զրուցում է բնության ու տիեզերքի հետ եւ հաստատում նրանց արարչական կարողությունն ու կյանքի հետ ունեցած անմիջական կապը: Բնության եւ մարդու, տիեզերքի եւ կյանքի ներդաշ-

Նակության վարագույրը բացելով, բանաստեղծը հասկանում է այդ օրինաչափությունների գեղեցկությունը: *Լուսին, տիեզերք, աստղեր, արեւ, բարդի, ծաղիկ եւ այլն, մարդկային կյանքի բովանդակություն են ձեռք բերում:* Բանաստեղծական մտահղացուների ընդհանուր շղթայի մեջ ներկայացվող բառ-պատկերները հաստատում են, որ բանաստեղծը մանկությունից մինչեւ հասունություն իր կրծքի տակ է առել բնության շերտերը եւ աշխարհի դեմ բացել հոգու դռները: Աշխարհին շաղուտ ու շողոտ բարձունքից է նայում բանաստեղծը, եւ նրա աչքերին ամեն ինչ երեւում է որպես աշխարհն ու կյանքը գեղեցկացնող ակունք:

Բնությունից դեպի մարդկային արարքների կոնկրետ գնահատականը բանաստեղծի մոտ տեղի է ունենում դարձյալ բնության միջոցով, եւ նրա աշխարհի սահմանները ընդգծվում են բնությունից մարդ, մարդուց բնություն եզրերով, եւ որ շատ կարեւոր է, ընդգծվում են նրա ոճը, հելացումների որսեւորման ձեւերը, նյութի եւ մտածողության ներդաշնակությունը: Այդ առումով հաջող օրինակ է «Քայլերս» բանաստեղծությունը: Քնարական հերոսը իր քայլերը համեմատում է կանաչ ձեռքերի, կանաչ երգերի, սուրբ ճշմարտության վերընճյուղումների հետ: Սակայն դրանով չի բավարարվում: Գունային համակարգից ծնվում է բանաստեղծական գյուտ-ընդիհանրացումը, որով հաստատվում է առողջ քայլերից սկիզբ առնող հավիտենության գաղափարը:

Բանաստեղծի ընդհանուր իրմվանքը կոնկրետանում է պատկեր-գգացմնինքի մեջ: Քնարական հերոսի ապրումներն ու բնության գույնները նման դեպքում վերածվում են կենսական գունախաղերի: Ծնթերցողը երգերի տողերի մեջ լսում է բնության մերեղինների եւ անհատի երազանքների համաձույլ ծայնը՝ որպես երջանկության եւ գարնան կարուի գգացում:

Բանաստեղծի երգերում իմաստավորվում են տարվա բոլոր գույնները: Դրանցից յուրաքանչյուրն օգտագործվում է կյանքի օրինաչափությունները հաստատելու միտումով: Գարնան կա-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՉՈՒԹՅՈՒՆ

րոտն զգացող երգիչը փառաբանում է աշունը, որի հայացքը նման է նուան դեմքի: Եվ աշունը հմայում է իր ժպիտներով:

Արեւային տեսիլներից Վ. Դակորյանն անդրադաշնում է մայր հողի գույներին եւ ստեղծում արեւաթույր ու հողաբույր երգերի փունչ՝ խորհրդանշելով արեւին ու հողին իմաստ տվող մարդու հոգու երանգները:

Երգչի ստեղծագործական խառնարանում շիկացած հորիցններ կան, եւ յուրաքանչյուր երեւույթի մեջ նա տեսնում է գույներ փնջելու, արեւներ երկնելու կիրքը: Ներանոսական հեռուներից մեր օրերին հասած արեւային սիրով Դակորյանն օժում է իր սիրտը, եւ երգը ննանվում է այգաբացին սարի թիկունքից ժպտացող քարմ արփիի, որ սրտեր շոյելով քարձրանում է կիզակետ եւ ջերմացնում աշխարհն ու մարդկանց: Անգամ ճայերը ծովի վրա ճախրելով, քախվելով ջրերին, ուզում են սուր կտուցներով «արեւ նորից բիլ երկինք հանել»: Մի ուրիշ դեպքում հսկա ժայռը ձմռանը հոգատար մոր պես խոնարիվում է քնած առվիմ՝ խորհելով «գարնան ու կյանքի մասին...»: Ներդաշնակ են կյանքի ու բանաստեղծության փոխհարաբերությունները: Այստեղից էլ՝ այն հավատը, որ երկիրը միակ օջախն է, ուր մարդը կարող է գտնել իր երջանկությունը, ուստի, պետք է ծառայի նրան եւ որդիաբար խոնարիվի նրա առաջ:

Վ. Դակորյանը «Սեր եւ ժպիտ» երկրորդ գրքում կրկին քնարական երանգների եւ խոհա-փիլիսոփայական մտորումների ուլորմների մեջ էր: Առաջին գրքում եղած բնության եւ մարդկային հավերժության խորհուրդները շարունակում են ծփալ նոր ժողովածուում՝ սիրո եւ երջանկության երազներով: Բանաստեղծը երգի մեջ տեսնում է մի ամբողջ տիեզերք, ուստի, գրքի հենց առաջին հյուսվածքում ընդգծում է ստեղծագործական իր հավատամքը երգի սահմանների եւ արվեստի հանդեպ:

Ժիշեռնակի բույնի նման

ՔՆԱՌԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԹԻԴԻ

Սրտի դողով,
Հոգու շողով
Ու հողով է հյուսվում երգը,
Բայց նրա մեջ
Ծվարում է... տիեզերքը: ²⁸
(«Երգը»)

Այս բանաստեղծության ընդհանուր տրամադրության մեջ երեւում է ամբողջ գոքի գույների հասարակական արժեքի եւ կենսական թրթիռների խորքը: *Սրտի, հոգու, հողի, տիեզերքի* գուգահեռներն այստեղ ձեւական թվարկումներ չեն: Դրանք, ըստ եռության, բանաստեղծի խոստովանության վկայություններն են իր երգերի տարրողության մասին: Բնության երեւույթների ոլորտում բանաստեղծը գտնում է իրեն հուզող գաղափարի խորհրդանիշը: Եվ հաճախ համեմատությունը դաշնում է ժողովրդական ասացվածքի գուգորդը, պարզապես վերածվում է թեւավոր խոսքի, որի բարոյական եւ գեղագիտական ծփանքները միաձույլ գերում են ընթերցողին, շիկացնում միտքն ու սիրտը: Ի՞նչ են արմատները եւ ինչի՞ են ծառայում: Այս հարցի պատասխանը երկմտանքի առիթ չի տալիս: Բանաստեղծի խոսքը արմատների մասին դաշնում է լուսավոր ապրումների ընդհանրացում.

Արեւահամ քաղցրությունը,
Բույրն են ըմպում նրանք հողի
Ու ծգվում են ջլերի այն,
Մեջքից ծալվում հարյուր անգամ,
Դարյուր անգամ ոլորվում են քարերի մեջ,
Որ միշտ ուղիղ ծգվի... ծառը: ²⁹

(«Արմատները»)

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Բնության պատկերներով պայմանավորվում են Վ. Ճակո-
բյանի եղբերի կառուցվածքային յուրահատկությունները։ Նա
զգացմունքը տանում է դեպի նարդկային բարենասնությունների
զնահատման ոլորտ։ Նման դեպքում ներթափանցումի ուժ են
ստանում պատկերները։ Դիմելով Արեւին, բանաստեղծը գրում է.

*Պարզապես շատ ես դու բարձր, արեւ,
Դու շատ ես մաքուր
ու անմեղ, անմեղ...
Եվ մի՛ զարմացիր,
Որ այս աշխարհում ոչ մի երկրային
Չի կարող ուղիղ աչքերիդ նայել...³⁰*

(«Արեւ»)

Մի ամբողջ լեռնաշխարհի հազարամյակների կենսասիրու-
թյունն ու կենսափորձը երգի տողեր դարձած՝ թրթռում են բա-
նաստեղծի շուրթերին։ Արցախ աշխարհի տառապանքից ու լույ-
սից ծնված խոսքը մի դեպքում հնչում է որպես օրիներո՛ ծոված
երկնքին («Երկինքն ասես հասկանում է»), մյուս դեպքում՝ հողին
ուղղված երախտագիտական խոստովանություն («Ճող»), մի ու-
րիշ դեպքում ծավալվում է՝ ինչպես կարոտի առեղծված («Մի
կարոտ կա»), իսկ մի այլ դեպքում՝ ծավալվում գարնան ծփանք-
ներով («Գարուն»).

*Ծաղկաթերթերը շուրթերին առած
Առվի հմայքը քաղցր է հիմա,
Ինչպես հայտնություն...
Առուն նվագ է դարձել մի այրող,
Նահապետ կաղնու ոսթերը ընկել,
Եվ... լրջությունը կողոցել է կաղնիմ...³¹*

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

(«Գարուն»)

Քայլ առ քայլ բանաստեղծը գնում է դեպի իրերի եւ երեւոյթների խորքը, իմաստնանում, աշխարհը ծանր ու թեթև անում, ձգտում բացել կյանքի հավերժության վարագույրները, ապրել, տառապել, խորիել, պայքարել, ծաղկել ու ծաղկեցնել: Բանաստեղծը բնության երեւոյթները կշռադատում է փիլիսոփայորեն՝ երգի ծածանումներում դարձյալ ունենալով բնությունը՝ իր հնայքներով, կենտրոնում ունենալով մարդուն: Նման մի քանի տողերից բաղկացած երգը դառնում է հակիրճության մեջ շատ բան ասող իմաստություն.

Ծառերից թափող այս տերեւմերը
Նրանց երբեմնի կանաչ օրերն են,
Որ հավաքել ու ի մի է բերել
Փողոցը ավլող մի լավ ծերումի...
Ի մի է բերել՝

Մտքով գնալով օրերը ջահել,
Եվ... ափսոսում է, չի ուզում վառել... ³²

(«Ծառերից...»)

«Իմ տան լույսը» շարքում բանաստեղծը մտորում է բնության եւ կյանքի մասին: Բնությունը նրա համար ներկայանում է որպես մարդկային արարքները, գեղեցիկի հասկացությունը, աշխարհը դալար պահող ուժի գաղտնիքները, մի խոսքով՝ բարոյականության առեղջվածային օրենքները բացահայտելու թանգարան: Աշխարհի, տիեզերքի, մարդու՝ իրարով պայմանավորված կապերը բանաստեղծը պատկերում է որպես հավերժության հիմնական շարժիչ: Այսպես, ծառը մայր հողից արեւ է առնում. ծփում եւ որպես վարձահատուց, ձգտում է «նրան պահել իր շվարի տակ» («Արեւ է առնում»), վարդերը միշտ էլ արեւ են սիրել, բայց բավական է կտրվեն հողից, իսկույն «բառամում են,

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

թոշնում... արեւից...» («Վարդերը»), անտառը որպես մարդկային կյանքի խորհրդանիշ, առաջին անգամ կարծես ուզում է ունկնդրել պոետին, որ տաքանա միայն չորուկների կրակով («Անտառ»), սգավոր հովը իրեն գլորում է անդրւնդներն ի վար, ուռենին հողի կրծքին հեկեկում է, ծնկները ծեծում, բարակ առուն նվաղում է լացից, որովհետեւ «մի ծաղիկ մարեց... ժպիտն աչքերում» («Սզավոր հովը»)... Քնարական ոճի պարզությամբ, մեկը մեկից հմայիչ, պատումի հճնավստահությամբ Հակոբյանը ցույց է տալիս աշխարհի եւ մարդու ներդաշնակությունը, կյանքի քաղցրությունը, հողի արարիչ ուժը.

Թե երգելու համար եմ ես
Աշխարհ եկել,
Թող որ կյանք ու բարիք ծնող
Դողը երգեմ,
Մերկեմ նրան՝ ջրի նման...
... Ե՞րբ է ջուրը հողում կորել,
Ջուրը հողում արարում է:

(«Թե երգելու համար...»)

Վ. Հակոբյանի բանաստեղծությունների վերոհիշյալ շարքը կարելի է անվանել խոհական-փիլիսոփայական երգերի փունջ: Այստեղ նկատվում է անձնավորման ու փոխարերության հնուտ օգտագործումը, որ բխում է ոճի բնական հյուսվածքից եւ աշխարհընկալման յուրահատկությունից: Բանաստեղծի ուսուցիչն ու հուշարարը բնությունն է, որի շշունջների մեջ նա լսում է կյանքի երգը: Նրա կենսասիրությունը վերածվում է մարդասիրության, սակայն այդ սերը ալիքվում է նրանց հանդեպ, ովքեր կարող են առաջամարտիկը դաշնալ լուսավոր կյանքի ճանապարհին.

Գարունքվա լուրը բերելու համար

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Մեր սրտին մոտ է ծյունածաղիկը,
Նույնիսկ ավելի,
Քան ծաղիկը այն,
Որ մեզ բերում է գարունը ինքը: ³⁴

(«Գարունքա լուրը»)

Կյանքի հավերժությունը մարդու գործի մեջ տեսնող բանաստեղծը հաստատում է, որ գոյություն ունի երկու կյանք, որ մահկանացուն լծվում է հավերժությանը ետմահու: Նման գաղափարն արծարծող երգերի մեջ նա դնում է իր սրտի ջերմությունը: Դեպի աշխարհն ունեցած մեծ սիրուց ու ցավից են ծնված նման երգերը: Ահավասիկ, «Ամպերը»:

Ամպերն ապրում են
Մեռմելուց հետո
Չողի թարմությամբ
Ու հողի բույրով
Բուրվառող քաղցր
Ծաղիկների մեջ... ³⁵

(«Ամպերը»)

Այս առումով Վ. Դակորյանը իրեն դրսեւրում է որպես մեր հարուստ քնարերգության անթառամ ավանդութեների ժառանգորդ: Նրա բանաստեղծությունների մեջ նկատվում է նաև մի անտեսանելի, բայց առողջ երակ՝ կապված ժողովրդական պոեզիայի իմաստության հետ:

Արեւային օրիներգություններ է գրքի «Իմ տան լույսը» շարքը: Մրցելով արեւի հետ եւ նմանվելով արեւին, բանաստեղծը կյանքը շողերով օժելու խնկարկուն է, նա խորհուրդ է տալիս թիթեռնիկին՝ չմեռնել մայրանուտին, այլ «արեւոտ ծաղկի երգի մեջ» ծոցվել, մահկանացուն կնքել առավոտյան, ասել է թե՝ մահով անգամ մոտեցնել առավոտը:

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

«Սեր եւ ժայխ» ժողովածուի որոշ բանաստեղծություններում Հակոբյանը երեւույթներին եւ առարկաներին վերագրում է այնպիսի հատկություններ, որ անսովոր լինելու հետ մեկտեղ թարմություն են հաղորդում խոսքին: Այստեղ կարեւոր դեր են խաղում նաև համեմատությունները: Ընդհանրապես Վ. Հակոբյանի խոսքը պատկերավոր է, կոնկրետ, սահուն, երաժշտական: Ֆիշտ է, նա ուշադրություն չի դարձնում հանգավորման դասական ավանդույթներին, սակայն բանաստեղծական ռիթմը չի խախտվում, միտքը չի զոհվում հանգին: Եվ դա դարձել է ոճական առանձնահատկություն բանաստեղծի համար: Ոճական այդպիսի հյուսվածքում բանաստեղծի երգերում ամեն ինչ խորհում է, շարժվում է, փայլում է, տենչում է: Ահա «Նեռադիտակ...» հնգատող երգը.

Նեռադիտակ է արեւը դարձել

Լեռան աչքերին...

Նայում է լեռը դարերի միջով.

Թե քիչ էլ քայլի,

Կհասնի անհաս հորիզոններին...³⁶

(«Նեռադիտակ է...»)

Արեւի, լուսի, երազի եւ սիրո հետ կապված զգացումները «Իմ տան լուսը» շարքում ընդհանրացման հյուսվածք են դառնում համանուն բանաստեղծության վերջում, որով բնութագրում է նաև երգչի աշխարհընկալումն ու ապրելու նպատակը.

Ախր, մայրս ասո՞ւմ էր միշտ.

- Երբ որ տնից մեկը հանկարծ

Ուշանում է հանդ ու արտում,

Արեգակը մայր մտնելիս

Վառեք լուսը,

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Որ նա լույսով գա՛, հասնի տուն»:³⁷

(«Իմ տան լույսը»)

Վ. Դակորյանի յուրաքանչյուր նոր գիրք նախորդի անմիջական շարունակությունն է՝ արյունակից, բայց՝ նոր, նույն արմատից, բայց՝ նորագույն, նույն ցողունից, բայց՝ նորաբույր: Այդպես եղավ եւ բանաստեղծի չորրորդ գիրքը՝ «Մայրանում է լույսը» խորագրով: Աշխարհում ամեն մի բարության ծնունդ համենատելով մայրական նվիրումի հետ, Վ. Դակորյանը կյանքի իմաստն ու հույսը կապում է մայրացող լույսի հետ:

Գրքի լավագույն գործերից է Պ. Սեւակին նվիրած «Դիմն լույսի» բանաստեղծությունը: Մեկ առ մեկ բացելով մեծ պոետի հուզաշխարհի շերտերը, Վ. Դակորյանը տեսնում է, որ այնտեղ աշխուժացած աստղեր կան, որոնք ծիծաղաձայն իջել են երկնից ու շարվել Սեւակի հողաբույր բառերի մեջ, կամարվել որպես կարոտ ու ծիածան: Դակորյանը գգում է, որ Սեւակի երգերում վերերգվել է Արեգակը, որ մթան բոլոր ստվերները հալվեն, հեռանան, որ միշտ լույս լինի, լինի... լույս.

Նրա համար է լեռը բարձրանում,
Որ ավելի խոր ծորերն երեւան.
Նրա համար է ծորը խորանում,
Որ լեռներն էլի բարձր երեւան:
Ո՞նց կուգենայի, իմ լեռ ու ծորեր,

Չեր դաշնությունը իմ հոգուն տայիք.
Չորերի նման խորանայի եւ
Ու բարձրանայի լեռների նման: ³⁸

(«Նրա համար է...»)

Բանաստեղծը գգում է, որ փոթորկահույզ մեր իրականու-

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

թյան համար յուրաքանչյուր բացվող օր պետք է ծավալվի եւ տեր ու տնօրեն դառնամ մարդկանց երազմներին ու բախտին, որ համկարծ «սեւի մի նշույլ անգամ իր հետ չբերի» («Այգալույսի բաց դռներում...»): Որպես բացվող օրվա անցագիրն ստուգող խստապահանջ պահակ, նա բացում է բոլոր ճամփաները նրա առաջ, ցնում, երբ համոզվում է աշխարհին իշնող օրվա լուսածին լինելու մեջ.

*Ու բացվող որը որպես անցագիր՝
Արեւն է պարզում,
Եվ կամրջվում եմ նրա ոտքի տակ,
Եվ մայրանում է լույսը իմ ներսում:*³⁹

(«Այգալույսի բաց դռներում»)

«Մայրանում է լույսը» գիրքը բանաստեղծական վառվշում խոհերի եւ կրքոտ երազմների խորան է: Խորացնելով նախորդ գրքերին հատուկ խտացված ապրումների, սրված պատկերների ստեղծման իր իսկ ձեռքբերումների որակը, բանաստեղծը աշխարհի առջեւ բացում է իր սեփական աշխարհի արեւային երազմները, ցանկությունները, եւ դրանք արտահայտչական թարմ գույների շնորհիվ արժեքավորվում են գեղագիտական ինաստով: Կյանք մտնելով բարձրանիստ լեռներից, բանաստեղծը բարության ամեն մի ծնունդ գնահատում է հայրենի սարերի եւ առուների դժվարին, արարչական ուժի հետ համեմատելով.

*Առուն հարթ ճամփով
Միշտ լուր է հոտում.
Երգը այնտեղ է
ծնվում երեւի,
ուր որ քարեր կամ
Ու դժվար անցում:*⁴⁰

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

(«Առուն...»)

Առվի եւ լեռնային քարերի մետաֆորն այստեղ բազմինաստ է: Այն վերաբերում է ոչ միայն երգի, այլև կյանքը գեղեցկացնող բոլոր երանգների ծննդին: Այդ միտումը պոետական խոհ ու հույզի մի նոր պատկեր է դարձնում «Վայրկյանի մեջ» երգում: Արտահայտելով իր անձնական վերաբերնունքը վայրկյանի հանդեպ, Դակորյանը այն գնահատում է նրա պարզեւած հարստությունների չափանիշով: Պահանջի միջից փայլվիլում են երգչի իղձերը՝ համոզիչ, ջերմացնող.

*Ես քո վայրկյանն եմ ուզում նկարել
Այսօր, ժամանակ,*

*Ու նվեր տալ քեզ՝ դարիս անունից:-
Միայն թե ների՛ր, ների՛ր, խնդրում եմ,
Թե նկարի մեջ դու տեսնես եռ... ինձ:
Ես կամ իմ դարի ամեն վայրկյանում:*⁴¹

(«Վայրկյանի մեջ»)

Դարի ամեն վայրկյանում լինելը բանաստեղծը չի ներկայացնում որպես թեթեւ փառքի երազանք: Դարի վայրկյանում լինել, ըստ պահանջի, նշանակում է անճարում սիրով հողը փայփայել՝ արեւին հասնելու համար, վեհանալ՝ միայն ու միայն արմատ նետելով սուրբ հողի խորքում («Վեհությունը»).

*Թե իր ճյուղերով մոտ է երկնքին,
Ասում ենք՝ վեհ է, բարձր է ծառը:
Բայց չե՞նք սխալվում,-
Ուրիշ կլիներ, թե իմանայինք՝
Որքան է ծառը*

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Իր արմատներով խորացել հողում: ⁴²

(«Վեհությունը»)

«Մայրանում է լույսը» գրքի մի շարք բանաստեղծություններ ստեղծագործական եւ գաղափարական առնչություններով, միեւնույն տրամադրությունների եւ տարերքի արտահայտություններով մի շարք են կազմում: Դրանցից են «Ամառային նկար», «Չայրենիք», «Պատկեր», «Չողին», «Ծննդավայր» հյուսվածքները:

Ժողովածուի խոհական երգերը ապացուցում են իրականության հետ սերտ կապ ունեցող տաղանդի լիցքավորման ուժն ու երանգները: Մարդկային կյանքի բովանդակության, ապրելու ինաստի, անհատի եւ ժողովրդի փոխհարաբերության, սիրո գեղեցկության եւ այլ խնդիրներ բանաստեղծական համոզիչ պատահաններ են գտնում Չակորյանի խոհական երգերում: Նա ծառերի թափվող տերեւների մեջ այրում է տեսնում: Այդ աշնան տերեւները չեն ափսոսում, չեն ցավում ընկնելու հանար, որովհետեւ գիտեն, որ «Իրենցով պիտի ծածկեն մայր ծառի Անհող մնացած ինչ-որ մի արմատ» («Ծառերից թափվող...»):

Այդ ծառը «քարի ծնունդ է, հողի սեր ունի, լույսի պաշտամունք, վեհանձն է ծառը», եւ ձորը միշտ շշուկով լցված է պահում: Իսկ եթե ուզում են իմանալ ծառի ամրության մասին, պետք է հարցնեն քամուց:

Երգից երգ նոր պատկերներ են հաջորդում իրար, գույսների, միջավայրի լույսը ավելի է խտանում, բանաստեղծը նոր իմաստություններ է տեսնում նրանց մեջ, պուտական խոսքը դարձնում յուրովի: Վերջապես նա համոզվում է, որ հրաշքները պայմանավորված են մարդու ձեռքերով. «Զեռքերի մեջ են հրաշքներն ապրում», - բացականչում է երգիչը եւ հաստատում, որ «Նրանք արեւի լույս են ճառագում, զորություն դառնում կանուրջների վեհ կամարների մեջ» հայտնության ոսկե աստղեր

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Վառում.

Տաք գգվանքներով բուրում են քաղցր...

Չեռքերն եմ, իրա՞վ, իրաշը արարում,

Չեռքերիս մեջ են ողջ իրաշքները:

Ուրիշ իրաշքներ մի՛ փնտրեք, երգե՛ր,

Ապրեցեք միայն ինչպես... ծեռքերը:⁴³

(Դրաշքները»)

Որպես ճշմարիտ բանաստեղծ, Վ. Դակոբյանը բացելով իր սեփական երգի ճանապարհը, քայլում է զուլաված ու հարստացած: Վկան՝ «Անմարելի-անմեռնելի» ժողովածուն, որ տպագրվեց 1981թ.: Դաստանելով կյանքի եւ գրականության կապը, բանաստեղծը նոր երանգներով պոեզիա բերեց բարդ ու հակասական մեր իրականությունը՝ մատու դնելով կյանքը քաղցրացնող ու հաստատող երեւույթների վրա: Դայրենասեր բանաստեղծը ժողովորդի ճակատագիրը իրենց համարելով, նոր ու թրթուն երգեր նվիրեց հարազատ օջախին ու լեռնաշխարհին:

Ըստ էության, գրքի «Քո գիրն են գրում» շարքը «Լեռները թեւերիս վրա» շարքի անմիջական շարունակությունն է: Բանաստեղծի կողմից շարքերի այս տարրերակումը կապված է հայրենի օջախից դեպի հայրենիք տանող լայն ճանապարհի հասկացության հետ: Վերոհիշյալ երկու շարքերը ստեղծագործական եւ գաղափարական սերտ առնչություն ունեն, նույն տրամադրության եւ կրքի, նույն տարերքի արտահայտություններ են: Նախորդ երգերին հատուկ հուզական թթվամորով պոետը հյուսում է բնության եւ մարդու ներդաշնակության պատկերը, որի մեջ էլ հենց նշմարում է հայրենիքի հանդեպ եղած այն սերը, որով Աստծո կողմից ստեղծված հողը դառնում է հայրենիք:

«Անմարելի-անմեռնելի» գրքի «Գլխարկ են հանում ծնծաղ-կի առաջ» շարքը բնապաշտական քնարերգության գեղեցիկ

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՉՈՒԹՅՈՒՆ

Նմուշներից է: Բանաստեղծը ասես լսում է հողի ձայնը, տեսնում նրա ուժը («Զայն»), ստեղծում նատյուրմորտ, ուր «ճամփան աշում է, քարը աշում է, աղբյուրը՝ աշում...Մութը խշում է խազալի նման» («Նատյուրմորտ»):

Վ. Շակոբյանի բնապաշտական երգերում ամեն ինչ քայլում է, երագում, տենչում, ծփում, օրորվում, սիրում ու սիրվում, խանդում ու նախատում, ծերանում ու ծիլ արձակում, լեզու առաջ խոսում: Եվ այդ ամենի մեջ ընթերցողին ժպտում է օջախը սուրբ, որի սիրով ապրում է բանաստեղծը եւ ապրեցնում իր երգերով:

Արցախյան շարժումը Շակոբյանի բանաստեղծական խարնարանում նոր երանգներ է առաջացրել: Կարոտի եւ սիրո երգիչը տեսմերով 20-րդ դարի վերջի կոմունիստ «մարգարեների» կազմակերպած մղձավանջը մեր ազատաբաղծ ոգու դեմ, դաշնությանը ու ցասումով խարազանում է նորի անունից հոխորտացող ուժերի ցիմիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, վեստրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արեւը պատկերում է որպես «պատուհանից դուրս նետված» արյունաքամ նանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցան»:

«Արցախա ծուխ» գրքի բանաստեղծական շարքերում Վ. Շակոբյանը մի-մի աշխարհ է ստեղծում, նրանցում կարոտ ու ցավ կա, սեր ու ափսոսանք, երազ ու տենչ, հուր ու աստղեր, մի ամբողջ բնություն՝ մարդկային ապրումների թթիշներով: Այդ առումով «Սեղերի ծննդյան» շարքը ընդգրկում է կյանքի ծփանքների առեղջմանամբ ները՝ ծնունդով ու հաօնումով, երկրի ու տիեզերքի գեղեցկություններով ու ներդաշնակություններով: Երգի մեջ թումանյանի բնորոշմամբ մի աշխարհ է բառը, որի մասին Վ. Շակոբյանը խորիում է այսպես.

*Բառերը միշտ էլ կամաչ են լինում,
Նրամք թռչնում են միայն այն պահին,
Երբ հանկարծ իրենց տեղը*

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

չեմ դրվում:

Դրա համար էլ գրիչս առնելիս
Ճեզքիս տեղ ասես սիրուս է դրղում:⁴⁴

(«Բառերը»)

Տիեզերքի լեզուն հասկանում է Յակոբյանը: Եվ այդ տիեզերքը ծփում է նրա բանաստեղծական խմորումների շրջանակների մեջ: Բանաստեղծը կարդում է բոլոր առեղջվածները եւ խոնարիվում Աստծո արարչագործության առջեւ՝ հանուն մարդու: Բայց մարդն էլ չի հակադրված Աստծոն ոգուն, որովհետեւ Արարչի ստեղծածի ոգին կարող է կարդալ մարդը: Եվ եթե ինչոր առեղջված դեռեւս չքացված է մնում բանաստեղծի մոտ, այդ չի նշանակում, որ նա ընկրկում է դրա առջեւ: Ոչ: Չքացահայտված գաղտնիքի հանդեպ եղած բանաստեղծական հարցումի մեջ էլ երգչը խորհուրդ է տալիս հասու լինել եւ ննանվել բնությանը.

Ես գարմանում եմ,
թե այս ժայռերը որտեղից գիտեմ
Այսքան լեզուներ...
Փորձիր մի լեզվով խոսել մրանց հետ՝
Նույն լեզվով էլ քեզ արձագանքում եմ...⁴⁵

(Ես գարմանում եմ)

Աշխարհի ճանաչման պրոբլեմը բանաստեղծական լուծում է գտնում Յակոբյանի երգերում: Սակայն այդ լուծումը միանշանակ չէ: Յարցումների շրջանակներում պիետը շատ ինչուների պատասխանը դիտավորյալ չի տալիս: Այն թողնում է ընթերցողին: Եվ դա լավ է. չէ՞ որ կյանքը իր շերտերում անթեղում է մեծ ինչուի այնքան պատասխաններ, որ հնարավոր չէ մեկ ոտանակորում ի մի բերել: Դրանով ընդգծվում է կյանքի հեքիաթային

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

բնույթը:

Սակայն, չնայած հարցումին, բանաստեղծը տարբեր հյուսվածքներում հաստատում է կյանքի ընթացքը՝ սաասումների եւ երազանքների էջերով, հաստատումի եւ ծաղկումի անակնկալներով։

Վերընթերցելով Վ. Դակոյրյանի բնության եւ խոհական երգերի շարքերը, ապրում ես ուրախության եւ հաճույքի մի զգացում այն բանի համար, որ բանաստեղծը նախ՝ խոսում է ընթերցողի սրտից, չենք ասում անունից, երկողորդ՝ նրա խոսքի գույները նման են մայր բնության երանգներին, արհեստական չեն, ինքնարուխ են, երրորդ՝ որ նա ունի բանաստեղծության իր տիպը, ոճի անհատականությունը։

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ «Սիրտս ծեզ հետ է» գրքի մասին 1966 թ. գրած հոդվածում ականավոր արձակագիր Մկրտիչ Արմենը ընդգծել է. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երեւույթները, պայծառ են բառերը։ Դամելի է կարդալ Սոկրատին, որի մոտ այնքան արեւ կա եւ լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ եւ ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլև, դրա հետ սերտորեն կապված՝ համեմատություններն ու բառային մատերիալը։ Սոկրատի բանաստեղծությունների մի այլ արժեքավոր կողմը դրանց հուզականությունն է։ Սոկրատի մոտ գերազանցապես ուժեղ է հուզականությունը»։⁴⁶

Անվանի գորոդի դրվատանքի այս խոսքը եւ պարտավորեցնող էր, եւ ինքնաճանաչման խորհուրդ։ Գրքի քննարկումներ եղան, ընթերցողների եւ գրչակիցների գնահատականներ, որոնցում նշվեց այն ինարանքը, որ առկա է ժողովածուի «Սիրտը

ԹՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԽՀԱՌԻՐԴԻ

նուրբ է», «Զեռքը», «Մի առու եմ», «Մոռացել է հայրը որդուն», «Գարնան գալուստը», «Բարակ առուն խոխոջում է», «Բնության մեջ շատ ամպեր կան» եւ այլ բանաստեղծություններում: Այդ հնարանքը առնչվում է բանաստեղծի վերադարձին դեպի բնությունը եւ բնությունից՝ դեպի մարդկանց սրտերը: Եվ այդ ճանապարհը պատկերվում է բնության նրբերանգների անձնավորմաբ: Քարի եւ ծեռքի, առվի եւ երգի, արեւի եւ հավատի, հովի եւ համբույրի, լուսաստղի եւ մանկան, ամպի եւ բարության զուգահեռներով բանաստեղծը բացում է իր հոգու աշխարհը, ցանում իր աստղոտ երազները՝ հավատով ու լավատեսությանը: Խանյանի համար բնությունն ամբողջությամբ երգ է.

*Բարակ առուն խոխոջում է՝ երգ է ասում,
Սառն աղբյուրը կարկաչում է՝ երգ է ասում,
Որոտում է գժված գետը՝ երգ է ասում,
Ոլորում է քամին մեջքը՝ երգ է ասում,
Աստղը հեռվից աչքն է թարթում՝ երգ է ասում,
Բանաստեղծը երգ է լսում ամեն ինչում,
Բնությունը արդյոք ե՞ րգ չի արտաշնչում:*

Բնությունից առնված պատկերները բանաստեղծի համար քնարական հերոսին զննող, նրա եւ բնաշխարհի համագործակցությունն ու դաշինքը ներկայացնող խորհուրդներ են:

«Սիրտս ծեզ հետ է» ժողովածուում արյունակցական կապենի շրջանակներում են պատկերված բնությունն ու մարդը: Նման պատկերներից է «Բնության մեջ շատ ամպեր կան» բանաստեղծությունը: Նրանում նկարագրված ամպերից որոշները առատաբեր են, նրանց ետքից «վարդն է ժպտում... արտն է ծփում... դաշտերում ծիլ ու ծաղիկ արթնանում են նրանց երգից», սակայն

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱԿՄԱՆԴԻ

ամպեր էլ կան «Անդող, անհույզ, սրտերը քար, Ծարավ հողը թե շունչն էլ տա, Ոչ վշտանալ գիտեն, ոչ լալ»: Կան նաեւ չարագուշակ ամպեր.

*Մեկ էլ տեսար՝ կայծակմացայտ
Դոխորոտացին,
Որոտացին,
Իրար խառնած հող ու երկինք,
Դաշտ ու հանդեր հեղեղեցին:*⁴⁸

Ծարունակվում է պայքարը: Մարդկային բնավորությունների այլազամությունը թվարկվում է ամպերի միջոցով: Ներկայացվում են նաեւ ամպեր, որ, անտարբեր ամեն ինչի նկատմամբ, կորչում են անհետ: Սակայն դրանով չի ավարտվում պատկերը: Բանաստեղծը դրսեւրում է իր զարմանքը բնության, ասել է թե՝ կյանքում արմատներ նետած անարդարությունից.

... Զարմանում եմ բնությունից,
Զարմանում ու չեմ հասկանում,
Թե ինչպես է ծնված օրից
Այս անարդար խաղը տանում: ⁴⁹

Այստեղ ոչ միայն բնության ճանաչողության առկայությունն է, այլեւ կյանքի ընկալման ու գնահատման կարողությունը:

Սովորելով հայ դասականներից, Խանյանը ծգտում է ներկայացնել ոչ թե բնանկարը, այլ հայ մարդու դիմանկարը: Այս դիտարկում-վկայություններից է «Չեմ տեսել» գողտրիկ երգը.

- Չեմ տեսել իմ հոր հասակը ջահել,
Բարդիներ, պատմեք ինձ նրա մասին:
- Նա սեղ հասակն իր մեղ է պարգևել,-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐԱ

Բարդիմերն ասին:

- Չեմ տեսել իմ հոր աչքերը ջահել,

Ծաղիկներ, պատմեք ինձ նրանց մասին:

- Աչքերի փայլը մեզ է պարգևել,-

Ծաղիկներն ասին:

- Չեմ լսել ես իմ հոր ծայնը ջահել,

Աղբյուրներ, պատմեք ինձ նրա մասին:

- Կարկաչն իր ծայնի մեզ է պարգևել,-

Աղբյուրներն ասին:

... Նրանց այդ պահին,

Դավիտյան ջահել

Ողջ բնությունը

Արձագանքում էր:⁵⁰

Բնությունը Խանյանի Երգերում կենսական քաղցր հուշերի գիրք է, որից կարելի է կենսագորության էջերը կարդալ, կարոտել, երազել, ափսոսալ: «Կարոտ» բանաստեղծության մեջ քնարական հերոսը քայլում է սիրած աղջկա տաճ մոտով հոսող առվի ափով, հանդիպում տարիներ առաջ խշշացող բարդուն, մասրենուն, ուռենուն: Ամեն, ամեն ինչ նույնն էր, սակայն, ավա՞ն, պատանեկան հասակը չկա: Այստեղ եւս բանաստեղծի երազի ու կարոտի ճամփան տաճում է բնության հավերժական գիրկը.

Երեւի այն նվիրել ենք առվին, ագում,

Որ այսպես ժիր, այսպես ջերմ են միշտ համերգում:

Բնության պատկերներում կյանքի ներշնչանքները ներկայացնելու բանաստեղծական խառնվածքը տալիս էր համելի պտուղներ: Տեղին է բերել բանաստեղծ Վ. Կարենցի նկատառունը. «Խանյանը ունի բնության զգացողություն, բնության բանաստեղծական ընկալում»:⁵¹

Այսպես, չհավակնելով ինքնագովասանքի ընդգծումին, նշենք, որ Ս. Խանյանի բանաստեղծական յուրաքանչյուր ժողո-

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

Վածու գրախոսվել է, որոնցում դրվատանքի խոսք է ասվել նրա բնության երեւույթների ընկալման, խորն զգացումի եւ պատկերման իմքնատիպության մասին:

Այս նղումով կցանկանայինք բացել մի առեղջված, որի հետ էլ կապված է բնության զգացողությունը եւ գնահատումը: Ս. Խանյանի հայրենի Ակնարյուր գյուղը երեք կողմից շրջապատված է կուսական անտառներով, իսկ արեւելյան կողմով նայում է դաշտային Արցախի զնորովստ հանդերին, ծաղկառատ դաշտերին, արևարույր արտերին: Բանաստեղծի մանկությունը, պատառնեկությունը եւ հասուն տարիներն անցել են Արեւարի փեշերին, ծառախիտ անտառում անդողախոր ձորերի սառնորակ ջրերի մոտ եւ ամառային օրերին՝ ովկեվառ արտերի հունձքի եռուզեռում: Ուստի, Խանյանի համար հայրենիքի պատկերը հյուսվում է այդ անզուգական-հեքիաթային բնանկարներից: Ուրիշ գաղտնիք չկա: Ինչպիսին բանաստեղծի ծննդավայրն է, այնպիսին էլ նրա երգն է:

Ս. Խանյանի գրքերի, բանաստեղծությունների վերնագրերն անգամ թելարդված են նրա ծննդավայրի՝ պատմական Դիզակի առասպելական բնության կողմից:

Ղեռեւ 1959 թ. առաջին ժողովածուի կազմին բանաստեղծի խնդրանքով նկարիչը արտանկարել է Արեւարի թիկունք Քիրսը՝ լանջերից բխող կարկաչուն առվի ընդգծումով: Ծանոթանալով եւ գրախոսելով գիրքը, մեծանուն գրող Ն. Զարյանը նկատել է բնության երեւույթների եւ բանաստեղծի խոհերի միասնությունը եւ խրախուսել այն: Ս. Խանյանը խոստովանել է, որ բնությունն իր բոլոր զգացումների խորհրդանիշն ու արտահայտվելու միջոցն է: Բերելով «Առաջին սեր» բանաստեղծությունը, նա տող առ տող արտաքերել է.

*Խոհերով տարված, անցնում եմ դաշտով,
Դիշում առաջին հանդիպումը մեր,*

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Մի պահ քեզ մոտ եմ թռչում կարոտով,
Նայում աչքերիդ, առաջին իմ սեր...
Ծրջում եմ մենակ ու քաց խոտերում
Ոտնահետքերդ տեսնում եմ կարծես,
Թվում է՝ գարնան այդ պաղ ցողերում
Ես ջերմանում եմ քո սիրուց իրկեզ:
Սրտիս մեջ պահած են սեր, են ծգտում,
Վառ կալաշին են նայում ես տրտում,
Այստեղ էլ նրա թերթերի միջից
Քո նուրբ շուրթերով դու ես ինձ ժպտում:
Եվ մոտենում են կարկաչուն առվին,
Տարվում ափերով՝ այնպէս բուրավետ,
Սակայն այստեղ էլ առուն է մեղմիկ
Քո անուշ ճայնով շշնջում ինձ հետ:
Խորհում եմ լրին եւ շուրջս նայում,
Նայում կարոտով ու չեմ հասկանում.
Բնությո՞ւնն է ինձ քեզնով հմայում,
Թե դու՝ նրանով այրքամ քաղցրամում: ²²

«Կատ չէ,- ասել է Զարյանը,- չպետք է մոռանալ, որ բնությունը, ինչպես սերը եւ ուրիշ երեւույթներ, գոյության հարց է՝ մշտահոլով, մշտարթուն»:

Ս. Խանյանը երբեք չի մոռացել ծննդավայրի գեղեցկությունները, որոնց հետ միահյուսված են հավատի, սիրո, երազի, կարոտի եւ այլ սրբազնագույն զգացումներ: 1968-ին լույս տեսած «Արեւսար» գրքում բանաստեղծը գետեղել է մի շարք՝ «Ին հայրենի լեռնաշխարհում» վերնագրով: «ճանապարհին», «Երեւի մի օր», «Ուխտաձոր», «Մայրամուտ», «Մեր գյուղը» երգերում, որոնք կարոտի եւ հիացմունքի նրբերանգներով են հյուսված, քնարական հերոսի եւ բնության այնպիսի միասնություն կա, որ կարելի է շփոթել՝ բնությունից է սկիզբ առնում քնարա-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐ

Կան հերոսը, թե՞ քնարական հերոսի սրտից է ակունքվում բնությունը: Այս շարբում բանաստեղծի հայրենի Ուխտաձորը, Արեւատը, մամկության ընկեր առուն, պապի տնկած կաղնին, ցուրտ աղբյուրը, իոր հավատի քրտինքը, մոր սպասումի արցունքը, քնարական հերոսի այրող կարոտը մի աստղաշող փունջ են կազմում: Բանաստեղծն ամկրկնելի բնության գրկում հմայվում է Նոյան ժամանակներից մեր օրերին հասած գեղեցկություններով եւ նրանցում տեսնում ժողովրդի անցած ճանապարհն ու լսում նրա հարատեման երգը.

Արեւար եմ բարձրացել՝ անտառ է շուրջ,
Աղբյուրները երգում են քաղցրալուր, բարի,
Որ համերգն այդ լավ լսեմ՝ պահում եմ շունչս,
Ու նստում եմ կածանից կախված մի քարի:
Աղբյուրներից մեկն, ասես, «Երազ» է երգում,
Մեկը երգում է «Կռունկ», մեկը՝ «Յար, արի»,
Այդ երգերից հմայված իրար են թեքվում
Ու ծափ զարկում հիացըռվ ծառերն անտառի:
Ես քարացած որսում եմ ծայները բոլոր,
Ասես լինեմ կախարդիչ, հեքիաթ աշխարհում,
Մինչեւ երգեր գրելը, երեւի, մի օր
Կոմիտասը եղել է մեր Արեւարում: ⁵³

(«Երեւի մի օր»)

Այս պատկերները բնածին են, դրանք ցոլացումն են այն ամենի, ինչ տարիների ընթացքում նախշանկար է դարձել երգչի հոգում:

Պատկերային ինքնաբուխ հյուսվածքներից են գորի «Ճեռվից չեմ լսել նրա անունը», «Ճովե՞ր, հովե՞ր», «Գարունն եմ սիրել», «Բարձունքները հոգուս մեջ են», «Սիրտս անծայր մի աշխարհ է» եւ այլ երգեր: Դրանք մարդու եւ բնության միասնության զգացումի արդյունք են, աշխարհը հարազատի նվիրումով

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԽՀԻ ԽՈԽՀԱՌՈՒՐՈՒ

Միհրելու պատվիրաններ.

Ծանոթ ճամփան ոտքերիս տակ խուսուտ գալով,
Չորից բարձումք, բարձունքից ծոր պտույտ տալով,
Ուրախության ցող արցունքը աչքին, շրթին,
Ինձ մեր գյուղն է տանում կրկին:
Գյուղ եմ մտնում, փշատենին փարվում է ինձ,
Ինձ փարվում եմ մեր աղբյուրի կարկաչները,
Մեր արտերի, մեր դաշտերի կանաչները,
Փարվում է ինձ փոքրիկ գյուղիս մեծ երկինքը,
Ու թվում է՝
Ինձ փարվում է աշխարհն ինքը:

Դժվար չէ նկատել, որ Ս. Խանյանը բնության գիտակ է, որ նրա հետ գրուցում են անտառները, արտերը, եւ դա բնության էկ-գոտիկ արտահայտություն չէ, այլ ինքնակենսագրության բանաստեղծականացում, որով նա փարվում է աշխարհին, դառնում նրա մի սրտացավ քաղաքացին: Կենդանի բնության, նրա երանգների ու բույրի երգիչը յուրաքանչյուր պատկերի մեջ բացահայտում է քնարական հերոսի տրամադրությունն ու հոգեբանությունը: Ահա Ս. Խանյանի այս զգացողության հաջողված պատկերներն են թելադրել գրականագետ Յ. Սերոբյանին իր գրախոսականում ընդգծել.

«Ս.Խանյանը հուզաբաթավ, գունեղ պատկերել է հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրա մարդկանց հերոսական գործերը՝ օտար բռնակալների դեմ մահու եւ կենաց գրտեմարտում՝ օջախի ծուխը, մանկան օրորոցը, գիրն ու դպրությունը պաշտպանելու համար: Այդ ամենի նկատմամբ բանաստեղծի անհուն սերն ու նվիրվածությունն արտահայտվել-պատկերվել է մերք որպես ժայռից ժայռ գահավիժող փրփրաբաշ գետ, խուկան առու, մերթ՝ ճամփի եզրին թեքված ուրիշ, շնկշնկան քամուց օրորվող հազար անուն, հազար բույր ունեցող ծաղիկ, որ Շիրա-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

զի վարդաստանում չկա, մերթ գյուղ-քաղաքով, մարդկանց սրտով ալիք-ալիք բարձրացած, մինչեւ Արեւար հասած կոմիտասյան երգի ղողանց:

Իր հայրենի լեռնաշխարհին՝ արծիվների բույն Ղարաբաղին շատ անգամ է անդրադարձել Խանյանը... Նա որդիական խորունկ սիրով, երախտանքով խոսք է բացել իր հավերժ դալարուն Ուխտաձորի, զմրուխտ հազար Արեւարի, «Կռունկ», «Երազ» երգող քաղցրավոր աղբյուրների մասին, լիրիկական շնչով, խորունկ սիրով համակելով ընթերցողին»:⁵⁵

Ս. Խանյանի ժողովածուների մեջ աստիճանաբար ընդգծվում է այն դավանանքը, ինչ դրսեւորվել էր առաջին գրքում: Ղարնության եւ քաղաքացու անխախտ միասնությունն է: 1971 թ. լույս տեսավ բանաստեղծի «Լեռների երգը» գիրքը: Նրանում գետեղված է մի խոստովանություն-երգ, որտեղ կարդում ենք.

*Ես՝ ղարաբաղյան լեռների որդի,
Տանս տանիքը խրված ամպերում,
Աստղերն են ցոլում շուրջն իմ տանիքի,
Նրանք են հոգուս երազներ բերում:
Ես՝ ղարաբաղյան լեռների որդի,
Աղբյուրներն են իմ գահը զարդարում,
Նրանց կարկաչն է թառել շուրթերիս,
Նրանց նվազն է հոգուս ծալքերում:*⁵⁶

Այս խոստունը հայրենի եգերքի հանդեպ սիրո այն արտահայտությունն է, որ բխում է ամպերում խրված տանիքի աստղալուսից, ասել է թե՝ երգչի երազներից, բակը զարդարող աղբյուրներից՝ քնարական հերոսի հոգում դարձած նվազներ: Այս տողերը հրապարակախոսական հայտարարություններ չեն, այլ

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԽՉՈՒԹՅՈՒՆ

Իհոգու երփներանգ շերտերի պատկեր: Դա այն եզերքն է, որի «լանջերը..., փեշերը..., կանչերը..., հուշերը..., թեւերը..., հեւալը..., երգերը..., ծնիալը..., հերկերը կամաչ են», վերջապես.

*Ժպտալը՝ կանաչ, շիկնելը՝ կանաչ,
Փարվելը՝ կանաչ մեր լուսայգի,
Չողն այս վաղուց է աշխարհին ծանաչ՝
Իմ օրրանն է նա, կանաչ այգին:*⁵⁷

Խանյանի երգերում բնության տեսարանները շոշափելի են, կեցության աղբյուր, կարոտի կրակ, օջախն ու հրւշը չմոռանալու խորհուրդ: Նրա համար հայրենի «սարերը հսկաներ են», «հոգի ունեն», «մեր պատմության վկաներն են», «մեր ոգին»: Բնությունը հավատի եւ ուժի, թեւելու եւ արարելու առհավատյա է.

*Թե աստղերի գիրկն էլ ուզենք,
Մեզ կտանեն մեր սարերը,
Իրենց հոգով ու մեծ սրտով
Մեզ ննան են մեր սարերը:*⁵⁸

Յետաքրքիր միտք՝ ոչ թե մենք ենք մեր սարերի նման, այլ սարերն են մեզ նման:

Խանյանի երգերում բնությունը զրուցներ է, եւ այս հնարյան արդարացնում է իրեն, քանզի բնությունն իր հրաշքներով բանաստեղի համար եւ օրորոց է, եւ օրոր, լեռների որորու շնչառություն է, ակնկալիքների անդավաճան ստնտու: Բնության պատկերների օգնությամբ բանաստեղծը բերում է իր խոհերը, կարոտների փունջը, գույները, խորհուրդները: Նրա երգերում կաղնին սիրտ ունի («Կաղնի»), սարը՝ կարոտ («Մեր սարը փոքրիկ»), առավտը՝ մոր ժափիտ («Առավտի աչքի առաջ»), լեռը՝ հուշեր («Երազներ իմ պատանության»), աշունը՝ երգ («Աշուն»): Աստծուց մեզ

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

բաժին հասած նախնական հայրենիքից ծվեններ են հասել մեզ: Դրանք ապրելու եւ հարատեւելու օրրան են դարձել: Ինչքան մեծ է կորուստը, այնքան երկրի ամեն մի մասունք ուժ ու կորով է ներարկում քնարական հերոսին: Դիմելով Յայաստանին, բանաստեղծն անթաքոյց արտահայտում է իր հպարտությունն ու նվիրվածությունը. «Այս հողի վրա հավասարվում եմ բարձր սարերին, Այս հողի վրա ծեռքս հասնում է Յեռու աստղերին».

Այս հողի վրա պապերիս լեզվով
Քարերն են խոսում,
Եվ ամեն մի բառ հասնում է հոգուս,
Այս շեկ ժայռերից իմ նախնիների
Կարուտն է հոսում
Եվ սրտիս միջով անցնում իմ որդուն:
Երբ սայթաքում եմ, երբ վայր եմ ընկնում,
Այս հողի վրա,
Շողն այս իմ ցավից տնքում է մոր պես,
Երբ մոլորվում եմ, երբ նեղն եմ ընկնում
Այս հողի վրա,
Սարերն իմ կողքին կանգնում են հոր պես:
Այս հողն է իմ թեւ-թռիչք տվողը:
Ինչպե՞ս չսիրեմ այս քաղցր հողը:

(«Յայաստան»)

Ինչպես նկատում ենք, բնությունն անցյալի, ներկայի, կյանքի, սիրո, ուժի հարատեման աղբյուր է: Այդ է նկատի առել գրականագետ Դ. Գասպարյանը, որ ժողովածուի մասին տպագրած գրախոսականում զնողգծել է. «Ս. Խանյանի մոտ «հայրենիք» հասկացությունը հաճախ բացահայտվում է հայրենի եղերքի նկարագրով: Բնանկարն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների դրսեւորման, դրանց պատկերման հիմնական միջոց»:

Բնապատկերը գրականության մեջ բնության եւ մարդու

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

ապրելակերպի միացյալ նկարագրությունն է: Այս նշանակում է՝ բնության նրերանգների առանցքում նարդկային բազմազան ապրումների արտացոլում, ապրումներ՝ երջանի՞կ, թե՞ թախծոտ, ծա՞նր, թե՞ թեթև, կարոտալի՞ց, թե՞ ժպտախառն... Բանաստեղծության մեջ բնության ծփանքները հոգեծուվ երանգներն են, որ մեկնարանում է գրողը՝ մարդու մեջ նարդկայինն ընդգծելու, լավին, բարուն հասնելու միտումով: Այս պահանջը դրսեւրվեց նաև Ս. Խանյանի «Քո անունից» (1980) եւ «Կանաչ ծփանք» (1981) գրքերում: Բանաստեղծի այս ժողովածուները եւս արժանացան գրական մամուլի ուշադրությանը:

Պատկերների նոր համակարգի միջոցով բանաստեղծն ընթեռողին է հանձնում իր ապրումները: Քնարական հերոսի եւ բնության փոխներթափանցումը պատկերված է ենթարնագրային փիլիսոփայական արծարումներով: Մարդն իր ներքին հոգեկան նրերանգներով բնություն է, բնությունը՝ մարդ: «Քո անունից» գիրքը բացվում է «Իմ Արեւար» երգով, որը նշված դիտարկումի հաջող օրինակ կարելի է համարել: Արեւարն անձնավորված է, այն հանում է որպես «Վիզ ու սատար», որ ուսերին առած քնարական հերոսի առավոտները, եղել է մոր գիրկ եւ ոչ միայն այդ: Քնարական հերոսը հավաստում է.

Քարծումքներս պահած խորքում,

Իմ լեգենդ ու կյանք,

Արցունքներս առած հոգում,

Իմ թախծոտ բերկրանք:

Քանի՛ անգամ մեծացար ու

Սանկացար ինձ հետ,

Սոր հրճվանք ու համբերություն,

Արեւար իմ սեգ: ⁶¹

(«Իմ Արեւար»)

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

Բնության եւ մարդու անբաժանելիության գեղարվեստական հաջողված պատկերներ են գրքի «Խաղ», «Արհավիրք», «Գանձ», «Պեղում», «Սխալը», «Այս տարիքում» եւ այլ բանաստեղծություններ: Ս. Խանյանն իր բնապատկերները վերցնում է ծննդավայրի գեղեցկություններից: Մտացածին ոչինչ չկա: Իր հայրենակիցներին եւ իրեն սնող այդ բնաշխարհը կատարել է հոր ու մոր դեր, ինչպես նաև՝ ուսուցչի.

Արեւա, ահա, ճայր է մտնում,
Ինքն իրենից գոր է այնպե՞ս,-
Փայփայել է հողագունդը,
Օջախ ու տուն պահող մոր պես:
Իր շողերն է ցանել սիրով
Սարդու ծամփին եւ աշխարհի...
Երմեկ նրան, ով նրա պե՞ս
Օրվա պարտըն իր կկատարի:

Բնության հետ ունեցած փոխառնչությունների օրենքը իր նախահիմքերն ունի: Ի ծնե մարդու օրորոցը եղել է բնությունը, եւ պարզ է, որ նրա էությունը բնության արտապատ կերը պետք է լիներ: Իր երգերում Խանյանը դրվագ առ դրվագ ներկայացնում է մարդու եւ բնության միացյալ էության երանգները: Դիմենք բանաստեղծի վլոնապատկերներից մեկին.

Ժայռը թեքվել առվի վրա
Ու կարկաչն է լսում անվերջ,
Առուն կարծես թռոն է նրա՝
Թորովում է օրոցքի մեջ:
Ի՞նչ հրաշք է ծնված այստեղ՝
Մայր բնության անտես ծեռոքով,-
Տեսեք ո՞նց եմ վարվել իրար
Պապն ու թռոք՝ հողի երգով:

Ըստ Խանյանի՝ մարդը արարելու եւ գոյատելելու օրինակ-ները վերցնում է բնությունից: Դիմելով բնությանը, բանաս-տեղծն արտացոլում է կյանքը, մարդու բնավորությունը, ներք-նաշխարհը, ակնկալիքները եւ վերջապես՝ բնության անձեռա-կերտ հրաշակիքներին հասնելու նրա ձգոտումը: Ահա թե ինչու նրա հյուսվածքները դաշնում են ապրումների փնջեր, խտաց-ված կենսահայեցողություն: Ահա, այստեղ է, որ բնությունը ներ-կայացվում է որպես հոգեկան ապրումների խորհրդանիշ: Գետը մոր պես է, գետը չի ծերանում: Այդպիսին է եւ մայրը որդու հա-մար («Որդու աչքում»), անտառը հուշերի գիրը է, նրա կածաննե-րո՝ տիրոջ երակմեր («Դայրական օջախ»), թռչունը, ծառը, գե-տը, հողը մարդուն մաքառող դյուցազուն դարձնող ակունքներն են («Բնության երգը»), աշունը վաստակաշատ ծեռքերի շիկ-նանք ու հեքիար է («Աշունը»), վերջապես հայոց լեռնաշխար-հում անհատները ծնվում են աստեղնամերձ սարերից, իսկ սա-րերը հավերժանում են զավակների արեւշատությունից.

Չէ, չէին կարող այս սեգ լեռները
Աշխարհ չըերել Պարույր Սեւակին,
Աստղերից կախված երգի զանգեր են
Լեռներն այս՝ հասած փառքի ու պատվի:
Չէ, չէին կարող այս սեգ լեռները
Սեւակյան լեզվով զիլ չղողանցել,
Չփարվել բարուն, չատել չարերին,
Աշխարհի բախտով չայրվել, չտանջվել:
Չէ, չէին կարող այս սեգ լեռները
Դուրեր չարձակել սեւակյան սրտով,
Սեւակյան սրտով աստղեր չգրկել,
Երգեր չարարել սեւակյան գրչով:
Պետք չէ որոնել տունը Սեւակի

ԹՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Եվ սուրբ աճյունը սրբացած քակում,
Արեւներ ծնող այս սեգ լեռներից
Սեւակին փնտրեք աստղերի շարքում: ⁶⁴

(«Պարույր Սեւակին»)

«Քո անունից» գրքի մեջ մի ամբողջական շարք կոչվում է «Ղարաբաղյան նվազմեր»: Այստեղ վերարտադրված է Արցախի բնությունը, ասել է թե՝ արցախցու բնավորությունը: Երեւույթները դիտված են անմիջականությամբ, Արցախի առեղջվածային գեղեցկությունները ներկայացված են անկեղծ ու ճշնարիտ հիացմունքով, նրա գույների հայտնագործությամբ, արցախցու կենցաղի, հոգսերի իմաստնությամբ: Նժարմների վրա են դրված արցախյան բնությունն ու նրա զավակը: Տաղանդավոր բանաստեղծ Գ. Գաբրիելյանը նշել է. «Ս. Խանճյանի «Քո անունից գրքի» «Ղարաբաղյան նվազմեր» շարքը գալիս է լրացնելու Ղարաբաղի թեման ինքնատիպությամբ ու գույների բազմազանությամբ: Շարքի «Առավոտը», «Ամառը», «Արտերը», «Արեւը», «Աստղերը», «Առուները», «Կալերը», «Դատիկը», «Անձրեւը», «Զյունը», «Սարերը» ղարաբաղյան կոլորիտի, երանգների, ղարաբաղցու հոգեբանության վառ արտահայտություններ են»: ⁶⁵ Ապա վերլուծելով շարքը, Գաբրիելյանը նշում է, որ բանաստեղծի համար երանգների մի աշխարհ է Ղարաբաղի առավոտը («Առավոտը»), թթենիմ՝ «Զի պահանջում, նվիրում է ու գոհ մնում արածով, միայն մայրն է ցնում այդպես որդիմներին տվածով («Թթենին»)», ամպը՝ «Անպ չէ, ճերմակ հարս է, ջուր է տանում արտերին («Անպը»), «Արտերը սարից կախված փեշեր են կանաչ-կանաչ» («Արտերը»):

Ահա ղարաբաղյան ամառը. «Զորը կանչ, լանջը՝ դեղին, սարերը՝ ծլած, արտի կեսը՝ արդեն հեղի, կեսը՝ նոր ծլած» («Ամառը»): Բերենք մի ուրիշ պատկեր. «Մենք չունենք հորդահոս գետեր, անձրեւ է մեր հողը սնում, ծորերից բարձրացող անձրեւը մեր սրտի

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅՈՒՆ

խորքից է ծնվում» («Անձրեւը»), «Փաթիլները իշնում են ցած, ասես մաղից իմ տատի, կուտակվում է ձյունը դանդաղ, ոնց այսուրը մեր տաշտին» («Չյունը»), կամ «Սարերի քայլվածքը ուսելով դարերը հոսում են, Դարերի հոսանքից հուզվելով սարերը խոսում են» («Սարերը»):

Պատահական չէ Ս. Խանյանի գրքերից մեկի «Կանաչ ծփանք» վերնագիրը: Իսկ եւ իսկ արցախյան պատկեր: Այստեղ Խանյանի ուսուցիչ կարող ենք համարել Շ. Սահյանին: Խանյանը եւս օգտագործում է բանահյուսական աղբյուրների հոգեբանական թափանցման արվեստը՝ հմտորեն օգտագործելով ժողովրդական ստեղծագործության ձեւերի արվեստը եւ սեփական բանաստեղծական խառնվածքի երանգները: Յուշերի աշխարհը որոնելով հայրենի Ուխտածորի փեշերին եւ Արեւսարի լաճներին, բանաստեղծը նոր կողմերով է հմաստավորում բնությունը: Նա խոսք է ասում հոդի երազի («Յոդի երազը»), Արեւսարի լույսի («Կարոտի կանչ»), թթենու ծփանքի («Թթենի»), կաղնու շառաչի («Կաղնի»), կարկաչուն ու սառնորակ աղբյուրի («Կարկաչուն աղբյուր») եւ այլ արցախյան բարենմասնությունների մասին: Ժողովրդական մտածողության արդյունք են դրանք, նրանցում բնապատկերն ունի խորքային էություն, քնարական հերոսի ներքնաշխարհը բնութագրող նպատակ.

Իմ սիրո հետք են, իմ սրտի կեսն են,
Մեր սեգ լեռների կանաչ լանջերը,
Լեռներից պոկված զիլ դողանջներ են
Լեռներից թեւող երգիս կանչերը:⁶⁶

(«Երազներս»)

Դարաբաղի հանդեպ եղած բանաստեղծի սերը եւ ինքնաճանաչման խոստովանությունն առնչված են արցախյան հինավուրց հոդի եւ նրա հավերժական բնության հետ: Այդ մասին են խոսում «Քո գրկում» երգի տողերը.

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐԱ

Տառապանքիդ պատկերն եմ ես,
Գարուններիդ հյուսվածքը ջիմչ,
Դու առանց ինձ կապրես հավետ,
Ես առանց քեզ ի՞նչ եմ՝ ոչինչ։⁶⁷

Արցախյան բնապատկերը իր ծփանքներով եւ բարեմասնություններով ծավալվում է «Ղարաբաղի բնություն» բանաստեղծության մեջ: Հայրենի բնությունը քնարական հերոսի համար նայր է, հայր, քույր՝ աստղերին մոտ լեռնագագաթներով, երփներանգ զգեստներով: Բանաստեղծը խոստովանում է.

Դու իմ սիրտն ես, իմ արյունը,
Ես քեզանից եմ սերվել,
Քո գույները բազմախորհուրդ
Իմ էռությանն են մերվել:

Ս. Խանյանի բնապաշտական պատկերների մեջ դեկորայնություն չկա, ամեն ինչ ներկայացված է հստակ եւ խորիմաստ, այստեղ ընդգծված է մարդու եւ բնության միասնությունը, սակայն՝ տոհմածառի զգացողությամբ: Բերենք Արցախում հայտնի ճարտար գյուղը ներկայացնող պատկերը.

Ղարավոր գահը՝ Եղիշե սարն է,
Խմձորի այգին՝ գոզմոցը նրա,
Խաղողի այգին՝ զգեստն է կանաչ,
Իր երանգներով աշխարհին ճանաչ:

Ցորնի արտերը՝ փեշերն են ծփուն,
Թթենիները՝ նուլր նարուտներն են,
Նռնենիները՝ բերքի մեջ տոնին
Արեւով կիզված առավոտներն են:⁶⁸

(«ճարտար»)

ԹԱՌԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԹԻ

Տեղին է ընդգծել, որ բնությունը եւ մարդը խանյանի երգերում երկվորյակներ են՝ նման եւ գեղեցկությամբ, եւ էությամբ:

1990 թ. Ս. Խանյանը իր ծննդյան 60-ամյակի կապակցությամբ հրատարակեց «Կարոտի կրակներ» ընտրանին: Նրանում գետեղվեցին նախորդ ժողովածուներից առանձին երգեր ու նոր շարքեր: Այս գրքում եւս բանաստեղիք ամենանվիրական զգացումներն արտահայտված են բնապատկերների միջոցով: Այդ երգերը ընթերցողին տեղափոխում են դարերի խորքը, որտեղ երեւում են քնարական հերոսի առողջ արմատները, բողբջուն ճյուղերը, Ծիրկաթինի փեշերին մոտիկ հայրենի լեռները, որտեղից:

*Սարերի քայլվածքը ուսելով
Դարերը խոսում են,
Դարերի հոսանքից հուզվելով
Սարերը խոսում են: ^{այ}*

Խոսող սարերի որդին՝ քնարական հերոսը, բնությունը համարում է իր ուսուցիչը: Նրա պարզ երկինքը, սուտակ աստղերը, անուշ ջրերը, հորդ գետերը, նուրբ ծաղիկները, վեհ բարդիները, երկնագնա սարերը, ուսուցիչ-բնության ավանդած դասերն են եղել: Ահա թե ինչու բանաստեղծը ընդգծում է.

*Ես նման եմ մայր բնության,
Սիրոս նուրբ է, ինչպես ծաղիկ,
Երգս հորդ է,
Ոնց անանուն գետերը մեր,
Զգտումներս վերսլացիկ,
Ոնց մեր դալար բարդիները,
Դոգիս լայն է ու աստղալից,
Ոնց երկինքը փոքրիկ գյուղիս,
Բնություն եմ ողջ էությամբ,*

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Ոտից գլուխ
Բնություն եմ...⁷⁰

(«Իմ ուսուցիչը»)

Ժողովածուում տեղ են գտել դարաբաղյան կենցաղի նկարգիրը հաստատող պատկերներ՝ հակիրճ, բովանդակալից եւ հուզական: Դրանցից են.

Տանիքի վրա իջել է ծյունը,
Եվ ջրհորդանից
Ոլորվել է ցած սառուցի սյունը...
Կարծես, տատիկս կտուրին նստել,
Դարեւանի հետ գրուց է անում
Եվ ավանդական իլիկն իր մանում:⁷¹

Կամ՝

(«Տանիքի վրա»)

Ժայռի հաղթական ուսերին բուսած
Սասրենու քուփը ծաղկել է նորից
Եվ օրորվում է...
Կարծես բալիկս է խինո ու թեւ առած
Եկել, նստել է պապի ուսերին
Եվ շորորում է...⁷²

(«Ժայռի ուսերին»)

Այս պատկերներում բանաստեղծի կենսահայեցողությունը բնության եւ մարդկային կյանքի բնույթից է թելադրված: Դավատարին հայոց բանաստեղծության ավանդական ծեռքբերումներին, բանաստեղծն իր խոսքն է ասում՝ առանց կեցվածքային նորարարության ձգտելու: Նորարարությունը բանաստեղծը տեսնում է ասելիքի խորքի եւ պատկերի թարմության մեջ:

Բնության գեղեցկության տարերը լավ է տեսնում բանաստեղծը: Դաճախ էլ մարդուն մեծարելու համար այդ հրաշք-բնությունը ներկայացնում է որպես մարդու գեղեցկության ընդօրի-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Նակված երեւույթ: Վերցնենք «Կինը» բանաստեղծությունը, որը բացվում է ժողովրդական խոսքի հնչերանգով, իր կարծիքը հաստատելու միտումով.

Եիշտ են ասել,
Կյանքս վկա,
Այս աշխարհի արարիչը
Կինն է, որ կա...”³

Սակայն բանաստեղծի նպատակը միայն դա չէ, այլ կնոջ գեղեցկությունների միջոցով բնության մեծարումը եւ հակառակը.

Կինն է հունցել արեւը վառ,
Երկինք նետել,
Դրա համար

Ապա թվարկում են կնոջ եւ բնության փոխներթափանցված բարեմասնությունները՝ «Կինն է երկնել ջրվեժները», ուստի, «Նմանվում են նրա ուսերն ի վար փոշած նուրբ վարսերին», «Կինն է երկնել ծաղկունքը բյուր, Դրա համար նրանք ունեն կնոջ թովքանք ու կնոջ բույր», Վերջապես կինն է աշխարհի բերել բարդիները, հովերը, բոլոր գեղեցկությունները:

«Կարոտի կրակներ» գրքի մասին գրախոսության մեջ գրաքննադատ Վ. Արանեսյանը նշել է. «Պաշտպանում են ազգային դիմագծի այն առանցքը, որ արցախսահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել: Ս. Խանյանի «Կարոտի կրակների» հիմքը դա է.

Արեւը ելնում է Արաքսից,
Լվացվում Թարթառի ջրերում,
Մտրակ է հյուսում վարսերից
Չափ գցում իր ծին սարերում:
Սարեր են, զիգզագ են ճամփեքը,
Ճամփեքը՝ կախված երկնքից...

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Զգիտեմ՝ ով` ի՞նչ, բայց այս տողերում զգում եմ հեթանոսական-վահագնային պաշտամնքի հեռավոր արձագանքները, «հուրիեր, բոցմորուք, վիշապաքաղ» դյուցազնի հայտնության կարոտը, որ հայոց բնաշխարհի սրբությունների դիպուկ խորիդանշնամբ ավելի է բյուրեղանում, երբ բանաստեղծը բացականչում է.

...Թե պատոեք սարերի սրտերը,
Արեւմեր կտեսմեք անթեղված:

Արցախ աշխարհի գոյության առասպելի խտացումն է «Աստղերը» բանաստեղծությունը.

Աստղերը սարերի թագերն են՝
Դյուսված հաղթական մարտերում,
Աստղերի շողերի ակունքը
Եռում է սարերի սրտերում:

Ասում են՝ աշխարհաստեղծնան ժամին աստղերն իրար էին բախվում: Արոյոք, այդ առասպելի արձագանքը չէ՝ այս բանաստեղծությունը: Եվ այդ արձագանքով հեղինակը չի՝ հաստատում իր արմատների նախաջրիերեղային վարեմությունը.

Սարերը ուղիներն իրենց
Աստղերի լույսով են գտնում,-

Եւ մեր գոյության՝ արդեն հիշատակված դրամայի միջնարարի տագնապներից չեն, մի՞թե, այս կոփածու քառատողը.

Եվ երբ իջնում է խավարը,
Կանչում են ահել ու ջահել.
- Ինչո՞ւ են քննել աստղերը,
Աստղերին ի՞նչ է պատահել:

Գրքի «Ղարաբաղյան նվազներ» շարքում այսօրինակ ընդհանրացումների կարելի է հանդիպել համարյա բոլոր բանաստեղծություններում: ⁷⁵

«Կարոտի կրակներ» գրքից հետո Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը տպագրեց Ս. Խանյանի «Արցախյան դողանջներ» ընտրանին: Գրականագետ Ա. Ղանիեյանը «Քնարերգակի էպիկական հումքը» հոդվածում անդրադարձավ բանաստեղծի բնապատկերային հյուսվածքների հղվածությանն ու բովանդակությանը, ընդգծեց. «Ամեն ինչի կարելի է հավատալ, բայց ոչ այն մտքին, թե Ս. Խանյանը ռեալիստ բանաստեղծ է: Քավ լիցի: Նա ռոճանտիկ, քնարական բանաստեղծների զարմից է՝ Գ. Սարյանի, Շովի. Շիրազի, Ջամո Սահյանի, Վահագն Ղավթյանի հավատավոր գործընկերը: Նույնիսկ թվում է, թե այս հողի վրա քնարական չլինել հնարավոր չէ: «Գանձ» բանաստեղծության մեջ Ս. Խանյանը մատնանշում է վիհապաշտ-գեղարվեստական իր ընկալումները՝ կարոտ, «Կանաչ-կարմիր» առօրյա, երազայնություն, սիրտը շոշափելու «սովորություն» եւ այսպես շարունակ՝ դեպի բանաստեղծի սիրտը տանող կածաններ...»: ⁷⁶

«Արցախյան դողանջներ» ընտրանու նոր շարքերից առանձնանում է «Զրույց Ջայաստանի հետ» փունջը: Շարքի քնարական հերոսը բանաստեղծն է, որ քայլ առ քայլ բացահայտում է խոհական-բնապաշտական իր ընկալումները, իր պոետական աշխարհի հոգեկան շաղախը, որդիական իր նվիրումը համենատում Ջայոց աշխարհի լեռնածին մասունքների հետ: Այստեղ ընդգծվում են մարդ եւ բնություն՝ որդի եւ մայր հայրենիքի գույների միաձուլվածությունը՝ ջրերի, երազների, հասկի, ծաղկի, խոճի գորեւենով եւ հետաքրքիր ընդհանրացմանը.

ԹՆԱՌԹՅԱՎԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

Ինքս ինձ հասա քո երակմերով,
Իմ մեջ տեսա քեզ,
Քո հունդից ծլած, աճած քո սիրով,
Քո պատկերն եմ ես: ”⁷⁷

Յայրենասիրական այս շարքը հնարավորություն է տվել բանաստեղծին իր ներշնչանքներն արտահայտել Յայոց աշխարհի բնապատկերի հյուսվածքով: Բնության նվիրվածության մեջ էլ արտահայտված են քնարական հերոսի նվիրվածությունը, հպարտությունը, պարտականությունը.

Քո այգիները արմատ են մետել
Իմ սրտի վրա,
Նրանց քնքշանքով հավերժ քեզ հետ եմ,
Քո կրծքի վրա:
Ես բողոք դարձած նրանց ճյուղերից
Միշտ քեզ եմ նայում,
Իմ շշումքները ժնվում են քեզնից,
Քեզնով հմայվում:
Աստղերի լեզուն անգիր եմ արել,
Քո լեզվին մոտ են,
Քո արեւ ես իմ մեջ եմ վառել,
Քո առավոտն եմ,
Իմ արշալույսն ու իմ մայրամուտը
Լուսիդ գումարն են,
Յավերժ բողոքում իմ խարույկմերը
Յուսիդ գումարն են: ”⁷⁸

Ամբողջ շարօնմ հայոց բնության մեծարանքում երեւում է նվիրյալ զավակը, որ նշանակում է մարդու եւ բնության պոետական մեկնությունների անհրաժեշտ առկայություն:

Ս. Խանյանի բանաստեղծական մտածողության նրբերանգ-մերը նոր կողմերով դրսեւորվեցին «Իմ ծիածանը» ժողովա-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

ծուռմ, որ տպագրվել է 2000թ., բանաստեղծի ծննդյան 70-ամյակի առթիվ: Բնության նրբերանգների եւ փոխակերպությունների հարստությամբ գիրքը հաստատեց Խանյանի ստեղծագործական խառնվածքի ինքնատիպությունն ու ճկունությունը: Դրանք նպաստել են, որպեսզի բանաստեղծը նոր կողմերով դրսեւորի իր ոճական մտածողության հնարավորությունները՝ բնության զգացողությունը, քնարականությունը, անմիջականությունը, գեղանկարչական խտացումը՝ քնարական բանաստեղծությունների եւ ծավալուն պետմների սահմաններուն: Այստեղ կարեւորվում է մի հանգամանք. գրքի բոլոր գործերը գրվել են 1988-ից սկսած՝ Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին:

Այստեղից է՝ թեմատիկ առանձնահատկությունն ու գեղարվեստական պատկերների հուզական լիցքը: Նետաքրքիրն այն է, որ հաճախ մարդու եւ բնության փոխհարաբերությունների փոխարեն հենց հանդես է գալիս Արցախը՝ որպես դարերից եկող եւ իր գոյատեւման համար մարտնչող դյուցազն-բնություն: Դրա վկայությունը «Ես Արցախն եմ» բանաստեղծությունն է: Արցախը, որպես քնարական հերոս, ինքն է գնահատում իր ուժը, հույսը, հրազեն հոգին, գենք-հավատը, որոնց հենվելով ներկայանում է.

Աստղային է երազ,
Ասուայ լիմել չեմ կարող,
Իմն են արած-դրածն,
Ես Աստված եմ արարող:
Ես իմ մորի քոիչըով
Դանճարին եմ հավասար,
Այդ են ասում իրար քով
Դաղիկանք ու Գամձասար:
Դայեր են սեգ սարերս,

Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Պիտի խոսեն հայերեն: ⁷⁹

«Իմ ծիածանը» գրքում օգտագործված է տեսիլքային պատկերի հնարանքը: Պատմությունն ու առօրյան անձնավորված հանդիպում են միմյանց՝ հաղորդելով տրամադրությունների եւ տպավորությունների լիցքեր: Դայոց Արցախի հնամյա սրբությունները լեզու առած դառնում են աստվածային բնաշխարհի պաշտպաններ («Տեսիլք», «Արեւսարի այցը», «Կավագ վանքը» եւ այլ գործեր): Արցախի պատմական ընթացքը բնութագրող հաջողված պատկեր է «Խաչենաձոր» բանաստեղծությունը, որում անձնավորված են Խաչեն գետը, ժայռերը, բերդերը, որոնք հասել են մեր օրերին՝ որպես հայաշունչ հուշարձաններ: Նման գործերից են «Ազորի քարանձավը», «Անտառի ցավը», «Վարդեր», «Զրույց անտառի հետ» եւ այլ բանաստեղծություններ: Ս. Խանյանը պատերազմական տարիների պաթուսը ներկայացնում է բնության երեւույթների եւ առարկաների միահյուսվածքում՝ նյութի արարումը հանձնելով առասպելի կամ հեքիաթի հնարանքի: Օրինակ.

Արեւի շողից ալ հագած ամպը
Փարզել է կրծքին Մռովա սարի,
Ամպը բամբակ է, Մռովը՝ պապը,
Խփում է քարին, որ կրակ վառի:
Կողքի լեռները թռռներն են նրա,
Կայծքարից ելող կայծին են փչում,
Պապն ու թռռները թեւ-թեւի տված,
Չին կրակով են ապրում ու շնչում: ⁸⁰

(«Պատկեր»)

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Այս «հին կրակը» ավանդականի պաշտպանության խորհրդանիշն է, ասել է թե՝ Արցախը եղել է, կա ու կլինի:

Բնության տարրերը գրքում իմաստավորված են պատերազմական տարիների նկարագրով: Անտառը ցնցված է, ցավ ունի («Անտառի ցավը»), վշտից խոժոռվել են Մռովն ու Թարթառը («1993»), այգիները կորուստներից լացում են («Կորուստ»), թթենին քայլում է պապի պես («Մեր թթենին»), ծիծեռնակները սգում են («Թմախիծ»), անտառը խորհում ու գրուցում է («Զրուց անտառի հետ») եւ այլն:

Բնապատկերային թարմ հյուսվածքներով աչքի են ընկնում նաև գրքում գետեղված «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո» եւ «Միեր» պոեմները:

Արցախի ամբողջ բնությունն անձնավորված մասնակցում է թե 9-րդ դարում տեղի ունեցած իրադարձությունների հերոսական կրիվներին եւ թե Արցախյան ազգային-ազատագրական պայքարի հաղթական ոգու արտացոլմանը: Այդ առանձնահատկությունն է գնահատում նաև գրաքննադատ Ռ. Առուշանյանը. «Իմ ծիածանը» հավաքածուի լավատեսական հերոսական ոգին արծարծող նյութին բնորոշ պատկերներով ու չափապատկերներով կիզակետված է «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո» եւ «Միեր» պոեմներում: Համադրելով պատմական եւ մեր նորօրյա գոյապայքարի դրվագները՝ վերոհիշյալ պոեմներում Ս. Խանյանը քնարակիկական շնչով, ռիթմական առանձնահատկություններով, արտահայտչական նորանոր միջոցներով երգում է հավերժի ճամփորդներ դարձած, մարտիրոսված հերոսների հավերժության փառքը: Նրանց սխրանքն ու կորովը ոգեղենացել են մեր մեջ, քանզի «Արցախ աշխարհի փրկության համար մարտնչում է եւ զոհվածների հոգին»:⁸¹

**ԱՐԿԱՐԻ ԹՈՎՍԱՍՅԱՆԻ «ԶԳՈՒՋ ՔԱՅԼԵՇ, ՄԱՐԴԻԿ» ԺՈՂՈՎԱ-
ԾՈՒԱ ԱՅՔԻ Է ԾԱԿԱՆՈՒՄ ՆԱԵՒ ԻԵՂԻՆԱԿԻ ԽՈՒԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ
ԴՐՍՆԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԽԱԿԵՏԻՑ: Բանաստեղծի խոհերի աշխարհը
իր տեսածն ու զգացածն է, իր կենսափորձի կուտակումները:
Կապված լիմելով սեփական ժողովոյի ճակատագրին, նրա հետ
տամելով բոլոր դժվարությունները, հոգու մեջ գումարելով հույ-
սի երանգները, Ա. Թովմասյանը հասել է մի սահմանագծի, որ-
տեղից պարզ երեւում են անցած ճանապարհի դառնությունն ու
ուրախությունը, իհասթափություններն ու լավատեսությունը՝
առնչված երկրին, հայրենի օջախին.**

Ինձ տվեցին թեւեր...
Բայց թռչելու համար
Պետք է լեռներն ինձ հետ վեր թռչեիմ...
Ինձ տվեցին թեւեր,
Բայց թեւերիս ուժը
Իմ երկրի հետ էր,
Եվ թռչելու համար
Երկիրն ինքը պիտի երկինք ելներ... ^{ա2}

Բանաստեղծը պատրաստ է «մութ ամպերից լուսի կաթիլ-
ներ պոկել», որովհետեւ դեռ «կեռներ ունի գերի», որոնց գա-
գաթներին շանթերն են շառաչում: Եվ պապերի գերեզմաններից
կանչող ձայները, եւ լեռների գագաթներին շառաչող շանթերը,
եւ պապերի գերեզմաններից շառաչող ճիշերը քնարական հերոսին
անընդհատ տանում են դեպի լեռները: Բայց, ավա՞ղ, «Չի դա-
դարում երբեք ցավի արձագանքը» («Իմ ծեռքերում», էջ 16): Այս
ցավից էլ ծնվում են բանաստեղծի խոհերը կյանքի, մանկության,

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈՒՀԻ ԽՈԴՐՀԱՌԻԹԻԴԻ

գալիքի, տառապանքի եւ հույսի մասին: Այդ խոհերը դառնում են պատկերներ, որոնցում լույսը կարող է թթառալ՝ ինչպես բարի առավոտ, լույսի դողանջները կարող են լսելի դառնալ, իսկ անհրաժեշտ երազները հնչել որպես երգ.

Նա հավատում է, որ
Արեւը ոնց էլ քնի, լուսաբացը կգա,
Արեւը թե զարդնի, գիշերը պիտի քնի...⁸³

Իր խոհական երգերում բանաստեղծը դառնում է հոգսաշատ եւ այդ հոգսերի միջից տեսնում է, թե ինչպես է «Խոռոված հովը ծառին գուրգուրում... Լույսի երազով սրտի խոսք ասում»: Դեռ ավելին՝ նա վախենում է, «Որ ծառերը հանկարծ դալար շուտի տեղ Չորուկներ դառնան», եվ ցնծում է՝ նկատելով, որ

Անձրեւ է մաղում...
Չորացած ճյուղի
Շոգսն է լվանում...⁸⁴

Զար աշխարհի ընթացքը բարի դարձնելու միջոցը բանաստեղծը համարում է «հավատը մանկան», որ «Ճյումները դառնան քնքշություններ ու կանչ»: Կյանքի հարվածները բանաստեղծի «աչքերի հորիզոնում անհուն թախիծներ» են ծովացրել, որոնք «ունեն ցավեր... առեղջվածներ»: Բայց նա միշտ էլ մնում է լավատես.

Բայց քեզ չի՝ թվում,
Որ ես արմատիս կանչով եմ խոսում,
Եվ լռությունս արձագանքն է կապույտ երկնքի,
Եվ իմ խոհերը արծիվներ են բոր,
Որոնք արեւի հրով են թելում: ⁸⁵

Տիրությունը բանաստեղծի համար եւ հզոր է, եւ անզոր: Այս

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀՈՒԹՅ

Դեպքում նրա խոհերի աշխարհում խշշում են հայրենի թթենիներ՝ կախարդ ճյուղերին անհայտ մնացած երգեր: Տարիներ անց նա այցելում է եւ «բափ տալիս թթենիների ճյուղերը մեկ-մեկ», բայց այլեւս չի լսում երգերն այն քաղցր: Գարնան հետ չեն վերադարձել թռչունները.

Ու ետ չեն դառնում...

Չգիտեմ՝ նրանց խռովեցրել են

Ծխով լվացած այս երկինքնե՞րը,

Թե՞ հոմեյունը մեքենաների...⁸⁸

Քնարական հերոսի հոգու խորքում անզոր տխրությունը ծուվիում է «խելահեղ անգրությանը» եւ «սրտում հյուսում իր բույնը»: Այլեւս չկան ոչ թռչուններ եւ ոչ նրանց երգերը: Բանաստեղծը այս պատկերի տակ խոսք է բացում անցած-գնացած տարիների մասին:

Տրամադրությունների տարբեր պահերին բանաստեղծի երգերը հյուսվում են հենց այդ ապրումներից. մի դեպքում՝ բախժոտ, մի դեպքում էլ՝ անքիծ ու ճերմակ: Դա բնական է: Վերջապես, երգը ծնվում է կյանքից եւ անցնում սրտի միջով: Դենց նման երգն էլ հուզում է ընթերցողին:

Դիմելով ինքն իրեն, բանաստեղծը նկատում է, որ ինքը պոկվել է իրենից եւ չգիտե, թե ուր է գնում: Նա անջատվել է մանկությունից, մայրամուտից, բայց հիշում է, որ «Դրաշը անտառ ունի», որի մեջ ծաղկանց բույրն է: Կյանքը հրաշք է, թե՞ բերկրանք,- խորհում է նա եւ որոնում իր երգը («Ես ինձանից պոկված», էջ 55): Բնության մեջ Ա. Թովմասյանը որոնում ու գտնում է մարդկային հավատի գույները.

Եթե ինչ-որ տեղ

Քամին ապրում է տերեւների մեջ,

Ծառերի կամչին պիտի հավատալ...

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՐԴԻ

Գետի ջրերից հասնել արեւին

Երազի թետվ...

Ծշունջմերը լուռ

Գրանցել քաքում սրտի զարկերում...⁸⁷

Ա. Թովմայանը հանդես է եկել բանաստեղծական շարքերով: Դրանցից են «Երեկոյի երգեր», «Երգեր Տաթեւին», «Սիրո մեղեղիներ», «Ցայցալույսի մանրանվագներ», «Երբ չի քնում լուսը», «Զրոյս բառերի հետ», «Բարի աստղեր», «Մամրաքանդակներ»: Այս շարքերը կյանքից փնջած գույներ են՝ ակունքը մեկ, ծփանքը մեկ, հյուսվածքը մեկ եւ բոլորն էլ՝ պոետական ինքնարացահայտումի հետաքրքիր օրինակներ: Նրանցում քնարական հերոսը բարձրաձայն հայտարարում է, որ «Մութի թեւերից ճերմակ սարսուռները հավաքած» տանում է «ամպերին հանձնելու», տանում է «սարերին պատմելու», սրտերից «փոխս առած երազները տանում է ծյուներին խառնելու» («Երբ չի քնում լուսը», էջ 69):

Մարդն իր այրումով հավերժացնում է կյանքը («Թոնրի ծխի մեջ», էջ 75), ցավը դարձնում է երգ՝ տխուր սրտերը սփոփելու համար («Երբ ցավս», էջ 85), խորհուրդ է տալիս լինել համբերատար («Ճամբերություն», էջ 87), լույսը դարձնում է աստղային հավատ («Իմ թեւերին», էջ 92), խորհուրդ է տալիս հավատալ անցնելիք քայլերին.

Քո ծանապարհին այնքան երգեր կան,

Այնքան հույզեր կան քո ծանապարհին:

Ու լավ երգերի կախարդանքներ կան,

Դու լոկ քո երգի տանջանքով գնա: ⁸⁸

Ա. Թովմայանը քայլել է երգի դժվարին ծանապարհով, տքնել է, երազել, ընթերցողին հանձնել այնպիսի ստեղծագործու-

ԹՆԱԴԻԹՅԱՆ ԵՎ ԽՈԴՀԻ ԽՈԴՐՀԱՌԻՒԹԻ

թյուններ, որոնք նրան մատուցում են սիրո, հերոսացման, արարման, հոգու գույմերի հարստացման եւ այլ խորհուրդներ: Նա ապրել է մաքառման ժամեր, րոպեներ, եւ յուրաքանչյուր ակնթարթի մեջ երազել միայն կյանքի մասին, որ դեռևս փրկվելու կարիք ունի:

Եկ պեղենք, պեղենք ակնթարթները,
Ակնթարթները մեր հավատներն են,
Ակնթարթներում մարենք ցավ ու հոգս,
Ու կյանքներ փրկենք ակնթարթներում:

Ակնթարթները բացվող օրվա մեջ
Ապրող հավատի սրբասուրբ երգ են,
Ակնթարթներում արարենք երգեր,
Մահեր ավերենք ակնթարթներում: ^{այ}

Ա. Թովմասյանի պոեզիայի մասին իրենց դրվատանքի խոսքն են ասել անվանի գրողներ ու գործիչներ: Բանաստեղծ Գ. Գաբրիելյանը մասամբ ընդգծել է. «Բանաստեղծ Ա. Թովմասյանի բանաստեղծական ծնունդը կատարվել է իմ աչքերի առաջ: Ես վկան եմ նրա ամեն լավ տողի ու լավ երգի: Եվ իզուր չէ, որ նա ինձ համարում է հոգեհայր, իսկ ես նրան՝ հոգեորդի:»

Այսպիսի հարազատության պայմաններում ծնված ամեն մի երգ, պարզ է, որ պիտի դառնա իսկական ուրախություն:

Ահա այդպիսի ուրախություն ապրեցի, երբ նա բավականին հարուստ ինքնագրով ինձ նվիրեց վերջերս հրապարակած իր «Զգույշ քայլեք, մարդիկ» ժողովածուն: Այդ գրքի ամեն մի երգ, սկսած վերնագիրը բովանդակող երգից, սրտի երակներով շիկացած մի բեկոր է, որի հետ շփվելուց շիկանում է նաև քո սիրտը, ու գոհ ես մնում, որ դու այս հողի որդին ես, եւ այս երգերը գրել է քո հարազատը:

Գիրքն ընթերցելուց հետո չկարողացա զգացմունքներս զս-

ՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԾԻ ԽՈԴՐՀԱՌԻԴՐ

պել եւ զանգահարելով նրան, ոչ միայն շնորհավորեցի, այլև երանի տվի նրան ու ինձ, որ իր նման հոգեւորդի ունեմ ես:

«Իմ երգերի մեջ» բանաստեղծությունը մի խսկական կոթող է, որի մեջ ամեն տող մի քանդակված պատկեր է, սրտապարար նվագ:

Իսկ եքսպրոմտով գրված վեց տողամոց «Եվ այգեգործի մկրատը հաճկարծ...» բանաստեղծությունը մի ավարտուն պոեմ է:

Ա. Թովմասյանն այն բանաստեղծն է, որի խոհը կարող է «բռրբ արծիվ» դառնալ ու թելել «արելի հրով», իսկ «Սարից փախած քրտնած զեխյուռը» «Մի լուռ առավոտ տաք կարուտներ է ասեղնագործում քո դեմքի վրա»:

Բերենք բանաստեղծ Վ. Չակորյանի օմահատականը. «Ա. Թովմասյանը եւ ես սերմղակիցներ ենք: Նրա անդրամիկ բանաստեղծությունները կարդացել են «Գարուն»-ում, շատ տարիներ առաջ, երբ դեռ ուսանող էի: Եվ ամենաբնորոշ գծերը, որով վարակել են ինձ Արկադիի բանաստեղծությունները, ապրումի անմիջականությունը եւ ամնեղծությունն էին: Ենիշտն ասած, վաղ տարիներից սկսած, իմ մեջ արմատավորված սովորություն կատողի մեջ բնավորություն փնտուի: Արկադիի գործերի մեջ այդ բնավորություն՝ մեղմության մեջ ազնիվ, պարզ ու խոր, ես տեսա: Տարիներ հետո, բարեբախտաբար, այդ հատկանիշները բնութագրական դարձան նրա համար: Եվ բեռն էր, խոհն էր, որ ծանրացավ: Ու հասուն ցավը.

Իմ երազների
Երկարող շոթան
Ինչքան մեծացավ,

Այնքան զգացի
Թռչող թեւերիս՝

Ցավ ու ծանրություն...

Արկադին, ախտի խստովանել, հետաքրքիր անձնավորություն է, ինքնատիպ հակասությունների ու միասնությունների ներդաշնակություն է ներկայացնում, որոնումն է ինքնատիպ, գտնելն ու գտնումով չբավարարվելն է նորովի, ինքնադժգոհությունն է բերրի ու արգասաբեր: Եվ իր պոեզիայով, իր համեստ խառնվածքով, վաստակով ու անխառն տարերքով նաեւ մշտապես դիրքում է, անում է այն գործը, որ միայն ինքը պիտի անի, գրում է այն գործը, որ ինքը միայն պիտի գրի՝ հաճախ էլ որոնման շող ծգելով առարկայի ու երեւոյթի խորքը՝ միանգամայն անսպասելի ու չդիտված կողմից, շնչի մեջ բարմացնելով բառը, հարստացնելով պատկերային իր կառույցը: Դուզական տարերքի բանաստեղծ է Արկադի Թովմասյանը, հոգեբանական բափանցումների ու հայտնությունների նախանձախնդիր, զգացումի ու խոհի հայտնիի մեջ՝ անհայտի ծգողող, ինչպես, ասենք, «Զգույշ քայլեթ, մարդիկ» եւ բազում ուրիշ երգերում»:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀՐԵՎԱՆՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾԱՐԱՎ

1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Սովետական ժողովուրդը ոտքի ելավ կրծքով պաշտպանելու իր ընդհանուր հայրենիքը: Թշնամին դաժան էր եւ անողոք:

Սեծանուն բանաստեղծ Ավ. Խսահակյանը պատերազմի սկզբին գրեց իր «Շազմակոչ» բանաստեղծությունը, իսկ մեկ տարի անց հավաստեց. «Երկրագնդի գրեթե բոլոր ազատասեր եւ դեմոկրատ ժողովուրդներն իրենց դրոշները միացրին մեր դրոշին՝ աշխարհի բախտը որոշող այս պատերազմի մեջ, մի անչափելի պատերազմի, որ գիշեր ու ցերեկ մղվում է մքննոլորտի մեջ, օվկիանոսների եւ հսկայական տարածությունների վրա՝ չար, մթին ուժերի դեմ: Մի ահավոր ռեակցիայի դեմ, նացիստական-ֆաշիստական ռեակցիայի, որ գազազած գալիս է մահացու հարվածներ տալու կուլտուրայի առաջապահ ժողովուրդներին, ոչնչացնելու նրանց հոյակապ քաղաքները, արվեստի հրաշակերտները, կողոպտելու նրանց ինչքը եւ բռնագրավելու նրանց հողերը եւ, վերջապես լծի տակ քաշելու աշխատավոր մասսաներին... Մինչդեռ մարդկության անմահ իդեալներով գոտեանդված ազատասեր եւ դեմոկրատ ժողովուրդների այս սրբազան զինակցության հաղթանակի լուսապսակը հյուսվում է օրեցօր... Լուսի եւ ազատության այս փրկարար եւ մեծագույն պայքարին իր սրտառուց մասմակցությունն է բերում հայ փոքրիկ ժողովուրդը, որ մեծ է սակայն իր քաջ որդիների հերոսությամբ»:¹

Հայրենական մեծ պատերազմը նոր, անհետաձգելի խնդիր-

ՀԱՊԹԱՆԱՎԱՐ ՀՐՃԱՎԱՆՔ, ԽԱՊԴԱՊՈՒԹՅԱՆ ԾԱՐԱՄ

Աներ դրեց նաև գրողների առաջ: Պատերազմի հենց առաջին օրերից Ալ. Տվարդովսկին, Կ. Սիմոնովը, Ա. Գայդարը եւ շատ ուրիշներ գինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը եւ գրով, եւ գենքով:

Խորհրդային ստեղծագործող մտավորականների շարքերում էին եւ հայ գրողները:

Իրենց քննութ երգը շեփորի փոխեցին Ավ. Խահակյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Թ. Չուրյանը, Յ. Շիրազը, Ս. Վահոնին, Ա. Վշտունին, Ա. Գրաշին, Ս. Գրիգորյանը, Գ. Բորյանը, Բ. Զանյանը, Ղ. Կոմունին եւ շատ ուրիշներ:

Դայտնի է, որ պատերազմի առաջին օրերին բանաստեղծները առավել արագ արձագանքեցին Հայրենական մեծ պատերազմին: Որպես տրիբուն բանաստեղծներ նրանք կրակու երգերով ու պոեմներով ասացին ատելության ու ցասումի իրենց խոսք ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ: Ամբողջ պատերազմի ընթացքում նրանք աշխատում էին անխոնչ տքնությամբ: Նրանց հայրենասիրական երգը թեւեր առաջ մտնում էին գինվորների գետնատնակմներն ու խրամատները, նրանց հետ խոսում հարազատի կարոտով: Դայ պոետները գրեցին քնարական, խոհական եւ հրապարակախոսական բանաստեղծություններ, մարտակոչներ, ուղերձներ, քնարա-էպիկական պոեմներ, արդիական ու պատմական թեմաներով դրամատիկական երկեր: Պատերազմի տարիներին հայ պոեզիան բավարարում էր ընթերցողների հոգեկան պահանջները, ռազմի հրով ջերմացնում նրանց սրտերը, արթուն պահում պայքարի ոգին, բորբոքում զգացմունքները, մղում սիրազդրությունների:

1941 թ. հունիսի 22-ին, պատերազմի հենց առաջին օրը, Ն. Զարյանը գրեց սքանչելի տողեր հայրենիքի սիրո վսեն զգացմունքի մասին.

Դու քաղցր ես, իոդ իմ հայրենի,

Չկա քեզմից անուշ անում,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում։²

Դայրենասիրության նման զգացումները տիրապետող դարձան պատերազմի շրջանի սովետահայ ամբողջ պոեզիայում։ Դրանցում իշխող տրամադրությունը հավատի եւ ատելության խոսքերն են։ Պատերազմի հենց սկզբից ճանաչվեց թշնամին, որը մահ էր սփռում, խորտակում էր կյանքեր, ավերում դարավոր հուշարձանները։ Բանաստեղծները հաղթանակի խորին հավատով ու ատելության հզոր ուժով ժողովրդին կոչ էին անուն՝ ոչնչացնելու գազանացած, մարդկային խիդճն ու բանականությունը կորցրած թշնամուն։ Այդ ատելությունը ծայր է առնում մարդու, նրա բանականության, նրա մեծ ուժի նկատմամբ ունեցած սիրուց, այսինքն՝ չարիքի արմատները վերացնելու գիտակցությունից։ Այդ ատելությունն ունի կենսական, հումանիստական խոր բովանդակություն եւ ավարտվում է կյանքը հաստատող, հեռանկարային պատկերով, ինչպես Յ. Շիրազն էր ասում։

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ։

Մենք ծեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ։

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ։³

Բանաստեղծները հավատացած էին, որ սովետական ժողովուրդները համախմբված ռուս մեծ ժողովրդի շուրջ, կնվաճեն

ՀԱՊԹԱՆԱՎԱՐ ՀՄԴԱՎԱՆՔ, ԽԱՊԴԱՊԴԻԹՅԱՆ ԾԱՐԱՆ

Իհաղթանակը: Նրանք առաջին հերթին գովերգում էին ոռւս մեծ ժողովրդին, նրա հերոսությունը: Արտահայտելով իր հավատն ու վստահությունը ոռւս ժողովրդի ուժի եւ հզորության հանդեա, Գ. Սարյանը գրել է.

Դավատում եմ քեզ, ոռւս մեծ ժողովուրդ,

Դավատում եմ ես քո հաղթանակին,

Քո զավակների աչքերի մեջ լուրք

Թշնամու մահն եմ տեսնում ես կրկին:

Քո զավակների հպարտ հայացքում

Եղերն եմ կարդում քո լույս պատճության,

Եվ ամեն մի ոռւս զինվորի սրտում

Միրտն է բարախում քո դյուցազնական: ⁴

Մարտիկ-բանաստեղծ Թ. Շուրյանը ղեռեւս խաղաղ օրերին, 1940 թ. գրել է.

Խստանում եմ ամպերը պատերազմի ու մահի

Եվ ուր որ է երկինքը շուտով անձեւ կմաղի,

Եվ կլիմի աշխարհում մի փոթորիկ կատաղի,

Խստանում եմ ամպերը պատերազմի ու մահի: ⁵

Եվ երբ իիտլերականները ուխտադրուժ ներխուժեցին ԽՍՀՄ, երբ ֆաշիստների արյունոտ կրունկների տակ ցնցվեց հայրենի հողը, Թ. Շուրյանը կամավոր գնաց գործող բանակ: Սեւաստոպոլի հերոսական պաշտպանների շարքերում նա մարտմնեց ժողովուրուների ազատության, պատվի ու երջանկության համար: Սեւաստոպոլի համար մղված մարտերի հրե ցոլքերի տակ Թ. Շուրյանը գրեց իր մարտաշունչ բանաստեղծությունները՝ ստեղծելով հերոսական երգերի մի հիանալի շարք: Կռվի ա-

ՀԱՊՈՅԱՆԱՎԿԻ ՀՐԴԱՎԱՆՔ, ԽԱՊՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱ

Պաշին օրերին դիմելով Մեկենզեյան լեռներին, թ. Շուրյանը գրեց.

Բանաստեղծն է ահա ձեր փեշերին կանգնած
Ձեռքին նոնակներ ու սրտի մեջ կրակ: ⁶

ԽՍՀՄ բազմազգ զինվորների հետ գոտեմարտի մտնելով գազազած թշնամու հրոսակների դեմ, Շուրյանը ավելացրեց.

Լավ է երգը շուրջին, ոտքի վրա մեռնել,
Քան ապրել շղթայված որպես ճորտ ու գերի: ⁷

1942 թ. հունիսի 22-ին, թ. Շուրյանը ընկնում է հերոսի մահով՝ ձեռքին հրացանը, գրպանում կրակոտ բանաստեղծությունների շարքը: Մարտիկ-բանաստեղծի ճակատը պսակում է հերոսությունը:

Քաջարար զոհվելուց անմիջապես առաջ թ. Շուրյանը գրել է.

Դադրանակի արեւը կվառվի հրով,
Ազատության անխառ ու սուրբ լուսաբացին,
Եվ լեռներն ու ծովը միշտ կիշեն սիրով
Գանգրագիսակ ու քաջ այն հայ բանաստեղծին: ⁸

1945-ի մայիսի 9-ից վարսուն տարի է անցել, աշխարհի առաջադեմ մարդկությունը տոնում է Մեծ հայրանակի օրը: Վարսուն տարվա ընթացքում շատ ջրեր են հոսել: Սակայն նրանք, ովքեր անցել են պատերազմական կրակների միջով, նրանց սրտերում դեռևս մխում են վերքերը, դեռևս արձագանքում է պատերազմի շառաքը: Մարդիկ չեն մոռացել աշխարհավեր այդ պատերազմը: Ինչպես բոլոր բանաստեղծները, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում ապրող ու ստեղծագործող գրողները ետ-

պատերազմյան շրջանում ստեղծել են բազմաթիվ չափածո եւ արձակ արժեքավոր գործեր:

1941 թ. հունիսի 22-ից բանաստեղծ Բ. Զանյանը գինվորագրվեց Երկրորդ համաշխարհայինին եւ մինչեւ պատերազմի ավարտը գենքը ծեռքին հավատով մարտնչեց հիտլերյան ֆաշիստների դեմ: Երգիչը կիսատ շատ գործեր թողեց տանը՝ անպարտ երգ, խափանված հարսանիք, նոր մտահղացումներ, թողեց կարոտից ու ծանր կյանքից մխացող հարազատ սրտեր:

Նադթանակի պտուղները ճաշակած գինվոր-երգչի համար պատերազմն արհավիրը է, ավեր ու նահեր, խաթարված երազանքներ:

Բ. Զանյանի «Զինվորը հիշում է» շարքը, հետպատերազմյան շրջանի վերհուշեր են, որոնք, սակայն, խոր ապրումների կուտակումներ են համդիսանում: Այդ վերհուշերը դառն են, վառող, կարոտից կարոտ ծնող, ցավից՝ ցավ, երազից՝ երազ: «Ասում եմ գնամ» բանաստեղության տակ կարդում ենք. «1945 թ. Վիեննա»: Զարմանալի մի կարոտ կա այստեղ: Ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ մարտնչող զինվորը ոչ թե փառաբանում է իր հրացանն ու թնդանորը, թշնամուն տապալող արկերը, այլ երազում է հայրենի օջախի ճամփաները, դաշտերի գարումնը, տունը: «Ես շատ եմ մաշել հեռու ճամփեքը», - ասում է նա, - «Հերիք է, գնամ մեր տունը տեսնեմ»: Նեռումներից նրան կանչում են սերը, լեռները, հորիզոնները: Արյուն տեսած զինվորյալը ուղղակի պոռքկում է.

Օրեր են անցել, տարիներ հերթով,
Սիրտս լցվել է դարձի կարոտով,
Գնամ, ա՛յս, գնամ, արյունից հետո
Մեր խաղաղ հանդի ծաղկումքը տեսնեմ: ⁹

Ինքնակենսագրական փաստերի հիման վրա Բ. Զանյանը ստեղծում է այնպիսի երգեր, որոնք բնութագրում են իր ժամանակակցի խոհերն ու ապրումները, կոնկրետ փաստից բանաստեղծը վերանում է, ընդհանրացումներ կատարում՝ ներառնելով իր սերնդի հոգու շարժումն ու հարուստ աշխարհը: Այդ տեսակետից հետաքրքիր է «Ղեմս դաշտ չէր» երգը: Քնարական հերոսը բանաստեղծն է: Վերադառնալով ռազմաճակատից, նա նվիրվել է իր նախընտրած գործին՝ առջևը միշտ ունենալով մի «անզարդ սեղան»: Մինչեւ պատերազմը հերոսը չի հասցրել լինել այն, ինչ երազում էր: Այդ նպատակին նա հասել է կրվից հետո: Սակայն դրանով չի ավարտվում ասելիքը: Բանաստեղծական հյուսվածքը բացահայտում է հոգեբանական շերտեր, որոնք նույր երանգներով համոզում են ընթերցողին՝ երիտասարդական տարիների տպավորությունների անջնջելիության մեջ: Պատերազմ տեսած երգչի հոգում խաղաղ տարիներին ամենուրեք ապրել է զինվորը.

*Զինվորը այդ միշտ էլ, միշտ էլ
Իմ մեջ մնաց, մնաց կողքիս,
Մնաց՝ միշտ էլ պատրաստ մարտի,
Երբ իմ դիմաց մարտադաշտ չէր,
Այլ մի փոքրիկ,
Պարզ ու գողտորիկ գրասեղամ...¹⁰*

Բ. Զանյանի զինվորական բանաստեղծությունների շարքը ինքնաբացահայտման ծփանքներ ունի, ասել է թե՝ իր ժամանակակցի անցած ճանապարհի եւ նրա հոգու նկարագիր է: Այդ են ապացուցում «Թաթով Յուրյանին», «Կամգնեց մնաց», «Ես չեմ լացել», «Ես պիտի ասեմ» եւ այլ երգեր: Բանաստեղծի բնութագրմամբ մահմ ամողոք է, որովհետեւ խօց մի այնպիսի մարտիկ-երգչի կյանքը, որպիսին թ. Յուրյանն էր: Բայց ինչ-որ չա-

Վիով իրեն սփոփում է բանաստեղծը, քանզի գոհված թաթուի երգը դարձավ վրեժի արկ եւ գնաց գրոհի («Թաթուլ Շուրյանիմ»):

Դայ բազմադարյան պոեզիան ժողովրդի լայնախոհ սրտի, մարդասիրության եւ կենսասիրության արտահայտություն է: Այդ ավանդույթը շարունակվում է, եւ դրան անմասն չէ Բ. Զանյանը: Բանաստեղծի գինվորական հուշերը սկիզբ առնելով իր սրտից ու հայրենի օջախից, գնում-փարպում են բոլոր այն սրբավայրերին, որոնք կապված են մյուս ժողովուրդների մաքուր ու նվիրական զգացումներին: Վկան՝ «Մոր հուշարձանը Պիրքյուափիսում», «Մերձնոսկովյան անտառ», «Պիսկարենյան գերեզմանոցում» եւ այլ ստեղծագործություններն են:

Բ. Զանյանի գինվորական երգերը պատերազմի մասին են, պատերազմի դեմ: Դարերի ընթացքում պատերազմների ամենակուլ հրոխմերի միջով անցած իր ժողովուրդի կենսափորձն է խոսում բանաստեղծ որդու շրթերով: Այդ խոսքը ցասում է ու բողոք, ցավ է ու կակիծ, որ ամբողջությամբ ժխտում են պատերազմը: Այդ ցասումի ու ցավի արտահայտություններն է «Պիսկարեւյան գերեզմանոցում» շարքը: Բազում սրտեր են անթեղված այդ գերեզմանոցում, ուր չկան տարբեր շիրիմներ, չկան եւ քարեր, շիրմաքարեր, «Եթե շիրիմ կա՝ այդ հողն է այս սուրբ»: Սահման օղակը ընկած քաղաքում ընկել են մարդիկ՝ «Որը թշնամու արկից, Որը գնդակից, Եվ որն էլ արկից, գնդակից ահեղ՝ Սովից տաճաշից»: Այժմ «Դամատարած կամաչների մեջ վառվուն, ծաղկած վարդարփեր կան», որոնց մեջ հառնել է քարացած մայրը, զույգ ծեռքին դափնեպսակը, իսկ ոտքերի տակ՝ «Այս մաքուր, ազնիվ, փափուկ կանաչը»:

Բ. Զանյանի գինվորական երգերը պատերազմական ահեղ արկերից կրակված, վիրավոր սրտի գեղումներ են: Շուգիչ են դրանք, անմիջական, որովհետեւ ճշմարտացի են: Իսկ հայտնի է,

որ արվեստի ուժը հենց ճշմարտացիության մեջ է: Ստեղծելով պատկերավոր հյուսվածքներ, բանաստեղծը հուզական երանգ-ներով ո՞չ է ասում պատերազմին: Նրա հոգու շարժման ելեւէջ-ներում պատերազմի պատկերը ծխածածկ բլուր է, որ չի անհետանում ոչ մի քանուց ու հոդմից, որովհետեւ դա կրակված սրտի ծուխ է, ընկերների, հարազատների կորստով վառվող հոգու հետք:

Սրբավայրեր են գոհվածների հիշատակին կառուցված հուշարձանները, եղբայրական գերեզմանոցները, ուր այցելողները «չեն խոսում», որպես հարգանքի տուրք «լրում են», որ լսեն «Դոդի տակ պառկած մարդկանց ձայնները, լրած ձայնները»:

Զինվորական երգերում Բ. Զանյանը իր խոսքի նյութը, ասելիքը, պատկերները վերցնում է պատերազմական թեժ պահերից եւ ետպատերազմյան շրջանի փոփոխություններից: Բոլոր դեպքերում բանաստեղծը պատասխանում է օրվա հրատապ հարցերին: Նրա համար պատմությունը դառնում է դաս ու դպրոց: «Զինվորի հին երգերը» ոտանավորը այս գաղափարի վկայությունն է: Յավերից խոցված հին զինվորը խնդրում է, որ նոր ժամանակների սերունդները չփորձեն խոցել իրեն, որովհետեւ նա նորից է ծնվել «պատերազմի բոցերից»: Վերքեր է ստացել նա կովի կրակներում, եւ, ծիշտ է.

Գոցվել են այդ վերքերը խոր,
Դարձել վաղուց սպիսեր սեւ,
Կորուստներիս ցավը սակայն
Նոռ ձայնում է սրտիս մեջ...
Ու վերքերս թեև գոցվել,
Բայց մոտեցող ցրտի դեմ,

Եղանակի դեմ փոփոխվող
Զգայուն են մնում դեռ: ¹¹

Նույն ապրումների եւ զգացումների արդյունք են «Ես հաճախ», «Նորից գարունը», «Զարթնող անտառը» եւ այլ բանաստեղծություններ:

Խույս տալով սխեմատիզմի կապանքներից, Բ. Զամյանը զինվորական երգերում եւս իրեն դրսեւորեց որպես ժամանակի հրատապ պրոբլեմներով ապրող, ժողովրդական կենսափորձով եւ իմաստությամբ անցյալի հիշատակները գնահատող, կորուստների միջից գալիքին հավատով նայող քաղաքացի-բանաստեղծ:

Բանաստեղծ Գ. ՇՈՎԱՆԵՓՅԱՍԸ այն սերնդի ներկայացուցիչներից է, որի պատաճեկությունն անցել է Մեծ հայրենականի կրակների միջով, որի շրեթին բրթացող «հայրենասիրություն» սրբազն բառը իր կոնկրետ պատկերն ստացավ զինվորի ցաման ու վրեժի մեջ: Իր հերոսական սերնդի անունից էլ խոսում է բանաստեղծը զինվորական հուշ-երգերում, որոնք ամփոփված են «Զինվորի երգը» ժողովածուում: Զինվորական հուշերով հարուստ բանաստեղծի համար հայրենասիրության զգացումը տարբեր նրբերանգներ ունի: Այդ գույմերն ամեն դեպքում իրենց սկիզբն առնում են կենսական հող ունեցող հուշերից: «Չուշը» բանաստեղծության մեջ հեռուներից եկած հանքախույզները տեսնում են Ղարաբաղի երկնահաս լեռները եւ վերիիշում իրենց լեռնցի զինվոր ընկերոջը, որի հետ քաջարար մարտնչել են ոստիսի դեմ ու տեսել նրա հերոսական մահը բարձունքի վրա: Ղարաբաղի մահատակված զինվորի քաջությունն ու սերը բարձունքների համեաց կապված է հայրենի երկրամասի, հայկական օջախի հետ, որի բանաստեղծական հաջող ընդիմարացումը Շովանեփյանը կատարում է քնարական հերոսի միջոցով:

Այո՛, լեռան արծիվ էր նա՝
Դասակ առած այս սարերում,

Դասկանում եմ, պարզ է հիմա,
Թե ինչու էր բարձունք սիրում: ¹²

Ուազմաճակատից տուն չվերադարձած գինվորները բանաստեղի հուշերում մնում են ջահել ու պարթել: Գ. Դովսեփյանի «Մազերս Ե՞րբ ճերմակեցին», «Դուշարձանի մոտ», «Սի մարդ էլ գնաց» բանաստեղծությունները հուզում են կարոտի ու ափսառքի ընդգծման ուժով, անմիջականությամբ: Մարդկային սիրութ չի կարող մոռացության տալ այն վերքերը, որոնք դեռ չեն սպիացել: Դնարավոր չէ մոռանալ նրանց, ում ժպիտները ծովագել են աշխարհի խաղաղ արշալույսներին, ովքեր նահատակվել են հեռավոր ափերում՝ մահվան ճիրաններից խլելով աշխարհի լուսավոր գալիքը: Նրանք վերադառնում են իրենց հարազատ քադարներն ու գյուղերը՝ հուշարձան դարձած:

Դետպատերազմյան շրջանում չի եղել մի բնակավայր, որտեղ գոհված մարտիկների հիշատակին չկանգնեցվեին հուշակորոյ, հուշարձյուր կամ համալիր: Դրանց մեջ առաջին հեռթին խոսում է մարդկային երախտագիտությունը: Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ «Ոեքվիեմ» երգը հնչում է որպես նոր սերնդի երախտագիտության բանաստեղծական անմոռանալի մի ընդհանրացում: Դայրենիքի կանչով հերոսները մի օր կոչի են գնացել, մայր հողի փառքը բարձր պահել ու զոհվել նրա համար: Իսկ հիմա եկել են հուշարձանի տեսքով ու չեն ժպտում, չեն զարթնում: Նոր սերունդը չի մոռացել ու չի մոռանա երբեք նահատակված հերոսներին: Նրա շոթերին հնչում է միայն երախտիքի խոսքը.

Ձեր թափած արյունը բանկ
Իզուր չի անցել,

Զեր արյան ամեն կաթիլ
Ծաղիկ է դարձել... ¹³

Երախտագետ սերնդի որդիական խոսք է Գ. Գաբրիելյանի «Պապիս հուշարձանը» բանաստեղծությունը՝ առինքնող, սրտաբուխ:

Նման զգացումից ծնված երգերում կարոտի ու մրմուռի հետ միասին զգացվում է ժողովուրդների պատմական հաղթանակի նշանակությունը: Այդ երգերի բնորոշ էլեմենտը կորցրածի ափսարների հետ մեկտեղ վերածնվողի սփոփանքն է:

Վ. Դակոբյանի, Գ. Գաբրիելյանի, Յ. Բեգլարյանի, Վ. Օվյանի, Ա. Դովիհաննիսյանի, Գ. Աղաջանյանի, Ս. Խանյանի, Մ. Յախշունցի, Ն. Ավագյանի պատերազմական թեմայով գրված երգերում հնչում է խաղաղության նոտիվը:

Խաղաղությունը բոլոր բանաստեղծների մտահղացումներում ու մտապատկերներում կռվից տուն դարձած գինվորի հարսանիք է, ամեն օր պատուհանի տակ հնչող նուրճների զարկ, դպրոց հաճախող աշակերտների զիլ կանչ-երգ, ապագային ծգվող լուսավոր ճանփաներ: Այդ երգերում քնարական հերոսը իրեն զգում է կյանքի հորձանուտում հասունացած: Խաղաղությունը բանաստեղծների համար միայն սեփական հարկի տակ վառվող լույսը չէ, այն գարուն է, հողագնդի ընթացքը փոխող ուժ, բնությունը ջահելացնող երակ: Խաղաղությունը մայրացող սեւահող է, երկրի բարախող սիրտ, եւ այնքան համակող է, որ մարդկանց աչքերին աստղերն ասես խաղաղության օգտին ստորագրություն լինեն: Խաղաղությանը նվիրած երգերի պատկերային հենքերը ջերմացնող են, գեղարվեստական խտացված համադրությունների հիանալի օրինակներ: Այդ տեսակետից ուշագրավ է Վ. ԴԱԿՈԲՅԱՆԻ «Լուսի հրավեր» պոեմը՝ նվիրված Սովետական Սիության հերոս Թեմիկ Ավքանդիլյանին, որն իր կյանքը զոհել է

Մեծ հայրենականի մարտերում: Բանաստեղծը ժամանակի գաղափարական բարձունքից կարդում է մարդկանց հուզաշխարհը, գեղագիտական իր դիրքավորումը լուսավորում շքեղ գույներով, անմահների շունչն ու ոգին զգում ապրողների մեջ:

Աստղերմ իշել, թառել թուփ ու ծաղիկներին,
Լում էին շշուկները
Յավերժության,
Որ թեմիկի կերպարանքով կանգնել իմ դեմ,
Զրուցում էր ջերմագորով...
Երկա՞ր, երկա՞ր ես նայեցի նրա վառվող
Աչքերի մեջ,
Ես նայեցի խորքն իմ հոգու,
Ուր վառվում է հերոսմերի
ամմահության հուրը անշեջ...
Ապա կամաց, դանդաղորեն ինձ գտա ես
Սարդկային ջերմ հոսքերի մեջ:
«Իմ արյան մեջ հայրենիքն է
Յավատամքի ննան ծաղկում»: ¹⁴

Վ. Յակոբյանի «ճամփաները», «Անհայտ զինվորի հուշարձանի մոտ», «Նախկին զինվորի մտորումներ», «1941», «Սարենիկի պարը» եւ այլ բանաստեղծություններ պատերազմի արհավիրք տեսած, հաղթանակի բերկրանքն ապրած մարդու հոգու աշխարհն արտացոլող մնայուն արժեքներ են:

Դր. ԲԵԳԼԱՐՅԱՆԸ ստեղծում է խաղաղությանը նվիրած քնարական հետաքրքիր բանաստեղծություններ: Յաճախ առօրեական թվացող փաստի ակունքից բանաստեղծը բխեցնում է ժողովրդի անցած ճանապարհի պատկերը: Տալով իր ժամանա-

Կակցի քնարական դիմանկարը, Յ. Բեգլարյանը չի մոռանում աշխարհի խաղաղության, մարդկության ազատության համար մարտնչած մեր լեռների քաջ զավակներին։ Նա ներքին հպարտությամբ բացականչում է.

*Քաջերի մեջ քաջ եք եղել
Ղարաբաղի քաջ որդիներ,
Դադրանակի կանչ եք եղել,
Ղարաբաղի քաջ որդիներ։¹⁵*

Ժողովուրդների խաղաղափրական տրամադրություններն իրենց յուրահատուկ արտացոլումն են գտել նաև Ա. ՇՈՎՃԱՆԻ-ՍՅԱՆԻ ստեղծագործություններում։ Նրա «Անմահների ձայնը» ժողովածուում «Կեռաստանների կանչը» գրքում զետեղված «Զինվորի վերադարձը», «Խաղում է ժամանակը», «Զինվորը վերադարձավ», «Երգ խաղաղ օրվա» բանաստեղծություններում ընդգծված է այն միտքը, որ պատերազմ հրահրող ուժերը ինչ-քան էլ չարանան, չեն կարող պատնեշել խաղաղասեր ուժերի շքերթը, որովհետեւ նրանում միավորված է բարի կամքի տեր մարդկանց, ազատատենչ ժողովուրդների միասնությունը։ Հավատի ու պայծառ լավատեսության զգացումները շաղախված են երկրի հզրության եւ արթուն բանակների ուժին։

Ա. Շովիաննիսյանը ծգուում է պատկերել զոհյալների անմահությունը, նրանց ներկայությունը բոլոր սերունդների շքերթներում։ Այս գաղափարն առանձնապես ընդգծված է «Անմահների ձայնը» գրքում։ «Զոհվածներն են խոսում» բանաստեղծության մեջ քնարական հերոսը ասես լսում է մարտիրոսվածների ձայնը, այդ նրանք են ասում։

*Ոչ ոք չգիտե, որ մենք գիշերով,
Չսպած կարոտով, որ չի հասնում ծեզ,
Թեքվում ենք պարզկա այն ակունքներին,*

Որտեղից ջուր են առնում մայրերը,
Արեւով օծված կավե կծերով...

Ու մեր ուսերին
Արշալույսի բորբ ծիրանին առած,
Մենք քայլում ենք նոր աստվածների պես,
Մեր երազները բուռ-բուռ ցանելով
Խոնավ ու փիսրուն ցելերի վրա... ¹⁶

1975 թ. նշվեց Յայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 30-ամյակը: Աշխարհի խաղաղասեր ժողովուրդները նշեցին այդ տոնը: Կրկին հնչեց «ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» երախտագիտական խոսքը: Ինչպես իր ստեղծագործական առաջին քայլերն անելիս, այդպես էլ այդ ժամանակաշնթացքում *Ս.ԽԱՆՅԱՆԸ* անդրադարձավ պատերազմի եւ խաղաղության թեմային, տպագրելով «Սպասում ենք դեռ» ժողովածուն: Թեև կուզան բանաստեղծի սերունդը չի մասնակցել պատերազմին, սակայն զգացել է այն ցավն ու մրմուռը, որ ունեցել է ժողովուրդը:

Ս.Խանյանի ավագ եղբայրը, որ ստեղծագործում էր, 19 տարեկան հասակում նահատակվել է Մեծ հայրենականի մարտերում: Գրականագետները նկատել են, որ Խանյանը նահատակներին հիշելիս անպայմանորեն պատկերացնում է իր եղբորը: Ահա թե ինչու այդ թեման միշտ հովան է նրան:

Ի դեպ, Սոլյարտ Խանյանի առաջին տպագիր բանաստեղծությունը՝ «Կիսատ երգը» վերնագրով, նվիրված է ավագ եղբոր՝ Սոլյեն Խանյանին: Պատահական չէ, որ Ս. Խանյանն իր ժողովածուն անվանել է «Սպասում ենք դեռ»: 1960 թ. Ս. Խանյանը շրջագայել է Հումգարիայում եւ Ավստրիայում, որպես լրագրող: Դանուիք գետի ափին ծնվել է «Սպասում ենք դեռ» բանաստեղծությունը՝ նվիրված պատերազմական կրակներից չվերադարձած

ՀԱՊՈՅԱՆԱՎԱՐ ՀՄԴԱՎԱՆՔ, ԽԱՊՈՅՈՒԹՅԱՆ ԾԱՐԱՆ

պոետ Եղբորը: Ահա այդ բանաստեղծությունը, որ Գ. Գաբրիելյանը դարձրել է երգ:

ԴԱՆՍՈՒԲ

Իմ Արաքսի հեռավոր քույր,
Քեզ շատ եմ երգել,
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,
Դեռվից եմ եկել:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել՝
Զահել, գանգրահեր,
Սինչեւ հիմա տում չի հասել,
Սպասում ենք դեռ:

Վերջին անգամ գրել էր նա,
Որ փրկվել ես դու,
Գովերգում էր սիրով անմար,
Աչքերու կապույտ:

Նրա վերքը սրտիդ վրա
Ասա ինչ, չկա՞,
Լուր տուր, Դանուր, տանեմ նրա
Սիրած աղջկամ:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել՝
Զահել, գանգրահեր,
Սինչեւ հիմա տում չի հասել,
Սպասում ենք դեռ: ¹⁷

Բանաստեղծ, գրականագետ Վ. Դակորյանը արտահայտել

Է իր կարծիքն այս բանաստեղծության մասին. «Բանաստեղծի գործերում նրա առաջին իսկ քայլերից մինչեւ այսօր հիմնական եւ առանցքային տեր է գրավում հայրենական մեծ պատերազմի թեման: Այդ մոտիվներով գրված նրա երգերի պատճեն, անշուշտ, հանդիսանում է «Դանուբ» («Սպասում Ենք դեռ»)հուգաբարավ գործը, որտեղ զգացնունքի անկեղծությունն ու խորը ապրումը երգայնություն են հաղորդում բանաստեղծության ընդհանուր ոգուն»:¹⁸

Գրականագետ Ս. Ավագյանը «Սպասում Ենք դեռ» գրքի մասին տպագրած գրախոսականում նշել է. «Սպասում» բանաստեղծությունների շարքը Մեծ հայրենականի գեղարվեստական արտացոլումն է, սակայն հեղինակի ուշադրության կենտրոնում ոչ թե ռազմաճակատային իրադարձություններն են, այլ մարդկային հոգեվիճակներն ու ճակատագիրը: Ասելիքն այնքան սրտաբուխ է, հոգեհարազատ, որ կարծես հեղինակը ընթերցողի արյունակիցն է, նրա ակնկալումների վկան»:¹⁹

Տողովածուն բացվում է «Գնամ որոնեմ» երգով: Սեւ ծովի ափին քնարական հերոսը որոնում է կովից չվերադառնած հարազատների ոտնահետքերը եւ հյուսում կարոտի հեքիաթը: Թեկուզ անցել են տարիները, սակայն հարազատների տունդարձի կարոտը չի մարել: Քնարական հերոսի սփոփանքն այն է, որ նրանց երազանքը ծուլվել է սերունդների ճանկեքին վառվող լույսերին.

**Գնամ երեսս լվանամ ծեզին
Կերչի ջրերով,
Եվ իմ պապերի հին սովորությամբ,
Դավատով խորին ու միշտ բարեհույս,
Ասեմ. «Բարի լույս»:
Գիտեմ, ջրերի հորձանուտներից
Դարազատմերս խելոք ու արի,**

Կպատասխանեն.

- Չեր լույսը բարի: ²⁰

Կերչում եւ Սեւ ծովի ափերին իրենց կյանքն են զոհել հագրավոր հայ մարտիկներ: Նշենք, որ միայն Լեռնային Ղարաբաղի 130 հազար բնակչությունը ռազմաճակատ է ճամփել իր 45 հազար քաջ զավակներին: Տուն չի վերադարձել 22 հազարը: Եվ բանաստեղծը չի մոռացել երթեք համաժողովրդական այդ վիշտն ու ցավը: Դամաժողովրդական կարոտի արտահայտություն է «Սեւ ծովի վրա» բանաստեղծությունը.

Նավդ քիչ կամաց վարիր, նավավար,
Թող ալիքների շուրջպարը դիտեմ,
Նահատակների ժայտները վառ
Ասես գրերում ծփում են իմ դեմ:
Անհայտ կորածներ ունեմ, նավավար,
Անհայտ կորածներ, սակայն ոչ անհետը,
Նրանց հետքերը այս ալիքներն են,
Որ աշխարհներ են կապում իրար հետ:
Նրանց հետքերը այս ալիքներն են,
Որ ծփում են եւ կծփան կյանքում,
Թող եղրոր սրտով վայկայեմ նրանց,
Կարոտի երգով վերադառնամ տուն: ²¹

ճիշտ է նկատել գրականագետը. «Ա. Խանյանի պատերազմական թեմայով գրված բանաստեղծությունները միաժամանակ տուրք են պատերազմի դեմ: Այս իմաստով նրա երգերը աչքի են ընկնում թե՛ գեղարվեստական իմաստով եւ թե՛ խոսքի հուզական լիցքով:»

Մտացածին ոչինչ չկա այդ երգերում: Մեր կյանքում, մեր աչքերի առջեւ տեղի ունեցող իրադարձությունների հիմքի վրա

բանաստեղծը կյուսել է կարոտի ու ցասումի տողերը եւ հասել հաջողության: Պատերազմը աշխարհի դեմ սանձազերծված մահվան քրքիջ է, այն պետք է բացառվի: Մարդկությունը պետք է գգոն լինի եւ ժամանակին բռնի չարագործի ծեռքը եւ խափանի մարդակուլ հրդեհների բռնկումը: Աշխարհի խիղճը չպետք է քնի»:²²

Պատերազմական թեմային դիմելիս Ս. Խանյանը նախընտրում է արտահայտչական տարրեր միջոցներ: Նրանցում միշտ ընդգծվում են հերոսականության եւ անձնուրացության գաղափարները միաձույլ: Եվ որ կարեւոր է, նրանց գումարվում են նոր սերունդների երախտագիտական զգացումները: Նման երգերից են «Ալիք», «Տասնութ տարուն», «Ճուշարբյուր», «Ինչո՞ւ չեկար», «Մորմոր», «Այրող հուշ» եւ այլ բանաստեղծություններ: Նրանցում երգի խոսքն անմիջական է, սեփական ցավի արտահայտությունն ստանում է համընդիհանուր արժեք.

Իմ ավագ եղբայր, իմ բարի եղբայր,
Ի՞նչ է պատահել ջահել սրտիդ հետ,
Ինչքա՞ն սպասենք, ինչո՞ւ չես գալիս,
Ինչո՞ւ չես լսում աղազանքը մեր:
Մայրիկը մարեց անունդ շրթին,
Բայց վերջին շնչում պատվիրեց հույսով,
Որ երը տում դառնա իր կորած որդին,
ճամփան գարդարենք ծաղկով ու լույսով:
Ես էլ եմ հիմա վախենում, եղբայր,
Դողում եմ սրտով, դողում եմ հոգով,
Որ աչք ճամփիդ ես էլ ծերանամ
Երբեք չտեսած ծերությունը քո:²³

Պատերազմական թեմայով գրված հաջողված գործ է «Այրող հուշ» բանաստեղծությունը, որը գրված է իրական փաստի

Իհման վրա: Կոնկրետ սյուժեի հյուսվածքով բանաստեղծը վերհիշում է Մեծ հայրենականի ծանր տարիները: Գյուղում ջահելներ չկան, պապիկներն են, տատիկները, մայրերն ու երեխաները: Թեկուզ լեռնային գյուղը ռազմաճակատից հեռու է, բայց պատերազմի հասցրած վիշտը ամեն օր գուժում է օջախները՝ «սև թուղթ» պատկերով, հատուկենտ մեկ ոտքով կամ մեկ ձեռքով տուն վերադարձող գինվորներով, հեռավոր ստույգ եւ ամստույգ լուրերով: Ահա այս ֆոնի վրա բանաստեղծը վերիիշում է բարի տատիկին՝ նրա կերպարում խտացնելով թոլոր ինքնամոռաց տատիկներին: Տատիկի սիրտը բարի է, «գրպանները մի մառան», ասես ամբողջ աշխարհի նրբությունն աստված պարգեւել է նրան: Բանաստեղծը, որպես քնարական հերոս, մասունք առ մասունք ներկայացնում է տատի բարենասնությունները.

*Գալիս էինք հանդից, դասից,
Փայփայում էր սիրով մեզ,
Խնձոր, չիր ու թութ էր տալիս,
Ասում՝ տատը մատաղ ձեզ:*²⁴

Սակայն այդքան բարության հետ մեկտեղ տատը մի գաղտնիք ունի, որ չէր ցանկանում բացել թոռներին: Դա այն սնողուկն էր, որ տնից չէր հանում երբեք, թոռների մոտ չէր բացում.

*Ասում էինք՝ սնողուկդ բաց,
Տեսմենք ինչ կա նրանում,
Նա մերժում էր՝ աչքերը թաց
Եվ լուռ մեզնից հեռանում:*²⁵

Անցնում է ժամանակը՝ անսիրտ եւ անգութ, իր հետ տանելով բարի տատիկին: Եվ երբ հնչում է հաղթանակի շեփորը, բռն-ները կրկին հիշում են տատիկին, լացի միջից ժպտալով բացում սնդուկը: Այս սրտառուց տեսարանը բացում է ոչ միայն տատիկի գաղտնիքը, այլև նրա մեծ, ցաված սիրտը: Չնարական հերոս-բանաստեղծը սրտահույզ պատճում է.

*Երեք գլխարկ տեսանք այնտեղ,
Երեք սեւ քուղք, երեք ցավ,
Երեք որդու կորուստն ահեղ
Սեր սրտերին ծանրացավ...²⁶*

Ծանր այս տեսարանին հաջորդում է հարազատների լացը, որից հետո տատի պահպանած մասունքները դրվում են սնդուկում հանձնելու դարերին: Տեղի ունեցածը փոխվում է այրող հուշի՝ շաղախված երախտագիտության անմոռաց զգացումով.

*Օրերն ինչպես մարող մշուշ,
Անց են կենում ու գնում,
Սակայն ինչպես այրող մի հուշ
Տատիս սնդուկն է մնում: 27*

1979 թ. գրականագետ Ժ. Անդրյանը գրել է. «Սպասում ենք դեռ» ժողովածուն թեմատիկ բազմազանություն ունի, սակայն այստեղ ամենից ուշագրավը «Սպասում» բաժինն է, որը խանյանի ստեղծագործական նախասիրության՝ հեռուներում իր շիրիմը գտած հերոսացած զինվորի կարոտի կարծես ամփոփող ու առավել հասունացած վերարտադրությունն է, որի հոգեբանական նրբերանգը այդ զինվորի հավերժ կենդանության գաղափարն է»:²⁸

Գրականագետ Դ. Գասպարյանը գրախոսելով Ս. Խանյանի «Լեռների երգը» ժողովածուն, ընդգծել է. «Գրքում կա առանձին մի շարք՝ «Մորմոքմեր» վերնագրով, ուր նա վերհուչի ձեւով ներկայացնում է պատերազմական ժանր տարիների իրադարձություններ ու իրավիճակներ: Քնարական հերոսի կյանքը դադարում է սոսկ ներկա, խաղաղ ու հանգիստ պահը լինելուց, այն ընդարձակվում է, իր մեջ առնում գրկանքներով լի անցյալը»:²⁹

Կարելի է նշել, որ Մեծ հայրենական պատերազմի թեման ստեղծագործական ամբողջ կյանքում ուղեկցել է Ս.Խանյանին: Դրանով պետք է բացատրել այն հանգանքը, որ նրա պոետական 15 ժողովածուներում միշտ էլ առանձին բաժին են կազմել այդ մոտիվը ներկայացնող բանաստեղծություններն ու բալլարդները, որոնց մասին ժամանակին ասվել են դրվատանքի խոսքեր: Այս առումով կարելի է բերել գրականագետ Դ.Սերոբյանի խոսքը՝ դեռևս գրված 1970 թ. «Արեւսար» գրքի առթիվ. «Սոկրատ Խանյանն ամենից առաջ երգել է իր սրտին շատ մոտ ու ծանոթ, այդ սրտի միջով անցնող հույզը, հոգին պարուրած գաղափարը: Դրանցում կա եւ խոր հայրենասիրություն, եւ այդ հայրենիքի պատվի, փառքի համար ընկածների նկատմամբ անհուն սեր, եւ որդու կորուստ, եւ մարտական վշտի, ցավի, մորմոքի, մարդու թեւավորող սիրո նկարագիրը ասված ներքին քնքշությամբ, լիրիզմով, մշակված բառ ու պատկերով»:³⁰

Հայրենական պատերազմի թեման գտնվում էր նաև Գ.Ա-ՂԱԶԱՆՅԱՆԻ ուշադրության կենտրոնում: Բանաստեղծը օրինական հպարտությամբ է խոսում Լենինգրադի մասին, որը Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին ցուցաբերել է անօրինակ սխրանք, կամքի ուժ, համերաշխություն ժողովուրդների հետ: Այդ առումով աչքի է ընկնում «Նեւայի ափին» բանաստեղ-

ծությունը թե՛ գաղափարի խորքով, եւ թե՛ մատուցման ձեւի թարմությամբ: Բանաստեղծը շրջում է Նեւայի ափին եւ ռուսական պատմությունը հոլովող այդ գետը հայ երգչի համար դառնում է «Մրտի հետ խոսող Սեւան»: Նա պատմություններ է փնտրում Նեւայի ափին, պատմություններ, որոնք աշխարհում սփռել են «Ճերմություն, հույս ու արեւ», մարդկանց համար դարձել «հոսող պատմություն... ծփուն հպարտություն»:

«Պիսկարելյան գերեզմանոցում» եւ «Ինն հարյուր օր» բանաստեղծություններում Գ. Աղաջանյանը կարողացել է գեղարվեստորեն ընդհանրացնել ակսոսանքի ու վրեժի, վշտի ու հպարտության զգացումներ: Բանաստեղծը շրջագայելով Լենինգրադում, Օդեսայում, Պոլտավայում եւ այլ վայրերում, ամենուրեք տեսմուն է խորհրդային քաջարի զինվորների ոտնահետքերը, ծանոթանում նրանց անձնութաց սիրանքներին եւ ասում երախտիքի իր խոսքը: Նրա ստացած տպագորություններն ու հետաքրքրությունները դարձել են հարազատի ապրում, ընդհանրացված պատկերներ, որոնք քնարական տրամադրությանը ներկայացվում են ընթերցողին «Նավը», «Պոտյումկինյան սանդուխքներ», «Ծով, օրորիր», «Պոլտավա», «Շուշարձանի առաջ» եւ այլ բանաստեղծություններում:

1812 թ. Պոլտավայում զոհվածների հիշատակին կանգնեցված հուշակոթողը հայ բանաստեղծի համար փառքի վկա է: Պոետը նայում է այդ կոթողին եւ տեսմուն այն հերոսական ուղին, որ անցել են մարտիկները նաեւ Մեծ հայրենականում: Այդ զգացումը արտահայտված է «Շուշարձանի առաջ» բանաստեղծության մեջ:

Ովե՞ր էին նրանք.

Նրանց շիրմներին

Խոնարհվում են ես արդ ակնածանքով մի խոր,

Որ գալիս ենք այստեղ գլխահակ ու լրին,

Նեռանում ենք, սակայն, հպարտ պահած գլխով:³¹

Գաղափարական հագեցվածությամբ եւ հուզականությամբ աչքի է ընկնում «Պոլտավա» բանաստեղծությունը: Մեծ հայրենականում ֆաշիստները տրորել են ռուսական հողը, նրա վարդերը, «արծիծ ու կրակ ցանել»: Բայց ետպատերազմյան շրջանում ծաղկել են քաղաքն ու գյուղը, որոնց հանդեպ ողջույնի իր խոսքն է բերում պոետը.

Ողջույն քեզ, հավերժող քաղաք,

Ծաղկիր հար-հավիտյան այդպես,

Ով փորձի մեր բախտով խաղալ,

Կուզեի, որ նայեր նախ քեզ...³²

Գ.Աղաջանյանի բանաստեղծություններում կյանքի զգացողությունը թելադրում է երախստիքի մարդկային մի զգացում խոնարհվել այն զոհերի առջեւ, որոնց ժայիտները դարձել են ազատության փարոսներ՝ սերունդների ճանապարհին:

Նետաքրքիրն այն է, որ պատերազմի թեման հուզում է ոչ միայն տարեց եւ միջին սերնդի ներկայացուցիչներին, ովքեր տեսել եւ զգացել են պատերազմի ծանրությունը, այլև սկսնակ ու երիտասարդ գրողներին:

Պատերազմի եւ խաղաղության թեմային հաճախակի են դիմում Կ. Գաբրիելյանը, Ռ. Եսայանը, Յ. Ալեքսանյանը, Ն. Գասպարյանը, Ժ. Բեգլարյանը եւ ուրիշներ: Ուրեմն պապերի եւ հայրերի թափած արյունը իզուր չի անցել, իսկ գրական ավանդության շարունակվում է:

Ետպատերազմյան շրջանում խաղաղության պահպաննամ

ու ամրապնդման համար մարդիկ իրենց ստորագրությունները են դրել խաղաղության կոչի տակ՝ արտահայտելով իրենց կամքն ու ուժը պատերազմի իրականացնելու հետ:

Յ. Սահյանի «Մի փոքրիկ կարիլ» գողտրիկ բանաստեղծությունը պատճական այդ կոնկրետ երեւույթի բանաստեղծական անզուգական արտահայտություններից մեկն է: «Պատերազմ իրականությունը ինչքան էլ կատարեն, չեն կարող պատնշել խաղաղասեր ուժերի շքերթը, որովհետեւ նրանում մարմնավորված է բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների միասնությունը: Հավատի ու պայծառ լավատեսության զգացումները շադախսված են երկրի հզորությանը եւ բանակների ուժին:

Ինչպես հաստատում է Յ. Սահյանը՝ խաղաղության կոչի տակ անուն դառած երկնագույն թանաքի մի փոքրիկ կարիլը խորհրդանշում է խաղաղության արիական գինվորների ցասումն ու ուժը.

*Միայն մի կարիլ երկնագույն թանաք,
Բայց իր մեջ ցասման կոչեր է պահում,
Ուազմի մրրիկներ, որքան խստանաք,
Չեք ծեղքի դուք այդ ծովերն աշխարհում:
Միայն մի կարիլ, բյուրեղ մի գողտրիկ,
Բայց այնպես զորեղ, այնպես մարտական,
Որ թե հարկ լինի, կարիլն այդ փոքրիկ
Կուլ կտա ամրող մի Ասլամտական:* ³³

Ետպատերազմյան շրջանում խաղաղության թեմայով գրված ստեղծագործությունների հնչերանգը դառնում է հավատը՝ աշխարհի բարի կամքի տեր մարդկանց հանդեպ: «Պոետների մտապատկերներում պատերազմական անցյալի դաշն հուշը դառնում է հաղթանակի հիմն՝ իհարկե կորցրածի անմոռանալի կարոտով օծված: Նրանք պատճական-հասարակական պրոբլե-

նը լուծում են խաղաղության դիրքերից՝ արտահայտելով ժամանակակից մարդու կենսահայեցողությունը։ Ամենուրեք հնչեցվում է աշխարհահռչակ Հեմինգուուեի մարգարեական պատգամը. «Երկրորդ համաշխարհային պատերազմը բռնկվեց այն պարզ պատճառով, որ մարդկությունը մոռացավ առաջինը»։

Յիրավի այդպես է: Յա գրողները գիտակցելով այդ ճշնարտությունը, ժողովրդին երկրի ճակատագրի հետ կապված իրենց խոսքը դարձնում են երդում՝ հայրենական լուրք լեռների, երգող աղբյուրների, խորհրդավոր արշալույսի, խոնավ բուրմուճով բացվող ակոսի, մարտերում հաղթած զինվորի խղճի, նրա սխրանքներին նվիրված գրչի, անմոռանալի մայիսի 9-ի անունից՝ ուղղված բոլոր անարդարացի պատերազմների դեմ։ Սակայն աշխարհում ասես արդարությունը դժվար է գտնում իր ուղին։ Ամենուրեք ուժեղները ծգուում են կուլ տալ փոքրերին, տարածի անփոփոխության պատրվակով խլել ուրիշների ավանդական օջախները։ Այդպես եղավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հետ, ուր բռնկվեց մի նոր պատերազմ Աղրբեջանի կողմից։

ՊՈԵԶԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական բախտորոշ էջերից է: Այն Ավարայրիևսարդարապատի շարունակությունն է: 1988-ի փետրվարից Պատմական Հայաստանի 10-րդ նահանգը՝ Արցախական աշխարհը, ոտքի ելավ պահանջատիրոջ իրավունքով եւ խորհրդային իշխանության բարձրագույն ատյաններին ներկայացրեց Մայր հայրենիքին վերամիավորվելու իր արդարացի վճռոք: Աշխարհասփյուռ հայությունը խորապես գիտակցեց պահի կարեւորությունը եւ սատարեց արցախցիների որոկիական ազնիվ երազին:

Երկրագնդի չորս ծագերում ամեն մի հայ սպասում էր, որ խորհրդային իշխանությունները կցուցաբերեն ողջախոհություն եւ խաղաղ ու հանգիստ ճանապարհով կլուծեն հարցը: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: ԽՄԿԿ Կենտկոմի վայ առաջնորդների թողտվությամբ, ՊԱԿ-ի անմիջական մասնակցությամբ Աղրբեջանի ղեկավար շրջանները կազմակերպեցին հայ ազգաբնակչության ցեղասպանություն իր իսկ ձեռքերով կառուցված Սումգայիթում, Բարձում, Գանձակում, Մինձեչառում եւ հայաշատ այլ բնակավայրերում: Արցախը շրջափակման մեջ առնվեց: Հայ ժողովուրդը զգաց, որ իրեն պարտադրված պատերազմը իր վերջին կրիվն է, ուստի այդ փորկարար վճռական պայքարին պետք է իր մասնակցությունը բերի ֆիզիկական ու բարյական ուժերի համախմբվածությամբ ու հավատով:

Արցախահայությունն իր թիկունքին զգալով արյունակից եղբայրների եւ քույրերի ուժն ու նվիրվածությունը, պարզեց նորոյա թուր Կայծակին եւ նետվեց մարտի: Կամքը մեկն էր՝ կրվել, վճիռը մեկ՝ հաղթանակել հանուն իր ավանդական օջախի

ԴԻՆԾԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

պահպանան, իր անկախության եւ ազատության նվաճնան:

Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաեւ հայ գրականությունը:

Բանաստեղծներն անմիջապես մարտաշունչ խոսքեր փնտեցին, ստեղծեցին բանաստեղծություններ, բալլադներ, լեգենդներ, պոեմներ, ռեժիսումներ, չափածո ակնարկներ՝ ազդարարելով, որ մեր ժողովուրդը ինքնահաստատման իր խոսքն ուղղում է աշխարհին՝ որպես ազատ ու անկախ ապրելու վճռականություն:

Դարաբաղյան շարժման առաջին օրերից սկսած, իրենց կրակոտ խոսքն ասացին Վ. Դավթյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Յ. Սահյանը, Ռ. Դավոյանը, Մետաքսեն, Բ. Զանյանը, Յու. Սահակյանը, Գ. Խաչատուրը եւ շատ ուրիշներ:

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին եւ գիրք տպագրելու սուլ հնարավորություններին, Արցախում ապրող եւ ստեղծագործող բանաստեղծները ընթերցողի սեղանին դրեցին ուշադրության արժանի ժողովածուներ: Այդ են վկայում Վ. Դակոբյանի «Արցախա ծովի», «Ամարասի զանգերը», «Տաճարն Աստծո», «Սոսե», Գ. Գաբրիելյանի մարտական երգերի շարքը, «Մեր Գուգուլյան», «Անդրանիկ», «Մուսա լեռան... երկու որդին», «Ողջակիզված կյանք» չափածո ակնարկները, Յ. Բեգլարյանի «Դրաշը երկիր իմ Դարաբաղը», «Արցախն Ավարայր», Ն. Ավագյանի «Դասուն իմ հասկ», Ա. Դովիհաննիսյանի «Ավանդատուն», Ս. Խանյանի «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ», «Արցախի արժիվը», Ռ. Եսայանի «Եժար», Ն. Գասպարյանի «Դավատ Արցախի», Յ. Ալեքսանյանի «Կենսադաշտ» եւ այլ ժողովածուներ, ինչպես նաեւ Դ. Միքայելյանի քնարական երգերը՝ նվիրված մեր քաջազուն նահատակների հիշատակին, մեր հե-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Պրոսների անձնուրաց պայքարին:

Արցախյան շարժման եւ պատերազմի տարիները, ըստ էության, բաժանվում են երեք փուլի: Առաջինն ընդգրկում է 1988-ի փետրվարից մինչեւ 1991 թվականի նոյեմբերը, երկրորդը՝ 1991-ի նոյեմբերից 1994-ի մայիսը, երրորդն սկսվում է 1994 թ. մայիսից ի վեր, եւ ընդգրկում, այսպես կոչված, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ժամանակահատվածը: Այդ տարիներին ստեղծված գրականությունը նշված փուլերի իրադարձությունների եւ ոգու արտահայտությունն է: Իրավացի են գրականագետներ Դ. Գասպարյանն ու Ժ. Քալանթարյանը, որ ավագ դպրոցի «Դայ գրականություն» դասագրքում նորագույն շրջանի հայ գրականության վերջին՝ չորրորդ փուլի սկիզբը կապում են 1988-ի Արցախյան շարժման հետ: Կարդալով Արցախյան գոյամարտի ժամանակաշրջանում ստեղծված գրականությունը, նկատում ես, որ այն միտում ունի դառնալու Արցախի պատարաման, այդ ֆոնի վրա հայ ժողովրդի միասնական պայքարի, նրա հերոսական ոգու գեղարվեստական տարեգրություն:

Գոյամարտի տարիներին գրած երգերում գրողները շոշափել են հետեւյալ հիմնական թեմաները. 1. Խորհրդային բռնապետության դեմ արցախցիների ընդգումը՝ Աղրբեջանի լծից ազատվելու եւ մայր Հայաստանին վերամիավորվելու նպատակով: Աղրբեջանի կառավարող շրջանների կողմից սանձազերծված պատերազմում հայ ժողովրդի միասնական պայքարը: 2. Հայ ժողովրդի պատմական անցյալի եւ առօրյա ընթացքի առնչությունների դասը: 3. Նահատակված քաջերի անմռաց հիշատակի, հերոս-մարտիկների անձնուրացության, սիրո, կարոտի, կորստի, ցավի, հույսի, հավատի ծփանքներն ու ծածանումները:

* * *

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Չարժման առաջին օրերից սկսած, բանաստեղծները ժողովրդին կոչ էին անում համախմբվել մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ: Նրանք քայլում էին ոտքի ելած ժողովրդի հոծ շարքերի առջևից, իրենց դրսեւորում որպես անձնուրաց հրապարակախոսներ ու քաղաքացի-արվեստագետներ: Ղեռւս 1988թ. հունվարին բանաստեղծներ Վ. Հակոբյանը (գրողների միության նախագահ), Գ. Գաբրիելյանը, Յ. Բեգլարյանը, տողերիս հեղինակը, քանդակագործ Ա. Հակոբյանը սկզբունքային ու լուրջ քննարկումից հետո վերջնական տեսքի բերեցինք ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ս.Ս. Գորբաչովին ուղղած այն նամակը, որով պահանջվում էր Արցախը վերամիավորել Հայաստանին: Մոսկվայում այն հայտնի դարձավ «17-ի նամակ» անունով, որովին նամակի տակ ստորագրել էին 17 մտավորականներ: Արցախից Մոսկվա, որպես բանագնացներ, մեկնեցին Վ. Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Յ. Բեգլարյանը: Մոսկվայից վերադառնալուն պես, փետրվարի 18-ին Ստեփանակերտի Վերաճնության հրապարակում քազմահազարանոց միտինգում համրես եկան վերոհիշյալ բանաստեղծները: Ժողովուրդը ոգեւորված էր, վճիռ՝ անսասան:

Համարյա ամեն օր արտոնված եւ չարտոնված միտինգներում ելույթներ էին ունենում գրողները: Նրանց խոսքի մեջ հնչում էր մեր պատմության ձայնը, առօրյա արդար պահանջը եւ հավատը:

* * *

Ղարաբաղյան շարժման առաջին օրերին, որպես ոգեշնչումի կոչ, հնչում էր Յ. Շիրազի՝ տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Նրա մեջ մեծ բանաստեղծի մարգարեական նրբանկատությունն ու հեռատեսությունն էր խոսում: Ղանապազօրյա հոգեւոր հաց էր դարձել այն, շքերթների եւ համբահավաքների օրիներգ, ամբողջանալու եւ ազգային ող-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

բերգությանը վերջ տալու խորհուրդ:

Յ. Ծիրազի ողբի տողերը ծածանվում էին պայքարի դրոշի պես: Այն արտասանում էին ասմունքողներն ու բանվորները, ուսանողներն ու աշակերտները.

*Ղարաբաղը մորս կանչն է՝ ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է՝ կարմիր, բայց սեւ ունի սրտում:
...Այս, Ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախիջեւանի ծեռքից բռնած,
Որ ազգովին Սասիս ելնենք, քարավանի նարից բռնած,
Նորից ազգի ավագանում հայ մկրտվես, հայ Ղարաբաղ:*

Գնալով ծնվեց Ղարաբաղյան շարժման եւ Արցախյան պատերազմի երգը, որ համահունչ էր գենքի ուժին: Պոեզիան զինվորագրվեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին Արցախը համարելով ամբողջ հայության ազատության ու գոյատենան ջահակիրն ու առաջանարտիկը:

Հօչակավոր գրականագետ Ս. Սարինյանը ՎԱՐԴԱՆ ՇԱԿՈԲՅԱՆԻ «Սենարան» ժողովածուի առաջարանում գրել է. «Անամապ էր Կարդանի հոգու երկինքը մինչեւ 1988-ի փետրվարը: Վերահաս իրադարձություններն այլ գույներով են ներկում Արցախի բնանկարը: Մնում է Սերը, որ նախաստեղծ է, բնության եւ Կարոտի արձագանքները ածանցվում են Արցախ-Պատմություն-Ցավ երրորդության հոգերանական տագնապներին: Բանաստեղծի հոգու վրա ծանրանում է օրերի մղձավանջը, իրերի շարժումը փոխակերպվում է անկերպության քառսի... Այլ դողանջներ են հոդում Գանձասարի եւ Անարասի զանգերը, հոդի հիշողությունից վերընծյուղվում է Յայկ Նահապետի ձգված աղեղը եւ պատմությունը մեր ազգային օրացույցի վրա դրոշմում է Ավարայրի եւ Սարդարապատի զինանշանը»:¹ Սա մի դիտարկում է,

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

որ վերաբերում է Վ. Հակոբյանի բոլոր գրչակից ընկերներին, ովքեր գտնվում էին Արցախում եւ նաև ակցում թշնամու դեմ զենքի եւ երգի միասնությամբ ընթացող համաժողովրդական մաքառմանը:

1989թ. Երեւանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն: «Արցախա ծուխը» արարելու-հարատելելու, սիրելու-սիրվելու, մաքառելու-թեւավորվելու ծուխն է: Այն երեւում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխն չէ դա, այլ մեռոնի բույր է, պապ ու տատի շունչ, իոր ու մոր շոյանք, մանկանց ժայխ, հայրենի հողի գարնանային շող, ապագային հարած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: «Արցախա ծուխ» գրքում Հակոբյանի քնարական հերոսը ջերմությամբ, արյան եռօրվ Արցախի հետ է: Նա իր երակների մեջ զգում է հողի ծլարձակումը, լեռների սանձակոտոր լինելը, ժամանակների ընթացքը.

*Փոխվել է ժամը, դասը չի փոխվել,
զամգում ծուլվել է Սարդարապատը...²*

(«Որդան կարմիր»)

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «գոյության վճիռ», «հավատը՝ սուլը տուն», առավոտը՝ հաշնումի բաց դաս, «եւ դարձն՝ արմատանց, մարտիրոսություն» («Մղձավանջ»):

Վ. Հակոբյանը որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մղձավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, դառնությամբ ու ցասումով խարազանեց ուժերի ցինհզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արեւը պատկերում է որպես «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակա-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՌՔԵՐՈՒՄ

Իհանդես, եւ պարզվում է, որ ընդիանուր բացականչությունների տակ ոչինչ չի փոխվել. «Գայլը գայլն է նույն՝ բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ թե որդուն անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է.

*Աստամը արյան համ առավ կրկին,
Նորից երեւաց մռութք գայլի...³*

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատեւելու կոչը, ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել, սրել մամուռը, չմոռանալ, որ՝

*Մենք՝ որդիք Դայլի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞ր չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա...⁴*

Արցախի պայքարը Վ. Դակորյանի երգերում դարձավ մաքանան խոռվք: Դայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսները հարնեցին նրա նոր երգերում: Նա առաջինը ձեռք մեկնեց Սոսեի կերպարին: Ամեն մի հայի համար թանկ ու հարազատ այդ անունն առաջին հերթին խորհրդանշում է հայ ֆիդայուհուն: Ահա ինչու բանաստեղծը նրան ներկայացրեց որպես սիրո եւ հայրենիքի ամբողջություն, այսինքն՝ պայքար: Ըստ բանաստեղծի, Աղբյուր Սերորին ժողովրդի հանդեա եղած նվիրումից բացի, ֆիդայական հրաշքների է տարել նաև Սոսեի մեծ սերը: Պատահական չէ, որ Սոսեն վերածնվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական նորօյա պայքարում: Շարքը ծնվեց ժամանակին: Որոշ ժամանակ անց բանաստեղծը հրատարակեց երգերի ժողովածու՝ «Սոսե» խորագրով, որի միջով ընդգծված

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐԹՔԵՐՈՒՄ

անցնում է պայքարի գաղափարը: Գիրքը բացվում է «Բանաստեղծության համար չեն ասում...» տողով սկսվող երգով: Այն հայրենասիրության եւ ազատահրության դարավոր զգացումից ծնված խոսք է՝ ասված արցախյան գոյամարտի ամենաթեժ պահին.

Սեկմեկ թվում է Ղավիթն եմ, վրաս՝
Քառսուն ջաղացքար-
Զենով Օհանի ծենն է ինձ հասնում:
Սեկմեկ թվում է, թե Ավարայրի
Ղողն է ոսթիս տակ,
Վարդանանց կրվի ծենն է ինձ հասնում:
Սեկմեկ թվում է, թե ճգնավոր եմ
Փակված մի վանքում.
Խալիսի դուրս կանչող ծենն է ինձ հասնում:
Սեկմեկ թվում է՝ Սարդարապատում
Ընկած զինվոր եմ-
Ղաղթանակի սուրբ ծենն է ինձ հասնում:
Սեկմեկ թվում է՝ Արցախի սրտից
Կաթած արյուն եմ-
Զնեռնող հույսի ծենն է ինձ հասնում... ⁵

Արցախի սրտից հոսող արյան առաջն առնելու, չմեռնող հույսի ծայնը անկաշկանդ ու ինչեղ դարձնելու միակ ճանապարհը բանաստեղծը համարում է պայքարը եւ իրեն նետում մաքառումների հորձանուտի մեջ.

Ժամանակը թռչում է հավթի պես,-
Երկինքը թել է գտնում իր համար,

Թախիծը վարդ է գտնում իր համար,
Ղողը երազ է գտնում իր համար,

ՊՈՒՇՔԻԱՆ ՄԱՐՏԱԿԱԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Եվ ես անունն եմ դարմում մաքառման:

(«Մաքառմներ»)

Արցախյան գոյամարտի պատմական ակունքները Վ. Հակոբյանը տեսավ հայ ժողովրդի առասպելական ժամանակների, Վարդանանց պատերազմի եւ ապա՝ հետագա դարերում մղված հերոսական պայքարի մեջ: Պատմությունից հայտնի է, որ Արցախյան մի զորամաս կրվել է Ավարայրում եւ դարձին հերոսաբար նահատակվել Եղեգնաձորում: Ներոսների աճյուններն ամփոփող բլուրը հիմա կոչվում է Վարդանանց բլուր: Իրական այս փաստը Վ. Հակոբյանին ներշնչել է՝ գրելու «Վարդանանց բլուր» բանաստեղծությունը, որով բացվում է «Արցախա ծուխ» ժողովածուն: Պատահական չեն ժողովածուն բացող «Զգված աղեղներ» շարքի վերնագիրը:

Բանաստեղծության քնարական հերոսը իրեն համարում է ժառանգորդ Վարդանանց գինվորյալների: Խորհրդանշական այս պատկերի միջոցով բանաստեղծն իրար է հյուսում հայոց աշխարհի բոլոր ժամանակները եւ նրանցում տեսնում նաեւ իր եւ իր ժամանակակիցների պատասխանատվության զգացումը՝ երկրի, սեփական ժողովրդի ճակատագրի հանդեպ: Իսկ այդ ճակատագիրը հաշնումի իր երակը կապել է Հայկ Նահապետի նետի եւ աղեղի հետ ու գինվորագրվել ժողովրդի փիլիսոփայությանը: Վ. Հակոբյանի բանաստեղծության մեջ ժողովրդի մարտնչող ոգին արձագանքում է Արցախյան գոյամարտին՝ քայլող լեռան պատկերով, նոր հերոսամարտին գինվորագրվելու հրամայականով:

Արթնացումի զգացումը մարտնչելու ոգի է դարնում:

Բանաստեղծության յուրաքանչյուր տող հնչում է որպես կովկի ելնելու կոչ, որի հրամայականով Վարդանանց բլուրն իրեն

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐԹՔԵՐՈՒՄ

բացում է՝ «Եւ երկինքն իրեն հանում է հողից, եւ հողում թաղված խաչը ելնում է, եւ ոտք է բռնում ճամփան Արցախս»: Ինչպես տեսնում ենք, բանատերքը նշում է, որ Արցախի նոր ճանապարհն իր սկիզբն առնում է Վարդանանց պատերազմից՝ շրջագի մեջ առնելով ողջ Հայոց աշխարհը՝ անբաժանելի Արցախ աշխարհի միասնությամբ.

Ճարումակվում է գետը Եղեգիք,
եւ վանքի ձայնը այբբենարան է,
եւ աղեղները պրկվում են նորից,
եւ ձեռքի թրում թարթառն է շողում,
եւ ձին կարմիր է, Վարդամը՝ կարմիր: ⁷

(«Վարդանանց բլուր»)

Բանատեղծության մեջ պայքարի մետաֆորը դառնում է կարմիրը: Ժամանակին հայ ժողովրդի մեծանուն զավակներից մեկը՝ Ստ. Շահումյանը, նշել է, որ ազգը եթե մեռնել չգիտե, ապրել չի կարող: Պարզ է, խոսքը գոյատեւման մասին է, իսկ գոյատեւումն առանց զոհյալների չի կարող հոլովվել: Այդ իմաստով, «Վարդանանց բլուր» բանատեղծությունը գաղափարական խորօվ մաքառնան կոչ է: Այդ միտումի հոյակապ դրսեւորում են հետեւյալ տողերը.

Դարձը ճամփի հետ մաքառող տուն է,
եւ ամեն թուփ-քար՝ զինվոր, Եղիշե,
եւ Խաչենն ի վար Տղմուտն է հոսում,
եւ հողից ելնո՞ղ, ծլո՞ղ հերոսներ,
եւ Աստված մեկը հազար է անում: ⁸

Հայոց առասպելական «Կահագնի ծնունդը» վիաբերգի Երանգները հասնում է Դամիել Վարուժանի «Զոնին», եւ արձա-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

գանքը լսում ենք Վ. Հակոբյանի բանաստեղծության եզրափակման մեջ.

Եթզ եկել ու կանգնել է մոտիկ,
եւ հավաքում եմ ես իմ ծեռքերը,
եւ իմ աչքերից բոց է դուրս գալիս,
եւ իմ վերքերին ես հող եմ ցանում,
եւ չէի քնել, բայց արթնանում եմ:⁹

Վ. Հակոբյանի արթնացնան կոչք հայոց նաքառող դարերի արձագանքն է: Այդ արթնացումն արյան խորքերի եռք է, հավատի ահազանգ, ելման հրաման, որի ակունքների մոտ եւ մարտական շարքերի առջև հաշնում են նարտիրոսված աննահները՝ հավերժված առաջանարտիկները: Պատահական չէ բանաստեղծի «Սոսե» ժողովածուն (1994): Առաջին անգամ Արցախյան գոյանարտի օրերին Վ. Հակոբյանը դիմեց Սոսեի կերպարին: Անսովոր պատկերների մեջ լսվում է եւ վրոշված քնարական հերոսի, եւ պատմության ծայնը: Անեն ինչ, ասես, գլխապտույտի մեջ էր՝ «Ժայռը հոսում աղբյուրից ու ցրվում է ցավագար», թռչող վանքի թեւերում ընդգծված երեւում են հավեր ու խաչքար: Քնարական հերոսի աչքերում մատյաններ են ծաղկում, «Ծառը ելել, գնում է կանչի վրա իր գետի»: Հազարամյա տիսրության ճանփորդը դառնում է ճակատագրի, վճռականության հարցնումք: Բանաստեղծը հանգում է մաքառնան հրամայականին.

Տրտմության մեջ Տրտուի առավոտը վառվում է:-
Սարգարիտը ցավի մեջ որոնում է ձկներին,
Դու վերջապես գալիս ես սուրբ Սոսեի տամաշամքով,
Սենք ելում ենք միարան, մեր լեռներից բերում տուն,
Եվ հանում եմ աչքերս ու տալիս եմ ճանփեքին:¹⁰

Վ. Հակոբյանի պայքարի երգերում արճի պես ծանրանում

Են պահերը: Դրանք սահող ստվերամութն է, ծաղկի շուրթերին չխասած ժայտը, արյան մեջ պահվող վարդերը: Բանաստեղծի խոհերում Արցախ աշխարհի երանգները իմաստավորվում են անհանգիստ հոգու բրթողներով, դառնում ժայռի երեսին փշրվող ծիլ, գետերի վրա նստած գույժ, լուսաշատ սրտեր փնտրող զնողակ, միաժամանակ, «աստղի ցոլանքում հառնող տուն»: Դառնումի ցոլանքներով ողողվում է քնարական հերոսի սիրտը, իրար գտնում են կորսված երկինքն ու չխամրող երազը, դառնում վերադարձի կամք.

Զարդնել է կանչը վերադարձի մեջ.-
Ելել եմ՝ միայն գնալու համար,
Վերակերտվում է տիեզերքը հին,
Ես քեզ տեսնում եմ իմ դեմքի վրա,
Դույսը քայլի մեջ գտնում է ուղին.՝”

Սոսեի արեւային երազների հանգույցում Վ. Դակոբյանի քնարական հերոսը հանդիպում է Աղբյուր Սերոբին: Դա եւ սիրո կարոտի վերընձյուղում է, եւ իրացանի ընկերություն: Գիշերակացի սեւ մութի մեջ, սարի փեշերին սպասող հերոսի ցավոտ ափի մեջ «Մոսկինի կորը ծաղկում է» եւ «Սիրտը կանչն ի վեր ելել, գնում է բոցին ընդառաջ», եւ հուզում են կորստի բառերը. «Իմ վերքոտ Սոսե, իմ երգոտ Սոսե, իմ սիրուն Սոսե»: Այսպես, «Աղբյուր Սերոբ» բանաստեղծությունը վերածվում է վիճակքի, որի մեջ հայրենի քնաշխարհի եւ ժողովրդի ճակատագրի միաձույլ պատկերում հառնում է Աղբյուր Սերոբը՝ իր վեհությամբ, կարոտով, նվիրումով: Այս ստեղծագործության քնարական շունչը ջերմացնող է, հայ ֆիդայու բարոյական դիմագծերը ներկայացնող, ժողովրդի անցյալի եւ ներկայի կապը հաստատող, աստվածային զգացմունքների փունջը ծածանող երգ է, որ արար-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐԹՔԵՐՈՒՄ

Վում է ոչ միշտ: Բանաստեղծության հյուսվածքում հայրենիքի տառապյալ սիրտն է, այդ սրտի ծնունդ հանդիսացող ֆիդայու ոգին, նրա խոստովաճությունն իր կատարած գործի հավերժական նշանակության իմաստով.

*Արեւից առաջ ես միշտ հառնում եմ Նեմրութի վրա.-
Ամեն մի քարից աչքեր են ծագում վշտից լայն բացված,
Զոր ու կիրճերում փնտրում են իրար արահետները,
Զաղկված հոգու մեջ դեռ գմրակմեր են կարկրում երգից,
Իմ վերքոտ Սոսե, իմ երգոտ Սոսե, իմ անուն Սոսե:* ¹²

Բանաստեղծության համեմատությունների նոր ծփանքների մեջ հառնում է Յայոց կորուսյալ հողերի կերպարը: Եվ աստղաբույլեր նվիրած Տարոնը ներկայացվում է իր բարձրագնա Նեմրութի խոյանքով, ցավով, երազով.

*Տարոնի դաշտո ճառագում է սեւ թույնի բոցերում,-
Մեկեն երկինքը հանգչեց, զառ հավքի բացված թեւի տակ,
Պահը թռիչքում արմոտվեց Նեմրութ սարի սուրսայրին,
Սակայն եւ մեջքին չոլորվեց ծեռքը՝ վշտից քարացած.
Իմ վերքոտ Սոսե, իմ երգոտ Սոսե, իմ անհուն Սոսե:* ¹³

Ինքնաբուխ, քնարաշունչ բանաստեղծության մեջ ընդգծված «իմ սիրուն Սոսե», «իմ անհուն Սոսե» կոչականներն ընդհանրացման մեջ խտացվում են «իմ Սոսե, Սոսե» ջերմ դիմումի ծետով: Եվ սիրո այս զգացումն առավելագույնս ինաստավորվում է «Լեռներն ի շար են՝ սուլբ իրամանքով Սերոր Ալբյուրի, Ելել մանուկը՝ արեւի դափնին տանում է հորը» վրձնատողերով՝ որպես հայ ժողովրդի ազատագրական նորօրյա պայքարի առհավատչյա:

Յայ ժողովրդի պատմության դարավոր էջերը հերոսականության, բարոյաէթիկական խնդիրների շտեմարան է, նաքառելու եւ գոյատեւելու փիլիսոփայություն: Դրանցում միանգամայն կարեւորվում է հերոսական բնավորության հիմնախնդիրը, որ միշտ գտնվել է հայոց գեղարվեստական գրականության կիզակետում: Գրողը, ետադարձ հայացք ձգելով անցյալին, վերագնահատում է հայրենասիրության, անձնազոհության, հերոսության արարժմերը, որոնք փոխանցվում են նորերին եւ մղում ազատ, անկախ ապրելու սխրանքների:

Վ. Դակորյանն այս միտումով անդրադառնում է հայոց քաջերի վարժին, լարում դժվարությունները հարթահարելու ուժերը՝ խոսքը նոր հորիզոնի ճառագումով հյուսելու միտումով: Եվ մեծանասամբ դա հաջողվում է նրան: Այստեղ արդեն երեւում է բանաստեղծի աշխարհը, որտեղ արտահայտվելու նրա եղանակը դառնում է անկաշկանդ, ճեռք բերում յուրովի ոճ: Նա ուշադրություն չի դարձնում հանգին, բայց պահպանում է բանաստեղծության ռիթմն ապահովող ոտքերը, տողերը դասավորում համաշափ՝ բխեցնելով հայ իրականության պատմական եւ արդի առարկայական-ռեալական ազդակներից: Դիմենք «Սոսե» շարքի «Կօան, ասացիր...» բանաստեղծությանը, որի երրորդ տունը հնչում է այսպես.

*Սոսեն աչքերում պահում է սրեր,
Թանձրիկ ցավերում մշուշ կա Սուշի,
Մայրիկ, եկ քայլենք մեր հին հանդերով,
Աչքս դարերի ճամփա է կտրում,
Կարոտը սարում անթեղված հուր է:*¹⁴

Այնուհետեւ բանաստեղծության պատկերները լրացվում են նոր արտահայտչամիջոցներով, քնարական հերոսն ապրում է

ՊՈՒՇՔՆԱՆ ՄԱՍԻՆՑԱԿԱՆ ԴՐԱՔԱՐՄԻԱՆ

իր տարերքը, ներշնչանքը ծածանվում է «ժամանակի ու տարածության» հորիզոններում.

Կգամ, ասացիր, մի քիչ համբերիր,-
Յողված կայծակը արմատ է դալար,
Թիթեռը թեւեր ծնւեց կրակից,
Արեւի դեմքին բացվեց հազար դուռ,
Եվ ցուպի ծայրին արթուն է հեռուն: ¹⁵

Արցախյան պայքարի երգերը հյուսելիս Վ. Շակոբյանը հոգերանական ազատ թեւաբախում է ապրում: Երգից երգ նա կատարելագործում է իրեն, հաղթահարում ինքն իրեն, խուսափում կրկնություններից, ցուցադրում ինտուիցիայի արցախսագույն իր զգացողությունը: Այստեղ, ինչպես ասում են, տառապանքից է ծնվուն երգը: Սերը՝ հայրենիքի հանդեպ, պատասխանատվությունը պոեզիայի նկատմամբ երաշխավիրվում են միասնաբար: Ինչպիսի տրամաբանական վերլուծության էլ ենթարկես Շակոբյանի պայքարի երգերը, նրանցում պահպանված ու բացահայտված են պատմականության կատեզորիաները՝ սերտորեն առնչված արդիականության պահանջներին.

Մարութա կողմեն ծեն իշավ Քիրսին,-
Եվ դու տաճարը դարձար Աստոն,
Եվ վերադարձավ դուռը հույսի մոտ,
Եվ երակն ի վեր կրակը հոսեց,
Գմբերը քո մեջ տնվորեց իրեն:
Ուղին մեկնել է երգը փնտրելու,-
Եվ դեպի արեւ գնաց կամարը,
Եվ մանուկն ելավ եղեգան փողից,
Եվ պատը ցավի զարկից ճեղք տվեց՝
Արցախը օրվա վրա լուսացավ: ¹⁶

ԴԻՆՁՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Ակադեմիկոս Ս. Սարինյանը գրել է. «Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ծեփի եւ բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Դա բանաստեղծության ներքին տրամաբանությունն է, սիմվոլ-գաղափարի ծագումը, ընթացքն ու վերջավորությունը, որ գոյանում է պատկերավոր միավորների բազմակի կապերից ու պատճառական ներհյուսումներից, ժամանակի ու տարածության հարաբերումներից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարեւոր ֆունկցիա եւ մեծապես պայմանավորում բանաստեղծության գեղագիտական-իիլիխոփայական տարրողությունը»:¹⁷

Այս դիտարկումի լուսարձակով Վ. Ղակորյանի բանաստեղծական շարքերը, առանձնապես պայքարի երգաշարը քննելիս համոզվում ես, որ նրա յուրաքանչյուր բանաստեղծություն մի պատմություն է, որն իր մեջ պարունակում է հայունիթի ճակատագրի պատմական եւ առօրյա խորհուրդը՝ ժողովորդի դարավոր կենսափորձի շերտերով: Վերցնենք «Թռավ-գնաց ծաղիկը...» բանաստեղծությունը: Ստեղծագործության պատկերների համակարգում խիզախում է բանաստեղծը, զրուցում Ֆիդայական օրերի, նոր ժամանակների հետ, բացում ցավի եւ հույսի առեղծվածները: Այստեղ ծաղիկը թռչում է՝ իր «թիթեռնիկին գտնելու», աստվածամոր աչքերում հարսնանում է երազը, կարոտը «մոռացված մի խաչքարի մոմ է վառում», ճամփեքի թռիչքում մերվում են «երկինք ու ձոր», եւ քնարական հերոսի աչքերը «աստերից կրակ են» քաղում: Ապա տաք հուշը խենթացած մի բողբոջի տանում է արեւին, «Եվ լցվում է օրը լոյս մոմաթերթի պես վայրի»: Ապա բանաստեղծության հյուսվածքում տարածական սահմանները բերում են երգչի գեղագիտական իդեալից թխող պահանջը.

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՌԻՐՔԵՐՈՒՄ

Սարը հանկարծ վերիիշեց ֆիդայական հին մի երգ,-
Եվ ձեն-ձենի արթնացան կածան ու քար քնեցված,
Եվ ալիքը գնտերում կրկին դարձակ երեխա,
Եվ կտուցին տատրակի երգը նորից թռվորաց,
Եվ Արարոն տուն եկավ՝ ծիու ոտքին ծերմակ նախշ։¹⁸

Սոսեին նվիրված երգաշարում շոշափված են հայրենիք-պատմություն-գոյանարտ գործոնները՝ ֆիդայական շարժման հավերժական ազրակ լինելու ընդգծումով։ Աղբյուր Սերոբի, Սոսեի, Արարոյի անունները գնահատվում են որպես դարի եւ քաղաքացու անունն ու պատիկը փրկող մետաֆորներ։

Սոսեի կերպարը մաքառնան խորհրդանիշ է Վ. Ճակոբյանի պոեզիայում։ Այն մաքառումների ճանապարհ է, իսկ ճանապարհը բնութագրական է ժամանակ հասկացությամբ, որտեղ ըստ բանաստեղծի, «Մշունչն առյուծ է գտնում իր համար», «Չողը երազ է գտնում իր համար» («Մաքառումներ»)։ Բացելով լույսի ծալքերը, բանաստեղծը նկատում է, որ «Լույսը սրտի մեջ ծագեր է հանում», եւ խոստովանում է.

Օրն ու գարունը պահն են անհումի,
Թե ես քո ցավին տեղ չեմ կանգնելու,
Գնամ թարթառը ընկնեմ՝ ինձ տանի,
Սրտի պես բաց են ծալքերը բոլոր։¹⁹
(«Բացում եմ...»)

Մաքառնան երգերի քնարական հերոսն իրեն համարում է ազատամարտիկ եւ ծգտում է լինել ուղեւորների շարքերում («Ուղեւորները»), իրեն գտնում «Սարերի... ցավերի» շուրջառում՝ դարձած վստահություն («Ես ինձ սարերի շուրջառում գտա»)։ Այդ վստահությունն ունի իր արմատները, իր անուննե-

ԴԻՆՁՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Ի՞ր: Տվյալ դեպքում երգաշարի գաղափարահուզական սերուցքը Սոսեի անունն ու գործն է: Սոսեի անունը բանաստեղծի համար կամարում է կորուսյալ հայրենիքը Արցախի հետ.

*Երբ քեզ ասում եմ՝ Սոսե,
Սոսե,
Նշանակում է՝
Մարութա սարն եմ ուզում բարձրանալ:*²⁰

(«Ես քեզ ասում եմ՝ Սոսե»)

Վ. Հակոբյանի «Պայքարի երգը» ակունքվում է Թարթառից, թեւում, հասնում Մուշ, Մարութա լեռների լանջերին հանդիպում հայ ֆիդայիներին, միասին վերադառնում Արցախ՝ հոգու մեջ աշխարհն Հայոց՝ ազատ, անկախ, միացյալ.

*Գնում եմ՝ հողիս պատկերը դեմքիս,-
Այսպես է երգը ուկորը մտնում,
Այսպես է պարը ոտքերը ընկնում,
Այսպես է եռքը արյան մեջ զարթնում,
Գնում եմ՝ հողիս պատկերը դեմքիս...²¹*

(«ճանապարհը»)

Բանաստեղծ ու երգահան ԳՈՒՐԳԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ անմիջապես արձագանքում էր իրադարձություններին: 1988-ի փետրվարի 20-ի հայտնի նիստի տպավորության տակ գոյց «Անկնիք Վճիռ» ստեղծագործությունը: Բանաստեղծը մարզվորհրդի Որոշումը գնահատում է որպես «իմաստուն վճիռ», ժողովրդի երազի հաստատում:

Թարթառը, Մոռվը, Թիրսը, Կարկառը, Խաչենագետը, Արցախի աշխարհագրական տեղանունները դարձան բանաստեղծական մետաֆորներ, պատմության խորքերից մինչեւ այսօրը քայ-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Լող զինվորներ: Արցախը լեզու առաջ խոսում էր Գ. Գաբրիելյանի գոչի տակ: Նրա երգերում Թարթառը թուների հետ խոսեց «ճերմակամագ պապի» նման («Թարթառ»), Մշովը մռայլվեց, երբ թուրքը գրեց, որ արցախցիները եկվոր են: Դակա սարը ծառացավ եւ իր որդիներին հորդորեց. «Արցախը քոնն է դարերից հին ու խոր» («Մշով»): Քիրա սարը աքլորականչին հնչեցրեց շեփորը, որ «Քնով չանցնեն Արծվածուտ որդիք» («Քիրս»), Կարկառը հոլվեց հեռուներում գտնվող զավակների տունդարձի երգը («Կարկառ»):

Գ. Գաբրիելյանի բանաստեղծությունների մեջ հնչում են պատասխաններ ազերի վայ գիտնականներին, որոնք բացել էին կեղծիքի վարագույրը եւ Դայոց Արցախը համարում էին ազերական: Այդ սուտն ու կեղծիքը պետք է մերկացնել թեկուզ եւ բանաստեղծության ընձեռած սահմաններում:

Բացի վերոհիշյալ ստեղծագործություններից, Գ. Գաբրիելյանը հորինել է տասնյակ մարտական բանաստեղծություններ: Նրա երգը՝ ծնված Արցախի հույսերից ու ցավերից, ակնկալություններից ու տագմապներից, հնչում է ամեն մի պահի՝ խոսելով ընթերցողի հոգու հետ: Արցախի սուրբ նասունքներն անգամ ոգեշունչ երգեր դարձան Գաբրիելյանի շրթերին: Ոգեկոչման հնչեղ ելեւէջներ են Գաբրիելյանի «Անարաս», «Դադիվանք», «Գանձասար» երգերը, որոնք արդեն մտել են հայկական բոլոր համույթների երգացանկի մեջ: Արցախյան պատերազմի տարիներին բանաստեղծի գրած մարտական երգերը առաջին հերթին դեպի իր հրաշք լեռնաշխարհն ունեցած տագնապի ու հավատի արտահայտություններ են: Այդ վերաբերմունքի պերճախոս առհավատշան «Արցախի ֆիդայիներին» քայլերգն է: Նախ փառաբանելով հերոսներ ծնող մայրերին, բանաստեղծը խոսքն ուղղում է ֆիդայիներին. «Զեր նախնաց պես զգիտեք քնել, Զգիտեք զիջել ոսոխներին նեռ»: Նոր ֆիդայիների հոգում Անդրանիկի,

ԴԻՆԾԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Գեւորգ Զառչի, Աղբյուր Սերոբի սերն է ծփում, նրանց օրինակով պայքարի ելան, «Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք»:

ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ պոեզիայում հայրենիքը սկսվում է Արցախից, ավարտվում Արցախով: Բանաստեղծի չհաճատացող ոգին, որոնումների ծարավը թեմայի շրջանակներում հասցրին «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ» ժողովածուին, որ տպագրվեց Երեւանում, 1990թ.: Լինելով Ղարաբաղյան շարժման ակտիվ ներկայացուցիչներից մեկը, Յ. Բեգլարյանը փառաբանեց արցախցիների արդար պայքարը, ազգային ինքնորոշման նրանց իրավունքը, որ շղթայվել էր խորհրդային տարիներին: Բանաստեղծի հայրենասիրական եւ ժողովրդասիրական ջերմ ու ազնիվ գգացումները նոր կրոմերով դրսեւորվեցին Արցախին, Դայաստանին, ազատամարտիկներին եւ այդ սուրբ ճանապարհի մարտիրոսվածներին նվիրած ստեղծագործություններում: «Դավատ» բանաստեղծությունը հյուսված է 1988-ի ձմռանը ոտքի Ելած արցախցիների արդարացի պահանջի շաղախով: Նա պատկերում է Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը, ուր ձմեռվա քին ու ցրտին մարդիկ հավաքվել էին իրենց պահանջներով, հավատով զինված:

Բանաստեղծը «Մենք առանց ձեզ էլ» ոտանավորում ընթուտանում է այն կեղծ հայտարարությունների դեմ, որ իբր Արցախն առանց հարեւանի հովանու չի կարող ապրել: Նա վկայակոչում է մեր պատմության երկար ու ծիգ երթը, որի ընթացքում առանց ուրիշի ողորմության իերկ ենք իերկել, տուն պահել, կերտել բերդեր, երգեր երգել, մատյաններ ծաղկել, ունեցել մեր կալն ու մարագը:

Բանաստեղծը լուսարձակի տակ է դմում մեր ժողովրդի՝

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

բնավորության գծերը, ձգտում է բացահայտել այն առեղծվածը, թե ինչպես նա դիմակայեց պատմության բոլոր արհավիրքներին եւ այսօր էլ շարունակում է ոչ միայն հարատելել, այլև բարձրացնել իր բողոքի ձայնը նորորյա անարդարությունների դեմ: Պարզվում է, որ համբերությունը մեր պապերին դարձրել է մեր սարերի պես անարիկ ու սեզ, որից սարսափել է թշնամին («Արցախյան համբերություն»):

Արցախը սուրբ օջախն է ավանդված այսօրվա եւ գալիք սերունդներին: Եվ այսօրվա սերունդը գիտե, թե հանուն ինչի է ելել պայքարի:

Շարժման առաջին էտապում բանաստեղծները հանդես էին գալիս անգիտում պայքարի շեշտերով հագեցված գործերով, որոնք ժողովրդին կոչում էին համախմբվելու Վերամիավորման գաղափարի շուրջ: Այս փուլում նրանց պոեզիայում տիրապետող դարձան Արցախը չլքելու, նրա մշակն ու գինվորյալը դառնալու մոտիվները:

Բանաստեղծութի ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԸ խանդադատանքով ընդգծեց, որ Արցախի «մի մասուրն անգամ ընդունակ է մեզ տող նվիրելու», որ «Արցախի գարնան խոտը մասունք է, կարո՞տ»: Նրա քնարական հերոսը կոչ է անում որդուն (ասել է թե՝ բոլոր երիտասարդներին) մնալ Արցախում:

Ն. Ավագյանի քնարական հերոսը բնութագրում է թշնամուն՝ ինչպես կա, գնահատում մեզ՝ մեր էությամբ.

Նա խորամանկ՝ մտքով ստերջ,
Նա՝ Թալեաթ, մենք՝ Կոմիտա՞ս,
Նա՝ «առւմզայիթ», մենք՝ օրենսհարգ...
«Սումզայիթց» հետո ի՞նչ է մնում անել.

Այս մի եռման ելքը մեկն է՝
Մեր մնումնելը կամ Միացում,
Այս միացման կնքահայրը Եռագույնն է՝
Դայոց սրտի տաք կարմիրով,
Դայոց հասկի ծիրամիով,
Եվ կապույտով՝ Մասսաց գլխին աղոթք անող: ²²

Բանաստեղծութու Երգերում Արցախի պաշտպանության թեման հնչում է որպես պոետական ներքին մղում: Նրա համար հայրենի լեռնաշխարհը անպարտելի ուժ է, արյան կանչ:

Արցախյան շարժման առաջին օրերին ժողովուրդը գիտակցեց, որ Արբեջանը անպայման արցախցիներին պարտադրելու է պատերազմ: Ուստի կարծ ժամանակաշրջացքում մարդիկ համախմբվեցին հանուն ազատ եւ անկախ կյանքի: Իսկ ո՞ր ժողովուրդն է, որ առանց միասնության կարող է բարձրացնել փրկության դրոշը: Այդ վճռորոշ ուժի գիտակցումով աստիճանաբար, հատկապես 1991թ. սեպտեմբերի 2-ին մեր ավանդական լեռնաշխարհում իրականացվեց պետականություն ունենալու ձգտումը: Իսկ ո՞ր պետությունն է, որ կարող է գոյություն ունենալ առանց իր քաղաքացիների վստահության եւ ջանքերի: Այդ մղումով էլ յուրաքանչյուր արցախցի իր ընտրած պետությունը համարեց իր հաստատման հիմնական ուժը, իսկ պետությունն էլ իր գոյության հիմքում տեսավ յուրաքանչյուր քաղաքացու նվիրումը: Այդպես, արցախցին ու իր պետությունը դարձան մեր հերոսական անցյալը վերածնող, ներկան գալիքին կամրջող միակամ ու միավիճ գործոն: Յուրաքանչյուր արցախցի եւ նրա պետական այրերը գիտակցեցին, որ եթե սկզբնական շրջանում

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Կարեւոր էր ինքնապաշտպանության ֆիդայական պայքարը, ապա եկել է ժամանակը՝ ունենալու ինքնապաշտպանության կանոնավոր բանակ, որ պետք է գործի միասնական հրամանատարության ղեկավարությամբ:

Եվ եկավ պահօ... 1992թ. հուլիսին ստեղծվեցին պաշտպանական գոտիներ, ըստ որի՝ Արցախում միավորվեցին առանձին-առանձին գործող կամավորական ջոկատները եւ ապա, սեպտեմբերի 1-ից ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակը:

Աղրբեջանի զինված ուժերը ռազմաճակատում պարտություն պարտության հետեւից էին կրում: Ազերի ղեկավարները դիմեցին դարերով որդեգրած իրենց նենգ քաղաքականությանը՝ իրենց չարագործության մեջ ներառել նաեւ վարձկան ուժերին: Եվ նրանց հաջողվեց իրենց զինակիցը դարձնել Գյանջա (Գանձակ) քաղաքում տեղավորված խորհրդային 4-րդ բանակի ուժերին: Աղրբեջանի իշխանություններին հաջողվեց իրականացնել իրենց հակահայկական քաղաքականությունը: Բռնագաղթվեցին Շահումյանի շրջանի բոլոր բնակավայրերը եւ Մարտակերտի շրջանի գյուղերի մեծ մասը: Յոյուսիսային Արցախը դատարկվեց հայերից: Ազերիները հասան Կիչան-Վաղուհաս բնագծին: Նրանք արդեն երազում էին կրակի մատնել Խաչենի հովտի բնակավայրերը, գրավել Ստեփանակերտը: Ազերիների այդ նենգածին նկրտումների առաջն առնելու հրամայականը պահի խնդիր էր դարձել: Արցախի զինված ուժերը պետք է ազատագրեին ոչ միայն թշնամու գրաված բնակավայրերը, այլև ոչնչացնեին մոտակա աղրբեջանական շրջանների կրակակետերը, որտեղից գնդակոծում եւ հրթիռակոծում էին հայկական գյուղերը: Արցախցիների գենքին գումարվեց նաեւ երգը: Գրում էին բոլորը, բանաստեղծությունը ծնվում էր խրամատներում, նկուղներում, արտասանվում ու երգվում էր զինվորյալների հետ հանդիպում-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՌՔՆԹՈՒՄ

Աներում, ռազմաճակատ ճանապարհվելիս: Ակսած 1988-ի փետրվարից, յուրաքանչյուր պատմական իրադարձություն՝ կապված արցախսիների վճռական պայքարի հետ, պիետական թեւեր էր առնում: 1988-ի փետրվարին ԼՂՀ մարգխորհրդի նիստում հայ պատգամավորների որոշմամբ վճռվեց լեռնաշխարհը դուրս բերել Արրեջանի կազմից, վերամիավորել Հայաստանին: Այդ վճիռը թրերով դիմավորեցին Աղրբեջանի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներում:

Այդ պատմական որոշման առթիվ իրենց ոգեշունչ խոսքն ասացին պիետները:

Արցախը իր հազարամյակների պատմությամբ, ճարտարապետական բազում կոթողներով հայաշունչ է, մեսրոպագիր, աստղագնա, բայց, ավա՞ն՝ գերված: Բանաստեղծ ԱՐՄԵՆ ԴՊՎԱՆԻՒՅՑԱՆԸ տագնապահար բացականչում է. «Ներխուժում է տունս չարի ոգին անտես...»: Չարի ոգին ճեղք է առաջացնում հարազատ Արցախի օջախներում, սրբատներում: Խոնարհվելով Գանձասարին, բանաստեղծը տագնապի աղոթքը ուղղում է Արարչին.

*Օ՛, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,
Ավաղ, ճեղք է տալիս սրբատուն:*²³

Դիմելով Անարաս վանքին, որ կերտվել է 4-րդ դարի սկզբին, Գ. Լուսավորչի ցուցումով, Ա. Դովիհաննիսյանը երազում է տեսնել նրա աբեղային, սրբազանին ու վեհափառին, խնդրում, որ Աստված լսի իր աղոթքը: Դեռ ավելին, նա ընդգծում է.

Ո՞ւր ես, արարիչ, լսիր իմ մեղամ,

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Դանուն հոգուս, որ քոնն է լիովին,
Վար իջեցրու զոհասեղամդ,-
Գլուխս ընծա բերեմ կամովին։²⁴

Բանաստեղծը, բացահայտելով պատմական ժամանակաշրջանի անդրադարձումները, վերագտավ արցախցուն, որը նախ նաքառում էր հոգու խորքում եւ ապա քաղաքացիական ասպարեզ դուրս եկավ հանուն իր անկախ եւ ազատ կյանքի, հանուն իր մայրենի՝ հայոց լեզվի գոյատեւման եւ սերունդների հայեցի դաստիարակման:

Արցախյան շարժման հենց սկզբից մեր պոեզիայի նահապետներից մեկը՝ **ԲՈՂՋԱՆ ԶԱՍՅԱՆԸ**, առաջին հերթին հնչեցրեց տագմապի երգը: Նա իր բանաստեղծական նժարմերին դրեց Արցախի ուրախությունն ու ցավը եւ դրանց միագումարը բերեց երգի մեջ: Դա ոչ թե հոգեկան երկվության արտահայտություն է, այլ առանց ծննդավայրի իր կյանքը չպատկերացնող քաղաքացու միաժամանակյա տագմապի արտահայտություն: «Տրտուգետը» բանաստեղծությունն այդ խռովքի լավագույն արտահայտություններից է: Բնութագրելով Տրտուն, բանաստեղծն առաջին հերթին ընդգծում է, որ Տրտուն իր ճամփան գտնում է «Տագնապախոռվ ու տագմապաձայն»: Գետի ճայնը «լրության մշտախոս լեզուն» է: Մարդիկ գալիս գնում են, իսկ Տրտուն մնում է մենակ իր դժվար ճամփի ու խռովքի հետ:

Բանաստեղծը Արցախը կորցնելը համարում է իր մահը, ուստի մարտի է կոչում զինվորյալ հայրենակիցներին: Ազատության այլ ճանապարհ չկա: Նա հավատացած է, որ Արցախի իրեն հոգին եղել է, կա ու կլինի: Ճենց այդ ոգու արտահայտություն են հավա-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԵՐՈՒՄ

Մի այս տողերը.

Եվ այդ ոգին քո քաջերի երակներում
Արյամ խոսք ու եռք է դառնում ահագնացող,
Եվ դառնում է խիզախություն թեժ մարտերում,
Ոտքերի տակ՝ մայրագորով հայրենի հող...²⁵

(«Թե քեզ կորցնեմ»)

Բանաստեղծ ԱՐԿԱՇԻ ԹՈՎՍԱՍՅԱՆԸ իր երգերի գիրքը վերնագրեց «Արցախցի են ես»: Դա ազգային արժանապատվության խոստովանություն է: Թովմասյանի համար արցախյան հոդը «չընկվող անկեռ աղամանդ է», «ուրան է՝ աշխարհով լցված», որ ատոմի ուժ ունի:

Ա. Թովմասյանի եղան ակունքվում է Արցախից, փարվում Արարատին, ինչպես ինքն է խոստովանում «Ես որպես որոյի իր մորից պոկված, գնում եմ դեպի հայրենիքն ին հար՝ Անուշ Հայաստան»: Բանաստեղծի այս լընդիանուացումը հնչում է որպես հավատ, որպես «լեռներից կախված զանգ», որը ոչ ոք չի «կարող պոկել»: Բանաստեղծն իր ուժն առնում է հայրենի հողից, նրա ոսնահետքերը «Հասնում են մինչեւ Ուրարտու» եւ դարավոր այդ երթի մեջ միշտ ազդարարել է՝ «Ես չեմ ապրի երբեք ծնկի հջած»: Այդ պատվաբեր գիտակցությանը Թովմասյանի քնարական հերոսը բանաստեղծական զգացումների մեջ է առնում Գանձասարն ու Ամարասը, Մռովն ու Քիրսը, Շուշին ու Վարարակնը եւ շնչավորում նրանց որպես հավերժության կենդանի ճամփորհներ: Հավերժական այդ ճանապարհը եղել է դժվարին, արհավիրքներով լի, սակայն արցախցին միշտ էլ գիտակցել է, որ իրեն բախստ է վիճակվել արյան գնով պաշտպանելու ոչ միայն իր օջախը, այլև դառնալու Հայոց աշխարհի պահապանն ու գինվորյալը: Ահա ինչու Ա. Թովմասյանի հայրենասիրական

Երգերում Արցախը հոլովկում է Հայաստան սուրբ անվան հետ միասին: Ա. Թովմասյանի երգերում ընդգծված է հայ մարդու բնավորությունը՝ աշխատասեր, ազնիվ, հաճախ այնքան ազնիվ, որ կարող է խարբել թշնամուց: Այդ է վկայում նրա «Բարեկամի մասին» բանաստեղծությունը: Հավատացինք հարեւանին, բայց նա Սումգայիթ կազմակերպեց, նրա մասին լեզենդներ հյուսեցինք, բայց նա արյան գետեր բացեց: Սակայն Թովմասյանը հավատում է մեր հաղթանակին: Ղիմելով գերված, հայաշունչ Շուշիին, դեռևս շարժման սկզբին նա գրեց. «Բայց գերության միջից դեռ կարձակվես, Շուշի, դեռ կկանչի զանգդ, Զանգակատուն Շուշի»:

²⁶

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից սկսած *ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸ* անմիջապես, իր գրչեղբայր-ների հետ միասին մասնակցեց հանրահավաքներին՝ հնչեցնելով պայքարի իր երգերը, որոնցում զգացվում էր օրվա պահանջը՝ մարտնչել մինչեւ Վերջնական հաղթանակ, մինչեւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերամիավորումը մայր Հայաստանին: Այդ տարիներին Խանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, լեզենդներ, որ տպագրվել են թերթերի էջերում եւ ամսագրերում, հաղորդվել ռադիոյով եւ հեռուստատեսությամբ:

Ս. Խանյանի բանաստեղծություններում առաջին հերթին ընդգծված են նրա որդիական զրոյցները Արցախ-մոր հետ: Այս հնարանքի առավելությունն այն է, որ բանաստեղծն անմիջականորեն արտահայտում է իր ապրումներն ու զգացումները, բացում սիրտը՝ լի ակնկալիքներով, բռնկված պայքարի կրակով: Այս առումով հետաքրքիր են նրա «Արցախցիներ», «Արցախ», «Գանձասար», «Անարաս», «Հավատ», «Արծվաշեն», «Ազգային

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՄՔՆՄԻՄ

իարց», «Արցախի դասը», «Ին մայր ժողովուրդ» եւ այլ ստեղծագործություններ, որ զետեղվել են 1990-1991 թթ. լուս տեսած «Կարոտի կրակներ», «Արցախյան ղողամզներ» եւ «Ին ծիածանը» գրքերում: Պետք է ընդգծել, որ այդ ժամանակահատվածում գրված յուրաքանչյուր ստեղծագործություն կոնկրետ կապված է այս կամ այն երեւույթի, իրադարձության, մարդկանց անօրինակ սխրանքի եւ այլ ժողովրդանվեր արարքի հետ: Այս երեւույթը նկատվում է ոչ միայն Ս. Խանյանի, այլև Գ. Գաբրիելյանի, Վ. Ղակոբյանի, Յ. Բեգլարյանի, Ն. Ավագյանի եւ մյուս բանաստեղծների գրական հունձքում:

Ձենքի եւ երգի միասնության գաղափարը միշտ համակել է Ս. Խանյանին: Դա նրա պոետական հավատամքն է, մի սկզբունք, որ ապացուցում է ժողովրդի ճակատագրի հանդեպ գրողի ակտիվ կենսադիրքի պահանջը: Կարդալով Ս. Խանյանի բանաստեղծությունները, կարելի է պարզ պատկերացում կազմել Արցախյան գոյամարտի թեժ օրերին տեղի ունեցած դեպքերի մասին: Սակայն պիսալ կլիներ եզրակացնել, որ դրանք միայն պատճական փաստերի եւ երեւույթների թվարկումներ են: Ինչպես նշել է անվանի գրականագետ Ս. Ղանիելյանը. «Կենսագրական լավագույն էջերը գրվեցին Շարժման տարիներին: Իր խիզախ, արի կեցվածքով Ս. Խանյանը մտավորականների այն փաղանգում էր, որը քաջ գիտեր իր դերը, որը պարզապես նվիրումի մեջ օրինակ էր երիտասարդ սերմնի բանաստեղծների համար: Նա ծառանալ գիտեր ոչ միայն տաք տողերի մեջ, այլեւ՝ կյանքում, իսկ դա քիչ է որակել «ապրած» արատահայտությամբ, կենսական վարքագիծն է դա, բարձր նկարագրի վկայություն, ուր տողը հատվում է դավանանքի կայունությամբ, կեցության բաց պարզությամբ»:²⁷

Նշենք, որ Ս. Խանյանը աշխատելով Արցախի պետական

Իհամալսարանում, որ այդ տարիներին դարձել էր քաղաքական պայքարի կենտրոն, միաժամանակ լինելով գրողների միության ակտիվ անդամներից մեկը, գտնվում էր գոյանարսի գաղափարական խմորումների առանցքում: Այստեղից էլ նրա ստեղծագործությունների հագեցվածությունը, շիկացած լիցքը՝ թարմ արտահայտչամիջոցներով: Պատմական սկզբնադրյուրի եւ պատկերային հուզաքարավ հյուսվածքի արժեք ունեն նրա պայքարի երգերը: 1988 թ. դեկտեմբերի 7-ին Ս. Խանյանը դասախոս Լ. Գրիգորյանի հետ մեկնում էր Կիրովական, այնտեղ տեղափոխված Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներին դասավանդելու նպատակով: Երեւանից Կիրովական ավտորուսով մեկնելիս տեղի է ունենում անսպասելին: Սպիտակի երկրաշարժի պահին բանաստեղծն ու իր գործընկերն ականատես են լինում այդ ծանր արահավիրքին, ապրում փլուզված շենքերի, հողածածկ տների, փլատակների տակ գտնվող անօգնական մարդկանց ահավոր տեսարաններին: Նոյն գիշերը վերադառնալով Երեւան, ծնվում է բանաստեղծի «Ի՞ն մայր ժողովուրդ» ստեղծագործությունը, որ տպագրվում է այն ժամանակ հրատարակվող «Սովետական Հայաստան» հանրապետական թերթում: Բանաստեղծությունը լայն արձագանք է գտնում ընթերցողների շրջանում, ասմունքողների կողմից հնչեցվում է եւ Եր- Եւանում, Եւ Սփյուռքում: Դերասան Ս. Եվրիյանը Բեյրութում արտասանում է այն եւ արժանանուն հատուկ մրցանակի: Դիմելով մայր ժողովուրդին, բանաստեղծը նշում է, որ ինքը եկել է «Արցախի ընքուստ սարերից», որ մայր Հայաստանի «հոգու մեջ ցավերը կարդա», «զգա շոյող ձեռքերի ուժը», «մտնի խորքերը խորհուրդների», որպեսզի իր հույսերի ճամփին ցանի Հայոց աշխարհի լույսը եւ շարունակի պայքարը Արցախի ազատության համար: Սակայն, ավա՞ն, արցունքի ծովն է խեղդում քնարական հերոսի սիրտը, քանի որ բնությունը անար-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Դար իր խաղն է մատուցել, ժողովրդի դարավոր ցավերին ավելացնելով մի նոր աղետալի հարված: Չորս մասից բաղկացած բանաստեղծության յուրաքանչյուրի համար օգտագործելով ժողովրդական «քո ցավը տանեմ» արտահայտությունը, բանաստեղծը թվարկում է ժողովրդի անցած ճանապարհի դժվարությունները եւ ասում իր լավատեսական խոսքը.

Տառապանքներում կոփված քո կամքով,
Վրցունքի միջից սգանք զոհերին,
Բայց չնոռանանք,
Որ քո անունը պիտի արեւի,
Պիտի արեւի
Վշտահար ապրող սրտերի խորքում,
Փլատակներից կենդանի փրկված
Քո զավակների մշուշված հոգում,
Մեր մանուկների անմեղ խաղերում,
Մեր նորից հառնած
Ծեն քաղաքների լայն փողոցներում,
Մեր ավաններում,
Գյուղերում մեր բյուր,
Կարոտից ծնկած մեր երգերի մեջ,
Մեր ապագայի շրթերի վրա: ²⁸

Սակայն դրանով չի ավարտվում ստեղծագործությունը: Քնարական հերոսի մտորումների մեջ ըմբոստ Արցախն է: Ժողովրդի նոր վշտի առջեւ ծնկի գալով, նա խորհրդածում է.

Դին Ամարասի եւ Գամձասարի
Աղոթքով հիշենք զոհերին մեր նոր,
Թարթառի խռով սաղմոսը բերենք
Նրանց ածյունին,

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՄԲԱՐԱՐՈՒՄ

Քիրսի, Մոռվի ծաղկունքից եփված
Սեռոնվ օժենն շիրիմները սուրբ:
Մեր արցունքախառն աղոթքի միջից
Ողբանք մեր վիշտը
Եվ զոհվածներին ասենք.
«Կիառմեն քաղաքները մեր»...
Ասենք. «Զեր սիրած Արցախը կգա,
Կգա կարոտով,
Մեր երազների ճառագած փնջով...:
Քո կամքի ուժով ապրել ես դարեր,
Կապրես եւ հիմա:
Քո թախմուտ սրտի հույսի շողերը
Նորից փունջ արած Արցախ կտանեմ,
Քո ցավը տանեմ: ²⁹

Ազերի բռնակալների դեմ անկախության եւ ազատության համար ոտքի ելած արցախցիմների վճռականության, կամքի ուժի, ազատարարձ ոգու գեղարվեստական մի պատկեր է «Արցախցիմներ» քնարական պոեմը: Չորս գլուխներից բաղկացած ստեղծագործության մեջ ներկայացվում է մեր ժողովրդի հազարամյա պատմությունը: Պոեմի հյուսվածքի մեջ բերելով Գրիգոր Նարեկացու գրույցն Աստծոն հետ, բանաստեղծն ընդգծում է հայ մարդու ընդվզումն անարդարության դեմ: Այդ հասկանալով, խելոք մեր պապերը, իրենց «ըմբռստությունը դարձրին դրոշ ու գենք» եւ շշնչացին.

...«Մեր Աստվածը մենք ենք,
Մենք ենք մեր Աստվածը մեր սարերի վրա,
Մեր սարերից բարձր մեր հոգու մեջ,
Մեր ծեռքերով պիտի վառենք աստղերը մեր

ՊՈԵԶԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Եվ հայ պիտի ապրենք դարեր անվերջ»:³⁰

Պոեմում ընդգծվում է հայ ժողովրդի շինարար ծեռքը, ստեղծագործող ոգին, մեսրոպյան գրով արդարության խոսքը հնչեցնելու վճռականությունը, խաչքարերի լեզվով սիրտն ու հոգին բացելու կարողությունը, Ավարայրից մինչեւ Սարդարապատ ձգված հաղթական երթը: Սակայն պատմության զիգզագներում եղան նաև ստալինյան անարդար օրենքներ, հայ ժողովրդի հանդեպ կատարված դաժանություններ, Հայոց Նախիջեւանի եւ Արցախի կորուստները: Բանաստեղծը հոգեբանական բացահայտումներով նշում է Մեծ Հայքի 10-րդ նահանգը կազմող Արցախի նորօրյա պայքարը եւ հավատով ընդգծում արցախցիների ոգու արիությունը, վտանգի ժամին մեկը մյուսին թեւ-թիկունք դառնալու ավանդական սովորութը: Արցախցիների պահանջը ազնիվ ու մարդկային է, ազգային միասնության գաղափարի երազ: Նրանց կոչն է. «Մեր մո՞րն ենք ուզում, մեր լեզո՞ւն, խո՞սք, դա մեր երազն է հազարամյա»: Պոեմի ավարտը ժողովրդի ազատագրական պայքարի հանդեպ եղած հավատն է, որ հնչում է առինքնող ուժով.

Արցախցիները պողպատից կարծր են,
Վեհ են ու բարձր են եւ անողոք,
Բարեկամների դիմաց միշտ քաղցր են,
Իսկ չարերի դեմ՝ բռունցք, բռղոք:
Դարի ոգին են արցախցիները,
Խղճի դրոշն են ազգերի մեջ,
Արցախցիները նոր աստվածներ են,
Կհասմեն իրենց երազին պերճ:³¹

Ս. Խանյանի երգերում որպես ժողովրդի հավերժական գոյության խորհրդանշաններ, ընդգծվում են Արցախի հուշարձանները՝ Գանձասարը («Գանձասար»), Ամարասը («Ամարաս»), Դաղիվանքը («Դաղիվանք»), Կավաք վանքը եւ այլ սրբավայ-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐՏԱԿԱՆ ԴՐՌՔԵՐՈՒՄ

Ի՞նչ: Բանաստեղծի համար Արցախը գեղեցկուիի մայր է, որի պատիվը պետք է բարձր պահի զավակը: Բանաստեղծը ցավով նշում է, որ ազերի հարեւանը ձգտում է սեփականել հայ ժողովրդի ստեղծած գանձերն ու հողը.

*Սեփականում են կորողները քո,
ժամյակմերը քո՝ փոխված խաչքարի,
Ում ձեռքը երքեր քարի չի դիմել,
Ուզում է տիրել քո Գանձասարին:*³²

Ընդգծելով հարեւանի թշնամական արարքը եւ Արցախը հայաբափ անելու նրա բարբաջը, բանաստեղծը միաժամանակ նշում է հավատը մեր հաղթանակի հանդեպ եւ դիմում Արցախին, որ աշխարհում «Ով արդար է, մեկ է, քեզ կդառնա սատար»: Քնարական հերոսի համար Արցախի ոգին օծված է «արեւային հնձաններում», ուստի անհրաժեշտ է դառնալ զինվորյալ եւ փրկել օջախ-մորք: Քնարական հերոսը եզրակացնում է.

*Օրիներգելը քիչ է, զինվորյալն եմ ես քո,
Երազմերիս բույզը փունջն է քո տենչանքի,
Աշխարհացուն դար է, արիացիր կամքով,
Արցախ, պիտի հասնես քո երազած ափին:*³³

Ուշադրության արժանի գործ է «Ազգային հարց» քնարական պոեմը: Ելնելով պատմության փորձից, ազգային հարցում եղած խանական դրսեւորումներից, բոլշեվիկյան դարաշրջանում այդ կարեւոր պրոբլեմի աղետաբեր լուծումից, Ս. Խանյանը քննարկում է այդ ամենը եւ բերում պյուտական իր խոսքը: Բանաստեղծը գտնում է, որ քեմ է հանվել ազգային հարցը, որի տուտը ուժեղերի ծերջի մեջ է: Պատմական անդրադարձի լուսի տակ պիեմում քննարկվում է ստալինյան եպիխայի վայրիվերումները, Ստա-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՄՔՆՄԻՄ

Լինի դաժանությունը.

Նրա ամուր կրնկի տակ
Եվ ուղեղի զառանցանքում,
Դարցն ազգային ծեւափոխվեց,
Ինքնորոշման կեղծ լաթ դարձավ,
Գունազրկված թույլ ծածանվեց
Եվ սասանվեց:³⁴

«Ազգային հարց» պոեմում բանաստեղծը ալորթեմի արդար լուծումը բխեցնում է իր Խաչի պապի հայեցակետից, որի արմատները հասնում են մեր ժողովրդի առասպելական ժամանակներին եւ «Սասնա Ծռեր» դյուցազներգության պատգամներին: Ժողովրդի կենսափորձից է ծնված պոեմի հերոսներից մեկի՝ Խաչի պապի խորհուրդը.

- Որդին, ազգը ազգին պիտի սրտանց հարգի,
Օգմի սրտանց,
Լինի ազնիվ թե՛ հարեւան եւ թե՛ եղբայր,
Որ չիենիվ զենքի ուժին,
Որ չլիի նրա հողը,
Երբեք չասի. «Ես ուժեղ եմ,
Խևկ դու մժեղ»:
Չասի. «Լեզուն իմ հարուստ է,
Քոնը՝ աղքատ,
Իմը երգ է նույր սոխակի,
Քոնն ագռավի կրինչ է լոկ»:
Չասի. «Խոսիր իմ բարբառով,
Քո դպրոցը հար մոռացիր,
Քո սահմանը մեղ է,- չասի,-
Իմ սահմանը անվե՞րջ, անծի՞ր»:³⁵

Այս հատվածին հաջորդում է ազգերի բարեկամության, եղբայրության, հավասարության, պետականության, փոխադարձ

ՊՈՒՇՔՆԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔՆԹՈՒՄ

Սիրո, լեզվի եւ մշակույթի հարստացման, ազգերի իրավունքների վերականգնման սկզբունքների բանաստեղծական պատկերը: Բայց, ավա՞ն, այս երազանքը դժոխւ հնարավոր չէ իրականացնել, քանզի ուժեղները դեռևս թելադրում են իրենց կամքը: Պոեմը ավարտվում է ազգային հարցի լուծնան խաչի պապի երազանքով, որն ամցել է պոետ բոռանը.

Ազգային հարց...

Իմ վարդագույն երազներում

Միշտ հմչում է պապիս ծայնը:

Այս լուսավոր աշխարհի մեջ

Մինչեւ Ե՞րբ է

*Պապիս տեմը մնալու տեմը:*³⁶

1988 թ. հոկտեմբերի սկզբին, ինչպես Յայաստանում, այնպես էլ Արցախի պետհամալսարանում կազմակերպվեց հացադուլ, որին նասնակցեցին դասախոս Յ. Գրիգորյանը եւ մի շարք ուսանողներ: Այդ հացադուլը բողոքի ձեւերից մեկն էր ԽՍՀՄ եւ Ադրբեյջանի դեկավարության դեմ, որոնք ազգային հարցի, այդ թվում եւ Արցախի պրոբլեմի լուծնանը նոտենում էին բռնատիրական դիրքերից: Ահա այդ օրերի արտահայտությունը է Ս. Խանյանի «Արցախի դասը» բանաստեղծությունը՝ գրված 1988-ի հոկտեմբերի 19-ին: Բանաստեղծը անդրադառնալով Անարասում Ս. Մաշտոցի բացած Արցախի առաջին դպրոցի պատմությանը, ներկայացնում է մեր դարավոր հերոսական ընթացքը, բնութագրում պարսկական, բյուզանդական, արաբական, մոնղոլական, թուրքական եւ այլ բանապետությունների չարագործությունները եւ հպարտության զգացումով գնահատում մեր անձնուրաց հերոսների գլխավորությամբ ժողովրդի մղած անգիծում պայքարը: Բանաստեղծը Արցախի դասը համարում է ինքնության եւ ապրելու դաս եւ ընդհանրացնում.

Մեր դարավոր դասը փարոս է դարձել,

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Նա հոր դաս է, նա մոր դաս է ու հողի:
Սեր դասը մեր բախտի դրմերն է բացել,
Սոքի՝ դաս է, խղճի դաս է ու շողի:
Ո՞վ մայր Արցախ, քո փորձության այս ժամին,
Քո զինվորն ենք՝ հավերժ կոփված քո կամքով,
Ամարատում որև դաս առաջ Սաշտոցից,
Քո գրկի մեջ պիտի սերտենք դասը քո: ³⁷

Գրականագետ Ա. Աթայանը Ս. Խանյանի պայքարի երգերը դիտարկել եւ գնահատել է «Խաչի օրինանքն ու թրի շառաչը» վերնագրի տակ: Այս մոտեցումը բխում է ոչ միայն բանաստեղծի երգերից, այլև նրա հայեցակետից, որ վերաբերում է ժողովրդի ֆիզիկական եւ բարոյական ուժերի համախմբմանը, այդ ուղղությամբ նաև հայոց եկեղեցու, ասել է՝ հայրենի հավատի դերին: Խանյանի երգերում հապարտության զգացումն ակունքվում է ժողովրդի հերոսական անցյալից եւ առօրյա արդարացի պայքարից: Նրա քնարական հերոսն անձնավորելով Արցախը՝ նրա անունից հայտարարում է, որ իր «հույսերի կրակին ո՛չ ծյուն կիշտի, ո՛չ անձեռւ», որովհետեւ ինքը հրածին է, հոգին՝ «վառող հրազեն»: Նրա հավատը զենքն է, հողը՝ ամուր պատվանդան: Բանաստեղծն Արցախի ճակատագիրը համարում է հայ ժողովրդի հոգու եւ սրտի թրիոների մի մասը եւ պայքարի ամենաթեժ պահին՝ 1989 թ., ի հեճուկս թշնամու, հայտարարում է.

Դայեր են սեգ սարերս,
Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Պիտի խոսեն հայերեն: ³⁸

Սերնդափոխության իմաստը բանաստեղծն առաջին հերթին տեսնում է հայրենի օջախները պաշտպանելու, թշնամուն ծնկի

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐՏԱԿԱՆ ԴՐՌՔՆԹՈՒՄ

բերելու, ազատության մեջ ապրելու վճռականության մեջ։ Այդ մասին է խոսում «Պաախս պատիվը» բանաստեղծությունը։ Քնարական հերոսի հոգու աշխարհում Նժեթիի զինակից պապի պատկերն է, հնչում է նրա ձայնը։ Տեսիլքն առինքնող է,- պապը սեղմելով Նժեթիի ծեռքը, ասում է.

«Գլխիս օրինված ծեռքդ դիր...
Թող ուժի ինձնով քոռներիս հասնի,
Այյունդ եռա սրտերում ամկեղծ,
Թող կամքդ նրանց քաջազուն դարձնի,
Որ փրկեն հողմ ու պատիվը իրենց»։²⁹

Արցախի սրբացած այրերի, անմահ զինվորյալների տեսիլքային պատկերով նոր սերնդին պայքարի կոչելու գաղափարի հաջողված պատկերներ են «Տեսիլք», «Արեւարի այցը», «Կավագ վանքը», «Զավակը», «Խաչի պապս» եւ այլ բանաստեղծություններ։ Կոմպոզիցիոն մի ընդհանրություն կազմող այդ երգերի բնական շարունակությունը «Զահելացրեք անտառը» ստեղծագործությունն է։ Այլաբերության գտնված օրինակ է այն։ Խաչատուր պապի սիրած «ճառը» անտառը զահելացնելու խորհուրդն էր։ Թոռանը՝ քնարական հերոսին, թվում էր, թե հայրը, քերին, եղբայրը պիտի գնան, կտրտեն անտառի ծերացած ծառերը, որ այն զահելանա, բայց հետագայում կյանքը թելադրում է պապի խորհուրդը, երբ վտանգվում է հայրենիքի եւ ժողովորի ազատությունը։ Պարզվում է, որ պապի երազանքը շատ մանուկներ ունենալն է, չև որ ժողովուրդը նման է անտառի, նա չպետք է ծերանա, նրա կյանքը զահելների շնչով է հավերժվում...

Կոհվ եղավ, տուն չդարձան

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Իմ քեզին ու եղբայրը,
Պապիս խոսքը նոր հասկացա.
- Զահելացրեք ամսուոր: ⁴⁰

Դայրենի հոդի մեջ բանաստեղծը տեսնում է պապերի պատմությունը, նոր սերնոյի «Ծլարձակված պատիվն ու հոգին», որի գաղտնիքներն արդեն բացել են նորերը եւ հպարտանում է, որ «Մեր ճամփեքին չենք մուրացել հաց ու գինի», եւ ինչ էլ լինի «Մեր օջախը կպաշտպանենք թէ՝ արյունով, թէ՝ երազով»: «Ծանոթ է նա» բանաստեղծության մեջ ընդգծելով հայ ժողովրդի խաղաղափրական եւ արարող ոգին, բանաստեղծը վկայակոչում է ավարառու թշնամու նոր ոտնձգություններն Արցախի դեմ: Նա «Սուր է ճոճում՝ հիխորտալով ու երկյուղով»: Բանաստեղծը մեր հերոսական պատմության անունից եզրակացնում է.

Ծանոթ է նա հրաբուկին մեր կուռ կամքի,
Մեր չհոգմող բազուկներին ծանոթ է նա,
Սիա ինչու կատաղել է նա կրկնակի,
Նրա ոխը անփառունակ կվերջանա: ⁴¹

Բանաստեղծը հավատում է, որ կծնվի նոր պատմագիրը եւ կգրի մատյանը նոր, որտեղ կընդգծվի «Լեզենդ դարձած հաղթանակը մեր փառավոր»: 1990-ական թթ. սկզբին գրված «Ղարերդ ի վեր», «Խաչենաձոր», «Տագմապ եւ հավատ», «Զարմանք», «Ինչպե՞ս զգնամ», «Հուլյսը», «1992-ամանոր», «Անտառի ցավը» եւ այլ բանաստեղծություններում Ս. Խանյանը գտնելով արտահայտվելու նոր հնարանքներ եւ երանգներ, ընդգծում է մեր ժողովրդի ուժն ու կամքը: «1993» երգի մեջ քնարական հերոսը խոսելով Արցախյան պատերազմի դաժան իրադարձությունների մասին, միաժամանակ նշում է երազանքին հասնելու իր վճռականությունը:

Պատերազմի ահեղ օրերին լինելով իր ժողովրդի հետ, կրե-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Լով նրա ցավը, բանաստեղծը ստեղծել է պատկերներ, որոնցում կարելի է տեսնել արցախցիներին, հայ մարտիկների ամուր կամքն ու հաղթամակի հավատը: Ինչպես նկարագրված է բանաստեղծության մեջ, թշնամու կողմից հրթիռակոծվում է քաղաքը: Ապա կարծ հրադադարի ժամանակ մարդիկ սկսում են նորոգել շնմքերը, իսկ երեխաները խաղում են բակերում, որոնց ականատեսն է լինում Աստվածը, որի ձայնը ասես հնչում է ամենուրեք. «Կամքն Արցախս իմ կամքն է, նա մի գանձ է գտածո»: «Աշխարհ, տեսնո՞ւմ ես» երգում բանաստեղծը խարազանում է մարտնչող Արցախի հանդեպ անտարբեր աշխարհին, որը ներում է «սեւջուկ թուրքերի չար ժառանգներին»:

Ինչպես իր գրչեղբայրները, Ս. Խանյանը եւս երգեր է ծոնել Շուշիին եւ ցնծացել նրա ազատագրման համար: Շուշին հարազատ է քնարական հերոսին: Քաղաքը նրա արմատներն են, հոգին, երազը, որովհետեւ կառուցվել է հայի ձեռք.

*Շուշի, պապիս կերտած քաղաք,
Շուշի, հորս երգած քաղաք,
Դու իմ տատի ճախշում պատկեր,
Իմ անուշ մոր հույսի պատեր:*⁴²

Թուրքը նենգությամբ խել է Յայոց Շուշին, բայց նրա հին տերը՝ հայը, այն հետ վերադարձնելու հույսը միշտ վառ է պահել, եւ եկել է պահը, հայ ժողովրդի անձնուրաց զավակների գնով «կրկին մերն է դարձել Շուշին»: Յարազատ որդու ցնությամբ քնարական հերոսը դիմում է փրկված քաղաքին եւ հաստատում.

*Ել ոչ մի օր, ոչ մի ժամի,
Քեզ չի գերի չար թշնամին,
Յայի ձեռքով կերտված Շուշի,
Յայի արյամբ փոլված Շուշի:*⁴³

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱԱՆ ԴՐՈՔԱՐԴՈՒՄ

Հայրենապատումի իր նրբերանգմերով ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ քնարը եւս հնչեց դեաի լուս ուղղված դոդանջներով:

Ահա Միքայելյանի բանաստեղծական ինքնախոստովաճանքը.

Լույսը

Հավատիս ուղեկիցն է
Ու արձագանքը խոհերիս,
Որ անվերջ տառապում է
ինքնայրման բռցով.
Լուսնի պես շիկանում,
Հույսի պես երկնում...⁴⁴

(«Լույսը պահապան»)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի հավատի ուղեկիցը եւ խոհերի արձագանքը լույսն է եղել: Այստեղ չենք կարող չնատնաշել Սուրբ գրքի խորհուրդը՝ «Եղիցի լույս»:

Դ. Միքայելյանը իր «Լույսը պահապան» ծրագրային բանաստեղծությանը բացել է պոետական հոգու դրմերը եւ ընթերցողին հրավիրել իր փայփայած երգերի պարտեզը:

Բազմազան են այդ պարտեզի երգ-ծաղիկները: Դրանց բույրը ընթերցողն օգացել է դեռևս 1989 թ., երբ Երեւանում «Էսոր-հրդային գրող» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Հավատի ժամ» անդրանիկ ժողովածում: Նրանում գետեղված բանաստեղծություններն անմնացորդ բացահայտեցին հեղինակի նախասիրությունները: Դրանք հյուսված են հարազատ լեռնաշխարհի մարդկանց կենսափիլսոփայությունից ու հոգեբանությունից: Այդ մարդիկ արմատներով ու ճյուղերով սերտորեն կապված են հայրենի եզերքին, ծգտումներով, բարոյական դիմագծով իրենց նախնիների լավագույն ավանդույթների խոտացումն ու շարունակողներն են՝ նրբասիրտ ու խիզախ, հպարտ ու

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

գեղեցիկ, արմատներով առողջ, երազներով՝ ծիածանագույն:

Դ. Միքայելյանի համար Արցախը կենսաբեր պատկերների կոմկրետ համաձուլվածք է՝ հայաշունչ, հայակերպ, հայապահպան.

Այգաբացդ

Ճիկացած նուռ է, հույսի դուռ,
Որդիների ճամփան պահող
Վարդ է հուր...
... Գիշերները
Աստղերի հետ կվառվեմ,
Յերեկները
Դումերի հետ կրացվեմ,
Քեզնով տանտեր,
Քեզնով կանգուն, շեն, օջախ,
Գանձասարիս արթուն դողանց, իմ Արցախ: ⁴⁵

Բանաստեղծի երգերում Արցախ-այգու ծառերը պապի ծեռցով են պատվաստված, այդ ծառերը միշտ արթուն են, «քներին՝ ծալ-ծալ կնծիր ծալքերը»: Նրանցից «ամեն մեկը դալար շյուղերին կրում է պապի Հայկյան նատնահետքերը» («Պապիս ծառերը»):

Դ. Միքայելյանի ստեղծագործական խառնվածքն արարումի իր երանգներն ունի, ինչ ասում է՝ իրենն է, ինչ արցախյան է՝ երգի մեջ է առնում: Դրանով պետք է բացատրել նրա խոսքի անմիջականությունը: Դավթի համար արցախյան թթենին այգու եւ տան նախշ ու հավատ է, որ պետք է փայփայել եւ հանձնել սերունդներին: Արցախ-այգու առվակը հավերժության հիմն է («Ճոգու առվակը»), գարունը սերմնացան է՝ հասուն հունդեր է պահ տալիս հողին («Կանչ գարնանամուտին»), թրաշուշանի ծաղկաթերթերը բոցկլտացող մոմեր են («Թրաշուշանի ծաղկաթերթե-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐԹՔԵՐՈՒՄ

րը»), ծիրանիները ծաղկաշոր հագած նորահարսեր են («Բաղձանք»): Այս օրինակները կրկին հաստատում են մի ճշնարտություն, որ լավ երգը ծնվում է հայրենի օջախների լույսերից եւ նրանց տերերի խոհերից ու ապրումներից:

Դավիթ Միքայելյանի լույսը նաեւ՝

Ծառ է ծիրանի.

... Կարոտի ծիչ է լույսը կենարար

Ու տաք շշուկն է սեւաչ բալիկիս:

Լույսը պահապան

Օջախիս,

Խղճիս...⁴⁶

Բազում դարերի տարիք ունեցող հայ երգի լույսի թրթիռը հասել է Դ. Միքայելյանին, եւ նա հայրենիքի աչքերում ու հոգում լույսի շողեր է կարողում, լույս, որով գծված է մեր պատմության դժվարին ու փառավոր ճանապարհը: Այդ լույսի շափաղումներում էլ Դ. Միքայելյանն իր խոսքն է ուղղում առ Հայաստան ու Արցախ, առ Վայոց ձոր ու հայրենի գյուղ: Եվ նա իր գրչեղբայրների պես բացում է խոհի ու խորհրդի շերտերը, որտեղ էլ ծնվում է խսկական բանաստեղծությունը: Հայաստանին նա խոստովանում է.

Եվ առավոտս ծաղկում է քեզնով:

... Քայլերս

Անվերջ ճամփադ են վիճուրում,

Ու տառապանքս նեղվում է ցավից,

Սինչեւ ե՞րբ պիտի

Հարազատ մորն իր

Որդին երազի աչքերով նայի,

Նեռվից կարոտի...⁴⁷

(«Հայաստան»)

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՌԹՐՔՆԹՈՒՄ

Սակայն այդ հարցը չի մշուշում բանաստեղծի սրտից ծնված երգը: Ի հեճուկս իին ու նոր թշնամիների, նա ավելի խորն է պաշտում այն ամենը, ինչ արցախյան-հայկական է. Ե՛ւ երգը, Ե՛ւ թթենին, Ե՛ւ ամտառը, Ե՛ւ առանձնապես հողը.

Յորից եմ առնում
Ես
Ինաստության գանձերը բոլոր,
(Յորը հրաշք է):
Եվ արյունը այն,
Որ խայտում է իմ տաք երակներում,
Արցախ աշխարհին
Զորեղ սրտից է
Փոխանցվել մարմնիս, իմ էռոթյանը:
Յողիս բարությամբ,
Յողիս քաղցրությամբ,
Յողիս սիրով է հավատն իմ զորեղ... ⁴⁸

Պայքարի տարիներին իր կրակոտ խոսքն ասաց նաև՝
ԺԱՆԱՐԵՎՈՅԱՆԸ: Այդ է վկայում նրա «Երկիր, քարե տուն»
ժողովածում, որ տպագրվել է 1993-ին «Մաշտոց»
հրատարակչության կողմից: Անմիջապես նշեմ, որ բանաստեղծութին գիտակցում է ավանդույթի եւ նոր որոնումների միասնության գինը: «Երկիր-քարե տուն» հայրենասիրական երգի երանգներում այդ գգացումը գտնված է այսպես.

Արմատների մեջ խոյանք,
արմատների մեջ
ցավն ապելու տոկունություն.

Արմատները բաց ծառ,
որը երբեք չորանալու ենթակա չէ,
քանզի ծգուումը
արմատներից
փոխանցվել է պտղին,
իսկ պտուղը իր հերթին
արմատի երակն է: ⁴⁹

Երկու բաժիններից բաղկացած գրքույկի հիմնական երակը քնարական հերոսի ապրումներն ու մտորումներն են՝ ակունք-ված հայրենի երկրի ճակատագրից: Այդ ճակատագիրը ժ. Բեգլարյանին հուշել է, որ հավաքածուի բաժինները կոչի «Երկիր-բացված վերք» եւ «Բացված երակ»:

Բանաստեղծուիկն հայ ժողովրդի եւ հայրենիքի ճակատագիրը գունազարդելու միտում չի ցուցաբերում: Դրա կարիքը նա չի զգում, որովհետեւ հաստատում է, որ ազնիվ որդին իր մոր ճակատագրի շրջագծից դուրս չի գա եւ չի հրաժարվի նրանից: Իր ժամանակացի ներաշխարհի ծշմարիտ խոստովանություն է գրքի բնաբանը.

Երկիր, դու մի բուռ,
Մի բուռ ու հումկու,
Մի բուռ ու արյուն,
արյուն՝ մրրկված... ⁵⁰

Ժողովածուի սկզբից մինչեւ վերջը հանդես են բերված Երկիրը եւ քնարական հերոսը: Խոսքն ու զրույցը սկսվում է Երկրի փառաբանումից եւ ավարտվում դրանով: Սակայն լավն այն է, որ այդ Երկխոսությունը միագույն չէ: Բանաստեղծուիկն ում եւ ինչի դիմում է, իր ապրումի կիզակետը բերում հանգեցնում է հայրե-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Անիք-քաղաքացի հասկացողության իր ընկալմանը: Սիրած էակիմ է դիմում, թե՝ որդուն, ընկերոջն է դիմում, թե՝ երազին, միեւնույն է, բանաստեղծուիհն առաջին հերթին ընդգծում է ազնվության եւ բարության երակը, առանց որի երկրի զարկերակն առողջ խփել չի կարող:

Ժ. Բեգլարյանն ապրումների անթաքույց բացահայտման ջատագովն է: Նրա քնարական հերոսը դեն է նետում՝

*ամեն տեսակի նվճոց ու լաց,
ամեն տեսակի բառախաղ ու ջանք,
Գեղեցիկ պատկեր սարքելու մարմաջ... 57*

(«Հսիր դու....»)

Այս խոստովանությունը քնարական հերոսի բնավորության բացահայտման բանալի է, նրա հաստատումների եւ ժխտումների վկայություն:

Ժողովածուի երկու շարքերի մեջ պահպանված է ներքին քնարական կապը, որի առանցքը ժամանակակցի հուզաշխարհի բացահայտման ծգտումն է, հուզաշխարհի երանգված հողհայրենիի կենսաշողերով եւ այդ հողը ծաղկուն պահողի երազանքներով: Այստեղից էլ երգի եւ հողի միասնությունը:

Ժ. Բեգլարյանի երգերում նկատվում է կենսափորձի բանաստեղծականացման ինքնարուիս միտումը: Դա հաջողվում է նրան: Որոնելով «վերադարձների ճանապարհները», քնարական հերոսը հոգու աչքերով միշտ տներ է տեսնում եւ բակերում խաղացող մանուկներ, նշմարում տունդարձի ծիրկաթիններ: Այս գույնը պատահական չէ: Գրքի համարյա բոլոր բանաստեղծությունները գրված են 1988 թ. այս կողմ: Դա Արցախյան Շարժման տարիներն են, մեր ժողովորի արդարացի ընդվզման, օստարի լուծը թոթափելու, կորստյան վտանգի ենթարկված բազմադա-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԾԱԿԱՆ ԴՐԽՔԵՐՈՒՄ

Իյան հայրենիքը փրկելու, մեր պապերի ու հայրերի ստեղծած հոգեւոր գանձերը մեր իսկ սերունդներին կտակելու ժամանակ-ներ: Չնորամաճք, որ Ժ. Բեզլարյանի նամկության օրրանը հանդիսացող Հաղորութի լեռնային գյուղերն ավերակվեցին ազերի օ-մօնականների եւ խորհրդային բանակի հանցագործության պատճառով, բռնագաղբվեցին Շահումյանի եւ Մարտակերտի շրջանների հազարավոր բնակչիններ: Բանաստեղծուիկին երգերի մեջ այդ ծանր հիշողությունը նշում է որպես խոր ցավ, միաժամանակ այդ ցավից ծնվում է վերածնվելու, վերընծյուղվելու, նորից տնավորվելու, ծոցվորվելու երազը.

Ելնելուդ պահը անցնում է, ելի՞...
Եթե Միեր ես, փակված մի մնա,
տունը՝ ավերակ,
քարը՝ կրկին հող,
խոտը ետած է ապրում,
պիտի գաս...
... Աղբյուրը մարդու շնչով է, ախր,
հար աղբյուր մնում,
ցավը ոռնում է աղբյուրների մեջ
անտեր ու անսեր շների մնան,
ցավը չի լռում...
- Ա՞ն, շատ ուշացավ քո այդ տունդարձը...
Եթե Միեր ես,
պիտի որ լինես եւ Դավիթ տղա:

(«Ելնելուդ պահը»)

Ապրելու, հարատենելու իրավունքը յուրաքանչյուր անհատի, յուրաքանչյուր ժողովողի աստվածային պարզեւն է: Այս ճշ-մարտության գիտակցումով Արցախ աշխարհն էլ ցուցաբերում է

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Իր ինքնանվիրումի անօրինակ վճռականությունը: Եվ ինչքան ուժեղների չար աշխարհն անտարբերության ստվերն է նետում մեր հայոց լեռների ոտքերի տակ, այնքան ավելի խոր արճատներ են նետում հայի ըմբռստությունն ու ընդվզումը: Բանաստեղծուին լավ գիտե ե՛ւ մեր պատմության դասը, ե՛ւ նոր օրերում մեր դժվար ճակատագրի կրկնությունը: Այս գիտակցումից էլ ծնվում են երգչուիու արդար բողոքն ու մաքուր ատելությունը: Նա տեսնում է, որ «սուտը պարում է լկտի», «մեզ պոկում են առասպելներից, իրենց անձավի պատերին դաջում»: Այս դաժան ծնշումից էլ ծնվում է կասկածը Աստծոն հանդեպ.

Խաչում են, խաչում մեր հույսներն իրար
Եվ մեզ են խաչում բորբոսնած խղճին,
Աստծո առաջ ըմբռստ, քմահած,
Աստծո դատին՝ այլեւս անհավատ: ⁵³

(«Խաչում են...»)

Ժ. Բեգլարյանի համար Երկիր-Լյանք հասկացությունները համազոր են: Նրա շրթերը ճաք են տալիս Երկիր ասելով, եւ այդ ճաքճած շրթերին թառում է որդիական խոստովանությունը. «Երկիր, անունդ չի պոկվում մեզնից»: «Դարեւանը» հերյուրում է մեր պատմությունը եւ մեր Երկիրը փաթաթում գորշ չալմայի մեջ: «Երկիր-Երկրանուն» բանաստեղծության հենքը կազմող այս ցավից էլ ծնվում է արդարացի պայքարի մարտական կոչը.

Երկիր, արդար ենք այսօր քո առաջ
Եվ քեզ ենք բերել մեր բյուր աչքերը,
Որպես մեծ հերքում քո Երկվությանը:
Քո լեթարգիական քունն ենք պղտորել
ու քեզ նետել ենք հավերժությանը,

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐՏԱԿԱՆ ԴՐԹՔՆԹԻՄ

ու տրվել, տրվել, տրվել ենք մենք քեզ
Մեր սիրտ ու մարմնով, մեր սիրտ ու մարմնով։⁵⁴

Երկիր հայրենիի հանդեա եղած բանաստեղծուիու որդիական սիրո մեջ թշնամին թույն է կաթեցնում։ Եվ նա բացականչում է. «Աստված, իմ Աստված, այս քանի՞ անգամ դու չեղար ինձ հետ»։ Ընբռատության այս ալակոծումից ծնվում է վճիռը, դա հայ մոր անխարդախ ու մաքրանաքուր եզրակացությունն է.

Տուր արթնանամ նիրվանայից միլիոնդարյա,
Տուր մարմինս հանգստության կաթիլի մեջ փթթի կրկին,
Ու պար բռնի անբռնազբու, անհնազամն:
Տուր արարման ցավը կրկին որդեգրեմ անվանդ համար,
Ու Դարություն բառը հատ-հատ շեշտված շարեմ
մեարուպատառ,
Կերտեմ անթիվ Դավիթ տղա,
Մաեւ անթիվ Թուր Կեծակի։⁵⁵

(«Տուր արթնանամ»)

Գրքի քնարական հերոսուիին «Բացված երակ» շարքում, հենց սկզբից, իրեն հոչակում է «մերժվածների քույր» եւ բոլոր գույները ներկում «որդան կարմիրով», որովինտեւ տեսնում է, որ այսօր չափանիշները դարձել են սաստիկ առածգական, «Դավատացյալը վերջին կտոր հավատը կորցրել, խաչվելու պահ է տենչում, խաչի տեղը չգիտի»։ Սակայն բանաստեղծուիին մոլորյալի խաղ չի խաղում։ Նա դարի եւ ժողովորի վերքերը բուժելու համար է ընդգծում ցավեցնող ծշմարտությունը։ Մայրական անբռնազբու ու ցանկալի երազանքները բանաստեղծուիին հաս-

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՌԻՐՔԵՐԻԴՐ

ցեագրում է որդում՝ Վահագնին: Քաղցր-մեղցր քնքշանքների փոխարեն նա բոլոր մայրերի անունից խոստանում է իր ցավը եւ ներկայացնում պահանջը.

Որդին, եւ մի՛ զարմանա,
Որ այսպես եմ խոսում ես,
թեզ աստված եմ արարել,
որ հավատս չփշրես:

Ժ. Բեգլարյանի «Երկիր-քարե տուն» ժողովածում ապրված խոհերի, հասուն մտորումների, կենսական դասերի, պայծառ երազանքների թրիխներ են՝ ներկայացված ճշնարիտ բանաստեղծության երանգներով: Հաճույքի շատ պահեր ես ապրում՝ ընթերցելով դրանք, եւ զայխ է մի պահ, երբ անդրադառնում ես կարդացածիդ, լցվում բանաստեղծություն արցախածին հպարտության, վճռականության, իմաստության եւ լավ գործով հավերժանալու հիրավի, պոետական խորհուրդներով.

Ես առաջինն իմ կյանքում իմ հոր աղջիկն եմ,
ու հայրս ժայռ է գրամիտից...

... Եվ երկրորդը՝ իմ զավակներինն եմ, որ
արմատներն են իմ հոր...

... Եվ երրորդը՝ ոգունն եմ անքացատրելի,
որին հանձնվելը մաքրագործվել է...

... Եվ վերջինը՝ հողինն եմ առեղծվածային...
Վերակերպվելու եմ խմկածաղկի ու
ապաշխարանք եմ շուրջս փռելու:

Արցախյան պատերազմում հաղթանակը շահելու հրամայականը դարձել էր համոզմունք եւ փոխվել շիկացած գենքի թե՛ ազատամարտիկների եւ թե՛ թիկունքի մարդկանց հոգիներում: Իսկ երբ գաղափարը վերափոխվում է համոզմունքի, այն դառնում է նշանառուի արձակած անվրեա գնդակ: Այդ կապակցությամբ մամուլի էջերում հաճախակի են համդես եկել հայ ականավոր գրոդները ոչ միայն իրենց ստեղծագործություններով, այլև կազմակերպող, ոգեւորող հրապարակախոսությամբ: Նման ելույթներից այստեղ կրերենք հոչակավոր արձակագիր Յ. Մաքեւոսյանի խոսքը:

Յ. Մաքեւոսյանը նախ հիշում է այն օրերը, երբ թուրքերի բանաստեղծը երդվուն էր կտրել հայի ձեռքը՝ եթե Ղարաբաղին մեկնի: Եվ թուրք բանաստեղծին թուրքը ցեղապետ էր մեծարում, եւ կառավարությունն էլ նրան զարդարում էր շքանշաններով: Այդ փաստը «սահմռկելի է, գրում է Մաքեւոսյանը, - որովհետեւ ե՛ն նա, ե՛ն նրանք լավ գիտեն, որ Ղարաբաղն ինքնիշխան ժողովրդի հայրենիք է, այնինչ խոսում են որպես անտերանլեզու տան մասին»:⁵⁸

Ականավոր գրողը անդրադառնում է անմահ Թումանյանի վեհանձնությանը, որ դարասկզբին մեծահոգությամբ խոսեց «Թուրքի ասպետականության» մասին: Սակայն ե՛ւ Թումանյանը, ե՛ւ նրա ժառանգորդները գիտեին, որ թուրքը միշտ պատրաստ է կտրելու հայի ձեռքը, ուստի, այնոք է ապավինել սեփական ուժին եւ չխարվել երթեք:

Պատմությունն ապացուցեց, որ ե՛ւ թուրք դեկավարը, ե՛ւ թուրք բանաստեղծը «բանականության ու բարոյականության օրենքները լեզվի խաղ համարեցին եւ դավանեցին բռնությունն

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐՏԱԿԱՆ ԴՐՈՔԵՐՈՒՄ

ու զավումը»: Ուրեմն, ունենք մի եզրակացություն, որին հանգում է Յ. Մաթեւոսյանը. «Յաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեջ թշնամու, կողմնակիցների եւ մեր իսկ քամահրանքից: Յաղթանակը մեր անցյալի եւ ապագայի, եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է: Պարտությունը սուտ եւ անգո մի բան է դարձնելու մեր անցյալը՝ բանաստեղծ վարդապետների զառանցանք: Պարտությունը անհայրենիք տնանկներ է դարձնելու մեր երեխաներին, մեզ նրանց սեւ անեծքին է արժանացնելու: Պարտությունը մեզ դարձնելու է արդարության դրսության տաղտկալի քարշ եկողներ, որոնց երբեմն գուցե եւ կարեկցում են, բայց երբեք՝ հարգում»:⁵⁹

* * *

Արցախն Ավարայրվելուն պես ազգային-ազատագրական պայքարի զինվոր-երգիչներ դարձան բանաստեղծական տարբեր սերունդների տասնյակ ներկայացուցիչներ՝ զենքով ու երգով կրելով ժողովրդի դառն ճակատագիրը: Նրանք նախ մարտնչեցին ֆիդայական ջոկատներում եւ ապա՝ Արցախի կանոնավոր բանակում: Սարտակերտի շրջանի Զոլատակ գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, բանաստեղծ Վ. Գարրիելյանը ավտոմատն առաջ, թշնամու դեմ ելավ Զլդրան-Կիչան ռազմագծում, ծանր վիրավորվեց, սակայն զենքը ցած չղրեց՝ հայրենիքի ու սրտի ցավը հանձնելով իր երգերին: Ռ. Եսայանը մասնակցեց բոլոր ճակատամարտերին՝ Արաքսի ափից մինչեւ Օմար, Ա. Ղամիելյանը, Ա. Գրիգորյանը, Գ. Բեգլարյանը իրենց զինակիցների հետ միասին մարտնչեցին բոլոր վճռական ճակատամարտերում: Ուսանող Կ. Յակոբյանը բանաստեղծությունների առաջին գրքույկը ծոցագրապանում, հայրենի օջախի ազատությանն ընծայեց ամենաթանկը՝ կյանքը... Երիտասարդ պոետներ Յ. Ալեք-

ՊՈՒՇՔՆԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՔՆԹՈՒՄ

Սամյանը, Ն. Գասպարյանը, Ս. Ղասրաթյանը որպես հեռուստալրագրողներ, հաճախ վտանգելով կյանքը, հավերժությանը հանձնեցին հայ ազատանարտիկմերի սիրանքները՝ նիաժանանակ գրելով իրենց մարտական բանաստեղծությունները: Ե. Եսայանը գենքով ու երգով իր խոսքն ասաց Մարտունու պաշտպանական դիրքերում, ուր հրաշքներ էր գործում Ավոյի զորավարական տաղանդը, որի մասին իր սրտառուչ երգը գրեց բանաստեղծը:

Լ. Ղակորյանը պոետական իր մկրտությունը ստացավ բանակի շարքերում, եւ էլի տասմյակ պատանի ստեղծագործողներ, որոնք դեռևս երգի մեջ չենափորված, հոգիները ջրդեղեցին պատերազմական հրդեհների մեջ: Արցախի մարտական երգը ծնվեց նաեւ խրամատներում, որ բխում էր մեր ազատարադողուց ու երազող սրտից: Երիտասարդ բանաստեղծների քնարական հերոսին հատուկ է քաղաքացիական վեհությունը, շիտակությունը, վճռականությունը, հավատը հաղթանակի եւ գալիքի հանդեպ: Այդ մղումներն առանձնապես արինքնող են այն բանի շնորհիվ, որ բանաստեղծներն իրենց ներկայացնում են որպես հայրենի եզերքի գինվորներ, նրա հոգեւոր աշխարհի դեսպաններ: Դա բացատրվում է պատենական օջախի հանդեպ նրանց պատասխանատվությամբ, որից էլ բխում են թե՛ խղճի եւ բարության եւ թե՛ թշնամիների դեմ մարտնչելու պատրաստականության ձգուումները: Հյուսվել է արցախյան հայրենասիրության նոր, երիտասարդական երգը, որ երանգներով հայկական է, եւ միշտ զգոն է, որովհետեւ միշտ զգացվել է հարեւան քոչվոր ցեղերի սպառնալիքը: Այդ զգացումից են ծնված Անահիտ ՔՈՉԱՐՅԱՆԻ տողերը.

*Օ՛, հայրենիք, օ՛, ամենասիրտ,
Թե դառն օրերիդ հաշվիչը բերեմ*

ԴԻՇՉՐԱՆ ՄԱՐՏԱԿԱԱՆ ԴՐՈՔԱՐԴԱՐ

Ու թվեմ հատ-հատ,

Թե մոխիր դարձած ավերակների
Փոշին ետ բերեմ,
Թե կույր ոսոխիդ հոգին ավերեմ
Ու բազուկմերին կապաճը խարամեմ,
Աչքերդ կլամ հուշ մոխիրներով,
Աչքերդ կերգեն արտասուքաթեւ...⁶⁰

Բանաստեղծուիկին վերիշելով հայրենիքի ավերակների պատմությունը, մեր ժողովրդին բաժին հասած ծանր ճակատագիրը, ամենեւին մեջտեղ չի բերում հուսալքության մորմոքը: Ընդհակառակը, նա ընդգծում է թշնամու հանդեա եղած համաժողովրդական ցասումը եւ վրեժի առկայությունը, որ սերունդներին մղել է եւ մղում է պաշտպանելու հորդ-հայրենին, օջախի ծուխը, սերունդների երթը:

Բանաստեղծուիկին 88-ը համարում է սեւ տարի՝ գրված «սրտի բաց մատյանում» եւ պատրաստ է կրելու այն ու միաժամանակ ընծայվելու հայրենիքին բացականչելով. «Թո բախտը իմ բախտն է, հայրենիք»: Սակայն ոչ թե խոստովանաճի ընդգծումով է նա փարված երկրին, այլ որպես զինվորյալ՝ նվիրվելու ամբողջապես.

Ղողանջում են ծայներ՝ կամչեր ծեր վանքերի,
Ես իմ ունեցածը հայրենիքիս կտամ...⁶¹

Այսպես, Արցախի երիտասարդ բանաստեղծներին առաջին հերթին հուզեց հայրենի եզերքի ճակատագիրը: Նրանք ցավով խոսեցին լքված գյուղերի, պապենական օջախների մասին: Չէ՞ որ տարածքը հայրենիք է կոչվում՝ նրանում ապրող եւ այն շենացնող քաղաքացիների շնորհիվ:

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՌՔԵՐՈՒՄ

Երիտասարդ բանաստեղծների հայրենասիրական երգերում կա նաև մի ուրիշ տագմաա՝ կապված «հարեւանի» նենգության հետ։ Դայոց դրախտային երկրի կորուստներն այնքան են շատ, որ Արցախի կորուստը կդառնա վերջին ճակատագրական տանուլ տալը։ Այս զգացումը միշտ զգոն է պահում արցախցի բանաստեղծին։ Ուշեմն, տագմաաը հնչում է որպես զգոնության կանչ, որ դողանջում է դարերի խորքից։ *Ոորերտ ԵՍԱՅԱՆԸ* այդ միտքն արտահայտում է այսպես։

*Արդ դողանջում են իմ արծատները,
Խրվում պապերիս երազների մեջ։⁶²*

Տառապանքից են ծնվում երիտասարդ բանաստեղծների երգերը։ Այդ տառապանքը նոր չէ։ Ո. Եսայանն իր նախորդներից փոխ է առել արյան հյուլեն, որն իր մեջ գենից բացի ներառում է բազմադարյան հիշողությունը։ Նա բոլոր կշիռները լուծում է արցունքի պես, բոլոր արեւները վշտի հատակն իշեցնում եւ հասունանում։

*Մեկ էլ ե՞րբ եմ, տեր իմ, կարուտել ինձ այսքան,
Դասունացել այսքան կորուստների ահից։⁶³*

Գրականագետ Ա. Ավիինյանը ճիշտ է նկատել. «Ոորերտ Եսայանը որոնում է գոյության իր բացատրությունն ու իր առեղծվածը, որոնում է ու չի գտնում, քավում է օտար մեղքեր, հավատում է իր ցեղի արթնացող սաղմին, բայց անդունդ է տեսնում իր իսկ հույսի մեջ, չի համակերպիւմ գոյության իր ծեւին, բայց առեղծվածը թողնում է առեղծված ու լսելի է դարձնում նրա արձագանքը՝ գոյության արձագանքը։ Որոնումը հուսահատություն չէ, եւ երբ բանաստեղծի հոգին ցավում է ապրածից ու տեսածից, երբ գալիս է ինքնաշխմբոննան դժվար պահը, երբ գիտակցում է,

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՄՔԵՐՈՒՄ

որ կորուստները կործանել չեն կարող, որովհետեւ քո սերունդը կորուստների ահից հասունացել է՝ մնում է միակ ելքը՝ տագնապի հենակետը։ Տագնապ, որ խուճապ չի բերում, որ զգաստ է պահելու հոգնած հոգիդ»:¹⁸

Ո. Եսայանի երգերը ոգեկոչելու ուժ ունեն, որովհետեւ դրանք հնչում են որպես գոյության նոր դասեր, զինվորագրվելու ազդակներ։

ԴՐՍՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ բանաստեղծական հյուսվածքներում խոսեցին Արցախի անցյալը, ներկան, գալիքը։ Նա առօրյայի մեջ, ինչպես սափորում, հավաքեց «բոլոր արձագանքները»։ Արցախյան շարժումը բանաստեղծը դիտեց որպես մեր ազատաբաղծ հոգիների զարթոնք եւ գենքով ու գրչով զինվորագրվեց վերածնող այդ երթին։ «Միջօրե Գանձասարում» բանաստեղծությունում Գանձասարի լրության մեջ նա տեսնում է ոչ թե օրվա, այլ «պատմության կիսվելը»։ Այդ նշանակում է մեր հույսի ակունքը «դիմանում է հարվածներին ժամանակի՝ ընթանալով հավերժության հետ գուգահեռ»։ Ոչ միայն այդ։

*Քարի վրա այս հնարույր Գիրը կարդա,
որ տառ առ տառ
ճառագայթվել է դեպի երկինք,
իրե զնդի զորությունն է բազմապատկում։¹⁹*

Բանաստեղծի քնարական հերոսն իր հոգու ձայնով չափում եւ պաշտպանում է «երազանքի դարերը պերճ երաշտներից ամեն...»։ Գանձասարը որպես հայկական հոգու «քարակերտ գեղեցկություն», «հավատի երգ» է հորինում։

Հարազատ մնալով խորելու-փիլսոփայելու իր ստեղծագործական խառնվածքին, Յ. Ալեքսանյանը արծարծում է հայրենասիրության եւ ազատասիրության իր մտորումները բանաս-

ԴԻՇՉՐԱՆ ՄՎՐԺԱԿԱՆ ԴՐՄՔԵՐՈՒՄ

Մեղծական յուրովի հնարանքներով:

Անկախության եւ ազատության պայքարի կոչը նրա երգերում հնչում է բազմազան երանգներով: Նա մերթ դիմում է Անահիտ Դիցուհուն, որպեսզի ելնի եւ «կապույտ աչքերով» տեսնի, «թե ցավի ինչ նոր փորորիկ պայթեց ցեղի հոգնած գլխին», մերթ կոչ անում «Մոռացության անձավմերը»՝ լինել, իմանալ ժողովրդի ցավը եւ տալ «նրան զորացումի նոր հնարներ»:

Երիտասարդական պոեզիայի համանվագին իր մասնակցությունն ունեցավ Նորեկ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ: Նրա «Դավատ Արցախի» ժողովածուն այդ մասին է խոսում: Բանաստեղծի մուտքը համարձակ է, խոսքը՝ վճռական այն առօնով, որ նա չի հաշտվում իր Արցախս աշխարհի ստրկական վիճակի հետ, եւ գոյանարտի է ելնում եւ զենքով, եւ երգով: Ժողովածուն բացվում է «Կեսօր» շարքով, որ կարելի է համարել նաև քնարական պոեմ: Բնաբան բերելով եւ Զարենցի «Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը» տողը, երիտասարդ բանաստեղծը իր հավատանքն է բերում երգին ու կյանքին: Վերագնահատելով լեռնաշխարհի պատմական անցյալը, նրանում գտնելով ազգային արժանապատվության երանգները, պիետը թվարկում է իր եղյալ եւ չեղյալ մեղքերը, ընդգծում իր ըմբռատացումն աշխարհի դեմ: Նա միաժամանակ ծանրութեթեւ է անում իր արած-դրածը՝ նշելով.

Ես մինչեւ հիմա ոչինչ չեմ արել.
սպասում երեք չի կնքվել ցավով,
շիվը չի ծաղկել իմ կոշտ ափերում,
եւ տառապանքի համ չի ունեցել
իմ ոչ մի բառը... ⁸⁸

Ինքնազննան ճանապարհ նրան տանում է դեպի ինքնահաստատում: Բանաստեղծը գիտակցում է իր անելիքը, այլեւս չի կարելի ապրել «ցնծության օրորոցներում». չի կարելի խա-

ՊՈՒՇՔՆԱՆ ՄԱՍԻՏԱԿԱԱՆ ԴՐՈՒՔՆԻՒՄ

Դալ «անտարբերության ճոճքերում»: Տեղի է ունենում որոնման ցավը, որ ախտի պտղավորվի, կորցրածը ետ ստացվի: Բանաստեղծը հավատում է իրեն.

*Ես չեմ կասկածում,
որ կփոփոխվի կյանքում իմչ-որ ձեւ,
Մեկ է, կիշեմ,
որ տանս այուն է պակասում մի նոր,
որ ժամանակն է հին դուռը փոխել...⁶⁷*

Եվ բանաստեղծը զգում է «արյան ցավը», որովհետեւ երկիր ունի, որին լրելու իրավունք չունի, «ուզում է տեսնել շողն արեգակի», «շոշափել ուժի ձեռքերը մաքուր եւ լսել մեղքի բողոքն արդար»: Նրա բանաստեղծական ընդհանրացումներում զգում ենք ժամանակի շունչը, նա ընթերցողին է ներկայացնում իր «Ծնունդը ցավի», «Ծնունդն անքնության», «Ծնունդը տազնապի», «Ծնունդն անտարբերության», «Ծնունդը տիսրության», վերջապես ափսոսանքի, ուժի, հավատի, կարոտի, լուսի, ներշնչանքի ծփանքները:

Երգչի անմիջականությունը ծնվում է հողաբույր տողերից: Նա իրեն պատեպատ չի խփում: Նրան հարազատ են իր հուշերի աշխարհը, որ պապի օջախն է, պապի թախտ, պապի տրեխներ են ու պապի քուրք, ապա կարասը, սայլը, օրորոցը, գորգը, ժամացույցը: Այդ ամենը հուշ ու հիշատակ լինելով հանդերձ, ապրեցնող կովաններ են, որոնք մղում են ապրելու, արարելու, հաստատվելու:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Զերթողահայր Մովսես Խորենացին իր հավերժախոս «Դայոց պատմությունը» գրելիս իշխան Սահակ Բագրատունուն հիշեցրել է. «Թեատր մենք փոքր ածու ենք եւ թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ ու շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց եւ այնպես, մեր երկրումն էլ գրելու եւ հիշատակելու արժանի շատ սիրագործություններ են կատարվել»: ¹

Այսպես, մեր պատմությունը, որպես գոյության ակունք եւ ներկա ընթացք, դարեր շարունակ եղել է մեր ժողովրդի ոգու կանչը, ապրելու ավյունը: Պատմության այս ընթացքը խորապես ընկալել են նաև 20-րդ դարի հայ բանաստեղծները՝ ստեղծելով սերունդներին թեավորող բազմաթիվ կոթողներ: Ավանդույթը շարունակվեց նաև Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքում:

* * *

«Այս խաչքարը ես եմ» բանաստեղծության մեջ ՎԱՐԴԱՆ ՇԱԿՈԲՅԱՆԸ ունի այսպիսի տողեր.

Մի փունջ պոկիր եւ վերցրու փոշին
ծաքած խաչքարից...
... Եվ կտեսմես, որ բացվող գրերը
ծանապարհներ են,
հավերժ ուղեւոր՝
Մաշտոց ու Վարդան: ²

Բանաստեղծական այս խորհուրդը մեկ անգամ չի ուղեկցել Վ. Դակոբյանին: Իր հողին ու ժողովրդին նվիրված բանաստեղծին չին կարող չհուզել մեր պատմության այն խաչմերուկներն ու մեծու-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

թյունները, որոնցով պայմանավորված են ժողովրդի իմաստությունն ու անմահությունը: Այդ խորհուրդը բանաստեղծի ոչ միայն մեկ, այլև բազմաթիվ երգերի մեջ է մտել որպես ոգի: Դայլական գույմերով, հայաշխարհիկ ավանդույթների բարբախումներով, հայկական ցավի ու հույսի շափաղումներով հազեցված նրա պատկերները վերջապես պետք է խմորվեին մեր ընդհանրացնող հյուսվածքի մեջ: Այդպես էլ եղավ: Այս ծնվեց ուղիղ ժամանակին «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» վերնագրով: Այդ է վկայում նաև ինքը՝ բանաստեղծը: «Գրեթի աշխարհ» թերի թրավակցին տված պատասխանում նա ընդգծել է. «Երկար տարիների լռությունից հետո Արցախ աշխարհում հնչեցին մեր արդեն գործող վանքերի ոգեկոչող զանգերը... Մեսրոպ Մաշտոցին ու Վարդան Մամիկոնյանին, իմ պոեմում, միասին եմ թերել Արցախ: Նրանք պետք է միշտ միասին լինեն: Դա է մեր ուժը....»:

Ինչպես տեսնում ենք, Մեսրոպն ու Վարդանը, դարձած ազատության կորով, իրենց ծայնը հնչեցրին նաև մեր նորօրյա պայքարում: Այդպես է եղել՝ սկսած 5-րդ դարից:

Դայտմի է, որ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը լայնորեն նշվեց 1960-ական թթ. սկզբին: Գրվեցին բազմաթիվ գեղարվեստական երկեր, ուր Մաշտոցը փառաբանվում է որպես հայ գորերի ստեղծող, հայ դարության հիմնադիր, առաջին ուսուցիչ, քարգմանիչ:

Պ. Սեւակը եւս իր մասնակցությունը բերեց այդ հայրենանվեր գործին: Նրա համար Մաշտոցը միաժամանակ վիթխարի քաղաքագետ է, «որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից եւ ոչ մեկը»:³

Պ. Սեւակը 60-ական թվականների պահանջներից ելնելով իմաստավորեց Մաշտոցի կատարածը եւ դարերին հանձնեց իր անմահ «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը: Բանաստեղծական անգուգական տաղանդով Պ. Սեւակը ցույց տալով հեթանոսական

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

աստվածների կործանման ու քրիստոնեության հաստատման պատճառը, մեր ժողովոյի դժվարին ու բարդ ճակատագրի հետ կապված շատ փակագծեր բացեց: Նա նաեւ իր ելույթում նշում է, որ «Զորությանք ու բազկով Շայաստանը չէր կարող վերականգնել իր միասնությունը, ինչպես նաեւ պետական անկախությունը... նիգով ու ջանքով անկարելի է մաքառել օտար լեզուների դեմ, եթե դրանք կրում են պաշտոնական բնույթ»:⁴ Յրաշը էր պետք, որ կործանումից փրկվեր հայ ժողովուրդը: Եվ ծնվեց իրաշքը՝ Մաշտոց անունով: Նա իր գորերի գյուտով հաստատեց ժողովոյի լինելու առեղջվածը, տվեց մի գենք, որի դեմ դարերի ընթացքում անզեն դարձան նետ ու յարադան, փողեր ու տանկեր: Ապրեց ժողովուրդը եւ ամեն անզամ անցյալին անդրադառնալիս, Մաշտոցի գործի մեջ որոնեց ու գտավ իրեն հուզող կենսական հարցերի պատասխանները:

Այդպես եղավ եւ Արցախյան շարժման հենց սկզբին: Վ. Ջակոբյանը Պ. Սեւակի օրինակով դիմեց մեր ոգու եւ սրի ժամանակաշրջանին՝ 5-րդ դարին, որ ինաստավորվում է Մաշտոց-Վարդան անմահների ամձնուրաց գործունեությանը: Եվ ուրախալին այն է, որ Վ. Ջակոբյանը Պ. Սեւակից սովորելով հանդերձ, ստեղծել է իմքնատիա մի պոեմ: Այդ իմքնատիայությունը բնորոշվում է թե՛ թեմատիկ եւ թե՛ գեղարվեստական առանձնահատկություններով:

Եթե Մ. Մաշտոցը մեր ընդհանուր ազգային ինքնության պահպանման եւ հարատեման մարմնավորումն է, ապա նրա գործի նշանակությունն առավել է ընդգծվում Արցախ աշխարհի համար: Այդ փաստի գիտակցումով էլ Վ. Ջակոբյանը հերոսներ է ընտրել Մաշտոցին ու Վարդանին: Բանաստեղծը նրանց կերպարները ստեղծել է ժողովոյի ճակատագրին առնչված: Մաշտոցի եւ Վարդանի բնավորությունները բացահայտվել են պատմական դեպքերի եւ իրադրությունների փիլիսոփայության ներկայացմանը:

Արցախում Մ. Մաշտոցի գործն ինաստավորելու համար Վ. Ջա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Կորյանը հիմք է ընդունել պատմական այն ճշմարիտ փաստը, որ նա գրերի գյուտից հետո դպրոց է բացել նաև։ Արցախի Անարաս վանքում։ Բանաստեղծական սրտառուչ ու գումեղ հյուսվածքով Վ. Դակորյանը պոեմի հենց մուտքում ստեղծել է մի պատկեր, որտեղ ցույց է տրվում Արցախ աշխարհի հոգեպարար ցնծությունը Մերուածարգարենի գալուստի առթիվ։

Ու ճամփան դարձավ կենաց մայրուղի,
ու ճամփան դարձավ փանդիռ յոթնադի,
եւ հոգերնծա
խոսքեր հնչեցին,
եւ ախորժալուր
մայրուղին իջավ
որպես թե Սինա լեռան փեշերից։⁵

Բանաստեղծը պատկերում է Դայոց Արեւելից կողմանց աչքալուսանքի անկեղծ ու գիտակցված ծիածանումը։ Մաշտոցի հետ, «ասես երկնային օրինարանությամբ, լույսը ոստոստում է թիերի վրա, եւ օարնան ավետիս է լսում Արցախ աշխարհը։ Իսկ Արցախ աշխարհը Դայոց պատմության կնիքն ունի իր թեւերին, որ Դակորյանի գրչի տակ թրթում է Սխտորաշենի դարավոր սոսու շրջուններում, սոսի՝

որ Տիգրան Սեծի գինվորաց ձեռքով
տնկվել է մի օր Վարդանա հովտում,
Սավաս մատուրի հայացքի ներքո՝
ի սեր եւ նշան
հայոց արքայի
հաղթահանդեսի՝
հազարմեկերորդ...⁶

Դարեր են անցել։ Սխտորաշենի սոսենին դարձել է հայոց պատմության գորավոր իրադարձությունների եւ սրբացած մեծությունների գործունեության ականատեսը։ Արցախ աշխարհի խորհրդանիշ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Սոսին պատկերվում է որպես թանկ ու հարազատ հուշերի կենդանի վկայություն: Այդ ծառի տակ անձրեւից ապաստանել են Մաշտոցն ու Վարդանը, նրա պարզ շուք ու շվաբում Գրիգորիսն է իր սիրտը բացել Մաշտոցից առաջ: Մեսրոպից հետո արցախսրույր այդ ծառի շվաբում հանգրվանել են Խորենացին եւ Կաղանկատվացին, Գանձակեցին եւ Գոշը, Շաֆիհն ու Լեռն, ապա իմաստուն Իսահակյանը... Բանաստեղծը հաստատում է, որ Արցախը հայոց շունչ ու սիրտ ունեցող սրբավայր է:

Պատկերելով Մաշտոցի այցը, Յակոբյանը նրան գնահատում է համաժողովրդական սիրո ծփանքների եւ ակնկալությունների շրջանակներում: Ծինականի ողջույնը, որ հնչում է «Փրկեա մերոց» աղոթքով, ժողովուի հավատի արտահայտությունն է: Ծինականի ձայնից խայտում է հողը սուրբ երանելու ոտքերի տակ եւ որպես տեսիլք բխում է մի աղբյուր, եւ՝

*Մարգարեն մի բուռ ջուր վերցրեց ակից,
պարզեց արեւին,
եւ ափի միջից արեգակն ելավ
եւ նախշուն ասքեր շաղեց դաշտերին,
եւ ափի միջից արեգակն ելավ
եւ նախշուն ոսկի շաղեց դաշտերին,
եւ ապա ձեռքը ճակատից տարավ,
ճակատի գիրք օծեց արեւով,
ու դա պատգամն էր «Վերին» աստծո,
Ու պատգամ էր դա՝ հղված արցախուն: ⁷*

«Փրկեա մերոց» աղոթքը, ուղղված Մաշտոցին, պոեմում ծավալվում է, ներկայացվում որպես անցած ու գալիք արհավիրքներին դիմակայելու մաշտոցյան հնարքի գիտակցում: Ժողովուրդը պետք է փրկվի «գորշ հորդանների անգուսա հեղեղից», որ համակործան անվերջ գալիս են եւ տանում ոչ միայն ծլած արտը, հանգնում վառած թոնիրը.

այլեւ ակունքն է քանդում քո լեզվի,
մայրենի խոսքիդ կրակը մարտում,
մանկանց բերանից կես պատառի հետ
հայկան՝ հոգ ու նշխարը խլում,
տաճարներիդ հետ՝
հոգուդ սրբազն աշխարհը փլում։⁸

Ժողովուրդը հասկանում է, որ դրա «Ելքը միայն գիրն է սրբազն»։ Անարասը, ականջալուր Մեսրոպի գալում, այրերով, պապիկ-տատիկով, հայրիկ-մայրիկով, ճյուղ ու ճիվով դիմավորում է նրան հավատալով, որ հանձին մեծ ուսուցչի, փրկարար գրերի «Երկնից իշխում է լույսի նանանա»։

Երկուսի ճեղքված հայոց աշխարհի արեւմտյան մասը որպես կիսագաղութ ճնշվում էր բյուզանդական բռնապետության լծի տակ, իսկ արեւելյան մասը՝ պարսկական։ Ցավը տանելի կլիներ, եթե ուժացման հարցը հաճախակի չտնկվեր հայ ժողովողի առջեւ։ Ժողովողի մի մասը պիտի ծովալվեր հույսների հետ եւ կորչեր անհետ, իսկ մյուս մասն էլ՝ պարսկակաների։

Այդ հանցավոր քաղաքականությունն իրականացնելու համար թշնամիները կրոնի հարցում մերթ քաղկեդոնականությունն էին առաջարկում, մերթ գրադաշտությունը։ Իսկ լեզվի հարցում տեղի էր ունեցել սարսափելին՝ Դայաստանում հայ երեխաների մի մասը սովորում էր ասորական դպրոցներում, մյուս մասը՝ հունական։ Եվ մինչեսրոպայան շրջանում այն տեւել էր հարյուր տարուց ավելի։ Ահա այս ծանրածանր ֆոնի վրա պարզ է դառնում Մաշտոցի ստեղծած գրերի դերը ժողովողի հարատեւման գործում։ Ահա թե ինչու, գրերի գյուտից հետո, մեր առաջին ուսուցիչը ջանք ու եռանդ չի խնայում դպրոցներ բացելու ուղղությամբ՝ լավ հասկանալով, որ մայրենի լեզվի պահպանման եւ հայեցի դաստիարակության միակ կարեւոր երակը կրթօջախն է։ Պատմական այս ծշմարտության բա-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Նաստեղծական ընդհանրացում է պոեմի «Մեսրոպ Մաշտոցը դպրոց է բացում Անարաս վաճռում» մասը:

Ինչպես ամբողջ Հայաստանը, այնպես էլ նրա մի մասը կազմող Արցախի մարմնավոր եւ հոգեւոր տերերը հասկացել էին, որ օտարի լժի տակ, օտարի լեզվի դպրոցում կվորչեն ոչ միայն իրենք, այլև իրենց սերունդները: Դրանով պետք է բացատրել այն համաժողովրդական ուրախությունը, որ կապված է Մաշտոցի կողմից մայրենի լեզվով դպրոցի բացման հետ: Դրա արտահայտությունն է այն ռոմանտիկ պատկերը, որ ստեղծել է բանաստեղծը Անարասի ֆոնի վրա: Վաճք մտնելուն պես Մաշտոցը գմբեթին նկատում է մի արծիվ, որ համարում է «Արցախս սուրբ ոգին՝ հավքի կերպարանք առած»: Տերից վեր բարձրանալով, արծիվը էլ ասես Արցախս երկնքում ծաղկում էր գրերը սուրբ: Այդ գրերը միաժամանակ մասնատված հայերին ի մի բերելու, նրանց միասնությունն ապահովելու ամենահզոր ուժն է: Այս գաղափարի պոետական մարմնավորում է այն հատվածը, որ վերաբերում է հայկական գինանշանի վրա պատկերված երկզիսանի արծվին: Մաշտոցն այդ պատկերի մեջ տեսնում էր երկրի երկատվածության խորհուրդը, որի հետ չի հաշտվում: Երկատված այդ հայացքից մեկը նայում է պարսկական կողմը, որտեղ քրմերի վառած ատրուշաններին հայ սրտի լեզվակն է այրվում, մյուսը նայում է ձեռքին Բյուզանդիոն, որտեղ «մեր իին ու անմաշ սրբությունների մոլիխոն է միայն մատուցանվում մեզ» եւ մատնում գոյի ու դպրության կորստի: Այդ տեսարանի նման գնահատման ֆոնի վրա էլ կարեւորվում է Մաշտոցի խորհուրդը.

Ծառ էր անհրաժեշտ
անգամ եւ հաց ու ջրից առավել,
մեզ հայացքների միաբանություն...
...Այսինքն՝ պիտի մենք միաբանվենք
ժողովրդովի
մի բռունքք դառնանք մեր լեռանց նման,

ՊԱՏՄՈՒԹՅՈՅԱՆ ՀՐԱՄԱՅԱՎԱԿԱՆԻ

կանգնենք կորովի,
անպարտ, անսասան՝
հանդիման ամեն ուժացնողի
ու բռնակալի,
ու սատար լինենք աստծո բարում։⁹

Մեսրոպ Մաշտոցը համոզված է, որ իր ստեղծած գրերը «Արցախս քարին արմատ կբերեն»։ Եվ նա ժողովելով ընտիր նանկտիք, «կամարների տակ Ամարաս վանքի հիմնեց» դպրոց-կրթարան,

որ հայից սերված ամեն մի ժառանգ
հայերեն սերտի
դասը՝ հայրենյաց համար մեռնելու...
...լինի վաճական,
իշխան թե դայիր,
իր սերն ու սիրտը բացի հայերեն...
... ու հայ աստծուն աղոթք հղելիս,
հայը հայերեն իր ցավը պատմի...։¹⁰

Վ. Դակորյանը պատկերում է Մաշտոցի գործը, այն, որ նա անկարելին դարձրեց կարելի։ Սակայն մեր մեջ ուսուցչի սիրանքը միայն անցյալի բացառություն չի կարելի համարել։ Բանաստեղծը Մաշտոցի գյուտի մեջ որոնել ու գտել է մեր օրերի հուզող հիմնահարցը։ Առաջին՝ որ «մայրենի գիրն է ու լեզուն, ուր հայրենիքը կանգուն է ու մեր հոգու պես վեհ ու ամնված»։ Երկրորդ՝ մեսրոպատառվ գրված մատյաններն արցախան հողի հայաշունչ ոգին են, վկայությունները՝ ուղղված գալիքին...

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում բանաստեղծը մեր առաջին մեջ ուսուցչին ներկայացնում է գործունեության լայն կողմերով։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Սովորական վաճքը դարձնելով դպրատուն, Մաշտոցը շրջում է՝ Ամարաս գյուղաքաղաքում, լինում առաջին հերթին մի աղքատիկ գյուղում։ Դանդիպումն անսպասելի էր, եւ առաջին հերթին իր հոգու խանդաղատանքն է զգում ռամիկ Մանասը։ Նա ուրախությամբ իր մանչուկին՝ Նարեկին, տալիս է կրթարան։ Մանասի եւ նրա որդու՝ Նարեկի կերպարներով բանաստեղծն ընդգծում է այն գաղափարը, որ հողի հետ կապված հայ մարդը իր մեջ կրում է ժողովրդի հոգու ամբողջական գեղեցկությունն ու բարոյական վեհությունը։ Դենց այդ համոզմանք էլ Մաշտոցը լինում է հասարակ մարդկանց շրջապատում եւ նոր սերնդի հետ կապում ազգօգուտ նվիրվածությունը։ Ահա թե ինչպես է գնահատում Նարեկին։

- Մի կենսահաստատ, օրինած ոգի կա
այս մանչի ներսում,
ազգօգուտ մի հուր,
որ հետո պիտի մեծանա-ծավալվի,
գրեք անունը
սովորող մանկանց առաջին կարգում։¹¹

Ու Մաշտոցի հետ միասին մանչի շրեթերին ծիածանվում են հայոց գրերը, որոնց «ձայնակցում է աշխարհին Արցախա»։ Մաշտոցի ժողովրդասիրությունը բացահայտված է նաև դարբին Առաքելի հետ հանդիպման տեսարանում։ Դարբինը կենսափործի իմաստությամբ խոսք է բացում հայ ժողովրդի ծանր ճակատագրի մասին։ հնարավոր չէ՝, արդյոք, որ մեծ ուսուցիչը շտկի անարդարությունը։ Օդում հնչում է դարբնի հարցը։

*Չի՞ լինի, արդյոք,
ի սեր հավատի,*

ՊԱՏՄՈՒԹՅՈՅՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

քիչ փառավորես ու կարգավորես
այս գիրը՝ գրված հայոց ճակատին...
... Սինէւ Ե՞րբ պիտի հոժարվեմք պարսկիմ՝
մտքով չքոտի,
ու նա ճուղուայուր կոտրի մեր գլխին....: ¹²

Զրույցին մասնակցում է նաև Վարդան Մամիկոնյանը: Նա եղել է շեներում, տեսել է առյուծակորով ուստրերի, պերճ ու նազանի դուստրերի: Նա Արցախս ճակատագիրն ու ապագան կապում է նրանց հետ: Վարդան զորավարի խորհուրդ-խոսքի մեջ հնչում է գրի ու սրի միասնության կոչը.

Մեր սուրբ դպրահոր արարած գրով,
մեր դարրինների կրած սրերով
պիտի նորոգեմք
ու նորագրեմք,
արդարագրեմք
գիրը մեր ազմիվ ճակատին դաջված....: ¹³

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմի գլխավոր գաղափարը ժողովրդի անմահության ու կենաւուակության ընդգծումն է, որով էլ պայմանավորված է Մաշտոցի գործի նշանակությունը: Սակայն բանաստեղծը գտնում է, որ ժողովրդի հավերժությունն ապահովելու համար պետք է զինակցեն սուրբ եւ գիրը: Այդ միտումով նա ստեղծել է «Այբուբեն՝ սրի վրա» ծավալուն մասը: Դամոզիչ են Մաշտոցի եւ Վարդանի միասնական գործունեության պատկերները: Վարդան Մամիկոնյանը եղե՞լ է, արոյոք, Արցախում: Դա կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ Մաշտոցն ու Վարդանն ապրել են միեւնույն դարաշրջանում, եւ նրանց անձնուրաց կյանքն ու փառավոր գործն ուղղված է եղել ժողովրդի հավերժության ապահովմանը: Պոեմում բանաստեղծը հավատարիմ է մնացել հինգերորդ դարի ոգում՝ գրի եւ թրի համագործակցության հիանալի օրինակին: Վկան՝ 405թ. գրերի գյուտը Մաշ-

ՊԱՏՄՈՒԹՅՈՅՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Մողի կողմից եւ Վարդան զորավարի գրիաբերությունը 451-ին։ Պատմական այս կարեւորագույն փաստերի ու դեմքերի պոետական ընդհանրացումների օգնությամբ Վ. Դակորյանը պատասխանում է ժողովրդի հարատեման ճիշտ հարցին։

ոչ միայն սուրբ, այլ նաև գիրք
պետք է վահանով մտնի ասպարեզ,
եւ պիտի պահել զուգակշռություն։¹⁴

Պոեմում էպոսային տարրերի հյուսվածքով ցույց է տրված Վարդան զորավարի զինավարժությունը։ Սուր ու վահանի շառաչների մեջ Սաթենիկի գործած՝ այբուբենի պատկերն ունեցող գորգը արցախահայության զինվորական կամքի եւ ստեղծարար ոգու խորհրդանիշն է։ Զինավարժ ու ասպազը կապած Սաթենիկը բացում է գորգը եւ կարդում։

-Այր, Բեն, Գիմ, Դա, Եզ—
... Դնչում է երգը ամենազոր,
ամենազորեղ երգն է հնչում—
Երգն այդ երգ չէ, ոչ, այլ գոյի վրա
երդում է սրի...
հավատարմության...։¹⁵

Վ. Դակորյանն ուշադրություն է դարձնում նաև օտար բռնակալների ճնշման եւ սոցիալական ծանր պայմաններում մարդկային իրավունքների ոտնահարման պատկերմանը։ Զրվոր Դաբեթի որդու՝ Տիգրանի եւ Սաթենիկի դժվարին լուսավոր սիրո էպիզոդը պոեմի կարեւոր եւ հաջողված հյուսվածքներից է, որին հաջորդում է սրտառուչ մի պատկեր։ Մեսրոպյան գրերը հոգ ու երգ դարձրած արցախցիները Վարդան զորավարի շոյող հայացքի տակ խմբվում են որպես զինվորյալներ՝

որ իրենց ԴԱՅԻ պատիվն ամենով
բարձր են պահուում

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

արեւամոտիկ,
այրեր՝ պնդաքերծ—
Արցախ-սուս սրբոց,
բայց՝
ոչ առուժախ,
Արցախ-
այսինքն, սար ու մարդ անթեք,
Արցախ-
այսինքն՝
առյուծն առյուծ է՝ թե արու, թե էզ—: ¹⁶

Պոեմի վերջին մասը կոչվում է «Մաշտոցի ոգին Ամարաս վանքում, վանքի գրերում, քար ու վեմի մեջ»: Տեսիլքային գրականության ավանդույթներին հավատարիմ, Վ. Դակորյանը ստեղծել է մի պատկեր, որի միջոցով ինաստավորվել է հետմաշտոցյան շրջանի արցախյան ընթացքը՝ լեցուն արհավիրքներով, արարման կարողությամբ, ապրելու վճռականությամբ: Ավանդությունը պատմում է, թե ինչպես Ամարաս գյուղաքարաքում Լենկ-Թեմուրը համարձակի հարձակումով կազմակերպում է կոտորած: Նա վաղուց լուր ուներ այդ վանքի մասին: Եվ երբ խուժում է վանք, տեսնում է, որ սուրբ մկրտության ավազանի մոտ տերտերը կնքում է նոր աշխարհ եկած մի ամարասցու, իսկ կողքին՝ նրա խոնարի մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով միանգամից զիսատում է երեքին, ավերում ու ավարում վանքը: Սակայն յոթ օր ու գիշեր չանցած, մոլուցքը Լենկ-Թեմուրին նորից այստեղ է բերում: Նա տեսնում է, որ կամարների տակ այդ նոյն վանքի տերտերը կնքում էր նոր աշխարհ եկած ամարասցու, իսկ կողքին՝ նրա խոնարի մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով մեկտեղ թրատում է այդ երեքին: Եվ որպեսզի Ամարաս վանքի վերակերտումը չկրկնվի, իր գինվորներին շարք է կանգնեց-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Նում մինչեւ Արաքս, որ հայոց վաճքի բոլոր քարերը թափեն գետի
մեջ՝ վայրի մոլուցքի մեջ խորհելով.

- Հայոց գետի մեջ շատ ենք հայ նետել,
թող այս հայագիր քարերն էլ հիմա
ջրի մեջ նրանց հուշաքար լինեն...: ¹⁷

Յոթ օրից հետո Լենկ-Թենուրը նորից է գալիս այստեղ: Եվ նո-
րից տեսնում է, որ կամարների տակ Ամարասի սուրբ մկրտության
ավազանի մոտ տերտերը կնքում է աշխարհ եկած մի ամարացու,
իսկ կողքին՝ նրա խոնարի մայրը:

Լենկ-Թենուրը շշմած, գլուխը առնում ու չքվում է այդտեղից:
Մարդակեր բռնակալը, սակայն, ցանկանում է իմանալ գոյատեւման
այդ գաղտնիքը: Եվ նի գիտունի ճանապարհում է իմանալու այդ ա-
ռեղծվածը: Արցախի շինականը գիտունուն բացում է գաղտնիքը.
«Մաշտոցի գիրն է ամեն մի քարի... ամեն մի խաչի... ամեն արմա-
տի»-

- Եվ այս ամենը,- շինականն ասաց,-
Սեր հոգու մեջ են,
ոգին են հայի...
ժողովուրդը, որ տառեր է գրում
անգամ իր թրիմ,
Աշխարհում նրան հաղթող չի լինի,
Առավել եւս՝
ժողովուրդն այդ չի մնա գերի...: ¹⁸

Պոեմի վերջին ակորդում Վ. Շակորյանն ընդգծում է, որ ար-
ցախցիները իրենց բնույթը առել են մայր հողից, որ հողն Արցախա
բնավ էլ հող չէ, այլ հմաստություն է, հավատ, սրտի կրակ է, կար-
միր որդան, Մաշտոցի եւ Վարդանի ոգին է, որին պարտություն չկա:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» ստեղծագործությունն աչքի բնկնում լիրո-էպիկական պոեմի ժամրային առանձնահատկություններով։ Նրամում կերպարները, դեմքերը բնութագրված են էպիկական եւ քնարական միջոցներով, բացահայտված քնարական ուժեղ գումավորմամբ։ Մեսրոպ Մաշտոցին նվիրված բազմաթիվ պոեմների շարքում այն գրավում է ուրույն տեղ։

* * *

Արցախի գրական կյանքը վերելք ապրեց։ Ժողովրդի մաքառան ոգին մտավ երգի մեջ՝ փիլիսոփայական խորքով։ Երգը ոչ միայն դարձավ օրերի թեժ արձագանք, այլև հոլովվեց որպես անցած եւ ներկա ճանապարհների իմաստավորում, որպես կենսափործից ծնված խոհ ու խորհուրդ։ Այդ խորհուրդը կոնկրետ ակունք ու հասցե ունի։ Ակունքը՝ մեր անցյալը, հասցեն՝ ազգային ինքնորշման իրավունքին ապավիճելը։ Վ. Դակորյանի «Դամանվագ», «Ես հողի մարդ եմ», «Շանթահար կաղնին», «Երամականչ», «Արցախածուխ» եւ «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» («Ամարասի զանգեր») պոեմները հուշում են այդ մասին, որ դրանց հեղինակը պետք է ասի իր նոր խոսքը, իհարկե, լայն կտավով։ Եվ, ի ուրախություն ընթերցողի, Վ. Դակորյանը հյուսել է ծավալուն մի երկ, որին սպասում են տարիներով, որի երեւան գալը խորհրդանշում է գեղարվեստական խոսքի նվաճում գրական ընթացքի մեջ։ Դա «Տաճարն աստծո» պոեմն է, որ հրապարակվել էր նախ որպես «Արցախ» հանդեսի հավելված։

Արցախը ներսից բացահայտելու նոր, հաջող փորձ է պոեմը՝ ծնված մերօյա ցավից, հյուսված դարավոր մեր պայքարի ու երազանքի ոգեղեն գույներից։ Մոտ երեք հազար տողից բաղկացած պոեմը բաժանված է չորս մասի։ Չնայած մեծ ծավալին, պոեմը ընթերցվում է մեկ շնչով։ Այն լուսեղեն նստվածք է առաջացնում ըն-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

թերցողի հոգում, հարստացնում նրա հուզաշխարհը, բորբոքում ե-րեւակայությունը, խորիելու առիթ տալիս:

Պուեմք կարդալուց հետո վերիիշեցի Պ. Սեւակի ուղեցույց խոսքը. «Կարեր շարունակ բանաստեղծությունը կապել են ՍՐԾԻՆ, համեմատել ԵՌԳԻ հետ ու երգ էլ կոչել: ԵՎ ԾԻՉ են արել: Բայց ՍՐԾԻՑ ու ԳԼԽԻՑ բացի մենք ունենք եւս մի բան, որ ժամադրավայրն է այդ երկուսի եւ կոչվում է ՀՈԳԻ կամ ՈԳԻ: Արդի բանաստեղծությունն ընդհանուր ուրվագծումով (եւ ճշմարիտ բանաստեղծությունն առհասարակ եւ միշտ) ՎԵՐ է սիրտ կոչվածից եւ ԱՎԵԼԻՆ է երգ կոչվածից: ՄԻՐԾ ունենալիքը քիչ է... հարկավոր է նաև ՀՈԳԻ ունենալ... Այս «նոր»-ությունը շատ ավելի լավ հասկացել են տակավին ԴԻՆ հնդիկներն ու քրիստոնյաները՝ մարդկային անմահությունը հեղուստելով ոչ թե ՍՐԾԻ տեղափոխության, այլ ՀՈԳԻ այլակերպության վրա: Մենք (բազմադարյան մարդկությունը) լի եւ առատ ենք ՍՐԾԱ-ՌՈՒԶ խոսքերով, ուրեմն եւ՝ մի քիչ էլ կուշտ ենք: Այժմ արդեն մենք առավել կարիք ունենք ՀՈԳԵՎՈՐ ասմունքի, ոգեղինացած ասքի: Մենք հիմա կարիք ունենք... այդ ՀՈԳՈՒ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՆ ավելի, քան սրտալի գեղմանը, որը (այդ սրտալի գեղումը) հիմքն է ՆԱԽՆԱԿԱՆ արվեստի, բայց ոչ երբեք զարգացած արվեստի...

Այս պատճառով էլ արդի բանաստեղծության ԴԻՄՍԱԿԱՆ ՏԻՊԱ-ՐԸ, երաժշտական տերմինով ասած, ես համարում եմ ոչ թե ԵՐԳԱ-ՅԻՆ մտածողությունը, այլ համանվագային (սիմֆոնիզմը), ոչ թե ՄԵ-ՆԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, այլ բազմաձայնությունը...»:¹⁹

«Տաճարն աստծո»-ն հոգու դիալեկտիկայի բացահայտում է համանվագային հնչեղությամբ ու խորքով, զգացմունքային թրիոներով: Վ. Դակորյանը ստեղծել է Արցախի հերոսական անցյալի եւ դրամատիկ ներկայի Ասք՝ շաղախված կորուստների ողբերգական զգացմունքներով եւ ժառանգածի պահպանման անխառը մտորումներով: Իր համար գեղագիտական մետաֆորներ ընտրելով զգաց-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

նունքն ու հերոսությունը, փակուղին ու ելքը, Վ. Դակորյանը դրանով իսկ ընդգծում է մեր ոգու անճահությունն ու ընթացքի հավերժությունը: Դամաժողովրդական ցավի ու երազի փիլիսոփայությամբ Դակորյանը իմաստավորում է պատմական մեր ծանապարհը: Ներկան ու անցյալը հյուսված միմյանց, դառնում են այն ակունքները, որոնց իման վրա բանաստեղծն ընդիհանրացնում է մաքառման եւ ելքի խորհուրդները: Բանաստեղծական սուր զգացողությամբ, պատմական երեւույթները համադրելու եւ վերլուծելու կարողությամբ Վ. Դակորյանը անցյալը կամրջում է ներկային, խտացնում մեր ժողովրդի կենսափորձի կուտակումները, աշխարհնկալումների եւ աշխարհայեցողության գույները: Պատմության խորքերից առաջ իր հոգեւոր գանձերը, ոտքի տակ հողը հայրենի, սրտում պատկերը նրա, արցախահայությունն այսօր ծգտում է պահպանել իր ինքնությունն ու լեզուն, փոխվում է վերաբերմունքն աշխարհի եւ մարդկանց հանդեպ.

Եթե

Արցախի մանուկը
ծաղիկ չի նվիրում մորը,
ուրեմն՝
աշխարհում ոչ մի մայր
իր որդուց ծաղիկ չի
վերցնում,
ուրեմն՝
աշխարհում ոչ մի ծաղիկ ծաղիկ չի:

Սարդկային առինքնող ընդիհանրացում. բանաստեղծն աշխարհի խիոճը գնահատում է բոլոր մարդկանց եւ ժողովուրդների ազատության գեղագիտական իդեալից: Դրանով է բացատրվում պոեմի գույգ թեմա-գաղափարի առկայությունը՝ անցյալը եւ ներկան, աշ-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Խարիծ եւ հայ ժողովուրդը:

Քնարա-էպիկական պյեմի ժամրի ընձեռած հնարավորությունների սահմաններում բանաստեղծը մերք քնարական պատկերներով, մերք՝ էպիկական, խտացնում է ժողովրդի բնավորության գծերը: Արցախցին իրավունք ունի հպարտանալու.

*Ծանապարիծ տաշել եմ ոտքերով
քարքարոս
ու դրել իմ երազների մեջտեղում: ²¹*

Քնարական հերոսը «իմաստնացած սուտ է» համարում բոլոր այն ձայները, որ գալիս են նյու-յորքներից, փարիզներից, «որ գալիս են դրսից, ոչ ներսից»: «Մեր ցավը շրջիկ, հաստատում է բանաստեղծը, մարմին մտած ասեղ է, որ երկրի բոլոր երակներով անցնում է ու վերջում մեր սիրտը պիտի խրվի»:

Ելքի իր փիլիսոփայությունն է անում Վ. Դակորյանը: Դա դարերի փորձված ձայնն է, որ գոչում է չիավատալ նրան, երբ ասում են, թե «ձեզ համար են քայլում»: Ուրեմն՝

*Թե ապել է՞ մեր ցավերում ապրենք,
Թե թռչել է՞ մեր երկմքով թռչենք,
Թե թռչվել է՞ մեր ջրերում թռչվենք... ²²*

Պոետական ընդհանրացումների միջանկյալ արձակ բանաստեղծությունների մեջ Դակորյանը լրացնում է ժողովրդի ինքնահաստատման խորհուրդը. «Դեռօս պիտի աճի հողից»: Վ. Դակորյանը մեկնաբանում է մեր ժողովրդի անցած ճանապարհը: Գոյատեւման նրա փիլիսոփայությունը ժխտում է լացը, հաստատում սեփական ուժերին ապավինելը: Այդ իմաստով են հնչում պոեմի հարցադրումները: Ենթադրենք, Ամերիկայի ձայնը հաղորդեց, որ կոնգրեսմենները խիստ անհանգստացած են Արցախի հարցի առթիվ, իսկ ֆրանսիական թերթերը գրեցին, «թե ինչ իրավունքով է սպան-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Վում սպանվողը»: Դրանից ի՞նչ օգուտ: Չպետք է մոռանալ, որ՝

Չարի անունը կորցրել են,
չարը անուն չունի,
որ դիմեն,
բարու անունն է սառել վրան:

²³

Բանաստեղծը պոեմում պայմանական ելակետներ է ստեղծում, որոնց ենթարնագրային բացահայտումները վերաբերում են մեր սիրտն ու հոգին կրծող ցավին՝ ստեղծված ոչ մեր մեղքով: Այդ ցավի պատկերման միջոցով պոետը քննում է աշխարհի անտարբերությունը եւ մեր անելիքները: Բանաստեղծը նկարագրում է համաժողովրդական ցավից շուտ մեծացող երեխային, որ կարողանում է վրայից նետել որբության խարանը: Ժողովրդի եւ աճող երեխայի կենսագրության, նրանց ճակատագրերի նույնությունը վերաբերում է նոր սերնդի քաղաքական հասունացմանը:

Վ. Նակորյանը պոեմի սյուժետային գլխավոր գիծը հաճախ է ընդհատում մերթ անցյալի դեմքերի ու դեպքերի, մերթ ներկայի երեւությունների ու ներկայացուցիչների մեկընդմեջ նկարագրումներով: Սակայն դրանից չի ընդհատվում պատումը: Անցյալ-ներկա համեմատությունը նպաստում է երկի գաղափարական բովանդակության բացահայտմանը: Ստեղծվում է այն հոգեւոր կապը, առանց որի հնարավոր չէ պատճական առաջընթացը եւ գոյատեւման ապահովումը:

Բանաստեղծը դառնում է ջատագովն ու երգիչը իմաստուն ու գիտակցված սերնդափոխության: Այդ առումով հիանալի պատկեր է այս հատվածը:

*Մեծ երեխայի անունը դրիմք,
Առան,
Եւ պարետային ժամը նահանջեց,*

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Եւ երկրի ընդերքից դուրս եկան ջրեր,
որ երգեն ցավը ծարավ երկնքի....: ²⁴

Աղվանքի նահապետ Առաջի եւ այսօրվա արցախածին քաջագումների արյան միասնական եռքն ենք գգում պոեմի շատ պատկերներում: Ըստ բանաստեղծի, արցախյան հողը իր շերտերում պահում է եւ հատիկներ, եւ հավերժածուի ժայիտներ, որի հաստատումն է սրտաբուխ այս ճիշը. «Բա ի՞նչ են դառել Արմեն Շակորյանի ժայիտները, երբ զինվոր «Երերո» զնդացիրը պարզվել է նրա գոտու լայնությամբ ու երկարությամբ»: Պոեմի պատումի մեջ Առաջի տոհմից Արմեն Շակորյանն է հառնում, Արմենի գիտակցված մահից՝ մի նոր Առան, որ որպես Սոսե, ընտրում է Սաքենիկին եւ խորհրդանշում մեր ժողովրդի հավերժությունն իր աստեղնամերձ սարերում:

Եպոսային տարրերի օգտագործումով Վ. Շակորյանը գաղափարական բովանդակության ավելի շատ շերտեր է ներառում պոեմի մեջ:

Աշխատասիրության, հայրենասիրության, արարչագործության գաղափարներն են ընդգրկված աղքատ օյլուդացու, նրա քաղաքաբնակ տղայի վերադարձի եւ սիրած աղջկա ինաստության մասին պատմող ժողովրդական գրուցում: Դրանով բանաստեղծը պատասխանում է Արցախը շեն պահելու կարեւոր հարցին: Արցախը հավերժութեն կմնա, եթե ապրենք նրա գրկում եւ մեր սրտի հրով վառ պահենք օջախները պապենական:

Վ. Շակորյանի «Տաճարն աստծո» պոեմի երկրորդ՝ «Ամենատաք կետում» գլուխը քնարական մենախոսության հիանալի օրինակ է: Նրանում բանաստեղծը կոմկրետացնում է այսօրվա իրադարձությունները, բացահայտում հոգեկան ալեկոծումները՝ ցույց տալով երբեմնի սրբությունների ինքնամերկացման գործողությունները: Վ. Շակորյանը պատռում է կեղծիքի քողը: Չարիքի կրող են

ՊԱՏՄՈՒԹՅՈՅՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Դաշտում անգամ այն տանկերը, «որոնք մերն էին», նույնիսկ կինոն-կարներում.

Պապս տանկերի հետքերով գնում էր,
Թեկուզ գնալը դժվար էր ու ճամփա չկար,
իսկ հիմա
չի կարող, տանկը գնում է հողի վրայով,
Ուր ուսկորներն են՝ պապիս ու նրա
Նախնիների...
... եւ տատս չանչ ամելով դեպի, չգիտեմ ուր,
գնում-գտնում է ռազմական գդակն իր
հայի,
պոկում է վրայից տանկի վրա տեսած
հնգաթեւ կարմիրը
Եւ նետում է տանկերի ոտքերի տակ:

Բանաստեղծի վերաբերմունքը տանկերի հանդեպ ժխտական է: Նա չի կարող կեղծել ինքն իրեն, չի հասթափվել: Վ. Դակորյանի պատմական հայեցողությունը դառնում է խարազանող, նրա սիրտը ճշում է ափսոսանքի սեղմումից:

Չարն այնքան է դարձել սանձարձակ, սանձարձակն այնպես է օգտվում նոր «աստվածների» թույլտվությունից, որ պղծում-փշ-րում են անգամ անվանի մարդկանց արձանները, վանքերը:

Սեկը մյուսին լրացնող խոսուն էպիգոդներ կան պոեմում: Այդ ժամը ֆոնի վրա, սակայն, հուսահատության նվազմեր չենք գգում պիեմում: Բանաստեղծը դարձյալ դիմում է պատմության զարմից սերված նոր սերնդին՝ հանձին Արցախի զավակ Առանի, որ չընկրկի, շարունակի ճանապարհը:

«Տաճարն աստծո» պոեմի սյուժեն կտրտվածքներ ունի, սա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Կայն, միաժամանակ, նկատում ես ոգեղեն մի սերտ կապ տարրեր շերտերի միջեւ: Բանաստեղծը, ինչպես տեսանք, առաջին մասում պատմական անցյալի հորիզոններից փնջում է մեր նախնիների հոգեբանական-փիլիսոփայական ծփանքները, իսկ երկրորդում ներկայացնում է պարետային ժամերի արանքում ճնշումից ադամանդվոր եւ ցասումից հրի փոխավոր մեր սիրտն ու հոգին, մեր տվայտանքներն ու ակնկալությունները: Պոեմի երրորդ մասի պատումը միանգանայն այլ երանգներ է ներառում, եպոսային տարրը ավելի է զգացնել տալիս իրեն, բանաստեղծի խոսքը, կերպարների գործողություններն ու երկխոսությունները մի նոր խորքով են բացահայտում արցախահայության ֆիզիկական ու բարոյական կոփվածքն ու ինքնատիպությունը: Բանաստեղծը պոեմի երրորդ մասը վերնագրել է «Հուլունքը Շամիրամա»: Պատմողական-էպիկական շնչով, քնարական ապրումների շաղախով բանաստեղծը կերտել է քնավիրություններ, որոնք պատմական-առասպելական լինելով հանդերձ, մեր օրերի միջով քայլում են դեպի գալիք: Այստեղ առավել է ընդգծվում բանաստեղծի պատմափիլիսոփայությունը: Դայ ժողովորի դարավոր դժվարին, բայց հերոսական երթը գնահատվում է որպես նրա հարատեւման կարեւոր ակունքներից մեկը: Այդ երթը հավերժական մեր ճանապարհն է, որ այսօր փոռվում է մեր ուժեղի տակ՝ հարորդելով մաքանուր եւ ապրելու վճռականություն: Դակորյանը հպարտության զգացումով է բնութագրում մեր նախնիներին: Նրանց քաջության շնորհիկ է, որ սարերը մեզ են հասել հայաշունչ, որ գետերը երգում են հայերեն, որ աստոերը փայլում են հայաժամփիտ: Դրանք միասին կոչվում են Արցախ: Ինչպե՞ս պահպանել այն եւ ո՞նց պաշտպանել: Այսօր այդ հարցերն են վառում մեր հոգին: Այդ հարցերին համոզիչ պատասխան է տալիս բանաստեղծը: Սարենիկի եւ Առանի կերպարները ստեղծված են արտակարգ երանգներով: Սարենիկը դեպի հայրենիքն ու իր Սերն ունեցած վերաբերմունքով լրացնում է Ծովինար-Արմաղան-Խանորդ-Գոհար շարքը: Նա ներկայացվում է որպես «առավել աստվածուիհ...քան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«աստվածուիին»: Նա գեղեցիկ է, իր հմայքներով «մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնադողիկ, մարմնաշողիկ, մարմնապողիկ, մարմնածավիկ, մարմնածաղիկ, մարմնահողմիկ, մարմնամեղմիկ, մարմնածեղիկ, մարմնագեղիկ, մարմնամեղիկ, մարմնամեղվիկ, մարմնամեղրիկ»: Բանաստեղծը նրան համարում է ոգեխեն, «Երկնքի համ կա թեւերի վլա»: Թարմ ու գտնված պատկերային միջոցներով Սաթենիկը բնութագրվում է ոչ միայն արտաքին, այլև հոգու գեղեցկությամբ: Նա հայ կնոջ հաջողված մարմնավորում է: Օգտվելով պատմագրական եւ պատմաբանական աղբյուրներից, Վ. Դակոբյանը բանաստեղծական նախանձելի պատումի բարձրության է հասցել ժողովրդական մի շարք հնագույն սովորությունները: Նա ուղղակի նոր շունչ է հարդրուել քոնրակրակի շուրջ սիրող գոյագերի երեք պտույտ գործելու հեթանոսական սովորությանը: Այդ պատկերը գեղագիտական առավել խորը է ստանում, երբ կույս Սաթենիկ Առանին պատվիրում է պսակից առաջ գնալ եւ մարտնչել գոռոզ Ասորեստանի դեմ, նվաճել «պատիվը հայոց բարձրիկ աշխարհի»: Առանը ընդունում է Սաթենիկի պատգամը եւ վերարանում է հաթրանակներով, իր հետ բերելով Շամիրամի գեղեցկությունը խորհրդանշող ուլունքը... Սաթենիկի եւ Առանի հանդիպման տեսարանը լեզենդային մի պատկեր է, որ խորհրդանշում է հայունիքի ճակատագրին միահյուսված սիրո անպարտելի ուժն ու անմարում հմայքը: Պոեմի վերջին մասի համար որպես բնաբան բանաստեղծը Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» գործից բերել է հետեւյալ հատվածը. «Կաչագան արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՝ «նա, որ գործում է եւ ուսուցում, աստծո արքայության մեջ մեծ է կոչվում»: Նենց այս արեց աստվածասեր Վաշագան բագավորը»:

Պոեմի վերջին՝ չորրորդ մասը ոգեշունչ խոսք է հայոց Արեւելից կողմանց արքա Վաշագանի մասին: Այստեղ պատմական անցյալը տեսիլքային պատկերների միջոցով շունչ առած, նոր ինաստ է հա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Դորդում ներկա ընթացքին: Նախնիների եւ այսօրվա սերնդի փոխհարաբերության պրոբլեմը բանաստեղծը գնահատում է ժողովրդի հավերժությունն ապահովելու գեղագիտական իդեալի իր դիտակետից: Կաչագան արքայի հանդեա քնարական հերոսի երախտագիտության զգացումը ակունքվում է պատմական այն դիրքից, որ խաղացել է արքան: Պոեմի վերջին մասի հենց սկզբում «մաքուր եւ անլաց ծաղկի» պատկերը խորհրդանշում է ժողովրդի անթառամ հիշողությունը, առանց որի չկա պատմություն եւ չի լինի ապրելու տեսչ:

Այդ ծաղիկը միաժամանակ դաս է, որի միջով դարերը կարող են «ճամփա ընկնել», «գալ ու գտնել մեզ», բացել մեր պապերի հերոսական էժերը Մարութա սարերի լանջերին, «Ալրցախա սուրբ աշխարհի ճամփաներին»: Ծաղկի քնարական հայացքը վերահնաստավորվում է պոեմում, դառնում կեցության ավիշ.

ու ծաղիկը վառվող ջահ է,
ու ծաղիկը սուր է ծեռքիս-
թրատում եմ խավարը ես,
ու ծաղիկը ջուր է ծեռքիս-
հողն ինձնով գարունվում է,
եւ ես ծաղկի ծեռքին հող եմ,
կոկոմվում է հույսն ինձ վրա...: ²⁶

Պոեմում ծաղիկ-ծեռք-ճամփապարի եռանկյունին համանվագային հնչեղություն է ծեռք բերում: Դայրենի օջախի բանաստեղծական պատկերն ամբողջանում է Տաճարի տեսքով, դեպի ուր տանում է բանաստեղծի ուղին.

*Եվ ճամփապարիը ինձ տանում է Տաճար:
Տաճարը ծեռք է, բարձրացող հավատ:
Տաճարը աչք է, լույսի պատուհան:*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Տաճարը սիրտ է, սիրո վեհարան: ²⁷

Տաճարի եւ քնարական հերոսի փոխադարձ կապը բանաստեղծական մետաֆորմերի օգնությամբ ներկայացվում է արտակարգ վիճակների հյուսվածքով, ներկայությամբ այնքան անմիջական է բացահայտվում, որ հավատում եւ միանում ես բանաստեղծին եւ նրա հետ միասին կրկնում. «Ես եմ Տաճարը»: Այդ Տաճարի գույները պոեմում խտացված են որպես «Վաչագանի ափից ելած» Դակորավանք ու Զրվշտիք, Դոռեկավանք ու Վարարակմ....: Դեպի որանց տանող առեղծվածային ճանապարհին քնարական հերոս-բանաստեղծի հետքերն են, որոնցով հպարտանում է ու միաժամանակ իմաստնացած բացականչում.

Անցյալն, այո՛, պիտի ապրել
ու վերապրել,
բայց ներկայի հաշվին՝ երբեք,
այլապես մենք
կորցնենք
ծեռքից կտանք եւ... ապագան: ²⁸

Պոեմն ինչքան մոտենում է ավարտին, այնքան պատմականն ու առասպելականը ծխածանվում են միաձույլ, երկրայինն ու ոգեղենը որոշակի ընդգծում են բանաստեղծի միտումը: Արքա Վաչագանի եւ դիցուիհ Անահիտի կերպարները, արարչական կամոնագրքի եւ նահատակ Գրիգորիսի մասունքների նկարագրությունը պոեմը դարձնում են անցյալի եւ ներկայի, երազանքի ու սխրանքի կտակարան:

* * *

ՔՐԱՅՅԱ ԲԵԳԱՐՅԱՆԸ պատմությունը դիտում է որպես ժառանգափոխության անընդհատ ընթացք: Այս առումով նրա պոե-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

զիան ինքնազմնան ու ինքնահաստատման յուրովի խոսք է: Մարդ պետք է կարողանա տեսնել ինքն իրեն՝ ավանդականի եւ նորի միասնության մեջ: Այս մտորումներն ապացուցում են, որ նա իր հոդի ու ժողորվոյի գեղեցկություններով ներշնչված երգիչ է, որի խոսքը օգնում է մարդուն ապրելու, ստեղծագործելու, մաքրվելու, վեհանալու, հանելու երկրի հետ, հաստատելու արենակցական իր կապը սերունդներին օջախ ու պատիվ կտակած պապերի հետ: Անցյալը բանգարանային նմուշ չէ Բեգլարյանի համար: Այն ապրում է այսօրվա մեջ, սրտերի ամենաթաճն բրդիռներով: Ծիածաններ են անթեղված հուշ ու հիշատակ դարձած պապերի կտակներում ու պատվիրաններում, որոնք, ըստ բանաստեղծի, շոշափելի են, անհրաժեշտ եւ երախտիքի արժանի:

Արեւներ են քանդակել
Սեր պապերը քարերին,
Քանդակել են ու թողել
Գալիք բոլոր դարերին:
Այս, լուս դառնա ծեր հոգին,
Արեւապաշտ մեր պապեր,
Որ հավատով ծեր անգին
Դուք մեզ էլ եք վարակել: ²⁹

Այսպես, հոդի եւ մարդու, պատմության եւ ներկայի, պապերի եւ ժառանգների փոխադարձ կապի միջից բանաստեղծն ընտրում է բոլոր այն չխանրող գույնները, որոնք միասնության մեջ որակվում են որպես սեր հայրենիքի հանդեպ:

Ղմվար չէ նկատկել, որ Շ. Բեգլարյանը պատմությունը գնահատում է որպես դաս ու ազդակ: Նրա ոտանավորներում հայկյան նետը ներկայացվում է որպես արիության սերնդափոխության խորիդանիշ: Սակայն այդ զացումը դեռևս քիչ է, յուրաքանչյուր սերունդ գոյապայքարի մեջ իր խոսքը պիտի ասի.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Ներթը հիմա մեզ է հասել,
Ոչ մի աստված մեզ չի ների,
Թե որ նետը,

Դայլյան նետը
Չփոխանցենք սերունդներին։³⁰

Արցախյան ազատագրական պայքարի արդյունք է նաև Յ. Բեգլարյանի «Խաչենաբերդ» հերոսական ասքը: Ներկայացնելով մեր ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագներից մեկը, նկարագրելով Չինգիզ խանի գործերի խայտառակ պարտությունը Արցախում, բանաստեղծը ծգտում է պատասխանել նաև այսօրվա այրող պրոբլեմներին: Նա գտնում է Արցախ աշխարհի անպարտելիության գաղտնիքը:

Յ. Բեգլարյանի հերոսական պոեմը հյուսված է քնարական շնչով: Այն բնութագրվում է հայրենիքի հանդեպ ունեցած անմնացորդ սիրո եւ ազգային հպարտության զգացումների շաղախով: Թշնամին ինչքան դաժան է, հայ ժողովրդի դիմադրությունն այնքան կայում է, թշնամին որտեղ ոտք է դնում, այնտեղ մեռնում է ամեն բան: Սակայն Չինգիզ խանի հրոսակները եկան «դեմ առան Արցախի դրան»: «Պատմությունը վկայում է, որ Չինգիզ խանը Անդրկովկասում չի եղել: Սակայն Յ. Բեգլարյանը նրան բերում է Դայաստան: Պատմական այդ փաստը կարեւոր նշանակություն չունի: Կարեւորն այն է, որ բանաստեղծը պահպանել է տվյալ ժամանակաշրջանի պատմական ոգին:

Պոեմում Յ. Բեգլարյանը պատմական էքսկուրս է կատարել: 9-րդ դարի պատմիչ Թ. Արծրունին իր «Պատմության» մեջ նկարագրել է Արցախի իշխան Եսայի Ապու Մուսեի հերոսական պայքարը արար գորապետ Բուղայի բազմահազար գործերի դեմ: Բուղան նամակով հոխորտացել է, որ Եսայը ենթարկվի իրեն: Եսային Գտչա-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Վանքից պատասխանել է բանաստեղծական նամակով, որտեղ արհամարհում է թշնամուն եւ խորհուրդ տալիս հեռանալ: Եսայի Ապու Մուսեի նամակի օրինակով ։ Բեզլարյանը ստեղծել է Սմբատ իշխանի պատասխանը, որը մեր պատմության անընդհատ ընթացքը եւ հերոսական պայքարը պատկերող հետաքրքիր հյուսվածք կարելի է համարել:

ճակատամարտը տեղի է ունենում արեւածագին: Չինգիզ Խանը պարտվում է: Փախուստի մատնվելով, նա գերի է թողնում «Թանգիր աստծո Ռոկե ծովածոն»:

Բանաստեղծը Խաչենում տարած հաղթանակը համարում է մոնղոլ-բաթարական արշավանքների պարտության գլխավոր պատճառը՝ միաժամանակ ընդգծելով, որ այս իրական ասքը դաս է թե՝ այսօրվա եւ թե՝ գալիք սերունդների համար:

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ գրական հունձքում պատմական թեմատիկան հնչեցվեց՝ կապված արդիական խնդիրների հետ,- գրում է գրականագետ Անահիտ Աթայանը: Հայտնի է, որ Արցախը հայկական պատմական հուշարձանների բաց թանգարան է: 160-ից ավելի ճարտարապետական կոթողներ, առանձնապես եկեղեցիներն ու վանքերը արցախահայության հերոսական ոգու, մտքի թռիչքի, ապագայի հանդեպ ունեցած հավատի առհավատչյաներ են: Խանյանը պատմական թեմային անդրադառնալով, առաջին հերթին հայցքն ուղղեց պատմա-ճարտարապետական այդ հուշարձաններին, ներկայացնելով դրանք որպես արցախահայության գեղեցիկ ու մարտնչող ոգու արտահայտություն: Այդ առումով «Արցախ» ամսագրի 1990 թ. 5-6 համարներում տպագրվեցին «Կավագ վանքը», «Տեսիլը», «Պապիս պատիվը», «Ես Արցախն եմ» բանաստեղծությունները: Կավագը պատմական Դիզակի վանքային համալիրներից է՝ կառուցված 12-13-րդ դարերում: Այն գտնվում է բանաստեղծի ծնն-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Դավայրի դեմ-դիմաց, բարձունքի վրա: Խանյանը նկարագրելով կիսավեր վանքը, հաստատում է, որ մինչեւ հիմա էլ այն հայոց «դարերի կնիքը վրա» է Եւ վշտու, Եւ նուրբ: Դեռ ավելին.

*Աշխարհի վրա մատ է թափ տալիս,
Մասից աստղերի շղեր են ցայտում,
Քիրսը՝ դեպ իրեն, իմքը՝ դեպի Քիրս,
Քայլում են անվերջ, բայց չեն հանդիպում:*³¹

Վանքը այսօր ագերի-քուրքերին կանչում է դատի այն բանի համար, որ նրանք կեղծում են պատմությունը, որ իրեն իրենք են կառուցել: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ հենց իրենք ավարեցին վանքի դուռը, ջարդեցին խաչը: Վանքը լեզու առած հայտարարում է.

*Զինվորակներ են ուխտավորներս,
Փրկության ժամկու շեփորն է հմզում,
Ծլարձակում են թաղված հույսերս,
Դիմքերս կյանքի ավիշ են շնչում:
Մրսած բառերս կարթնանամ նորից,
Կշարականվեմ հոգեւոր մարտում,
Կհառնեմ մի օր մթամած ծորից,
Կրկին կրառնամ խղճի դարասուն:*³²

Բանաստեղծության մեջ հնչում է պայքարի կոչը: Յետաքրքիրն այն է, որ այս շարքը ստեղծվել է այն օրերին, երբ դեռևս Արցախում մոլեգնած էր խորհրդային իշխանության երկաթ օրենքը՝ հովանի դարձած Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակին, երբ յուրաքանչյուր արդար խոսքի համար հայ մտավորականին հալածում էին, նետում Շուշվա բանտը, մեղադրում ազգայնանոլության, սեպարատիզմի, ազգային թշնամանք սերմանելու մեջ: Սակայն ի հեճուկս հայ ժողովորի հանդեպ այդ բացահայտ թշնամանքի, հնչում է ազատության եւ անկախության կոչող երգը: «Կավագ վանքը» բանաստեղ-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

ծության անմիջական շարունակություն կարելի է համարել Խանյանի «Տեսիլք» հյուսվածքը: Այստեղ նկարագրության օբյեկտը Ամարասն է: Բանաստեղծը գրում է, որ արցախցիներին «զատել են իր անցյալից, քանդել մեր սուրբ տունը»՝ Խարբած բոլշևիկյան դեկավարների սուստ խոստումներից: Այդպես տառապել ենք տարիներ շարունակ եւ այսօր. «Չողոն է տնքում մեր ցավից»: Դառը խոհերի մեջ բանաստեղծը փարզում է Ամարասին, ուր լսվում է «Մեծ Սաշտոցի ձայնը», խոսում է Գրիգորիսի հետ.

Ապավինած խաչ ու գրիմ,
Շարք են կանգնում սրբերը բյուր՝
Խսկ դեմ-դիմաց, հենված թրիմ,
Ժպտում է մի Արցախա ծուռ:
Խսկ նրա շուրջ զորքն Արցախի,
Խաչ ու թրի հովանու տակ,
Չիմնն է երգում առանց վախի,
Գովում կրիկ ու հաղթանակ:
Եվ օրհմելով պայքար ու հող,
Թուրն են տալիս իմձ պողպատե,
Որ Արցախի բախտով վառվող
Սերումներին ես կտակեմ: ³³

Պատմական անցյալի սրբազն քաջերը, անմարում հիշատակ դարձած պապերը, Արցախ աշխարհը դարավոր ոսդիմների հարձակումներից պաշտպանած այրերը Խանյանի հայրենասիրական եւ պայքարի երգերում դարձել են խորհրդանշիչեր, նոր սերումներին գոյանարտի կոչող դաս ու ազդակներ: Բանաստեղծական թարմ պատկերներով, հոգեբանական համոզիչ բացահայտումներով շարքի մեջ ընդգծվում է «Պապիս պատիվը» ստեղծագործությունը: Պատիվը՝ կապված արցախցու քաջության, հայրենասիրության, վճռականության հետ, շնչավորված է այստեղ: Պապի պատիվը քնարա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Կան հերոսի ուսերին թառել է ինչպես առասպելական թռչուն, նրա ձայնը զնգում է քնարական հերոսի ականջներում, հույսերին ժպտում Քիրսա սարը, ծփում՝ Արեւարը: Բանաստեղծը մեջբերում է հայոց սրբացած քաջերի անունները, վերիշում Դիզակա հերոսներին՝ տումեցի թեւանին, ակնաղբյուրցի Արգարին.

Նժեիի ծին է խրխնջում Տողում,
Արձագանքում է նրան անտառը,
Թշնամիների հենց պարտված տեղում
Դրոշ է դառնում նրա հանճարը:³⁴

Պատմական անցյալի հերոսներն ու հերոսամարտերը տեսիլքի փոխված գոյանարտի են կոչում նոր զինվորյաներին, որ զորախմբ-վում են Քիրսի լանջերին եւ ծածանում պայքարի դրոշը: «Ես Արցախն եմ» բանաստեղծության մեջ բանաստեղծի հավատը հայրենի օջախի հավերժության համեսպ վառ է եւ շողոջողուն: Առհավատչյան մեր հին կոթողներն ու երգերն են, որոնք խոսում են հայերեն: Ոգետրված բանաստեղծը բացականչում է.

Դայեր են սեզ սարերս,
Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Կպայքարեն հայերեն: ³⁵

Պատահական չէ պատմական թեմայի աշխուժացումը հայ պեղիայի արցախյան հատվածում:

Խնդիրը կայանում է նրանում, որ ադրբեջանական զեղծարար գիտնականները Արցախ աշխարհը հաճարում են ալբանական-ադրբեջանական-թուրքական, դրանով իսկ ժխտում հայության պատմական արմատները Մեծ Դայքի տասներորդ այդ լայնարձակ նահանգում: Շրջանցում են այն հուշարձանները, որոնք հաօնել են

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Իհայի ծեռքերով եւ կրում են մեր ժողովրդի ոգու կնիքը: Պարզ է, որ նման պարագայում հայ մտավորականությունը չպետք է լրի: Նիշտ է, ժամանակին հայ պատմաբանները պատօսիանել են թուրք գեղծարարներին, սակայն արածը դեռ քիչ է, որովհետեւ թուրքական արշավը Դայոց Արցախի պատմության դեմ նոր թափով շարունակվում է նաև այսօր: Եվ երբ Արթրեջանը սանձագերծել է պատերազմը արցախիների դեմ, հայ ազատամարտիկների կողմից գենքի ուժգնությամբ մարտնչում է նաև գրականությունը՝ առաջին պլանի վրա մոնելով ոչ միայն առօրյայի իշխախությունը, այլև անցյալի հերոսական էջերը եւ հայտնի անհատների գործունեությունը: Այդ տեսակետից հատկանշական է Խանյանի «Մաշտոցն Արցախում» բանաստեղծությունը: Բանաստեղծը Մաշտոցի անվան հետ է կապում Արցախի հայահունչ ոգու մեռոնվելը, անմար լուսո խորան դառնալը, ինչպես պոետն է ընդգծում.

Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Դատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Դայոց երգերը հիմ, նման մեղվապարսի,
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քերժ:
Ու շքերթը ծնվեց մերուպամուն մամկանց,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Շովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրինաճներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ: ³⁶

1991 թ. ԼՂՀ նախարարների խորհուրդը հայտարարեց Արցախի ազգային-ազատագրական շարժումն արտացոլող գործերի մրցանակաբաշխություն: 1992-ին Ս. Խանյանը ներկայացրեց իր «Ար-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

ցախի արծիվը» պատմական պոեմը, որն արժանացավ 5-րդ դարի պատմիչ Եղիշեի անվան մրցանակին: Պոեմը մինչեւ ամբողջական տեսքով տպագրվելը, առանձին հատվածներով լրայս է տեսել մամուլում: 1995 թ. այն հրատարակվեց առանձին գրքով՝ բանաստեղծ-գրականագետ Վ. Դակորյանի մուտքի խոսքով: Այն բերում ենք ամբողջությամբ.

«Մեր ամենօրյա խոսք ու գրույցի մեջ մշտապես հոլովկում են վանք, եկեղեցի բառերը: Եվ չեմք նկատում, որ դրանք հաճախ մեր հոգու մեջ ու մեր լեզվի վրա փոխարիմում են բերդ հասկացությամբ: Դա հատուկ է հայերիս մտածողությանը, որովհետեւ դարերի ընթացքում մեր ամենաապահով տունը միշտ էլ եղել են վաճերն ու եկեղեցիները՝ աստվածային մեր բերդերը:

Դայոց հինավորց բերդերից է Գտչավանքը, որի շուրջն էլ հիմնականում ծավալվում են այն գործողություններն ու իրադարձությունները, որոնք պատկերվում են նշանավոր բանաստեղծ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմում: Այս գործը մեկ տարի առաջ կարդացել է ու ողունել ավագ գրչեղբորս՝ այս համարելով մեր գրական նորոյիա ծեռքբերումներից մեկը: Պատկերման առանձնահատկությունները, հոգեբանական բացահայտումները, ժողովրդական մտածողության ընդգծված խորությունն ու հատկությունն առաջին իսկ ընթերցումից գրավեցին իմ ուշադրությունը: Եվ ցանկություն առաջացավ բարի ճանապարհի խոսք ասել դրամատիկ շեշտերով հարուստ մեր պատմությունը գեղարվեստորեն ներկայացնող այս ստեղծագործությանը, որը մեզանում հաջողված առաջին փորձերից մեկն է: Բանաստեղծը դարեր առաջ կատարված փաստերն ու իրադարձությունները մեկնաբանում-ներկայացնում է այն պիսի թարմությամբ ու համոզիչ պատկերներով, ասես դրանք տեղի են ունենում իենց հիմա, մեր մարտաշունչ օրերում: Եվ դեռ հոդի մեջ չներծծված նույն այդ հոդի համար կյանք տվող հայ քաջորդիների արյունը, պատմության տողերն արդեն ծաղկվում են բանաստեղծի վրնձով: «Ութը հարյուր իխուներեքին» ծավալված գործողություն-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Անրի տակ քիչ է մնում դնել այսօրվա գոյամարտի տարեթիվը՝ 1994 ամի... խոսքը պոեմում հեռու է ավելորդ պաճուճանքներից ու, ինչպես մեր մեջ մտածողը կասեր, «արվեստի թույնից»:

*Սար չեր, Եսայու սպիտակ ծին էր ծյունի պես շողուն
Որ խրխնջում էր իր թոհքը մեջ՝ Քիրսին հավասար:*

Նշենք, որ «Արցախի արծիվը» պոեմի մեջ առկա են էպոսային տարրեր, որոնք եւ գրողի խոսքը դարձնում են ավելի գունեղ ու անմիջական: Դովսեփի, Եսայի, Ապու Մուսեի, Շուշանի, Բուղայի եւ մյուս կերպարները բարձրացվել են գեղարվեստական պատշաճ մակարդակի վրա: Եսայու կերպարը ստեղծելիս հեղինակի հայացքն ավելի շատ սնունդ է առել մեր նորօրյա գոյամարտի հերոսներից, նրանց հայրենանվեր սխրագործություններից: Դենց դրանում պետք է փնտրել ինչպես Եսայի, այնպես էլ մյուս հերոսների կերպարների ամբողջական ու համոզիչ լինելը: Արցախյան գոյամարտի նահատակների անուններով հավատավոր մեր ժողովուրդը դեռ կկառուցի վանքեր ու եկեղեցիներ, մատուռներ, որոնցով էլ ավելի կրաքարանան մեր լեռնագագարները, էլ ավելի կսրբանան: Դիրավի, մեր մարտիրոսված քաջորդիների անունները մեզ համար նոր բերդեր են դառնում: Ու նրանցով Արցախն անառիկ է մնում:

Պատմահերոսական այս պոեմում բանաստեղծը հարուստ գույցներով է ներկայացնում մեր ժողովորի կյանքի ու կենցաղի այնպիսի մանրամասներ, որոնք ստեղծագործության ընդհանուր հյուսվածքին տալիս են պարզություն ու անմիջականություն, խոսքի համն ու հոտը տեղը պահում, գործողությունները դարձնում ակնհաճո... Այդպիսիք են, օրինակ, նշանդրեքի, հարսանիքի, գորահանդեսի, Եսայու շրջագայության, ճակատամարտի եւ այլ պատկերներ:

«Արցախի արծիվը» պոեմը ընդհանրության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գոչի հիշատակարան: Դիշատակարան հայոց հին ու նոր գոյամարտի»:³⁷

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Պոեմի վերլուծության ու գնահատմանն անդրադակ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Դանիելյանը: Նրա խոսքը տպագրվեց «ԼՂ Դանրապետություն» թերթի 1996 թ. հունվարի համարում՝ «Քնարերգակի էպիկական հունձքը» վերագրով: Հոդվածից թերում ենք պոեմը բնութագրող հատվածը.

«1995-ին լրյու տեսավ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պատմական պոեմը, ուր իններորդ դարի հերոսամարտերի շնորհիվ պատկերվում է հին ու նոր Արցախի ազատաբաղծ ոգին: Պոեմի գործողությունները ծավալվում են հրաշակերտ Դիզակ աշխարհում, Գոչավանքի բարձրաբերձ տեղանքներում: Այդ շրջանում մեր պատմական թշնամիները արարմերն էին, հավանաբար, այստեղից էլ պատումի դյուցագնական շունչը, որը էակամի լիցքով գրեթե նորանոր քայլ է Ս. Խանյանի բազմամյա ստեղծագործական փորձառության մեջ. մեր նշած էպիզօն իր վարպետ փոփոխական կշռույթով,- սա էլ կառուցողական նորույթներից է,- հաճելիորեն հիշեցնում է Սասնա երօն, նրա ամհաշիվ պատումները:

Պատմական նյութը բանաստեղծը քաղել է թուվմա Արծրունու երկասիրությունից՝ այն հարստացնելով՝ ժամանակակից ենթմաստներով, վերիանելով՝ թշնամու դեմ պայքարի մշտահնա բովանդակությունը: Հայրենի բնության խոր ճանաչումն օգնել է Ս. Խանյանին՝ առարկայական դարձնել երկիրը, հողը շնչով ու տրոփով լցնել, մի հանգամանք, որ անուղղակի զորացնում է սերը, ընթերցողին ամրակայում դյութիչ ծննդավայրում, կյանքի իմաստն այսպես միահյուսում ազատագործյան սրբազն հրին:

Շարաբա ցեղից ավագակապետ Բուղան, որ մինչեւ այդ ավերել էր Վասպուրականն ու Սասունը, իրդեհել Սյունաց երկիրն ու Դվինը, հասել մինչեւ Գարդման ու Ուտիք, որ հնազանդեցրել էր Ծիրակ աշխարհը՝ իր ծառայամետ Սմբատ ու Մուշեղ Բագրատունիներով, իր մահն է գտնում Տողա անտառներում, այն Դիզակ բարձունքներում, ուր պատսպարել էր իր վախկոտ սիրտը: Հագարացի-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Ներն այստեղ հանդիպում են Եսա ոյուցազնի ու նրա կամարի զին-վորոների հումկու, միասնական բռունցքին, զինվորներ, որոնք, բանաստեղծի գտած արտահայտությամբ՝ պատահողմ էին ու ցանցան եռք:

Դայ միջնադարյան էպոսին բնորոշ հատկանիշներով հարուստ այս ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք նաև հավատարմություն թափառիկ ավանդական պատումին, ինչպես, ասենք, երբ երկու կողմի հսկաները ելնում են մենամարտի՝ վճռելու պատերազմի ելքը: Այդպես էլ Եսան եւ Բուլյան՝ «մեկը նայր հողից բուսած մի բարձունք», մյուսը՝ «մենգ վիշապ», «սեւագույն մի արջ»: Մենամարտի եռաշերտ պատկերների մեջ Ս. Խանյանն ուրվագծում է այս երկու հակառիդ կերպարները՝ դարձյալ ելնելով ավանդավեպի փորձառությունից՝ իր հողը պաշտպանողը բարի է, արդարամիտ, զորեղ, բայց եւ զիջել գիտի, քանի որ վստահ է իր ուժերի բաշխմանը: Ահա թե ինչու նրա վերջին հարվածն անկասելի է: Եսան սպանում է ոչ այնքան իր թշնամուն, որքան պատժում է չարը: Մինչդեռ Բուլյայի կերպարում իշխում են պարծենկոտությունը, տիրակալի կիրքը, վավաշոտ, ավարառու ու լկտի պահվածքը: Եթե Բուլյան զոհվում է կովի մեջ՝ զիջելով ուժեղին, Եսային սպանում են մենգությամբ, թիկունքից, ընդհանուր հաղթանակի, ցնծության պահին...

Ինչ խոսք, «Արցախի արժիվը» պոեմի ծնունդը հենց այս միջոցին խիստ խորհրդանշական է. այն տոգորում է անվեհեր արցախցում՝ իր այսօրվա պայքարում, իմաստավորում հին ու նոր կռիվները՝ հավերժի տեսանկյունից: Նորագույն ժամանակներում ի հայտ են գալիս նոր հովսեփներ ու Եսաներ, թեեւ փոփոխական է թշնամին ու նրա պայքարի ծեւերի ընտրությունը: Անփոփոխ է միայն պայքարի ոգին, մեկ էլ՝ Եսայի, այսինքն՝ քաջության զարմն է անվախճան.

Բայց նրա ոգին թեւարախում է

Արցախի վրա,

Մեզ Տողասարին Գտիշն ու

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՎԱԿԱՆԻ

ոգին փարվում են իրար:

Սարը՝ պատվանդան, վանքը՝

սուլբ գիրը, իսկ ոգին՝ ճրագ,

Մեկը՝ թանկ օջախ, մեկը՝ մագաղաթ,

իսկ մեկը՝ կրակ:

Սարը կամգում է, գիրը հոլովվոր,

կրակն անձարում,

Եվ այդ կրակով Եսան ապրում է

Դայոց աշխարհում:

Տեսել են նրան՝ դարերի անթեք

ճամփեքը մտած,

Արցախի գրկում իր վրճացող,

նժոյգին նստած

Տեսել են նրան, նրան տեսնում են

ու կտեսնեն դեռ՝

Թուրն ու խաչն առած՝ որպես Արցախի

հավերժական տեր:

Խոսքը կապում է ժամանակները, Եսային դարձնում ազատության խորհրդանիշ: Այն տարողունակ է, հետապնդած իմաստը՝ ավելի քան պարզ քանի կա Տեսանողը՝ Բանաստեղի աչքը, անպարտ է Արցախը՝ հայատրով ու հայաշունչ»:³⁸

Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմի մասին գմահատանքի իր խոսքն է ասել նաեւ բանաստեղ, Արցախի պետական համալսարանի դոցենտ Ա. Թովմասյանը «Եղիցի լույս» թերթի 1995 թ. դեկտեմբերյան համարում: Նպատակահարմար գտանք բերել Ա. Թովմասյանի այդ գրախսոսությունն անբողջությամբ.

«Անվանի բանաստեղը Ս. Խանյանի ստեղծագործության վերջին տարիների հիմնական թեման արցախյան գոյամարտն է: Դայտնի է նրա «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված լեգենդար Ավոյին, հերոս տանկիստ, սուլբ նահատակ Միեր Դանիելյանի քաջագոր-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

ծությունները պատկերող «Միեր» վավերագրական պոեմը, բանաստեղծական շարքերը:

Իսկ նրա «Արցախի արծիվը» պատմական պոեմը գեղարվեստական հետաքրքիր մի ասք է Արցախի հերոսական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմական կարեւոր ժամանակահատվածի հերոսապատումի մասին: Այն հատկապես հնչել է մեր օրերում, երբ դեռ շարունակվում են գրվել մեր մեջ պատմության անթառամ էջերը: Այս ստեղծագործությունը սերունդ դաստիարակող գեղեցիկ գործ է: Յեղինակը, չնայած իր պոեմի թեման ընտրել է 9-րդ դարի դեպքերն ու իրադարձությունները, բայց կարծես նկարագրում է մեր ժողովրդի ազատագրական պայքարի այսորվա հերոսաւթյունները: Իշխան Եսայու, Յովսեփի և մյուս նվիրյանների մասին կարդալիս, մեր հայացքի առջեւ վեր է հառնում հայ ժողովրդի հավաքական կերպարը, աննկուն ու աննահանջ արցախցին՝ միշտ պատրաստ իր արյան գնով պաշտամնելու հայրենի հողը: Ասես տեսնում ենք մեր օրերի հերոսներին...

Բանաստեղծ Ս. Խանյանը հավատարիմ է մնացել այն ժամանակաշրջանի ոգում եւ միջավայրին, որը դարձրել է ստեղծագործության առանցքը: Նրանում տեսնում ենք Գտիչ վանքն ու Տողասարը, Ամարասն ու Ազոխը, մեր այրուծիերի հերոսական հաղթարշավը, թշնամու պարտված գիմՎորների հուսահատ փախուստը... Այստեղ ամեն ինչ արցախական է՝ մետաքսակար չուխան հազին քաջ Խաչի պապին, Յովսեփը՝ սուրբ գիրքն առած, ակոսների մեջ՝ եզմեր լծած, գորականներ, զորք ու զորագլուխ՝ ինչպես ամուր լեռնապար, Շուշանիկը՝ շուշանահոտ, խնջող, ավելուկ, փիփերք, չորաբան, ժենգյալով հաց, շըջըլախտի...

Գրի բոլոր բաժինները սերտորեն կապված են միմյանց: Նախերգանքում հետաքրքիր գույններով նկարագրվում են Գտիչ վանքը, լեռնապարը՝ ուր աստղացող դարերի շումչն ու շքերքն է, վրնջացող այրուծիերը, այրերը քաջասիրտ, պայազատներն Արցախի:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«Դարկահավաք» բաժինը կարդալիս, թվում է, թե նախկին սովորական կարգերում ենք, երբ աղրբեջանական իշխանություններն ամեն կերպ ձգտում էին Ղարաբաղը պահել այնպիսի ծանր կացության մեջ, որ արցախիցները թողնեն հայրենի հողն ու տունը եւ բռնեն պանդսության ուղին, այդպիսով՝ լուծելով նաև Ղարաբաղի հայաթափման խնդիրը: Ահավասիկ:

- Յուսուվիդ կանչեց հարկահավաքին,
Ասաց,- Արլլահ, Արցախը քոնն է,
Կհասմես այնտեղ բերքահավաքին,
Իրար կիսառնես ծներ ու տոներ,

Առաջին հերթին կչափես ուկին
Եվ հետո կառնես, առանց մի խոսքի,
Ամեն երդիկից մի պարան, մի գորգ,
Մի ծիատոպրակ, ծեռնոցներ բրդե,
Մի ջորի, թեկուզ տերը լինի որբ...

Եվ այս տիսուր պատկերներից հետո հաճելի ապրումներով ենք կարդում այն տողերը, ուր նկարագրվում է Եսային՝ ասես մի նոր Սասունցի Դավիթ...

- Դատ լինի, թե դատաստան,
Վծիոր Եսայիմն է,
ճրագը Դիզակա տան
Ամենուր իր ծեռքին է...
Մարտերի ոգին է կուր,
Սարսակի՛ հագարացոց...

Ոճական հետաքրքիր ծեւեր է օգտագործել բանաստեղծ Ս. Խանյանը, նրա տողերը մերթ կրակված են, այրող, մերթ՝ հանդարտ ու հանդիսավոր... եւ դրան հասնում է վարպետորեն, հաճախ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Էլ, դրանք միավորելով, ստեղծում մի հետաքրքիր ու բարդ գամմա...

Պոեմն ունի նաև ճամաչողական մեծ արժեք, նրանում բանաստեղծական պատկերավոր լեզվով հարուստ տեղեկություններ են հաղորդվում Արցախի պատմության, մեր դարավոր Եկեղեցիների, սուրբ այրերի, զարմանահրաշ խաչքարերի եւ մեր հերոսական ժողովրդի մասին, այն ազգագրական գողտրիկ տեղեկատու է, այստեղ մենք տեսնում ենք մակարների խումբ, հարսանիքի թամադա, գուռնաչիների, ընծաներ՝ արծաթե գոտի, մետաքս ու կերպաս եւ այլն:

Բանաստեղծ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմն ունի դաստիարակչական մեծ արժեք, սերունդ կրթող գործ է, երիտասարդների մեջ ծննավորում է հայրենասիրական սուրբ զգացմունքներ, վրեժի եւ ցասման կողքին՝ մարդասիրություն, հարգանք, սիրո կողքին՝ ատելություն՝ թշնամու ու բարբարոսների նկատմամբ, ծնողասիրություն, ազնվություն, բարոյական այլ վսեմ հատկանիշներ: Պոեմը ժամանակի ծնունդ է եւ կունենա երկար կյանք»:³⁹

1997 թվականին Երեւանի «Ամարաս» տպարանում լույս տեսավ ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ «Մատյան համարգության» ժողովածուն: Նրանում տեղ են գտել բանաստեղծուինու «Տիրոջ հետ», «Ոեքվիեմ» եւ «Կեսարապատում» պոեմները, որ փաստորեն մի եռագրություն են կազմում: Գիրքն առաջին անգամ կարդալուց ու... վերընթերցելուց հետո, խոհերս ինձ տարան մեր պատմության խորքերը, ու ես թղթին հանձնեցի հետեւյալ մտորումները. «Դայոց դարավոր գեղարվեստական խոսքը ծիածանի գույներ ունի՝ տեսանելի եւ ոչ տեսանելի: Շերտ-շերտ է այն. բացում ես մեկը՝ զարմանում եւ հիանում, բացում ես նորը՝ էլի զարմանում ու հիանում, եւ երբ նկատում ու համոզվում ես, որ բոլոր շերտերն են հիանալի, այլևս չես զարմանում, շշնջում ես՝ բնական է: Ինչո՞վ բացատրել այս շոյող երեւութը: Այսօր չեմ, որ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

պիտի պատասխանվի: Ժողովրդական հանճարմերը վաղուց են պատասխանել, որ իմաստնությունը ծնվում է տառապանքից: Սակայն թող այն պատրամքը չստեղծվի, որ եթե մեր ժողովրդը չտառապեր, իմաստնացած չէր լինի: Մեր ճանապարհները շատ էին իին, եւ գիտենք, որ կարասի իին գիտնին ավելի ծերմացնող է, իին բարեկամությունը փորձված, իին սերը՝ գուլալված... Ուրեմն՝ իին ենք մենք՝ հայերս: Ուզած-չուզած՝ իմաստնությունը պիտի ուլունք դառնար մեր ժողովրդի խոսքաշարում: Միաժամանակ տեղն է շեշտել, որ մենք չենք, որ սիրահարվել ենք տառապանքին, տառապանքն է, որ կարծես գտել է մեզ եւ չի ուզում հեռանալ, կարծես չի կարող ապրել առանց մեզ: Ուստի, Ելենով ճակատագրի մեր այս ծանր բաժնից, շարունակում ենք հոլովել մեր հանճարմերի խորհուրդը. «Իմաստնությունը ծնվում է տառապանքից»:

Ընթերցողը սպասում էր Ն. Ավագյանի նոր խոսքին: Նրա «Դասուն հասկ»-ը ցորենմվեց, դարձավ ապրեցնող հոգեւոր նոր հաց՝ համով, հոտով, ոգեւորոհ՝ խորհելու եւ դաս առնելու ուժով: Այդպես է լինում, երբ ժողովրդի ճակատագրի մեջ արվեստագետը տեսնում է նրա անցած փորձը ու փորձանքի դասը, Ենրկայի հրամայականն ու ապագայի կանչը, խոսքը դառնում է առինքնող ու ծածանվող:

Դայ գրականության ավանդույթների հոլովույթում քիչ չեն ողբերգական էջերից քամով լուսմ արարումի, հույսը հարատեսման: Օրինակը՝ Ս. Խորենացու հայտնի «Ողբը», Դավթակ Քերթողի «Մեծ իշխան Զիվանշիրի մահվան ողբերգը», Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Խ. Աբրովյանի «Վերջ Դայաստանին», Յ. Թումանյանի «Շոգեհանգիստը», Յ. Շիրազի «Շայող դանքեականը», Պ. Սեւակի «Անլոելի զանգակատունը»: Արցախյան պատերազմի տարիներին գրված Ռ. Դավիյանի «Ոերվիենը», Գ. Գարդիելյանի «Ոերվիեներ» երգաշարը, Վ. Դակորյանի «Գողգոթան», Ս. Խանյանի «Նահատակ լուսո», Ա. Քոչարյանի «Խնճօրն արնափոսում» պոեմները եւ այլն:

Դամարձակորեն կարող ենք ասել, որ Նվարդ Ավագյանի պոեմ-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Աները մեր հին ու նորօրյա փորձից ու փորձանքից, ցավից ու արցունքից, տվյալանքից ու ակնկալությունից ծնված համանվագ են, ինչպես ինքն է խոստովանում՝ «Մատյան հառներգության»:

Սի կողմ թողնելով գեղարվեստական պոեմի կառուցվածքային փոփոխությունների առկայությունը գրքում ի շահ բանաստեղծուհու, անհրաժեշտ եմ համարում շեշտել իրականի եւ երեւակայականի այն հաճելի գուգորդումը, որ ապացուցում է Նվարդի ձեռքբերումը, որն էլ իրավունք է տվել գրքի խմբագրին՝ մեր վաստակաշատ հայրենակից, տաղանդավոր պատմավիպասան Դայկ Խաչատրյանին՝ ընդգծելու. «Նվարդ Ավագյանի «Մատյան հառներգության» ժողովածուն վերջին տարիների հայ քնարերգության բացառիկ նվաճումներից է:

Այս գրքում չափածո խոսքով փայլատակում է հայ ժողովրդի, Դայաստանի, Արցախի մերօրյա ճակատագիրը»:⁴⁰

Դեմք այս «ճակատագիր» բառն է, որ ընթերցողին տանում է դեպի ժողովածուի բոլոր պատկերների խորքը, բացահայտում բանաստեղծուհու երգարվեստի ճշմարտացիությունը, հուշում մեր ազգային հին ու նոր երթը, որը սովորական ընթացք չէ, այլ ողբերգությունից ծնվող հառնում, բանաստեղծական ոգեկոչվող խորհուրդ.

*Քայլիր, ես քեզ պիտի տանեմ
Լացից դեախի համբերություն,
Ցավից դեախի հանգստություն,
Մահից դեախի հավերժություն:*⁴¹

Գրքում գետեղված է երեք պոեմ՝ թեմատիկ տարբեր շրջանակներով, բայց՝ պրոբլեմի միեւնույն առանցքով, ժողովրդի կենսափիլիստիայության բազմազան խտացումներով, բանաստեղծական խոսքի թարմ երանգներով: Քնարական պոեմի ընձեռած միջոցներով բանաստեղծուին մերթ դիմելով Աստծուն («Տիրոջ հետ»), մերթ զրոյ-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

ցի մեջ բերելով հերոսին ու հերոսուհուն, մերթ գրուցելով Դօսմի ու Շայաստանի կայսրերի եւ թագավորների հետ, ծեռքը դնում է ժողովրդի ցաված սրտին, սփոփում նրա առօրյա վերքը, սրբում արցունքները, շոյում զարկերակը՝ հառնելու եւ հավատով քայլելու հրամայականով:

Եթենակը չի շրջանցում դառնություն հուշող ճշնարտությունը: Նա Արարքին հայտնում է, որ «Ապականում են եւ խիղճ, եւ օրենք»: Տեսնելով այդ անարդարությունը, քնարական հերոսը ձգտում է, որ Տիրոջ ափերի մեջ բացվի իր «անկեղծ հոգին», որ վերացական չէ, ունի հասցե.

*Գալիս է երկրից ամենաքարոտ,
ուր կենաց գիրը
Գրվում է արյամբ՝ ո՞չ թե թանաքով:*⁴²

Նախերգանքից, երկու մասից ու վերջերգից բաղկացած «Տիրոջ հետ» պոեմում հեղինակը ներկայացնում է 1988-1997 թվականների տարեգրությունը՝ բանաստեղծական նույրը արտահայտչամիջոցներով: Դարաշրջանի խաղի, դավաճանության, դաժանության, փարիսեցիության, կիսված մարմնի, տառապանքի եւ այլ մետաֆորների ընդգծումներով բանաստեղծուիկին բնութագրում է մեր ժողովրդի վերջին տասնամյակի ընդվզումն ու ոգորումները, կորուստներն ու ծեռքբերումները: Պոեմում քնարական հերոսի ընդհանրացումները ակունքված են հայոց կենսափորձից.

*15-ին ով սուրը չհանեց՝
Սեփական շեմին զարկվեց ու մեռավ:*⁴³

Այդ փորձի թելադրանքով «Դրապարակը դարձել էր մատյան...», եւ ինչպես խոստովանում է քնարական հերոսը, «Ապավինեցի ես իմ ժանիքին»: Սեփական ուժին ապավինելը դարձավ կանքի այն դրսեւորումը, որ ունեցան ոչ միայն այրերը, այլև մայրերը, «Որ որդի-

ՊԱՏՄՈՒԹՅՈՅԱՆ ՀՐԱՄԱՅԱՑԱԿԱՆԻ

ներին... դրել գերեզման, Եվ ապրողներին կանքի են կոչում»: Կորուստներից դառնացած մայրը հայցում է, որ Աստված ներող լինի, դեռ կիսով չափ հեթանոս լինելու համար, քանզի.

*Լեզվիս տերն այսօր սլաքն է սգո՞՝
Եվ ծավալվում է լացն իմ անսփոփի
Քիրս ու Մռավից մինչեւ Սիս-Մասիս:* ⁴⁴

Նվարդը արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքը համարում է ամբողջ հայ ժողովրդի փորձության քննությունը, որին մասնակցեցին ամենքը, եւ «Զինվոր էր անգամ նա, ով կրում էր Կրծքի վրա խաչ ու զլիխին՝ վեղար», նաեւ նա.

*Ով պիտի ապրեր՝ խոստմամբն արյան
Փառաց պսակի տարավ իրեն ու
Երկիրս օրինյալ:
Ով պիտի մեռներ՝ հաղթությամբ հարյա՞վ...* ⁴⁵

Դադարությամբ հարություն առածների ոգին այսօրվա ճանապարհն է, որ շատ է հուզում բանաստեղծություն: Այդ հուզումը երկրի եւ ժողովրդի ճակատագրով ապրող տագնապ է: Նա երազում է, որ «Մեկտեղ կող այրած թեժ կրակներում» նարդկանցից մեկը չիծնի հատակ, «Մեկն էլ իր փորը տաքացնի վերում...», որ «Ախտն ազահության» չդառնա չարիք, որ մարդկային «Արժանիքները... լավ թե հին» չկորսվեն, որ

*Կրակին դրված կյանքի պղնձից
Շոգեւոր ճաշի յուղը չքափվի:
Արդարությունը էլ չիանվի ցից,
...Որ տունը իրեն պարտական զգա
Իրեն պահողի ջանքին ու պատվին:* ⁴⁶

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«Տիրոջ հետ» պոեմի վերջերգը հեղինակի գեղագիտական իդեալի ընդգծումն է: Բանաստեղծուիկն թվարկելով անձնական երջանկության աղբյուրները՝ հարսի մայրանալը, թռռան մուշ-մուշ քունը, պատերազմական արհավիրքից որդու վերադարձը, միաժամանակ դատափետում է չարն ու չարիքը: Սակայն ասելիքը՝ որպես սրտաբաց ապաշխարանք եւ օրինանք, բանաստեղծուիկն ընդհանրացնում է վերջում.

Ես ինձ ծառա՛ եմ կոչում քո դռան,
Պահի՛ր երկիրս ի մեջ քո բռան...
Քո տվածք քչով ես գոհացո՞ղն եմ,
Խորատ ու բանքը չմոռացողմ եմ,
Քանի դար էլ որ դարիս գումարվի՛
Ցորեն իմ հերկով, աղբյուր իմ երգով
Դայրենյաց սրտում ես մնացողն եմ: ⁴⁷

«Սատյան հառներգության» եռաձայնի մի երանգը «Ոնքվիեն» պոեմն է: Իմաստնացած բանաստեղծուիկն թեւավոր խոսքի շոյանքով խորհուրդ է տալիս ընթերցողին «Ծիծաղի ժամը եւ ժամը լացի» իմանալ սրտով: Նրա խոսքն ուղղված է մահեր տեսած եւ ապրելու ճամփան հարթած հերոսին.

Սահկան թերան ես դու մտել երեկ,
Սարտերում ցավի պտուղը քաղել,
Որ գոյությունդ մնա ի երեւ,
Դու չէ՛, որ պիտի լացից վախենաս,
Այսօր լաց եղիր,
Որ կարողանաս վաղը ժիժաղել: ⁴⁸

Յուրօրինակ կառուցվածք ունի «Ոնքվիեն» պոեմը: Այն բաղկացած է նախերգից, վերջերգից եւ ութ գլուխներից: Բանաստեղծուիկն նախերգանքում հաղթանակը շահածներից մեկին զգուշացնում է.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«Եվ դու կլսես քեզ ծանոթ ծայներ՝ Սրտիդ ու հոգուդ անասելի թանկ»: Եվ այդ անասելի թանկ ծայները հնչում են ութ անգամ՝ պատվիրանի ծեւով՝ որպես ուսանելի եւ սրտառուց դաս: «Չայն առաջին» բաժնում լսվում է փրկության կանչող իմաստնությունը՝ ուղղված գոհյալին: Բանաստեղծուիկին չի սրողում իր քնարական հերոսութու ծանր ապրումները, ափսոսանքը, երազի եւ տենչի փշուր-փշուր լինելը: «Օրս անցնում է անմիտ վագքի մեջ», -խոստովանում է հերոսուիկին: Առանց սիրեցյալի ապրելն անիմաստ է համարում եւ համոզված է, որ նա այլեւս «ետզալ չունի», իսկ ինքը այրվում է, բայց մոխրանալ չունի, անկեզ է: Ասես շրջապատն էլ չի հասկանում իրեն, որովհետեւ ի զորու չէ իմանալու, որ նահատակված սիրո հետ ոչ ոքի եւ ոչինչ հնարավոր չէ համեմատել.

Չեն հասկանում, որ երր թեւեր չունես,
Չես կարող թօչել երջանիկ եզերք,
Որ ի զորու չե՞մ սիրո խոսք լսել,
Դամեմատում եմ ում էլ որ քեզ հետ,
Վսեմը անգամ դառնում է նսեմ: ⁴⁹

Քնարական հերոսուիկին մարդկային առինքնող երազանք ունի, որի մեջ ե՛ւ ցավ կա, ե՛ւ ափսոսանք, ե՛ւ կարոտ: Նա վերիիշում է իրենց սուրբ եկեղեցի մտնելը, իրեն նվիրած մատամին, Տեր հորից պսակ առնելը եւ «խներ սիրո ամառ» վայելելը:

Երկխոսության ծեւով «Չայն երկրորդ»-ում աղջկան դիմում է նահատակ տղան: Նա հիշում եւ հիշեցնում է վերջին հանդիպումը, երբ «օրը բույրն ուներ ծաղկած բալենու»: Բայց, ավա՞ն, ամեն ինչ հուշ է դարձել: Բանաստեղծուիկին հնչեցնում է կյանքի հավերժության առեղջվածք: Նահատակը, դիմելով սիրած եակին, ասում է.

Բավ է տառապես,
Չես վերադարձի կորուստը լացով:
Բավ է մարմինդ,

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Մենության խոնավ պարանով կապես,
Չմոռանալու ծանիան անցնում է
Ոչ կուսանցով...⁵⁰

Նահատակյալը սիրած աղջկա երջանկությունը «կարեւոր եւ հույժ» է համարում, խորհուրդ է տալիս սիրել մեկին.

...Այն մեկին սիրիր,
Որ կարող է քեզ պաշտել ինձ նման՝
Քո կողքին անգամ... կարուտելո՞վ քեզ,
Քեզ՝ կախարդուիս, քեզ՝ հոգեհմաս։⁵¹

Մարդասիրության, հոգու ջերմության, սրտացավության բանաստեղծական արտահայտություն է գոհյալի դիմում-փիլիսոփայությունը։ Նա կյանքի առօդ ընթացքը կապում է «մանկան ծննդի» հետ, որով էլ կիավերժմի գոհյալի կյանքը։ «Զայն երրորդ»-ում հանդես է բերված այրիացած կինը։ Նրա հանար սփոփանք է գոնե գոհված անունու երազում երեւալը։ Բանաստեղծուիկին հոգեբանական բացահայտումներով ներկայացնում է այն կարուտն ու թախիօթ, որ ապրում է քնարական հերոսուիկին։ «Երազում դու ինձ հաճախ այցելիր», - դիմում է նա եւ խոստովանում։ «Եվ ցավը ունի կարոտի գրգիռ, Որ լացից բացի բան չի խոստանում»։ Շոշափելի է կարուտը, կյանքի նկարագրությունը՝ համոզիչ, խոսքը՝ հուզիչ, պատկերն՝ անմիջական։

Օ՛, իմ որդու հայր,
Չեմ կարող առնել ես գլխիս նոր քող,
Լավ է ապրեմ քող հուշի ցնորքով.
Լոկ սիրածին եմ դմում գերեզման,
Սերը մնում է՝ պահում եմ անթաղ...
...Սիրելին՝ սողադ քայլում է արդեն,
Դարձել է սիրուն, կենսախինդ մանչուկ,
Մատիկը տանում, դնում նկարիդ՝

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Արդեն «հայլիկ» չէ, «հայրիկ» է կանչում:⁵²

Կոմպոզիցիոն շրջանակի հնարանքով բանաստեղծուիին վերջում կրկնում է քնարական հերոսուիու խնդրանքը. «Երազում դու ինձ... հաճախ... այցելիր...»: Պոեմի չորրորդ ձայնը անվանված է «Լեցվիր ինձ»: Նահատակը դիմում է կնոջը՝ իր մանկան մորը: Բոլոր ճամփաները փակ են... Սիրեցյալը հայտնում է. «Ես միշտ եմ, միշտ եմ ուզում գալ քեզ մոտ... Բայց չեմ հասցնում տեղ հասնել, հոգիս»: Նա ափսոսում է, որ «կյանքը որպես բեռ» թողել է կնոջ ուսերին ու նրանից ներում է հայցում.

*Ես ազնիվ էի, ես՝ անդավաճան,
Ուզում էի, որ խոսքով ու բանիվ
Քեզ ու բալիկիս, երկրին վերջապես
Օգտակար լինեմ վերին աստիճան:*⁵³

Պոեմում հմտորեն թվարկվում են զոհյալի «մեղերը», եւ ընդգծվում հայրենյաց գինվորագրյալի անձնուրացության խոստովանությունը. «Զինվորը չէի վարձու բանակի, եվ ոչ էլ անգամ ներկայացածը Շամուրի բաժին զորահավաքի»: Նա բացատրում է, որ շարք է մտել կամավոր, որ պետք է ընտրեր նույն ճանապարհը.

*Պիտի անցնեի նոյն ճանապարհը
(Իրավ՝ որքա՞ն է խեղջ հնչում բառը),
Քանզի ապրելն ինձ տրված էր մահով...
Թո համբերության ես պարտականն եմ,
Քեզ նման... ընկեր
Ոչ մի տղամարդ չունի, թերեւս:*⁵⁴

Նահատակյալ հերոսը հպարտանում է սիրելի կնոջ հայրենասիրության եւ վճռականության զգացումներով: Նեղինակը հերոսի շուրթերով ստեղծում է այն արցախուիու դիմանկարը, որը բացառում է վախկոտությունը, անտարբերությունը եւ որի համար իր շնորհակալությունն է հայտնում եւ հույս արտահայտում, որ եթե մարդիկ չլինեն

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Սատար կնոջն ու որդուն, ապա նրանց «կպահի Աստված»:

Պոեմի «Զայն հինգերորդ» գլխում մենախոսում է զոհյալի մայրը: Ղիմելով որդուն, նա բացականչում է. «Քայսնվի՞ր ինձ»: Որդեկորույս մոր ծանր ապրումները բանաստեղծուիկն բերում է նրա հոգու դռների բացումով: Մոր բնական ու անմիջական խոստովանությունը հուզական-գաղափարական լիցք է հաղորդում ընթերցողին: Սայրը ասես խոսում է իր դեմք կանգնած զավակի հետ.

Չլինելուդ հետ չեմ հաշտվում, տղաս,

Տուն մտնում, թե չէ՝

Ոտնածայնիդ եմ սպասում լարված,

Թվում է՝ ուր-որ կերեւսս, կգաս.

Իսկ գուցե, իրոք, կեղանի՞ ես, կաս...⁵⁵

Սայրը թվարկում է որդու թողած հիշատակները. կիթառը, հարսնացուին, որը մատից չի հանում սիրածի նվիրած մատանին: Սզացող մոր ամձնական վիշտը պոեմում վերածվում է համբերության համաժողովրդական զգացումի, որից էլ ծնվում է Աստօւն եւ Երկրին ապավինելու լավատեսությունը:

Պոեմի «Զայն վեցերորդ» գլխում մորը դիմում է զոհված որդին: Քնարական հերոսի ներքին ծայնը պոեմում «Պատվիր ինձ» պատվիրանի կոչն է:

Այստեղ էլ գտնվել է Երկխոսության խորիմաստ ու անմիջական հյուսվածքի գաղտնիքը: Ընդգծված է հոգեբանական բացահայտումը: Զոհված որդին կենդանի շումչ առած, զրուցում է մոր հետ եւ աղդարարում, որ այսուհետ հարազատ մորը կայցելի ոչ թե ինքը, այլ իր հոգին: Որդին խնդրում է մորը, որ իրեն պահի «սուրբ Մարիամի պես», որովհետեւ իր եւ իր ընկերների մահը Երկրի փրկության նվիրում է.

Դու միակը չես եւ դու լավ գիտես.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Ինձ պես հազարներ կան այս երկնքում,
Ու տեր Աստվածը օրինում է ճրան,
Ով մահկանացուն
Քաջ տղանարդու նման է կնքում:
Սահմանն հայրենյաց գենքով են գծում...⁵⁶

Բանաստեղծութիւն ժողովրդի՝ սեփական ուժին ապավիճելու գաղափարը պետական հյուսվածքի մեջ է առնում ռեալիստական շոշափելի գույներով: Ով իր երկիրը պաշտպանել չգիտե, նա զրկվում է իր օջախից ու ապագայից: Պոեմում հայոց պատմությունը պատկերային հյուսվածքի մեջ ընդգծվում է որպես դաս.

Ո՞ւմ է պետք մարդ՝ իր հողից զրկված,
մենք չենք կարող
Նեմքներս շրջել մոտեցող հողմից,
Արցախն էլ դարձնել Սասուն ու Տարոն...
...Երբ վտանգվում է ցեղիդ պատիվը,
Պիտի կայացմես վժիռող շիտակ: ⁵⁷

Պոեմի յոթերորդ գլուխը անվանված է «Ընդունիր ինձ»: Մարդկային զգացումների նրբությունը, կորստի գինը, հերոսության ոգին, ընկերաշիրության չերիզվող սահմանները, գիտակցված մահվան ընդգծումը այստեղ արտահայտված են քնարական ամենանուրբ երանգներով: Չեղինակը պատումը ներկայացնում է նահատակի անունից, որի գրույցը իր գոյեալ ընկերների հետ է: Այս հնարանը ավելի հուզիչ եւ անմիջական է դարձնում բանաստեղծի խոսքը: Արթուն ցավի մորմոքը հերոսին հիշեցնել է տալիս իր քաջ զինակիցներին: «Երեք անգամ եռակի մահից հրաշքով փրկված» նահատակը առաջին հերթին նատք դնում է իր աշխարհի վրա, որն իրենն է, բայց ակունքը գոյեալ ընկերներն են: Չերոսի հոգին «թափառում է ոլորտում Վերին» եւ ավելի շատ իր ընկերների հոգիների աշխարհում է, քան

ՊԱՏՄՈՒԹՅՈՅԱՆ ՀՐԱՄԱՅԱՅՆ

Պապողների: Իսկ այդ աշխարհը այնքան կոնկրետ եւ շոշափելի է՝ ներկայացված, որ թվում է, թե տեսնում ու գրուցում ես նրանց հետ.

...Պարահարթակի բազրիքին հենված՝
Դավիթն ասում է. «Ընկա՞ բռնեցեք».
Օ՛, տղայական անփորձ սրտի սեր,-
Սիրած աղջկա թիկումքն է տեսել:
...Կաշտից քայլ առաջ պլացող Վահեն
Փլվում է, տնքում ու էլ չի ելնում:
...Երկաթ Սասումը,- ինձնից էլ ջահել,-
Արյունոտ դեմքը հավել ցուրտ քարին՝
Լա՞վ է, ասում է՝
Զուր լիներ, տղերք, ո՞նց կիսմեի: ⁵⁸

Այստեղ միջանկյալ պատմության ճենով խոսք է բացվում նաև թուրք գերու մասին: Դայ զոհյալը թուրք գերու ասածն է հիշում. «Ալլահը անգամ չի փրկի էլին, Եթե էլն ինքը դա չցանկանա»: Ժողովրդի (էլի) մասին է խոսքը: Զոհյալ հերոսը խորհում է «այդ խոսքի իմաստի մասին» եւ եզրակացնում.

Լինում են պահեր՝ քո տանն ու երկրում,
Բայց քեզ զգում ես մաշկի մեջ հյուրի... ⁵⁹

Այսքանից հետո բանաստեղծուիին բացում է կյանքի եւ մահվան փոխհարաբերության փակագծերը, նշում իմացյալ մահվան ապրեցնող ուժը: Այդ մղումով էլ բերված է հերոսի վերջին ընդհանրացումը.

Չեմ տեսել ես ինձ դեռ այսչափ սրափ,
Միաժամանակ եւ ինքնակորույս...
Երկնքի կապույտ արահետներում
Չեր լույսն եմ տեսնում,-ծա՞նր-ծա՞նր լույս,-
Դեպի որին էլ ձգտում է հոգիս... ⁶⁰

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Նվարդ Ավագյանի «Ռեքվիեմը» գրված է համազային ցավի թելադրանքով, ցավ, որ անանցանելի է, բայց եւ միաժամանակ ապրեցնող: Ժողովրդի զինվորյալ ու զրիյալ զավակի կարծ ու հերոսական կյանքի իմաստը երկիրն ու ժողովրդին պահպանելու, նրանց հարատեսվելու մեջ է: Լավատեսական այս մտահղացումն ու գաղափարական լուծումը կրկին ընդգծում են բանաստեղծութունը գեղագիտական իդեալի պայծառությունը՝ բխած ժողովրդի կենսափորձից, հարատեւելու վճռականությունից: Այս գաղափարի պոետական օրինակնի հյուսվածք է «Չայն ութերորդ» գլուխը՝ «Երովիր ինձ» կտակով: Պոեմի այս մասը մեր օրերի այրող պրոբլեմների ընդցումն է: Զոհյալը արդեն դիմում է զենքի իր ընկերոջը, որ պետք է ապրի ոչ միայն իր համար, այլև ծառայի ժողովրդի ինքնահատատմանը, երկրի լինելությանը, ապագայի հավատին: Զոհյալի՝ ընկերոջն ուղղած դիմումի մեջ հնչուն է.

Դու ի՞նչ գործ ունես Աշխարհում հեռու,
Թու տեղն այստեղ չի՝ ու չի էլ եղել,
Թո խոսքերն ու քեզ
Չեմ կարողանում ես համատեղել,
Շարքում ախր դու վերջինը չէիր՝
Քեզ էինք հաշվում մեր միջի սերուցք... ⁶¹

Ահա մեկը մյուսին հաջորդում են զրիյալի իմաստուն խորհուրդները, որ կարելի է համարել թեւավոր մտքեր. «Այն ե՞ր է դյուրին եղել մեզ համար, Յարկ չկա խուզել թեւերը հույսի», «Սեծ խնդիրների մասին մոռացած... Չսկսեք միմյանց ոտքի տակ փորել» եւ այլն: Պոեմի վերջերգի օրինակը «Յայկա տան հարատեւության» բաղձանքն է, որին նախորդել է երդվելու պահանջը... Դա «Ազատագրված մայր հողի վրա» իրեն տեր ու տնօրեն զգալու հրամայականն է.

Ապրես պիտի դու՝ կարգվես, տեր դառնաս
Արյան սերմ կոչված յոթը զավակի,
Որ շարունակես ծառայել Ցեղին՝

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Մշակը դարձած Արցախա հողի: [«]

Պատմության քառուղիներում մեր ժողովուրդը բազմիցս ճաշակելով հաղթանակների հաճույքը եւ ապրելով կորուստների ցավը՝ Եկել-հասել է 21-րդ դարին: Դայ գրողները միշտ էլ փորձել են իմաստավորել այդ բարդ ընթացքը: Նվարդ Ավագայնը եւս ծգտել է լուսաբանել այդ՝ դեռևս նոր արձարումներ պահանջող պրոբլեմը «Կեսարապատում» պոեմում: Եվ դա հաջողվել է նրան: Ընտրելով Երկիխոսության հնարանքը, բանաստեղծուիկն դիմում է նախ Յօնոմի կայսրերին, ապա հայոց արքաներին, մի կողմից խարազանում դավաճանությունը, անմիաբանությունը, դաժանությունը, անհեռատեսությունը, մյուս կողմից դրվատում իմաստնությունը, հայրենասիրությունը, գթարտությունը, ժողովրդասիրությունը եւ այլն:

«Կեսարապատում» պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջինն ընդգրկում է «Անկումից առաջ», «Յրդեհը», «Կալիգուլա», «Սուլլա», «Եվ դու՝ Բրուտոս», իսկ երկրորդ մասը՝ «Արտաշես», «Արտավագդ», «Արշակ Բ», «Պապ», «Աշոտ Երկար» եւ «Նավը ճանապարհին» բաժիններից:

Պատմության իմացությունը, կենսափորձը, ներքին ինտուիցիան, վառ երեւակայությունը բանաստեղծուիկուն հնարավորություն են տվել պատմական կոնկրետ անձնավորությունների, իրադարձությունների եւ գործողությունների հիման վրա կատարել գեղագիտական ընդհանրացումներ՝ ցուցաբերելով իր գմահատումներն ու վերաբերմունքը: Պոեմի հենց առաջին էջերից համենատվում են «Տաղանդը եւ ամլությունը», խարազանվում փորձության ժամին սեփական կաշին փրկելու մարդկային թուլությունը: Յեղինակը պատմության չափը է համարում տարփանքը, կաշառքը, դավաճանությունը եւ ըմրգծում: «Յօնոմի անկումը դատ չէր՝ Ղատաստան էր վերին» (Էջ 72): «Յրդեհը» բաժնում գմահատվում է Ներոնը, որ «վառեր պիտի

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

«Դումը ներսից, Դռումը՝ դարձած մի հսկա կերոն» (Էջ 74): Սակայն բանաստեղծուիին ոչ միայն բերում է փաստը, այլև տագնապում է պատմության ընթացքի համար.

*Երբ ու որտեղ էլ թե Դռոմ վառվի՝
Իմացեք, որ նույն
Ներոնի ձեռքն է:*⁶³

«Կալիգուլա» բաժնում ներկայացվում են կեսարների շարունակական ցոփությունն ու դաժանությունը, փառասիրությունը, որի հետեւանքը բնութագրվում է համոզիչ՝ որ «չափից ավել կերածը մի օր պիտի չմարսվեր» (Էջ 75): Սուլլան գնահատվում է որպես արյունախում կեսար: «Եվ դու, Բրուտոս» բաժնի հիմնական երակը դավաճանության խարազանումն է: Բանաստեղծուիին դավաճանությունը որակում է որպես «շեղված հոգու որս... նահանջ սուրբ հացից... հույսերի դահիճ» եւ ընդիհանրացնում.

*Այս վարքի հասցեն
Մարդն է անձնապաշտ ու եսակենտրոն,
Սի՞ վստահեցեք նրան ոչ մահիճ,
Ոչ այլ սրբություն,
Առավել եւս,-Աստված չարասցե՞-,
Երկիր եւ կրոն:*⁶⁴

Պոեմի երկրորդ մասում վերագնահատվում է Հայոց պատմությունը: Բանաստեղծուիին, ելնելով իր պատմահայեցողությունից, անցյալը գնահատում է արդիական պրոբլեմների շրջանակներում: Անդրադառնալով Արտաշես Արքային, նա սրտի ցավով ընդգծում է մեր կորուսյալ Սուշն ու Տարոնը եւ երազում ունենալ Արտաշեսի նման թագավոր: Երկխոսության մեջ մտնելով Սեծ Արքայի հետ, հեղինակը մեկ առ մեկ նշում է մեր ժողովրդի առօրյա ցավոտ խնդիրները՝ պանդիստվելը, հողը լքելը, ուժացումը եւ ընդգծում: «Հարա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՅՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Մտելումը տրված է նրան, իր ի վերուստը ով պահել գիտի» (Եջ 83): Մեր պատմությունը որակելով որպես «արյունով ներկված... ժամանակների դառը հոլովույթ», բանաստեղծուի իմ նշում է.

Գերվարար ջուրը կդառնա սելավ՝
Քշելով տամի հողը արմատից,-
Կորսվելիք շատից պահվող քիչն է լավ...
Արքա՛, դասերդ օ՞ղ են ականջի: ⁶⁵

Անդրադառնալով Արտավազդ թագավորին, բանաստեղծուի իմ բնաբան է բերում Արտավազդի իսկ խոսքը՝ ուղղված հորը. «Ավերակների վրա ես ինչպես թագավորեմ»: Բանաստեղծուի իմ մատնանշում է. «Բայց ավերակ չէր, որ քեզ կտակեց, Մեծ եւ կամ փոքր լինի երկիրը՝ Պահելու համար... մեծ պիտի լինես» (Եջ 84), չէ՞ որ «Ուժեղին ատում՝ թույլին չեն սիրում...»: Դարերի փորձից ելնելով՝ պոեմում խորհուրդներ է տրվում արքային. «Ազգը պահեիր հացիվ ու կեցիվ»: Արտավազդի ճակատագիրը դաս պիտի հանդիսանա «իշխանության հավակնողներին»:

Պոեմի «Արշակ Բ» մասում հեղինակը ցավով գրում է, որ «հեթանոսի մեր կարծր ոգին բաժանվեց մեզնից՝ մնաց կործանված մեհյանների տակ»: Անշափ նրբանալով, տանուլ տվինք հող ու գյուղ, հայ ռամիկը դարձավ «օտարին հոտաղ»: Նշվում է մեր շտապողականությունը եւ ցանկացած հարցում առաջինը լինելու ձգտումը, «Եր... մեզնից կարծիք չիմ էլ հարցնում»: Բանաստեղծուի խոսքը հնչում է որպես խորհուրդ՝ ուղղված սերունդներին. «Գետին մոտեցած՝ նժույգ չեն փոխում, դժվար գետանցով վարժ ծին է անցնում»: Ոչ միայն այդ.

Նետը ցած դրինք՝ երդվեցինք քարին,
Եվ աքիլեսյան մեր գարշապարը
Գտավ քշնամին: ⁶⁶

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Սակայն կորստի ցավն ընդգծելու հետ մեկտեղ բանաստեղծութին հարատեւելու առեղջվածն է բացում.

Ավարայրներ են պետք՝ որ ուշքի զանք՝
Դայկան աղեղով չափենք կյանք ու կանք...
Եվ ընդունենք, որ «ակմ՝ ընդ ական»-ը...
Նաեւ մե՞ր կարգն է՝
Եթե չենք ուզում ջնջվել աշխարհից:⁶⁷

Դայոց պատմության հերոսական եւ ողբերգական էջերի բանաստեղծականացումը դարերի փորձ ունի: Դայ դասականներից մինչեւ ժամանակակից գրողները անդրադարձել են եւ այսօր էլ շարունակում են անդրադառնալ մեր անցյալին՝ նրանում գտնելով սերունդներին հուզող հարցեր: «Կեսարապատում» պոեմի երկրորդ մասի «Պապ» գլուխը խմբրի հիմնալի լուծում է: Փ. Բուզանդի «Դայոց պատմության» վիպական դրվագները մեկ անգամ չեն հոլովել գեղարվեստական խոսքի շարանում: Վերիիշնը թեկուզեւ Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը: Ն. Ավագյանի անդրադարձը «Պապի գործունեությանը կրկնություն չէ, այլ այսօրվա սերնդին հուզող պրոբլեմների թելադրանք: Այստեղ, հիրավի, բանաստեղծութին ցուցաբերել է պատմությունն ինաստավորելու օրինակելի կարողություն: Խոսք բացելով հայոց երիտասարդ թագավորի՝ «Պապի եկեղեցական ռեֆորմների մասին, նա ընդգծում է իր համակրանքը դրանց հանդեպ: Անհրաժեշտ է նշել, որ Նվարդը ընդունել է Ստ. Զորյանի կարծիքը՝ թասած հռոմեացի պատմիչ Ամիանուսի գնահատականից: Վերջինս «Պապին համարել է խոհեմ ու հայրենասեր թագավոր: Դայոց աշխարհին կտրիճներ էին պետք, որն էլ ազգի գոյության պայմանն է.»

Եվ ջահեյ արքան հեռատես՝ ասաց.
Ազգի գոյության պայմանը եթե

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Պիտի որոնել... կանանց արգամղում
Կուսանոցները երկիր են քանդում:⁸⁸

ճիշտ է նկատում բանաստեղծություն՝ «Աստծո աչքից չվախենալով», Պապը ձեռնոց նետեց Աստծուն: Ժողովրդի, երկրի անկախությունը երազող թագավորը «Պտղաբերության տուն վերադարձեց Շուրջ երկու հայուր հազար կույսերի...»: Իրար հաջորդող յուրաքանչյուր տողի մեջ հեղինակն ասես նկարում է Պապի բնավորությունն ու երազը: Առասպելական դյուցազնի պես պատահի արքան «մեւեն հասուն... այր է րառնում». չհանրութելով օտարի կամքը, ճգում է ազգայնացնել հայոց եկեղեցին: Այստեղ հեղինակն ընդգծում է մարգարեների դժվար ճանապարհը, մարդկանց կուրությունը, ապա կրկին դիմում պոեմի հերոսին եւ մատը դնում արդիականության ցավոտ կետին.

Ավաղ, Պապ արքա, շատ բան չի փոխվել
Թո հեռու, անցած ժամանակներից,
Ազատ եւ անկախ ապրելով համար
Արյամք վճարելն օրենք է նորից,
Դարդ հիմն էլ՝ պղտոր գետ վարար,
Մենք՝ նրա անթիվ ալիքների դեմ
Կռվող գլաքարը...⁸⁹

Պատմության հնօրյա եւ նորօրյա հակասությունները շարունակվում են՝ եզրակացնում ենք պոեմից: Այդպես է եղել եւ այսօր էլ նույն գալարումներով շարունակվում է «Տան ներսում...» եղած կործանարար «Ոնանց վարքը»: «Չէ, Պապ թագավոր, չի փոխվել շատ բան... Մեր սխալները կոչում ենք չար բախտ»: Կենսափործի եւ գեղարվեստական խոսքի կուտակումների արդյունք է նաև պոեմի «Աշոտ Երկաթ» մասը: Աֆորիզմների մակարդակով տողերը հաջորդում են միմյանց՝ ընդգրկելով Աշոտ Երկաթի սխալները եւ հեղինակի՝ դաս հանդիսացող խորհուրդները.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Երբ երկրի տերն ես եւ օրենսդիրը,
Որքան հանդուզմ ես վճռում խնդիրը,
Նույնքան էլ քանկ ես վճարում գինը:

Կամ՝

Սեծության չափը իշխանությամբ չէ՝
Իմաստնությանը է որոշվում հաճախ,
Առանց խոր մտքի
Չի կարող լինել աշխարհում հանճար:

Կամ՝

Գերադասում է պետական շահն ով
Սեփական շահից՝
Վաստակում է եւ անունը մեծի... ⁷⁰

Պոեմի վերջին խորհրդանշական մասը բանաստեղծուիին անվանել է «Նավը ճանապարհին»: Ժողովրդի անվերջանալի ճանապարհի համար անպարտելիության թիկունք թագավորները նախ եւ առաջ պետք է համարեն Սեսրոպ-Սուշեղին, ասել է թե՝ գիրն ու թուրը: Ապա հնչում է կենսափորձի ինաստուն խորհուրդը.

Երկիր պահելը հեշտ լիներ թե որ,
Գուցե չէր ասվի խոսքը թեւավոր՝
Ծանր է... գդակը Սոնոմախի:
Կեսար, ականջիդ ոսկե օղ կախիր՝
Ով շատ վերեւից նայի ամբոխին,
Կղառնա զոհը նրա սուրբ ոյսի: ⁷¹

Ով չի հասկանում, որ «Դարձդարձիկ ճամփին պետական նավի Անպակաս են միշտ հարցերը կնճռուտ», եւ ով չկողմնորոշվի, թե ով է երկրի բարեկամը եւ ով՝ թշնամին, նա կխորտակի նավը: Սակայն

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

Քանաստեղծուիու խորհուրդը դրամով չի վերջանում, շարունակվում է մեջտեղ է բերվում թշնամու եւ բարեկամի հարափոփոխության խնդիրը, քանզի «Դարափոփոխ է... դեմքը աշխարհի»:

Եթե պետք լինի (քեզ չէ՝ քո երկրին),
Պիտի քայլես եւ սայրով նշտարի,
Եվ՝ սեղմես ձեռքը ոչ-բարեկամի՝
Թե օգնելու է ընթացքին նավի: ⁷²

Քաղաքական-դիվանագիտական գաղափարների պոետական խորհուրդները բխում են մեր իսկ ժողովորի ճակատագրից, հայոց ազգային ողբերգությունից: Դիշեցվում են 20-րդ դարասկզբի կորուստները: Մեր թշնամին, որ պարտվել էր մեծ խաղում, ասել է թե՝ առաջին համաշխարհային պատերազմում, «Դադթեց շնորհիկ իր... ճկունության՝ Շահեց գրազը քսաներորդ դարի»: Բանաստեղծուիուն հուզում է սերունդների ապագան, որի համար էլ կտակում է.

...Գալիք դարը գեթ որ լինի բարի,
Եվ ժողովածը էլ չտանք քամուն՝
Դա՞ս քաղենք կյանքից ի շահ մեր շահի՝
Ի՞ր իսկ գենքերով խիենք թշնամուն: ⁷³

«Մատյան հառներգության» ժողովածուն եկավ ապացուցելու, որ Նվարդ Ավագյանի ստեղծագործական կյանքը, իրոք, հասուն հասկերով ցորենվելու, սիրո տառապանքով գեղեցկանալու, ժողովրդի անընդմեջ «ոգորումներով ոգեշնչվելու», կորուստների ցավից եւ հավերժանալու հավատից իմաստնանալու իրաշալի ճանապարի է, որով կարող է հպարտանալ գալիք սերունդների հետ գրուցող յուրաքանչյուր տաղանդավոր արվեստագետ:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿԱՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԸ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Արցախյան ազգային ազատագրական պայքարը փառքով պահպեց հազարավոր ազատամարտիկների արյան գմով։ Արցախից մինչեւ Դայաստան եւ Սփյուռք արմատավորվել է մի սրբագույն ավանդույթ՝ հարսանյաց հանդեսներում լինի, թե տիսուր ծիսակատարությունների ժամանակ, ներկաները ռաջացին հերթին ոտքի վրա հիշում են նահատակներին, բաժակներ խփում՝ բյուրեղյա զնգոցների մեջ ասես լսում ապրելու, արարելու, մարտնչելու, սերունդների ազատ կյանքն ապահովելու նրանց խորհուրդը։ Եվ ոչ միայն այդ։ Արցախյան պատերազմի ամենաթեժ օրերից սկսած՝ հյուսվում է գոհկած հայորդների փառքը հավերժացնող անմահության երգը։ Չկա մի բանաստեղծ, որ արտահայտած չլինի ժողովրդի վիշտն ու կարոտը նրա բազում մարտիրոսվածների հանդեպ։

Դայ ժողովրդի հազարամյակների երթը նաքառումների եւ կորուստների, ակնկալությունների եւ վերածնվելու հարուստ պատմություն է։ Քերթող Եղիշեի «Մահ իմացեալ անմահութիւն է» դասը ժողովրդի կողմից ընկալվել է որպես ոգորումի կենսափիլիսոփայություն, որը ծածանվեց նաեւ Արցախյան գոյամարտում։ Սա սովորական կոչ չէ, այլ համոզմունք, որը վերածվում է պայքարի պատգամի եւ հաղթանակի ավիշի։

«Մահ իմացեալ անմահութիւն է» իմաստությունը ոչ միայն զինվորյալ անհատի հավատամքն է, այլեւ բնութագրում է ժողովրդական հոծ զանգվածների պատմական փորձն ու վճռականությունը իր իսկ հարատետումն ապահովելու ընթացքի մեջ։ Այս ոգով շիկացավ նաեւ 20-րդ դարի վերջին տասնամյակը ազգային արժանապատվության, ազատարադության, ինքնավստահության, վերած-

Նության դարակազմիկ ժամանակահատվածը: Ժողովուրդը ոտքի ելավ, ավարայրված եւ սարդարապատված Արցախը դարձավ պատվանուն: Նահատակների մի աճքող աստղաբույլ ապացուցեց, որ ազգի հարատեման ճանապարհին նոր Վարդաններ եւ Շունաններ են պետք: Այսպես, միաժամանակ ծնվեց նաեւ նահատակների փառքը դարերին հանձնող երգը, որպես երախտագիտության արտահայտություն եւ ոգեկոչումի դաս: Զոհյալ քաջերին նվիրվեցին բանաստեղծություններ, լեգենդներ, պոեմներ, ասքեր, ռեքվիեմներ, չափածո ակնարկներ: Դրանց կառուցվածքային առանձնահատկությունները ռեալիստական հիմք ունեն: Գեղարվեստական հյուսվածքների հերոսները զրիված ականավոր զրապետներ են, քաջարի շարքայիններ, բժիշկներ, բուժքույրեր, որոնք հանդիսանում են ժողովորդի խիզախության, հայրենասիրության, կենսասիրության, պատվի ու խղճի խորհրդանիշներ, սերունդների հավերժական ուղեկիցներ եւ դրոշակակիրներ:

1992թ. անվանի բանաստեղծուի Ս.Կապուտիկյանը ստեղծեց «Գանձասարի վաճիքի նորմոքը» ռեքվիենը: Ներկայացնելով Արցախի «արյունով ներկված դաշտերը, ձորերը, լեռները» նա սրտի մորմոքով գրում է.

*Որդիք, իմ քաջ որդիք, դուք մինչեւ Ե՞րբ մեռնեք,
Սեղք են ձեր մայրերը, այս մեղք եք դուք:*

Բիշտ է, պատերազմը տեղի ունեցավ Արցախ աշխարհում, սակայն դա հայ ժողովորդի միասնական ուժերով մղված ճակատամարտ էր, որ դեռ չի ավարտվել, շարունակվում է աշխարհի չար ուժերի թողտվությամբ: Արցախյան պատերազմը բռունքքեց աշխարհափյուռ հայ ժողովորդին՝ կրկին կարեւորելով Մեծն Զարենցի մարգարեական իմաստությունը «Ով հայ ժողովուրդ՝ քո միակ փր-

Կությունը քո հավաքական ուժի մեջ է»: Մեր մղած արդարացի պատերազմուն Երկրի ազատության գոհասեղանին իրենց գլուխները դրին Արցախում, Հայաստանում, տարբեր գաղթօջախմերում բնակվող հայ ժողովրդի քաջազուն զավակները: 1992թ. Մարտակերտի ազատագրական կողմների ժամանակ զոհվեց երեւանցի երիտասարդ բանաստեղծ Սամվել Շահմուրադյանը: Ավասոսանքի եւ ցավի մի սարսուռ անցավ նրան ճանաչողների սրտերով: Ս.Կապուտիկյանը հյուսեց հիշատակի իր երգը.

Լավերն են գնում, լավագույնները,
Իսկ դու լավերից լավագույնն էիր:
Ու քո գնալով պակասեց սերդ,
Պակասեց լավը, պակասեց բարին:
Եվ քո ի՞նչ տեղն էր մահերն ու մարտը,
Քոնք գրիչն էր, լոյս ու արարում:
Տեսնես գիտե՞՞ր քեզ սպանող մարդը,
Որ դու, դու, մարդուն շա՞տ էիր սիրում:

(«Սամվել Շահմուրադյանին»)

Տաղանդավոր բանաստեղծ Ռ.Դավոյանը, հոգու մեջ առնելով Հայոց Արցախի ցավը, հյուսեց հայտնի «Ոեքվիեմը»: Նա, նժարի վրա դնելով հազարամյա մեր վերքի կսկիծը, խոնարիկում է մարտիրոսաձների առջեւ, նրանց համարում ապրողների հոգու եւ երազանքի շարունակություն.

Նրանք կենդանի մեր մարմինն էին,
Մեր հասկը եւ կամ ցողունը շքեղ,
Մեզնից չպոկված մտան գերեզման:

Բանաստեղծը տառապում է իմաստուն ցավով, որից էլ ծնվում է պայքարի երգը: Աստիճանաբար պոեզիայի մեջ մտան Ավոն (Սոնթե Սելքոնյանը), Բեկորը (Աշոտ Ղուլյանը), Նորիկ Ղանիելյանը,

Վ.Բալայանը, Ար. Չակորյանը, Ի. Չասրաթյանը, Կ. Չակորյանը եւ այլ քաջազուներ: Բանաստեղծները անմիջապես գրեցին սրտառուչ երգեր՝ նվիրված անմահների հիշատակին: Տպագրվեցին Վ. Չակորյանի «Բեկոր լուսի», «1992, ինը մայիսի», «Չայրենական» (Ս. Դանիելյանի հիշատակին), «Զրաբերդ» (Վ. Բալայանի հիշատակին), Շ. Բեգլարյանի «Մոնթե-Ավո», «Անմահություն» (Կ. Չակորյանի հիշատակին), Գ. Գաբրիելյանի «Ավո», «Բեկոր», «Սամվել Շահմուրադյան», Ս. Խանյանի «Նա պիտի գա» (Ար. Չակորյանի հիշատակին), «Բեկոր», «Ավոն», «Քո կյանքը սխրանք էր» (Յու. Զհանգիրյանի հիշատակին), «Կյանքը լեզենդ» (Ս. Գետրագյանի հիշատակին) բանաստեղծությունները, Դ. Միքայելյանի երգաշարը, Ռ. Եսայանի, Ն. Գասպարյանի եւ այլ պոետների գողտրիկ հյուսվածքները, Ե. Եսայանի «Զորավար Ավո» ստեղծագործությունը: Բեկորը գոհվեց 1992թ.: Բայց սկիզբ առավ հերոսի նոր կյանքը: Ինչպես Վ. Չակորյանն է հաստատում՝ Բեկորի ետեւից ասես «Լեռը բեկորվում է», «արեւը հրանոթի փող է»... Չազար ափսոս, որ էլ «չի քաշվելու մատը ձգանից», ավա՞ն...

*Ծարակ շուրթերը կան են հողին,
Եվ պար են բռնել հրեշտակները...*

Սակայն այդ բազմաշուրթ ափսոսանքի հենքի վրա հառնում է բանաստեղծի հավատը՝ ծնված Բեկորի հավիտյան ճառագող սրտից.

*Զարկս իջնում է Մհերի ժայռին,
Եվ ելնելու է՝ ով պիտի ելնի,
Եվ հողն Արցախա աղոտվում է լուր,
Եվ ես թեւեր եմ ծեւում իմ վշտից,
Եվ բերդս տուն է՝ Տաճար Աստուլ:*

(«Բեկոր լույսի»)

Վ. Շակորյանը սրտի ցավով է հիշում եւ Արցախի մի ուրիշ կորյունի՝ Վլադիմիր Բալայանին: Բանաստեղծը նահատակ Վլադիմիրին եւ մյուս զոհյալներին համարում է գալիք ճանփաների փարոսներ, ընդգծում, որ նրանց ոգեշնչումով «Վրնջում են միանգամից հազար ձիեր...»: Եվ ոչ միայն այդ.

Առավոտը իր ցողունի վրա դրդաց,
Քար ու կողակ խաչենն ի վեր հուր եմ տանում,
Վերքից կաթած ցավը վանքի քարին ծլեց,
Ճաքած սիրտը նորան բոց է աշնան կրծքին,
Սուրբ Սոսեի ձեռքը զանգի թելն է քաշում...

(«Զրաբերդ»)

Սոսեի ձեռքով դողանջող զանգը հավերժության շուրջերին հնչող երգն է, որ փայփայում է ոչ միայն Բեկորի, այլև նահատակված մյուս աստղերի ապրեցնող, ջերմացնող անունները: Այդ սրբացած անունները խոսող արեգակներ են դարձել Գ. Գարդիելյանի երգերում: Նա ընդգծեց, որ «Նվիրյալ որդիք Շայոց Արցախի» արծիվները դարձած՝ «ըմբռատացան անվախ, անվեհեր»: Բանաստեղծը ընդհանրացնում է.

Շամուն մայր հողի քաջերը ընկան,
Արցունք բերելով մեզ դառն ու աղի...
Բայց արդ կովում են շիրմից էլ անզամ
Նահատակ որդիք հայոց Արցախի:

(«Որդիք Արցախի»)

Գիտակցված նահվան գաղափարը բանաստեղծական

Մարբեր երանգներով, իրական դեպքերի հենքի վրա մարմնավորեց Գ.Գաբրիելյանի «Որդեկորուս մայրը», «Որբի երազը», «Ձրույց նկարի հետ», «Խսնդիրք դիմանկարի առաջ» եւ այլ երգերում, ինչպես նաև «Անդրանիկ», «Ողջակիզված կյանք», «Մեր Գագույան», «Մուսա լեռան երկու որդին» չափածո ակնարկներում: Բանաստեղծն առաջին փորձերն արեց ստեղծելու արցախյան նորաստեղծ բանակի առաջին գինվորների՝ իրենց կյանքը հայրենի ազատությանը նվիրված Անդրանիկ Սողոմոնյանի, Վալերի Բալասանյանի, Գրիգոր Առատամյանի, Վազգեն եւ Վարդան Գրիգորյան Եղբայրների կերպարները:

Դայ գրականության ավանդույթների հոլովույթներում քիչ չեն ողբերգական էջերից քամվող արարումի լույսն ու հարատեւման հույսը: Օրինակ՝ Խորենացու «Ուրբը», Դավթակ Քերթողի «Սեծ իշխան Զիվանշիրի մահվան ողբերգը», Ն.Շնորհիալու «Ուր Եղեսիոն», Դ.Թումանյանի «Ճոգեհանգիստը», Ե.Չարենցի «Դանթեական առասպելը», Դ.Շիրազի «Դայոց դանթեականը», Պ.Սեւակի «Անլռելի գանգակատունը» եւ այլ գործեր:

Արցախյան պատերազմի ամենաողբերգական էջերը կապված են ժողովրդի առյուծասիրտ զավակների անձնուրացության հետ: Նրանց ծնող ժողովուրդն էլ լավ է գիտակցում, որ զոհաբերության գնով է ձեռք բերվում ազատությունը: Տողերիս հեղինակի՝ նահատակ քանդակագործ Արմեն Շակոբյանին նվիրված «Նա պիտի գա» բանաստեղծությունը ավարտվում է նման գաղափարի ընդգծումով.

Նա պիտի գա նահատակված ընկերների շքերթի մեջ,
Նա պիտի գա հուշարձանված, եռագույնը պահված ուսին,
Նա պիտի գա, որ հավերժվի սերունդների երգերի մեջ:

(«Նա պիտի գա»)

1993թ.-ին, չարաբաստիկ մի օր, միայն Ստեփանակերտ քաղաքից ժողովուրդը չորս տասնյակ զոհյալների հանձնեց հողին: Իսկ եւ իսկ մոհավանջ: Սակայն սուլր նահատակմերին հուղարկավորելով՝ ապրողների հույսը չէր թաղվում հողում: Ընդհակառակը, հարազատի, հայրենակցի մի չքնող ցավ ծուլվում էր նրա արյանը, երբ չորս բոլոր տեսնում էր սեւաշոր երիտասարդ որբեայի կամանց, որը երեխաների, սգացող ծնողների, քրոջ, եղբոր մոլորված քայլերը, արցունքուտ աչքերը, ժպտացող հայացքը... Էլ ի՞նչ բանաստեղծ, եթե նա շրջանցեր համաժողովրական այս վիշտը, չասեր ցավի եւ հույսի իր խոսքը, որի ինքնատիպ արտահայտություն հանդիսացավ Վ. Հակոբյանի «Գողգոթա» քնարական պիեսնը:

Բանաստեղծը, հենվելով ժողովրական սգո երգերի թրիխներին, ումկնդրելով սգվոր կամանց մղկտոցները, արտահայտում է իր բողոքը աշխարհի չարության դեմ: Պոեմի հերոսուհին՝ Այրին, «Բորիկ ոտքերի արյան ցոլերը թողնելով քարերին, իսկ փեշը՝ լացի մեջ աչքերը կորցրած տղեկի բռան մեջ, հանում է թումբը հեռավոր...»: Դենց այս հողաթմբից էլ բանաստեղծը լսելի է դարձնում կյանքի ընկերներին կորցրած այրիների մորմոքը:

Ցավի ալեկոծումը շարունակվում է: Սգացող այրին կմոջ-մոր կերպարից հառնում, ժողովրդի եւ հայրենիքի դեմ առ դեմ կանգնում է աստվածային եռթյամբ, քաղաքացու, գինվորի կերպարով: Վ. Հակոբյանը քնարական շեղումների միջոցով մեծարում է Զոհվածին՝ ազատարտիկ Վարուժանին: Պոեմը մեր բոլոր նահատակմերի հանդեպ եղած անմար սիրո եւ երախտիքի արտահայտություն է, հերոսներին ուղղված սրբազն պատգամ.

*Սարդիկ, լսեցեք, մարդիկ, դուրս եկեք,
ժողովրդ, աչքը լույս,
Նահատակմերը, տեսեք, գալիս են:
... Վերադառնում են նահատակմերը:*

Վ. Հակոբյանը «Գողգոթա» պիեսից հետո գրեց «Քրիստոսի ծա-

«Դիկները» ասքը: Նկարագրելով Արցախը որպես «Երկիր սրբավայր»՝ բանաստեղծը պատկերում է ազատագրական պայքարի ընթացքը՝ ժողովրդի հաղթական միրանքներով եւ կորուստների ցավով: Ապրում-պատկերի ինքնատիպ հյուսվածքով ներկայացվում է նաև Արցախի պետհանալսարանի նահատակված ուսանող Կոմիտաս Հակոբյանի կյանքի հետ կապված ռեալ սիրո պատմությունն ու եղերական ավարտը: Կոմիտասը սիրում է համակուրսեցի Նունեին: Նրանք պետք է հանձնեին նախապետական քննությունները եւ ապա մասնակցեին ավարտականին: Սակայն զոհվելու բոթը աղդարարեց, որ Մարտակերտում նահատակվել է առյուծասիրտ զինվոր-ուսանողը: Հիշեցնելով այս դեպքը՝ Վ.Հակոբյանը ստեղծում է պատերազմող Արցախի պատկերը.

Ուր Կոմիտաս Հակոբյանը՝ Բանաստեղծ է ու զինվոր,
Որքան էլ այինդ, ամուր բռնի իր Նունեի երազներից՝
հարսնամոմի մեջ տաք-մեղրախոսուն, միեւնույն է՝
իր բռան մեջ մմացել է միայն մի ծամ՝ վարսերի փունք
(Երբ ամփոփում էին հողում իր սիրածին, իսկ մինչեւ հարսանիքն
ինը օր է մնացել ընդամենը),
Նունեն, որպես վերջին ընծա, կտրեց իր ծամը
ու զոհված զինվորի մատների մեջ «տեղադրեց» ծաղիկների
հանգույն,
որի անվերջ գուրգուրանքից շիրմի վրա աստղավորվում է
կարոտը,
եւ հողը դառնում է զարմանալի բուրիչ ու անդավաճան...

(«Զրիստոսի ծաղիկները»)

Սուրբ նահատակներին նվիրված երկերի մեջ ընդգծված երանգներ ունեն Ն.Ավագյանի «Տիրոջ հետո» եւ «Ոեքվիեմ» պոեմնե-

Դը: Դարաշրջանի խաղերի, դաժանության, տառապանքի փոխհարերությունների օգնությանք բանաստեղծությունների կատարում է կենսական ընդհանրացումներ:

Անդրադառնալով նահատակների սխրանքներին՝ Ն.Ավագյանը այսօրվա ճանապարհին հստակորեն տեսնում է նրանց հարություն առաջ ոգին:

Արցախյան պատերազմի նահատակ, լեզենդար Ավոյի մասին գրվել են բազմաթիվ արձակ եւ չափածո երկեր: Տողերիս հեղինակի «Նահատակ լուսո» պոեմը նախ տպագրվեց թերթերի եւ անսագրերի էջերում, ապա՝ «Իմ ծիածանը» ժողովածուում: Ժանրային առումով «Նահատակ լուսո»-ն հերոսական պոեմ է՝ քնարական շնչով: Ստեղծագործության նյութը իրական է: Գլխավոր հերոսը զորապետ Մոնթե Մելքոնյանն է, համապատկերը՝ զորագնդերի մահու եւ կենաց գոյանարտը ազերի զավթիչների դեմ: Փառաբանվում է լեզենդար Ավոյի կյանքն ու արտասովոր սխրանքը: Ավոյի համառոտ կենսագրությունը, Արցախյում պատերազմական գործողություններին մասնակցելը հիմնական ատադ են ծառայել պոեմի համար: Նրանում պատմական էքսկուրս է կատարվում եւ ապացուցվում, որ ազերին անցյալ չունի ոչ Արցախյում եւ ոչ էլ Կովկասում: Նրանց նախահայրերը Ալիք Արսլանն ու Լենկ Թեմուրն են: Նոր ժամանակներում թուրքամետ խորհրդային ղեկավարները Նախիջենանն ու Արցախը նետեցին նորաթուխ Աղրբեջանի երախը: Պատմության այս փաստերի ցուցադրումով ընդգծվում է արցախյան զինվորի հերոսականության ակունքները: Ահա թե ինչու Ավոյի յուրաքանչյուր խոսք ոգեշնչում էր իր զինվորներին եւ տանում հաղթանակների: Ավոն հայրենասեր է, ժողովրդասեր, ընկերասեր, թշնամու հանդեպ անզիջում, հայրենի օջախի պատիվն իմացող: Պատերազմի ժանր օրերին ընթերցողներին հայտնի դարձավ նաև Ս.Խանյանի «Միեր»

պոեմը՝ նվիրված նահատակ հերոս, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ Մհեր Դանիելյանի խիզախությանը:

Արցախյան պատերազմում նահատակված քաջերի մասին ստեղծված հերոսապատումի հաջողված էջերից է Ն.Մովսիսյանի «Մարտնչող անմահություն» պոեմը: Գլխավոր հերոսը Ավոն է: Բանատեղը նկատում է, որ զորապետ Ավոյի մահը սկիզբն է մարտնչող Ավոյի անմահության:

*Ով չգիտե՞ թող իմանա...
Մարդու կյանքը իր իսկ մահով
Չի վերջանում:*

Ժողովրդական բանահյուսական արտահայտչամիջոցներով Շ.Բեգլարյանը «Սոնթե-Ավո» պոեմում Ավոյին համարում է մեր օրերի քաջ ֆիդայի, որ «Ամերիկյան հեռուներից» հասել է Արցախ՝ ամբողջ հայ ժողովրդի ավանդական օջախներից մեկը:

Արցախի հանդեպ եղած սերը բանատեղը համեմատում է «Սինամ հավքի» հերիաքային կանչերին, որ Ավոյին «ինքնակամ, ինքնաբուխ Արցախսական աշխարհը բերեց» եւ ժողովրդի կողմից ընդունվեց որպես Աստված, որպես «մի նոր Սասնա Դավիթ»՝ «Թուր Կայծակին» ծեռքին: Սելջուկ-թուրքերի զարմանքը, վախը նկարագրված է Էպոսային հումորի գույներով: Մյուս կողմից էլ ընդգծված է մեր ժողովրդական սերն ու հավատը լեզենդար որդու հանդեպ.

*Սոնթե-Ավո,
Սոնթե-Ավո,
Լեզենդ դարձած մեր սրբություն,
Դայի տղա,*

Յրաշք տղա,
... Դու հույս ու լույս,
Ժպիս ու հույզ,
Դու աճարատ,
Մեր սուրբ հավատ,
Դու բռումցը մեր բազկի,
Վերջին հույսը ժողովրդի...

Յարց ու պատասխանի ծեւով բանաստեղծը կերպավորում է անմահ զորապետին, որպես ժողովրդի ցավից ու ճիշից ծնված դյուցագում՝ գորշ գայլերի դեմ մարտնչող արդարության եւ ուժի մարմնացում: Ավոյի շրթերին հնչում է մարտական վճիռը.

Դիմա ի մա՛րտ,
Ի զե՞ն, տղերք,
Զարկին նոր զարկ,
Սահին նոր մահ...
Դողն ազատենք
Ազերներից,
Մեզ համար ցավ-ազարներից...

Դեռևս «Արցախի եմ ես» գրքում (1990) Ա.Թովմասյանի քնարական հերոսը իրեն ներկայացրել է որպես հայրենիքի ճակատագրով ապրող, նրա ազատության եւ անկախության համար մարտնչող զինվորյալ: «Զգույշ քայլենք, մարդիկ!» (1998) ժողովածուում այդ նույն հերոսը համդես է գալիս որպես պատերազմական հրդեհ-ների մեջ իմաստնացած քաղաքացի: Նրա հոգում մի կողմից հպարտության զգացումն է ծնվում կապված հայրենիքի պաշտպանու-

թյան հետ, մյուս կողմից՝ Երախտագիտությունը՝ նահատակված ըն-
կերների հանդեպ:

Դամանում զրբի «Զգույշ քայլեք, մարդիկ» բանաստեղծությու-
նը վերջին տարիներին գրված սրտառուչ ռեբվիեմներից է: Նրանում
քնարական հերոսի անմար կարոտն ու ափսոսանքը Արցախյան
պատերազմում նահատակված հայ քաջազունների հանդեպ վե-
րածվում է Երախտագիտության զգացումի, որը հնչում է որպես հոր,
եղբոր, ընկերոջ անունից ասված սրտառուչ խոսք: Ժողովրդի անու-
նից հնչում է այն գաղափարը, որ նրանք միշտ այցելում են ապրող-
ներին, որոնք էլ Երախտիքով ասում են. «Նրանց աչքերում այդ մենք
ենք, որ կանք», որ նրանց «Դպրատ հայացքում սուրբ Երազներ
կան», որ նրանք «փնտրում են գարնան ծաղիկներ» ու չպետք է մո-
ռանալ երբեք Նահատակներին: Այս խորհուրդները ուղղված են
նաև գալիք սեղունդներին, որպես սրբազն պատգամ.

Խոնարհվենք կրկին

Ու լռենք, լռենք

Զգույշ լռենք, մարդիկ,

Զգույշ լռենք:

Այդ լռում ենք միայն

Նրանց փոխարեն,

Նրանց փոխարեն, մարդիկ,

Նրանց փոխարեն:

Արցախյան պատերազմում նահատակված հերոսների անունն
ու իիշատակը հավերժացնող գեղարվեստական ստեղծագործու-
թյուններում Երախտագիտության զգացումներին զուգահեռ հնչում
է ցասումը մեր դարավոր թշնամիների դեմ: Այդ զգացումը վերացա-
կան չէ: Դայոց Արցախ աշխարհի դեմ 1988-ին առաջինը գենք բարձ-

Դրացրին ազերի-թուրքերը: Մեր բանաստեղծները, իիշելով գոհյալ-ներին, հակապատերազմական իրենց խոսքն են հնչեցնում:

Ինչպես Ա.Թովմայամն է ընդգծում. «Պատերազմում եմ քո դեմ, պատերազմ»: Բանաստեղծը, սակայն չի մոռանում, որ գոհյալ-ների արյամբ նվաճված ազատությունը պահպանել է պետք, որի երաշխիքներից մեկն էլ նահատակների հիշատակը վառ պահելն է.

*Դայրենի հողիս
Ամեն բեկորում
Արյուն կա կարած...
Դիշենք նրանց, Սայր հողը միայն
Նահատակների
Մրսով է շնչում:*

Նահատակների սրտով շնչող հայրենի հողը, որպես ժողովրդի հավերժության օրրան, միշտ լեզու առած խոսելու է սերունդների հետ, իսկ ստեղծագործողներին՝ մղելու նահատակների հիշատակը հավերժացնող նորանոր երկերի արարման, որոնցում գոհյալները քայլելու են շարքերի առջեւից՝ ինչպես եղել են կյանքում... Այս հրամայականը հնչել է, հնչում է եւ պիտի հնչի ապագայում:

ԱՅԱՆՔԻ ԱԿԱՐՆԱՆՈՒՄ



Կնոջ Մարգոյի հետ



Ելույթի պահին



Թոռնուկիմ Ելենա Խանյանը

ԱՅԱՆՔՆ ԱԿԱՐՆԱՌՈՒՄ



ՈԵԿՈՒՐԱՏԻ անդամները շնորհավորում են հոբեյարին



Ս.Խանյանը վարում է հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի նիստը:
(1990)

ԱՅԱՆՔԻ ԱԿԱՐՆԱՌՈՒՄ



Առաջին շարքում ձախից երկրորդը՝ Փրանսահայ Գրողներ Զուլալ Կազանչյանը,
Արվի Թոթոյանը, Գրիգոր Պլտյանը ԼՂՀ գրողների հետ



Գրականագետ Գ.Սարգսյանի հետ




Լեզվաբան Ե.Մկրտչյանի հետ

ԱՅԱՆՔՆ ԱԿԱՐՆԱՌՈՒՄ



Աջից՝ Ս.Խանյանի աներձագը՝ փիլիսոփայության պրոֆեսոր Ա.Յովսեփյանը,
կինը (հանգուցյալ) Սրբուհին, ձախից որդին Սուրենը



Աջից՝ Ս.Խանյան, Գ.Բաղդասարյան, Օ.Եսայան (1988թ.)

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՔՆԻՄ

Նորագույն շրջանի հայ մանկական գրականության բնագավառում իր նախորդմերի ավանդույթները շարունակողմերի շարքում առանձնապես աչքի ըմկավ Գուրգեն Գաբրիելյանը:

Նա Լեռնային Ղարաբաղի գրական ջոկատի միակ մերկայացուցիչն է, որ գրաղվում է մանկական գրականությամբ: Նրա ավելի քան երեսուն գրքերը, Մոսկվայում եւ Քիշնեում հրատարակված ուսութեան եւ մոլորակերեն ժողովածուները լայն ճանաչում են բերել հեղինակին: Համարձակորեն կարելի է ասել, որ Ժամանակակից հայ դպրոցներում եւ մանկապարտեզների բարձր խմբերում չկա մի երեխա, որ չիմանա Գաբրիելյանի անունը, ծանոթ չլինի նրա «Այբուբենը երգերի մեջ» գրքին:

Որպես մանկական բանաստեղծ, Գաբրիելյանը ձեւավորվեց 50-ական թվականների վերջերին: Նա գրում էր եւ մեծերի համար, եւ փոքրերի: Սակայն գրական շրջապատը, տեսնելով նրա անժխտելի կարողությունն ու հաջողությունները մանկական գրականության բնագավառում, նրան մղեց դեպի այդ պատվարեր գործը: Գ. Գաբրիելյանը համոզված էր դրանում: Մանկական աշխարհին ամենից հետաքրքիր, միաժամանակ այնքան էլ ոչ հեշտ ասպարեզ է: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ քչերին է հաջողվում աչքի ընկնել այդ աշխարհում: Եթե մեծերի համար գրող հայ դասականները մի բանակ են կազմում, ապա մանկական գրողներին մատների վրա կարելի է հաշվել: Ղ. Աղայան, Յ. Թումանյան, Ա. Խնկոյան. ահա հայ մանկական գրականության դասականները: Ինչ վերաբերում է նորագույն շրջանի մանկական բանաստեղծներին, ապա Յ. Հայրապետյանից հետո հանդես են եկել Ո. Ղարիբյանը, Վ.

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Տայանը, Ս. Մուրադյանը, Պ. Խաչատրյանը, Յու. Սահակյանը, իսկ
Արցախում՝ Գ. Գաբրիելյանը:

Գ. Գաբրիելյանի առաջին գիրքը՝ «ճուտիկներ» խորագրով,
լույս է տեսել 1960թ., Երեւանում: Հենց իր առաջին ժողովածուվ
նա լավ հայտ ներկայացրեց: Առկա էր մանուկների աշխարհը ճա-
նաչելու, նրանց հոգեբանությունը հասկանալու, հետաքրքրություն-
ների շրջանակներն ընդգրկելու կարողությունը: Դրան մեծապես
նպաստել էր այն, որ նրա՝ մանկական գրականություն բերող ճանա-
պարհը անցել է դպրոցով: Մանկավարժն ու մանկական գրողը հա-
մաշափ գուգորդված ու միաձույլ են Եղել Գաբրիելյանի մոտ: Ահա
թե ինչու մանկական գրականության նպատակների եւ խնդիրների
գեղարվեստական հստակ արտացոլումը երեւում է հենց առաջին
գրքում: ճիշտ է, «ճուտիկներ» ժողովածուի ոչ բոլոր բանաստեղ-
ծություններն են հավասարարժեք: Սակայն նրանում արծարծված
թեմաները երեխաների ընկալումներին հոգեհարազատ, նրանց
դաստիարակությանը նպաստող մոտիվներ են: Աշխատասիրու-
թյան, երախտագիտության, մտերմության, կարգապահության, հա-
մեստության եւ այլ խնդիրների մասին է խոսում հեղինակը իր առա-
ջին ժողովածուում:

Մանկագրին հատուկ մի բնորոշ գիճն այստեղ այն էր, որ նա
այդ թեմաները չարծարծեց մաշված ու հնացած պատկերներով: Նա
իր շրջապատում տեղի ունեցող երեւությունների միջոցով է արտահայ-
տում իրեն հետաքրքրող գաղափարները, ձգտում ինքնատիպու-
թյան: Նրա առաջին՝ «ճուտիկներ» ժողովածուն ազդարարեց, որ
նորագույն շրջանի հայ մանկական գրականություն է մտել իր
մկանամբ խառապահանջ ու երեխաների համար հետաքրքիր մի
բանաստեղծ: Մուտքը հաջող էր, ուրախացնող: Նա ընթերցողների
սպասելիքներն արդարացրեց իր երկրորդ՝ «Մեր գյուղի առավտուց»
գրքույկով: Նախ՝ գրքի վերնագիրը պատահական չէ: Ղարաբաղի

ՄԱՆՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Ժաղկաբույր լեռներում հասակ առած, գյուղական կյանքով կոփված, գյուղական դպրոցում մանկավարժի մկրտություն ստացած մանկագիրը գրականություն բերեց առաջին հերթին իրեն հարազատ աշխարհը: Այդ աշխարհը մինչեւ հինա էլ մանկագիրը ներկայացնում է իր երգերում:

Բանաստեղծի երգերում երեխաներին դաստիարակողը մեծերն են՝ պապը, տատը, ավագ եղբայրը, քույրը, բնությունը՝ ծառերը, ծաղիկները, այսինքն, այն ամենը, ում եւ ինչի հետ ամբողջ օրը ընկերություն է անում երեխան: Երեխաներին հետաքրքրող հարցերի պատասխանն են տալիս բոլորը, իսկ իր շրջապատը նոր ճանաչող փոքրիկը իրեն տված հարցին սպասում է սիրով եւ բավարարվում է պատասխանով: Սակայն դաստիարակությունը քարոզելով չի ընթանում: Բանաստեղծի առավելությունն այն է, որ նա իր երգերում երեխաներին, ում միջոցով էլ լինի, խելքը պատասխաններ է տալիս, դաստիարակողը, համոզող, ջերմացնող պատասխան: «Գարնան մի գիշեր» ոտանավորում թոռնիկը պապին հարցնում է, թե ինչպես է, որ տրակտորը աշխատում է ամբողջ գիշերը, մի՞թե տրակտորիստի քունը չի տանում: Պապը պատասխանում է.

- Բալիկ, երբ մարդ իր գործին

Սրտով է կպչում,

Այնժամ նրա աշքերի

Քունն էլ է փախչում:

Փոքրիկ հերոսն իր պատասխանն է լսում, միաժամանակ եւ պապիկից մի մեծ խորհուրդ է ստանում՝ սիրել ընտրած գործը: Աշխատանքային դաստիարակությունը Գարդիեյանի ստեղծագործական խառնարանի առյուծի բաժինն է կազմում: Եվ դա հասկանալի է: Նրա ընթերցողները փոքրիկներն են, նրա ապագա հերոսները: Աշխատանքն է զարդարում աշխարհը, նրա միջոցով է մարդ հաս-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄԱՐ

Նում իր նպատակին: Ահա այս միտումով էլ բանաստեղն առաջ Է տանում իր գրույցը փոքրիկների հետ: «Անտառը՝ այգի» բանաստեղ-ծությունն այդ միտքը հաստատող լավ գործերից է: Անտառի վայրի մրգատու ծառերի պատվաստման հարցն է շոշափված այստեղ: Սակայն կոնկրետ այդ գաղափարի բանաստեղծական ընդհանրացումն ավելի հեռուն է տանում ընթերցողին: Նա լավ գործի, բարի գործի գովքն է լսում.

*Անտառն այգի... ի՞նչ կա է
Սրանից լավ ու բարի,
Մեծ գալիքը թող մեզ է
Սրա համար մեծարի:*

Գ. Գաբրիելյանը հավատում է իր մանուկ ընթերցողների կարո-դությանը: Նա չի խորշում բանաստեղծական էպիտետներից, համե-մատություններից, դաստիարակչական խոսքը պատկերների միջո-ցով ասելու գեղարվեստական հնարանքից: Թեկուզ մանկագիր ըն-թերցողները հիմնականում նախադպուցական տարիքի երեխաներ են, բայց նա արհեստական եւ ընդգծված սահման չի քաշում իր տարբեր տարիքի հերոսների միջեւ: Յենվելով իրեն ունկնդիր լսա-րանների վրա, Գաբրիելյանն ասում է իր անկաշկանդ խոսքը եւ հասում նպատակին: «Մեր գյուղի առավոտը» բանաստեղծությու-նը գյուղի առօրյան ներկայացնող մի հիմնալի պատկեր է, որի օգ-նությամբ երեխան ճանաչում է աշխատանքի շնչով արթնացող իր հայրենի գյուղը: Աշխատասիրության թեման արծարծված է նաև «Ուլիկ», «Աշեի բաղնիքը», «Լսելոք մեքենան» բանաստեղծություն-ներում:

«Մեր գյուղի առավոտը» գրքույկն աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ: Սակայն թեմաների բազմազանությունը չէ, որ ապահովել է գրքույկի հաջողությունը: Գ. Գաբրիելյանը լուրջ

ՄԱՆՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Հաղորդյուն է դարձնում բանաստեղծական կատարելությանը։ Լեզվի հստակ պատկերավորությունը, ասելիքի կոնկրետությունը, երեսաների աշխարհներակալմանը հարազատ ու տպավորվող բանաստեղծական ընդհանրացումները մանկագրի մաներաներն են։

Մանկական գրականության մեջ հումորը մեծ նշանակություն ունի։ Հումորի միջոցով քննադատվում են ծովությունը, սնապարծությունը, երախտամոռությունը եւ այլ արատներ։ Հումորը Գ. Գարդիեյանի ստեղծագործական խառնվածքի մշտական առողջ երակներից է։ Այն զգացվել է նեռեւս առաջին գրքում։ Երկրորդ՝ «Մեր գյուղի առավոտը» գրքում ավելի նկատելի դարձավ այն։

Գարդիեյանի ստեղծագործական խառնվածքի այդ առանձնահատկությունը ժամանակին նկատել է անվանի մանկագիր եւ գրականագետ Խ. Գյուլմազարյանը։ Նա գրել է. «Հումորը, սրամտությունը մանկական բանաստեղծության երկրորդական ատրիբուտներից չեն։ Մաքսիմ Գորկին «ուրախ գիրք» էր պահանջում մանուկների համար։ Այդ ուրախությունն ու սրամտությունը պետք է անսպասելի, անակնկալ լինեն։ Այս տեսակետից հաճախ մանկական բանաստեղծությունը նմանվում է նովելի՝ իր անակնկալ վերջաբանով։ Այս բանի լավ օրինակ է տալիս Գուրգեն Գարդիեյանը»։

Թե առաջին եւ թե երկրորդ գրքերում Գ. Գարդիեյանը ցուցադրեց հումորի ընկալման եւ բացահայտման իր սեփական առանձնահատկությունը։ Այստեղ նա չի միջամտում սրամտությունների արտահայտմանը, ինքը ոչինչ չի ասում։ Նրա մանկական բանաստեղծությունների հերոսներն իրենք են սրամտում, իրենք են ծիծաղում եւ իրենց հետեւից տանում հասակակից ընթերցողին։ Այսպիսով, Գարդիեյանի հումորը եւս բացահայտվում է անբռնազրոս, անմիջական, կենսական ու վարակիչ։ Դա շատ կարենոր երեւույթ է մանկագրության մեջ, որին քչերն են ուշադրություն դարձնում։

Այստեղ կցանկանայինք բերել հետաքրքիր մի դեպք՝ կապված

ՄԱՆՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՔՆԱՐ

Գ. Գաբրիելյանի եւ նրա ուսուցիչ, գրականագետ-մանկավարժ Արամ Մարտիրոսյանի հետ: 1962 թ. իր սանից նվեր էր ստացել նաև երկրորդ գիրը: Ընթերցելուց հետո փորձված մանկավարժը բարձր գնահատելով բանաստեղծի գրքերը, խորհուրդ է տալիս տողացի ռուսերեն թարգմանությունն ուղարկել հոչակավոր մանկագիր Ս. Մարշակին: Լսելով ուսուցիչ խորհուրդը, Գ. Գաբրիելյանը տողացի թարգմանությամբ մեծանում գրողին է ուղարկում իր գրքերը եւ ստանում մեծ գրողի պատասխանը՝ գրված 19.12.1962 թ., որ մեջբերում ենք ամբողջությամբ. «Թամանկագին Գուրգեն Արտեմովիչ... ներեցեք, որ ծեզ պատասխանում եմ այսպես ուշ: Ձեր նամակը ստացել է իմ ծանր հիվանդության ժամանակ, եւ ես այն տեսել եմ միայն հիմա, վերջին երկու ամիսներին ստացած բոլոր նամակների հետ: Որքան կարող եմ դատել ձեր բանաստեղծությունների տողացի թարգմանություններից, Դուք իրաշալի գիտեք երեխաների հոգին եւ նրանց հետ խոսելու կարողություն ունեք:

Եթե բոլյ կտաք, ես կառաջարկեմ թարգմանությամբ զբաղվող իմ ծանոթ բանաստեղծներին՝ ծանոթանալու ձեր բանաստեղծություններին եւ թարգմանելու նրանցից մի քանիսը:

Սրտանց ցանկանում եմ Ձեզ երջանկություն եւ հաջողություններ նոր տարում:

Անուր սեղմում եմ ձեռքը:

Ձեր՝ Ս. Մարշակ»:

Աշխարհահոչակ մանկագրի նամակ-պատասխանը թեւավորում է Գ. Գաբրիելյանին երկու պատճառով: Նախ, որ մեծ գրողը ուշադրություն է դարձրել իր նամակին եւ պատասխանել, երկրորդ, որ ամենակարեւորն է, Ս. Մարշակը դրական է գնահատել իր բանաստեղծությունները: «Մարշակի պատասխանը,- զրույցի ժամանակ

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՄՀԱՄԱՐ

ասաց Գ. Գաբրիելյանը,- ստեղծագործական մի նոր հավատք ներշնչեց ինձ»:

Մանկագիր Գ. Գաբրիելյանի աճը տեղի է ունեցել նկատելիութեն: Նրա գրիչը եւ բեղմնավոր է, եւ հասունացող: Այդ բանում ընթերցողները համոզվեցին 1967 թվականին, երբ Երեւանում լույս տեսավ նրա «Այրուբենը երգերի մեջ» գրքույկը, իսկ Բաքվում՝ «Ես ի՞ն փոքրիկ չեմ» ժողովածուն: Միանգանայն տարբեր գրքեր են դրանք, բազմազան մտահղացումների գեղարվեստական ընդհանուրացումներ: Գաբրիելյանը ստեղծածով չքավարարվող եւ իր հանդեպ խստապահանջ բանաստեղծ է: Այդ ապացուցելու համար բերենք «Այրուբենը երգերի մեջ» գրքույկի երկու հրատարակությունները. առաջինը՝ 1967-ին, երկրորդը՝ 1970-ին:

«Այրուբենը երգերի մեջ» գրքույկը լայն արձագանք գտավ բոլոր դպրոցներում, գրական հասարակայնության եւ բոլոր տարիքի ընթերցողների շրջանում: Մամուլ ասաց իր դրվատանքի խոսքը. «Գաբրիելյանը գիտել պատմել հետաքրքիր, սրամիտ ոճով, կարողանում է նվաճել եւ միաժամանակ որեւէ բան սովորեցնել ընթերցողին: «Այրուբենը երգերի մեջ» գրքույկի լույս աշխարհ գալը հաճելի է»:¹ Իրոք, հաճելի էր Գաբրիելյանի այդ նոր գրքի լույս աշխարհ գալը, որովհետեւ այդ գրքույկը մանկավարժ-մանկագրի հասունացման նոր վկայությունը հանդիսացավ: Այրուբենի սկզբնատառերուվ բանաստեղծություններ գրելու ավանդույթը հասնում է դարերի խորքը: 12-րդ դարի խոչորագույն բանաստեղծ Ներսես Շնորհալին է առաջին անգամ գրել մանկական բանաստեղծություն՝ նման ծետվ: Այդ ավանդույթը շարունակվել է դարերաբ: Յուրաքանչյուր բանաստեղծ ծգտել է յուրովի, ինքնատիպ, կապված ժամանակաշրջանի դաստիարակության պահանջների հետ, արտահայտել իր գաղափարները, միաժամանակ դյուրին սովորեցնել մեսրոպյան սրբա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՎՐՀԱՄ

ցած տառերը: Սակայն պետք է նշել, որ բոլոր ժամանակներում գրված նման ձեւի ոտանավորների հիմնական գաղափարը եղել է աշխատասիրության, համեստության, ընկերական մտերմության, ուսման ծարավի եւ այլ վեհ ձգտումների քարոզը: Շարունակելով իր նախորդների ավաղույթը, Գ. Գարբիելյանն ասել է իր ինքնատիպ ու թարմ խոսքը: 39 երգ, 39 առանձին բանաստեղծություն, միաժամանակ ներքին եռթյամբ ու նպատակով կապված իրար հետ, մի ընդհանրություն են կազմում: Այստեղ բացակայում է պաթետիկ ոճը, չոր քարոզը, մայրենի լեզվի, այրուենի տեղենցիոզ փառարանության ոճը: Գ. Գարբիելյանը «Այրուբենը երգերի մեջ» գրքում ավելի խտացրեց առձայնույթի եւ բաղաձայնույթի երանգները, հմտորեն հաղթահարեց այդ պայմանականության հետ կապված դժվարությունները՝ ստեղծելով սահուն ու երաժշտական ավարտուն երգեր:

«Այրուբենը երգերի մեջ» գրքույկը հայ մանկական գրականության երեւույթներից է: Այն վերահատարակվել է մի քանի անգամ, որ պատիվ կարող է բերել յուրաքանչյուր գրողի եւ գրականության:

* * *

Շարունակելով իր ճանապարհը դեպի մանկական աշխարհ եւ թափանցելով նրա գաղտնիքների մեջ, Գ. Գարբիելյանը կազմեց իր նոր ծաղկեփունջը: Նա մանուկների սեղանին դրեց «Ես հո՞ փոքրիկ չեմ» նոր գրքույկը: Այստեղ էլ մանկագիրը շրավաճանեց իրեն: Մանուկների ուսատիհարակության հիմնական խնդիրները կրկին մերթ աշխույժ հումորի, մերթ լուրջ խոսքի միջոցով երեւան եկան տարբեր նրբերանզներով:

Գրքույկի թարմությունը եւ հետաքրքիր լինելն է թելադրել Ավ. Պայսանին՝ դիմելու փոքրիկ ընթերցողներին. «Երբ կարդաք մանկագիր Գուրգեն Գարբիելյանի ոտանավորների «Ես հո՞ փոքրիկ չեմ» գրքույկը, այնտեղ... շատ ու շատ նոր ծանոթների կիանդի-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՄՀԱՄԱՐ

պեք»:² Իսկ Ե. Պետրոսյանի «Ստեղծագործական աճի վկայություն» հոդվածի վերջում կարդում ենք. «Գուրգեն Գաբրիելյանի նոր գրքույկը հերինակի ստեղծագործական աճի եւ պրատումների վկայությունն է»:

* * *

«Դայաստան» իրատարակչությունը 1968թ. լույս ընծայեց Գ. Գաբրիելյանի հերթական «Կեսօր» ժողովածուն (լրացել էր բանաստեղծի 40-ամյակը), որի մեջ զետեղվեցին եւ նոր, եւ նախորդ ժողովածուներից մի շարք գործեր՝ թվով 50 բանաստեղծություն: Գրքույկում նոր էին «Արեւի բարիքները», «Մարդոյի ամառը», «Տատս», «Մեծանում են», «Մայրիկն ու ես», «Մատիտների վեճը», «Ծաղիկը, Ծաղիկը, Ծողիկը», «Ինչ էլ ուզեմ», «Սառնարան», «Սրտացավ թոռնիկը» եւ այլ ոտանավորներ: «Կեսօր» գրքույկը բանաստեղծի կյանքի միջօրեն վկայող ժողովածու է, միջօրե, որն իր հետ բերում է տաք, կենարար արեւ, բերք ու բարիքի հասունացում, առատության խոստում: Ստեղծագործական բավականին ճանապարհ անցած մանկագիրը հավատարիմ էր իր խառնվածքին: Նա, ավելի հստակվելով իր ասելիքում եւ հելկվելով կատարման մեջ, ասաց նոր խոսք: Աշխատասիրության, համեստության, անկեղծության, ընկերասիրության, ազնվության եւ այլ գաղափարներ իրենց արտացոլումը գտան թարմ պատկերներով, սրամնության նոր պոռքկումներով, լեզվածական առանձնահատկությունների ինքնատիպ հենքով: Գրքույկում արեւը ներքին հպարտությամբ բարիքներ ցանելու մասին է խոսում եւ հրճվում հենց այդ բանի համար: Մարոն հասկանում է, թե ինչ է ամառը, անանուն փոքրիկը յուրովի բացատրում է, թե ինչ ասել է «տատիկ» իրենց տանը... Գաբրիելյանը հարստացրեց իր երանգապանակը նոր գույներով եւ ջերմացնող անմիջակա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

նությամբ ստեղծեց իր նոր կտավները: Արձակագիր Բ. Սեյրանյանը «Դիանալի նվեր» հոդվածում գրեց. «Գ. Գաբրիելյանը մանկագիր է կոչումով: Դիանալի գիտի մանուկների ոգին, նրանց հետաքրքրությունների աշխարհը, շրջապատի իրերի ու երեւույթների մանկական ընկալման յուրահատկությունը: Ոչ մի ավելորդ ճիգ ու ջանք: Դեռու ամեն տեսակ խրթին ու խորք «թվաբանությունից», թվում է, թե նյութը, արտահայտչական միջոցները իրար գտել են հեղինակի կողմից անկախ, բնական ծանապարհով, ինչպես ցողն ու արեւի ճառագայթներն են իրար գտնելով շունչ տալիս ծիլ ու ծաղկին»:³

* * *

«Կեսօր»-ի հեղինակը նվիրված շարունակում է իր ճանապարհը՝ մեկը մյուսի հետեւից իր փոքրիկ բարեկամներին ընծայելով նորանոր գրքեր: Երկու տարի անց, 1970թ. Երեւանում եւ Բաքվում լույս տեսան «Ծտերի կրկեսը» եւ «Ծաղիկն ու մեղուն» գրքույկները: Այս նոր ժողովածուներում եւս Գաբրիելյանը հանդես եկավ պատախանատվության զգացումով: «Ծտերի կրկես»-ում ավելի ընդգծված երեւում է բանաստեղծի հոմնորդ՝ համենված դաստիարակչական նպատակների հետ: Ընկերը Ժլատ է եւ իր Ժլատությունը քողարկելու համար պատճառաբանում է, որ իր ունեցած կոնֆետը երկուսն է, եթե մեկը լիներ, ապա ընկերուին հետ կկիսեր, ինչպես Նինելը («Ժլատ ընկերը»), փոքրիկ բալիկը չի քնում, մայրը հարցնում է պատճառը, փոքրիկը պատախանում է.

- Մայրիկ ջան, գիտե՞ս,
Արքուն եմ մնում,
Որ տեսնեմ, թե ես
Ինչպե՞ս եմ քնում:

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Գ. Գաբրիելյանը 1973թ. մանուկ ընթերցողներին նվիրեց եւս երկու գիրք՝ «Անմեղ ժպիտներ» եւ «Գույների երգը» խորագրերով։ Առաջինը տպագրվել է Երեւանում, իսկ երկրորդը՝ Բաքվում։ Միանգամից երկու գիրք՝ երկու ցանկալի նվեր, երկու ուրախալի երեւույթ մանուկների համար։ Այդ տարի Մոսկվայում ռուսերեն հրատարակվեց ճանաչված մանկագրի «Լեռնային կակաչ» գիրքը՝ 100 հազար տպաքանակով։

«Անմեղ ժպիտներ» ժողովածուն աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ ու բնական շեշտով։ Դայրենասիրության, աշխատասիրության, ընկերասիրության եւ բարոյական այլ բարենասնությունների փառաբանումը, ծովության, սնապարծության, խարեւության եւ այլ բացասական գծերի ծաղրումն ու ժխտումը կազմում են ամբողջ գործի ատաղձը։ «Ծիտիկն ու գարին» բանաստեղծության մեջ խարագանված է ծրիակերությունը։

Գաբրիելյանի շատ բանաստեղծություններ աչքի են ընկնում երեւույթների պատկերնան կոնկրետությամբ, կոնտրաստային կրվամներով, բնական գործողությամբ եւ պատմողական սահուն ոճով։ Գաբրիելյանը ծովությունը կամ սնապարծությունը քննադատելիս խույս է տալիս մերկ բարոյախոսությունից ու ծանձրացնող քարոզից։ Նա բանաստեղծության առանցքի մեջ է բերում կամ իր մանուկ հերոսներին, կամ թշուններին ու կենդանիներին, նրանց միջոցով ստեղծում հակապատկերներ, խոսքը համեմում հումորով եւ կատարում իր ցանկալի ընդհանրացումները։ Ահա «Ծույլի բաղձանքը» բանաստեղծությունը։ Այստեղ հանդես են գալիս աշխատասեր Արտիկը եւ ծույլ Եղոն։ Մեղուն խայթել է Արտիկի մատը, սակայն Արտիկը չի բացակայել դասից։ Գրավորի ժամանակ ուսուցիչը նկատում է, որ Արտիկը չի կարողանում գրել, ազատում է նրան։ Արտիկի համար դա ցավալի է, իսկ Եղոյի համար՝ երազանք։

Երամի քեզ՝

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄԱՐ

Կողքից խոսեց

Ծույլ եղոն:

Ի՞նչ կլիմեր,

Որ ինձ խայթեր

Այդ մեղում:

Տաղանդավոր երօչի բանաստեղծական խառնվածքի ու ինքնատիպության բնորոշ կողմերից մեկն այն է, որ նա իր միտումը կարողանում է գեղարվեստորեն դրսեւորել բանաստեղծական առանձին շարքերով եւ ժողովածուներով։ Կրամքը ընթերցողին չեն ծանծրացնում, ընդհակառակը, բանաստեղծական տարրեր հնչերանզներով լրիվ բացահայտում են ընտրած թեման։ Այդ են վկայում նրա «Այբուբենը երգերի մեջ», «Եկեք հաշվել ստվորենք» գրքերը, որոնց շարքը լրացնում են «Գույմերի երգը», «Տարին բոլոր երգերով նոր» ժողովածուները։ Այս գրքերով եւս Գարդիելյանը շարունակում է հայ մանկական դասական գրականության լավագույն ավանդույթները եւ ասում իր նոր ու ինքնատիպ խոսքը։

«Գույմերի երգը» գրքի «Ծաղիկների երգը», «Ծառերի երգը» (Ըստ Իրինա Տոկմակովայի), «Կենդանիների երգը» եւ «Մատիտների երգը» շարքերում բանաստեղծը, ելնելով ժամանակակից երեխաների հետաքրքրություններից ու նրանց դաստիարակության խնդիրներից, ստեղծել է այնպիսի երգեր, որոնք աչքի են ընկնում ոչ միայն ծաղիկների, ծառերի ու կենդանիների բնորոշ հատկությունների դիպուկ բնութագրությամբ, այլև նարդկային հարաբերությունների ու բնավորությունների ընդգծմամբ։ Օրինակ, նարգիզը աչքի է ընկնում իր գեղեցկությամբ եւ անուշ հոտով («Նարգիզ»), հասմիկը՝ համեստությամբ ու բուրմունքով («Հասմիկ»), նունուֆարը՝ մայր հողի հետ ունեցած սերտ կապով («Նունուֆար»), հողմածաղիկը՝ դիմացկունությամբ («Դողմածաղիկ»), ընձուղտը՝ իր բարձ-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՀԻՐՈՒՅԹ

րությամբ ու բարությամբ («Ընծուղտը»), սկյուռը՝ աշխատասիրությամբ («Սկյուռը»): Ինչ վերաբերում է «Մատիտների երգը» շարքին, ապա նրանում Գարդիեյանը գտել է իր բանաստեղծություններին խոր իմաստ ու երանգներ հաղորդող գույները, որոնք ընդգծում են բանաստեղծի խոսքի ճանաչողական արժեքը:

Անհանգիստ բանաստեղծ է Գ. Գաբրիելյանը: 1975 թվականից իետո նա հրատարակել է բանաստեղծությունների ինը ժողովածու՝ «Զրվեժի երգը», «Եկեք հաշվել սովորենք», «Ընտիր երկեր», «Զյան գույները», «Ակունքներ», «Երգող ծառը», «Տարին բոլոր՝ գույներով նոր», «Մանկատաղեր», «Աքլորականչ» խորագրերով:

«Երգող ծառը» գրքի համար Գ. Գաբրիելյանն արժանացավ Հյայաստանի գրողների միության Ստ. Զորյանի անվան մրցանակի: Պատահական չէ Գ. Գաբրիելյանին մրցանակ շնորհելու այս հաճելի երեւութը: Անվանի արձակագիր Ս. Խանզադյանը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Գաբրիելյանի բանաստեղծությունների գնահատմանը: 1983թ. շնորհավորելով արցախցի գրչեղբորը, ականավոր գրողը իր նամակում ընդգծել է հետեւյալը. «Քո կերպարներն ուժեղ, արի փոքրիկներ են, վաղվա մեր կյանքի սյուները: Դու տեսնում ես մարդկային հոգու գեղեցիկը, լուսավորը, պիտանին: Դու մեր մանկական պոեզիային, որ բավականին գորշ է, կենդանի կյանքի հյութեր ես ներարկում: Դու ազնիվ բարոյականության ուսուցիչ ես եւ հրաշալի պոեզիայով օգնում ես մանուկ ու պատանի ընթերցողներին՝ ճանաչելու-սիրելու կյանքը, կյանք արարելու: Կեցցես»:⁴ Իսկ արձակագիր Վ. Պետրոսյանը, որ այն ժամանակ ղեկավարում էր Հյայաստանի գրողների միությունը, իր հեռագրում ընդգծել է. «Թանկագին Գուրգեն Արտեմովիչ, ուրախ եմ Ձեզ հաղորդելու, որ Հյայաստանի գրողների միության ամենամյա մրցանակների Ժյուրիին Ձեզ շնորհել է Ստ. Զորյանի անվան մրցանակ՝ «Երգող ծառը» գրքի համար: Մենք բոլորս Ձեզ ճանաչում ենք որպես մանկական հիա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

նալի բանաստեղծի, որը հայտնի է ինչպես Հայաստանում, այնպես էլ... այլուր, եւ այդ մրցանակը Զեր ծառայությունների գնահատականն է... Սպասում եմ Զեր նոր, ազմիվ, պայծառ, տաղանդավոր գործերին»:⁵

Գրականագետ Մ. Սանթոյանը «Երգող ծառը» գրախոսականում ընդգծել է. « Դասական մանկագիրներից է գալիս Գաբրիելյանի պոետական արվեստը: Գեղարվեստական պատկերի կառուցման ու գեղագիտական մտածողության մեջ վճռականը բանահյուսությանն է պատկանում՝ որոշողը կապն է ժողովրդական բանահյուսության հետ, իսկ գեղագիտական առաստաղայինը՝ Յ. Թումանյանն է: Գաբրիելյանը Աղայան-Թումանյան մանկագիրների պանդերի ոչ միայն շարունակողն է, այլև խորացնողը»:⁶

Գ. Գաբրիելյանի վերջին շրջանի գրքերը եւս նորություններ են եւ բանաստեղծի, եւ հայ մանկագրության համար: Այստեղ էլ նա նույն որոնող ու գտնող բանաստեղծն է, մանուկների աշխարհին քաջատեղյակ նվիրյալը, նրանց հոգու թրթիռները տաղեր դարձնող վարպետը, աքլորականչով երեխաներին բնության գեղեցկությունները ցույց տվող հետախույզը, ծառերի երգով ապագա քաղաքացիներին կյանքի քաղցրությունը համտես անող մեծ բարեկամը, տարին բոլոր նոր երգերով հանդես եկող հսկան:

* * *

Սեծանում Եղիշե Չարենցը երազում էր, որ մանկական գրականությունը դրվի իր կոչման բարձրության վրա, սերտորեն կապված լինի ժամանակաշրջանի հիմնահարցերի հետ, պատասխանի երեխաների դաստիարակությանն առնչվող բոլոր հարցերին: Մանկական հաջող գիրք ստեղծելը մեծ բանաստեղծը համարում էր՝ «Լուրջ գործ, որ պահանջում է հատուկ աշխատանք եւ ժամանակ»:⁷ Պատահական չէ, որ մանկական յուրաքանչյուր լավ գորի աշխարհ գա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՋՈՒՄ

Այս գնահատվում է որպես երեւոյք:

Վերջին տարիներին հայ մանկագիրները քիչ չեն ուրախացրել իրենց ընթերցողներին: Մեզ հաճար կրկնակի հաճելի է դառնում երեւոյքը, երբ նրան մասնակցում են նաեւ Արցախ աշխարհի գրական օջախի ներկայացուցիչները: Այդ գործում առանձին ծառայություն ունի մանկագիր Գ. Գարրիելյանը: Ուշադրության արժանի է բանաստեղծի «Տարին բոլոր՝ երգերով նոր» գիրքը, որը եկավ կրկին ապացուցելու, որ Գարրիելյանը չի բավարարվում ծերք բերածով:

Գրքի եւ կառուցվածքը, եւ բանաստեղծական շարքերը խոսում են մանկագրի որոնումների եւ շահեկան գտնումների մասին: Ավելի քան երեսուն գրքերի հեղինակը գնալով ավելի է հմտանում իր մանուկ հերոսների հոգեբանական նուրբ ու անբիշ շերտերը դիտելու, նրանց հետ զրուցելու, նրանց դիտակետից աշխարհն ընկալելու եւ որ ամենակարեւորն է, նրանց անունից խոսելու մեջ: Գրքի վերնագիրը կարդալով համոզվում ես, որ նա հաճախ արձարձված թեմաներին մոտենում է յուրովի: Շարունակելով Ղ. Աղայանի, Շ. Թումանյանի, Ա. Խնկոյանի, համաշխարհային եւ ռուս մանկական անվանի գրողների լավագույն ավանդույթները, Գ. Գարրիելյանը հարստացրեց տարվա եղանակներին նվիրված բանաստեղծությունների շարքը:

Գիրքը բացվում է «Չորս քույրերը» ստեղծագործությունով: Բայց «Մեկը մեկից ճոխ ու նախշուն» քույրերի դժվարին, բանաստեղծական բնութագրումները մենք տեսնում ենք «Գարուն», «Ամառ», «Աշուն», «Չմեռ» բաժիններում:

Բանաստեղծը հեռու է մնացել տարվա եղանակների սոսկ նկարագրությունից, առաջին ալան է մղել գեղարվեստական գրականության ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

նշանակությունը:

«Տարին բոլոր՝ երգերով նոր» ժողովածուի քնարական հերոսը հիմնականում կրտսեր տարիքի դպրոցականն է: Նա ակտիվութեան մասնակցում է նկարագրվող դեպքերին, իրեն զգում է հայրենի օջախի, լեռնաշխարհի, նրա անկրկնելի բնության տերը, սակայն ոչ թե բնության գեղեցկություններով հմայված, անհոգ մի անձնավորություն, այլ երեւոյքները ճանաչելու ձգտող, ուշիմ, աշխատասեր, խելոք, երազուն ու խորհող պատաճի հայրենասեր:

* * *

1987թ. Գ. Գաբրիելյանը ներկայացավ «Մանկատաղեր» ժողովածուվ, որ նոր խոսք էր ոչ միայն բանաստեղծի համար, այլև հայ մանկագրության նորագույն շրջանում: Նա մի կողմից հետեւեց միջնադարյան տաղերգուների ավանդույթին, մյուս կողմից՝ խախտեց այդ ժամրի կառուցվածքը: Հավատարիմ մնալով ստեղծագործական իր խառնվածքին՝ Գաբրիելյանն օգտագործեց եւ հումորը, եւ սրամտությունը, եւ մանկական միամտությունը: Սակայն ամենից կարեւորը մանկան հոգեբանության խոր իմացության օգտագործումն էր, որի շնորհիվ բանաստեղծի խոսքը հնչեց նոր երանգներով, դաստիարակչական ուժով եւ ճանաչողական ծփանքներով: Յուրաքանչյուր տաղ բաղկացած է ութ տողից, ավարտվում է սրամիտ ընդհանրացումներով, պարզ ու հասկանալի շեշտերով: Յեղինակը նպատակադրվել է երեխաների մեջ սեր արթնացնել իրենց զգացածին պես, օգտակար լինել մարդկանց: Եվ նա հասել է իր նպատակին:

Բանաստեղծը ծեռք մեկնեց նաեւ ժողովրդական աշխատանքային երգերին եւ նրանց նմանությամբ Պարաբաղի բարբառով ստեղծեց ինքնատիպ այնպիսի նվագներ, որոնք գեղարվեստական փայլատակումներ լինելուց բացի ազգագրական նեժ նշանակություն ունեն: Յամոզված ենք, որ սերունդները կանորդադառնան այդ

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՎԱԿԱՆ

Երգերին ոչ մեկ անգամ: Բանաստեղծը դիմեց անցյալին եւ բանահյուսական երգերի առանձնահատկություններով հազեցած մասունքներ ստեղծեց, որոնք արտացոլում են երկրագործական, առանձին աշխատանքի պրոցեսները, գյուղացու հոգեկան ապրումները՝ սոցիալական ֆոնի վրա:

Լավ իմանալով աշխատանքի բանահյուսական երգերի վաղնջական արժատները՝ Գ. Գաբրիելյանն իր երգերը հորինեց այդ հարուստ ավանդույթի հյուսվածքով, միաժամանակ ստեղծեց երաժշտությունը եւ ինքն էլ հանդիսանում է այդ երգերի հիմնալի կատարողը: Այս առօննով մենք իրավունք ունենք նրան անվանելու մեր օրերի տաղանդավոր գուսաններից մեկը: Իմիջիայլոց, Գ. Գաբրիելյանն ինքնուս երգահան է:

Դայկական ժողովորական աշխատանքի երգերի զարդը Կոմիտասի «Հորովզելու» է: Գ. Գաբրիելյանը, ստեղծելով «Ղարաբաղի հորովզելը», հարստացրեց հայկական հորովզելների շարքը: Նրա հորովզելի բնագրի երանգներն այնքան են բանահյուսական, որ շատերը կարծում են, թե բանաստեղծությունը ժողովուրդն է ստեղծել:

Սովորաբար լավ երգը համեմատում են ժայռերի խորքից բխող լեռնային աղբյուրի հետ, որ ամառային ամենատապ օրերին կոտրում է նարդու ծարավը եւ երանության պահեր ընծայում: Սակայն մեղամշած չենք լինի, եթե նշենք, որ երգի պարզեւած հաճույքը բազմաշերտ է: Երգը եւ հագեցնում է նարդկային հոգու ծարավը, եւ իր թեւերին առած, ունկնդրին տանում է հեռավոր ակեր՝ հարազատի, ընկերոջ, սիրո կարոտով, եւ հասցնում հայրենի պատմության խորերը, լիցքավորում ափսոսանքի եւ ոգորումի գգացումներով եւ շոյում է սրտերը՝ խիզախելու ներկա ընթացքի մեջ, հանուն լուսավոր ապագայի: Այդպիսին է եղել եւ մեր ժողովորական, եւ գուսա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Նական, եւ երգահանների հյուսած երգը: Երգը՝ հայ ժողովրդի հոգու թռթիօք, սրտի երազը, թախծի մրմուռը, հույսի փունջը: Եվ այդ երգը արարել են ժողովրդի տաղանդի խուացումը հանրիսացող անհատներ՝ աշխարհին պարզելով հայոց աննինջ եւ ծիածանված ոգին, անկոտրում կամքը, գոյատեւելու եւ արարելու աստվածապարգեւ կարողությունը, խաղաղ ապրելու մարդասիրական ծգումը:

Սեր այս խոհն ու մտորումները երեւան եկան Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել» երգերի գրքի առիթով: Այն տպագրվել է 2003 թվականին Երեւանում, «Անահիտ» հրատարակչության կողմից:

Անվանի բանաստեղծի եւ երգահանի այս գրքին սպասում էինք վաղուց: Ամեն անգամ, երբ տարբեր առիթներով Գ. Գաբրիելյանը կատարում էր իր նոր երգը՝ թարմ, գունեղ, հուզաշաղախ, սրտամոտ, ընկերները պատվիրում էին, որ նա իրատարակության համձնի իր երգերի բազմերանգ փունջը: Եվ ահա, թեկուզ որոշ ուշացումով, իրականացավ Գ. Գաբրիելյանի արցախապարգեւ ու արցախածայն երգի սիրահարների բաղծանքը: «Արցախապարգեւ» ու «արցախածայն» բնութագրական բառերը հենց այնպես չընդգծեցինք: Մինչեւ Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովելը», մեզ՝ արցախսիններիս թվում էր, թե Ղարաբաղը չի ունեցել եւ չունի իր սեփական երգը: Եվ դա խարեւանքի արդյունք էր: Այդ խարեւանքը եւ դարաբաղցու երգասեր սրտի ծխածածկույթը եկավ ցրելու Գ. Գաբրիելյանը՝ մեր տաղանդաշատ մանկագիրը, բանաստեղծը, երգահանը, երգիչը, մի խոսքով՝ 20-րդ դարի մեր Ներսես Շնորհալին: Բայց եթե Շնորհալին 12-րդ դարում Հայոց Կիլիկիայում նաեւ կաթողիկոս էր, ապա այսօր հայ մանկական պյեզիայի կաթողիկոսը Գուրգեն Շնորհալին է, որի իրավունքը հաստատել են Ս. Խանզայյանը, Յ. Մաթեւոսյանը, Յ. Սահյանը, Բ. Ուլութաբյանը, Բ. Զանյանը, Վ. Պետրոսյանը եւ ուրիշ ականավոր գործիչներ, ինչպես նաև այրութեն-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Ված բազմահազար մանուկները:

Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել» երգերի ժողովածում հավերժախոս երեւոյթ է: 71 երգ՝ ծիածամի 71 գույմ: Դա Արցախն Արցախ պահող հայ մարդու հոգու ճիշն է, որ եկել է դարերի խորքից, անցել գուսան Գուրգենի սրտի միջով՝ որպես նախնիների եւ ժառանգների հոգեւոր, ապրեցնող անխախտ կապը վավերագրող մասունքներ: Գրքի առաջարանում Գ. Գաբրիելյանը խոստովանում է. «Տասո՞ Սոնան, գուսան էր, քեզիս նույնպես: Մայրս՝ Զարուիխն էլ, որ Խաչենի հովտի գյուղերում հայտնի ողբասացի համբավ ուներ, սրա-նրա վրա երգեր էր կապում ու երգում: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ երգարվեստի հանդեպ սերս (ինչ ասել կուզի՝ նաեւ ծայնս) զալիս է ծնողներիցս»: Այս այսպես, ծնողների եւ զավակների հոգեւոր կապը դարձել է երգերի մի կտակարան, որի մեջ արժարժված են կենցաղային-առօրյա խնդիրներ («Կալին երգը», «Դորովել», «Խընեցում երգը», «ճախարակի երգը», «ճըղացեն երգը», «Ծրկանքեն երգը», «Ուրուրուցեն երգը», «Դընգերեն երգը» եւ այլն): Ապա՝ հայրենիքի ճակատագիրն ու նրան առնչված զգացումները պատկերող երգաշարը («Արցախական շարական», «Գանձասար», «Իմ Ղարաբաղ», «Ամարաս», «Ղաղիվանք», «Արցախի ֆիդայիններին», «Դայոց արցունքներ», «Եռագույն դրոշ», «Ավո» եւ այլ մեղեդիներ): Երգախոս այս կտակարանի երրորդ բաժինը կազմող քնարական գեղումների թրթիռները սիրո խռովչի, անձնուրաց նվիրվածության, երջանկության ընկալման խորհուրդներ են («Խոռով է, խռով տանեմ», «Կարուտի երգ», «Սեւ աչերիդ կրակները», «Դու քահցրիկ ժայտով աղջիկ», «Սիրո աղոթք», «Սիրուն աղջիկ» եւ այլն): Ժողովածուի չորրորդ բաժնում զետեղվել են Գաբրիելյանի՝ գրչեղբայրների բանաստեղծությունների հիման վրա հորինված երգերը (Վ. Զակորյանի «Խաղողենի» ու «Անմանը ծիածան», Դ. Բեգլարյանի «Գետերս», Ս. Խանյանի «Ղանուք», «Որտե՞ղ ես, մայր

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

ին», Յու. Սահակյանի «Զքնենք, տղաներ», «Քեֆ անողին քեֆ չի պակսի», Վ. Օվյանի «Մալայիկի վիշտը», Վլ. Աբրահամյանի «Առաջին մանուշակը», Ս. Գրիգորյանի «Ինացիր», Գ. Աղաջանյանի «Տունս»):

Կարդալով եւ մտովի վերիիշելով ժողովածուի երգերն ու հուզի մեղեղիները, մի պահ տեղափոխվուն ենք Դայոց Արեւելից կողմանց հանդերն ու արտերը, լսում մեր պապերի հորովելված ձայնը՝ ուղղված գերդաստանի դժվարին ապրուստն ապահովող եզան հանդեա գորովագութ լինելու խորհրդին.

*Ծերքետ ճռպատը ճապկե ա,
Պենտ չի թըխիս եզամը,
Մաշկեն բուրդան ցավ կտա,
Ետա պահում խեզամը:*

Գ. Գաբրիելյանի երգերում մեր իին ու նոր ժամանակների շունչը կա, նրանք թախծոտ, միաժամանակ կենսուրախ զգացումներով են շաղախված: Գաբրիելյանը հայ մարդու ամենանվիրական բարեմասնությունները հոգու մեջ հազարամյակների ընթացքում անդարս պահած արցախցու ազնիվ զգացումների երգիչն է:

Կուզենայի վկայել Գաբրիելյանի երգի ինքնատիպությունն ու հմայքը հաստատող մի դեպք: Արծակագիր Ս. Այվազյանի ծննդյան 70-ամյակի առթիվ մեկնել էինք Գորիս: Խնձորեսկում նրա շիրմաքարին ծաղկեփունջ դնելուց հետո վերադարձել էինք մեր ծանոթ Դայրապետյանների օջախը: Գ. Գաբրիելյանն էր, Լ. Գրիգորյանը, Կ. Դանիելյանը եւ տողերիս հեղինակը: Երեկոյան այդ սուրբ օջախում էր նաև Գուսան Աշոտը: Նրա խնդրանքով Գաբրիելյանը կատարեց իր մի շարք երգեր: Գուսան Աշոտը ուշադիր լսելուց հետո ասաց. «Ապրես, Գուրգեն, դու իսկական գուսան ես, եւ լավն այն է, որ Մեծ Սյունիքի եղբայր Փոքր Սյունիքի ամբեղված երգը գտել ես: Ապրես,

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՎՈՒՄ

Դու եւ իհանալի բանաստեղծ ես, եւ ինքնատիպ գուսան»: Գ. Գարդիելյանը անչափ ուրախացավ եւ պատասխանեց. «Չեզ ննան Մեծ գուսանի այդակի գնահատականը ընդունում եմ որպես ոգեւորող խոսք»: Գուսան Աշոտը ցանկություն հայտնեց կրկին լսել «Ղարաբաղի հորովելլը»: Գ. Գարդիելյանը հենց այդ նույն գիշերը, երբ բոլոր քնած էին, երգ դարձրեց իմ «Որտե՞ղ ես, մայր իմ» բանաստեղծությունը: Երգահան Գարդիելյանի ստեղծագործական ներգացողությունը բխում է Արցախ աշխարհի ճակատագրից:

1987-ին նշեցինք նրա ծննդյան 60-ամյակը: Յորելյանական երեկոն կազմակերպվեց Տումի պատմական գյուղում: Երեկոյից հետո ավտոմեքենայով վերադառնում էինք Ստեփանակերտ: Արմեն Ջովիհաննիսյանը դժգոհեց, որ իր տեքստով Գուրգենը դեռ երգ չի հորինել: Գարդիելյանը խնդրեց Արմենիմ՝ դանդաղ արտասահմել «Գանձասար» բանաստեղծությունը: Այդպես Տումուց մինչեւ Տող հասնելը ծնվեց այն երգը, որ մտել է ականվոր հայ երգիչների երգացանկը, առանձնապես դարձել է Ռ. Մաթեւոսյանի սիրած երգերից մեկը:

Թարմ ու կենսալի են Գ. Գարդիելյանի երգերը: Յաճելի է, որ նրա երգերը մտել են հայկական մի շարք համույթների երգացանկեր: Բանաստեղծ-երգահանի հաջողության գրավականը երգերի թեմատիկ բազմազանության եւ մեղեդայնության մեջ է: Նրա երգի բնագրերը նախ կատարյալ բանաստեղծություններ են՝ հելված, պատկերավոր, կենսաթրթիօ: Ինչպես իր բանաստեղծություններում, այնպես էլ երաժշտության մեջ Գարդիելյանը քնարերգու է: Նրա երգերը անմիջական են, տպավորիչ: Հայրենիք երգի թե սեր, փառարանի մորը թե աշխատանքի մարդուն, բանաստեղծ-երգահանը լավի ու բարու քարոզիչ է:

Գրքի «Արցախական» շարքը հորինված է Ղարաբաղի բարբառով: Ղրանք աչքի են ընկնում լեզվական արվեստի, բառապաշտի,

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՄՔՆԱՐ

Մաղաչական համակարգի հմուտ օգտագործմամբ, երաժշտականությամբ: Ընդհանուր գործածական բառերը նրա երգերում գեղագիտական հատուկ արժեք են ստանում, առանձնապես՝ գաղափարական-գեղարվեստական մտահղացման խնդիրներին ծառայելիս: Մեր ժողովրդի բարձր բարոյական դիմագիծը հաստատող խորհուրդներ են նրա երգերը: Բերենք օրինակներ. «Աղե, արկանք, մաղե, արկանք, քըզանում կա էլա հարգանք» («Ծրկանքեն երգը»), («Խընեցե, հըրեցե, եղավ պարտք տվեցե, թանավ տոնս պըհեցե»), («Խընեցուն երգը»), «Վախտավ չինիք, բախտավ ինիք, թաքավերու բախտավ ինիք» («Այանեն երգը»), «Դընգեր, հընգեր, ոյուզ հընգեր, ետ շտեղան յուս ընգեր» («Դընգերեն երգը»):

Անդրադառնալով հայրենական երգերին, պետք է նշենք, որ Գաբրիելյանի բարձրարժեք այս ստեղծագործությունները ծնվեցին Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ըմբռատ տարիներին: Այդ երգերը մերք հոլովվում են որպես մարտակոչ երթագնապ, մերք՝ հերոսացում, մերք՝ փրկվածի երկրպագության աղոթք:

*Թշնամյաց կրակից դու փրկված,
Ավերված սրբազան մեր սուրբ տուն,
Մեսրոպյան հրաշքով դու փրկված,
Մեր գրկված, մեր զարկված Դայաստամ:*

...Մեր այգու ոսկե վազ Ամարաս...

Մեր մուրազ, մեր երազ Ամարաս:

(«Ամարաս»)

Գ. Գաբրիելյանի երգերը հայրական հորդորի ուժ ունեն՝ ուղղված Արցախի հերոս զավակներին, Ֆիդայիններին: Այն ծանր տարիներին բանաստեղծը երգով դիմում է հայոց հողի պաշտպաններին:

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՔՆԱՄ

րին.

Ամեն մեկը մի նոր Չառւ,
Մի Սերոր փաշա, մի քաջ Անդրամիկ,
Պայքարի ելաք առած սուրբ դրոշ,
Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք:

(«Արցախի ֆիդայիններ»):

Արցախյան գոյամարտը իր հաղթական արդյունքին հասավ անմեղ գոհերի գնով: Դարավոր թշնամին, դեն նետած իր գայլային դիմակը, Սումգայիթում, Բաքվում, Գանձակում եւ այլ հայաշատ վայրերում կազմակերպեց հայկական ջարդեր: Հայոց ազգային ցավը էլեզիայի փոխեց Գարրիելյանի ստեղծագործական աշխատանքը, դարձավ ցասումի եւ կարոտի խոսք՝ «Օ, Զահել-Զիվան սումգայթիններ, մեղավոր դարի Դուք անմեղ գոհեր», «Էլեզիա» Սումգայիթի գոհերի հիշատակին: Ոգեկոչումի ահազանգեր են «Ազգ իմ», «Հայրենի լեռներ», «Ավո», «Հայոց խաչերը» երգերը: Հայոց խաչերը լոկ հիշատակի խորհրդանիշ չեն, ինչպես երգահանն է ընդգծում. «Խաչերը, խաչերը, մեր հայոց խաչերը Մեզ բանկ են, ինչպես մեր պապերի կանչերը» («Հայոց խաչերը»):

Գ. Գարրիելյանը Արցախում ծնված, Արցախում սնված, Արցախի բարեմասնությունները հոգու մեջ առաջ հայ բանաստեղծ է: Սիրո, ընտանիքի, Ավիրվածության նրա ընկալումները դարերում սրբագործված ժողովրդական ավանդույթների նորօրյա հոլովումներ են: «Քնարական» բաժնի ամբողջ շարքը այդ ընկալումի անհրաժեշտություններ են:

Սիրել եմ, պիտի առնեմ,
Քննուշ ծամով, ծամով, ծամով, ծամով իմ յարին,
Առնեմ ու սարը թռնեմ

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Անուշ համով, համով, համով իմ յարին:

(«Խոռվ է, խոռվ տանեմ»)

Սիրածն ինչքան էլ հեռվում լինի ընկերը սպասում է նրան. «Սպասում եմ քո գալուն, դեռ երկար եմ լալու միայն քեզ համար» («Կարոտի երգ»): Փոխադարձ սերը ամենաքաղցր պտուղն է. «Իրար համար կյանք արարող արեւմեր ենք» («Իրար համար»): Սերը կյանք է, սերը՝ գարուն. «Դու իմ գարունն ես, սիրելիս, Դու իմ սիրունն ես» («Դու իմ գարունն ես»): Վաճքում առաջին անգամ հանդիպած՝ առաջին քաղցր սերը դարձած աղջիկը Աստծո պես է գերում տղային: Նրանով ոգեւորված տղան աղոթում է.

*Սիրուն աղջիկ, աչիդ մատաղ,
Աչիդ մատաղ ես,
Լանջիդ ընկած խաչիդ մատաղ,
Խաչիդ մատաղ ես:*

Այսպես, սերը, հավատը միաձույլ դառնում են ավանդականի եւ նորօրյա սուրբ զգացումի կենսաթրթիո խոստումներ, որոնցով կյանքը ավելի է քաղցրանում, ժողովրդի ընթացքը դաշնում աննահանջ ու իմաստալից:

Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել» երգերի ժողովածում վերջին տարիներին հրատարակված լավագույն նվերներից է այսօրվա եւ վաղվա սերունդներին: Ցանկալի է, որ այդ ժողովածուն դառնա հանրակրական դպրոցների երգեցողության ուսուցիչների գիրքը: Մեզ քվում է, որ այս կապակցությամբ իրենց խոսքը կասեն ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության համապատասխան աշխատողները: Ծիշտ է նկատել հայոց գուսանական երգի գիտակ, գրականագետ Ը. Գրիգորյանը՝ գոքի առաջարանում ընդունելով. «Երգահան եւ երգիչ Գ. Գաբրիելյանը՝ որպես արվեստա-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

գետ, ոչ միայն արցախյան, այլև համահայկական երեւոյթ է՝ իր բազմազան եւ շատ կողմերով ուշագրավ գեղարվեստական ժառանգությամբ»:

* * *

Բեղմնավոր է Գ. Գաբրիելյանի գրիչը: Յուրաքանչյուր նրա նոր գիրք ընդունվում է ոգեւորությամբ: 1998թ. Երեւանում տպագրվեց նրա «Իմ առաջանին» գիրքը, մեկ տարի անց՝ «Աշնան հանդես» ժողովածում, որը խմբագրել է բանաստեղծ Դավիթ Յովհաննեսը: «Խոսք ի խորոց սրտի» առաջարանում խմբագիրը գրույց բացելով մանուկմերի հետ, նշում է. «Այս սիրուն բանաստեղծությունները ձեզ համար գրել է Գուրգեն Գաբրիելյանը՝ հանրաճանաչ Գարո Ապերը: Նա ապրում եւ ստեղծագործում է Արցախում՝ հայոց հինավուրց այդ հողում, որ Գարո Ապոր նման եւ նրանից էլ նշանավոր շատ մարդիկ է տվել աշխարհին... Լավն է Գարո Ապերը, իր հայրենի Արցախի նման պարզ ու միամիտ, բարի ու հյուրասեր: Իսկ ինչքան հրաշալի երգերի հեղինակ է նա, ո՞վ չգիտի «Պարաբաղի հորովելը», որը բոլորից լավ հենց ինքն էլ երգում է»:⁸

Գիրքն արժանացավ եւ ընթերցողների, եւ խստապահանջ քննադատների ուշադրությամբ: Նշվեց, որ մանկագիրը, հիրավի, աշնանային գույների շրայլությամբ հարստացրեց ոչ միայն իր ստեղծագործությունը, այլև ժամանակակից հայ մանկագրությունը: Իսկ երբ 1999-ին տպագրվեց «Ուրախ հայերեն» գիրքը, այն համարվեց հավերժական մի նվեր դպրոցահասակ մանուկներին: Անվանի բանաստեղծի գիրքն ամբողջությամբ նվիրված է հայոց լեզվին, այն հեղինակի հայրենասիրական գրչի նոր արտահայտությունն է: Բանաստեղծը որպես թեմա արժարում է մայրենի լեզվի կառուցված-

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՉՈՒՄ

Քը իր բոլոր մակարդակներով՝ հայոց լեզվի դպրոցական դասընթացն իր բոլոր բաժիններով: Պարզ է, որ Գաբրիելյանը պիտի հաղթահարեր որոշակի դժվարություններ՝ կապված քերականական օրենքների բանաստեղծականացման հետ: Ակադեմիկոս Ս. Աբրահամյանը գրքի առաջաբանում ընդգծել է. «Գ. Գաբրիելյանը տիրապետում է լեզվաբանական անհրաժեշտ գիտելիքների, դրանց գիտական արդի ընթացումներին: Գրքի ամեն մի էջում ակնհայտ է հեղինակի մանկավարժական նուրբ գզացողությունը: Սա կարեւոր հանգամանք է ամեն մի մանկագրի, առավել եւս՝ այսպիսի գրքի հեղինակի համար: ⁹ Ուսուցողական նշանակություն ունեցող այս գրքում Գ. Գաբրիելյանը ճշգրտությամբ եւ մանկավարժական, մեթոդական մոտեցումով սովորողների ուշադրությունը հրավիրում է տերմինների վրա, հաճախ անձնավորում դրանք, որոնց շնորհիվ էլ երեխաննը կարող են յուրացնել հայոց լեզվի դպրոցական դասընթացի համակարգը:

Վերոհիշյալ գրքերի համար Գ. Գաբրիելյանը պարզեւատրվել է Հայաստանի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց» մեդալով եւ ԼՂՀ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Գ. Գաբրիելյանը երեխանների հոգեբանությունը թարգմանող մանկագիր է եւ հասել է մի այնպիսի արդյունքի, որտեղ ընդգծված երեւում է նրա բարձրարվեստ վաստակը հայ մանկագրության ասպարեզում:

ԱՄՓՈՓՈՒՄ

20-րդ դարի երկրորդ կեսին հայ գրականության ամբաժանելի մի մասը կազմող Արցախի պոեզիայում ի հայտ են եկել գեղարվեստական զարգացման այն բոլոր միտումները, ինչ հատուկ է եղել ամբողջ հայ գրականությանը:

Խորհրդային 70 տարիներին, երբ Մեծ Հայքի 10-րդ նահանգը նետված էր Աղբբեջանի երախը, Արցախի գրողների համար տեսական-գործնական լուծումների հիմնական եւ ուղեցույց աղբյուրը մայր Հայաստանում հրատարակվող թերթերն ու գրքերն էին, ականավոր գրականագետների եւ գրողների ոգեւորող խոսքը: Հայաստանի մամուլում հրատարակվող հոդվածները, որոնցում վերանայվում էին հասարակական կյանքի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները, Հայաստանի գրողների 3-րդ, ԽՄՌՍ գրողների 2-րդ համագումարից հետո տպագրված նյութերն աշխուժություն առաջացրին նաև Արցախի գրողների ստեղծագործական կյանքում:

Հետպատերազմյան շրջանում Արցախի գրողների հետեւղական ջանքերի շնորհիվ 1957թ. Բաքվում սկսեց վերահրատարակվել «Խորհրդային գրող» հանդեսը (1932-1941 թթ.) «Գրական Սոլրեջան» անունով: Ժամանակակից գրականության այն հարցերը, որ հուզում էին Արցախի գրողներին, հիմնականում արձարձվում էին այդ հանդեսում, նրան տեսական-քննադատական հոդվածներով մասնակցում էին Հայաստանի ականավոր գրականագետներն ու գրողները, որոնք իրենց կոնկրետ քննարկումներով եւ խորհուրդներով օգնում էին Արցախի գրողներին՝ ստեղծելու ուշադրության արժանի երկեր: Այդ ուղղությամբ նշանակալից են Ն. Զարյանի, Մ. Արմենի, Պ. Սեւակի, Գ. Էմինի, Մ. Սարգսյանի, Ս. Սողոմոնյանի, Ա. Աղաբարյանի, Վ. Մնացականյանի, Ս. Արզունյանի, Ա. Բաբայանի, Կ. Աղաբեկյանի, Դ. Գասպարյանի, Ս. Դանիելյանի գրախոսությունները:

ԱՐԳԱՎՈՐԻՄ

1988թ. Լեռնային Ղարաբաղի գրողների կազմակերպությունը դուրս եկավ Աղբեջանի գրողների միությունից: Բարգում դադարեցվեց «Խորհրդային գրող» համեսի տպագրությունը:

1989թ. Ստեփանակերտում սկսեց հրատարակվել «Արցախ» ամսագիրը: Այն դարձավ մի նոր ամքիոն, որտեղ տպագրվեցին հայ նշանավոր գրականագետների տեսական-քննադատական հոդվածները: Ուշադրության կենտրոնում ազատագրական պայքարի ֆոնի վրա գրականության ստեղծման ընթացքն էր՝ համեմ-ված գնահատման պահանջվող չափանիշներով եւ ուսանելի խորհուրդներով: Ակադեմիկոսներ Ս. Սարինյանը, Ս. Արզունա-նյանը, քննադատներ Կ. Աղարելյանը, Ս. Աքաբեկյանը, Ա. Ափի-նյանը եւ ուրիշներ հանդես եկան գրախոսություններով եւ ընդ-հանրացնող հոդվածներով: Ս. Սարինյանը մեծ հավատ տածեց Արցախի ստեղծագործական մտավորականության կարողությունների նկատմամբ, տպագրելով իր «Արցախը դեռ պիտի խոսի», «Արցախի լեգենդը», «Բանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը», «Ուրվագծեր ետադարձ հայացքով», «Բանաս-տեղծության գիտությունը» հոդվածաշարը: Գնահատելով հոգեւոր վերածնունդը Արցախում, հօչքակավոր գրականագետը նշեց. «Արցախի հարցը վերստին բարձրանում է համագային նշանակության՝ խորհրդային կայսրության ատյանների առաջ դնելով նրա ազատագրության համաժողովրդական կամքը... Այս առա-քելությամբ ասպարեզ եկավ Արցախի ազգային հեղափոխական սերունդը եւ իր հեղափոխական գրականությունը՝ Բագրատ Ուլ-լուրաբյան, Զորի Բալայան, Յրայա Բեգլարյան, Գուրգեն Գար-դիելյան, Մաքսիմ Յովիաննիսյան, Ժան Անդրյան, Սոկրատ Խա-նյան եւ ուրիշներ: Ստավոր շարժմանն ուղղություն էին տալիս հրապարակախոսությունն ու բանաստեղծությունը»:

Ս. Սարինյանը ընդգծեց, որ պետական Արցախը ոչ միայն ասել եւ ասում է իր խոսքը, այլեւ ժամանակն է, որ հայ գրաք-նադատությունն ասի իր խոսքը հայ մշակույթի ինքնատիպ եւ ու-

ԱՄՓՈՓՈՒՄ

Չադրության արժանի մի անբաժանելի մասը կազմող Արցախի գրականության մասին: Յայտնի է, որ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո Պ. Սեւակը, Յ. Սահյանը, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Հ. Հովհաննիսյանը, Մ. Մարգարյանը պոեզիան ավելի մոտեցրին կյանքին, իսկական արվեստի ակունքին, նպաստելով գեղարվեստական մտածողության վերելքին: Պոեզիայի կենտրոնում Յայաստանի գեղարվեստական կերպարի կերտման պրոբլեմը կարենորվեց: Չափածոյի ամենատարբեր տեսակներով ստեղծվեց 20-րդ դարի երկրորդ կեսի հայրենապատումը: Կերպածնված փոքրիկ Յայաստանի պատկերը մի կողմից, կորուսայլ Մեծ Յայրի ցավը՝ մյուս, միասնաբար կազմեցին հայ պոետների նախասիրած խորիորդանշանային արվեստի հիմնական սկզբունքը: Արձարձվեցին նաև սիրո, բնության թեմաները:

Մետաֆորներ ընտրելով Մասիսը եւ Արագածը, Վանա ծովը եւ Սեւանը, բանաստեղծները զրույցի մեջ ներառեցին Յայկի եւ Արայի, Արտաշեսի եւ Տիգրանի, Մեսրոպ Մաշտոցի եւ Վարդան Մամիկոնյանի սիրանքները, ծգտելով գտնել ժամանակի հարցերի պատասխանը: Հ. Շիրազի, Պ. Սեւակի, Վ. Դավթյանի, Ռ. Դավոյանի, Լ. Դուրյանի, Վ. Յակոբյանի, Հ. Բեգլարյանի պատմական պոեմներում բացահայտվեցին հայոց անցյալի փիլիսոփայությունը՝ հերոսական ժամանակները կապելով ժողովորի հարատեւման հետ:

1988-ին սկսվեց արցախյան ազգային-ազատագրական պայքարը: Արցախյան պատերազմը դարձավ Ավարայրի եւ Սարդարապատի շարունակությունը, պատերազմին զինվորագրվեց նաև մեր նորօրյա գրականությունը, առանձնապես պոեզիան: Պայքարի առաջին օրերից իրենց կրակոտ խոսքն ասացին Վ. Դավթյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Յ. Սահյանը, Բ. Զանյանը, Մետաքսեն, Ռ. Դավոյանը, Հ. Հովհաննիսյանը, Յու. Սահակյանը եւ ուրիշներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին, Արցախում ապրող եւ ստեղծագործող պոետներից իրենց մարտաշունչ երգերով ու գրքերով հանդես եկան Վ. Յակոբյանը, Գ. Գարդիելյանը, Յր. Բեգլարյանը, Ն. Ավագյանը, Ա. Յովհաննիսյանը, Ս. Խանյանը, Ա. Քոչարյանը, Ռ. Եսայանը, Գ. Գասպարյանը, Ժ. Ալեքսանյանը եւ ուրիշներ: Նրանք ժողովրդին կոչ արեցին համախմբվել՝ մայր Յայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ: Որպես ոգեշնչումի կոչ հնչեց Յ. Շիրազի տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Այն հնչում էր որպես օրիներգ՝ միաբանվելու եւ ազգային ողբերգությանը վերջ տալու խորհուրդ: Տեսնելով թուրք-ազերիների նենգ խաղերը արցախիների ազատաբաղծ ոգու դեմ, բանաստեղծներն իրենց մարտաշունչ երգերով, պոեմներով, բալլարդներով, դրանաներով խարազանեցին թշնամական ուժերի ցննիզն ու դաժանությունները եւ հնչեցրին պայքարի կոչը:

Ավանդական Արցախի գետերն ու սարերը՝ Թարթառը, Խաչենագետը, Իշխանագետը, Մոռվը, Ջիրսը, Արեւադրը գեղարվեստական մետաֆորներ դարձան բանաստեղծների մարտական ստեղծագործություններում:

Արցախյան պայքարը գնալով ոչ միայն վճռական թափստացավ, այլև դարձավ աշխարհասկյուռ հայ ժողովրդին ի մի բերող սերուցք: Յայությունը զգաց միաբանվելու կարեւորությունը, բոլորի շրթերին նորից կամարվեց Մեծն Զարենցի մարգարեական կոչը: «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Սիրո թեման եւս արծարումի լուրջ երանգներ ունեցավ Արցախի պոեզիայում: Վ. Յակոբյանի երկրորդ գիրքը լույս տեսավ «Սեր եւ ժահիտ» վերնագրով, Ն. Ավագյանի «Յասուն իմ հասկ» գրքի առյուծի բաժինը կազմեց նրա «Վերջին լար» սիրային շարքը, Յր. Բեգլարյանի «Դրաշք երկիր իմ Ղարաբաղ» ժողովածուի կեսից ավելին սիրո բանաստեղծություններն են, սիրո գեղար-

ԱՄՓՈՓՈՒՄ

Վեստական յուրացման իր սկզբունքը դրսեւորեց Ա. Յովհաննիսյանը, սիրային թարմ երգերով հանդես եկան երիտասարդ ներկայացուցիչներ Ա. Քոչարյանը, Ժ. Բեգլարյանը, Ռ. Եսայանը, Ն. Գասպարյանը եւ ուրիշներ:

Սիրո փիլիստփայությունը տարբեր երանգներով ծփանք տվեց նրանց երգերում: Նրանք իրենց խոսքն ասացին հոգեբանական պատկերավոր բացահայտումներով, ժողովրդական փիլիստփայության խորհուրդներով, այս կրկնվող աշխարհի եւ անցողիկ անհատի փոխհարաբերությունների ճշնարիտ ընդհանրացումներով:

20-րդ դարի երկրորդ կեսի հայ բնապաշտական քնարերգության բոլոր ներկայացուցիչներոց լուրջ ուշադրություն են դարձրել բնության լեզվով մարդու սրտի հետ խոսելու հնարանքին, որին հետեւել են նաև Արցախի պուտները: Նրանք ամեն կերպ ձգտել են բանաստեղծական իրենց հունձքը կապել Յայոց Արեւելից կողմանց գեղեցկությունների եւ նրա մարդկանց հոգսերի ու ակնկալությունների հետ: Արցախյան բնությունն իր երանգներով երգի մեջ բերեցին Բ. Զանյանը, Վ. Յակոբյանը, Գ. Գարդիելյանը, Յր. Բեգլարյանը, Ա. Յովհաննիսյանը, Ռ. Եսայանը եւ ուրիշներ: Բնապաշտական տարերքի նրանց դիտարկումները դառնում են անհատի եւ հասարակության, գործի եւ հավերժության, արդարության եւ իրականության եւ այլ պորբլեմների շոշափող պատկերային հյուսվածքներ: Կյանքի հավերժության գաղտնիքները պատկերվում են բնանկարի մթնոլորտում, նոր երանգներով շարունակվում են բնապաշտական քնարերգության ավանդույթները:

Արցախում զարգացավ նաև մանկագրությունը, որի տաղանդավոր ներկայացուցիչներից է Գ. Գարդիելյանը: Նրա ավելի քան երեսուն գրքերը, Մոսկվայում եւ Քիշնեւում հրատարակված ժողովածումները լայն ծանաչում են բերել հեղինակին: Շարունակելով Ղ. Աղայանի, Յ. Թումանյանի, Ա. Խնկոյանի ավանդույթները,

ԱՄՓՈՓՈՒՄ

Գ.Գաբրիելյանն իր ինքնատիպ ստեղծագործություններով հարստացրել եւ զարգացրել է հայ մանկագրությունը։ Բարձր են գնահատվել նրա ծառայությունները։ Այդ են վկայում Հայաստանի գրողների միության Ստ. Զորյանի անվան ամենամյա մրցանակը, Հայաստանի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց» մեդալը, ԼՂՀ «Սուլբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը եւ այլ պարգևներ։

Գ. Գաբրիելյանը երեխանների հոգեբանությունը թարգմանող մանկագիր է, հասել է մի այնպիսի արդյունքի, որտեղ ընդգծված երեւում է նրա բարձրարվեստ վաստակը հայ մանկագրության ասպարեզում։

Ընդհանրության մեջ 20-րդ դարի երկրորդ կեսին Արցախում ստեղծված հայ պոեզիան արժանի է ամենալուրջ ուսումնափրության, որովհետեւ գաղափարա-գեղարվեստական առանձնահատկություններով այն որպես ամբողջական հայ գրականության անբաժանելի մաս, կանգնած է հայ պոեզիայի մարտական դիրքերում։

ԾԱՆՈԹԱԳՐԻԴՐՅՈՒՄՆԱՌ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱԽԻ ՓՈԽՎՐԵՆ

1. «Գրական թերթ», 1954, թիվ 10:

2. «Գրական Աղրբեջան», («Խորհրդային գրող»), 1957, թիվ 1, էջ 6:

ՔՍԱՂԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԸ

3. Պ. Սեւակ «Իմ թեման մարդն է», «Դրուժքա նարողով», 1964, թիվ 6, էջ 233:

4. «Խորհրդային գրող», 1961, թիվ 2, էջ 106:

5. Նույն տեղում, էջ 106:

6. Նույն տեղում, էջ 109:

7. Նույն տեղում, էջ 111:

8. Նույն տեղում, էջ 116:

9. «Խորհրդային գրող», 1962, թիվ 1, էջ 117:

10. Նույն տեղում, էջ 121:

11. Նույն տեղում, էջ 122:

12. «Խորհրդային գրող», 1963, թիվ 1, էջ 119:

13. Նույն տեղում, էջ 119:

14. Նույն տեղում, էջ 119:

15. Նույն տեղում, էջ 119:

16. Նույն տեղում, էջ 121:

17. Պ. Գասպարյան, «Պոեզիան եւ կյանքի ճշմարտությունը, Երեւան, «Լուս», 1990, էջ 19:

18. «Խորհրդային գրող», 1964, թիվ 1, էջ 80:

19. «Խորհրդային գրող», 1964, թիվ 3, էջ 81:

20. «Խորհրդային գրող», 1964, թիվ 6, էջ 90-91:

21. «Խորհրդային գրող», 1966, թիվ 1, էջ 105:

22. Նույն տեղում, էջ 106:

23. Նույն տեղում, էջ 109:

24. «Խորհրդային գրող», 1972, թիվ 1, էջ 72:

25. Նույն տեղում, էջ 81:

26. Պ. Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.1, «Հայաստան», 1972, էջ 314:

27. Նույն տեղում, էջ 320:

28. «Խորհրդային գրող», 1972, թիվ 1, էջ 82:

29. Նույն տեղում, էջ 82:

30. Նույն տեղում, էջ 83:

31. Նույն տեղում, էջ 84-85:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

- ³² «Խորհրդային գրող», 1973, թիվ 4, էջ 102:
- ³³ «Խորհրդային գրող», 1975, թիվ 2, էջ 105:
- ³⁴ Նույն տեղում, էջ 109:
- ³⁵ «Գրական թերթ», 1973, 24 օգոստոսի:
- ³⁶ «Խորհրդային գրող», 1977, թիվ 1, էջ 106:
- ³⁷ «Խորհրդային գրող», 1978, թիվ 1, էջ 106:
- ³⁸ «Խորհրդային գրող», 1978, թիվ 3, էջ 108:
- ³⁹ «Արցախ» համես, 1989, թիվ 1, էջ 7:
- ⁴⁰ Նույն տեղում, էջ 6:
- ⁴¹ Նույն տեղում, էջ 6:
- ⁴² «Արցախ» ամսագիր, 1989, թիվ 2-3, էջ 76:
- ⁴³ Ս. Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, «Արցախ» հրատ., 1998 թ., էջ 3:
- ⁴⁴ Նույն տեղում, էջ 3:
- ⁴⁵ Նույն տեղում, էջ 6:
- ⁴⁶ Նույն տեղում, էջ 53:
- ⁴⁷ Նույն տեղում, էջ 52:

ՏԱԳՍԱՊԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԿԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

1. Ավ. Խսահակյան, Երկերի ժողովածու՝ 4 հատորով, հ.4, Յայպետիրատ, 1951, էջ 159:
2. «Սովետական գրականություն» ամսագիր, 1997, թիվ 12, էջ 123:
3. Բ. Զանյան, Իշխանաձորի կանչը, «Սովետական գրող», 1986, էջ 5:
4. Նույն տեղում, էջ 8:
5. Նույն տեղում, էջ 21:
6. «Գրական թերթ», 1977, հուլիս:
7. Վ. Յակոբյան, Բանաստեղծությունը եւ տիեզերական շարժումը, Ստեփանակերտ, 2000 թ., էջ 397:
8. Բ. Զանյան, Իշխանաձորի կանչը, «Սովետական գրող», 1986:
9. Նույն տեղում, էջ 68:
10. Ս. Աղօրմանյան, Բանաստեղծության ազգային հողը, «Անի» հրատ., Երևան, 1998, էջ 201:
11. Պ. Սեւակ, Երկեր 6 հատորով, Երևան, հ.6, էջ 327:
12. Ս. Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, Վ. Յակոբյանի «Սենարամ» ժողովածուի առաջաբանը, ԵրՊՅ հրատ., Երևան, 1996, էջ 3:
13. Նույն տեղում, էջ 3:
14. Վ. Յակոբյան, Սեր եւ Ժպիտ, Բաքու, 1973, էջ 9:
15. Նույն տեղում, էջ 32:
16. Նույն տեղում, էջ 34:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

- ¹⁷ Ա. Աղաբարյան, XX դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք II, «Սովետական գրող», Երևան, 1984, էջ 24:
- ¹⁸ Ա. Եղիազարյան, Մարդը ներսից, «Սովետական գրող», Երևան, 1985, էջ 94-95:
- ¹⁹ Նույն տեղում, էջ 3:
- ²⁰ Նույն տեղում, էջ 61:
- ²¹ Նույն տեղում, էջ 32:
- ²² Նույն տեղում, էջ 7:
- ²³ Նույն տեղում, էջ 8:
- ²⁴ Նույն տեղում, էջ 24:
- ²⁵ Վ. Ցակորյան, Վաղվա աչքերով, Երևան «Սովետական գրող», 1987, էջ 8:
- ²⁶ Նույն տեղում, էջ 16:
- ²⁷ Նույն տեղում, էջ 30:
- ²⁸ Նույն տեղում, էջ 45-46:
- ²⁹ Յ. Բեգլարյան, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000 թ., էջ 9:
- ³⁰ Նույն տեղում, էջ 16:
- ³¹ Ս. Սարինյան, Անդրադարձ, Յ. Բեգլարյանի Արցախ-Նամե գրքի առաջաբանը, Ստեփանակերտ, 2000 թ., էջ 7:
- ³² Յ. Բեգլարյանի Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000 թ., էջ 47:
- ³³ Նույն տեղում, էջ 141:
- ³⁴ Նույն տեղում, էջ 17:
- ³⁵ Նույն տեղում, էջ 74:
- ³⁶ Նույն տեղում, էջ 75:
- ³⁷ «Խորհրդային գրող», 1961, թիվ 2:
- ³⁸ «Խորհրդային գրականություն», 1963, թիվ 6:
- ³⁹ «Խորհրդային գրականություն», 1970, թիվ 1:
- ⁴⁰ Նույն տեղում, 1970, թիվ 1:
- ⁴¹ Ս. Խանյան, Արեւադ, Բ., 1968, էջ 22:
- ⁴² Ա. Վրայան, Կարոսի եւ սիրո կրակներ, «Սոնա» հրատ., 2000 թ., էջ 18:
- ⁴³ «Գրական թերթ», 1973, 21 օգոստոսի:
- ⁴⁴ Ս. Խանյան, Լեռների երգը, Բ., 1972, էջ 3:
- ⁴⁵ «Խորհրդային գրող», 1973, թիվ 3:
- ⁴⁶ Ս. Խանյան, Լեռների երգը, Բ., 1972, էջ 4:
- ⁴⁷ Նույն տեղում, էջ 5:
- ⁴⁸ «Սովետական Ղարաբաղ», 1981, թիվ 130:
- ⁴⁹ Ս. Խանյան, Սիրո անունից, Բ., 1980, էջ 3:
- ⁵⁰ Նույն տեղում, էջ 15:
- ⁵¹ Ա. Վրայան, Կարոսի եւ սիրո կրակներ, 2000, «Սոնա», էջ 41:
- ⁵² Ս. Խանյան, Թոն անունից, Բ., 1980, էջ 26:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

- 53. Նույն տեղում, էջ 27:
- 54. Նույն տեղում, էջ 56:
- 55. Նույն տեղում, էջ 56:
- 56. Նույն տեղում, էջ 60:
- 57. Նույն տեղում, էջ 75:
- 58. Նույն տեղում, էջ 97:
- 59. Ս. Խանյան, «Քո անունից», Բ., 1980, էջ 27:
- 60. «Սովետական Ղարաբաղ», 1990, 15 հունիսի:
- 61. «ԼՂ Հանրապետություն», 1996, 24 հունվարի:
- 62. Ս. Խանյան, «Արցախյան դողանջներ», 1991, էջ 9:
- 63. Նույն տեղում, էջ 10:
- 64. Նույն տեղում, էջ 12:
- 65. Ա. Թովմասյան, Ցայզալույս, Ե., 1977, էջ 8:
- 66. Նույն տեղում, էջ 11:
- 67. Նույն տեղում, էջ 17-18:
- 68. Նույն տեղում, էջ 25:
- 69. Լ. Ավագյան, «Դասուն իմ արտ», Ե., «Լաիրի», 1990, էջ 3:
- 70. Նույն տեղում, էջ 3:
- 71. Նույն տեղում, էջ 6:
- 72. Նույն տեղում, էջ 6:
- 73. Նույն տեղում, էջ 15:
- 74. Նույն տեղում, էջ 32:
- 75. Ա. Ջովհաննիսյան, Ավանդատուն, Ե., 1991, էջ 6:
- 76. Նույն տեղում, էջ 3:
- 77. Նույն տեղում, էջ 4:
- 78. Նույն տեղում, էջ 7:
- 79. Նույն տեղում, էջ 13:
- 80. Նույն տեղում, էջ 77:
- 81. Վ. Օվյան, Լեռների լեզենդը, Ե., 2003, էջ 5:
- 82. Նույն տեղում, էջ 8-9:
- 83. Նույն տեղում, էջ 10:
- 84. Նույն տեղում, էջ 12:
- 85. Նույն տեղում, էջ 12:
- 86. Նույն տեղում, էջ 13:
- 87. Նույն տեղում, էջ 15:
- 88. Նույն տեղում, էջ 16:
- 89. Նույն տեղում, էջ 14:
- 90. Նույն տեղում, էջ 14-20:
- 91. Նույն տեղում, էջ 24-25:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

92. Նույն տեղում, էջ 27:
93. Նույն տեղում, էջ 28:
94. Նույն տեղում, էջ 34:
95. Գ. Էմին, Այս տարիքում, 1968, էջ 13-14:
96. Վ. Օվյան, Լեռների լեզենդը, Ե., 2003, էջ 37:
97. Նույն տեղում, էջ 37:
98. Նույն տեղում, էջ 39:
99. Նույն տեղում, էջ 43:

ՍԻՐՈ ՑԱՎԱՆ ՈՒ ԿՄԱՅՔԸ

1. «Գրական թերթ», 1995, թիվ 25:
2. Է. Սեմելայտիս, Կոնտրապունկտ, Մոսկվա, 1972, էջ 285-286:
3. Վ. Շակորյան, Շաօհ ամուսից, Բաքու, 1978, էջ 76:
4. Նույն տեղում, էջ 85-86:
5. Վ. Շակորյան, Անմարելի-անմեռնելի, Բաքու, 1981, էջ 75:
6. Նույն տեղում, էջ 102:
7. Վ. Շակորյան, Վաղվա աչքերով, «Սով. գրող», Երեւան, 1987, էջ 117:
8. Նույն տեղում, էջ 104-105:
9. Նույն տեղում, էջ 110:
10. Ա. Ավագյան, Շասուն իմ հասկ, Ե., «Նախրի», 1990, էջ 76:
11. Նույն տեղում, էջ 79:
12. Նույն տեղում, էջ 81:
13. Նույն տեղում, էջ 82:
14. Նույն տեղում, էջ 86:
15. Նույն տեղում, էջ 87:
16. Նույն տեղում, էջ 90:
17. Նույն տեղում, էջ 90:
18. Ք. Բեգլարյան, Ջրաշը երկիր իմ Ղարաբաղ. «Նախրի», 1990, էջ 96:
19. Ք. Բեգլարյան, Լեռան աղբյուր, Բաքու, 1966, էջ 33:
20. Ք. Բեգլարյան, Արեւային հնձաններ, Բաքու, 1979, էջ 40:
21. Ք. Բեգլարյան, Ջրաշը երկիր իմ Ղարաբաղ, «Նախրի», 1990, էջ 96:
22. Ք. Բեգլարյան, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000, էջ 376:
23. Ք. Բեգլարյան, Ջրաշը երկիր իմ Ղարաբաղ, «Նախրի», 1996, էջ 97:
24. Ք. Բեգլարյան, Արեւային հնձաններ, Բաքու, 1979, էջ 78:
25. Նույն տեղում, էջ 50:
26. Նույն տեղում, էջ 54:
27. Ք. Բեգլարյան, Ջրաշը երկիր իմ Ղարաբաղ, «Նախրի», 1990, էջ 92:
28. Նույն տեղում, էջ 101:
29. Ա. Շովիաննիսյան, Ավանդատուն, «Նախրի», 1991, էջ 38:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

- ³⁰ Նույն տեղում, էջ 38:
- ³¹ Նույն տեղում, էջ 39:
- ³² Նույն տեղում, էջ 39:
- ³³ Նույն տեղում, էջ 40:
- ³⁴ Նույն տեղում, էջ 47:
- ³⁵ Նույն տեղում, էջ 48:
- ³⁶ Նույն տեղում, էջ 50:
- ³⁷ Նույն տեղում, էջ 52:
- ³⁸ Նույն տեղում, էջ 53:
- ³⁹ Նույն տեղում, էջ 75:
- ⁴⁰ Նույն տեղում, էջ 58:
- ⁴¹ Նույն տեղում, էջ 71:
- ⁴² Նույն տեղում, էջ 72:
- ⁴³ Նույն տեղում, էջ 73:
- ⁴⁴ Նույն տեղում, էջ 74:
- ⁴⁵ Նույն տեղում, էջ 75:
- ⁴⁶ Նույն տեղում, էջ 75:
- ⁴⁷ Ա. Խանյան, Կարոտի կրակներ, Ստեփ., 1990, էջ 227:
- ⁴⁸ Նույն տեղում, էջ 230:
- ⁴⁹ Նույն տեղում, էջ 200:
- ⁵⁰ Նույն տեղում, էջ 202:
- ⁵¹ Ա. Խանյան, Թռ անունից, 1980, էջ 89:
- ⁵² Նույն տեղում, էջ 80:
- ⁵³ Նույն տեղում, էջ 81:
- ⁵⁴ Նույն տեղում, էջ 83:
- ⁵⁵ Նույն տեղում, էջ 86:
- ⁵⁶ Նույն տեղում, էջ 89:
- ⁵⁷ Ա. Աբայան, Կարոտի եւ սիրո կրակներ, «Սոնա» հրատ., 2000 թ., էջ 53:
- ⁵⁸ Նույն տեղում, էջ 106:
- ⁵⁹ Վ. Աբամեսյան, Աստոլալուսի կարոտով, «Սովորական Ղարաբաղ», 1990, 15 հուլիսի:
- ⁶⁰ Ա. Աբայան, Կարոտի եւ սիրո կրակներ, «Սոնա» հրատ., 2000 թ., էջ 64:
- ⁶¹ Ա. Խանյան, Կարոտի կրակներ, Ստեփ., 1990, էջ 212:
- ⁶² Ա. Խանյան, Իմ ծիածանը, «Սոնա», հրատ., 2000, էջ 84:
- ⁶³ Նույն տեղում, էջ 84:
- ⁶⁴ Նույն տեղում, էջ 87:
- ⁶⁵ Նույն տեղում, էջ 103:
- ⁶⁶ Ա. Թովմասյան, Ցայգալուս, Բ., 1977, էջ 12:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

- ⁶⁶ Նույն տեղում, էջ 16:
- ⁶⁸ Նույն տեղում, էջ 29:
- ⁶⁹ Ա.Թովմասյան, Արցախի եմ ես, Ե., 1990, էջ 3:
- ⁷⁰ Նույն տեղում, էջ 36:
- ⁷¹ Նույն տեղում, էջ 37:
- ⁷² Նույն տեղում, էջ 38:
- ⁷³ Նույն տեղում, էջ 62:
- ⁷⁴ Նույն տեղում, էջ 65:
- ⁷⁵ Նույն տեղում, էջ 80:
- ⁷⁶ Նույն տեղում, էջ 84:
- ⁷⁷ Նույն տեղում, էջ 85:
- ⁷⁸ Նույն տեղում, էջ 100:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐԻ ԽՈՐՃՈՒՐԴ

1. Ա. Աղաբարյան, XX դարի հայ գրականության գուգահեռականներում, «Սովետական գրող», 1984, էջ 61:
2. Ա. Արզումանյան, բանաստեղծության ազգային հողմ. «Անի», 1998, էջ 495-496:
3. Բ. Զանյան. Իշխանաձորի կանաչը, «Սովետական գրող», 1983, էջ 177:
4. Նույն տեղում, էջ 183:
5. Նույն տեղում, էջ 186:
6. Նույն տեղում, էջ 189:
7. Նույն տեղում, էջ 232:
8. Նույն տեղում, էջ 235:
9. Նույն տեղում, էջ 238:
10. Նույն տեղում, էջ 245:
11. Նույն տեղում, էջ 245:
12. Նույն տեղում, էջ 246:
13. Նույն տեղում, էջ 247:
14. Նույն տեղում, էջ 253:
15. Նույն տեղում, էջ 259:
16. Ս. Սողոմոնյան, ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, 1965, գիրք 1-ին, էջ 241:
17. Յ. Բեգլարյան, Լեռնային աղբյուր, Բաքու, 1966, էջ 15:
18. Յ. Բեգլարյան, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000, էջ 171:
19. Կ.Գ. Բեկնազի, Երկերի լիակատար ժողովածու, Սոսկվա, 1955, էջ 34:
20. Յ. Բեգլարյան, Կաղնին ժայռի վրա, Բաքու, 1973, էջ 41:
21. Նույն տեղում, էջ 42:
22. Նույն տեղում, էջ 44:
23. Յ. Բեգլարյան, Արեւային հնձամներ, Բաքու, 1979, էջ 8-9:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

24. Յ. Բեզլարյան, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000, էջ 271:
25. Նույն տեղում, էջ 263:
26. Նույն տեղում, էջ 269:
27. Նույն տեղում, էջ 269:
28. Վ. Յակոբյան, Մեր եւ ժայռ, Բաքու, 1973, էջ 3:
29. Նույն տեղում, էջ 9:
30. Նույն տեղում, էջ 15:
31. Նույն տեղում, էջ 15:
32. Նույն տեղում, էջ 21:
33. Նույն տեղում, էջ 27:
34. Նույն տեղում, էջ 29:
35. Նույն տեղում, էջ 31:
36. Նույն տեղում, էջ 51:
37. Նույն տեղում, էջ 55:
38. Վ. Յակոբյան, Այրիանում է լուսը, Բաքու, 1975, էջ 23:
39. Նույն տեղում, էջ 3:
40. Նույն տեղում, էջ 5:
41. Նույն տեղում, էջ 8:
42. Նույն տեղում, էջ 14:
43. Նույն տեղում, էջ 47:
44. Վ. Յակոբյան, Արցախա ծովս, «Լուս», 1989, էջ 12:
45. Նույն տեղում, էջ 12:
46. «Գրական Աղբբեջան», («Խորհրդային գրող»), 1966, թիվ 5:
47. Ս. Խանյան, Միրտս ծեղ հետ է, Բ., 1966, էջ 28:
48. Նույն տեղում, էջ 29:
49. Նույն տեղում, էջ 39:
50. Նույն տեղում, էջ 36:
51. «Խորհրդային գրող», 1966, թիվ 5:
52. Ս. Խանյան, Կարկաչ, Բ., 1952, էջ 60:
53. Ս. Խանյան, Արեւապ, Բ., 1968, էջ 22:
54. Նույն տեղում, էջ 32:
55. «Խորհրդային գրող», 1970, թիվ 1:
56. Ս. Խանյան, Լեռների երգը, 1974, էջ 6:
57. Նույն տեղում, էջ 7:
58. Նույն տեղում, էջ 8:
59. Նույն տեղում, էջ 10-11:
60. «Գրական թերթ», 1973, 24 օգոստոսի:
61. Ս. Խանյան, Բո անոնից, Բ., 1980, էջ 3:
62. Նույն տեղում, էջ 23:

ԾԱՆՈԹԱԳՐԻԴՅՑՈՒՆՆԵՐ

- 63. Նույն տեղում, էջ 23:
- 64. Նույն տեղում, էջ 27:
- 65. «Սովետական Ղարաբաղ», 1981, 29 հուլիսի:
- 66. Ս. Խանյան, Քո անունից, 1980, էջ 28:
- 67. Ս. Խանյան, Կանաչ Ժիանը, Բ., 1981, էջ 29:
- 68. Նույն տեղում, էջ 5:
- 69. Նույն տեղում, էջ 15:
- 70. Նույն տեղում, էջ 17:
- 71. Ս. Խանյան, Կարոտի կրակներ, «Արցախ», էջ 48:
- 72. Նույն տեղում, էջ 154:
- 73. Նույն տեղում, էջ 176:
- 74. Նույն տեղում, էջ 176:
- 75. «Խորհրդային Ղարաբաղ», 1990, 18 հուլիսի:
- 76. «ԼՂ Հանրապետություն», 1996, 24 հունիսի:
- 77. Ս. Խանյան, Արցախյան դրամքներ, Ե., 1991, էջ 9:
- 78. Նույն տեղում, էջ 12-13:
- 79. Ս. Խանյան, Իմ Ծիածանը, Ստեփ., 2000, էջ 9:
- 80. Նույն տեղում, էջ 31:
- 81. «Ազատ Արցախ», 2001, 3 հուլիսի:
- 82. Ա. Թօվմասյան, Զգույշ քայլեք, մարդիկ, Ե., էջ 12:
- 83. Նույն տեղում, էջ 33:
- 84. Նույն տեղում, էջ 37:
- 85. Նույն տեղում, էջ 51:
- 86. Նույն տեղում, էջ 51:
- 87. Նույն տեղում, էջ 65:
- 88. Նույն տեղում, էջ 94:
- 89. Նույն տեղում, էջ 95:

ԿԱԹԱՍԱԿԻ ՐՐԾՎԱՆՔ, ԽԱՊԱՊՈՒԹՅԱՆ ԾԱՐԱՎ

- 1. Ավ. Խսահակյան, Երկեր 4 հաստորով, հ. 1, 1951, էջ 191-192:
- 2. Ա. Զարյան, Երկեր 7 հաստորով, հ. 1, 1962, էջ 175:
- 3. Ռ. Շիրազ, Քնար Հայաստանի:
- 4. Գ. Սարյան, Երկերի ժողովածու 2 հաստորով, հ. 1, Երեւան, 1961, էջ 332:
- 5. Թ. Հուրյան, Ասող, Բ., 1993, էջ 37:
- 6. Նույն տեղում, էջ 21:
- 7. Նույն տեղում, էջ 23:
- 8. Նույն տեղում, էջ 22:
- 9. Բ. Զանյան, Իշխանաձորի կանաչը, Երեւան, 1986, էջ 196:
- 10. Նույն տեղում, էջ 197:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱԿՐ

11. Նույն տեղում, էջ 213:
12. Գ. Չովսեփյան, Զինվորի երգը, Բ., 1976, էջ 15:
13. Գ. Գաբրիելյանի երգարանից:
14. Վ. Հակոբյան, Մայրանում է լույսը, Բ., 1975, էջ 105-106:
15. Յ. Բեգլարյան, Խմ տունը, Բ., 1987, էջ 69:
16. Ա. Ջովհաննիսյան, Անմահների ծայնը, Բ., 1975, էջ 17-18:
17. Ս. Խանյան, Սպասում ենք դեռ, 1975, էջ 46:
18. Սովետական Ղարաբաղ, 1986, 15 մայիսի:
19. «Գրական Աղրբեջան», 1975, թիվ 4:
20. Նույն տեղում, էջ 3:
21. Նույն տեղում, էջ 8:
22. Ա. Արայան, Կարոտի եւ սիրո կրակներ, Ստեփ., 2000, էջ 20:
23. Ս. Խանյան, Սպասում ենք դեռ, 1975, էջ 20:
24. Ս. Խանյան, Սպասում ենք դեռ, Բ., 1975, էջ 31:
25. Նույն տեղում, էջ 31:
26. Ս. Խանյան, Սպասում ենք դեռ, Բ., 1975, էջ 32:
27. Նույն տեղում, էջ 32:
28. Ժ. Անդրյան, Մեր գրական օջախը, 1979, Ե.:
29. Գրական թերթ, 1973, 24 օգոստոսի:
30. Գրական Աղրբեջան, 1975, թիվ 1:
31. Գ. Աղաջանյան, Անհանգիստ է սիրոս, Բ., 1970, էջ 31:
32. Նույն տեղում, էջ 35:
33. Յ. Սահյան, Հայաստանը երգերի մեջ, 1962, Ե., էջ 191:

ՊՈՇՁԻԱԱՍ ՄԱՐՏԱԿԱԱ ԴԻՐՁԵՐՈՒՄ

1. Ս. Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, Վ. Հակոբյանի «Մենարան» (Երևան, 1966) գրքի առաջաբանը, էջ 4:
2. Վ. Հակոբյան, Արցախա ծուխս, «Լույս», 1989, էջ 6:
3. Նույն տեղում, էջ 9:
4. Նույն տեղում, էջ 10:
5. Վ. Հակոբյան, Սոսե, «Լայրի», 1994, էջ 3:
6. Նույն տեղում, էջ 31:
7. Վ. Հակոբյան, «Արցախա ծուխս», Ե., 1989, էջ 5:
8. Նույն տեղում, էջ 5:
9. Նույն տեղում, էջ 5:
10. Նույն տեղում, էջ 5:
11. Վ. Հակոբյան, «Սոսե», Ե., 1994, էջ 4:
12. Նույն տեղում, էջ 5:
13. Նույն տեղում, էջ 6:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

14. Նույն տեղում, էջ 6:
15. Նույն տեղում, էջ 7:
16. Նույն տեղում, էջ 7:
17. Ս. Սարիմյան, «Գեղարվեստական գրականության պատմականությունը», Ե., 1970, էջ 178:
18. Վ. Ջակոբյան, «Սոսե», Ե., 1994, էջ 17:
19. Նույն տեղում, էջ 32:
20. Նույն տեղում, էջ 42:
21. Նույն տեղում, էջ 12:
22. Ն. Ավագյան, Ջասուն իմ հասկ, «Նախրի», 1990, էջ 73:
23. Ա. Ջովհաննիսյան, Ավանդատում, «Նախրի», 1991, էջ 3:
24. Նույն տեղը, էջ 4:
25. Բ. Զանյան, Մի գետ էլ ունենք Տրտու անունով, Ստեփ., 1995, էջ 12:
26. Ա. Թովմասյան, Արցախից եմ ես, «Նախրի», 1990, էջ 5:
27. «Ղ Ջանրապետություն», 1996, 24 հունվարի:
28. Ս. Խանյան, Արցախյան դոդանջմեր, Ե., 1994, էջ 7:
29. Նույն տեղում, էջ 8:
30. Նույն տեղում, էջ 31:
31. Նույն տեղում, էջ 34:
32. Նույն տեղում, էջ 34:
33. Նույն տեղում, էջ 39:
34. Նույն տեղում, էջ 43:
35. Նույն տեղում, էջ 43-44:
36. Նույն տեղում, էջ 46:
37. Նույն տեղում, էջ 47:
38. Ս. Խանյան, Իմ ծիածանը, «Սոնա» իրատ., 2000 թ., էջ 9:
39. Նույն տեղում, էջ 11:
40. Նույն տեղում, էջ 22:
41. Նույն տեղում, էջ 22:
42. Նույն տեղում, էջ 41:
43. Նույն տեղում, էջ 42:
44. Ղ. Միքայելյան, Ջավատի ժամ, Ե., 1989, էջ 6:
45. Նույն տեղում, էջ 4-5:
46. Նույն տեղում, էջ 7:
47. Նույն տեղում, էջ 3:
48. Նույն տեղում, էջ 16:
49. Ժ. Բեզլարյան, Երկիր-քարե տուն, Ստեփ., 1993, էջ 4:
50. Նույն տեղում, էջ 16:
51. Նույն տեղում, էջ 7:

ԾԱՆՈԹԱԳՐԻԹՅՈՒՆՆԱՄ

52. Նույն տեղում, էջ 14:
53. Նույն տեղում, էջ 15:
54. Նույն տեղում, էջ 17:
55. Նույն տեղում, էջ 20:
56. Նույն տեղում, էջ 35:
57. Նույն տեղում, էջ 45:
58. «Արցախ» հանդես, 1990, թիվ 3-4, էջ 2:
59. Նույն տեղում, էջ 2:
60. Ա. Քոչարյան, Աստվածամոր աչքերը, «Սահիի», 1991, էջ 12:
61. Ա. Քոչարյան, Եթե աստվածուի լինեի, «Արցախ», 1994, էջ 13:
62. Ռ. Եսայան, Նենակետեր, «Խորհրդային գրող», 1989, էջ 65:
63. Նույն տեղում, էջ 9:
64. «Արցախ» հանդես, 1990, թիվ 2, էջ 89:
65. Յ. Ալեքսանյան, Կենապաշտ, «Խորհրդային գրող», 1989, էջ 6:
66. Ա. Գասպարյան, Դավան Արցախի, «Սահիի», 1996, էջ 4:
67. Նույն տեղում, էջ 14:

ՊԱՏՄՈՒԹՅԱՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՍԸ

1. Ա. Խորենացի, Յայոց պատմություն, Ե., «Յայաստան», 1968, էջ 70:
2. Վ. Զակորյան, Արցախսա ծոլիս, Ե., «Լույս», 1989, էջ 40-41:
3. «Խորհրդային արվեստ», 1962, էջ 51:
4. Նույն տեղում, էջ 51:
5. Վ. Զակորյան, Ամարասի զանգերը, Ե., «Արեւիկ», 1989, էջ 38:
6. Նույն տեղում, էջ 56:
7. Նույն տեղում, էջ 59-60:
8. Նույն տեղում, էջ 61:
9. Նույն տեղում, էջ 65-66:
10. Նույն տեղում, էջ 68-69:
11. Նույն տեղում, էջ 77:
12. Նույն տեղում, էջ 79:
13. Նույն տեղում, էջ 82:
14. Նույն տեղում, էջ 87:
15. Նույն տեղում, էջ 91:
16. Նույն տեղում, էջ 94:
17. Նույն տեղում, էջ 105:
18. Նույն տեղում, էջ 107-108:
19. Պ. Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատ., հ. 5, 1974, էջ 258-259:
20. Վ. Զակորյան, «Մենարան», Երեւանի համալս. հրատ., 1996, էջ 321:
21. Նույն տեղում, էջ 322:

ԾԱՆՈԹԱԳՐԻԴՅՑՈՒՆՆԱՐ

22. Նույն տեղում, էջ 323:
23. Նույն տեղում, էջ 326:
24. Նույն տեղում, էջ 329:
25. Նույն տեղում, էջ 336-337:
26. Նույն տեղում, էջ 361-362:
27. Նույն տեղում, էջ 362:
28. Նույն տեղում, էջ 364-365:
29. Քր. Բեգլարյան, Յրաշք Երկիր իմ Ղարաբաղ, Ե., «Լահիրի», 1980, էջ 16:
30. Նույն տեղում, էջ 100:
31. Ս. Խանյան, Իմ ծիածանը, «Սոնա» հրատ., 2000, էջ 15:
32. Նույն տեղում, էջ 16:
33. Նույն տեղում, էջ 12-13:
34. Նույն տեղում, էջ 11:
35. Նույն տեղում, էջ 9:
36. Նույն տեղում, էջ 35-36:
37. Ս. Խանյան, Վրցախի արժիվը, 1995, էջ 3-4:
38. «ԼՀ Խանրապետություն» թերթ, 1996, 24 հունվարի:
39. «Եղիշի լույս» թերթ, 1995, դեկտեմբեր:
40. Ա. Ավագյան, «Մատյան հառներգության», Ե., «Ամարաս», 1977, էջ 106:
41. Նույն տեղը, էջ 3:
42. Նույն տեղը, էջ 7:
43. Նույն տեղը, էջ 17:
44. Նույն տեղը, էջ 14:
45. Նույն տեղը, էջ 15:
46. Նույն տեղը, էջ 29:
47. Նույն տեղը, էջ 32-33 :
48. Նույն տեղը, էջ 37:
49. Նույն տեղը, էջ 39:
50. Նույն տեղը, էջ 42:
51. Նույն տեղը, էջ 42:
52. Նույն տեղը, էջ 45-46:
53. Նույն տեղը, էջ 48:
54. Նույն տեղը, էջ 49:
55. Նույն տեղը, էջ 51:
56. Նույն տեղը, էջ 54:
57. Նույն տեղը, էջ 55:
58. Նույն տեղը, էջ 58:
59. Նույն տեղը, էջ 59:
60. Նույն տեղը, էջ 60:

ԾԱՆՈԹԱԳՐԻԴՅՑՈՒՆՆԱՐ

61. Նույն տեղը, էջ 61:
62. Նույն տեղը, էջ 64:
63. Նույն տեղը, էջ 74:
64. Նույն տեղը, էջ 79:
65. Նույն տեղը, էջ 83:
66. Նույն տեղը, էջ 89:
67. Նույն տեղը, էջ 90:
68. Նույն տեղը, էջ 91:
69. Նույն տեղը, էջ 93:
70. Նույն տեղը, էջ 97-98:
71. Նույն տեղը, էջ 98 :
72. Նույն տեղը, էջ 99:
73. Նույն տեղը, էջ 100:

ՄԱՍԻՒԿԵՐԻ ԱՇԽԱՐԴՈՒՄ

1. Յ. Յայրյան, «Սովետական դպրոց», 1968, 21 հունվարի:
2. «Պիոներ կանչ», 1967, 3 սեպտեմբերի:
3. «Կոմունիստ» (հայերեն), 1968, 21 մարտի:
4. Գ. Գաբրիելյանի արխիվից:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Տես Ե. Չարենց, 6 հատորյակի 6-րդ հատորը:
8. Գ. Գաբրիելյան, Աշնան հանդես, «Արեւիկ», 1969, էջ 3-4:
9. Գ. Գաբրիելյան, Ուրախ հայերեն, «Նոր-Դար», 1999, էջ 5-6:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարտնչող բանաստեղծութեան պատմութիինը	3
Առաջարանի փոխարեն	7
Քննադատության նախադրյալներն ու խորհուրդները	17
Տագնապի եւ հույսի հայրենապատում	59
Սիրո ցավն ու հմայքը	142
Բնության ու խոհի խորհուրդը	200
Դադրանակի իրճվանք, խաղաղության ծարավ	275
Պոեզիան մարտական դիրքերում	301
Պատմության հրամայականը	358
Արցախյան պատերազմի նահատակների կերպարը պոեզիայում	416
Մանուկների աշխարհում	433
Ամփոփում	459
Ծանոթագրություններ	465

Սուվորատ Աղալարի Խանյան

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Շինգերողի հատոր

Խմբագիր՝

Յովիկ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Գեղ. Խմբագիր՝

Մնացական ԱԶԻԶՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝

Ժաննա ԱՎԱՆԵՍՅԱՆ

Վերստուգող

Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ

սրբագրիչ՝

Դանձնված է շարլաքի 17.01.2010թ.: Ասորագրված է տպագրության 06.03.2010 թ.:
Տառատեսակ՝ «Arial Armenian»: Թուղթ՝ օֆսեթ, 42x60 1/₁₆: Տպագրական 30 մամուլ:
Տպագրություն՝ օֆսեթ: Տպաքանակ 250: Գինը՝ պայմանագրային:



«ՍՈՒՎՈՐԱ» գրահրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16
Հեռ. 951555